



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

321

pu-16

910

321

IV-16

№ 42

15 JAN 2019

26 SEP 2006

«Յ Ա Ռ Ա Ջ»-ի գրադարան

№ 1756
2/98
№ 42

Գ. Խ Ա Ժ Ա Կ

Դ Է Պ Ի

Ֆ Է Դ Է Ր Ա Ց Ի Ա

Центральный архив
ИИДЭИ НКР
№ 1036 Г.

175

№ 11958

1925

1925

19-304

ԹԻՖԼԻՍ
ԵՆԵՏՐԱՅԱՐԺ ՏՈՒՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՈԼԻՑ. 7.
1907 (30)

Գ Լ Ո Ի Խ Ա.

Ո Ր Ո Շ Ո Ի Մ Ն Ե Ր

Տոհմական կազմ: Պետութեան երևալը: Կառավարութեան տեսակները. ա) Միապետութիւն անսահման. բ) Միապետութիւն սահմանադրական. գ) Հանրապետութիւն: Կառավարական երկու գլխաւոր սիստէմները:

Տոհմական կազմ: Ամեն քաղաքակիրթ երկիր ունի իր պետութիւնը: Պետութեան գաղափարն այնքան է ամրապնդել մեր մէջ, այնքան «միս ու արիւն» դառել, որ մեզ համար դժւար է երևակայել մի երկիր, որ պետութիւն չունենայ, մի ժողովուրդ, մի ազգ, որը որեւէ պետութեան մէջ չապրի:

Պետութեան ծագումն արեւելեան երկրներում—եգիպտոսում, Պարսկաստանում, Մարաստանում, Ասսիրո-Բաբելոնիայում, Հնդկաստանում, Չինաստանում—թաղած է հնութեան խորքերում, շրջապատած սուանդութիւններով, ֆանտաստիքական առասպելներով: Չը կան պահած գրաւոր հարուստ յիշատականներ. եղածներն էլ դեռ նոր են ուսումնասիրում ու խիստ աղքատ են, այնպէս որ այդ երկրներում պետութիւնից առաջ եղած կարգերը մեզ անծանօթ են:

Սակայն այդպէս չէ յունական և հռոմէական պատմութիւնը: Այնտեղ մեր աչքի առաջ պարզ պատկերանում է այն հասարակական կազմը, որ գոյութիւն է ունեցել պետութեան ծնունդ առնելուց առաջ:

Մի կողմից այդ, իսկ միւս կողմից ներկայումս գոյութիւն ունեցող վայրենի ու բարբարոս ցեղերի կեանքի ուսումնասիրութիւնը մեզ ցոյց են տալիս, թէ ի՞նչ է եղել ներկայ պետութիւններից առաջ տիրելիս թէ Ասիայում և թէ առհասարակ երկրագնդի բոլոր երկրներում:

Պետութեան կազմելուց առաջ ամեն տեղ գոյութիւն է ունեցել տոհմական կազմ: Մարդիկ ապրելիս են եղել արիւնակից տոհ-

1578-91

76-901

մերով: Հեռու և մօտիկ ազգակիցները համախմբուած ապրելով, կազմելիս են եղել մի տոհմ, որը լատինների մէջ կոչուում էր զէնս: Անձնապաշտպանութիւնը և ապրուստ ճարելու կոիւն ստիպել են մարդկանց ապրել խմբակներով, և նրանք, բնականօրէն, ապրել են արիւնակցական կամ ազգակցական խմբերով:

Տոհմի մէջ ամենքն իրար հաւասար են. բոլորն էլ աշխատում են, բոլորն էլ ապրում: Հողը, հօտերը, բնակավայրերը և որսատեղերը կազմում են ամբողջ տոհմի սեփականութիւնը: Ամենայն ինչ համայնական սեփականութեան առարկայ է. մասնաւոր սեփականութիւնը կամ բոլորովին չը կայ, կամ զեռ նոր է սկսում լոյս ընկնել. նրա առարկաներն էլ շատ սահմանափակ են — անհատի ձեռքով շինած զէնքը, նրա զգեստը, նրա մի քանի ամանները և այլն:

Տոհմի մէջ կառավարութեան ղեկը գտնուում է առանձին ընտանիքների աւագների ձեռքում, որոնք Յունաստանում կոչուում էին հէրօնթներ, Հոսոմու-«պատէր ֆամիլիա»-ներ (ընտանիքի հայրեր), հայերի մէջ նախարարներ կամ տոհմապետներ: Եթէ պատահում էին վճռելու ծանր հարցեր, այդ տոհմապետներն իսկոյն ժողովի էին հրաւիրում տոհմի բոլոր չափահաս անդամներին (այդ թէ կին) և ժողովի առաջ պարզում կնճռոտ հարցերը, ներկայացնում իրերի գրութիւնը, և ժողովը վճիռներ էր կայացնում, իսկ տոհմապետները կամ «աղախկախներն» իրագործում էին:

Տոհմը ներկայացնում էր մի միաձոյլ ամբողջութիւն: Ինչպէս որ նրա սեփականութիւնը, նրա հօտերն ու հողերը մի և անբաժան էին, այնպէս էլ տոհմի անդամները միաւորուած էին: Տոհմի ամեն մի անդամին հասած վնասը կամ վիրաւորանքը համարվում էր ընդհանուր տոհմի վնաս և ամբողջութիւնը վրէժ էր առնում իր ամեն մի անդամի փոխարէն, «Արեան վրէժը» կամ «վէնդէտուան սուրը էր և պարտադիր սկզբներում. յետոյ «արեան վրէժի» փոխարէն սկսեցին պահանջել նիւթական հատուցում:

Անհատը չունէր անկախ գոյութիւն. ամենքը ղիտում էին նրան իրր լոկ ամբողջութեան մի մաս: Անհատն ինքն էլ չէր զգում իր ինքնուրոյն գոյութիւնը. տոհմի համար նա ամենայն պատրաստականութեամբ զոհ էր բերում իրան: Հոռմի և Յունաստանի բազմաթիւ անձուրաց հերոսները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ այդպիսի տոհմերի անդամներ: Երբ տոհմական կազմը վերջնակա-

նապէս լուծւեց, չքացան Օվրատիոսների, Լէօնիդասների և ուրիշների նման աճնագոհ հայրենասէրները, որոնց համար մահը խաղաղ էր, եթէ դա պահանջում էր տոհմի շահը: Անհատը տոհմի մի մասնիկն էր: Ալտրուիզմը տոհմի ներսում թաղաւորում էր: Անհատի էզօիզմը զեռ չէր ծնունդ առել:

Այդ նոյն տոհմական կազմն այսօր նկատուում է Կարմրամորթների, Դակոտանների, Բատակոտների, Բուշմէնների և այլ բազմաթիւ վայրերի ու բարբարոս ցեղերի մէջ այս կամ այն չափով: Համայն մարդկութիւնն անց է կացել հասարակական զարգացման այդ ստորին աստիճանով:

Գոյութեան կռիւր մարդկանց ստիպել է ապրել տոհմական խմբերով, որպէսզի աւելի զիւրիս լինի թէ ապրուստ ճարելը և թէ արտաքին թշնամիներից պաշտպանելը:

Պատմական երևար: Մարդկանց թիւը բնական ճանապարհով աճում է: Որքան մարդկային արդիւնագործութեան միջոցները կատարելագործուում են, որքան մարդկային աշխատանքն աւելի արդիւնատու է դառնում, այնքան աւելի հնարաւոր է դառնում մարդկանց մեծ խմբերի միասին ապրել. աճում է տոհմերի մեծութիւնը: Մարդկանց մեծ բազմութիւն այդ բարբարոս ժամածութիւնը, որսորդութիւնը և զեռ նոր սկսեող երկրագործութիւնը պահանջում էին հսկայական տարածութիւններ: Սկզբնաժամութիւնը աւելացած անդամները, և բնակութիւն են հաստատում մայր-գէնսի շրջակայքում:

Այդպիսով կազմում է ցեղը կամ տրիբը: Ուրեմն՝ ցեղը մի և նոյն արմատից բղխած տոհմերի մի շարք է: Ամեն մի ցեղ ունենում է իր «որսատեղը», իր տէրրիտօրիան, որը բաժանուում է միւս ցեղերի որսատեղերից մի լայն շերտ չէղոք տարածութիւնով, որը չէ պատկանում ոչ ոքի:

Ցեղերը յաճախ միանում և կազմում են պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւններ: Բարբարոս մարդկութեան ստեղծած կառավարական ձևերից ամենարարձրն է ցեղերի այդ դաշնակցութիւնը:

Թէ տոհմի, թէ ցեղի և թէ ցեղերի դաշնակցութեան մէջ

սեփականութիւնն ընդհանուր է: Դա է, որ կոչուած է սկզբնական կօմմունիզմ:

Այդ շրջանում դեռ չը կան աղքատներ ու հարուստներ: Բոլորն աշխատում, բոլորն էլ ապրում են: Բոլոր ժողովուրդը ղինւած է, յաճախ նոյն իսկ կանայք: Չը կայ արհեստով զինւորական, չը կայ ոստիկան, որովհետեւ չը կայ «ներքին թշնամի»:

Սակայն անընդհատ առաջադիմում է մարդկային կուլտուրան: Կեանքի փորձը, աւանդութիւնը և ժառանգականութիւնը տալիս են փորձառութեան ամբարւած պաշար: Գոյութեան կուլի սնողորմ պահաջն պտիպում է մարդկային մտքին հնարել նոր ու նոր արտադրական գործիքներ կամ կատարելագործել եղածները, զարգացնել արտադրութեան եղանակները, գտնել արտադրական նոր ճիւղեր: Մարդկային աշխատանքն այդ կատարելագործւած գործիքներով աւելի և աւելի է սկսում արտադրել:

Մարդիկ այլ ևս ստիպւած չեն լինում անպատճառ հօտական կեանքով ապրել, համայնական սեփականութիւն ունենալ և համայնական աշխատանք, միահամուռ ճիգեր թափել իրանց ապրուստը ձեռք բերելու համար: Զարգացած գործիքները հնարաւոր են դարձնում մարդկանց ապրել և արտադրել առանձին, միայն մի մեծ ընտանիքով, որը սօցիօլօգիայի մէջ յայտի է «նահապետական ընտանիք» անունով:

Երևում է մասնաւոր սեփականութիւնը և նրա հետ միասին սկսում է տոհմական կազմի աստիճանական քայքայումը:

Զարգացման այդ աստիճանի վրայ բաւական առաջադիմած են լինում արհեստները և ապրանքների փոխանակութիւնը: Տոհմերի հարստութիւնը բաւական խոշոր չափերի հասած լինելով, զբոսում է դրացի ցեղերի ախորժակը: Պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւնների կարիքն այնքան է սաստկանում, որ բազմաթիւ տոհմեր՝ ստիպւած են լինում կենտրոնանալ մի ամբողջ վայրում, որը և ստանում է քաղաք (cité) անունը: Դա և քաղաք է, և մի պետութիւն:

Այդպէս են կազմւել յունական և հռոմէական բոլոր քաղաքները *) կամ քաղաք-պետութիւնները, նրանց Polis-ները:

*) Տես—Fusfel de Coulanges—«La cité antique». (կայ նաև ուրսերէն թարգմանութիւն):

Տոհմերը քաղաքներում ապրում էին նախ առանձին-առանձին թաղերով, իրարից բաժան: Նրանք բաւական ժամանակ պահպանել են իրանց սեփական գաղափարները, տոհմապետների ժողովները, տոհմական զինւած ժողովուրդը: Բայց աստիճանաբար ղովները, տոհմական զինւած ժողովուրդը: Բայց աստիճանաբար ղովները, տոհմական կազմի զլխին, իբր մի վերնայարկ, առաջացել է ամբողջ քաղաքի գաղափարը, քաղաքի բանակը և այլն:

Հասարակական կեանքի բոլոր երևոյթների և յատկապէս մասնաւոր սեփականութեան զարգացման հետ միասին՝ քայքայւում է տոհմական կազմը քաղաքներում և տեղի է տալիս ընտաանական կազմին: Աստիճանաբար տոհմերը խառնւում են իրար և նեկան կազմին: Աստիճանաբար տոհմերը խառնւում են իրար և նեկան կազմից մնում են միայն մի քանի մնացորդներ, աւանդուհին կազմից մնում են միայն մի քանի մնացորդներ, աւանդութիւններ և յիշատակներ, յաճախ կրօնական ծէսերի ու նախապաշարումների ձևի տակ:

Տոհմական կազմի լուծւելով, վերանում, չքանում է նաև նախկին նիւթական հաւասարութիւնը մարդկանց մէջ: Մի քանի ընտանիքներ—աւելի հները, քաղաքի արմատական ընակիչները—աւելի քանիքները, հարստանում, իսկ միւսները—մասնատիրու են բոլոր հողերը, հարստանում, իսկ միւսները—մասնատիրու են բոլոր հողերը, հարստանում, իսկ միւսները—աղքատանում, դանում են կեղեքուղ:

Երկաթի գիւտը հնարաւոր է դարձրել մասնաւոր սեփականութեան տարածւելը և նրա վերջնական յաղթանակը: Տառերի նութեան տարածւելը և նրա վերջնական յաղթանակը:

Քաղաքակրթական դարեշրջանի ամենարժեքող գիծն է անհաւասարութիւնը: Նախկին սկզբնական կօմմունիզմի հաւասարահաւասարութիւնը: Նախկին սկզբնական կօմմունիզմի հաւասարահաւասարութիւնը: Նախկին սկզբնական կօմմունիզմի հաւասարահաւասարութիւնը: Նախկին սկզբնական կօմմունիզմի հաւասարահաւասարութիւնը:

Դրա հակառակը ևս տեղի է ունենում: Առաջանում է միամրոխ, աղքատ մարդկանց մի բաղմութիւն, որն ստիպւած է լիստուրի, աղքատ մարդկանց մի բաղմութիւն, որն ստիպւած է լիստուրի, աղքատ մարդկանց մի բաղմութիւն, որն ստիպւած է լիստուրի: Նում ծախել իր աշխատանքն ուրիշին՝ ապրուստ ճարելու համար: Նում ծախել իր աշխատանքն ուրիշին՝ ապրուստ ճարելու համար: Նում ծախել իր աշխատանքն ուրիշին՝ ապրուստ ճարելու համար:

Առաջանում են արխատկրատների, դէմոսի և Թէթերի կամ

ստրուկների դասակարգերը Յունաստանում, պատրիկները, պլէ-
բէյները և ստրուկները Հոմոսում:

Եւ այնուհետև աղքատները—պլէբէյ, դէմոս, թէթ և ստրուկ
—յաւիտենական սպառնալիք են դառնում հարուստների՝ արխի-
տօկրատների, պատրիկների գլխին: Մտեղծուած է «ներքին թըշ-
նամի» հասկացողութիւնը: Այդ «ներքին թշնամիներին» հնազան-
դութեան մէջ պահելու համար՝ ստեղծուած է ոստիկանութիւնը, կա-
ռավարողների, հարուստների, տէրերի գինւած ոյժն ընդդէմ տիր-
ւածների, կեղեքողների և աղքատների:

Ծնունդ է առնում պետութիւնը: Նախկին դատարանների, հա-
սարակական պաշտօնների և այլ հաստատութիւնների վրայ աւե-
լանում է ոստիկանութիւնը և հասարակութեան մի մասի գինւած
ոյժը միւս մասին հնազանդութեան մէջ պահելու համար:

Սկզբներում գեռ պասակարգերը հիմնւած են լինում արեան
կամ ծագման սկզբունքի վրայ, իսկ յետոյ մասնաւոր սեփականու-
թեան, կամ աւելի ճիշտ է ասել, դրամական հարստութեան վը-
րայ: Սէրվիոս Տուլլոսի մտցրած կարգերի համաձայն՝ Հոմոսում ով
ունէր 100,000 աս (1 ասը—15 կօպէկի)—նա առաջին դասակարգի
անդամ էր, 75,000 աս ունեցողը՝ երկրորդ դասակարգի, 50,000 ունե-
ցողը՝ երրորդի, 25,000 ունեցողը՝ չորրորդի և 11,000 ունեցողը
հինգերորդի: «Արեան» ազնւականութիւնը վերանում է և տեղը
բռնում է պլուտօկրատիան կամ փողի ազնւականութիւնը: Նոյն ձևի
բարենորոգութիւն մտցրեց Սօլոնը Յունաստանում: Հոմոսի և Յու-
նաստանի համարեան ամբողջ ներքին կեանքը կազմւած է այդ գա-
սակարգերի կռիւներից, կեղեքող, խեղճ դասակարգերը—պլէբէյ,
ստրուկ, դէմոս՝ ձգտում են կուռվ ձեռք բերել իրաւունքների հա-
ւասարութիւն արխտօկրատների ու պատրիկների հետ. նրանք
արին են թափում հասարակական հողերը խելու ազնւականնե-
րի ձեռքից և հաւասարապէս բաժանելու չունեողներին ևս: Կարճ՝
նրանք մղում են քաղաքական և տնտեսական մի կռիւ, որը կար-
միր թելի նման անցնում է այդ երկու երկրների ամբողջ ներքին պատ-
մութեան միջով—հաւասարասէր գէնսի սկզբնական կօմմունիզմի
քայքայելուց մինչև այդ պետութիւնների անկումը:

Դասակարգերի փոփոխական յաջողութիւնների, տնտեսա-
կան կեանքի այս կամ այն աստիճան դարգացման և բիւրաւոր
այլ հանգամանքների կուտակման հետ միասին, այդ և ուրիշ եր-

կրներում սկսել են փոփոխութիւնների ենթարկել և կառավա-
րական ձևերը կամ տեսակները:

Ուժեղները յողթահարում, հպատակեցնում են թոյլերին: Ոյժ
ասելով, անպատճառ չը պէտք է հասկանալ լոկ ֆիզիքական ոյժը:
Կայ փորձառութեան, ուղեղի ոյժ, կայ տնտեսական անհաւասա-
րութեան ոյժ, կայնաև թւի, մարդկային անհատների կուտակման
ոյժ: Դրանք երբէք չեն տրոժում ջոկ-ջոկ, այլ համարեան միշտ
միատեղ, համախմբւած:

Վ Պետութեան ծնող մայրը ոյժն է: Ուժեղները տիրում են
թոյլերին, հնազանդեցնում իրանց, ստիպում նրանց ծառայելու
իրանց շահերին: Դա տևում է դարեր: Սերունդներ գալիս, անց-
նում են և սկզբնական ուժի կատարած ախար սրբազործում,
բնական մի դիրք է հրատարակում: Մարդիկ այլ ևս դադարում
են զգալ, որ կայ մի անհաւասարութիւն, մի բռնութիւն, անար-
գարութիւն: Նրանց սկսում է թւալ, թէ այդպէս էլ պիտի լինի, ու-
րիշ կերպ չի էլ կարող լինել: Յաղթողներն ու տիրողներն օգ-
տուում են սովորութեան ու ժառանգականութեան այդ ուժից.
Նրանք օրէնքներ են հրատարակում և սրբազործում, աւելի ամրա-
պնդում այն կարգերը, որոնք անպայման ձեռնտու են իրանց համար:
Այդ «կարգի» պահպանման համար սկզբներում զինւած կան-

գնած են լինում բոլոր տիրողները: Այդ սկզբնական շրջանում
նրանք ոչ մի վայրկեան չը պէտք է փակէին աչքերը, եթէ սչ աղա-
տութիւնը գեռ նոր կորցրած տիրւածները միշտ պատրաստ էին
թռչելու յաղթողների դէմ, բռնելու նրանց կոկորդից: Բայց որ-
քան այդ «կարգի» հետ հաշտուած էին նոր սերունդները, այնքան
աւելի նւազում էր երկիւղը: Այնուհետև ստեղծուած է ոստիկա-
նութիւնը, դատարանը, զօրքը, որոնք լիապէս բաւական են եղած
«բնական», նոյն իսկ «ասուածային կարգերը» հաստատ պահելու:

Բոլոր ասածներից պարզ է ուրեմն, որ պետութիւնը մարդկային
համայնակեցումնան մի ձև է: Պետութիւնն ունի անպատճառ մի երկիր
կամ մի որոշ տէրրիտօրիա, նրա վրա բնակեող ազգաբնակչութիւն
և, որ էականն է, այդ երկիրն ու այդ ազգաբնակչութիւնը միա-
ցնող, բոլորին կապող և մի ամբողջութիւն կազմող մի բարձրագոյն
իշխանութիւն:

Կառավարութեան տեսակները: Պետութեան գաղափարի ծնելուց

մինչև օրս մարդկութեանը յայտնի են՝ կառավարելու հետեւալ զլիաւոր ձևերը. ա) անսահման միահեծանութիւն. բ) սահմանադրական միապետութիւն. գ) հանրապետութիւն. դ) օլիգարխիա և այլն, կամ, աւելի կարճ, անհատի (կամ անհասաների) և ժողովրդի տիրապետութիւն:

ա) Անսահման միահեծանութիւն: Երկիրն ունենում է մի պետութագաւոր, կայսր, հէրցօգ, շահ, սուլթան կամ մի ուրիշ անուն կրող: Այդ պետը դիտւում է իբր տէր իր ամբողջ երկրի և բոլոր հզատակիների: Նրա կամքն օրէնք է. ն.ս նշանակւած է «կամօքն Աստուծոյ»: Նա է նշանակում իր մինիստրներին, օգնականներին, գաւառների ու նահանգների կառավարիչներին: Երկրի եկամուտները նրա տրամադրութեան տակ են: Պատերազմն ու խաղաղութիւնը նրանից է կախւած: Չը կայ անձի և բնակարանի անձեռնմխելիութիւն, ժողովների և խօսքի ազատութիւն... Ամեն ինչ կապանքների մէջ է, ամեն բան կախւած է ոչ թէ օրէնքից—այլ կամայականութիւնից, մի անհատի և նրան շրջապատողների, նրա մինիստրների և սիրելիների կապրիզներից:

Սակայն աշխարհն իր մէջ երբէք չէ տեսել այդպիսի մի իսկական միահեծանութիւն: Եղել են շատ բռնակալութիւններ, կան և դեռ ևս բաւական երկար ժամանակ կը լինեն, բայց նրանցից ոչ մէկի պետն իսկական միահեծան չէ: Որքան էլ նա ուժեղ ու հանձարեղ անձնաւորութիւն լինի, որքան էլ նա ջանք թափէ իր մէջ ամփոփելու բոլոր իշխանութիւնները, նա չէ կարող այդ անել: Իրականապէս ամեն մի անսահման միապետութիւն հանդիսանում է իբր օլիգարխիա, իբր մի խումբ մարդկանց տիրապետութիւն, թէև այդ խմբի մէջ կրկին պետը տէր է միւսների զլիսի:]

Միապետի շուրջը հաւաքւած մինիստրները, ֆաւօրիտները, տարփածոները, բարձրաստիճան և զբանիկ պաշտօնեաների խումբերը բաժանում են իրանց մէջ երկրի վարչութեան զեկը, միահեծանի իրաւունքների մեծ մասը:

Գաւառներում և նահանգներում բիւրօկրատ կառավարիչները հանդիսանում են մի-մի փոքրիկ ինքնակալներ—աւելի անսահման և աւելի դեսպօտ, քան կենտրոնում նստածը (սատրապներ, խաներ, վալիներ և այլն):

Անլրդ է ասել, որ անսահման միապետութիւնը կարող է լինել ժառանգական—ինչպէս Պարսկաստանում, Չինաստանում,

Թիւրքիայում, Ռուսաստանում և ոչ ժառանգական, ինչպէս Հոմի պրինցիպատը կամ կայսրութիւնը: Այդտեղ յաճախ զօրքերն էին նշանակում իմպէրատօրներ: Աւելորդ է իրարից տարբերել նաև բռնապետութիւնը և միահեծանութիւնը, որովհետև այդ երկու տեսակի պետութիւնների մէջ տիրող սկզբունքը մէկ է. մի անհատ՝ հրամայող ամենքի:

բ) Սահմանադրական միապետութիւն: Մենք շատ հեռու կը գնայինք և չափազանց մեծ ծաւալ կը տայինք մեր աշխատութեանը, եթէ մանէինք բացատրութիւնների մէջ, թէ ինչպէս զարգացան դասակարգերը, ինչ տնտեսական և մտաւոր պայմաններ առաջ քշեցին այս ինչ դասակարգերին, յետ մղեցին այն ինչին և կամ թէ ինչպէս դասակարգերի աստիճանական զարգացումը ծնեցրեց սկզբնական բռնապետութիւնները, հանրապետութիւններից և օլիգարխիաները, որոնց բոլորի հիմքը կազմում էր ստրկատիրութիւնը: Չափազանց կերկարէր մեր նիւթը, եթէ մենք ջանալինք պարզել թէ ինչ տնտեսական և քաղաքական յարաբերութիւններ, դասակարգային ինչ պահանջներ առաջացրին աւատութիւններ, դասակարգային ինչ պահանջներ յետոյ, տնտեսական և մրկան կազմը, թէ ինչպէս այդ կազմից յետոյ, տնտեսական և մրտաւոր առաջադիմութեան, միջնադարեան քաղաքների կամ բուրգերի բնակչութեան՝ այդ III դասակարգի զարգացման հետ միասին աճեց նոր և նորագոյն արսօլիտիզմը կամ միահեծանութիւնը: Մեզ համար անհնար է նաև կանգ առնել այն երևոյթի վրայ, թէ ինչպէս կոպիտալիզմի զարգանալով՝ բուրժուազիան պէտք զգաց սահման դնելու միահեծան թագաւորների ու կայսրների կամօքն սահման դնելու միահեծան թագաւորների ու կայսրների կամօքնը և ստեղծեց սահմանադրական միապետութիւնը: Այսքան միայն կասենք, որ երբորդ դասակարգի շահերը և փայլուն իդէօլօգները առաջացրին մի ճակատագրական անհրաժեշտութիւն.—քայքայեց, մեռաւ միահեծան բռնակալութիւնը և ստեղծեց սահմանադրական միապետութիւնը:

Տիրող—ազնւական, հոգեւորական կամ դրամատէր դասակարգերը սահման են դնում միապետի իրաւունքներին, նրա կամակարգերը սահման են դնում միապետի իրաւունքներին, որի յականութիւններին: Հրատարակւում է մի սահմանադրութիւն, որի հիման վրայ ժողովուրդն ընտրում է իր միջից ներկայացուցիչներ, ուղարկում մայրաքաղաք, կազմում մի կամ երկու պարլամենտ, որոնք հանդիսանում են իբր միակ օրէնսդիր մարմինները: մէկտ, որոնք հանդիսանում են իբր միակ օրէնսդիր մարմինները: Միապետը չէ կարող հրատարակել ոչ մի օրէնք առանց այդ

պարլամենտների համաձայնութեան: Դրանք են մշակում օրէնքները, հաստատում է վեհապետը:

Երկրի գործադիր իշխանութիւնը կախած է վեհապետից: Նա է նշանակում կամ առանձին մինիստրներ, կամ մինիստրական կարիւնէտ:

Մինիստրները կամ առանձին-առանձին կամ նրանց ամբողջութիւնը (կարիւնէտը) կարող են լինել պատասխանատու պարլամենտի առաջ կամ ոչ պատասխանատու:

Սահմանադրական միապետութեան մէջ ընտրութիւնները կարող են լինել ցէնզուտը կամ տուանց ցէնզի, ուղղակի կամ երկաստիճան, հաւասար կամ յոգնակի (ինչպէս այժմ Բէլգիայում):

Բոլոր սահմանադրական միապետութիւններն իրար նման չեն քաղաքական տեսակէտից: Նրանց սահմանադրութիւնները կարող են լինել աւստրիականի կամ պրուսականի նման յետադէմ, միլիտարիստական ու տւատական ոգով կազմւած, բոլորակա- նի կամ իտալականի նման կիսաբուրժուական և կամ անդլիականի նման քիչ ուշատ դէմօկրատիական, ֆրանսիականի նման ցէնտրալիստ, և այլն:

Հին աշխարհը շատ լաւ էր ճանաչում անսահման միապետութիւնը, հանրապետութիւնը և օլիգարխիան, իսկ բառի բուն նշանակութիւնով սահմանադրական միապետութիւնը նրան անծանօթ էր: Սակայն դրա նման քաղաքական կազմ ունէր Հոմըր կայսրութեան կամ պրինցիպատի սկզբնական շրջանում—Օկտաւիանոսի և ուրիշների օրերում, երբ իմպերատորի կողքին կային սէնատն ու կօմիցիանները, որոնք բաւական սահմանափակում էին կայսրների կամքը:

գ) Հանրապետութիւն: Թէ անսահման և թէ սահմանադրական միապետութեան մէջ երկրի զեկը գտնուում է «արիւնով» ազնւական մի ընտանիքի կամ տոհմի ձեռքում, մեծ մասով ժառանգաբար: Այսօր Վիէնէլմ կայսրն է, վաղը կարող է նստել նրա որդին, միւս օրը նրա թոռը. նման է նա Դօն-Քիշոտ պապին, թէ ապիկարի մէկն է, կամ մի հանճար—դա միւնտյնն է. նա «ի ծնէ» կայսր է կամ թագաւոր:

Սակայն կապիտալիզմի և կոլտուրայի զարգացումը, առաջ քշելով երրորդ դասակարգին, դարձնելով նրան ամենազօր հասա-

րակութեան մէջ, մրցակից է դարձնում նրան ազնւականութեան: Բուրժուազիան յաղթահարում է և նախ սահման է դնում ազնւականու- թեան միահեծան պետին, յետոյ էլ կամ բոլորովին իրաւազուրկ մի թատրօնական իր է դարձրում (ինչպէս անդլիական թագաւորը), կամ հեռացնում նրան, ոչնչացնում ժառանգական միապետու- թիւնը, ներմուծում հանրապետութիւն * (ինչպէս Ֆրանսիայում, Բրա- զիլիայում և այլն):

Ներկայ կապիտալիստական արդիւնազորութիւնը և բուր- ժուազիան անհրաժեշտօրէն պահանջում են կամ սահմանադրական միապետութիւն կամ հանրապետութիւն: Որքան աւելի զարգա- նում է կապիտալիզմն ու իր հարազատ զաւակը—պրօլէտարիա- տը. որքան աւելի դրա հետ միասին, զիտութիւններն ու կոլ- տուրան տարրանում են ժողովրդի ստորին խաւերում, այնքան աւելի պահանջ է դառնում հանրապետութիւնը:]

Թէ անցեալի և թէ ներկայի բոլոր հանրապետութիւնները, որքան էլ նրանք լինեն լայն ռամկավարական սկզբունքներով կազմւած,—գտնուում են բուրժուազիայի (կամ նրանց փոխարի- նող ազնւականութեան ու պրուտօկրատիայի) ձեռքին:

*) Հանրապետութիւն կար և հին Յունաստանում, և Հոմում, և միջին դարերում իտալական առևտրական քաղաքներում, և Հանդէան քաղաքներում, և Նիդէրլանդիայում. սակայն տարբեր են եղել այն դասակարգերը, որոնց շահերը պահանջել են հիմնել այդ հանրապետութիւնները: Աթէնքում, Սպարտա- յում, Թէբէքում, Հոմում նախկին հաւասարասէր դէնսի, սկզբնական կօմու- նիզմի օրերում կազմւած հնադէպ տիրող ժողովուրդն էր, որ յետոյ, մասնաւոր սեփականութեան երևալու հետ միասին՝ դարձաւ մի տեղ արիստօկրատիա, միւս տեղ պատրիցիա և ոչնչացրեց թագաւորների (rex, վասի- լէտ) իշխանութիւնը: Արիւնով ազնւական այդ դասակարգը դեռ չափազանց թաքմ յիշատակներ ունէր իր նախկին տոհմական կազմից—դեռ նրանց շահերը շատ ակներևօրէն պահանջում էին հանրապետութիւն: Սակայն դրանք այնպիսի հանրապետութիւններ էին, որոնց միակ տէրն ստրկատէր ազնւականութիւնն էր:

Միջին դարերում իտալական քաղաքներում, Հանդէայում և Նիդէրլան- դիայում արքայները ներկայ բուրժուազիայի նախահայրերն էին—վաշխառուն, աւտարականը և համբարութեան խառը արհեստանոցատէրերը, որոնց ձեռքի տակ բանում էին տանտեակ զարգարներ: Այդ դասակարգերի, այդ պրուտօկրատիայի (փողային ազնւականութեան) շահը ևս պահանջում էր չենթարկել այս կամ այն ասպետին, դուքսին, բարօնին կամ քօնսենդին (թագաւոր), այլ հիմնել սեփական հանրապետութիւն, որի մէջ տէրն իրանք լինէն:

Բուրժուազիայի և աղնականութեան մրցումը ներկայ դարաշրջանում առաջացնում է ժամանակակից հանրապետութիւնը, որի մէջ վարչական ղեկը գտնւում է բուրժուազիայի ձեռքին: Չը կայ ժառանգական միապետ. միապետութեան գլուխն ընտրում է ժողովրդից:

Ի հարկէ հանրապետութեան սահմանադրութիւնը ևս մի որոշ մեծութիւն չէ. նա ևս կարող է ունենալ տարբեր սկզբունքներ: Այնտեղ ևս կարող են լինել ցէնզաւոր կամ առանց ցէնզի ընտրութիւններ, ուղղակի կամ երկաստիճան ու եռաստիճան: Նրա ներքին վարչութիւնը ևս կարող է լինել պարլամենտարիստական—երբ մինիստրների ամբողջութիւնը պատասխանատու է պարլամենտի առաջ և պարտաւոր է հրաժարել, երբ չէ վայելում պարլամենտի մեծամասնութեան վստահութիւնը. սակայն կարող է լինել և ոչ ամբողջապէս պատասխանատու մինիստրութիւն, կամ դուալիստական կառավարութիւն: Հանրապետութեան նախագահը կարող է ունենալ այնպիսի իրաւունքներ, որ աւելի լինեն քան որ և է երկրի թագաւորի իրաւունքները (Փրանսիայի հանրապետութեան նախագահը շատ աւելի մեծ իրաւունքներ ունի, քան Անգլիայի թագաւորը) կամ այնքան նւաղ իրաւունք և նշանակութիւն վայելել, որքան մի հասարակ մինիստր (ինչպէս Չեխոսլոուակիայում):

Բացի կառավարական այս գլխաւոր ձևերից՝ եղել են նաև սօլիդարիստ—մի փոքրիկ խումբ մարդկանց գերիշխանութիւն: Կառավարութեան այդ ձևը նոյն միահեծանութիւնն է եղել, միայն ոչ մի, այլ մի քանի վեհապետներով:

Գոյութիւն է ունեցել նաև «տիրանիա», այսինքն մի տիրանի կառավարութիւն—երբ մի անձ կարողացել է, յաճախ իր տաղանդի և իր դասակարգի շնորհով՝ դառնալ անթագ թագաւոր մի պետութեան:

Սակայն կառավարական այս վերջին երկու ձևերը հնարաւոր են եղել հին ժամանակները կամ միջին դարերում, ներկայումս դրանք այլևս չը կան և անհնար են:

Իրանք են կառավարական գլխաւոր տեսակները կամ ձևերը: Կասկած չը կայ, որ աշխատաւոր ժողովրդի համար շատ աւելի ձեռնաու է, որ գոյութիւն ունենայ սահմանադրական միապետութիւն քան անսահման միահեծանութիւն, հանրապետութիւն—քան միապետութիւն:

Այդ այդպէս է ընդհանուր առմամբ: Սահմանադրական միապետութեան մէջ աշխատաւորներն աւելի շատ կարող են ձայն ունենալ, իրանց շահերը պաշտպանելու, իրանց ձայնը լսեցնելու հնար ունենալ, քան ժառանգական միահեծանութեան խեղդիչ ճանկերում: Հանրապետական կառավարութեան մէջ մասսաների, աշխատաւոր ընդհանրութեան ձայնը լսելի լինելու հաւանականութիւնն ու հնարն աւելի ևս մեծանում է:

Թէօրիայով այդպէս է, բայց երբ անցնում էք անողորմ իրականութեան, տեսնում էք, որ երբեմն կեանքն ուրիշ բան է ցոյց տալիս: Սահմանադրական կամ անսահման մօտարխիա և հանրապետութիւն հասկացողութիւնները քարացած մեծութիւններ չեն. նրանք կարող են այնքան տարբեր ձևեր ունենալ, այնքան տարբեր սկզբունքների վրայ յենել, որ յանկարծ պարզ երևայ, որ աշխատաւոր ժողովրդի համար սահմանադրական միապետութիւնն աւելի լաւ է, քան հանրապետութիւնը (այդպէս է այժմեան Ֆրանսիական հանրապետութեան և անգլիական սահմանադրական միապետութեան համեմատութիւնը): Կան սահմանադրական կոչւած միապետութիւններ, որոնց մէջ իւնկերական միլիտարիստական ոգին խեղդում է ամեն ինչ. այդպէս է Պրուսիան, այդպէս է Աւստրիան... Թէև կայ սահմանադրութիւն...

Ինչից է առաջանում այդ, ըստ երևոյթին, հիմնական սկզբունքին հակասող բնոյթը: Նրանից, որ կառավարական ձևերից դատ կան նաև կառավարական սիստէմներ: Միայն ձևը չէ կառավարութեան էութիւնը բնորոշում, այլ նաև նրա սիստէմը:]

Կառավարական սիստէմներ: Վերևում նկարագրւած կառավարական բոլոր ձևերը կարող են լինել երկու սիստէմի—կենտրոնացման և ապակենտրոնացման: Բացի միահեծան ինքնակալութիւնից, որի ժամանակ կայ մի վեհապետ և մի խումբ բարձրաստիճան ըլբրօկրատներ, որոնք իրանց ձեռքն են առնում երկրի բոլոր գործերի ղեկը և վարում ամեն ինչ առանց որ և է պատասխանատուութեան,—բացի կառավարական այդ ձևից, որի ոգին ու էութիւնը կազմում է կենտրոնացումը,—մնացած երկու հիմնական ձևերն էլ—թէ սահմանադրական միապետութիւնը և թէ հանրապետութիւնը կարող են լինել կենտրոնական և ապակենտրոնական:

Այնտեղ, ուր ժողովուրդը կամ գոնէ բուրժուազիան որոշ

w B!

v

սահմաններ չեն դրել միապետի կամքին, ուր մի մարդ համար-
 ւում է տէր ու տիրական մի ամբողջ երկրի, «կապող ու արձա-
 կող» այդ ժողովրդի բազդի—այդպիսի երկրում եթէ նոյն իսկ
 լինեն սպակեհնորոնացման զանազան փորձեր, դրանք երբէք չեն
 հասցնի արմատական հետեւանքների, որովհետեւ միահեծան պե-
 տութեան մէջ դրանք կը լինեն ժամանակաւոր, ոչ յարատեւ և վե-
 հապետի ու նրան շրջապատող օլիգարխների կապրիզից, նրանց
 կամայականութիւնից կախած: Մի փայլուն օրինակ է այդ բա-
 նին ռուսական զէմսովօի պատմութիւնը:

Որովհետեւ ներկայ աշխատութեան հետեւեալ գլուխն ամբող-
 ջապէս նւիրւած է լինելու կենտրոնացման և ապակենտրոնացման
 խնդրին—այդ պատճառով մենք այդ երկու էական սիստէմների
 մասին խօսելը թողնում ենք և անցնում կառավարական մի այլ
 սիստէմի—պարլամենտարիզմին, որի մասին արդէն մի քանի խօսք
 ասել ենք և դեռ դուցէ հետեւեալ գլուխներումն էլ ստիպւած լի-
 նենք յաճախ յիշել:

Պարլամենտարիստական կարող են լինել միայն սահմանա-
 դրութիւն ունեցող երկրները: Անսահման միապետութիւնը երբէք
 չէ կարող պարլամենտարիստական լինել:

Եթէ դատելու լինենք լոկ այդ բառի կազմութեան հիման
 վրայ, պարլամենտարիստական պէտք է կոչենք ամեն մի երկիր,
 որն ունի մի սահմանադրութիւն և մի կամ երկու պարլամենտ:
 Սակայն այդպէս չէ իրականութիւնը: Պրուսիայի թագաւորու-
 թիւնը և Գերմանիայի դաշնակցական կայսրութիւնը թէև սահ-
 մանադրական են, թէև պարլամենտներ ունեն, սակայն պարլա-
 մենտարիստական չեն, այլ զուալիստական: Պարլամենտարիստա-
 կան է այն պետութիւնը, որի գործադիր իշխանութիւնը—մինիստ-
 րութիւնը կամ մինիստրական կարինէտը ճանաչուած է քաղաքա-
 կանապէս պատասխանատու օրէնսդիր մարմնի կամ պարլամենտի
 առջև և իրաւապէս պատասխանատու երկրի դատարանի առջև: Մեր
 սասածը պարզաբանելու համար բերենք մի օրինակ:

Անգլիայում ընդհանուր ընտրողական իրաւունք դեռ ևս չը
 կայ. դեռ ևս մի «սակ» կամ մի ցէնդ—ի հարկէ շատ չնչին ցէնդ,
 դեռ գոյութիւն ունի այնտեղ: Փրանսիայում ընտրողական իրա-
 ւունքն ընդհանուր է այդ մարդկանց համար. ընտրութիւններին
 մասնակցելու իրաւունք ունի ամեն մի չափահաս ֆրանսիացի: Միակ

բացառութիւն կազմողները ոճրագործները, զինւորականները և
 օրէնքով նախատեսուած մի քանի ուրիշ տեսակի անձերն են: Այդ եր-
 կու երկրներում էլ տիրում է պարլամենտարիզմը: Ուրեմն՝ նա կապ-
 ւած չէ ոչ ընդհանուր, ոչ էլ ցէնդաւոր ընտրութեան հետ: Բա-
 ւական է որ մի երկրում ընտրովի պարլամենտ լինի, այնտեղ կա-
 րող է լինել պարլամենտարիզմ, եթէ երկրի սահմանադրութիւնը
 կազմւած է պարլամենտարիստական ոգով:

Անգլիայի թագաւորը (կամ Փրանսիայի նախագահը), դի-
 տելով որ ժողովրդական ընտրութիւնները տեւել են, օրինակ, ա-
 ւելի թւով տօրիներ կամ պահպանողականներ, իր մօտ է հրաւի-
 րում այդ կուսակցութեան պարագլխին կամ գլխաւորներից մէկն
 ու մէկին և նրան է յանձնում կազմել մինիստրութիւն կամ մի-
 նիստրների կարինէտ: Այդ լիղէրը (պարագլուխը) հրաւիրում է իր
 կուսակցութեան մէջ աչքի ընկնող և վստահութիւն վայելող մի քանի
 անձերի և նրանց է յանձնում այս կամ այն մինիստրական պաշտօնը
 կամ պօրտֆելլը: Այդ մինիստրների ամբողջութիւնը կոչւում է կարի-
 նէտ. դա է երկրի գործադիր իշխանութիւնը կամ կառավարութիւնը:

Սկսում է պարլամենտի գործունէութիւնը: Մինիստրներն
 անում են առաջարկներ այս կամ այն վճիռն ընդունելու մասին:
 Եթէ պարլամենտի մեծամասնութիւնն ընդունում է մինիստրու-
 թեան արած առաջարկը,—շատ լաւ,—գործերն ընթանում են ի-
 բանց ընական կարգով: Բայց ենթադրենք, որ մինիստրութեան
 արած մի առաջարկը չը ստացաւ պարլամենտի ձայների մեծա-
 մասնութիւնը: Այդ դէպքում մինիստրութիւնը կարող է ասել, որ
 իր համար այդ հարցը կարեւոր չէ—ինքը չէ պնդում: Պարլամեն-
 տական կեանքը կրկին ընթանում է իր սովորական ձևով:

Սակայն մինիստրութիւններն առհասարակ խուսափում են
 այնպիսի առաջարկներից, որոնք կարող են ձայների մեծամաս-
 նութիւն չը ստանալ: Այդպիսի առաջարկները նրանք աշխատում
 են զարթեցնել իրանց համակրող պատգամաւորների միջոցով:
 Իսկ եթէ մինիստրութիւնը մի որ և է կարեւոր առաջարկ արեց
 և պարլամենտի մեծամասնութիւնը դրա դէմ քէտարկեց, այն ժա-
 մանակ կարինէտը կամ ըրտր մինիստրները հրաժարական են տալիս:

Կարող է պատահել, որ մինիստրութիւնն ստիպւի հրաժարա-
 կան տալ և մի այլ դէպքում: Ենթադրենք, որ մի պատգամաւոր
 հարցապնդում է անում պարլամենտում, օրինակ, ծովային կամ

ներքին գործերի մինիստրի կամ նրա նշանակած պաշտօնեայի արած որ և է կարևոր քայլի մասին. քննադատում, յարձակում է նրա վրայ և այնպիսի մի բանաձև է առաջարկում քեզարկութեան, որից ըդիսում է անվստահութիւն դէպի այս կամ այն մինիստրը: Եթէ այդ բանաձևն անց կացաւ ձայների մեծամասնութեամբ, դա նշանակում է, որ մինիստրութիւնը չէ վայելում պարլամէնտի վստահութիւնը և կարինէտն ստիպւած է իր հրաժարականը տալ թագաւորին կամ նախագահին:

Այդպիսի հրաժարականներն առ հասարակ ընդունում են և թագաւորը կամ նախագահը հրաւիրում է այժմ ոչ թէ պահպանողականների (տօրինների), այլ առաջադիմականների (վիզերի) լիզէրներից մէկին և յանձնում նրան նոր կարինէտ կազմելու գործը:

Սակայն անգլիական թագաւորը կարող է չընդունել կարինէտի հրաժարականը և արձակել կամ լուծել եղած պարլամէնտը՝ յայտարարելով, որ այդ պատգամաւորներն այլ ևս չեն համապատասխանում ընտրողների—ազգի կամ ժողովրդի ցանկութիւններին: Լուծւում է հինը և նշանակւում են նոր ընտրութիւններ: Եթէ դրանք տւին կրկին առաջադիմական մեծամասնութիւն, որն անվստահութեան քեզ տւեց մինիստրութեան, թագաւորը կարող է կամ հնազանդւել և հրաժարեցնել կարինէտը կամ երկրորդ անգամ արձակել ու նոր ընտրութիւններ նշանակել. եթէ այդ անգամ էլ ազգի ներկայացուցիչները նոյն կարծիքին եղան՝ վեհապետն անպայման պիտի խոնարհւի: Սակայն չափազանց հազւագիւտ է, որ թագաւորն Անգլիայում լուծէ պարլամէնտը ոչ միայն երկու անգամ, այլ նոյն իսկ մի անգամ:

Ահա պարլամէնտարիզմի էութիւնը:

Այդպէս չէ սակայն Պրուսիայում կամ Գերմանիայում: Պրուսիայի թագաւորը, այսինքն Գերմանիայի կայսրը նշանակում է մի մինիստր-նախագահ, որ կոչւում է կանցլէր. սա կայսրի հաւանութիւնով հրաւիրում է մինիստրներ: Պրուսական լանդտագը կամ գերմանական Բայլստագը կարող են տասն անգամ անվստահութեան քեզ տալ մինիստրներից մէկին կամ ամբողջ կարինէտին, մերժել կարինէտի առաջարկներից մի քանիսը—նոյն իսկ շատ կարևորները,—մինիստրութիւնը չէ հրաժարւում: Այդ երկրներում մինիստրների հրաժարելը կախւած է կայսրի կամ թա-

գաւորի կամքից: Իսկ այդ նշանակում է, որ նրանք պատասխանատու են ոչ թէ ազգի ներկայացուցիչների կամ պարլամէնտի առաջև, այլ միայն թագաւորի կամ կայսրի առաջ: Կառավարական այս եղանակն է, որ կոչւում է գուալիտական:

Ինչ կասկած, որ կառավարական բոլոր ձևերից ամենազերպաւոր հանրապետութիւնն է, մի հանրապետութիւն, որի մէջ լինի ընդհանուր, ուղղակի, հաւասար, զաղանի և համեմատական ձայնատուութիւն: Դա է պահանջում ամեն տեղ ժողովրդի հսկայական մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր դասակարգերի շահը. ընտրական և կառավարական այդ ձևն է, որ երկրի գերիշխանութիւնը տալիս է ամբողջ ժողովրդի, մասնաւորապէս նրա մեծամասնութիւնը կազմող աշխատաւոր «ղէմոսի» ձեռքը: Եթէ աշխատաւոր հսկայական մեծամասնութիւնը կուլտուրապէս բարձր է կանգնած և իր սեփական շահերի գիտակցութեանը հասած է, նա կընտրէ իր մարդկանց, իր իղէօլօզներին, իր շահերը պաշտպանողներին և երկրի պարլամէնտը կազմած կը լինի իսկական ղէմօկրատիական ոգով տոգորւած անձերից: Իսկ եթէ այդ աշխատաւոր ու կեղեքող մեծամասնութիւնը դեռ դասակարգային գիտակցութեան չէ հասած, դեռ բաւարար չափով զարգացած չէ, նա կընտրէ բուրժուանների, պօլիտիկան ու ճարպիկ շարժատանների: J

Երբ բոլոր սօցիալիստական կուսակցութիւնները—թէ ս.~դ., թէ ս.~ր., թէ դաշնակցական—պահանջում են ուսմկավարական հանրապետութիւն, նրանք այդ բառերի տակ անպայման ենթահարում են պարլամէնտարական սիստէմը—մինիստրների կարինէտ և խմբական ու անհատական պատասխանատուութիւն դէմօկրատիական պարլամէնտի և դատարանի առջև:

Սակայն «հասարակական պայմանների փոփոխելով փոփոխւում են նաև քաղաքական իղէալները: Չը կայ պետական կազմի մի այնպիսի ձև, որը լինէր բացարձակ ամենալաւը բոլոր պայմաններում» *):

Այսպէս՝ մի ոմն Բ. Բադին, մի սօցիալ-դէմօկրատ, «Мо-

*) К. Каутский—«Республика и соц. дем. во Франции» 1901-1902-го года.

108-92
19-8752

ЛОТЬ» ընկերութեան ձեռքով հրատարակել է մի փոքրիկ բրոշուր — «Государственное устройство во Франціи» («Պետական կազմը Ֆրանսիայում»), որի մէջ երկինք է հանում Ֆրանսիական ներկայ հանրապետութիւնը, ոգևորում է այդ բուրժուական-բիւրօկրատիական կազմով... Նոյնն արին և «հայ սօցիալ-դէմօկրատ» կոչւած խմբակի լիդէրները, նրանց իդէօլօգները: Նրանք պնդեցին հայ մամուլի մէջ, որ Ֆրանսիան բիւրօկրատիական երկիր չէ, որովհետև այնտեղ պարլամէնտարիզմ կայ... Եւ այդ բոլորը նրանք պնդում էին յանուն սօցիալիզմի, յանուն Մարքսի բազմաշարշար թէօրիայի: Այն ինչ ուսուցիչներն այլ բան են պնդում: «Այդ բիւրօկրատիական-միլիտարիստական, բանկիրների ձեռքով կառավարող հանրապետութեանը ես հակադրում եմ 1793 թւի դէմօկրատիական հանրապետութիւնը», ասում է Կառլեյկին (տես ծանօթութեան մէջ յիշուած դիրքը, 1 երես):

✓ Երբ դաշնակցականները, դուրս գալով ս.-դէմօկրատիական շարժումից, «դէմօկրատիական հանրապետութիւն» բառերին աւելացնում են «Ֆէդէրատիվ» խօսքն էլ, կովկասեան ս.-դէմօկրատ կոչւած անձերը փրփրում, կատաղում են և հայհոյում դաշնակցականներին ու նրանց ֆէդէրատիվ սկզբունքը—կրկին յանուն մարքսիզմի:

Այս դէպքում էլ նրանք նոյնքան ողբալի հակասութեան մէջ են իրանց վարդապետութեան ներկայ արտայայտիչի—Կառլեյկու հետ, որքան Ֆրանսիական հանրապետութեան գնահատման խնդրում:

Վէճի զլխաւոր առարկան ս.-դէմօկրատների և դաշնակցականների մէջ (քաղաքական պահանջների խնդրում) կենտրոնացման և ապակենտրոնացման հարցն է, մանաւանդ դրանց աստիճանը:

Մենք արդէն ասացինք, որ Ֆրանսիայում կայ հանրապետութիւն, կայ քառանգամ ընդհանուր ընտրողական իրաւունք, կայ պարլամէնտարիզմ և այլն, և այլն. սակայն Կառլեյկին կծու կերպով յարձակում է այդ կողմի վրայ, միլիտարիստական և բիւրօկրատիական է անւանում նրան, հակառակ կովկասեան սօց. դէմօկրատներից շատերի:

Ինչով բացատրել այդ բանը: Միակ բացատրութիւնը կենտրոնացման և ապակենտրոնացման սկզբունքների մէջն է: Կառլեյ-

կին համեմատում է Ֆրանսիական ներկայ հանրապետութիւնը 1793-ի հանրապետութեան հետ: Իսկ այդ երկուսի միակ խոշոր տարբերութիւնը ոչ թէ հարկային կամ այլ խնդիրների մէջն է, այլ կենտրոնացման և ապակենտրոնացման սկզբունքներում:

Անցնենք այժմ կառավարչական այդ երկու սխառէմներին:

Գ Լ Ո Ւ Խ Բ.

ԿԵՆՏՐՕՆԱՑՈՒՄ ԵՒ ԱՊԱԿԵՆՏՐՕՆԱՑՈՒՄ

Կենտրոնացում—նրա բնորոշումը և նկարագրութիւնը: Տեսակները (օրէնսդրական, վարչական և դատական): Ռուսաստան և Ֆրանսիա իբր կենտրոնացման օրինակներ: Հիմքեր: Կամայականութիւն և բիւրօկրատիզմ:—Ապակենտրոնացում. բնորոշում և նկարագրութիւն: Տեսակները: Ինչո՞ւ է նա անհրաժեշտ: Այդ երկու սկզբունքներն իրականութեան մէջ: Կրկնակի շարժում:

Ինչ ձևի կառավարութիւն էլ կողքէք վերցրէք,—միապետութիւն թէ հանրապետութիւն,—նա կարող է լինել կենտրոնական կամ ապակենտրոնական: Միայն անսահման միահեծանութիւնն է, որ սկզբունքով արդէն իսկ կենտրոնական պէտք է լինի: Սակայն որ շուտով մենք կը տեսնենք (Ռուսաստանի մասին խօսելիս), որ միահեծանութիւնն անգամ ստիպւած է զոլում իրան ընդունել ապակենտրոնացման սկզբունքը՝ ի հարկէ խղճուկ չափերով:

Ժամանակակից պետութիւնն ունի երեք էական ֆունկցիաներ—օրէնսդրական, վարչական և դատական: Այդ երեք գլխաւոր պարտականութիւնները թէ միասին և թէ ջոկ-ջոկ պետութիւնը կարող է իրագործել կամ կենտրոնացման կամ ապակենտրոնացման սխառէմով: Կան պետութիւններ, որոնց մէջ այդ կենտրոնացման սխառէմով: Կան պետութիւններ, որոնց մէջ կենտրոնացած է օրէնսդրութիւնը, իսկ դատավարութիւնը և վարչութիւնն ապակենտրոնացած են (Անգլիա, մասամբ Բաւարիա, Բէլգիա և այլն): Սակայն կան և երրորդ տեսակի պետութիւններ, որոնց մէջ ապակենտրոնացած է թէ օրէնսդրութիւնը, թէ դատավարութիւնը և թէ վարչութիւնը (Չեխոսլովակիա, Բրազիլիա, Մէքսիքա, Միացեալ-Նահանգներ, Գերմանական կայսրութիւն և այլն):

Լիակատար կենտրոնացման սխառէմ ունեցող պետութեան մէջ կայ մի կենտրոնական իշխանութիւն, որից բղխում է և օրէնսդրութիւնը, և՛ դատավարութիւնը, և՛ վարչութիւնը: Այդ կենտրոնական իշխանութիւնը միահեծանութեան երկիրներում ինքնակախ է, սահմանադրական միապետութեան մէջ թագաւորը, նրա նշանակած մինիստրները և պարլամէնտը, իսկ հանրապետութեան մէջ նախագահը, պարլամէնտը և մինիստրները:

Օրէնսդրական կենտրոնացման դէպքում երկրի բոլոր օրէնքները—համապետական, ընդհանուր, տեղական թէ մասնաւոր բնոյթ ունեցող—սահմանում է մի կենտրոնական պարլամէնտ կամ մի անհատից նշանակած անձերի խմբակ: Այդ օրէնքները պարտադիր են երկրի մի ծայրից մինչև միւսը, թէկուզ այդ երկրում լինեն բազմաթիւ ազգեր, տարբեր կուլտուրաներով, տարբեր պատմական ու ժառանգական ընդթիւններով, տարբեր տէմպերամէնտներով ու զարգացումով: Օրէնքը մէկ է և պարտադիր բոլոր տեսակ հարցերում—քաղաքական թէ քաղաքացիական, պատժական թէ ժառանգութեան, ամուսնական թէ այլ ինդիւիդուալ:

Եթէ մի երկրում տիրում է դատավարական կենտրոնացում, դատաւորները նշանակւում են կենտրոնից—իբր պաշտօնեաներ (բիւրօկրատներ)—սկսած ամենախոնարհներից մինչև ամենաբարձրերը: Դրանց կտրած գատերի դէմ կարելի է վճարել գանգատներ տալ ստորից սկսած դէպի միջին, բարձր ու բարձրագոյն ատեանները—մինչև կենտրոնական համապետական դատարանը: Եւ կենտրոնական դատարանը յայտնում է իր վերջնական կարծիքը բոլոր գատերի մասին կամ բեկանում է եղած վճիռները՝ համաձայն մի և անխախտ օրէնքների...

Վարչական կենտրոնացման սխառէմի ժամանակ կայ միայն կառավարող մի օրգան—մինիստրը. միւս բոլոր օրգանները հանդիսանում են նրա օգնականները, նրա ենթարկեալները: Օրէնքն անմիջապէս և միտն նրան է դիմում: Նրան է յանձնւում օրէնքի գործադրութիւնը *):

Վարչական այդպիսի սխառէմի մէջ ինստանցիաներն իսկապէս չքանում են, նրանք թէև անուշով գոյութիւն ունեն, բայց

*) R. Springer «Der Kampf der Osterreichischen Nationen um den Staat» Բ. մաս § 28—«կենտրոնացում և ապակենտրոնացում»:

ոչ այլ ինչն են, եթէ ոչ մինիստրից (կենտրոնից) նշանակւած պաշտօնեաներ (բիւրօկրատներ): Մինիստրն է նշանակում, օրինակ, նահանգապետներ կամ գաւառապետներ և նրանց յանձնում որոշ գործեր: Սակայն մինիստրը կարող է չըստպասել, որ գործերը կանոնաւորապէս անցնեն բոլոր ինստանցիաներով և իրան հասնեն. նա կարող է միջամտել և իր ուզած վճիռը կամ որոշումը թելադրել: Նա կարող է ինքը վճեռել նահանգապետին կամ գաւառապետներին ընկած գործը, փոփոխել նրանց արած կարգադրութիւնները կամ տւած վճիռը:

Բնականաբար այդ սխառէմի ժամանակ խօսք անգամ չէ կարող լինել ստորին և միջին օրգանների իրաւասութեան պարտադիր և օրինական սահմանների մասին: Եթէ, օրինակ, նահանգապետներին տուէր վերջնականապէս այս ինչ գործերը լուծելու և կարգադրելու իրաւունք, և մինիստրն այլևս իրաւունք չունենար նրա դրած վճիռը փոխելու, այն ժամանակ «կենտրոնացման սխառէմը խախտւած կըլինէր և մինիստրը, ամենաշատը, կը լինէր մի վերահսկող օրգան»:

(Շարինգեր):
Ներկայումս կենտրոնացման կլասիք երկրներն են Ֆրանսիան և Ռուսաստանը: Համառօտակի նկարագրենք այդ երկու երկրներում տիրող պետական մեքենան, որպէսզի պարզ երևայ, թէ ինչպէս է գործում կենտրոնացած պետական մեքենան:

Սկսենք Ռուսաստանից, որովհետև դա մերն է, մեզ աւելի ծանօթ. դրա ինչ լինելը մեր կաշու վրայ ենք զգացել:

Ռուսական կայսրը դիտւում է թէ քաղաքական, թէ վարչական, թէ կրօնական պետ—տէր ու տիրական իր երկրի: Նա է կան, թէ կրօնական պետ—տէր ու տիրական իր երկրի: Նա է կան, թէ կրօնական պետ—տէր ու տիրական իր երկրի: Նա է կան, թէ կրօնական պետ—տէր ու տիրական իր երկրի: Նա է կան, թէ կրօնական պետ—տէր ու տիրական իր երկրի:

Ռուսական բոլոր օրէնքները հրատարակւում են կայսրի անունով: Կեանքի բոլոր մասերի վերաբերմամբ բարձրագոյն հրանունով: Կեանքի բոլոր մասերի վերաբերմամբ բարձրագոյն հրամանով: Կեանքի բոլոր մասերի վերաբերմամբ բարձրագոյն հրամանով:

Կայսրը նշանակում է մարզիկ, որոնք հաւաքւած կազմում են պետական խորհուրդը: Այդ նշանակովի հիմնարկութիւնը մշակում է օրէնքների նախագծեր, որոնք երբէք օրէնք չեն դառնայ,

մինչև որ կայսրը հաւանութիւն չը տայ և չը մակագրէ—«Եղիցի բստ այսմ»—«быть по сему».

Պետական խորհրդի անդամներին կայսրը նշանակում է երկար ժամանակ պաշտօնավարած բարձրաստիճան ծառայողներից: Այդ խորհուրդը բաժանուում է ղէպարտամէնտների, համաձայն իր զբաղմունքների բնոյթի—նայելով թէ ինչ նիւթերի վերաբերեալ օրինազօծեր է մշակելու:

Երբեմն կայսրը նախագահում է Պետական խորհրդի նիստերին: Եթէ մի օրինագիծ մշակելիս՝ խորհուրդը բաժանուեց երկու կարծիքի, այդ երկուսն էլ ներկայացում են կայսրին: Նա կարող է անցնել նոյն իսկ չնչին փոքրամասնութեան կողմը, և այն ժամանակ այդ կարծիքը կը դառնայ օրէնք: *) Կը նշանակէ այդ բարձրագոյն օրէնագիր մարմինը ոչ մի որոշ իրաւունք չունի, այլ լոկ մի խորհրդակցական հաստատութիւն է ինքնակալի համար:

Ի հարկէ այդ հարցում բաւական փոփոխախութիւններ եղան 1905 թւի օգոստոս 6-ի, հոկտեմբեր 17-ի և հետեւեալ մանիֆէստներով, սակայն դրանք լինելով դեռ տատանող մեծութիւններ, մենք դրանց մասին չենք խօսում: Ո՞վ է իմանում, դեռ ինչ անսպասելիքներ է պահում իր գրկում մեր յեղափոխական յեղեղով ժամանակը: Մենք նկարագրում ենք այն՝ ինչ որ կար մինչև 1905 թւի օգոստոսի 6-ը: Այդ մանիֆէստներից յետոյ իրար հետ կատաղի մրցման են դուսր եկել սահմանադրական և ինքնակալական հոսանքները. որը կը յաղթէ մօտ ժամանակներս, դեռ պարզ չէ, թէև հաստատ յայտնի է, որ վերջնական յաղթութիւնը միշտ տարել է ու պիտի տանի ժողովրդի գերիշխանութեան զաւրափարը:

Մինիստրները և զանազան ղէպարտամէնտների գլխաւոր կառավարիչները խորհուրդին ներկայացնում են զանազան օրէնսդրական նախագծեր: Ֆինանսների մինիստրն էլ նրան է ներկայացնում պետական ել և մուտքը կամ բիւջէտը: Խորհուրդը քննում է այդ բոլորը և յետոյ ուղարկում կայսրին ի հաստատութիւն:

Օրէնքներն այդ ուղիով կազմելուց յետոյ՝ պէտք է հրատա-

*) Լուրեր էին պտտում, որ այդպիսի փոքրամասնութեան կողմն անցնելով, կայսրը օրէնք էր գործրել հայ եկեղեցու կալածների գրաւումը 1903-ին:

րակեն: Օրէնքի հրատարակութիւնը յանձնւած է Սէնատին մի կլասիքական ֆրագով, որով վերջանում են կայսերական ուկագները. «Թող կառավարիչ Սէնատն անէ այն ամենը, ինչ որ հարկաւոր է ներկայ հրամանն իրագործելու»: Սէնատը միաժամանակ է նաև օրէնքի ճիշտ գործադրութեան վրայ հսկող բարձրագոյն մարմինը:

Սէնատի անդամները նշանակում են կայսրի կողմից՝ ի հարկէ հին ու բարձրաստիճան պաշտօնեաներից: Սէնատն էլ ունի իր ղէպարտամէնտները զանազան տեսակի գործերի համար:

Սէնատը հանդիսանում է և իբր բարձրագոյն վերահսկիչ մարմին, և իբր երկրի բարձրագոյն դատարան: Նա է որոշում օրէնքի ստոյգ իմաստը, երբ օրէնքի գործադրութեան ղէպքում պատահում են թիւրիմացութիւններ, երկմտութիւններ կամ զրժպատահում են թիւրիմացութիւններ, երկմտութիւններ և քաղաքային և ր ըմբռնելի ղէպքեր: Նա է քննում ղեմատուփների և քաղաքային ինքնավարութիւնների զանգատները, կառավարական իշխանութիւնների անկանոն գործողութիւնները և այլն: Սակայն դրա հետ միասին նա վերջնական վճիռներ է տալիս նա և դատական այն բոլոր գործերին, որոնք անկատար են մնացել նահանգական դատարաններում կամ դատաստանական պալատներում: Այդպիսով նա հանդիսանում է կայսրութեան բարձրագոյն դատարանը:

Սէնատից ներքև գտնւում են դատաստանական պալատները, յետոյ նահանգական կամ շրջանային դատարանները, յետոյ հաշտարար դատարանները և այլն, մինչև գիւղական դատարաններն ու դատաւորները:

Դատաստանական այս հիւերարիւիայի ամբողջ սանդուխքով գործերը վճռարեկ կարգով մինչև սենատ հասնելուց յետոյ՝ ստանում են իրանց կամ վերջնական լուծումը, կամ վճռաբեկումը: Սակայն կայսրը կարող է, իբր անձնական շնորհ, փոխել սէնատի տւած վճիռը:

Այսպիսով, ինչպէս օրէնսդրական իշխանութեան, այնպէս էլ դատականի գլխին կրկին կանգնած է երկրի ինքնակալ պետը. նրա տէրը:

Անցնենք զուտ վարչական մասին: Գործադիր կամ վարչական իշխանութեան միահեծան տէրը ևս հանդիսանում է կայսրը: Նա կառավարում է իր երկիրը: Նա նշանակում է մինիստրներ (ներքին և արտաքին գործերի,

զինւորական, ֆինանսների, երկրագործութեան և պետական գոյքերի, պալատական, հաղորդակցութեան ուղիների և այլն) և նրանց է յանձնում իր պարտականութիւնների զանազան մասերը:

Երկրի բոլոր գործերի միակ պատասխանատուն կայսրն է. նա պատասխանատու է միայն Աստուծու առջև, որովհետև նա թագաւոր-կայսր է «կամօքն Աստուծոյ»: Մինիստրները, լինելով լիակատար տէր իրանց մասերի, պատասխանատու են միայն կայսրի առջև: Նրանց ոչ ոք չէ կարող նշանակել ու հրաժարեցնել, դատի ենթարկել կամ վարձատրել— ոչ ոք, բացի ինքնակալ կայսրից:

Մինիստրները պէտք է գործադրեն պետական խորհրդի մշակած ու կայսերահաստատ օրէնքները: Բայց նրանք, բացի այդ օրէնքներից, անձամբ զեկուցումներ են տալիս կայսրին իրանց գործերի մասին և յաճախ, շատ յաճախ առաջարկում են զանազան ժամանակաւոր կանոնների նախագծեր, որոնք կայսրը հաստատում է և որոնք, առանց Պետական խորհրդի, գառնում են ժամանակաւոր օրէնքներ երկրի համար: Յաճախ այդպիսի ժամանակաւոր օրէնքներն այնքան են բազմանում ու այնպիսի հակասական ոգի են կրում իսկական օրէնքների հանդէպ, որ վերջիններս կարծես դադարում են գոյութիւն ունենալուց և ամբողջ երկիրն ընկնում է այդ «ժամանակաւոր» կոչւած կանոնների վարչական ճնշիչ լծի տակ:

Երբեմն կայսրը արտակարգ կարեւոր գործերի համար խորհրդակցութեան է հրաւիրում մինիստրներին իր կամ իր նշանակած մէկի նախապահութեամբ. դա կոչւում է Մինիստրների խորհուրդ:

Մինիստրները գործում են ջոկ-ջոկ, իրանց զիւանների, օգնականների և իրանց նշանակած պաշտօնեանների ամբողջ բանակի գլուխն անցած: Երբ պատահում են այնպիսի գործեր, որոնք վերաբերում են մի քանի մինիստրութիւնների իրաւասութեան, այն ժամանակ մինիստրները հաւաքւում են միասին, կազմում մինիստրների Կօմիտէտ և վճռում այդ տեսակ խնդիրները: Ի միջի այլոց՝ այդ կօմիտէտին էր պատկանում առաջ «վիսասակար ուղղութիւն» ունեցող թերթերի փակումը: Այժմ այլ ևս այդ կօմիտէտին զլիսացաւանք պատճառելու կարիք չը կայ թերթեր փակելու համար. օրէնք է հրատարակւած, որ թերթերը կարող են պատ-

ժրել կամ փակել միայն դատական ճանապարհով, սակայն երբ զինւորական դրութիւն է, զենահանգապետն իրաւունք ունի առանց դատի փակել ամեն մի թերթ «մինչև զինւորական դրութեան վերացումը»: Բայց որովհետև զինւորական դրութիւնը տարածւած է կայսրութեան համարեւա բոլոր մասերում, և այն էլ անորոշ ժամանակով, այդ պատճառով օրէնքը չքացել է, տիրում է «ժամանակաւոր կանոնը»:

Ինչպէս որ մինիստրը պատասխանատու է միայն կայսրի առջև և դատի կարող է ենթարկել միայն կայսրի ձեռքով, այնպէս էլ մինիստրի նշանակած բոլոր պաշտօնեանները պատասխանատու են իրանց անմիջական մեծաւորների առջև և դատի կարող են ենթարկել միայն այն ժամանակ, երբ մեծաւորը համաձայնեն Դատարանն առանց մեծաւորի այդ համաձայնութեան՝ չէ կարող պատասխանատուութեան կոչել որ և է պաշտօնեայի: Իսկ դա նշանակում է պատասխանատուութեան կտարեալ բացակայութիւն: Այդ չարիքից առաջացած դժոխքն ամենքին յայտնի է: Ո՛րքան ապօրինի գործեր են կատարւում, որ մարդիկ աչքով տեսնում են, բայց կամ վախենում են բողոքելուց, կամ աւելորդ են համարում, որովհետև գիտեն, որ ըլրօկրատիական դասն իր անդամներին պաշտպանում է...

Մինիստրից յետոյ վարչական սանդուխքով ներքև են իջնում նահանգապետներ, գաւառապետներ, գաւառամասերի պրիստաւաներ և այլն: Բացի դրանից՝ կան նաև փոխարքաներ, գեներալ-նահանգապետներ և այլն:

Այս բոլորը նշանակովի պաշտօնեաններ են, որոնք կախւած են կամ մինիստրի կամ կայսրի կամքից: Մինիստրը կարող է ամեն վայրկեան միջամտել նահանգապետների, գաւառապետների և ուրիշ «իշխանութիւնների» գործառնութեան մէջ, ստիպել, որ այս ինչ ձեռով լուծեն այս ինչ խնդիրները, ինքն անել իր ուղած կարգադրութիւնները: Մի խօսքով, նա ինքնակալ է իր մինիստրութեան մէջ և իր ինքնակալութիւնը կարող է խախտել միայն կայսրը...

Ահա Ռուսաստանում օրէնսդրական, դատական և վարչական սխաւէմի համառօտ և խիստ թերի պատկերը:

Ինչպէս տեսնում ենք, ամենայն ինչ ըզխում է Պետերբուրգից և ամենայն ինչ հոսում է դէպի Պետերբուրգ հըսկայական կայսրութեան բոլոր ձայրերից: Ոչ մի երևոյթ չէ կա-

բող իրաւապէս տեղի ունենալ առանց Պետերբուրգի մարզիկ մը տաժո՞ւմ են կենտրոնի հրամանով, ծիփաղում ու տխրում են այնտեղի մատի շարժման համաձայն:

Ռուսաստան—կը նշանակէ Պետերբուրգ և նրանից նշանակւած տասնեակ հազարներով պաշտօնեաները: «Ռուսաստանի բաղդը վարում են 40,000 ստօլ-հաշարնիկներն», ասել է Նիկօլայ 1-ին կայսրը: Եւ դա ճշմարիտ է, դրանք կարող են և՛ աջ ծռել, և՛ ձախ ոռուսական բաղդի անիւը... սակայն դրանք ծռում են միշտ դէպի կործանում, դէպի իրանց շահը, ծծելով ժողովրդի բոլոր կենսունակութիւնները, որդի նման կրծելով ու նեխեցնելով ժողովրդական տնտեսութիւնը, կամազուրկ անելով ազգերի բոլոր ինքնուրոյն ուժերը...

Սակայն դեռ մի կողմ թողնենք կենտրոնացման արտադրած պտուղները, նրա փասնները, դեռ անցնենք մի այլ ձևի կենտրոնացման, որի մէջ «կամօրն Աստուծոյ» թագաւոր կամ կայսր չը կայ, այլ կայ ժողովրդապետութիւն: Անցնենք Ֆրանսիա:

Ֆրանսիական հանրապետութեան մէջ ժողովուրդն ինքը համարում է իր գերիշխանը. նա է սահմանում իր բոլոր օրէնքները: Բայց որովհետեւ անհնար է 39 միլիօն ազգաբնակչութեան բոլոր 21 տարեկան այր մարդկանց միատեղ հաւաքել և ընդհանուր ազգի համար օրէնքներ մշակել, այդ պատճառով երկրի օրէնքների մշակութիւնը յանձնւած է մի կենտրոնական օրէնսդիր իշխանութեան, բաղկացած երկու մասից—շամբրից և սենատից:

Այդ երկու պարլամէնտներն էլ ընտրովի են: Ֆրանսիայում գոյութիւն ունի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրութիւն: Ընտրող է համարւում ամեն մի ֆրանսիացի տղամարդ, որ հասել է 21 տարեկի, իսկ ընտրելու իրաւունք է վայելում ամեն մի 25 տարեկան:

Հարիւր հազար մարդուց ընտրւում է մի պատգամաւոր: Այդ բոլոր ընտրւածները*) միանում և կազմում են «շամբրը», որ համապատասխանում է անգլիական Ստորին Պարլամէնտին կամ Համայնքների ժողովին: Շամբրի անդամներն ընտրւում են

*) 1902 թւի ընտրութիւնները տւին 591 պատգամաւոր: (Տես «VIII le'gislatiure—Nos de'pute's».

4 տարով և այդ ժամանակամիջոցը կոչւում է «օրէնսդրական շրջան»: Այժմ եղած շամբրը 9-րդ օրէնսդրական շրջանի կազմն է:

Մենք շատ հեռու դնացած կը լինէինք, եթէ սկսէինք մանրամասն քննութեան ենթարկել ֆրանսիական «դէմօկրատիական հանրապետութեան» ընտրական սխտէմի բոլոր թերութիւնները. մենք այդ չենք անի:

Օրէնսդիր իշխանութեան երկրորդ մարմինը սէնատն է: Նրա անդամները—սէնատօրները ևս ընտրւում են, միայն ոչ ուղղակի, այլ երկաստիճան սխտէմով: Ամեն մի դէպարտամէնտ (նահանգ) կազմում է իր նահանգական ժողովը, որի մէջ մտնում են նահանգի ընտրած բոլոր պատգամաւորները շամբրի համար, են նահանգի ընտրած բոլոր պատգամաւորները շամբրից ու տեղական և շրջանային բոլոր հաստատութիւնների կողմից ուղարկւած անձերը: Որովհետեւ այդ պատգամաւորներն ու տեղական հաստատութիւնների պաշտօնեաներն ընտրւում են ժողովրդից և որովհետեւ այդ մարդիկն էլ հաւաքւում և ընտրւում են սէնատօրներ, ուրեմն՝ վերջիններիս ընտրութիւնը կատարւում է երկաստիճան եղանակով: (ЭСМЕНЬ-«ОСНОВН. НАЧ. ГОС. ПРАВА» т. II):

Սէնատօրներն ընտրւում են 9 տարով: Սէնատօրը լինելու է առնւազը 40 տարեկան: 3 տարին մի անգամ սէնատի 1/3 մասը հեռանում է պաշտօնից և նոր ընտրութիւններ են տեղի ունենում:

Սէնատը համապատասխանում է անգլիական «Լօրդերի ժողովին» կամ Վերին պարլամէնտին: Սակայն Անգլիայում այդ հիմնարկութիւնը հանդիսանում է իբր մնացորդ հնութեան—տնայիաւորական հզօր ազնւական դասակարգի շահերը պաշտպանող մի մարկան հզօր արդէն անախրօնիղմ է դառել և որի դէմ արմատամին, որ այժմ արդէն անախրօնիղմ է դառել կռիւ են յայտարարել իսկ կան ու ազատամիտ տարրերն արդէն կռիւ են յայտարարել: Ֆրանսիայում սէնատը խոշոր բուրժուազիայի ստեղծագործութիւնն է: Նրա երկաստիճան ընտրութիւնները, կանդիդատների 40 տարեկան հասակը, 9 տարեայ ժամանակաշրջանը աշխատաւոր ժողովրդի շահերի իսկական պաշտպանների համար չափազանց գժւարամտաչիլի դարձնելուց զատ, ազատում են սէնատօրներին տիրող արմատական հոսանքների, ազգի մեծամասնութեան կարծիքների ազդեցութիւնից:

Սէնատը բուրժուազիայի կողմից ծառայում է իբր սանձ, իբր արգելափակ շամբրի համար, որի մէջ աշխատաւոր մասսաներն աւելի ներկայացուցիչներ կարող են ունենալ, որովհետեւ

ընտրութիւններն ուղղակի են, և իրանց պատգամաւորների վըրայ աւելի մեծ ազդեցութիւն կարող են գործել, որովհետեւ ընտրական միջոցը համեմատաբար կարճ է—լոկ 4 տարի:

Ամեն մի օրինազիծ կարող է ըզլիսել կամ առանձին պատգամաւորներից, կամ նրանց որ և է խմբակցութիւնից, կամ որ և է մինիստրից և կամ հանրապետութեան նախագահից:

Օրինազծերը նախ և առաջ ենթարկուում են շամբրի քննութեանը: Եթէ շամբրն ընդունում է այս կամ այն օրինազիծը, իսկոյն նա տարւում է սէնատ: Ոչ մի օրինազիծ չէ դառնում օրէնք, եթէ նա չէ քէարկւած և չէ ընդունւած շամբրի ու սէնատի կողմից «մի և նոյն բառերով ու բանաձևերով» *): Եթէ սէնատը համաձայն չէ շամբրում ընդունւածի հետ, կատարում է իր կրճատումները, յաւելումները կամ փոփոխութիւնները և նորից յետ ուղարկում շամբրին:

Երբ երկու «պալատներն» ընդունում են որ և է օրէնք, նա իսկոյն ուղարկւում է հանրապետութեան նախագահին, որը, եթէ համաձայն չէ, կարող է յետ ուղարկել շամբրին իր պատճառաբանւած փոփոխութիւնով. եթէ շամբրն ու սէնատն ընդունեցին կամ չընդունեցին նրա ներմուծութիւնները, նորից ուղարկւում են նախագահին և նա պարտաւոր է որոշ ժամանակամիջոցում հրատարակել այդ օրէնքը:

Ուրեմն՝ նախագահն, իսկապէս սասած, օրէնսդրական գործում ոչ մի առանձին տեղ չունի. նա հանդիսանում է իբր գործադիր իշխանութեան կամ երկրի կառավարութեան գլուխ, խորհրդակցական ձայնով օրէնսդիր մարմինների մէջ:

Անցնենք այժմ վարչական սիստէմին, մի կողմ թողնելով դատավարական մեխանիզմը, որովհետեւ Փրանսիայում դատարաններն էլ ենթակայ են նոյն կենտրոնացման սխառէմին, ինչ որ Ռուսաստանում:

Փրանսիական երկու պարլամէնտները միացած, կազմում են «Լգգային ժողով», որը կարող է փոփոխութեան ենթարկել Փրանսիական սահմանադրութիւնը: Այդ Ազգային ժողովն է ընտրում հանրապետութեան նախագահ 7 տարի ժամանակով **):

*) *See* La Constitution française

**) Эсменъ, т. II

Հանրապետութեան նախագահը երկրի բարձրագոյն վարիչն է: Վարչական միւս բոլոր գործակալներն ու պաշտօնեաները կառավարում են նրա անմիջական կամ միջական յանձնարարութեամբ: Սակայն նա կառավարում է ոչ միայն ուրիշների միջոցով, այլ երբեմն անմիջապէս անձամբ, իր սեփական «հրամաններով» (*de crets*):

Նախագահը շամբրի տիրող կուսակցութեան պարագլուխներից մէկին կամ միւսին յանձնում է կազմել մինիստրութիւն կամ կարիւնտ: Ամեն մի մինիստր մի ղէպարտամէնտի կամ գործերի մի շրջանի գլուխ է: Փրանսիայում մինիստրութիւնները 10 հատ են. արտաքին գործերի, ներքին գործերի, արդարադատութեան և պաշտամուէքների, Ֆինանսների, պատերազմական կամ զինւորական, ծովային, ժողովրդական կրթութեան և գեղարւեստի, հասարակական աշխատանքների, երկրագործութեան, վաճառականութեան, արդիւնագործութեան և գաղութների:

Մինիստրներն ունեն անմիջական օգնականներ, որոնք ոչ մի վճիռ կայացնելու սեփական իրաւունք չունեն: Այդ օգնականների ժողովը կազմում է մինիստրական ղէպարտամէնտների կենտրոնական ժողովը: Իսկապէս այդ «օգնական», «քարտուղար» կոչւած պաշտօնեաներն են, որ մնայուն ու յարատեւ ըլլալու համար են, աչքի առաջ ունենալով Փրանսիայում տիրող մինիստրական յաճախակի ճգնաժամներն ու կարիւնտների փոփոխութիւնները:

Մինիստրներն են նշանակում իրանց բաժնի պաշտօնեաներին և նրանց արձակում: Նրանք պատասխանատու են պարլամէնտի առջև ոչ միայն իրանց սեփական գործողութիւնների համար, այլ նաև իրանց բոլոր պաշտօնեաների փոխարէն: Ամեն մի պատգամաւոր իրաւունք ունի շամբրում հարցապնդումներ անելու մինիստրի կամ նրա ստորադրեալների այս կամ այն վարմունքի, այս կամ այն ապօրինի քայլի համար: Մինիստրը վարաւոր է պատասխանել եթէ շամբրը գտնում է այդ բացաւորութիւնը բաւարար, վստահութեան քէ է տալիս մինիստրութեան և անցնում ուրիշ հերթական հարցերի. մինիստրութիւնը պայքարից յաղթական է դուրս գալիս: Իսկ եթէ շամբրը գտնում է մինիստրի բացատրութիւնն անբաւարար և եթէ ղէպքը կուտր է, անվստահութեան քէ է տալիս մինիստրութեան. մինիստրութիւնը պարտութիւն է կրում—նա տապալւում է և ստիպւած է հրաժարականը ներկայացնել հանրապետութեան նախագահին:

Մինիստրներին եթէ դատի ենթարկելու կարիք լինի, երկրի ամենայնտամնաց, ամենարուրժուական հիմնարկութիւնը—սէնատը՝ իսկոյն վեր է ածուում բարձրագոյն ատեանի և դատում մեղադրեալին: Պարզ է ռեբեմ, որ դէմօկրատիական և, մանաւանդ, արժատական ու սօցիալիստական տեսակէտներով բացւած դատերն ու մեղադրանքները բորժուս-սէնատորների կողմից միշտ պիտի ենթարկեն արձամարհանքի:

Ֆրանսիան բաժանուում է դէպարտամէնտների (նահանգ), արրօնդիսարմանների (դաւառ) և համայնքների (la commune—մեր վօլօստի նման): Վարչական այդ բաժանմունքների համար էլ գրւած են վարիչներ կամ պաշտօնեաներ—պրէֆէ (մօտաւորապէս մեր նահանգապետը), սու-պրէֆէ (մեր գաւառապետի նման) և մէր (նման մեր վօլօստանօյ-ստարչինայի):

Պրէֆէն կենտրոնական իշխանութեան ներկայացուցիչն է դէպարտամէնտում, օրէնքի գործադրիչը և վերահսկիչը: Դեռ VIII թւականի պլիւվիօզ ամսի 28-ի սահմանադրութեան մէջ (1800-ի նապօլէօնեան ցենտրալիստ սահմանադրութիւնը) սաւած էր. «Պրէֆէն գործադիր իշխանութեան ներկայացուցիչն է դէպարտամանի մէջ»: Երբորդ հանրապետութեան 1871-ի և 75-ի սահմանադրութիւններն անփոփոխ պահել են այդ նախադասութիւնը և «կենտրոնական բիւրօկրատիայի տիրապետութիւնը ամենևին չէ փոխել. պրէֆէն մնում է դէպարտամանի նոյն փոքրիկ ինքնակալը. առանց նրա միջամտութեան համայնքն իրաւունք չունի ոչինչ անելու, իսկ քաղաքապետները համարուում են նրա հպատակները»: *)

Ինչ որ է դէպարտամանի մէջ պրէֆէն, նոյնն է համարեա սու-պրէֆէն արրօնդիսարմանի մէջ: Սակայն նա լիապէս ենթակայ է պրէֆէի հրամաններին:

Բաղաքները և կօմմունաներն ունեն իրանց ընտրովի պետերը կամ «մէր»-երը: Ամեն մի քաղաք և համայնք ունի իր ընտրովի քաղաքային և համայնական խորհուրդները: Իրանց ընտրութիւնը կատարուում է ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քւէարկութիւնով: Իրանք տեղական ինքնավարութեան նման բաներ են, սակայն Ֆրանսիական ծայրայեղ ցէնտրալիզմը դրանց դարձրել է ենթակայ և հպատակ վար-

*) К. Каутский—„Респб. и с.-дем. во Франции»—երես 53.

չական իշխանութեան ձեռքին: Պրէֆէն կարող է փոխել մէրերի և տեղական խորհուրդների վճիռները—բեկանել ընտրութիւնները, այն: Մէրը նշանակուում է ոստիկաններ, բայց պրէֆէն կարող է փոխել նրան: Մէրը և կենտրոնի, և համայնքի ներկայացուցիչն է միաժամանակ *):

Ժողովրդական ընտրութիւնները երբեմն դնում են համայնքները կամ քաղաքային վարչութիւններն իսկապէս առաջադէմ, բանւորական ուժերի իշխանութեան տակ, բայց կենտրոնացած բիւրօկրատիզմը խիտում, փշրում է ժողովրդի ձայնը, նրա ընտրութիւնը: Այսպէս «գէդիստ»-ները (Ֆրանսիական սօցիալ-դէմօկրատները) 1894-ին յաղթեցին Բուրէի համայնական ընտրութիւններում և վարչութիւնն առան իրանց ձեռքը: Այդ մարքսիստական համայնական խորհուրդը որոշեց հիմնել համայնական ձրի դեղարաններ և ձրի համայնական բիւրօ, բանւորական սէկընետարիատի նման մի բան: Սակայն պրէֆէն իսկոյն ջնջեց այդ որոշումները և կենտրոնական վարչութիւնը բռնեց պրէֆէի կողմը **): Ահա Ֆրանսիական ցէնտրալիզմը:

Ֆրանսիական հանրապետութեան մէջ կայ ընդհանուր ընտրական իրաւունք, պարբամէնտարիզմ, ժողովրդապետութիւն... Բայց թէ այնտեղ, թէ ինքնակալ Ռուսաստանում նոյն կենտրոնացման սխտէմն է, նոյն խտտասիրտ ցէնտրալիզմը: Կենտրոնն ամեն ինչ է, գաւառները ոչինչ: Չը կայ Պարիզը, Ֆրանսիան անգլուխ մի դիակ է. չը կայ Պետերբուրգը, մեռած է պաշտօնական Ռուսաստանը: Այդ կենտրոնները, ինչպէս երբեմն Սուգան, Բաբելոնը, Նիւէն ու Նոսը, ծծում են երկրի հարստութիւնները—թէ դրամի, թէ մարդկային,—ծծում, հաւաքում են իրանց մէջ, լրարեցնելով և ուժասպառելով գաւառները:

Ի հարկէ ահագին տարբերութիւն կայ Ֆրանսիական հանրապետական կարգերի և ռուսական ինքնակալ կամայականութեան մէջ: Ոչ ոք չէ կարող պնդել, որ ինքնակալութիւնը և հանրապետութիւնը, որքան էլ վերջինս վատ լինի, հաւասարապէս կորստաբեր են: Բայց հարցը նրանումն է, որ հանրապետութիւն ան-

*) Семень. «Осн. Нач. Гос. права» т. II. и «La grande Encyclopedie» հատ. XII, Centralisation.

**) К. Каутский—«Респ. и с.-д. во Франции.»

որ պէտք է վերստեղծէր 1848 թ.ի հանրապետութիւնը յազ-
թողների ցանկութեան համեմատ (սակայն դրանք չիրականացան),
որ Պարիզեան կօմիտեան փորձեց իրականացնել—մի խօսքով՝
այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք միասին վերցրած կոչուե-
ն հանրապետութիւն: Ընդհակառակը, նա միապետութիւնից փոխ
առաւ տիրապետական այն բոլոր հիմնարկութիւնները, որ երեք
չեղափոխութիւնները ջանացին կործանել» *):

Վ Եւ այսօր թէ Ռուսաստանում, թէ Ֆրանսիայում կենտրո-
նացումը և նրա անխուսափելի դառակ բիւրօկրատիան դառել են
մի հակառակ չարիք, մի ցեց, որ կրժուեմ, ուտում, փթեցնում
են երկրի տեսնութիւնը, նրա «ազատութիւնը»: Վ

Մեզանում վաղուց է արիւնը հոսում է ազատութիւն ձեռք բե-
րելու համար և այդ ազատութեան ամենաէական պահանջներից
մէկն է բիւրօկրատիզմի և ցէնտրալիզմի վերացումը: Չանազան
կուսակցութիւններ զանազան չափի ու տեսակի ապակենտրոնա-
ցում են պահանջում: Սակայն բոլոր «ձախակողմեան» կոչւածնե-
րը, նայն իսկ ջրի լիբերալները՝ պահանջում են վարչական ապա-
կենտրոնացում: Քիչ աւելի արմատականները և յանդուգն մտածողնե-
րը պահանջում են նաև «մի քիչ» օրէնսդրական ու դատական ապա-
կենտրոնացում, որ կրում է ակտօնօմիա անունը, իսկ ոմանք էլ կար-
ծում են, որ Ֆէդէրալիզմն է մեր երկրի փրկութեան միակ ուղին:

Ֆրանսիական բուրժուական կենտրոնացած հանրապետու-
թեան մէջ էլ կան բազմաթիւ տարրեր, որոնք պահանջում են ա-
պակենտրոնացում: Բուրժուական տարրերը—մի քիչ, չափաւոր,
իսկ արմատական և սօցիալիստական **) տարրերն աւելի յան-

*) К. Каутский—ib. եր. 59.

*) «Այսպիսով սօցիալիզմի անելիքը պարզ էր. գաւառների տիրապե-
տութիւնը նայնքան կարևոր էր, որքան և Պարիզին: Պէտք է ամեն կերպ նը-
պաստել տիրապետութեան կենտրոնացած միջոցների (գործիքների) բայցայ-
մանը և տեղական ի ն ը ն ա վ ա ը ու թ ե ա ն լայնացմանը, ի հարկէ ընդհա-
նուր, հաւասար ընտրական իրաւունքի հիման վրայ: Ֆրանսիական սօցիալիստ-
ներից շատերը դեռ այժմ էլ տարբեր կարծիք ունեն այդ մասին: Նրանք, օրի-
նակ՝ մտածում են բանտի արխիտօկրատիական միտումներից հանրապետու-
թեանն սպառնացող վտանգի դէմ կուել՝ գօրացնելով պետութեան ոստիկանա-
կան իշխանութիւնը, փոխանակ միլիցիա մտցնելու»: (К. Каутский. «Респ.
и с.-дем. во Франци»—երես 24):

Իս մի հին նախապաշարմունք է Ֆրանսիական և այլ տեղի սօցիալիստ-

դուգն, աւելի արմատական չափերով: Բիւրօկրատիզմի և ցէնտ-
րալիզմի դէմ կուելը նազ կատարի չէ Ֆրանսիայում քան մեզա-
նում: Միայն թէ մեզանում այդ կուելը—ցէնտրալիզմի, ընդհանուր
բունութեան ու միլիտարիզմի շնորհով, ստացել է արիւնոտ յեղափո-
խական բնաւորութիւն, իսկ Ֆրանսիայում նա դառել է մամու-
լի նիւթ, դադարեցնելով, կուսակցութիւնների և պարլամէնտական
կուելի է վերածել: Եւ Ֆրանսիական ցէնտրալիզմն սկսում է դան-
դաղ, շատ դանդաղ չափերով կրճատել:

Այն Ֆրանսիան, որի մէջ, ինչպէս գրում է դը Մօրսին, «չէ
կարելի շարժել մի քար, փորել մի հոր», շահագործել մի հանք,
չինել մի գործարան առանց իշխանութեան թոյլտուութեան ու վե-
րահակողութեան», այսօր սկսել է կանգնել ապակենտրոնացման
ճանապարհի վրայ:

Մինչև ուր կը հասնէ այդ ապակենտրոնական շարժումը,
Պէտք է ճշտօրէն նախատեսել. մի բան միայն դրական է, որ
դժուար է ճշտօրէն նախատեսել. մի բան միայն դրական է, որ
ցէնտրալիստական կարգերը գոսացրել են երկրի բոլոր գործո-
ղութիւնները, որ ամենափայլուն սկզբունքներն անգամ այդ խիստ

ների մէջ, մի նախապաշարում, որի արմատը պէտք է որոնել Եակօբինների
կուրում (1790-ական թ.երին): Սակայն ապակենտրոնացման ջ ե ը մ պ ա շ տ-
կաւ ն հարլ կաուցկին, գերմանական սօցիալ-դէմօկրատիայի մտաւոր շէֆը,
չառ սուր կերպով նկատում է հերքում է այդ նախապաշարումը. «Եթէ եակօբին-
ները արագիցիաները ենթադրում էին և այժմ էլ յաճախ մտածում են, որ
կենտրոնացած կառավարութեան օգնութիւնով յեղափոխական Պարիզն աւելի
դուրութիւնով կը տիրանար Ֆրանսիային, քան համայնքների լայն ինքնավա-
րութեան դէպքում,—այդ կարծիքը բոլորովին սխալ է: Յեղափոխական Պարի-
զը իշխում էր Ֆրանսիայում յատկապէս այն ժամանակ, երբ համայնքների ինք-
նավարութիւնը հասել էր ամենաբարձր զարգացման: Սակայն եակօբինների ցէն-
տրալիզմը յաղթեց հա մ ա յ ն ը ն ե ը ի Ֆ է դ է ը ա լ ի դ մ ի ն: Ժիրօնդիստ-
ների փորձը գաւառները Պարիզի դէմ ստի հանելու՝ ողբալի վախճան ունեցաւ
1848-ի կենտրոնացած Ֆրանսիայում էր, ինչպէս և 1871-ին, որ
Ժիրօնդիստների ծրագիրը յաջողութեամբ իրագործեց»: (К. Каутский—նայն
տեղ—երես 23):

Մենք յատկապէս ստորագծեցինք «համայնքների ֆէդէրալիզմ» բառերը,
որովհետև մեզ թւում է, թէ Կ. Կաուցկին հաւասարապէս գործ է ածում տե-
ղական ինքնավարութիւնը թէ վարչական և թէ օրէնսդրական ապակենտրո-
նացման մտքով. այն ինչ վերջին դէպքում «տեղական ինքնավարութիւնը»
զառնում է կամ ֆէդէրալիզմ, կամ գոնէ, ակտօնօմիզմ: Սակայն այդ մենք կը
տեսնենք դեռ յետոյ:

ցէնտրալիզմի ազդեցութեան տակ ընկնելով, դառնում են իրանց ծաղրանկարը: Այդպէս դիմանալ չէ կարելի. պէտք է քանդել ցէնտրալիզմը:

Ապակենտրոնացում: Պետական այս սխտէժը ևս կարող է լինել լիակատար և թերի: Նա կարող է դործադրուել և օրէնսդրական, և՛ վարչական, և դատական իշխանութիւնների վերաբերմամբ:

Ընդհանուր առմամբ՝ ապակենտրոնական է այն կառավարութիւնը, որի մէջ ամեն բան վճռողը կենտրոնական իշխանութիւնները չեն, այլ կամ ամբողջովին, կամ մասամբ ձեռնհասութիւնը խլած է կենտրոնից և տրւած գաւառական, նահանգական ու համայնական իշխանութիւններին, որոնք կրում են տեղական իշխանութիւններ կոչումը:

Ապակենտրոնական սխտէժի մէջ վճռող կամ որոշող հիմնական միութիւնը կամ համայնքն է կամ գաւառը (մանր միութիւններ), վճռարեկ ոյժ ունի միջին օղակը—կամ գաւառը, կամ նահանգը—իսկ կենտրոնական իշխանութիւնները զրկւած են միջամտութեան իրաւունքից կեանքի որոշ կողմերի, մի որոշ շարք հարցերի վերաբերմամբ:

Կենտրոնացումը հարթացնող, միօրինակութեան վերածող է: Այդ սխտէժի օրով առւսացում, ֆրանսիացում, պրուսացում շատ բնական ու հեշտութեամբ արտադրող երևոյթներ են: Այն ինչ ապակենտրոնացումը հետևում է երկրի բնական զարգացման. նա բազմազանութեան յարատեցնողն է, տեղական առանձնայատկութիւնների, տեղական ու ազգային կուլտուրաների պաշտպանը:

Այժմ չը կան «ձախակողմեան» կուսակցութիւններ, որոնք պահանջէին լիակատար կենտրոնացում. բոլոր կուսակցութիւնները, ամենաբուրժուական լիբերալներից մինչև ամենաձայրայեղ յեղափոխականները՝ համաձայն են մի կէտում—վարչական ինքնավարութեան, վարչական ապակենտրոնացման խնդրում: Տարբերութիւնները միայն չափի և աստիճանի մէջն է:

Նոյնը չէ կարելի ասել օրէնսդրական ապակենտրոնացման մասին: Այստեղ տեսակէտներն ու կարծիքները բաժանուում են: Բուրժուա կադէտները «մասամբ»—միայն Լեհաստանի և Ֆինլանդիայի համար ընդունում են օրէնսդրական ապակենտրոնացում, իսկ համայն Ռուսաստանի միւս մասերի վերաբերմամբ մերժում

են, համարելով դրանց համար այդ բարիքը դեռ վաղաժամ: Այդպէս՝ նրանք զրկում են Կովկասը, Ուկրայինան, Լատիշներին և այլն, համարելով նրանց դեռ խակ այդ բանի համար *):

Աւստրիայում էլ լիբերալ-բուրժուական տարրերից ոմանք այդպիսի «չափաւոր» հայեցակէտ ունեն օրէնսդրական ապակենտրոնացման մասին:

Ռուսական սօցիալ-դէմօկրատիան հիմնականապէս դէմ է ամեն տեսակ օրէնսդրական ապակենտրոնացման, դրանում տեսնում են տեսակ օրէնսդրական ապակենտրոնացում ու միաձոյլ լով խոշոր վտանգ պրօլետարիատի կազմակերպւած ու միաձոյլ բանակի ուժի վերաբերմամբ: Ամեն տեսակ տեղական աւտօնօմիա ու ֆէդէրացիա, այդ կուսակցութեան խոշոր մեծամասնութեան կարծիքով, էապէս բուրժուական է և ջլատում է բանուրակի միաձոյլ բանակի դիմադրական ոյժը: Կան նրանց բական միաձոյլ բանակի դիմադրական ծրագրի մէջ մարդիկ էլ, որոնք սօցիալ-դէմօկրատիական ծրագրի մէջ «ազգային ինքնորոշում»՝ դատարկ ու անմիտ ֆօրմուլան ուզում են բացատրել կադէտների «էլօլիցիօնիստ» տեսակէտով. «եթէ տեղական աւտօնօմիան կամ ֆէդէրացիան հասունացած պահանջ է ժողովրդի կողմից, թող այդ ժողովուրդն ինքնորոշուի, ինչպէս կուղէ»—ասում են նրանք, նոյն իսկ ֆէդէրացիա կազմէ, նոյն իսկ բաժանուի... Գիտարկ ու անմիտ ֆօրմուլան

Աւտօնօմիայի և ֆէդէրացիայի մասին խօսելիս՝ մենք ման-

*) «О правах национальностей и о децентрализации»—Докладъ бюро съѣзду земск. и город. дѣятелей 12—15 сент. 1905 г. Նայել նաև «Рѣчь» լրագրի 72 և 83 համարները: Այն ժողովրդները, որոնց աւտօնօմիան, աւած է այդ կադէտական թերթերում, «Կեանքն է դրել և պաշտպանւած է ժողովրդի բնազդով»—պէտք է բաւարարութիւն ստանան. բաւարարութիւն չեն ստանալու այն ժողովրդները, որոնց «աւտօնօմիան համարին թէ ինտելիգենցիայի հնարածն է»:

Ռուսական խոշոր բուրժուազիան դէմ է աւտօնօմիայի և ֆէդէրացիայի դեմ և ասլ օրգանները յօդւածները, «Պաշտպան» (Գուչկովի ճառերը, Нов. Вр և այլ օրգանները) ստացող բոնք արտայայտիչ են ուսական խոշոր ու դեռ խիստ մեծ տոկոսներ ստացող կապիտալիստների և մասամբ հողատէրերի, սակայն նա դէմ չէ վարչական ապակենտրոնացման—ի հարկէ «չափաւոր» ձևով, որպէսզի ինքը սիրով դեր կատարէ:

Կադէտներն այժմ, երբ դեռ դիմադրել կուսակցութիւն են—ուրեմն երբ դեռ ևս խիստ կարիք են դրում բոլոր ճեղքածների՝ օժանդակութեան՝ «Рѣчь»-ի լեզուն են բանեցնում,—հասպ ինչ լեզու կը բանեցնեն նրանք, եթէ հասնեն իշխանութեան...

բաման քննութեան կենթարկենք այդ բոլոր պատճառաբանութիւնները, իսկ առայժմ կը բաւականանանք միայն փաստերն ասելով:

Հրէական «Բունդ»-ը, պահանջելով հանդերձ կազմակերպչական ֆէդէրալիզմ, իր ծրագրի մէջ դնում է «ազգային կուլտուրական ինքնորոշման» սկզբունքը, որը մի քիչ աւելի պարզ ու բովանդակաւոր է, քան սօց.-դէմօկրատների «ազգերի ինքնորոշումը»:

Գերմանական սօց.-դէմօկրատիայի խոշոր մեծամասնութիւնն օրէնսդրական ապակենտրոնացման մասին դեռ որոշ կարծիք չէ յայտնել, ովքեր էլ որ առիթ են ունեցել այդ հարցի մասին գրելու, նրանք միշտ պաշտպան են կանգնել ոչ միայն վարչական լայն ապակենտրոնացման, այլ նոյն իսկ ֆէդէրացիայի*):

Լատիշական, Լեհական, Ուկրայինայի սօցիալիստական ազգային կուսակցութիւնները, սօցիալիստ-յեղափոխականները, աւստրիական տմբողջ սօցիալ-դէմօկրատիան օրէնսդրական ապակենտրոնացման ջերմ կողմնակիցներ են: Օրէնսդրական արմատական ապակենտրոնացում է պահանջում նաև Զ. Յ. Իաշնակցութիւնը:

Սակայն ինչ ասել է օրէնսդրական ապակենտրոնացում:

Երբ ապակենտրոնացումը գործադրում է միայն վարչական մասում, պետութեան ներսում գոյութիւն է ունենում տեղական ինքնավարութիւն (самоуправление, selbstverwaltung, selfgovernment): Իսկ երբ նա մուտք է գործում նաև օրէնսդրական իշխանութեան մէջ, ստացւում են տեղական աւտօնօմիաներ կամ ֆէդէրացիա:

Թէ աւտօնօմիան և թէ ֆէդէրացիան (միայն որոշ տեսակէտով) հանդիսանում են օրէնսդրական ապակենտրոնացման գանազան կատէգորիաներ: Իսկ տեղական ինքնավարութիւնը վերաբերում է միայն վարչական ապակենտրոնացման:

Օրէնսդրական ապակենտրոնացման երկրներում, բացի կենտրոնական օրէնսդիր մարմինը, որը օրէնքներ է սահմանում հա-

*) Կառուցիկ «Ազգութիւնների հարցը Ռուսաստանում» — «Յասաջի» գրադարան:

մապետական հարցերի վերաբերմամբ, գոյութիւն են ունենալու մէկ կամ մի քանի տեղական օրէնսդրական մարմիններ էլ, որոնք կամ ընդհանուր օրէնքները լարմարեցնում են տեղական պայմաններին կամ տեղական պայմանների համեմատ նոր օրէնքներ են մշակում:

Երբ մարդ մտնում է մանրադնին քննադատութեան մէջ, թէ ի՞նչն է վարչական և ի՞նչն օրէնսդրական. երբ ուզում էք որոշել իրաւարանական այդ երկու կատէգորիաների սահմանները, պարզ երևում է, որ դրանք իրար հետ խառնած հասկացողութիւններ երևում է, որ դրանք իրար հետ խառնած հասկացողութիւններ են, որոնց այնքան էլ հեշտ չէ իրարից բաժանել: Կան բազմակի օրէնսդրական, որոնք և վարչական են, և՛ օրէնսդրական: Ամեն մի թիւ հարցեր, որոնք և վարչական են, և՛ օրէնսդրական: Ամեն մի ընտրում կամ բանաձև կարող է ամփոփել հարցը միայն կոպիտ ձևով, լոկ խոշոր գծերով:

Օրէնսդրական իշխանութիւնը միայն օրէնքներ է մշակում, իսկ վարչականը գործադրում է այդ օրէնքները: Ի հարկէ սա մի բանաձև է, սիմպլիստ, դիւրամբօնելի և չափազանց տարածած: Մէկ մարմինն օրէնսդիր է, միւսը գործադիր: Իրանից պարզ ի՞նչ կարող է լինել, կը մտածեն գործից անտեղեակ անձերը: Այն ինչ հարցը չափազանց բարդ է: Արդեօք վարչական իշխանութիւնը հրատարակած օրէնքները պիտի գործ դնէ իբր անսիրտ մի մեհրատարակած օրէնքները նրանց կեանքին: Սակայն երբ քեանայ, թէ պիտի յարմարեցնէ նրանց կեանքին: Սակայն երբ վարիչն այդ տեսակ գործ սկսեց, նա այլևս լոկ վարիչ, լոկ գործադիրն այդ տեսակ գործ սկսեց, նա մտել է արդէն օրէնսդրական գործողութեան սահմանը...

Բացի այդ, նոյն իսկ ուսական ապակենտրոնացման իրդճուկ արտայայտութիւններում — զեմստվօներում և քաղաքային ինքնավարութիւններում — պատահում են բազմաթիւ «պարտաւորեցուցիչ կանօններ» կամ որոշումներ, որոնք մի տեսակ տեղական օրէնսդրութիւններ են դառնում որոշ ժամանակով: Չէ՞ որ «օրէնք օրէնսդրութիւններ են դառնում որոշ ժամանակով պարտաւորեցնել ողնել» կը նշանակէ ընդհանուր նորմաներով պարտաւորեցնել որոշ թիւ ազգաբնակչութեան վարել որոշ կերպ կամ չանել որոշ բաներ, կամ ուրիշ խօսքով՝ «օրէնք դնել», կը նշանակէ որոշ թիւ մարդկանց տալ որոշ իրաւասութիւն այս ինչ բանն անելու կամ պարտականութիւն դնել այն ինչ բանը չանելու:

Որքան էլ մի պետութիւն իսկապէս կենտրոնացման սխտէմով կառավարելիս լինի, նա երբէք չէ կարող ոչնչացնել ապա-

կենտրոնացումը կեանքի բոլոր ասպարէզներից *) . տէրրիտօրիալ ու անձնական զանազան խմբեր ու խմբակներ միշտ գոյութիւն կունենան, որոնք անշուշտ կունենան իրանց սեփական օրէնքները, սեփական վարչութիւնը եւ սեփական դատարանը: Ամեն մի քիչ ու շատ խոշոր պետութիւն, ունենալով իր մէջ կամ բազմազան ազգաբնակչութիւն, կամ երբէք չը լինելով միասպաղաղ, միատեսակ ժողովրդից բաղկացած, անպատճառ պետք է ունենայ իր մէջ պետութեան երեք տարբեր ֆունկցիաներն իր զանազան մասերի համար: Այդ մասերն անպատճառ լինելու չեն նահանգի կամ գաւառի բաժանւած. բացի այդ տէրրիտօրիալ բաժանումից՝ կան և անձնական բաժանումներ — ինչպէս վաճառական, հոգևորական, զինւորական, արհեստավարական, գիւղացիական և այլ խմբակցութիւններ: Դրանք իրապէս գոյութիւն ունեն և հաւասարապէս յատուկ են

*) «...Սխտ կենտրոնացած պետութիւն իրականութեան մէջ պատահում է, եթէ չը հաշւենք պետական ամենաչնչին կազմերը (ուսական Polis-ը կամ քաղաք-պետութիւնը), միայն իրը դպրոցական օրինակ, ոչ թէ ըէէլ տիպ: Պետութեան ամեն մի բաժանումը տէրրիտօրիալ մասերի վարչական և դատական նպատակով, անխուսափելիօրէն պայմանաւորում է նրա ապակենտրոնացումը: Պետութեան այդ մասի հիմնարկութիւնները չեն հանգիստանում կենտրոնական կառավարութեան գործադրող օրգաններ կամ զոնէ չեն բացառապէս այդպիսի օրգաններ, այլ ունեն և իրանց վճռող ոյժը կամ իշխանութիւնը, որը որոշ պայմաններում զերծ է կամ դուրս է բարձր հիմնարկութեան վերահսկողութիւնից և վերաբնութիւնից: (Еллинекъ. «Право Сов.Гос.» երես 423)

Այո, եթէ խստութեամբ քննենք, չէ եղել, չը կայ և չէ կարող գոյութիւն ունենալ ոչ մի իսկապէս կենտրոնացած պետութիւն: Օրէնսդրութիւնն անզամ, որ ամենից աւելի արտաքին յարմարութիւն ունի կենտրոնացելու, երբէք իսկապէս կենտրոնացած չէ կարող լինել: Մի ռատիկանութեան, մի համայնքի կամ մի դասի արած պարտադիր ամենաչնչին կարգադրութիւնն անզամ օրէնսդրական ակտ է, թէ և սաղմային ձևով:

«Մինչև իսկ այն պետութիւնը, որի մէջ ամենից աւելի հետեղականութեամբ իրականացած է կենտրոնացման սկզբունքը, ստիպւած է ենթակայ հասարակութիւններին թողնել ինքնուրոյն իրաւասութիւն, որովհետև բոլորովին անհնար է հանդիսանում կառավարական բոլոր ակտերը կախման մէջ դնել կենտրոնական հաստատութիւնների առանձնակի և որոշ ցուցումներից կամ պահանջել նրանց հաստատումը բարձր իշխանութիւնից» (նոյն-425 երես):

Նոյն ձևով կարելի է պնդել նաև հակառակը—որ բացարձակ ապակենտրոնացած պետութիւն էլ չէ եղել և չէ կարող լինել: Պետութեան գաղափարն իսկ ենթադրում է արէն մի ամբողջ ութիւն՝ որոշ տիրիտօրիայի և որոշ ժողովրդի համատեղութիւն, միասնակեցութիւն:

ոչ միայն հանրապետութեան, այլ և բոլոր տեսակի կառավարութիւններին—նոյն իսկ (թերևս էլ աւելի) ինքնակալ միապետութեան: Բոլոր տեսակի կառավարութիւնները, որոնց ձևքի տակ գտնւածը մի փոքրիկ ու միասպաղաղ երկիր չէ, այլ մի քիչ մեծ ու բազմազան բնական ու էտնօգրաֆիական պայմաններ պարունակող, ստիպւած են զանազան օրէնքներ հրատարակել յատկապէս այս կամ այն շրջանի, այս կամ այն մարզկային խումբակցութիւնների համար: Բացի այդ՝ «նա ստիպւած է ստեղծել զբանց համար յատուկ վարչական և դատական օրգաններ: Սա կայն այդ մասնաւոր միջոցները ձևք առնողը կենտրոնական իշխակայն այդ մասնաւոր միջոցները ձևք առնողը կենտրոնական իշխակայն» *):

Նութիւնն է, որը հաշլի է առնում նաև համապետական շահերը **): Այսպէս, զինւորական, առևտրական, եկեղեցական ինքնուրոյն վարչութիւնները, առանձին օրէնքները, նրանց զիսցիպլինան կամ պատժողական իշխանութիւնը կազմում են խոշոր աւտօսօմիաներ, օրէնսդրական, վարչական և դատական ապակենտրոնացման մեծամեծ քայլեր **):

Պետական օրէնքն ու դատարանը կան, սակայն նրանց կողքին օրէնքը թոյլ է տալիս և սրբագործում է միջնորդ դատարանները: Դա ևս ապակենտրոնական, կենտրոնախոյս գոյութեան բազմաթիւ արտայայտութիւններից մէկն է:

«Աւստրիայում, ասում է մեր յաճախ յիշած հեղինակը, իրա-

*) Rud. Springer—«Der Kampf» և այլն § 29 և շարունակութիւն:

**) «Կենտրոնացած կամ ապակենտրոնացած կարող են լինել պետութեան բոլոր նիւթական կամ մասերիէլ ֆունկցիաները: Վերջնապարութիւն՝ սեղմինը, որը նշանակում է ապակենտրոնացման տեսակներից միայն մէկը, չէ զվարակելու կամ չէ խանգարում այդ հարաւորութիւնը: Վարչութեան ապակենտրոնացման հետ միասին կայ նաև օրէնսդրութեան և դատաւստանի ապակենտրոնացումը: Տեղական ռատիկանական կարգադրութիւնները և տեղական կենտրոնացումը: Տեղական ռատիկանական օրէնսդրութեան ակտեր են, իսկ հաստատութիւնները մատերիէլ կամ նիւթական օրէնսդրութեան ակտեր են, իսկ հաստատական, արհեստակցական և միջնորդ դատարանները բանւորների ապահովագրութեան վերաբերմամբ՝ ներկայ պետութեան մէջ ձառայում են իրը տեղական դատաւստանական օրգանները» (Еллинекъ—Право Совр. Гос. երես 422) Գերմանացի դիտմականը, ինչպէս հետևեալ զխում կը տեսնենք, «Ինքնավարութիւնը» և վարչական ապակենտրոնացումը տարբերում է իրարից և նոյնիսկ առանձին դիտման էր գրքում այդ կրկուսին:

ապէս ապակենտրոնացած գործերի թիւը շատ մեծ չէ և քաղաքական նշանակութիւն չունի, իսկ էապէս ապակենտրոնացումը խիստ լայն չափեր ունի այդ՝ իբր թէ մի և միակ պետութեան մէջ» *)։ Այն, զօրեղ ևն Աւստրիայում նահանգները, տեղական ու անձնական խմբակցութիւնները, և որովհետև երկրում տիրում է գոնէ մի անկատար սահմանադրութիւն, այդ նահանգներն ու խմբակցութիւնները կարողանում են իրանց ձայնը օրինաւորապէս լսելի անել, լեզալ ճանապարհով հասնել որոշ նպատակներին։

Իսկ ի՞նչ է կատարում մեզանում. միթէ ինքնակալ ըէժիմը երբ և է եղել է իսկական ցէնտրալիստական։ Ամենևին։ Կենտրոնի հսկողութիւնը մեծ մասով լոկ ձևական է։ Գիներալ նահանգապետներ, նահանգապետներ, փոխարքաներ, յաճախոյն իսկ հասարակ պրիստաններ ինքնազուլս գործում են ամեն ինչ—մանաւանդ ծայրագաւառներում ու ղեռ սեփական իրաւունքի ու օրէնքի մասին ոչ մի հասկացողութիւն չունեցող խաւար վայրերում։ Վարչական բոլոր անձերը, ամեն անասկի չինօֆիսիները մեզանում, մութ վայրերում հանդիսանում են և իբրև վարիչներ, և՛ իբր օրէնսդիրներ, և՛ իբր դատաւորներ. նրանք միահեծան տէր են հանդիսանում իրանց շրջանի։ Ու այդ ամենը կատարում են յանուն մինխտրի, յանուն կայսրի ու օրէնքի, այն ինչ զրանք յաճախ տեղեկութիւն անգամ չեն ունենում իրանց անունով կատարող զանցառութիւնների ու ոճիրների մասին։ Իրանք են ծնում, բայց զրանք այլ ևս գաղափար չեն ունենում նրանց մասին... Իսկ այդ ամենի արդիւնքը լինում է այն, որ ընկնում է կենտրոնական իշխանութիւնների վարկը, ժողովուրդն իրաւամբ սկսում է ատել ոչ միայն բիւրօկրատներին, այլ և նրանց ուղարկողներին։ Այդ ատելութիւնը լոկ անձնական տհաճութեան արդիւնք չէ. նա ծընունդ է տնտեսական քայքայման և ազգային ոգու—լեզւի, սովորութիւնների և այլն—ստորացման։

Իրա արդիւնքը մենք տեսնում ենք ամեն օր։ Եթէ ինքնակալ բիւրօկրատիական ըէժիմը ծնունդ է տւել ներկայ ոռւսական յեղափոխութեան, ցէնտրալիզմը ծնեցրել է Լատիշների, Լեհերի, Գուրիչի, Հայերի գաղտնի յեղափոխական դատարանները, վարչութիւնը, դպրոցները, նրանց հրատարակած ժամանակաւոր

*) R. Springer նոյն—§ 28

կանոնները, որոնք աւելի պարտադիր կերպով կատարում են ժողովրդի կողմից, քան պետական օրէնքները։

Այդ բոլորը ապակենտրոնացման ըէէլ և ճակատագրական պահանջի դանազան արտայայտութիւններն են։ Ազատագրական ու յեղափոխական շարժումը բողոք է բռնութեան դէմ, իսկ այդ երևոյթները նոյն բողոքն են ցենտրալիստական սիստէմի դէմ։

Կենսական այդ երևոյթները ցոյց են տալիս, թէ ինչ ուղղութիւնով պէտք է ընթանայ ապագայ ազատ Ռուսաստանի կեանքը։ Իրանք ստորադժում և նախացուցանում են ապագայ ապա-կենտրոնացման ճանապարհը թէ վարչական, թէ օրէնսդրական և թէ դատական գործում։

Աւստրիայի վերաբերմամբ Ռուզօլֆ Շպրինգերն ասում է. «Թագը, մինխտրութիւնը և ցենտրալիզմը միշտ շահւած կը լինեն, եթէ նրանք բացարձակ ֆէդէրալիզմ մտցնեն այն բոլոր գործերում, որոնք չեն կենթարկւում մի վարչութեան, հրաժարեն ձևական միութիւնից և զրա հետ միասին նա և ամեն տեսակ պատասխանատուութիւնից, դնելով այդ նրանց վզին, որոնք ազահատասխանատուութիւնից, դնելով այդ նրանց միջուկները և սիստեմար կլանում են ֆէդէրալիզմի քաղցը միջուկները և սիստեմատիքարար «Աւստրիայի» վրայ են նետում պատասխանատուութիւնը դառն կեղևների համար, որոնցով հէնց իրանք են կերակրում ժողովրդական մասաներին» *)։

Մի և միացեալ թէ ոստիկանական ինքնակալութիւններում և թէ իրաւական պետութիւններում փաստօրէն գոյութիւն ունեն հասարակական տէրրիտօրիալ և անձնական խմբակցութիւններ։ Սակայն երկրի օրէնքներն ու սահմանադրութիւնները չեն ուՍակայն երկրի օրէնքներն ու սահմանադրութիւնները չեն ուճում ճանաչել զրանց իրական գոյութիւնը. «նրանք ըէալապէս կան, իսկ օրինապէս չեն ճանաչւած»։ Այն ինչ այդ բաժանմունք-ները զօրեղ են և ազդում են ոչ միայն Աւստրիայում, այլ և նորը պետութիւններում՝ իբրև զօրեղ տեղական կուսակցութիւն-ներ։ Մեզանում այդ կարգի երևոյթները խոշոր գոններ են բաց անում այս ու այն բիւրօկրատի քմահաճոյքի, նրա կաշառակերութեան համար։

Այդ տեղական ու անձնական խմբակցութիւնները յատկապէս զօրեղ ու անպարտելի են բազմացեղ երկներում։ Եթէ մի-

*) R. Spring.—նոյն տեղ § 28

Չոցներ ձեռք չառնեն, «պետութեան իրական բովանդակութիւնը կը յեղափոխականանայ (կը մըրոտանայ) իր սեփական ձևերի դէմ, մինչև որ կործանէ նրանց» *):

Հին բռնապետութիւնները—Դարէհ Վշտասպեանի Պարսկաստանը, Նարոզգոդոնոստրների Բարէլոնը, Սարուքինների Ասորեստանը, Փարառնների Եգիպտոսը և այն—թէ և եղել են արտաքուստ մի և միացեալ ինքնակալութիւններ, բայց էպէս նրանք բազկացած են եղել անթիւ, անհամար տեղական մանր ու խոշոր իշխանութիւններից: Դարէհի պարսկական կայսրութիւնը բաժանուած էր քսանից աւելի սատրապոնների, և ամեն մի սատրապըն ինքնակալ էր համարուած ձեւականօրէն, այն ինչ նրա կողքին պահպանում էին իրանց գոյութիւնը տեղական իշխանները: Նոյն երևոյթը կրկնուած էր և միւս պետութիւններում: Ապակենտրոնացումն այդ միահեծանութիւնների մէջ հասնում էր իր ամենածայրայեղ չափերին. տեղական իշխանութիւններ, տեղական պրիմիտիվ օրէնքներ (սովորութիւն, «աղաթ»), տեղական կրօններ—ամեն ինչ ինքնուրոյն, աւտօնօմ էր: Միահեծան կենտրոնի ազդեցութիւնը երևում էր լոկ երկու հարցում—հարկեր կամ տուրքեր հաւաքելու և դօրք անելու մէջ:

Այդ պետութիւններից աւելի կենտրոնացածն էր Եգիպտոսը, այն էլ այն պատճառով, որ երկրի տարածութիւնը քիչ էր և ազգաբնակչութիւնը բազկացած էր մի միապաղաղ ժողովրդից: Սակայն, չը նայելով այդ բարեյաջող պայմաններին, կենտրոնացման ամենածաղկած շրջանում անդամ ապակենտրոնական ձրգտումն արտայայտուած էր կրօնական բաժանումների քողի տակ:

Այդ քաղաքակրթական սկզբնական շրջանում կենտրոնացումը չէր էլ կարող խիստ ու հետևողական լինել, որովհետև դրա համար պահանջուած է յարաբերութիւնների կանոնաւորութիւն և արագութիւն—մի բան, որ դեռ համարեն գոյութիւն չունէր այդ երկրներում: Առանց այդ արագ ու կանոնաւոր յարաբերութիւնների՝ անկարելի է ստեղծել խիստ ու հետևողական կենտրոնացում:

Այդ տեսակէտից՝ ամենայրմար պայմաններում գտնուած

*) Նոյն § 28

էր Եգիպտոսի պետութիւնը և Ասսիրո-Բաբելոնը (սրանք էլ միայն Միջագետքի տափարակներում), իրանց մեծ ու նաւարկելի գետերի շնորհով, որոնց շուրջը համախմբուած էին այդ երկրների բնակիչների ամենամեծ մասը:

Հին Յունաստանը, չը նայելով իր փայլուն քաղաքակրթութեան, երբէք չը կարողացաւ ստեղծել որոշ չափի ուժեղ կենտրոնացում, մի և միաձոյլ մի պետութիւն և կուլ գնաց նախ Մակենդոնիայի պետութեանը, ապա Հոմին, թէ և կուլտուրայով շատ աւելի բարձր էր նրանցից: Հին յոյները չը կարողացան ստեղծել իրանց բազմաթիւ պետութիւններից մի ազդային պետութիւն և մի ազդ:

Հռօմն ամենից աւելի աշողեցրեց կենտրոնացման սխաւէն իր օրէնսդրութեան և վարչութեան մէջ, այն էլ իր հռչակաւոր ճապարհների (via) կամ պողոտաների միջոցով, որոնք կապում էին հսկայական պետութեան բոլոր մասերը Հոմի հետ: Սակայն չը նայելով այդ կենտրոնացման, ապակենտրոնացումը մեծ ծաւալ չը չունէր երկրի մէջ, թէ հանրապետական և թէ կայսերական շրջաններում: Քաղաքները վայելում էին լիակատար ինքնավարութիւններ (municipia). կային շրջաններ և գաւառներ, որոնք նոյնպէս վայելում էին դանազան արտօնութիւնների, Պալէստինի թաներից շատերը—ինչպէս Պոնտոսի, Հայաստանի, անկախութիւնները և գաւորութիւնները,—պահպանում էին իրանց անկախութիւնները և միայն հարկ էին վճարում Հոմին:

Հոմի կայսրութեան անկումով և բարբարոսների յաղթութիւններով դուռ բացեց լիակատար ապակենտրոնացման: Կարևո Մեծի ճիզերը վերջին փորձն էր վերականգնելու հոմէական կենտրոնացումը, բայց նա էլ անաշող դուրս եկաւ: Սկսեց աւակենտրոնացումը, որը ապակենտրոնացման թագաւորութիւնն է: տական սխաւէմը, որը ապակենտրոնացման ծնունդ տւեց հին աշխարհի գոնէ ձեւական կենտրոնացմանը, իսկ ճորտատիրական տնտեսութիւնն արտադրեց աւատական սխաւէն ու ապակենտրոնացումը:

Որքան ցած իջնէք մարդկային զարգացման սանդուխքով, այնքան աւելի դանդաղում է մարդկութեան առաջադիմութեան տէմպը, նրա ընթացքը: Մարդկային ցեղերի վայրենութեան շրջանը երևի տամնեակ հազար տարիներ է աւել, բարբարոսական շրջանը

նրանից մի քիչ պակաս է եղել և մարդկային զարգացումն աւելի արագ է առաջ դիմել: Քաղաքակրթական շրջանն էլ, որ դեռ հազիւ 3000 տարի կեանք ունի, պէտք է բաժանել կրկին 3 մասերի— I ստորին՝ հին դար, ստրկատիրական շրջան, II միջին աստիճան —միջին դար, ճորտատիրական շրջան և III բարձրաստիճան—նոր և նորագոյն դար՝ ազատ վարժարական կամ կապիտալիստական շրջան: Հին դարը համեմատաբար երկար է տևել (1500-2000 տարի), միջինը տևել է մօտ 1000 տարի, իսկ նորն ու նորագոյնը դեռ տևում են: ✕

Վերածնութեան փառաւոր շրջանն իր տակն ունէր իտալական մանր հանրապետութիւնների (Վենետիկ, Ջէնովա, Նափօլի, Միլան, Պիզա և այլն) փառահեղ զարգացումը, նրանց լայն առևտրական գործողութիւնները, նրանց ամբարած հսկայական հարստութիւնները: Այդ սնտեսական լայն առաջդիմութեան հետ միացաւ և այն, որ Օսմանցիները տիրեցին Կ. Պօլսին (1453) և Յունաստանին. այնտեղից յոյն կրթւած անձերի մի հեղեղ խուժեց Իտալիա և վերածնեց յունական ու հռոմէական հին գրականութիւնը և արւեստը:

Հնարեց վառօդը և հին «թագանօթ-հրացանը» կամ արքրոզը, որի դէմ այլ ևս ամենակորիճ ասպետներն անզամ չէին դիմանում անհատաբար: Սկսեց ընկնել աւատականութիւնը: Շուտով Վասիօ-դէ-Փաման շրջեց բարեյուսոյ-Հրեանդանը և նոր ուղի բաց արեց դէպի Հնդկաստան: Զօրացաւ նոր և խոշոր վաճառականութիւնը: Երևաց Գուտտենբերգը, որ հնարեց տառերի գիւտը և մի չը տեսնւած դուռ բաց արեց մարդկային մտքի արդիւնքներն արագ տարածելու համար: Վերջապէս XV դարի վերջին անմահ իտալացին՝ Բրիտատփոր Կօլումբոսը գտաւ Ամերիկայի ճանապարհը:

Իտալիայում, Պորտուգալիայում և Իսպանիայում ամբարւած սնտեստական ու մտաւոր հարստութիւնը ցնցեց համայն մարդկութիւնը: Արհեստներն ու արդիւնագործութիւնը հսկայական քայլերով սկսեցին զարգանալ: Ծնունդ առաւ մանուֆակտուրային արտադրութիւնը, որը աշխատանքի ծայրայեղ բաժանման շնորհով արագացրեց ապրանքների պատրաստումը: Համեմատաբար կատարելագործւած գործիքները, աշխատանքի մանրակրկիտ բաժանումը, բազմաթիւ մարդկանց մանուֆակտուրային գործակցութիւնը կամ հասարակական աշխատանքը խիստ ձեռնտու դարձրին տրտա-

դրութեան այդ նոր ձևը: Մանուֆակտուրան սկսեց աստիճանաբար յաղթել ու դուրս քշել արհեստաւորներին, համքարութիւններին, որովհետև ամեն ինչ աւելի էժան էր արտադրում:

Սակայն համքարութիւնները, որ ծնունդ էին տանեակ դարերի, այդպէս շուտով չը մեռան: Նրանք, ճշմարիտ է, տեղի էին տալիս մանուֆակտուրայի յաղթական ընթացքին, բայց տևեցին մինչև նորագոյն դարի շէմքը—մինչև Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը (1789 թ.):

Մանուֆակտուրային շրջանը վերջ դրեց նաև ճորտատիրութեան և ասպարէզ բերեց ազատ վարժարութիւնը:

Նոր ձևի արտադրութիւնն սկզբներում սաստիկ պէտք է դժւարանար աշխատող ձեռքեր ձարելու. որովհետև դեռ ամեն մարդ արտադրող էր և գիւղացիութիւնը դեռ ազատ չէր՝ դեռ ճորտ էր աւատական ազնւականութեան ձեռքին: Բայց շուտով «ոչխարներն սկսեցին ուտել մարդկանց»: Աւատական ազնւականութիւնը, չը դիմանալով նոր հնարւած վառօդի ու հրացանի ուժին, կամաց կամաց մեռնում էր և կամ տեղի տալիս նոր հարստացող երրորդ դասակարգին, կամ ինքն էլ դառնում առևտրական, մանուֆակտուրասակարգին, կամ ինքն էլ դառնում առևտրական, մանուֆակտուրային արտադրող: Եւ ամբողջ գիւղեր, հազարաւոր ճորտ ընտանիքներ դուրս էին վռնդւում իրանց հողերից. նրանց ազատութիւն էին տալիս, իսկ նրանց մինչև այդ մշակած հողերի վրայ ոչխարներ էին պահում, բուրդը խուզելու և, կամ իրանց, կամ մօտակայքում մի բուրժուայի հիմնած մանուֆակտուրային հում նիւթ մատակարարելու համար: Այդպիսով նոր ձևի արտադրութիւնն ըստ անուն էր և հում նիւթ, և անթիւ-անհամար աշխատող ձեռքեր, որոնց սովը քշում էր դորձարան մի փոր հացի համար աշխատորու: Պատրաստեց աշխատող ձեռքերի մի խոշոր պահեստի բաւակ: Ծորտութիւնն աստիճանաբար սկսեց վերանալ և կամաց կամաց երևաց կապիտալիզմը:

Աւատական անվերջ ապակենտրոնացման փոխարէն սկսեց աստիճանաբար կազմակերպւել կենտրոնացած ազգային պետութիւնը: Մենք չենք կարող հետևել այն շարժման, թէ ինչպէս դիտու-թիւնն ու կապիտալիզմն աստիճանաբար աստիճանաբար զափազանց մլասուելով ինչպէս երրորդ դասակարգը, նիւթապէս չափազանց մլասուելով հողւորականութեան և ազնւականութեան ձեռքից, բռնեց միապե-

մարդկային կուլտուրական մի անհրաժեշտութիւն էր, դրա համար էլ յաղթեց: ✓

Բայց ահա աճող, կենսորոնացող կապիտալի հեռաւոր դարգացումը շարունակում է պահանջել ազգային ու բնական սահմաններում, փոքր ի շատէ միատեսակ ու միապաղաղ շահեր պարունակող պետութիւններին դուրս գալ իրանց սահմաններից, դժբաւել ու տիրանալ, հպատակեցնել նոր երկրներ, լծի տակ առնել նոր ազգեր, որոնք թէև հիմնապէս տարբեր շահեր ունեն կենսորոնական կամ տիրող երկրից, բայց որոնք կարող են այդ երկրի բէէլ տէրը կազմող բուրժուազիայի ապրանքների համար փառաւոր շուկաներ գտնուել:

Առաջանում է XIX դարի ախտը—իմպէրիալիզմը և թթու շովինիզմը, որին, դժբախտաբար եւրոպական գրականութիւնը տւել է մի չափազանց մաքուր տիտղոս—նացիօնալիզմ:

Կազմւել են հսկայական պետութիւններ, որոնց մասերի ու ժողովրդների շահերը յաճախ հակադիր են: Այդ պետութիւնների մէջ կենսորոնական իշխանութիւնը, հպատակութեան մէջ պահելու համար մասերին, նրանց մէջ եղած կենսորոնախոյս ոյժը ոչընչացնելու համար, ստիպւած է դիմել միլիտարիզմի,—զօրքն անվերջ շատացնել: Միլիտարիզմի աճելուն նպաստում է նաև դժբացի բուրժուական պետութիւնների մրցակցութիւնը, որոնք միշտ ռազմապատրաստ, սպասում են յարմար բօլէին՝ տապալելու հակառակորդին:

Սակայն տաբեր շահեր ունեցող շրջաններն ու ազգերը յարատև ձգտում են դուրս գալ կենսորոնի միլիտարիստական ու բիւրօկրատական լծից—կամ անջատւելու, կամ ապակենսորոնանալու:

✓ Նոր ու նորագոյն դարերի կենսորոնացումն, ընդհանրապէս, ահագին օգուտ է տւել, որովհետև նա, լինելով ծնունդ կապիտալիստական արդիւնագործութեան ցէնտրալիստական բնաւորութեան, հնարաւոր է դարձրել կապիտալիստական արտադրութեան ձևի հեռաւոր զարգացումը—մի բան, որ ճակատագրական անհրաժեշտութիւն է աճող մարդկութեան համար: Միևս կողմից նա հնարաւոր է դարձրել էսնօզրաֆիական կամ ազգային տարբերին միաձուլել և կազմել ժամանակակից ազգային պետութիւնները:

✓ ✓ կենսորոնացումն այժմ էլ անհրաժեշտ է իբր պետական ամ-

բողջութիւնը պահպանողը, իբր բազմաթիւ ազգերի համերաշխութեան ու դաշնակցական կենակցութեան նպաստող, միայն թէ նա պէտք է լինի բնական և համաչափ տնտեսական ու էանօզրաֆիական բոլոր պայմաններին: ✓ կենսորոնացումն այնքան պէտք է գործադրւի, որքան պահանջում է երկրի բոլոր բազմազան տնտեսական ու ազգային շահերի համերաշխ զարգացումը: ✓

✓ Դարերի ընթացքում ապակենսորոնացման կենսորոնախոյս ոյժը կռիւ է մղել ցէնտրալիզմի դէմ: Այդ երկու սկզբունքներն էլ, ունենալով խոր արմատներ ու հիմքեր կեանքի ազգային և տնտեսական երևոյթներում, փոփոխակի յաջողութիւնով տիրապետել են կառավարական ձևերին: ✓

կենսորոնացման անհրաժեշտութիւնը և նրա տւած օգուտներն ակնարկեցինք մի քանի խօսքով: Այժմ մի քանի խօսք էլ ստանք ապակենսորոնացման մասին ընդհանրապէս, թողնելով օրէնսադրական ապակենսորոնացման հիմնաւորումը հետևալ գլուխներին:

Պարիզից կամ Նանսիից վարչական անձեր ուղարկել Մարսել ի կամ Տարասկօն... Դա կենսորոնացման սիստէմի մէջ ամենայն օր կատարող մի երևոյթ է: Ֆրանսիայի հիւսիսի բնակիչը ծաօթ չէ Տարասկօնի կամ Պրովանսի սովորութիւններին, նրանց սնապարծութեանը, նրանց նոյն իսկ զաւտաբարբառին, նիստ ու կացին, ամբողջ հոգեբանութեանը... Բնականաբար հիւսիսեցին հարաւում լաւ վարիչ, լաւ ադմինիստրատօր լինել չէ կարող: Ամենաշատը՝ նա լինելու է այնտեղ լաւ բիւրօկրատ:

Դեռ մի ազգից, քիչ ու շատ մի լեզուով խօսող, քիչ ու շատ նման սովորութիւններով ապրող մի ժողովրդից բազկացած Ֆրանսիայում այդ երևոյթն այնպիսի հրէշաւոր արդիւնքներ չէ տալիս, ինչպէս Աւստրիայում, ինչպէս մանաւանդ հսկայական Ռուսաստանում:

Սարատովցի, պետերբուրգի կամ վօրօգրացի մի ռուսի ուղարկում են, օրինակ՝ Նրևանի նահանգի մի մասում գաւառապետ Եկոզն անպատճառ պէտք է ռուս լինի, անպատճառ «խկական ռուս մարդ», «բիւրօկրատիայի և հայրենիքի» համար վստահելի ծառայ... Դա անհրաժեշտ է ռուսացման համար: Գալիս է խեղճ մարդը, մտնում մի երկիր, որի ոչ լեզուն է ծանօթ, ոչ սովորութիւններին, ոչ նոյն իսկ սեղերին... Սկզբներում նա գտնում է

կան ամբողջ դաշնակցութեան վերաբերմամբ. իսկ մի քանի լեոնային մանր կանտոններում (Շվից, Ուրի և այլն), ապակենտրոնացման ձգտումն է տիրապետում: Խոշոր կանտոններն աշխատում են խլել կանտոններից ապակենտրոնացած զանազան իրաւունքերը և տալ դաշնակցական կենտրոնական իշխանութեանը, իսկ մանր կանտոնները դրա հակառակն են սնդուում:

Դա այդ երկու սկզբունքների դարաւոր կուռի շարունակութիւնն է մեր օրերում: Այդ կուռից մի ելք կայ միայն. «ընդհանրութեան բարօրութեան համար ներդաշնակօրէն միացնել միութիւնը (կենտրոնացումը) ֆէդէրացիայի (ապակենտրոնացման) հետ, ամբողջութեան հզօրութիւնն առանձնակի մասերի ազատութեան հետ», ասում է Բուզովֆ Շպրինգէրն Աւստրիայի վերաբերմամբ*):

Եւ դա միակ ուղին է ոչ միայն Աւստրիայի, այլ և բոլոր պետութիւնների, համայն մարդկութեան համար:

Գ Լ Ո Ի Խ Գ.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Որոշումը և հիմքերը: Նրա և կենտրոնական իշխանութեան յարաբերութիւնը: Տեսակները: Տեղական ինքնավարութիւնը զանազան երկրներում—Ֆրանսիայում, Ռուսաստանում, Անգլիայում և Բելգիայում:

Որոշումը եւ հիմքերը: «Ինքնավարութիւն» բառը գործ է ածուում և՛ ընդարձակ, և՛ սահմանափակ մտքով: Այսպէս՝ յաճախ գործ են ածում «ինքնավար երկիր», որ նշանակում է անկախ երկիր, ինքնուրոյն կամ առանձին պետութիւն ունեցող: Ասում են «Հայոց եկեղեցին ինքնավար է». նշանակում է՝ նա անկախ է, չէ ենթարկւում իր դաւանարանական հարցերում ոչ մի այլ եկեղեցու: Իսկ եթէ մի երկրի եկեղեցու համար ասեն «ինքնավար», կը նշանակէ նա բաժանւած է պետութիւնից, անկախ, ինքնուրոյն կառավարութիւն ունի: «Ինքնավար են կոչուում նաև այն ընկերութիւններն ու խմբակցութիւնները, որոնք ունեն սեփական կանոնադրութիւն և վարում են իրանց գործերն՝ օրէնքի հսկո-

*) Յիշւած գիրքը—§ 29-ի վերջը:

ղութեան տակ: Այս դէպքում երկրի օրէնքը հսկում է, որ այդ խմբակցութիւնները զուրս չը գան մի անգամ հաստատւած կանոնադրութիւնից կամ նախադեւած սահմաններից:

Դա «ինքնավարութիւն» բառի ընդարձակ ու բաւական առաձգական իմաստն է: Սակայն նա աւելի յաճախ գործ է ածուում իբր պետական իրաւունքի մի տերմին, իբր կառավարական մի կատեգորիա, մի հասկացողութիւն: Այդպիսի դէպքում գործ են ածում երկու բառ—տեղական ինքնավարութիւն:

Վերջին դէպքում «տեղական ինքնավարութիւն» տերմինն ունի պարզ և որոշ նշանակութիւն: «Նա նշանակում է ամեն մի հասարակական վարչութիւն, որը կատարում է կամ բացառապէս հասարակական ծառայութեան մէջ չը գտնուող անձերի ձեռքով, կամ այդպիսի անձերի դործակցութիւնով,—կամ աւելի կարճ և ստոյգ ասենք՝—ամեն մի հասարակական վարչութիւն, որը չէ իրականացւում պրօֆէսսիօնալ հասարակական պաշտօնեաների միջոցով, կամ գոնէ իրականացւում է ոչ միմիայն այդպիսիների ձեռքով:» *):

Նոյն մտքով բացատրում է նաև ողւս գրող Հէսսէնը **):

Մի երկրի վարչական գործերը կատարելու երկու ձև կայ. կամ կենտրոնական իշխանութիւնը նշանակում է պաշտօնեաներ (բիւրօկրատներ), որոնք վարում են ոչ միայն համապետական ընդհանուր գործերը, այլ նաև ամեն մի դաւառի, շրջանի, և նոյն իսկ համայնքի տեղական խնդիրները, ինչպէս Ռուսաստանում, Ֆրանսիայում, Թիւրքիայում և կամ համապետական և ընդհանուր բոլոր ֆունկցիաները թողնւում են կենտրոնական իշխանութեան, իսկ բոլոր տեղական գործերը յանձնւում են համայնքի, դաւառի կամ նահանգի շահագրգռւած ժողովրդի վարչութեանը: Վերջիններն էլ կարող են վարել իրանց գործերը կամ բոլորը միատեղ, կամ, անդամների շատութեան դէպքում, իրանց ընտրեալների ձեռքով:

Սակայն կարող է պատահել, որ կենտրոնական իշխանութեան ներկայացուցիչները—արհեստով պաշտօնեաները կամ բիւրօկրատները, և տեղական ժողովրդի ներկայացուցիչները միասին վա-

*) Еллинекъ—«Право Совр. гос.» երես 422.

**) «Автономія, федер. и нац. вопросъ»—երես 24.

րեն տեղական գործերը, ինչպէս այդ կատարում է Պրուսիայում: Կարող է պատահել նաև որ ոչ միայն տեղական գործերը, այլև կենտրոնական իշխանութեան որոշումների իրականացումն անգամ յանձնւի տեղական ընտրեալ ներկայացուցիչներին, ինչպէս այդ տեղի է ունենում Անգլիայում և Շվեյցարիայում:

Այսպիսով իրար հակադրում են երկու որոշ վարչական սիստեմներ—կենտրոնացում և ապակենտրոնացում: Առաջին դէպքում տեղական գործերն էլ են վարում պետական պաշտօնեաների, չինսօվնիկների կամ բիւրօկրատների ձեռքով: Իրանք հանդիսանում են իրր արհեստով պաշտօնեաներ, պրօֆէսսիօնալ բիւրօկրատներ, որոնք միանգամայն կախած են կենտրոնական իշխանութիւնից: Իսկ երկրորդ դէպքում այդ բիւրօկրատները կամ բոլորովին չեն գործում, այլ միայն հսկում են, կամ խառնում են գործին մասնաւոր չափով. ամբողջ գործը վարում են տեղացիների ներկայացուցիչները:

Ուրեմն՝ տեղական ինքնավարութիւնը «հանդիսանում է իրր հակադրութիւն պետական-բիւրօկրատական վարչութեան, և լինում է շահագրգռած անձերի վարչութիւն» *):

Առաջին դէպքում բոլոր գործավարները պաշտօնեաներ են, որոնք իրանց արհեստի համար ոռձիկ են ստանում կենտրոնական իշխանութիւնից: Այդ ոռձիկը և այդ միանման պաշտօնն ու դիրքըն ստեղծում են մի դասակարգ, կամ աւելի շուտ մի դաս, որ կոչւում է բիւրօկրատիա: Այդ դասակարգն ունենում է իր սեփական շահերը, որոնք յաճախ դէմ են լինում հասարակական տեղական և նոյն իսկ ընդհանրութեան շահերին: Նա դառնում է մի գորեղ մարմին, որ ունենում է իր «esprit de corps»-ը, իր դասակարգային առանձին ոգին, որ կամայականութիւնն է սեփական շահերի համար. բիւրօկրատիան, որ սկզբում ստեղծւում է միշտ հասարակութեան ծառայելու համար, շուտով դառնում է ինքնանպատակ մի դաս, մի մարմին, որ հասարակութեանն է ծառայեցնում իր շահերին: Նա կարող է իր գոյութիւնը պահպանել ոչ միայն միահեծան ինքնակալութեան երկրներում, ինչպէս մեզանում, Թիւրքիայում և այլն, այլ և սահմանադրական միապետութիւնների և հանրապետութիւնների մէջ, ինչպէս Պրուսիայում կամ Աւստրիայում, ինչ-

*) Еллин.—նոյն—եր. 426.

պէս պարլամէնտարիստական և հանրապետական ծրանսիայում: Երկրորդ դէպքում արհեստով պաշտօնեաները կամ չքանում, կամ խիստ սակաւանում են: Հասարակութեան ընտրեալները լինելով տեղի զաւակ և տեղի վրայ ապրող, շահագրգռած են տեղական գործերի այս կամ այն ընթացքով: Նրանք պաշտօնեաներ չեն իրանց արհեստով, այլ միայն հասարակութիւնից որոշ ժամանակով ընտրւած, ծրիարար գործեր վարող: Նրանք հանդիսանում են իրր հասարակական պատւաւոր պաշտօնատար անձեր: Նրանց վարձատրութիւնն այն պատիւն ու համակրանքն է, որ ստանում են հասարակութիւնից:

Այդ ընտրեալները «չեն ենթարկւում կենտրոնական իշխանութեան հրահանգներին և բէգլամէնտներին, ինչպէս բիւրօկրատները» (Նլինէկ): Կենտրոնական իշխանութիւնը չէ կարող նրանց հեռացնել իրանց ընտրւած ժամանակամիջոցից առաջ: Նրանք գործում են լոկ երկրի օրէնքի ընդհանուր ոգու համաձայն, և միայն այդ ասպարէզում կարող են ենթարկել կենտրոնի նկատողութեանը, որովհետև կենտրոնը պիտի հսկէ ընդհանուր օրէնքների ճիշտ գործադրութեանը: Դատարանն է, որ պիտի որոշէ ընտրեալի արածի օրինական կամ հակօրինական լինելը:

Կը նշանակէ «ներկայ ինքնավար այդպիսի միութիւնը պետութիւնից ստանում է իրաւունք իրականացնելու (գործադրելու) պետական իշխանութիւնը» (աւելի շուտ նրա մասը), միայն թէ պետութիւնն իրան մշտապէս իրաւունք է վերապահում փոխել ինքնավար մարմնի այդ իրաւունքը «հրատարակելով համապատասխան օրէնք» *):

Այդպէս դիտելով տեղական ինքնավարութեան ինստիտուտը հանդիսանում է ոչ թէ պետութիւնը պառակտող, նրան թուլացնող մի հաստատութիւն, այլ իրր նրա մի մասը, նրան լրացնող ու զօրացնող: Երբ կենտրոնական պետական մարմինն զգաց, որ տեղական ինքնավարութեան այս կամ այն ֆունկցիան խոչընդոտ է հանդիսանում համապետական ամբողջութեանը և գործունէութեանը, կարող է իսկոյն օրէնք հրատարակել և սահմանափակել կամ ընդլայնել, կարձ՝ ձևափոխել ինքնավարական այս կամ ֆունկցիան:

*) Еллин.—նոյն—երես 429.

կէտից տանում է մի այլ կէտի վրայ: Ո՞վ պիտի որոշէ համայնքի «կարողութիւնը» կամ ընդունակութիւնը, որ ըստ այնմ էլ նրան տայ այս կամ այն իրաւասութեան սահմանները:

Դիմելով գործնական կեանքին, մենք տեսնում ենք, որ տեղական ինքնավարութեան ձեռքն են տրւած տեղական ուղիները, ջրաբաժանութիւնը, դպրոցները, ոստիկանութիւնը, ստատիստիքան, վարակիչ հիւանդութիւնների դէմ կռիւ մղելը և այլն, և այլն: Բնականաբար այդպէս միատեսակ ընդարձակ չէ ինքնավարութեան իրաւասութիւնը բոլոր երկրներում: Ռուսաստանում, օրինակ, ոստիկանութիւնը, դպրոցների մեծամասնութիւնը, ջրաբաժանութիւնը, անտառների պահպանութիւնը, որսի կանոնաւորումը, հողագործութեան և մասամբ հողից օգտւելու իրաւունքը, ուղիները շինելը և նրանցից օգտւելու կարգը և ուրիշ բազմաթիւ հարցեր, որոնց տեղական ընաւորութիւնն ակներև է,—գտնւում են կենտրոնական իշխանութեան ձեռքում*): Այն ինչ կառավարութիւնը, եթէ ցանկանում է ունենալ իր երկրում ինքնավարութիւն և ոչ նրա ներկայ ծաղրանկարը, պէտք է բաւականանար միայն ընդհանուր և խոշոր գծերով օրէնքներ զրեւով այդ հարցերի մասին, իսկ նրանց բէզլամէնտացիան, նրանց կանոնաւորումը և գործադրութիւնը պէտք է թողնէր տեղական ինքնավարութիւններին և նրանց տարտաղիւր կարգադրութիւններին»:

Տեղական ինքնավարութեան իրաւասութիւնների սահմաններն ամենից աւելի ընդարձակ են Անգլիայում, Շվեյցարիայում, Բէլգիայում և այլն:

Եթէ ուշադրութեամբ քննենք տեղական ինքնավարութեանը գործնական կեանքում յանձնւած բոլոր գործերը, որոնցից մի քանիսը մենք վերևում յիշեցինք,—կը գանք այն եզրակացութեան, որ նրանք համարեալ բոլորն էլ և համապետական գործեր են, և՛ տեղական: Այսպէս՝ ոչ ոքի մտքովն անդամ չի անցնում այսօր դպրոցական գործն ընդհանրապէս հանել համապետական հսկողութիւնից և գնել տեղական համայնքների կամ տեղական ինքնավարութիւնների ձեռքը, առանց օրէնքով նախազօծելու, կանխացուցումներ տալու ընդհանուր ղեկավար սկզբունքների մասին:

*) „О правахъ национальностей и о децентра.“—*Երես 29-30 և 42: Տես նաև* Бѣлоконскій—„Земство“.

Տարրեր խնդիր է, երբ օրինակ, աւտօմօմ Ֆինլանդիային, Լեհաստանին կամ Կովկասին թողնեն իրանց երկրի ամբողջ կըրթական գործերի վարումը: Սակայն նոյնը չէ աւտօմօմ նահանգը և տեղական ինքնավար մասնիկ միութիւնը:

Վարակիչ հիւանդութիւնների դէմ կռիւլը, անտառապահական օրէնքները, ջրաբաժանութիւնը, ուղիները և այլն, բոլորն էլ և՛ համապետական, և՛ տեղական հարցեր են:

Դեռ այդ ոչինչ: Չը կայ ոչ մի տեղական հարց, որի մէջ շահազրուած չը լինի համայն պետութիւնը. բայց չը կայ նաև ոչ մի տեղական հարց, որ ամենեւին չը շօշափէ պետական շահերը:

Սակայն դա չէ նշանակում, որ պետութեան և ինքնավար մասնիկ բաղադրիչ մասերի մէջ հակադրութիւն կայ: Միայն կենտրոնացած վարչութիւն և գորեղ բիւրօկրատիա ունեցող երկիրներում է, որ կենտրոնը միշտ դիտում է ինքնավար տեղական բնութիւններն իբր պետութեան ամբողջութեանը վնասող, նրան միութիւններն իբր պետութեան ամբողջութեանը վնասող, նրան թուլացնող. այնինչ այդպէս չէ ամենեւին և չէ էլ կարող այդպէս լինել, որովհետև ինքնավար բաղադրիչ մասերի բոլոր գործերի յաջող վարչութիւնից է կախւած պետութեան ընդհանուր յաջող դրութիւնը:

Տեղական ինքնավարութեան «այդ իշխանութիւնը տրւած է նրան ոչ միայն պետութեան շահերի համար, որոնք աւելի լա են ապահովում այդպիսի ինքնավարութեան օգնութեամբ, քան եթէ նրանք տարւէին պետական օրգաններով,—այլ և իր (համայնքի) սեփական շահերի օգտին»*):

Համայնքի և պետութեան շահերն իրար համեմատելի, իրար լրացնող են: Եթէ համայնքի և ազգի (պետութեան) շահերի մէջ հակառակութիւն լինէր, այն ժամանակ ճիշտ տարբերութիւն գնել անհնարին կը լինէր, որովհետև համայնքական բոլոր հարցերում շահազրուած է պետութիւնը, ինչպէս և պետական բոլոր գործերում շահազրուած է համայնքը»:

Սակայն որովհետև պետութեան և համայնքի շահերի մէջ ոչ թէ հակառակութիւն, այլ սերտ միութիւն և համեմատելի և սեղ-գոյութիւն ունի, այդ պատճառով հարցի լուծումն աւելի ևս հեշտանում է: «Պետութիւնն ու համայնքը համեմատելի են: Նրանցից

*) Еллинекъ—«Право Сов. Гос.» *Երես 431.*

ոչ մէկը չէ կարող բարգաւաճիլ կամ տուժել, առանց միւսի բարգաւաճման և տուժելու: Ոչինչ չէ կարող կատարել համայնքում, որ ազգի համար անտարբեր լինի և ոչինչ չէ կատարում պետութեան մէջ, որ անտարբեր լինի համայնքի համար: Ուրեմն՝ հարցը նրանում չէ, թէ այս կամ այն գործը բացառապէս համայնական է թէ տեղական,—այդպիսի գործ չը կայ. հարցը նրանումն է, թէ արդեօք ո՞րն է աւելի օգտակար համայնքի ու պետութեան տեսակէտից միաժամանակ՝—այս կամ այն գործը վարէ պետութիւնը, թէ համայնքը» *):

Ուրեմն, թէև չը կայ ոչ մի գիտական, քիչ ու շատ քննադատութեան գիմացող որոշում պետական ու տեղական գործերն իրարից զանազանելու համար, բայց համայնքի ու պետութեան այդ համերաշխութիւնը գործնական կեանքում դիւրացնում է այդ հարցի լուծումը: Տեղական ու համապետական գործերն իրարից զանազանելու հարցում մեծ դեր են կատարում, օրինակ, ժողովուրդների մտաւոր ու կուլտուրական վիճակը, նրանց քաղաքական համոզումները, նրանց բարքերը և այլն: Այդ պատճառով տեղական ինքնավարութիւնները բոլոր պետութիւնների մէջ չունեն և չեն էլ կարող ունենալ միևնոյն իրաւասութիւնները, նրանց իրաւասութեան տակ եղած գործերը նոյնը չեն ամեն տեղ և ամեն ժամանակ:

* *

Մինչև այժմ իրաւաբանական գիտութեան մէջ ընդունւած կարծիք է, որ տեղական ինքնավարութիւնը լոկ ադմինիստրատիւ մի կատէգորիա է, այսինքն լոկ վարչական մի հիմնարկութիւն է: Բայց ինչպէս մենք արդէն յիշել ենք նախընթաց գլխում, եթէ տրամաբանօրէն մտածենք և հետևողական քննութեան ենթարկենք ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր տեղական ինքնավարութիւնները՝ թէ գիւղական և թէ քաղաքային, կը տեսնենք, որ նրանց բոլորի մէջ, բացի լոկ վարչականը, բացի imperium-ը (հրամայականը), որը, ինչպէս ասում է Ելլինէկը,

*) Lacroix—«Autonomie communale». Լակրուան էլ քաղում է դա 1880 թւի ամառը Ֆրանսիական կառավարութեանը Պարիզի համայնքի կողմից ներկայացւած «տեղական ինքնավարութեան» պաշտօնական ծրագրից: (G. Encyc 773).

«հանդիսանում է համայնքի համար իր բոլոր ֆունկցիաներն իրականացնելու վարչական միջոց» (երես 431),—բացի այդ վարչական ինստիտուտը, կայ նաև օրէնսդրական իշխանութեան թոյլ ձևը, նրա սաղմը:

Այդ սաղմը, ինչպէս արդէն ասել ենք, կրում է պարտադիր կարգադրումիւն անունը: Ամեն մի համայնք կամ ամեն մի տեղական ինքնավարութիւն օրէնքով իրաւունք ունի հրատարակելու պարտադիր կարգադրումիւններ, որոնք էապէս պարտադիր են դառնում որոշ ժամանակում, որոշ հարցերում, որոշ մարդկանց (համայնքի բոլոր անդամների, նրա տէրրիտօրիայի վրայ ապրող բոլոր անձերի) համար: «Օրէնք» ասւած բանն էլ հէնց այդ է և ոչ որևէ այլ բան:

«Համայնական վարչութիւնը, ասում է Ելլինէկը, ամեն տեղ հանդիսանում է իրր պետական օրէնքներին հապատասխանող վարչութիւն: Բայց օրէնքը համայնքներին տալիս է նաև կարգադրելու իրաւունք. իրաւունք հրատարակելու տեղական պարտադիր կարգադրութիւններ (ստատուտներ), որի շնորհով և մասնակցում է երկրի իրական օրէնսդրութեանը» *):

1905 թւի սեպտ. 12-15-ին Պետերբուրգում ուսական զեմստվոսների և քաղաքային ինքնավարութիւնների լիբերալ ու արմատական գործիչների համագումարն իր վերջնական որոշումներում (գլուխ Բ.—«Վարչութեան ապակենտրօնացման մասին») հետևեալ կէտն է ընդունել. (յօդւած 3)

«Տեղական ինքնավարութեան օրգաններին պիտի յատկացւի Այն իշխանութիւն՝ օրէնքի սահմաններում, ընդհանուր պարտադիր կարգադրութիւններ հրատարակելու: Այդ ղէպքում կարող է ղեր կարգադրութիւններ հրատարակելու: Սրա ղէպքում կարող է ղեր կարգադրութիւններ օրէնսդիր իշխանութեան իրաւաստանել, որ ներկայումս օրէնսդիր իշխանութեան իրաւաստանելու հղած գործերի մեծ մասը պէտք լինի յանձնել պարտադիր կարգադրութիւնների իրաւասութեան շրջանակին»:

Սակայն ուսական լիբերալիզմի ծագիկը կազմող այդ բուրժուական գործիչները ոչ մի արմատական վճիռ չեն գրել զրանով, այլ արդէն գոյութիւն ունեցող իրաւունքը մի քիչ լայնացրել են:

Ներկայ բիւրօկրատիական ու ծայրայեղ ցէնտրալիստական Ռուսաստանում անգամ զեմստվոսների և քաղաքային ինքնավար-

*) Епл.—նոյն տեղ—432 երես:

Այն ինչ, պետութիւնը, որոշելով ընդհանուր օրէնքներ, պիտի թողնէ ամեն մի կանտօնի, ամեն մի համայնքի ազատ վարել իր զուտ տեղական ներքին գործերն իր ընտրած մարմինների ու իր վստահութիւնը վայելող անհասանքի ձեռքով, իր ամբողջ համայնքի մշտական ու աշալուրջ հսկողութեան տակ:

Ինչ կասկած, որ գործերը վարելու այս երկրորդ ձևն անպայման աւելի դիւրին է, որովհետև համայնքի ու կանտօնի ընտրած տեղացի մարդիկ լինելու են տեղական լաւագոյն ուժերից, որոնք անպայման ծանօթ են տեղական հանգամանքներին, ոգուն, նոյն իսկ անհատների ու խմբակների շահերին, նրանց միտումներին: Այն ինչ հեռւից եկող պաշտօնեան զեռ պիտի ծանօթանայ այդ ամենի հետ:

Բացի այդ, համայնքից ընտրւած տեղացի ներկայացուցիչները, լինելով այդ միջավայրի ծնունդ ու արտայայտութիւն, աւելի մօտ կընդունեն իրանց սրտին տեղական գործերը, աւելի եռանդով կաշխատեն, որ և՛ վերընտրեն, և՛ յարգանք վայելեն այն միջավայրում, ուր ապրել են և պիտի ապրեն այնուհետև: Այն ինչ այդ նոյնը չէ կարելի ասել նշանակովի, հեռուից եկած մի բլբոկրատի մասին:

Վերջապէս՝ կենտրոնի անընդհատ միջամտութիւնն, ինչպէս ասել ենք արդէն, դիմադուրկ է անում գաւառներն ու հասարակութիւնը. մարդիկ վարժուում են ամեն ինչ «վերևից», կենտրոնից սպասելու: Մեռնում է ինքնապորձունէութեան, նախաձեռնութեան ոգին, սպանում է հետաքրքրութիւնը դէպի հասարակական, համայնական հարցերը: Այն ինչ տեղական ինքնավարութիւնը, երբ նա դրւած է լայն ու արմատական սկզբունքների վրայ, — երբ կենտրոնական իշխանութեանը չէ տրուում իրաւունք, բացի ընդհանուր կօնարօլից, ամեն բոլք է միջամտելու տեղական ինքնավարական հարցերի մէջ, — զարգացնում է այդ ամենը:

Տաղանդաւոր կերպով հիմնաւորել է Նլլինէկն այդ սկզբունքը: Չերկարացնելու համար, մենք առաջ կը բերենք նրանից այդ կտորը. «Ազգային խիստ տարբերութիւններն ազգաբնակչութեան կազմի մէջ, պետութեան առանձին բաղադրիչ երկրային մասերի կուլտուրական մակերևոյթի խոր տարբերութիւնները, պետութեան տէրրիտօրիայի մի մասի հեռաւորութիւնը կենտրոնից, —

հանդիսանում են իբր սօցիալական և բնական արգելափակներ աւելանալու կէտերը, ինչպէս պարզ երևում է Նլլինէկի ազգաբնակչութիւնն իր լայն կենտրոնացման ճանապարհին: Բայց եթէ ազգաբնակչութիւնն էլ միատարր լինէր և պետական տէրրիտօրիան էլ միապաղաղ, այդ դէպքում էլ պետութեան կենտրոնացման ձգտումին (տէնդէնց) հակառակ կը գործէին շատ կարեւոր քաղաքական նկատումներ: Ահնարինութիւնը կենտրոնից բաւարար չափով ծանօթանալու պետութեան ջոկ-ջոկ մասերի կենսական բէէլ յարաբերութիւններին հետ. ժողովրդի պահանջներին օտար և նրանից սօցիալապէս կտրւած բլբոկրատիայի անպէտքութիւնը բեղմնաւոր վարչութեան համար. քաղաքացիների մէջ ինքնապորձունէութիւնը բարձրացնելու և դրանով նրանց մէջ զարթոցնելու հետաքրքրութիւնը դէպի պետութիւնը և այդ բանը զօրացնելու ձգտումը. կառավարողների մէջ զօրացնել քաղաքական պատասխանատւութեան զորդացումը, տալով նրանց վարչութեան և կառավարութեան գործերին մասնակցելու իրաւունք. անհրաժեշտութիւն օրէնսդրուածներին մասնակցելու իրաւունք. անհրաժեշտութիւն արհեստակցական շահութեան համար հաշի առնել տեղական և արհեստակցական շահերը. երաշխաւորել վարչութեան օրինականութիւնը՝ իբրև հակա-կշիռ կենտրոնական հաստատութիւնների կամայականութեան. շարժել կենտրոնական հաստատութիւնների կառավարութեան հազրդուած մարդկանց վրայ դնել տեղական կառավարութեան ծախքերը, — սրանք են զանազան ձևերի ապակենտրոնացման գր-խաւոր հիմունքները» *):

Հաշիւով վարչական ապակենտրոնացման այս բաղաժիւր օգուտները, կամ նրա հիմքերը, Նլլինէկն աւելացնում է, որ իր այդ ասածները զեռ բոլորը չին, նլլիթը դեռ չէ սպառւած:

*) Еллинекъ. «Право. Совр. Госуд». Երև. 419. Գերմանացի հեղինակը, ինչպէս պարզ երևում է, կանգնած է բէէլ նլլիթական ու ազգային շահերի տեսակէտի վրայ:

Տարբեր էր տեսակէտը Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան սկզբնական շրջանում: «Ազգային ժողովին» ներկայացւած տեղական ինքնավարութեան շրջաններից ամենանշանաւորը 1790-ի մարտ-ապրիլի միմեծներին Պարիզի ներքին գործերից ամենանշանաւորը 1790-ի մարտ-ապրիլի միմեծներին Բնորոշ է այդ ծրագրային ինքնակցիների մշակածն է — մասնակցութեամբ կառավարելու տեսակէտը 18-դ դարավերջի մտափոխութեան «բնական» կողմէ իրաւունքի տեսակէտից: Այդ նախադրում աւելւում է, ի միջի այլոց, «Օրէնքը հաստատում է Պետութեան մէջ մի ընդհանուր կարգ, որը կապահովէ ամեն մէկի ազատութիւնը, սեփական, նութիւնը, անձնակտն ապահովութիւնը և բնական ընդդիմադրութիւնը: Օրէնքն, այսպիսով հաստատելով կանգ է առնում այդպիսի հաստատութեան վերկոթիւնը հաստատելով, կանգ է առնում այդպիսի տեղ, և այնուհետև թողնում է ամեն մէկին այնտեղից քաղելու իր անհատական

Պետութիւնը պիտի որոշէ ընդհանուր օրէնքներ, որոնք պէտք է գծեն ընդհանուր սահմաններ, իսկ այդ ընդհանուր սահմանների մէջ ազատ, առանց կենտրոնի veto-ի իրաւունքի, ինքնիշխան կերպով, պիտի վարէ համայնքն իր ներքին գործերը:— Ահա ընդհանուր բանաձևը:

Տեղական ինքնավարութեան և կենտրոնական իշխանութեան յարաբերութիւնը: Ֆրանսիական ծայրայեղ կենտրոնացման դէմ 19-րդ դարում հսկայական արշաւանք է մղւել: Բազմաթիւ նախագծերից ամենախոշոր փոթորիկ բարձրացնողը 1865 թւի Նանսիի ծրագիրը եղաւ, որով մի խումբ «ապակենտրոնականներ» պահանջում էին տեղական լայն իրքնավարութիւն: Այդ ծրագիրը ծնունդ տւեց բազմաթիւ փոթորիկի վէճերի 1 կայսրութեան օրով: Այդ վէճերից մէկում հանդուցեալ ժիւլ Թէրրին, ի միջի այլոց, հետեւեալն էր ասել «պետական պանթէիզմի», ամենայն ինչ կլանող ցէնտրալիստ պետական իշխանութեան դէմ. «Հաճելի է ձեզ լինել ամենասերտ կերպով միացած, ռազմիկ և համաշխարհային խաղաղութեան համար վտանգաւոր ազդ.— եղէք ուրեմն ամենից աւելի կենտրոնացած ժողովուրդ»: Այսինքն եղէք մի ժողովուրդ, որը կազմւած է բանակի նման, որը գիտէ լոկ հպատակելի վերևից եկած հրամաններին, որը շարժւում է իրր մի մարդ՝—կենտրոնի մատի հրամաններով,—մի ազգ, որ ամենից նւազ է յարմարւած ազատութիւն վայելելու համար: «Իսկ եթէ դուք ցանկանում էք լինել աշխատանքի, խաղաղութեան և ազատութեան ժողովուրդ,

փրկութիւնը՝ ըստ իր ցանկութեան տրամադրելով իր ազատութիւնը և իր սեփականութիւնը:

Օրէնքը չէ կարող և չը պէտք է իջնի մինչև այն աստիճան, որ կարգաւորէ այդ գործադրութիւնը քաղաքացիների վերաբերմամբ, որոնց բանականութիւնը տեղն է: Եթէ ոչ՝ ցանկալով օգտակար դարձնել քաղաքացիների ազատութեան և սեփականութեան գործադրութիւնը, օրէնքը կը կործանէ և նրանց ազատութիւնը, և՛ սեփականութիւնը:

Ուրեմն՝ ամեն մարդ պարտաւոր է ինքն իր համար կարգաւորել մի յատակ կարգ ու կանոն և մի վարմունքի նախադիմ, որոնք կը պայմանաւորեն այն լաւագոյն գործածութիւնը, որ նա կարող է անել իր իրաւունքներէց... (S. Larcoix-Aut. Communale):

ինչևրի՞դ է պէտք ուժեղ իշխանութիւնը: Կտոր-կտոր արէ՞ք նրան, որպէս զի թուլացնէք»...*):

«Ուժեղ պետութիւն», «անյաղթելի ազգ», ահա այն ըէզոնները, որոնց անունով բոլոր ցէնտրալիստները երդւում են: Ապա- կենտրոնացումը, նոյն իսկ հասարակ վարչական տեղական ինքնավարութիւնը թուլացնում է ամենագոր պետութիւնը, ցէնտրալիստների այդ նոր կուռքը) Սպինոզայի «պանթէիզմի» նմանութիւնը կրող ամենակեր պետութիւնը:

Սակայն ճշմարիտ է արդեօք այդ միտքը: Ամենևին:

Տեղական ինքնավարութիւնը «ինքնագոյ» չէ. նա բղիւսւմ, արտագրւած մի հիմնարկութիւն է: Ինչպէս մի քիչ առաջ էլ ասարտագրւած մի հիմնարկութիւն է: Ինչպէս սահմաններ, զնում է ընդսացինք, կենտրոնը գծում է ընդհանուր սահմանների մէջ մնացած հանուր օրէնքներ. իսկ այդ ընդհանուր սահմանների մէջ մնացած սարածութեան վրայ ազատ է թողնում իր բաղադրիչ մասերին— համայնքներին, կանտոնին, զաւառին ու նահանգին՝ շարժւելու համայնքներին, օրէնքները, որոնք պայմանաւորում են տեղական Այդ ընդհանուր օրէնքները, որոնք պայմանաւորում են տեղական ինքնավարութեան հիմնարկութիւնները, նրանց աէրրիտօրիայի և իրաւասութեան չափերը—կախւած են կենտրոնից, համապետա-իրաւասութեան չափերը—կախւած են կենտրոնից, համապետական օրէնադիր մարմինից կամ մարմիններից, վերջապէս, ամենա-լաւ դէպքում, երկրի ճիմնական օրէնքից՝ նրա սահմանադրու-թիւնից:

Կենտրոնական օրէնադիր մարմինները կամ համապետական կառավարութիւնը միշտ կարող է փոխել ինքնավարութեան վերաբերեալ օրէնքները, նորից զնել, ընդլայնել ինքնավարութեան իրաւասութիւնները կամ սահմանափակել:

Միւս կողմից՝ մենք արդէն գիտենք, որ պետութեան և համայնքների շահերը համերաշխ են. նրանք ոչ թէ իրար զուգահե-րական են, այլ նոյնութիւն են: «Զուգահեռական» ընդունել այդ ուսկան են, այլ նոյնութիւն են: «Զուգահեռական» ընդունել այդ զոյութիւն ունենալ համայնքներից անկախ, առանց նրանց... իսկ դա անմտութիւն է: Այդպէս էին ենթադրում պետութեան մասին մետաֆիզիքները: Այնինչ պետութիւնը համայնքների համազու-մարն է, նրանց ժողովրդների և նրանց տէրրիտօրիաների ամբող-ջութիւնը, նրանց բոլորին վերաբերող ընդհանուր շահերի ու

*) Аваловъ. „Децентр. и Самоуправл. во Франциі“. Կր. 240

գործերի ներկայացուցիչը: Այդպէս մտածելով՝ անկարելի է զբա-
 նել համայնքի շահերը տարբեր պետութեան շահերից: Դրանք
 նոյն էութիւնների փոքր ու մեծ չափերն են. դրանք միեւնոյն
 գծի զանազան մեծութեան կտորներն են և ոչ երկու իրար զու-
 գահեռական գծեր:

Զօրացնել համայնքը, կանտոնը, գաւառը կամ նահանգը՝ ա-
 մենակին չէ նշանակում թուլացնել ընդհանուր պետութիւնը: Այդ-
 պէս ընդունել, կը նշանակէ խոստովանել, որ մի քանի մեծ թը-
 ւերի գումարն աւելի քիչ է, քան նոյն քանակի փոքր թւերինը,
 — այսինքն մի ակնբռն անմտութիւն:

Տեղական ինքնավարութիւնը ժողովրդի բարօրութեան, եր-
 կրի հարստութեան ու յարմարութեան տեսակէտով ստեղծւած
 մի քաղաքական հիմնարկութիւն է: Օգտի, յարմարութեան, դիւ-
 րութեան ու արգարութեան տեսակէտից, նա մի քանի գուտ
 տեղական գործեր խլում է կենտրոնական վարչութիւնից և տա-
 լիս է տեղական ժողովրդի ձեռքը: Այն, նա թուլացնում է բիւրօլ-
 բառիգմը, մեղցնում է նրան, բայց երբէք չէ թուլացնում կեն-
 տրոնական իշխանութիւնը:

Տեղական ինքնավարութեան գլխին միշտ կանգնած է կեն-
 տրոնական իշխանութիւնը. նա հսկում է ընդհանուր օրէնքների
 ճիշտ գործադրութեան վրայ, նա չէ թողնում որ մասնակի, տե-
 ղական կարգադրութիւններն ու որոշումները դէմ լինեն ընդ-
 հանուր օրէնքների ոգուն:

Իսկական լայն ինքնավարութեան մէջ կենտրոնը հսկողի
 դեր միայն ունի և ոչ veto-ի իրաւունք: Կենտրոնի կողմից ինք-
 նավար շրջանում գտնուող ներկայացուցիչը, երբ նկատեց հակա-
 սութիւն տեղական կարգադրութեան և օրէնքի մէջ, ուստական
 «զիմսկի նաչաւնիկի» կամ նահանգապետի նման արգելք չէ դնում,
 գուցէ և բանտարկում ձայնաւորներին... այլ անմիջապէս դիմում
 է դատարանի — ընտրովի, անկախ դատաւորներին: Կենտրոնի ներ-
 կայացուցիչների և տեղական ինքնավար հաստատութիւնների մէջ
 ծագած թիւրիմացութիւններն, ուրեմն, լուծւում են ոչ վարչա-
 կան, այլ դատական ճանապարհով:

Լայն ինքնավարութեան դէպքում տեղական գործերի ահա-
 գին մեծամասնութիւնն ընկնում է համայնքի ձեռքը, իսկ պետա-
 կան կենտրոնական իշխանութեան ձեռքում մնում են լոկ այն

գործերը, որոնք վերաբերում են ամբողջութեանը: Բիչ է այդ
 գործերի թիւը, բայց խիստ կարևոր են նրանք: Իսկապէս նրանք են
 ստեղծում պետութեան ամբողջութիւնը, նրանք են երկրի ներքին կա-
 պերը, միացնող օղակները: Բանակ, նաւատորմ, հաղորդակցութեան
 ընդհանուր միջոցներ, պօստ, հեռագիր, հեռաւոր տարածութիւն-
 ների վրայ հեռախօսներ, մաքս և մաքսատներ և այլն, և այլն:

Սակայն այդ հիմնարկութիւններն էլ վարելու երկու ձև կայ.
 կամ կենտրոնն ուղարկում է իր պաշտօնեաներին, ինչպէս Միա-
 ցեալ Նահանգներում, կամ այդ համապետական փունկցիաների
 գործադրութիւնն էլ յանձնում է համայնքների ընտրած անձերին
 (ինչպէս Անգլիայում), որով և բիւրօլբառիգմը բոլորովին չքա-
 նում է:

1871 թւի Պարիզի կոմմունայի թշնամիները տարածում էին,
 որ կոմմունան ոչ մի գործ չէ թողնում «տղիի ձեռքին» և դրանով
 ոչնչացնում է «կուսավարութիւնը և պետութիւնը», — մի բան, որ
 իսկական անարխիզմ կը մտցնէ երկրում: Սակայն այդ չարամիտ
 զրպարտութիւնների դէմ բողոքում է կարլ Մարքսը. «Սակաւա-
 թութեանը, բայց խիստ կարևոր փունկցիաներ, որոնք մնում են կառավա-
 րութեանը, չըպէտք է ոչնչացւէին, ինչպէս այդ սուտ կերպով
 հաստատում էին հակառակորդները, այլ՝ ընդհակառակը, պէտք
 է տրւէին համայնական պաշտօնեաներին, որոնք խիստ «պա-
 տասխանատուութիւն էին անում, իրանց վրայ»: (Կ. Մարքս —
 «Քաղաքացիական կռիւ Տրանսիլայում»):

Ինքնավարութեան տեսակները: Ներկայումս գոյութիւն ունեցող
 բոլոր տեղական ինքնավարութիւններն առաջ են եկել երկու ճա-
 նապարհով — ներքինից և վերինից: Այդ երկու ուղիները ցոյց տալու
 համար դիմում ենք պատմութեանը:

Հոսմէական հսկայական կայսրութեան քայքայելուց յետոյ՝
 հնադարեան ցէնտրալիզմը վերջնականապէս փշրւեց: Թէև բարբա-
 րոս ցեղերի զանազան պետեր (Ալարիս, Գէնդերիկ, Վանդալներ
 և այլն) — մինչև կարլոս Մեծը զանազան փորձեր արին մի խոշոր
 ու կենտրոնացած պետութիւն ստեղծելու, բայց տեղական ոչինչ
 ու կենտրոնացած պետութիւն ստեղծելու, բայց տեղական ոչինչ
 դուրս չեկաւ այդ ջանքերից: Յաղթանակից միջնադարեան ծայրա-
 յեղ ապակենտրոնացումը կամ պարտիկուլարիզմը:

Ստեղծւեցին մանրիկ անկախ միութիւններ: Ամեն մի ամուր

դիրք ունեցող քաղաք պարսպապատում էր իրան և կառավարում բոլորովին անկախ կերպով, կամ որ և է հզոր գերիշխանի (սիւզդէնի) հովանաւորութեան տակ: Այդպիսի անկախ համայնքներ էին կազմում յաճախ մի քանի գիւղեր, նոյն իսկ մեծ ու ամուր դիրքով մի գիւղ:

Ջանազան տնտեսական, կուլտուրական և այլ պատճառներ, դարերի ընթացքում, առաջացրին որոշ տէրրիտօրիաների վրայ ազգային ընդարձակ պետութիւններ—ինչպէս Փրանսիա, Անգլիա, Պրուսիա և այլն: Իրանք արդէն որոշ ազգային պետութեան կերպարանք ստացան XV—XVI դարերում:

Սկզբներում դրանց մէջ միջնադարեան պարտիկուլարիզմը դեռ երևում էր. պատմական գաւառները, քաղաքները և նոյն իսկ մանրիկ համայնքները վայելում էին ահադին ինքնուրոյնութիւններ և արտօնութիւններ: Սակայն այդ բոլոր երկրներում պետական իշխանութիւնն աստիճանաբար յաղթեց, մեղքեց տեղական արտօնութիւններն ու առանձնաշնորհումները և կլանեց բոլոր գաւառներն ու համայնքներն այն ամենակեր Մօլոխի մէջ, որ կոչւում է պետութիւն:

Այդ հարթեցնող, միաձուլող ցէնտրալիտական շարժումն ամենից աւելի շուտ ու կատարեալ ձևով իրականացաւ Փրանսիայում, յետոյ, աւելի ուշ՝ Պրուսիայում, իսկ ամենից ուշ Ռուսաստանում: Անգլիայում երբէք այդ կենտրոնացումը չը կարողացաւ վերջնականապէս կլանել բոլոր միջնադարեան, պատմական բաժանումները և նրանց իրաւունքները: Փրանսիան այն աստիճանի հասցրեց իր միաձուլող գործողութիւնը, որ Մեծ Յեղափոխութեան օրերին ոչնչացրեց նոյն իսկ պատմական դարեր գաւառները, նոյն իսկ նրանց անունները և ստեղծեց բոլորովին նոր մի վարչական բաժանում (de'partement), նոր անունով: Եւ դրա դէմ ոչ մի լուրջ բողոք տեղի չունեցաւ, որովհետև կենտրոնացումն արդէն կրճել, լուծել էր բոլոր միջնադարեան ապակենտրոնական առանձին իրաւունքները, դիմազուրկ էր արել գաւառները:

Իրա հակառակ Փրանսիական յեղափոխութեան ժամանակ իսկ տեսնում ենք լուսաւորւած միահեծան Յովսէփ II կայսրին Աւստրիայում: Նա էլ փորձեց գրչի մի հարւածով քանդել դարերի գործը, պատմական գաւառները, ուղեց ուշք չը դարձնել իր գաւառների ու նահանգների ազգային, պատմական, կլիմայական

ու երկրաբանական տարբերութիւնների վրայ. ուղեց բոլորին խառնել իրար, ստեղծել վարչական մի նոր բաժանում, բոլորը հլու-հնազանդ Վիէնայից բղխող հրամաններին: Կարճ ասանք— ուղեց Աւստրիան դարձնել մի իսկական բիւրօկրատական պետութիւն, ինչպէս Փրանսիան և Ռուսաստանն էին:

Բայց նրան այդ չը յաջողեց: Նահանգներն աստամբուեցին. Վէնգրիան, Նիդերլանդը և ուրիշները պարզեցին տեղական կամ ազգային դրօշը և Յովսէփ II կայսրը տեսաւ, թէ ինչպէս փշրուեց իր հնարած բիւրօկրատական միահեծանութիւնը:

Սակայն կենտրոնացած Փրանսիան, Ռուսաստանն ու Պրուսիան էլ ստիպւած եղան XIX դարի ընթացքում նորից մտցնել իրանց երկրներում վարչական ապակենտրոնացում—տեղական ինքնավարութիւն, ի հարկէ զանազան չափերով:

Ահա դա է, որ մենք անւանում ենք վերեւից տրւած ինքնավարութիւն:

Երկրորդ ճանապարհն է ներքեւից: Անգլիայում, Շվէյցարիայում և մի քանի այլ տեղերում պետական իշխանութեանը երբէք չը յաջողեց կլանել համայնքների բոլոր իրաւունքները: Ի հարկէ չը յաջողեց կլանել համայնքների իշխանութիւններին յաջողեց խլել ամեն տեղ էլ կենտրոնական իշխանութիւններին մի համայնքների իրաւասութիւններից նրանք, որոնք յատուկ են մի համայնքների իրաւասութիւններից: Երբեմն էլ նոյն վայրերում զանազան անկախ պետութիւններին: Երբեմն էլ նոյն վայրերում զանազան ընկճւած համայնքների այս կամ այն նոր իրաւասութիւնը վերեւից տւին և այդպիսով բոլոր համայնքների մէջ իրաւասութիւնների միօրինականութիւն մտցրին:

Ահա դա է, որ մենք կոչում ենք ներքեւից եկող ուղի:

Բնականաբար վերեւից տրւած տեղական ինքնավարութիւնը չէ որ հանդիսանում է իսկական պատմական ուղին, համապատասխան համայնքի բնական զարգացման օրէնքին, այլ երկրորդն աստիճանի համայնքի բնական զարգացման օրէնքներին համապատասխանը:

Վարչական նոր բաժանումները թէ Փրանսիայում և թէ մանաւանդ, Ռուսաստանում երբէք չեն կարող լինել ճշտապէս համապատասխան համայնքի բնական ու տնտեսական հիմքերին: Օրիմապատասխան համայնքի բնական ու տնտեսական հիմքերին: Օրիմապատասխան համայնքն ու զաւառը յաճախ, շատ յաճախ պարտնակում են իրանց մէջ այնպիսի տէրրիտօրիաներ ու ժողովուրդներ, որոնք պատմական ու բնական շահերով ամենակին կապ-

ւած չեն մնացած մասի հետ, նոյն իսկ ոչ մի առընչութիւն չունեն նրա հետ:

Այն ինչ բոլոր տեղական ինքնավարութիւնների իսկական հիմքը լինելու է համայնքը, ինչպէս և է թէ Անգլիայում, թէ Շվեյցարիայում:

Համայնքը մի ամբողջութիւն է: Նա միացած է ընդհանուր տնտեսական շահերի, հանրակեցութեան և յաճախ նոյն իսկ էտնօգրաֆիական կամ ազգային ծագման նոյնութեան միջոցով: Նրան երկու կամ աւելի մասերի բաժանել չէ կարելի, առանց վնասելու բոլոր մասերի նիւթական ու ազգային (բարոյական և նիւթական միաժամանակ) շահերը:

Թէև Ելլինէկը (յիշուած գիրքը—երես 430) գտնում է, որ համայնքն իր սկզբնական իշխանութիւնն ստացել է պետութիւնից, բայց մենք կարծում ենք, որ դա ստոյգ է լոկ համայնքի այժման իշխանութեան վերաբերմամբ, եթէ ոչ համայնքներն առհասարակ աւելի հին են, քան պետութիւնը և նրանց իշխանութիւնն աւելի առաջ է, քան պետութեանը: Պետութիւնը ուշ է ծնւել և գտել է պատրաստի համայնքներ, որոնց ընդհանրութեան ներկայացուցիչն է նա հանդիսացել: Համայնքների բացարձակ անկախութեան մի մասն է, որ անցել է այդ ներկայացուցչի ձեռքը և նրան տրւել է թէ ոյժ, թէ կշիռ:

Իսկ համայնքը, իրր դրացիութեան և նիւթական շահերով կապւած մի ամբողջութիւն, միշտ, ամեն տեսակ պետութիւնների մէջ ունեցել է, այս կամ այն չափով ու ձևով, իր ներքին իրաւունքները, որոնք ներկայ պետութիւնների մէջ օրինական կարգաւորումն են ստացել—ու դրա հետ միասին կամ աճել, կամ կրճատել: Այնպէս որ ասել, թէ համայնքն իր անդամներին հրամայելու (imperium-ի) իրաւունքն ստացել է պետութիւնից (ինչպէս պնդում է Ելլինէկը—երես 431), մեր կարծիքով, ստոյգ է միայն ներկայ համայնքի վերաբերմամբ: Համայնքն այդ հրամանի իրաւունքը միշտ ունեցել է իր անդամների վերաբերմամբ:

Տեղական ինքնավարութիւնը զանազան երկրներում: Տեղական ինքնավարութեան հայրենիքն Անգլիան է: Նոյն իսկ Շվեյցարիայի մանրիկ կանտոնների մեծագոյն մասը եղել են մանրիկ արիստօկրատիական օլիգարխիաներ: Օրինակ՝ Ժընէվի կանտոնի տէրերը

եղել են «300 ընտանիքները», որոնք միահեծան օլիգարխներ են եղել այդ փոքրիկ երկրում:

Տեղական ինքնավարութիւնն ամենից առաջ մայր ցամաքում ու է դրել Բէլգիայում—1830-ական թւերին: Նրա սահմանադրութիւնը կազմող լուսամիտ անձերը գտնւում էին երկու ազգեցութեան տակ. նախ անգլիական խիստ արիստօկրատիական տեղական ինքնավարութեան և ապա, որ գլխաւորն է, Ֆրանսիական յեղափոխութեան առաջին շրջանի դեռ շատ թարմ ապակենտրօնական զաղափարների ազդեցութեան տակ:

Յետոյ արգէն այդ լուսամիտ սկզբունքն աստիճանաբար սկսեց թափանցել Հօլլանդիա, Գերմանիա, Աւստրիա, մասամբ Ֆրանսիա և Ռուսաստան:

Դիմենք այդ երկրների տեղական ինքնավարութիւնների համառօտ նկարագրութեանը:

Ֆրանսիա: Այդ երկրի տեղական խղճուկ ինքնավարութեան մասին մենք արգէն խօսել ենք, կրկինն աւելորդ է: Այսքանը միայն ասենք, որ Ֆրանսիական լեզուի մէջ ինքնավարութիւն (самостоятельное управление, selfsverwaltung, selfgovernment) բառը գոյութիւն չունի: Ետեւորը գործ են ածում «autonomie communale» (համայնական արտօնօմիա) և դրանով ստեղծում խոշոր խառնաշփոթութիւն հասկացողութիւնների մէջ, որովհետև արտօնօմիան լոկ վարչական հատէզօրիա չէ, այլ և օրէնսգրական: Ետեւորն էլ, հարցի հետ կապէզօրիա չէ, այլ և օրէնսգրական: Ետեւորն են ածում անգլիական բառը—self-government: Յաճախ գործ են ածում նաև միայն «ապակենտրօնացում» բառը:

Պետական գօրեղ կենտրօնացման դէմ հարիւր տարուց աւելի է, որ սկսւած է մի գօրեղ ու կրքոտ արշաւանք: Ապակենտրօնականները հազիւ կարողացել են դեռ ևս ձեռք բերել այն ինքնավարութեան սոււերը, որ մենք նշարագրեցինք անցեալ գլխում:

Ապակենտրօնական այդ երկար ու ձիղ արշաւանքի մէջ ամենահետաքրքրական կէտը նրանումն է, որ պահպանողականները, կաթոլիկ լիբերալները, յաճախ արքայականները հանդիսացել են կաշտպան ապակենտրօնացման: Դրանք բոլորն էլ զանազան յոյպեր են տածել յետամնաց գաւառների—վաղէանների վրայ, իրանց մութ նպատակներն առաջ քշելու համար: Այն ինչ անհատակա-

պահանջուում է ցէնդ. առևտրական գիրդիա, կամ 6,000 ր. շրջա- նառութիւն ունեցող որ և է հիմնարկութիւն, կամ քաղաքում ո- բոշ արժէքով կալած:

Ձայնաւորները տարեկան մի անգամ հաւաքուում են նիս- տերի, նահանգապետի թոյլտուութիւնով. դա կոչուում է հերթական ժողով:

Ձայնաւորները ոտճիկ չեն ստանում:

Զեմակի ժողովն ընտրուում է մի վարչութիւն (ուպրաւա) բաղ- կացած նախագահից և 3 անդամից: Նախագահին հաստատուում է նահանգապետը: Զեմակի ժողովը կայացնում է վճիռներ, իսկ ուպրաւան գործադրում է:

Բացի հերթական ժողովներից, կարելի է անել և արտակարգ ժողովներ, միայն պէտք է ներքին գործերի մինիստրից թոյլտու- թիւն ստանալ:

Նահանգական զեմսովոն և ուպրաւան էլ կազմւած են նոյն սկզբունքներով և ունեն նոյն իրաւասութիւնները՝ միայն նահան- գի վերաբերութեամբ: Սակայն սրանց ընտրութիւնները ժողո- վուրդը չէ կատարողը, այլ գաւառական զեմսովային ժողովները:

Գործավարութիւնը կատարուում է նոյն կարգով: Ամեն տեղ նահանգապետի ու մինիստրի հաստատութիւնը կամ թոյլտուութիւնն է հարկաւոր... կենտրոնական իշխանութիւնը իւրաքանչիւր քայ- լափոխում զօրեղ ձեռքով քաշում է ինքնավարութեան սանձը, միջամտում նրա գործերին:

• Այս են 1864-ի ազատամիտ օրէնսդրութեան էական կէտերը, որ մենք խիստ համառօտակի առաջ բերինք:

Այդ օրէնսդրութիւնը 25 տարի գործադրեց միայն ներքին 33 գուտ ուսական նահանգներում. ծայրագաւառների համար զան էլ շատ համարեց...

Մի Յրանսիացի գրող զեռ 1884 թւին գուշակել է, որ ինք- նակալութիւնը և ինքնավարութիւնն իրար հետ հաշտ ապրել չեն կարող *):

«1865 թւին տրեց ինքնավարութիւն—հարուստների, բուր- ժուականների համար ստեղծւած: Դիւզացիներն արդէն ճորտութիւ- նից ազատել էին, ցէնզուրան բաւական թեթեւացել էր. շուտով մտցրին նաև նոր ձևի դատարաններ, բաց արին տանելի զարոց-

*) Joseph Ferrand «Les pays libres»... page 133.

ներ... բայց կեանքի մի ամենախոշոր ու հրամայական մասը— երկրի քաղաքական կազմը մնաց մի և նոյնը. միահեծան ինք- նակալութիւնը մնաց նոյնը, բիւրօկրատիան ու ցէնտրալիզմը կրկին մնացին... Եւ ահա՛ միահեծանութիւնն ու բիւրօկրատիան կրծելով, կրծելով մաշեցին ու կլանեցին Ալէքսանդր 11-ի ստեղ- ծած խիստ համեստ բէֆօրմները» *):

Այն, տեղական ինքնավարութիւնը, որքան էլ նա խղճուկ չափերով լինի, կարող է ապրել միայն այն երկրներում, ուր գո- նէ նոյն խղճուկ չափերով պետական սահմանադրութիւն կայ: Եթէ ոչ կամ չքանալու է ինքնավարութիւնը, կամ ինքնակալութիւնը: Թուսաստանում չքացաւ ինքնավարութիւնը. անունը կայ, բայց էութիւնը չը կայ:

Ալէքսանդր 11-րդ կայսրը 1890-ի յուլիս 12-ի «գէմսովային օրէնսդրութիւնով» հասցրեց նրան, այս պէս կոչւած, «coup de gra- ce» կամ վախճանական հարւածը:

Այդ օրէնսդրութեան մէջ պարզ սոււած է, որ զեմակի հաս- տատութիւնները «պետական հիմնարկութիւններ են», այսինքն կենտ- տատութիւնները «պետական հիմնարկութիւններ են», այսինքն կենտ- րոնական վարչութեան ձեռքին: Նա սաստկացրեց կառավա- րութեան հսկողութիւնը զեմսովոյի վրայ. նահանգապետին իրաւունք տրեց ոչ միայն հսկելու «օրէնքի ճիշտ գոր- ծադրութեան վրայ» և թոյլատրելու հերթական ժողովներն ու հաստատելու զեմակի վարչութեան նախագահին, ինչպէս հին օ- րէնսդրութիւնն էր պահանջում,—այլև ճետելու զեմակի հաստա- տութիւնների գործառնութիւնների կանոնաւորութեանը: Նահան- գապետն իրաւունք ունի վերաքննութեան ենթարկելու զեմսովոյի վարչութեան և միւս հաստատութիւնների գործերը: Հիմնւած է մի նոր հաստատութիւն—«զեմակի գործերի նահանգական ատեան», որը քննում է, թէ արդեօք զեմսովոների որոշումներն օրինական են, թէ ոչ: Դիտելով զեմսովոն իբր պետական մի հաստատութիւն—

այսինքն իբր կենտրոնական կառավարութեան գործիք, 90 թւի օրէնսդրութիւնը զեմակի վարչութիւնների անդամներին ու նա- իրաւունք տրեց ոչ միայն հսկողութիւնը ունեն չը հաստատելու զեմակի նիստը և նահանգապետն իրաւունք ունեն չը հաստատելու զեմակի ժողովների ընտրած վարչութեան անդամներին ու նախագահներին:

*) Արմէն. Գասպար—«Թուսական զեմսովոն և Կովկասի պահանջները»:

Այդ դեռ քիչ է. մինիստրն իրաւունք ունի փոխելու այդ ընտրւած անձերին և նրանց տեղը նշանակելու իր բարեհաճած անձերին:

Այժմ պարզ է, որ բիւրօկրատիական կամայականութեան ձեռքին զեմստվօն մի խաղալիկ է դարձել:

1890-ի օրէնքը ոչնչացրեց նաև նախկին ընտրողական եղանակը: Կալւածատէրերի և քաղաքների ընտրական ժողովները վերացւեցին. այժմ ազնւականութիւնը կազմում է մի ընտրական ժողով և տալիս է գաւառի բոլոր ձայնաւորների 57, 1⁰/₀-ը (ուսսական 30 նահանգներում), իսկ միւս բոլոր դասակարգերը միայն 42, 9⁰/₀.—բոլորի ձայնը միասին աւելի քիչ է, քան միայն ազնւականութեանը: Եթէ Ալէքսանդր II-ի զեմստվօն հարուստների հիմնարկութիւն էր, 1890-ի ստեղծածն արդէն Ֆէօդալական էր:

Հոգևորականները, հրէաները, հաւատարմատարները բոլորովին զրկւեցին ընտրական իրաւունքից: Գիւղական ընտրութիւններն էլ սահմանափակւեցին: 1889-ին հիմնւած «զեմսկի նաչալնիկ» կոչւած պաշտօնը բոլորովին անբարոյականացրեց գիւղական ընտրութիւնները: Այդ «զեմսկի գլխաւորից» գիւղացիներն անմիջական կախման մէջ են հողային, դատական և այլ բազմաթիւ հարցերում, իսկ ընտրութիւնները կատարւելու են հէնց այդ չիւնօւլիկների ներկայութեամբ: Ընտրւած ձայնաւորներին էլ նահանգապետը հաստատում է այդ պաշտօնեաների տւած տեղեկութիւնների հիման վրայ:

Զեմստվօններից խլւեց ժողովրդի սննդառութեան գործը, զեմսկի տուրքեր նշանակելու իրաւունքը. ստեղծւեցին ահագին արգելքներ ժողովրդական կրթութեան, բժշկութեան և այլ գործերին մասնակցելու դէմ:

Չարժէ խօսել 1903 թւի Խօն-Պլէվէի «կրճատւած զեմստվօնների» մասին, որ մտցւեցին Կիեւի, Պօդօլի, Վօլինի և մի քանի այլ նահանգներում: Իրանք այնպիսի հիմնարկութիւններ են, ինչպէս ոստիկանութիւնը, նահանգական վարչութիւնը և այլն. ընտրութեան նշոյլ անգամ գոյութիւն չունի:

Այն, ինքնակալ բիւրօկրատիզմը կլանեց ինքնավարութեան սկզբունքը: Իրանք միասին ապրել չեն կարող—կամ մէկը, կամ միւսը: Ինքնավար համայնքը, կանտօնն ու կաւառը սազում են միայն սահմանադրական, ազատ ընտրական պետական կազմերին:

Ի Անգլիական ինքնավարութիւնը: Տեղական ամենալայն ինքնավարութեան հայրենիքն Անգլիան է: Միջնադարեան տեղական անկախութիւններն այդ երկրում երբէք չեն անհետացել—նոյն իսկ Վիկտօր Աշխարհակալի օրով: Անգլիական յեղափոխութիւնն անվիճելի մտքի նրա հիմքերին: Նա մնացել և աստիճանաբար զամ ձեռք չէ տւել նրա հիմքերին: Նա մնացել է վերջին դարերի պահանջարկացել, ձևափոխւել և յարմարւել է վերջին դարերի պահանջներին, իսկ 19-րդ դարի վերջում՝ նաև նորագոյն պահանջներին: Այս հարցում էլ անպիտան ցեղի հանճարը—յարմարւելու, առանց թոխչքների, աստիճանական զարգացման ունակութիւնը փայլում է արևի լոյսի պէս: Ամբողջ Եւրօպան իր տեղական ինքնավարութիւնների զաղափարը փոխ է առել անգլիական self-government-ից, և յարմարեցրել է իր պայմաններին, իր բիւրօկրատական, յաճախ ցէնարալիստական ոգին:

«Անգլիացիների համար իրանց կառավարութեան ձևն ինքնավարութիւն է (self-government), որի կատարելութիւնը պարլամէնտն է: Self-government-ին անգլիացիները հակադրում են government by prerogative (առանձնաշնորհման կառավարութիւն) միակողմանի, ոչնչով չը սահմանափակւած արքայի կամ քի կառավարութիւն» *):

Սակայն անգլիական ինքնավարութիւնը, մինչև 19-րդ դարի վերջերը (մինչև 1888 թիւը) մի արխտօկրատական հիմնարկութիւն էր. նա ամբողջապէս զտնւում էր հողատէրերի ու ազնւականների ձեռքում: Բայց 1888-ին, 1894-ին, և 1902-ին ընդունւած նոր օրէնքները հիմնաւորապէս փոխեցին տեղական ինքնավարութեան ոգին. չքացաւ արխտօկրատիզմը և մտաւ այն վերջնական ձևը, որ այսօր կայ:

Ամբողջ Անգլիան բաժանւած է կոմսութիւնների, դիստրիկտների կամ շրջանների և ծուխերի: Այդ երեք բաժանման համապատասխան գոյութիւն ունեն երեք տեսակ ինքնավարական «Կոմսութեան Խորհուրդներ» (county councils), «Շրջանային խորհուրդներ» և «Ժխական խորհուրդներ կամ «միախնդներ» **):

*) «Еллин. Право Сов. Гос.» էրես 420
**) Անգլիական տեղական ինքնավարութեան վերաբերմամբ մենք օգտուել ենք հետևեալ աղբիւրներից. 1) էտիէն Ֆլանդէն

Մուխը համայնքն է, համապատասխան ուղևական «միրին», գիւղական ու քաղաքային համայնքին: Դիտարիկտը կամ շրջանը յիշեցնում է մեր գաւառը, թէև նրանից շատ աւելի փոքր է, իսկ կոմսութիւնը մի քիչ նման է մեր նահանգին: Այդ կոմսութիւնները միջնադարեան վաստակական իշխանութիւնների տէրիւտօրիաներն են: Նրանք ծաւալով իրարից խիստ տարբեր են: Մի ժամանակ տարբեր էին նաև իրանց վարչութեան ձևերով ու արտօնութիւններով, բայց ժամանակի ընթացքում հաւասարեցին իրար այդ հարցում: Այդքանն է եղել անգլիական կենտրոնացման ազդեցութիւնը—հարթեցնել, յղկել և միաձևութեան վերածել գաւառների ազատ ինքնավարական հիմնարկութիւնները:

Բացի ինքնավարական այդ բաժանումներից, կան և հնութեան ուրիշ մնացորդներ, քաղաքներ, որոնք միջին դարերից պահել են իրանց ներքին ինքնավարական յատուկ ձևերը: Թէև բոլոր քաղաքներն ունեն մունիցիպիաներ կամ ինքնավարութիւններ, բայց 69 քաղաք Անգլիայում և 2 քաղաք Ուելսում ունեն իրանց սեփական կազմը, թէև դա էլ յար և նման է միւս ինքնավարական կազմերին. միակ տարբերութիւնը չնչին, աննշան հարցերումը և պաշտօնատար անձերի կոչման մէջն է:

«Կոմսութեան խորհուրդներն» ընտրւում են կոմսութեան ազգաբնակչութիւնից: Ընտրութիւնները ցէնզաւոր են. մասնակցել կարող են այն չափահաս անձերը, որոնք տարեկան գոնէ 10 ֆունտ ստէրլինգ (մօտ 95 ր.) տան քրէ՛հ են տալիս (տուն, բնակարան, սենեակ—միւսնոյնն է) և առնւազը մի տարի է ապրում են այդ կոմսութեան մէջ: Անգլիայի համար այդ ցէնզն իսկապէս նւազագոյնն է, թէև կրկին «ցէնզ» է, ատելի մի հաստատութիւն: Այդ ընտրութիւններին մասնակցում են ոչ միայն այդ մարզիկ,

«Полит. Учреждения совр. Европы». 2) Joseph Ferrand—«Les pays libres, leurs institutions... 3) La grande Encyclopedie—«Angleterre»: 4) Рапопортъ-„Англія“ (Пол. Энци, т. I). 5) Мижуевъ—„Англо-саксонская раса“ (Пол. Энци, т. I). 6) Дайнси—„Основы Госуд. Права въ Анг.“, 7) Еллинекъ—„Право Совр. Госуд.“, 8) Вотье—„Мѣстн. самоуправл. въ Англіи“, 9) Гуго—„Новѣйшія теченія въ Англ. городскомъ самоуправленіи“ և այլ մանր գրքոյկներից ու յօդւածներից:

այլև կանայք: Թէև կանայք ընտրող են, բայց կոմսութեան ինքնավար մարմնում չեն կարող դեռ ևս ընտրւել:

Կոմսութեան խորհրդի անդամների թիւը միատեսակ չէ ամեն տեղ. նա կախւած է տեղական հանգամանքներից—կոմսութեան տարածութիւնից, գործերի առատութիւնից և այլն: Ընտրութիւնները կատարւում են զազանի քւէարկութիւնով:

Ժողովրդի ընտրած խորհուրդն առաջին ժողովն անում և իր կողմից էլ ընտրում է հասարակութիւնից «պատւաւոր անձեր» («աղայսխկաներ»), որ կոչւում են «օլդէրմէններ»: Դրանց թիւը երբէք աւել չը պէտք է լինի ժողովրդից ընտրւած խորհրդի թւի մէկ երրորդ մասից, կամ ամբողջ ժողովի 1/4-ից:

Ժողովուրդն ընտրում է խորհրդի անդամներին 3 տարով, իսկ «օլդէրմէնները»—6 տարով: Սրանք, իբր հասարակութեան ամենափորձւած անձեր, լիակատար ձայնի իրաւունքով մասնակցում են կոմսութեան խորհրդին:

Թէև օլդէրմէններն ընտրւում են 6 տարով, բայց իւրաքանչիւր 3 տարին նրանց կէս մասը հեռանում է և խորհուրդը նորերին է կոչում:

Խորհուրդն ընտրւում է իր համար նախագահ մի տարով կամ իր միջից, կամ զբսից, եթէ յարմար մարդ իր մէջ չը կայ: Նախագահը միաժամանակ և հանդիսանում է կոմսութեան հաշտարար ղառաւորը: Նա նախագահ և ղատաւոր է մի տարով, բայց նախագահութիւնից հրաժարելուց յետոյ գեռ մի տարի ևս մնում է ղատաւորի պաշտօնում:

Ահա ընտրութեան բոլոր եղանակը: Անցնենք այժմ նրա իւրաւասութեանը:

Կոմսութեան խորհրդի ձեռքումն է ոստիկանութիւնը (մասնաւոր բացառութիւններ կան միայն համապետական նպատակներով), զարոցական գործը, գլխաւոր ճանապարհների կառուցուումը և հողացրողութիւնը, կոմսութեան ծախքերի համար հարկեր և մը և հողացրողութիւնը, կոմսութեան ծախքերի համար յատուկ քննիչներ կամ կարծմանութեան և այլ դէպքերի համար յատուկ քննիչներ կամ «կորօնեօրներ», կոմսութիւնը բաժանել պարլամէնտական ընտրական շրջանների, սահմանել զանազան օրէնքներ ժողովրդական արական շրջանների, սահմանել զանազան օրէնքներ ժողովրդական արողութեան պահպանման տեսակէտով և այլն, և այլն: Խորհուրդը կառավարում է կոմսութեան ստացւածքները. նա կարող է

իրբ ցուցական մի մնացորդ: Եւ մի՞թէ նոյնը չէ անգլիական կա-
ռավարութեան ամբողջ սիստէմի վերաբերմամբ. նա էապէս հան-
րապետութիւն է, միայն ժառանգական նախագահով (թագաւոր),
որը համարեան իրաւազուրկ, ցուցական մի էակ է այժմ:

Կենտրոնական իշխանութեան ներկայացուցիչները կոմսու-
թիւններում 2 հոգի են—շէրիֆը և լորդ-էլէյտնանտը:

Շէրիֆը միջին դարերում կոմսի օգնականն էր, կոմսու-
թեան զենեքալ-նահանգապետը, ահագին իրաւունքներով: Այժմ
էլ նա կայ: Նրան ընտրում է թագաւորը կոմսութեան երեւելիներից,
այսինքն ազնւականներից ու հարուստներից: Ընտրութիւնը կա-
տարւում է դատաւորների ներկայացրած «երեւելիների» գրաւոր
ցուցակից այսպէս. թագաւորը նետում է ցուցակի վրայ մի սրա-
ձայր գործիք,—ու՛մ անունը որ ծակեց գործիքը, նա էլ համար-
ւում է ընտրւած: Սակայն գործիքն էլ ծակում է թագաւորին
հաճելի մարդկանց անունները...

Շէրիֆը նշանակւում է մի տարով և ղեկավարում է պար-
լամէնտական ընտրութիւնները (նախագահում), հսկում է դա-
տական որոշումների գործադրութեան վրայ: Նա նշանակում է
իր համար մի օգնական, ի հարկէ կրկին տեղական «երեւելինե-
րից»: Թէ նրա, թէ օգնականի և թէ լորդ-էլէյտնանտի պաշտօնը
ձրիարար են կատարւում: Իրանք բիւրօկրատական «տեղեր» կամ
պաշտօններ չեն, այլ միայն «պատւաւոր» պաշտօններ, զբա հա-
մար էլ արւում են միշտ ունեոր մարդկանց, զբամի կարիք չու-
նեցողներին:

Լորդ-էլէյտնանտն էլ նշանակւում է թագաւորի կողմից: Նա
համարւում է ոստիկանութեան և դատական իշխանութեան պետ-
նրա վրայ է խաղաղութիւնը պահպանելու պարտականութիւնը:
Նա է պահում կոմսութեան արխիւները:

Սրանք են «թագի» միակ ներկայացուցիչները կոմսութիւն-
ների մէջ: Իրանցից զատ պաշտօնեաներ չը կան: Կենտրոնական
կառավարութեան բոլոր կարգադրութիւններն իրականացնողները
տեղական ինքնավարութիւնները և նրանց ընտրած պաշտօնեաներն
են: Եթէ կառավարութիւնը նոյն իսկ պէտք է ունենում պաշտօ-
նեաների, նրանց նշանակում է միայն տեղացիներից:

Անգլիական քաղաքներն էլ ունեն լայն ինքնավարութիւն-
ներ: Կան քաղաքներ, որոնք մասնակցում են կոմսութեան ինք-

նավարական ընտրութիւններին և համարւում են կոմսութեան
մի մասը, սակայն կան էլ այնպիսիներ, որոնք անկախ կոմսու-
թիւնից, իրանք կազմում են իրանց համար առանձին ինքնավա-
րութիւն: Վերջիններիս թիւն, ինչպէս ասացինք՝ Անգլիայում 69
են, իսկ Ուէլսում 2:

Ամեն մի քաղաք ընտրում է իր քաղաքային խորհուրդը,
որի անդամների թիւը 9-ից մինչև 72 կարող է հասնել: Ընտրու-
թիւնները նոյն ձևով են կատարւում, ինչպէս կոմսութիւններում.
Նոյն «օրէքրմէնները», նոյն նախագահը, որ այստեղ կոչւում է
«մէր» կամ երբեմն էլ լորդ-մէր: Վերջինս ինքնըստինքեան կրկին
համարւում է քաղաքի հաշտարար դատաւորը: Մէրը կամ լորդ
մէրը ոչ մի գործադիր յատուկ իշխանութիւն չունի:

Քաղաքային խորհուրդը նոյն իրաւունքներն ունի, ինչ և
կոմսութեան խորհուրդը: Նա իր գործերը վարում է յանձնաժո-
ղովների ձևով, որ ընտրւում է իր միջից: Մէրը համարւում է
այդ բոլոր յանձնաժողիների անդամ:

Անգլիական բոլոր քաղաքային ինքնավարութիւնները զեռ
1803 թւին կազմել են մի ընդհանուր միութիւն, իսկ կոմսու-
թիւնների ինքնավարութիւնները, քաղաքների օրինակին հետե-
ւելով, կազմակերպել են նոյնպիսի միութիւն 1890 թւի վերջերին:
Վերջին միութեան ծրագրում նպատակն այսպէս է որոշւած. «հսկել
և պաշտպանել կոմսութեան շահերը, իրաւունքները և արտօնու-
թիւնները, իրև հարկատուների ներկայացուցչութիւնների,—այն-
քան որքան նրանց կարող է կպչել օրէնադրութիւնը. հաւաքել և
տարածել կոմսութիւնների համար օգտակար տեղեկութիւններ և
ընդհանրապէս՝ ձեռք առնել այնպիսի միջոցներ, որոնք կարող են
ընդհատել լինել այս կամ այն հարցի վերաբերմամբ, որոնց մէջ կոմ-
սութիւնների խորհուրդները կարող են շահագրգռւած լինել» *):

Զը մոտանանք ասել, որ ինքնավարական մարմինների նա-
խագահները հաշտարար դատաւորներ են միայն մանր քրէական
գործերի համար: Իսկ խոշոր քրէական և քաղաքացիական գոր-
ծերը վարում են անկախ դատաւորները (պետական դատաւորներ),

*) Անգլիական քաղաքների ինքնավարութեան և նրանց գործառնութեան
հետ մանրամասն ծանօթանալ ցանկացողներին յանձնարարում ենք Հուգօի գիրքը
— «Нов. течен. въ Анг. городскомъ самоуправ.»...

որոնք մշտական նստում են Լօնդօնում, անփոփոխելի են, անդամ դատաւարական և իրաւարանական այն հղօր կօրպօրացիայի, որը կազմում է Անգլիական պետութեան մէջ մի տեսակ առանձին պետութիւն: Նրանց պաշտօնից հեռացնելու համար հարկաւոր է երկու պարլամէնտների համաձայնութիւնը: Նրանց նշանակում է կառավարութիւնը:

Պարբերաբար նրանք Լօնդօնից գնում են դաւառները շրջելու և կուտակած գործերը քննելու: Միայն խոշոր քաղաքներում կան մշտական դատաւորներ (բէկօրդէրներ): Նրանց նշանակում է կառավարութիւնը՝ համաձայն քաղաքի խնդրի, որը և պարտաւոր է հոգալ նրա և նրա զիւանի ծախքերը:

Այդ դատաւորներն իրանց անփոփոխելիութեան, իրանց նիւթական անկախութեան (ստանում են տարեկան մօտ 48,000 ր. բարձր դատարանի անդամները—մեր նահանգական դատարանի և դատական պալատին համազօր), երկրում տիրող ընդհանուր օրինականութեան շնորհով՝ ամենեւին չհնօյնիկական ընոյթ չեն կրում, թէև նշանակում են կառավարութիւնից և ոչ ընտրում: Կառավարութիւնն էլ դատարանի առջև ճիշտ նոյն վիճակին է, ինչ որ մասնաւոր անհատները:

Չինօվիի, բիւրօկրատ չը կայ այդ երկրում: Ամեն մի պաշտօն վարում է ժողովրդից ընտրւած անձերի ձեռքով: Նշանակովի պաշտօնեաներն էլ և չափազանց քիչ են, և՛ այնպիսի պայմաններում, որ երբէք չեն կարող կատարել կամայականութիւն:

Ընտրողական իրաւունքի, ինքնավարութեան, պարլամենտաբիդմի ու ազատութեան երկիր է Անգլիան: Նրա նւաճած Ծօտրանդիան և Իրլանդիան էլ վայելում են միևնոյն ինքնավարական հիմնարկութիւնները: Սակայն Իրլանդիան կրկին գծողն է: Կայ ազգային հարց... Նա ուզում է ազգային ինքնավարութիւն, «հօմբլը»...

Տեղական ինքնավարութիւնը Բէլգիայում: Անգլիայում, ինչպէս արդէն ասացինք, տեղական ինքնավարութիւնը, կամ գաւառների «արտօնութիւններն» ու «առանձնաշնորհումները», միջին դարերից սկսած, երբէք չեն անհետացել: Սակայն այդպէս չէ ընթացել տեղական ինքնավարութիւնների պատմութիւնը մայր ցամաքի վրայ: Այնտեղ կազմւել են ազգային խոշոր ու կենտրոնա-

ցած պետութիւններ, որոնք նախ ոչնչացրել են ամեն տեսակ տեղական ինքնավարութիւն և յետոյ, 19-դ դարի ընթացքում, ստիպւած են եղել նորից վերադարձնել նախկին կամ նրանց նըման իրաւունքներ համայնքներին; շրջաններին ու գաւառներին:

Առաջին երկիրը, որ իր սահմանադրութեան մէջ յատկապէս երկու յօդւածով սրբագործել է տեղական ինքնավարութեան դադափարը և իր մէջ իրականացրել բաւական լայն չափերով,—Բէլգիան է:

Այստեղ համայնական ինքնավարութիւն ներմուծող գործիչները պարզապէս ենթակայ են եղել երկու աղբիւրից բղխած հօսանքների—անգլիական selfgovernment-ի ուսումնասիրութիւնից առաջացած ձգտումների և, որ գլխաւորն է, Փրանսիական Մեծ Ցեղափոխութեան գաղափարների:

Ինչպէս յատնի է, XVIII դարի Փրանսիական մտածողներն ամեն ինչ—թէ կրօնը, թէ պետութիւնը, թէ դատակարգերը և այլն,—կոչեցին խելքի դատաստանի առջև. ամենայն ինչ, որ չէր շկարողանում արդարանալ այդ անեղ դատաւորի առջև, մի կողմ էր «պրաւում» իրքև հին ու փտած: Իսկ խելքն ամեն ինչ դատում էր «նական անխախտելի օրէնքների, բնութեան մէջ տիրող ընդհանուր ներդաշնակութեան» հիման վրայ (Ռուսօ, Դիդրօ, Չէլլէցիուս, Հօլբախ և այլն):

Այդ փիլիսոփաները չէին կարող չը նկատել կենտրոնացած կառավարութեան վնասները, կենտրոնացման անձայր յարմարութիւնը բնապետութեան ու բիւրօկրատիզմի համար: Նրանք այդ նկատեցին և անմիջապէս դիմեցին, ընդհանրապէս «ընական հարմօնիալին»՝ ստեղծեցին «համայնքի բնական իրաւունքը» (le pouvoir naturel municipal), նրա «ընական իշխանութիւնը»:

Այդ գաղափարները տարրացան ժողովրդի մէջ և 1789-ին Պարիզ հաւաքող պատգամաւորներին համայնքները տւին «տետրակներ» (les cahiers de charge), որոնց մէջ յայտնում էին իրանց պահանջները: Դրանց մէջ խոշոր տեղերից մէկը բռնում էր համայնքի իրաւունքը, տեղական լայն, խիստ լայն, նոյնիսկ Ֆէդէրալիզմի մօտեցող ինքնավարութիւնը:

Մինք արդէն տեսանք, թէ գործնական կեանքում նրանք ինչ վախճան ունեցան յեղափոդական և կայսերական Ֆրանսիայում: Սակայն գրանց գաղափարը չը մնաւ: Նա ամենից առաջ

իրականացաւ Բէլգիայում, միայն աղաւաղած, կրճատւած ձևով, խառնւած անգլիական նախկին արիստօկրատիական ինքնավարութեան հետաւոր արձագանքների հետ:

1830-ական թւականները, երբ կազմեց Բէլգիական անկախ պետութիւնը, բէլգիայի և յեղափոխական հոսանքների կատարի մրցման տարիներն էին: Որքան էլ որ երկրի գործիչները տոգորւած լինէին անգլիական ինքնավարութեան և ֆրանսիական յեղափոխութեան գաղափարներով, այնուամենայնիւ նրանք պետական գործիչներ էին, տիրող դասակարգերից, որ ստիպւած էին չափաւորել «ծայրայեղ» համարւած գաղափարները և նրանց իրականացնել բաւական կրճատւած չափերով:

Մենք մի կողմ ենք թողնում բէլգիական տեղական ինքնավարութեան օրէնսդրութեան սկզբնական ձևը, նրա աստիճանական զարգացումը և դիմում այժմ գոյութիւն ունեցող օրէնքներին:

Բէլգիական սահմանադրութեան IV գլխում գտնոււմ ենք հետեւալ երկու յօդւածները «գաւառական և համայնական հաստատութիւնների մասին» *):

Յօդւած 108. «Գաւառական և համայնական հաստատութիւնները կարգաւորոււմ են յատուկ օրէնքներով:—Այդ օրէնքներն ապահովոււմ են հետեւալ հիմնական սկզբունքների գործադրութիւնը. 1) ուղղակի ընտրութիւններ... բացի համայնական վարչութիւնների գլխաւորների և կառավարական կօմիսարների վերաբերմամբ. 2) գաւառական համայնական խորհուրդներին թողնել այն բոլոր գործերի վարչութիւնը, որոնք վերաբերոււմ են գաւառական և համայնական շահերին, այն պայմանով, որ բարձր իշխանութիւնը հաստատէ օրէնքով որոշելիք գէպքերոււմ և որոշւած կարգով. 3) օրէնքի որոշած սահմաններոււմ գաւառական և համայնական խորհուրդների նիստերը լինելու են գոնբաց. 4) բիւջէտը և հաշւետուութիւնը լինելու է հասարակութեան յայտնի. 5) թագաւորը կամ օրէնսդիր իշխանութիւնն իրաւունք ունեն միջամտելու և խանգարելու գաւառական և համայնական խորհուրդրին գուրս գալու իրանց իրաւասութեան սահմաններից և վրասելու ընդհանրութեան շահերին»:

*) Տես „Соврем. Конституци“,—В. М. Гессенъ и Баронъ В. Э. Нольде, Երես 134, (1905, С.-Петербург.)

Յօդւած 109—«Բաղաքացիական կարողութեան ակտերի կազմելը և մէտրիքների գրքերի վարելը բացառապէս գտնոււմ է համայնական իշխանութիւնների վարչութեան տակ»:

Բէլգիական ընդհանուր սահմանադրութիւնն այս երկու յօդւածներից զատ ուրիշ ոչ մի բառ չէ պարունակոււմ տեղական ինքնավարութեան մասին:

Ծանօթանանք այժմ տեղական ինքնավարութեան կազմի և նրա գործառնութեան եղանակի հետ:

Բէլգիան բաղկացած է 9 գաւառներից: Դրանք գտնոււմ են անմիջապէս թագաւորից նշանակւած նահանգապետների (gouverneur) անմիջապէս տակ: Նա կենտրոնական իշխանութեան ներկայացուցիչ պաշտօնիան է, իսկ նրա կողքին կայ մի ընտրով գաւառական խորհուրդ, որը հանդիսանոււմ է տեղական ինքնավարութեան կամ խորհուրդ, որը հանդիսանոււմ է մշտական պատգամաւորութեան (deputation permanente) և նրա միջոցով վարոււմ իր գաւառի գործերը:

Գաւառը բաժանոււմ է վարչական շրջանների (arrondissement), բայց սրանք չունեն յատուկ ինքնավար մարմիններ, այլ միայն նահանգապետի և գաւառական խորհրդի մշտական պատգամաւորութեան ձեռքի տակ գտնուող մի պաշտօնեայ—ըրջանային կօմիսար, որի պարտականութիւնն է անմիջապէս հսկել համայնքների վերաբերման, վերահասու լինել օրէնքների և վարչական ընդհանուր կարգադրութիւնների գործադրութեանը:

Գաւառից յետոյ՝ վերջին ինքնավարական միութիւնը համայնքն է, որ կառավարոււմ է համայնական ժողովով: Վերջինս էլ բաղկացած է համայնական խորհրդից (conseil communal և երկուների խմբակից (collège échevinal)):

Սկսենք բարձրից: Գաւառական խորհուրդն ընտրոււմ է ուղղակի և ընդհանուր ձայնատուութեամբ, միայն ոչ հասարակ ընտրութիւններոււմ էլ գործադրոււմ է «յօդնակի ծայնտուութեան» սկզբունքը, ինչպէս և երկրորդական ժողովի ընտրութիւններոււմ:

Բէլգիական սահմանադրութեան 47-րդ յօդւածը (սահմանւած 1893-ին և գործադրւած 1894-ին), տալով 25 տարեկան հասակին հասած ամեն մի բէլգիացի այր մարդու ընտրական իրաւունք (սկսատի ընտրութիւնների համար—30 տարեկան), անհաւասար

Թուով ձայներ է տալիս ընտանիքի հայրերին, հարուստներին և դիպլոմատորներին: Բացի իր սեփական ձայնից՝ լրացուցիչ մի ձայն ունեն այն մարդիկ, որոնք 35 տարեկան են, ընտանիքի հայր են և պետութեանը վճարում են գոնէ 5 ֆրանկ անձնական հարկ, որ առնուով է քնակարանի համար. նոյնպէս և 25 տարեկան հասակը լրացրած այն անձերը, որոնք ունեն գոնէ 750 բուրլու կարողութիւն՝ շարժական կամ անշարժ, — եկամուտ բերող, վերջապէս նաև այն անձերը, որոնք գոնէ 2 տարի շարունակ ունեն խնայողական արկղում 100 ֆր. (37½ բ.) պահ տւած: Իսկ երկու լրացուցիչ ձայնի իրաւունք ունեն միջնակարգ կրթութիւնից մի քիչ բարձր դիպլոմ ունեցող բոլոր անձերը: 3 ձայնից աւելի ոչ ոք չունի:

Բացի յոգնակի ձայնաւութեան անարդար սկզբունքից, գաւառական խորհրդի ընտրութեան մէջ կայ և մի ուրիշ տարօրինակութիւն: Ընտրելու իրաւունք ունեն միայն 30 տարեկան հասակ ունեցողները, որոնք գոնէ մի տարի ապրում են միևնոյն համայնքում, այն ինչ ընտրել կարող են 25 տարեկանները:

Գաւառական խորհրդի անդամների թիւը կախւած է գաւառի ազգաբնակչութեան թւից և գաւառի ունեցած կարեւորութիւնից:

Սորհուրդը ընտրւում է 8 տարով, սակայն 4 տարին մի անգամ անդամների ½ մասը վերընտրւում են: Տեղական ինքավարութեան մարմինների անգամ չեն կարող ընտրել ոչ ս է նաաի, ոչ էլ պատգամաւորական ժողովի անդամները:

Սորհրդի նստաշրջանները բաց է անում և փակում է նահանգապետը թագաւորի անունով: Սովորական նստաշրջանից դատ, խորհուրդը կարող է արտակարգ նիստեր ունենալ միայն թագաւորի հրաւերով: Սովորական նստաշրջանը յուլիսին է, և տևում է 2 շաբաթ: Սորհուրդը կարող է իր իրաւասութեամբ նստաշրջանը երկարել մի շաբաթ էլ. բայց դրանից աւելի երկարելու համար պէտք է թոյլտւութիւն ստացւի նահանգապետից:

Գաւառական խորհուրդը իրաւունք չունի դիմելու մի ուրիշ խորհրդի իր իրաւասութեան մէջ չը մտնող որևէ հարցի առիթով: Նա իրաւունք չունի, առանց նահանգապետի համաձայնութեան, որ և է կոչով գիմելու ազգաբնակչութեանը:

Ինչպէս պարզ երևում է, օրէնքը շատ խիստ կերպով որո-

շել է տեղական ինքնավարութեան և կենտրոնական իշխանութեան յարաբերութիւնը. ամեն տեղ պահանջուած է կենտրոնական իշխանութեան համաձայնութիւնը, նրա կաշխանող միջամտութիւնը: Այդ կողմից բէլգիական ինքնավարութիւնը բաւական յիշեցնում է ֆրանսիական և մասամբ պրուսական ինքնավարութիւնները: Իսկ իրաւասութեան կողմից բէլգիական ինքնավարութիւնը բաւական հարուստ է, ունի լայն իրաւունքներ:

Գաւառական խորհուրդը վարում է գաւառի շահերին վերաբերող բոլոր գործերը: Նա և իր ընտրած մշտական պատգամաւորութիւնն են նշանակում գաւառի բոլոր պաշտօնեաներին: Գաւառի տարեկան բիւջէն ինքը սահմանելուց յետոյ, տալիս է ի հաստատութիւն:

Բացի բիւջէից, նահանգապետը կարող է պահանջել, որ խորհրդի հետևեալ որոշումները արեն թագաւորի հաստատութեանը. գաւառական միջոցներով բացուող հանրօգուտ հաստատութիւնների հարցը. 10,000 ֆր. (մօտ 3,750 բ.) արժէքի գաւառական կալւած գնելու, ծախելու, փոխանակելու հարցերը. գաւառի միջոցներով ճանապարհներ, ջրանցքներ և ուրիշ հանրօգուտ շէնքեր կառուցանելու հարցը, եթէ նա պահանջում է 50,000 ֆրանքեր կառուցանելու հարցը, վերջապէս խորհրդի այն որոշումից (18,750 բ.) աւելի ծախք. վերջապէս խորհրդի այն որոշումները, որոնք վերաբերում են ներքին կանոններին և ոստիկանական որոշումներին:

Այս բոլոր որոշումները միայն այն ժամանակ կարող են դորձադրել, երբ թագաւորը կը թոյլատրէ, կամ երբ 40 օրւայ ընթացքում արդեւք չի հանի նրանց առաջ:

Սորհուրդը մնացած բոլոր հարցերում կայացնում է վճիռներ, սակայն թագաւորը կարող է պատճառարանւած միջամտութիւն անել այն կարգադրութիւնները վերաբերմամբ, որոնք, իր կարծիքով, դուրս են խորհրդի իրաւասութիւնից, կամ խանգարում, զիջում են ընդհանուր պետական շահերին:

Գաւառական խորհուրդներն իրաւունք ունեն բարձր իշխանութեանը ներկայացնելու դատաւորութեան յարմար անձերի նշանակ իրանց գաւառի համար: Այդ ցուցակից թագաւորը նշանակելու է գատաւորներ: Գաւառական խորհուրդն է ընտրում գաւառի սէնատորներին. 500,000 բնակիչ ունեցող գաւառից 2 սէնատոր, մինչև 1,000,000 բնակիչ ունեցողից 3, իսկ դրանից աւելին՝

— 4 սէնատոր: Սէնատորներէ ընտրութիւնն, այսպիսով, երկաստիճան է լինում. դրա համար սէնատը հանդիսանում միշտ իբր մի յետադէմ և փաստակար քաղաքական հիմնարկութիւն:

Գաւառական խորհրդի նիստերը դռնբաց են, բայց նահանգապետի, խորհրդի նախագահի կամ անդամներէց 5 հոգու առաջարկութիւնով կարելի է նիստն անել նաև դռնփակ:

Գաւառական խորհուրդը, գաւառի գործերը մշտապէս վարելու համար՝ ընտրում է իր միջից մշտական պատգամաւորութիւն, բաղկացած 6 հոգուց: Դա համապատասխանում է մեր «ուպրավային», իսկ խորհուրդը—«դումային»: Այդ 6 հոգին էլ ընտրւում են 8 տարով և 4 տարին մէկ՝ վերընտրւում են նրանցից 3-ը: Նրանք ստանում են տարեկան 1,500-ական բուրլի ոսճիկ:

Մշտական պատգամաւորներէ խորհրդի նախագահը նահանգապետն է կամ նրա նշանակած անձը:

Գաւառական ինքնավարութեան օրէնքի 106-դ յօդւածն ասում է. «Մշտական պատգամաւորութիւնը քննում և վճռում է գաւառին վերաբերող ամենօրեայ բոլոր հարցերը թէ խորհրդի նստաշրջանի ժամանակ և թէ նրա բացակայութիւնով: Նա է գործադրում օրէնքները և որոշումները, նա է քննում նահանգապետի արած պահանջները» և այլն: Նա, գաւառական խորհրդի ցրած ժանակ, հանդիսանում է նրա հաւատարմատարը. կարող է սկսել ամեն տեսակ դատեր շարժական և անշարժ գոյքերի սեփականացման առիթով և այլն (յօդ. 106.):

Մշտական պատգամաւորների որոշումները պէտք է գործադրեն 3 օրում, եթէ նահանգապետը չը բողոքէ և գործը չը յանձնէ թագաւորի բարեհայեցողութեանը: Վերջին դէպքում վճիռների գործադրութիւնը կուշանայ մի ամսով: Իսկ եթէ թագաւորն ուղենայ, կարող է յետաձգել 3 ամսով, սակայն իր որոշումների պատճառարանութիւնը մանրամասնօրէն պարտաւոր է հրատարակել կառավարական թերթի կամ «Moniteur»-ի մէջ:

Պատգամաւորները կարող են գաւառական գումարներից ծախսել միայն համաձայն խորհրդի կանխորոշման:

Նահանգապետը պարտաւոր է գործադրել խորհրդի և պատգամաւորների որոշումները:

Գաւառական խորհրդի և մշտական պատգամաւորութեան անդամները, պաշտօնի մտնելիս, պարտաւոր են «հաւատարմութեան

թեան երդում տալ թագաւորին և հնազանդութեան երդում սահմանադրութեան և բէլլիական ժողովրդի օրէնքներին»:

Այս բոլորից պարզ երևում է, որ կենտրոնական իշխանութեան միջամտութիւնը բաւական զօրեղ է բէլլիական տեղական ինքնավարութեան մէջ: Չը կայ անգլիական իսկական ինքնավար գաւառը, սակայն չը կայ նաև ֆրանսիական ու ռուսական կամայական բերօկրատիվը. նահանգապետը հանդիսանում է իբր վերահսկող:

Անցնենք այժմ համայնքին:

Համայնական ինքնավարութեան մարմինները երկու են. համայնական խորհուրդը և էշլովէնների խումբը կամ կօլլէգիան: Սակայն դրանք բոլորն էլ գտնւում են գաւառական պատգամաւորութեան մշտական հսկողութեան, նրա խնամքի տակ:

Համայնական խորհուրդն ընտրւում է ուղղակի և ընդհանուր ձայնատուութիւնով: Ընտրելու և ընտրուելու պայմանները համարենք միեւնոյնն են, ինչ որ գաւառական խորհրդինը:

Համայնական խորհրդի անդամների թիւը կարող է լինել 7-ից մինչև 31 հոգի, նայելով համայնքի մեծութեանը: 1000 հոգի ունեցող համայնքն ընտրում է 7 մարդ, իսկ 70,000-ից աւելի ունեցող համայնքը կամ քաղաքներն ընտրում են 31 հոգի: Ընակիչ ունեցող համայնքը կամ քաղաքներն ընտրում են 31 հոգի: Յոգնակի ձայնատուութիւնն այստեղ աւելի է խստացած: Ընտանիքի հայրը կարող է մի լրացուցիչ ձայն ունենալ, եթէ որոշ տուրք է վճարում. իսկ այդ տուրքը ոչ թէ տարեկան 5 ֆրանկ է, այլ գիւղերում զրա նման մի բան, իսկ քաղաքներում շատ աւելի: Բացի այդ՝ համայնական ընտրութեան ժամանակ պրոտօւելի: Բացի այդ՝ համայնական ընտրութեան ժամանակ պրոտօւելի: Բացի այդ՝ համայնական ընտրութեան ժամանակ պրոտօւելի: 10,000 ֆրանկից աւելի արժեցող կալած, ստանում է 4 ձայնի իրաւունք:

Համայնքի անդամ է համարւում համայնքում գտնէ երեք տարի ապրած բէլլիացին: Այդ փոփոխութիւններն արւած են պահանդական-բուրժուական ոգով (1895 թւին), որպէսզի համայնքն ընկնի հարուստ ու միանդամայն յետադէմ տարրերի ձեռքը: Բացի այդ՝ 20,000-ից աւելի բնակիչ ունեցող քաղաքային համայնքներն ընտրում են նաև «լրացուցիչ-խորհրդակալաներ» (conseillers supplémentaires): Սրանց ընտրութեան ժամանակ ամեն մի ձայնատու մի ձայն ունի. յոգնակի ձայնատուութիւն չը

վարութիւնն այդ երկրում աւելի բարեյաջող պայմաններում է, ինչպէս արդէն տեսանք:

Համայնական խորհրդի որոշումները գործադրելու համար հաստատուած է «էջրվէնների կօլլէժը», որ բաղկացած է լինում մի բուրգօմիստրից և երկու օգնականներից կամ էջրվէններից փոքրը համայնքներում, և մի բուրգօմիստրից ու 4 էջրվէններից մեծ համայնքներում (20,000-ից աւելի բնակիչ ունեցող):

էջրվէններին ընտրում է համայնքի իսկական խորհուրդն իր անդամներից, իսկ բուրգօմիստրին նշանկում է թագաւորը խորհրդի անդամներից, կամ, համաձայնութեան զայլով մշտական պատգաւաւորութեան հետ, դրսի մարդկանցից: Վերջին դէպքում բուրգօմիստրը, լինելով նախագահ համայնական խորհրդի, ունենում է լոկ խորհրդակցական և ոչ վճռական ձայն: Իսկ էջրվէնների խմբակում նա միշտ նախագահ է և վճռական ձայն ունի:

էջրվէնների խմբակի պարտականութիւններն են՝ գործադրել տալ օրէնքները և ընդհանուր վարչական կարգադրութիւնները. գործադրել գաւառական խորհրդի և մշտական պատգաւաւորութեան կարգադրութիւնները, եթէ իրան յանձնեն դրանք. յայտարարել և գործադրել համայնական խորհրդի որոշումները, հսկել և կառավարել համայնքից ոտձիկ ստացողներին, բացի ոստիկանական պաշտօնեաններից, որոնք ենթարկւում են միայն բուրգօմիստրին. նրանք պէտք է հսկեն անկեղծանոցների, բարեգործական բիւրօների, լօմբարդների ու խնայողական գանձարանների վրայ, և այլն, և այլն:

Թագաւորը կարող է պաշտօնից հեռացնել բուրգօմիստրին և էջրվէններին վատ վարքի և անփութութեան համար: Նահանգապետն էլ կարող է հեռացնել միայն էջրվէններին, եթէ նախօրօք համաձայնութիւն կայացնէ մշտական պատգաւաւորութեան հետ:

Թէ բուրգօմիստրը և թէ էջրվէններն ստանում են ոտձիկ, որի քանակը կախած է մշտական պատգաւաւորութեան որոշումից:

Մենք արագ աչքէ անցրինք Ֆրանսիական, ռուսական, անգլիական և բելգիական ինքնավարական հաստատութիւնները: Մենք տեսանք, որ տեղական ինքնավարութիւնն Անգլիայում իսկապէս ինքնավարութիւն է. ամեն ինչ համայնքն ու կոմսութիւնն են

կատարում: Կենտրոնական իշխանութիւնն առնում է իր ձեռքը միայն ու միայն ընդհանուր օրէնսդրութիւնը և համապետական հարցերը, իսկ այդ սահմանների մէջ կոմսութիւնների և համայնքհարցերը, իսկ այդ սահմանների մէջ կոմսութիւններին և համայնքներին խորհուրդներին տալիս է լիակատար ազատութիւն: Տեղական հարցերում դուք երբէք, երբէք չէք տեսնում կենտրոնի ազդեցութիւնը:

Փրանսիայում և Ռուսաստանում, ընդհակառակը, ամեն ինչ առնում է կենտրոնն իր բիւրօկրատներով, իսկ տեղական ինքնավարական օրգանների գոյութիւնը դեռ ևս ձևական է թւում, լոկ խորհրդակցական, մի տեսակ ակամայ գիշում ներքեից եկող ճրջխման, ժողովրդական պահանջի, որը կծու և մասամբ կարմիր գոյն դեռ չէ ստացել:

Բելգիայում ինքնավարութիւնը մի տեսակ խառնուրդ է երկու ծայրերի: Այդ տեղ, ինչպէս և Պրուսիայում, տեղական ինքնավարութեան և կենտրոնական իշխանութեան օրգանները միախառնուում, մի տեսակ ամբողջութիւն են կազմում, ի հարկէ խառնուում, մի տեսակ ամբողջութիւն են կազմում, միախառնուում, մի տեսակ ամբողջութեան զարգացմանը, տեղական բոլոր շահերին և ծառայելով կարողաւոր գասակարգի նպատակներին:

Ինչ կասկած, որ դրանից ամենակատարելալը, աշխատաւոր ժողովրդի հսկայական մեծամասնութեան շահերին համեմատաբար ամենաձեռնտուն անգլիական սխառէմն է—վարչական լայն ապակենտրոնացման սխառէմը, եթէ դէն շարունակ եղած ընտրական ցէնզը:

Անգլիացին գոհ է իր self-government-ից: Սակայն այնտեղ էլ կայ մի ամբողջ ժողովուրդ, որ դժգոհ է նոյն իսկ այդ «լաւագոյն» կարգերից, այդ ազատութեան երկրի, պարլամենտարիզմի, ազատութիւնների մեծ շարտի, հարէաս-կօրպուսի և հիանալի տեղական ինքնավարութեան որբանի կարգերից:

Եւ այդ դժգոհ ժողովուրդը մի ամբողջ ազգ է—իրլանդացին:

Այն, նա ունի համարեաւ բոլոր անգլիական ազատ հաստատութիւնները, նա վայելում է այդ ամենը, բայց կրկին դժգոհ է, կրկին բողբող: Եւ բողբում է, ոչ թէ իրլանդացի բուրժուան կամ կղերը, այլ և՛ դրանք, և՛ աշխատաւոր ամբողջ մասսան՝ պրօլէտարիատն ու աշխատաւոր դիւղացիութիւնը, մի խօսքով—բոլոր իրլանդացիները, ամբողջ ազգը:

Ի՞նչ է ուզում նա, ինչ՞ով է բողոքում:

Նա ուզում է ազգային ու երկրային աւտոնոմիա. Իսկ այդ ձգտումն արհամարհել, ազգութեան ամբողջութեան բէէլ շահերը և նրանց հրամայական գոյութիւնը չը տեսնել կարող են, Բ. Շպրինգէրի ասածի նման, միայն կամաւոր կոյրերը:

Մարդկային պատմութիւնը հիւսւած չէ միայն դասակարգերի կռից: Նա կայ, զօրեղ է, — անպայման: Պատրիկներ և պէբէյներ, արիստոկրատիա և դէմօս, ազնւականութիւն և երրորդ դասակարգ, բուրժուազիա և աշխատաւոր չորրորդ դասակարգ — սրանք բէէլ քանակութիւններ են, մեծ ու հզօր: Դրանց կռիւք բռնում է հակայական տեղ մարդկութեան պատմութեան մէջ:

Բայց միայն դա չէ մարդկային պատմութիւնը: Կայ և ազգերի կռիւ: Դրանցէք հայի 2000 ամեայ պատմութիւնը, նայեցէք 2000 ասրւայ ստրուկ հրէութեանը... Դրանք գալարել են և դեռ գալարում են անլուր բռնակալութիւնների տակ, որովհետև չեն ուզում ձուլւել, կորչել աշխարհից իբր հայ և իբր հրէա:

Դարեր լլկեցին բուլգարն, ու յոյնը, բայց ազատեցին, իրանց ազգային գոյութիւնը վերստեղծեցին:

Ազգերի կռիւ և դասակարգերի կռիւ, — անա մարդկային պատմութեան նիւթը:

19-րդ դարը իրաւամբ կոչւել է մանր ազգերի վերածնութեան դար, իսկ 20-րդը երևի կը կոչւի մանր ազգերի աւտոնոմիայի և նրանց եղբայրական դաշնակցութեան դար, խոշոր պետութիւնների քայքայման և համամարդկային դաշնակցութեան դար:

Դիմենք նախ աւտոնոմիայի և ապա Ֆէդէրացիայի գաղափարներին:

Գ Լ Ո Ի Խ Գ.

Ա Ի Տ Օ Ն Օ Մ Ի Ա

Պետութեան և նրա բաղադրիչ մասերի տարբերութիւնները: — Աւտոնոմ շրջանները: — Աւտոնոմիայի էութիւնը: — Նրա տարբերութիւնը տեղական ինքնավարութիւնից և ֆէդէրացիայից: — Աւտոնոմիայի հիմքերը: — Աւտոնոմիայի տեսակները: — Աւտոնոմիան անգլիական դադութիւններում, Աւստրիայում և Ելզաս-Լոտարինգիայում:

Նորագոյն ժամանակների պետութիւնների հիմքը բռնութիւնը կամ բռնի գրաւումն է: Միջին դարերի աւտոնոմիայի ծայրայեղ ապակետրոնացման գրկում ծնունդ առան Ազգային կենտրոնաւարտութիւնները: — Ֆրանսիա, Պրուսիա, Անգլիա, Իսպանիա և ցած Պետութիւնները: — Ֆրանսիա, Պրուսիա, Անգլիա, Իսպանիա և այլն: Որոշ բնա-տնտեսական պատճառներ ստիպեցին ժողովրդներին համախմբւել և ստեղծել պետական խոշոր օրգանիզմներ: Մեր նպատակից դուրս է ուսումնասիրել այն տնտեսական, բնական ու էտնօգրաֆիական պատճառները, որոնք յառաջացրել են կայուն և էտնօգրաֆիական պատճառները, որոնք յառաջացրել են ազգային խոշոր պետութիւնները: Այսքանն տեսնք միայն, որ նրանց զարգացման ու ծաւալման գործում հակայական դեր է կատարել բռնութիւնը, տիրապետութիւնը կամ մի ազգի միւսին տիրելը:

Այսօր չը կայ ոչ մի խոշոր պետութիւն, որ բաղկացած լինի մի էտնօգրաֆիական ազգից, մի միապալազ ժողովրդից, դեռ չը հաշւելով այն հանրածանօթ երևոյթը, որ ներկայումս ոչ մի ազգ չէ մնացել անխառն, զուտ արիւն, մի և նոյն ծագումից: Սակայն, չէ մնացել անխառն, զուտ արիւն, մի և նոյն ծագումից և հետեւալ անխնչ էլ որ լինի, ներկայ պետութիւնն ունենալու է հետեւալ անհրաժեշտ էլէմէնտները. մի անբաժան տէրրիտօրիա, «imperium» (հրաժան ժողովուրդ և պետական մի իշխանութիւն, «imperium» (հրաժան ժողովուրդ և պետական մի իշխանութիւն) ունեցող, բացարձակ ինքնիշխան իր ներքում (եւ լինէլ):

Սակայն պետութեան այդ մտացածին ձևը գոյութիւն ունի լոկ իբր գաղափար, իբր իրաւաբանական մի ձեւակերպութիւն: Կեանքի մէջ նա երբէք գոյութիւն չէ ունեցել ոչ հին դարերի խոշոր բռնապետութիւններում, ոչ նոյն իսկ յունական քաղաք-պետութիւններում: Միջին դարերի մասին խօսելն անգամ աւելորդ է, որովհետև այդ շրջանում տիրում էր ծայրայեղ բաժանականութիւնը կամ պարտիկուլարիզմը: Այդ պետական դարրոցական իրէպլին անհամեմատ աւելի մօտենում են նորագոյն շրջանների ազգա-

ին պետութիւնները, որոնք յաճախ ունենում են մի ժողովուրդ և երկրի ներսում էլ հաղորդակցութեան կատարելագործած միջոցներ՝ այդ ժողովրդին կենսականացման սխառէմով կառավարելու համար:

Ինչպէս արդէն նախընթաց գլուխներում ասել ենք, ժամանակակից պետութիւններն մէջ էլ—նոյն իսկ այնպիսի կենտրոնացած երկրներում՝ ինչպէս Թիւրքիա, Ռուսաստան, Ֆրանսիա, իսկական վարչական ամբողջութիւն, ժողովրդի իսկական միապաղպղութիւն գոյութիւն չունի: Փաստացի կերպով կեանքն ստեղծում և գործադրում է թէ վարչական, թէ օրէնսդրական և թէ դատական ապակենտրոնացում, թէև երկրի օրէնքների երկար շարքերը դրա դէմ են: Խիստ տրամաբանօրէն քննելով, կը տեսնենք, որ ռուսական ամեն մի նահանգապետ, ֆրանսիական մի պրէֆէ կամ օսմանեան մի վայրի կրդւմ են իրանց մէջ և ամենայն օր գործադրում յիշած երեք տեսակի ֆունկցիաները, ի հարկէ աննկատելի, սաղմային չափերով:

Բացի այդ, ամեն երկրում մենք տեսնում ենք առևտրական, երկրագործական, զինւորական և այլ տեսակի առանձին օրէնքներ, վարչութիւններ, դատարաններ, որոնց կողքին բազմաթիւ զօրեղ ժողովրդական խմբակներ, մանր ու խոշոր ընկերութիւններ, ազգային համալսարաններ և այլն, և այլն՝ իրանց կարգին հանդիսանում են իրր ապակենտրոնական կամ կենտրոնախոյս ուժեր:

Սակայն այդ ամենից զատ, մենք տեսնում ենք և մի այլ երևոյթ: Ժամանակակից պետութիւններն իրանց մէջ անփոփում են այնպիսի մասեր, որոնք ունեն պետութեանը յատուկ ֆունկցիաներ, բայց անկախ պետութիւններ չեն: Այսպէս՝ անգլիական գաղութները—կանադա, Աւստրալիա, Կապի երկիր, Բօքսերի երկիր, և այլն,—ունեն սեփական սահմանադրութիւններ, սեփական պարլամէնտներ, մինիստրական կարիէտներ, սեփական դատարաններ, զօրք, զինւորական նաւատորմ,—այսինքն՝ պետութեանը յատուկ բոլոր ֆունկցիաները. բայց նրանք անկախ պետութիւններ չեն, որովհետև ինքնագոյ և ներքուստ ինքնիշխան չեն.—անգլիական պարլամէնտն է տւել նրանց այդ ամենը յատուկ «բիլլերով» կամ օրէնքներով, և երբ կամենայ, կենթարկէ նրանց ներքին բոլոր կարգերը, նրանց սահմանադրութիւններն իր ուզած փոփոխութիւններին: 1861 թւի փետրվար 14/26-ին Աւստ-

րիան, ստիպւած եղաւ (քայքայման երկիւղից) իր դանազան նահանգներին ու շրջաններին տալ յատուկ լանդտագներ (տեղական պարլամէնտներ), յատուկ սահմանադրութիւններ, և այլն: Ելլաան ու Լօտարինգիան, Ֆինլանդիան, Լիբանանը և այլն, նոյնպէս ունեն իրանց առանձին ներքին կազմը, տարբեր այն պետութեան կազմից, որի մասն են նրանք:

Իրանք ոչ տեղական ինքնավարութեան մարմիններ են (տես գլուխ Գ-ը), ոչ էլ առանձին պետութիւններ:

«Օրէնսդրութեան պրօցէսսը, ասում է Ելլինէկ, պետական պրօցէսս է. նրանում մասնակցող բոլոր օրգանները պետական օրգաններ են» (երես 437): Այդ տեսակէտով, ի հարկէ, տեղական օրէնսդիր օրգանները հաւասարագոր են պետական օրգաններին միայն իրանց տեղի համար և կազմում են «պետական սաղմային կազմի» մասերը: Միայն դրանց դրած օրէնքները համապետական օրէնքներից տարբերում են նրանով, որ «մասնակի պետական օրէնքները սրբադործւում կամ սանկցիա են ստանում պետական օրէնքները սրբադործւում կամ նրա յանձնարարութիւնով իշխանութիւնից. նա է կազմում կամ նրա յանձնարարութիւնով իշխանութիւններն են կազմում ամեն մի շրջանի համար յատուկ հիմնարուրիչներն են կազմում ամեն մի շրջանների օրգանների կոլթիւնները» (Ելլ. երես. 438): Այդպիսի շրջանների օրգանների ընտրողը զիծն այն է, որ նրանք չեն կարող բացարձակ անկախ լինել ու մենակ գործել, այլ միշտ միատեղ են լինում համապետական օրգանների կամ նրանց որևէ ներկայացուցչի հետ, նրանց մշտական վերահսկողութեան տակ:

Ահա այդպիսի սեփական օրգաններ ունեցող շրջաններն են, որ կոչւում են աւտօնօմ շրջաններ, իսկ նրանց ունեցած այդ տեղական կառավարական (վարչական, օրէնսդրական և դատական) սխառէմն է, որ կոչւում է աւտօնօմիա:

Նախ ընտրողները նրա էութիւնը, դժեք նրա սահմանները, ինչպէս Լազարևսկին է ասում, թէ ներքեից—այսինքն՝ տեղական ինքնավարութիւնից, և թէ վերեից—Ֆէդէրացիայից:

Ինչպէս նախընթաց գլխում տեսանք, տեղական ինքնավարութիւնը, չընայելով բոլոր նրբութիւններին, չընայելով իր «պարտադիր կարգադրութիւններին», իր մէջ պարունակող օրէնսդրական սաղմային իրաւունքներին,—ընդհանուր առմամբ հանդիսանում է իրր մի վարչական կանտօնի, վարչական ապակենտրոնացում է իրր մի աւտօնօմիան, ընդհակառակը, հանդիսանում է իրր մի

օրէնսդրական կատէգորիա, օրէնսդրական ապակենտրոնացման արտայայտութիւն:

Ճշմարիտ է, սովորական խօսակցութեան մէջ յաճախ, մանաւանդ ֆրանսերէն լեզուով, ասում են, «վարչական ակտոնովիա և գրանով ուզում են հասկանալ զուտ տեղական ինքնավարութիւնը կամ selfgovernment-ը, իսկ օրէնսդրական իմաստ տալու համար, գործ են ածում քաղաքական ակտոնովիա բառերը, — սակայն դա լոկ գործածական ընթացիկ լեզուի և ոչ-մասնագիտական գրականութեան մէջ է այդպէս: «Ակտոնովիա» բառի ծագումն անգամ դէմ է այդպիսի շփոթման, անճշտութիւններին: Նա առաջ է եկել յունարէն ալտոս (ինքը) և նոնոս (օրէնք) բառերից և բառացի նշանակում է ինքնօրէնսդրութիւն:

Առաջին անգամ այդ բառը գործ է ածել Հոսմէական սէնատի կարգադրութիւններում 196 թւին Քրիստոսից առաջ, երբ նա հաստատել է Տիտոս Կելնկիցիոս Փլամինիոս կոնսուլի յոյների տւած խոստումը: Իսկ այդ կոնսուլը Պարսոնցի կամ Իսթմի համայնական խաղերի ժամանակ հանդիսաւոր կերպով խոստացել էր յոյներին տալ ազատութիւն վարելու իրանց բոլոր ներքին գործերը, դնելու իրանց օրէնքները, սահմանելու իրանց դատարանները, միայն հպատակելու Հոսմի ծերակոյտին ներքին ամենակարևոր հարցերում և ամբողջ արտաքին քաղաքականութեան մէջ:

Այժմ ակտոնով է կոչում որևէ պետութեան այն գաւառը, նահանգը կամ շրջանը, որ ունի թէ վարչական և թէ օրէնսդրական իրաւասութիւն, միայն պետական ընդհանուր օրէնքի որոշած սահմաններում: Վարչական ապակենտրոնացումը խլում է կենտրոնական վարչական մարմնից իրաւունքի մի մասը և տալիս է տեղական մարմիններին. ակտոնովիայի դէպքում, բացի այդ, խլում է նաև կենտրոնական օրէնսդիր մարմնի իրաւասութեան մի մասը և տրւում է տեղական մարմիններին:

Օրէնքը, համապետական օրէնսդիր մարմինը զծում է որոշ սահմաններ որևէ շրջանի կամ գաւառի համար և տալիս: Այդ սահմանների մէջ տեղական ակտոնով օրգանները կարող են հրատարակել օրէնքներ, նոյն իսկ բոլորովին տարբեր պետութեան միւս մասերի նոյնանման օրէնքներից: Համապետական օրէնքը նախորդում է ակտոնով շրջանի սահմանադրութիւնը, նրա պարլամէնտի և միւս գլխաւոր օրգանների իրաւասութեան չլափը. նա

նոյն իսկ կանխորոշում է, թէ ինչ օրէնսդրական իրաւունքներ պահում է իր—կենտրոնական իշխանութեան ձեռքը, և ինչ իրաւունքներ, կենսական ո՞ր հարցերի վերաբերմամբ օրէնքներ սահմանելու իրաւասութիւնը տալիս է տեղական օրէնսդիր օրգաններին:

Երկրի իսկական տէրը, վերջական հրամայողը կրկին կենտրոնական իշխանութիւնն է, միայն նա որոշ «օրէնքներով յանրօնական իշխանութիւնն է, միայն նա ակտոնով գաւառներին, ձնում է այս կամ այն լիազօրութիւնն ակտոնով գաւառներին, ձնում է այս կամ այն լիազօրութեան սահմաններում: «Դա պարզ նոյն իսկ ստացած լիազօրութեան սահմաններում: «Դա պարզ արտայայտում է նրանով, որ, առաջին՝ ամեն մի լիազօրութիւն, արտապատում է կենտրոնական իշխանութիւնն իրատրւած ակտոնով գաւառին, կենտրոնական իշխանութիւնն իրաւունք ունի յետ խիլու. երկրորդ՝ որ ակտոնով գաւառն իրականացնում է ոչ թէ իր, այլ ուրիշի (կենտր. իշխանութեան) իրաւունքները, որոնք նրան տրւած են միայն իրականացման համար և որոնց վրայ միշտ հսկում է կենտրոնական իշխանութիւնը: Ակտոնովիան չունի ոչ մի այնպիսի լիազօրութիւն, որը ենթակայ չը լինի կենտրոնի կոնտրոլին» *):

Ակտոնով մարմնի օրէնսդիր օրգանը չունի անկախ պետութեան համանիշ օրգանի անսահման լիազօրութիւնը. նա սահմանափակում է որոշ, նախորդած շրջանակով: Նրա դրած օրէնքները չեն կարող դէմ լինել կենտրոնական իշխանութեան կողմից այդ շրջանի համար տրւած օրէնքներին, նրանց ողուն: Բացի այդ, թէ կենտրոնական իշխանութիւնը դրեց մի համապետական օրէնք, կամ մի նոր օրէնք յատկապէս ակտոնով շրջանի համար, նա եւ պարտադիր է այդ շրջանի համար:

Ակտոնով շրջանի օրէնսդիր օրգանի սահմանները, ինչ ասել կուզէ, պարտադիր չեն իր շրջանի սահմաններից դուրս, կամ ակտոնով միւս գաւառներին կամ շրջանների համար: Վերջապետութեան միւս գաւառներին կամ շրջաններին, որպէս զի վերջնապէս՝ ակտոնով շրջանի սահմանած օրէնքները, որպէս զի վերջնական կանապէս օրէնքի ոյժ ստանան, պէտք է տրւեն կենտրոնական իշխանութեան կամ նրա ներկայացուցչի ստորագրութեանը, նրա հաւանութեանը կամ հաստատմանը:

*) Лазаревский — «Автономія» («Право» շաբաթաթերթի 1906 թւի № 2-ում):

Այժմ արդէն մեզ համար խիստ դիւրին է որոշել աւտոնոմիայի և տեղական ինքնավարութեան, աւտոնոմիայի և Ֆէդէրացիայի տարբերութիւնները:

Տեղական ինքնավարութիւնը, ինչպէս վերևում էլ ասացինք, վարչական կատէգորիա է, վարչական տպակենտրոնացում: Որքան էլ որ նա իր մէջ կրէ օրէնսդրութեան սաղմեր (պարտադիր կադադրութիւններ հրատարակելը), այնուամենայնիւ նրա էութիւնը վարչական բաժինն է և ոչ օրէնսդրականը:

«Տեղական ինքնավարութեան օրգանների ամբողջ գործունէութիւնը կատարւում է ընդհանուր օրէնքի սահմաններում: Իսկ աւտոնոմ օրգանները, օրէնքի ցոյց տւած այս կամ այն հարցերի վերաբերմամբ, կարող են հրատարակել կարգադրութիւններ, որոնք կը սահմանեն տարբեր կանոններ, քան ընդհանուր օրէնքների սահմանածները» *):

Այս բնորոշումը, համեմատելով ու լրացնելով մեր վերևում ասածների հետ, այնքան արդէն պարզարանում է աւտոնոմիայի և ինքնավարութեան տարբերութիւնը, որ այլ ևս կանգ առնել այդ հարցի վրայ չարժէ:

Անցնենք աւտոնոմիայի և Ֆէդէրացիայի տարբերութեանը:

Դաշնակցական կամ Ֆէդէրատիվ պետութիւնը կազմւած է լինում մի քանի մասերից, որոնք ներկայացնում են անկախ պետութեան բոլոր բնորոշ գծերը: Միայն մի շարք հարցեր—մարտեր, արտաքին քաղաքականութիւն, բանակ, նաւատորմ, պօստ-հեռագրատուն և այլն,—համաձայն դաշնակցական ընդհանուր սահմանադրութեան նախորոշման, խլում են այդ պետական միութիւնների ձեռքից և յանձնւում են դաշնակցական իշխանութեան ձեռքը: Այդպիսի պետական միութիւններ են Շվեյցարիայում կանտոնները, Միացեալ-Նահանգներում—նահանգները կամ շտատները, Գերմանիայում—պետութիւնները և իշխանութիւնները:

Այդ դաշնակից միութիւնները լիակատար սեփականատէր են իրանց երկրում. նրանք վերջնական վճիռ կայացնողներ են և դերիշխան երկրի ներսում—այն բոլոր հարցերում, որոնք չեն յիշուած դաշնակցական սահմանադրութեան մէջ: Այդ տեղ արդէն

*) Այդ բնորոշումը Лазаревский փոխ է առել Laband-ից «Staatsrecht des deutschen Reiches»—հատ. 1, էրես 97.

նրանց վրայ ոչ հսկող կայ, ոչ էլ «veto»-ի իրաւունք ունեցող որ և է այլ իշխանութիւն:

Այն ինչ աւտոնոմ շրջանում, ինչպէս արդէն ասացինք, չը կայ ոչ մի օրէնք, ոչ մի վճիռ, որ ազատ լինի կենտրոնական իշխանութեան կօտորոյից, նրա վերահսկողութիւնից: Չը կայ կենտրոնական ոչ մի երևոյթ, որի մէջ կենտրոնական օրէնսդիր մարմինը չը կարողանայ երբէք միջամտել:

Դաշնակից կանտոնները, նահանգները կամ պետութիւնները տէր են իրանց սեփական կամ ներքին բոլոր կարգերի, նըրանք իրանք են որոշում իրանց սահմանադրութիւնը, ներքին զատավարութիւնը, վարչական ձևը և այլն: Նրանք կարող են դատավարութիւնը, վարչական ձևը և այլն: Նրանք կարող են անկախօրէն, առանց որ և է մէկից թոյլտուութիւն հայցելու, փոխել իրանց վարչութեան ձևերը, կատավարական սիստէմը, օրէնքի սահմանելու եղանակը և այլն: Մի խօսքով, նրանք անարգել կարող են կոչել սահմանադիր ժողով իրենց համար: Կանտոնի, շտատի կամ պետութեան կազմութիւնը որոշելը մտնում է նըրանց իրաւասութեան սահմանի մէջ: Այն ինչ աւտոնոմ շրջանի ընդ իրաւասութեան սահմանի մէջ: Այն ինչ հարցում. «Աւտոնոմիայի իրաւասութիւնը հիմնականապէս տարբեր է այդ հարցում. «Աւտոնոմիայի իրաւասութեան սահմանը, նրա օրգանների լիազօրութեան սահմանները, նրանց իրաւասութեան տակ եղած առարկաները կամ մասնները, նրանց իրաւասութեան տակ եղած սեփական օրէնսհարցերը—այդ բոլորը որոշում է ոչ թէ նրա սեփական օրէնսդրութիւնը, այլ կենտրոնական իշխանութեան 6 նահանգները, Անգլիական գաղութները (Աւտարիայի 6 նահանգները, որ վայելում են Նոր-Չէլանդիան, Կանադան և Կապի երկիրը), որ անկախ պարլամենտային աւտոնոմիա—իրանց ներքին կազմակերպութեան ըստ իրանց սահմանների, այլ անգլիական պարլամենտը իր գաղութային բիլլով կամ գաղութային օրէնքով, հրամարակած 1865 թւին. պարլամենտը երբ ցանկայ, կարող է ոչնչացնել, ամբողջովին կամ մասնակի փոփոխութիւնների ենթարկել այդ օրէնքը **):

Նոյնը կարելի է ասել նաև Էլզաս-Լոտարինգիայի բաւական

*) Лазаревский—„Автономія“:

***) Дайси—„Основы государственного права Англии“ էրես 119—123, 1905 թւի հրատարակութիւնը, թարգմ. Պօլտորայկու: —Еллинекъ—էրես 325:

լայն աւտոնոմիայի մասին: Կայսրը, կայսրութեան Դաշնակցական Պորհուրդը (Պետութիւնների Պորհուրդ) և Բայխստազը կարող են փոխել նրա կազմը, նրան աւած սահմանադրութիւնը և այլն: Օրէնքների հրատարակումն էլ այդտեղ կախած է ոչ թէ լոկ երկրի Landesausschuss-ից (ընտրւած մարմինը), այլ և համապետական Դաշնակցական Պորհուրդից և կայսրից *):

Ահա աւտոնոմիայի և Ֆէդերացիայի էական ու գլխաւոր տարբերութիւնները: Հետեւեալ գլխում, երբ մենք արդէն կը խօսենք յատկապէս Ֆէդերացիայի մասին, աւելի կը պարզաբանեն այդ տարբերութիւններն ու նմանութիւնները:

Այժմ մեզ համար պարզ է, որ աւտոնոմիա կոչում են պետական ներքին ինքնավարական այն սիստէմը, որի ժամանակ տեղական օրգաններին տրուած է այս կամ այն չափի, լայն կամ նեղ սահմանափակումներով իրաւասութիւն թէ վարչական և թէ օրէնսդրական գործերում, «բայց այդ բոլոր լիազօրութիւնները տրուած են տեղական օրգաններին իրականացնելու այն պայմանով, որ այդ բոլոր լիազօրութիւնների կարգադրիչն ու տէրն իրաւաբանօրէն մնում է կենտրոնական կառավարութիւնը. **):»

Ինականաբար՝ աշխարհում գոյութիւն ունեցող բոլոր աւտոնոմ շրջանների իրաւասութիւններն իրար նման ու հաւասար չեն: Վերևում տրւած որոշման սահմաններում կարող են իրականանալ բազմաթիւ աւտոնոմ օրգաններ՝ իրարից տարբեր իրաւասութիւններով ու արժէքներով: Այդ աստիճանաւորումը կամ իրաւասութիւնների այդ տարբերութիւնները կախած են երկրում գոյութիւն ունեցող բէէլ ուժերի փոխադարձ համեմատութիւնից, նրանց ուժերի քանակից և իրար վերաբերութեամբ բռնած դիրքից:

Մի Լիբանան, որքան էլ անառիկ դիրք ունենայ, չէ կարող վայելել այնպիսի աւտոնոմ իրաւունքներ, որպիսին վայելում է Բօզզարիան, որովհետև առաջինը հազիւ 450,000 ազգաբնակչութիւն ունի, իսկ երկրորդը մօտ 5 միլիոն, ընդունակ նոյն իսկ դիմադրելու Օսմանեան Կայսրութեանը զէնքի ուժով: Արդեօք Պէվէյեան բէժիւմը կարող էր ոտնահարել ու տրորել աւտոնոմ Ֆինլանդիայի լայն իրաւունքները, եթէ այդ երկիրն ունենար ոչ

*) Еллинекъ—„Право Совр. Госуд“. Երես 437 և 325.

**) Лазаревскій—„Автономія“ глава 1.

թէ 3, այլ օրինակ՝ 30 միլիոն ընակիչ: Արդեօք անդլիական դադութները—Աւտորալիան, Կանադան, Կէպտոնէնը կունենային այնպիսի լայն ինքնավարական, աւտոնոմ իրաւունքներ, որպիսին այժմ ունեն, եթէ լինէին Միացեալ-Թագաւորութեան կղզիներին դրացի, նրանց կպած. չէին լինի արեօք նրանք այժմ Իրանդիայի կամ Շօտլանդիայի վիճակում...:

Բայց ինչքան էլ որ աւտոնոմիական իրաւասութիւններն իրարից տարբեր են զանազան երկրներում, այնուամենայնիւ ներքին տարբեր են զանազան հնարաւոր է ենթադրել: Նրանք այնքան բազմազան չեն, որքան հնարաւոր է ենթադրել: Նրանց մէջ անպայման կան ընդհանուր դժեր, թէև տեղական ներքին սահմանները կարող են լինել լայն կամ նեղ: Այսպէս՝ ոչ մի ներքին սահմանները կարելի է չունի արտաքին քաւտոնոմ շրջան, կամ նահանգ, կամ երկիր չունի արտաքին քաւտոնոմ շրջան, կամ նահանգ, կամ երկիր իրաւունք: Առհասարակ՝ կան մի քանի համապետական հարցեր, որոնք յատուկ են ոչ թէ այս կամ այն համապետական հարցեր, որոնք յատուկ են ոչ թէ այս կամ այն համապետական հարցեր, որոնք յատուկ են մաքսերը, պօստը, ամբողջ պետութեանը: Այդպիսի գործերն են մաքսերը, պօստը, հեռագիրը, երկաթուղիները, արտաքին քաղաքականութիւնը, յաճախ բանակը, նաւատօրմը և այլն: Այդ հարցերն առհասարակ յուրս են հանւում աւտոնոմ մարմինների իրաւասութիւնից և տրուած են ընդհանուր պետութեան կենտրոնական իշխանութեանը:

Սակայն այս հարցում էլ ամենեւին անխախտ օրէնք չը կայ: Սակայն այս հարցում էլ արտաքին ու ներքին հանգամանքամենայն ինչ կրկին կախած է արտաքին ու ներքին հանգամանքներից: Այսպէս՝ անգլիական դադութներն ունեն իրանց սեփական զօրքերը, սեփական զինւորական նաւատօրմերը և այլն, որովհետև մայր-երկրից կամ մէտրօպօլից չափազանց հեռու են: Իսկ պետայր-երկրից կամ մէտրօպօլից չափազանց հեռու աւտոնոմ շրջաններում իրարից տարբեր լինելու պատճառով իրաւասութիւններն ունեն, ընդ անպայման աւելի սահմանափակ իրաւասութիւնն է, որ քան հեռու ընկածները: Արտաքին քաղաքականութեանը, անխախտ կերպով վերադառնալով է կենտրոնական իշխանութեանը, եթէ ոչ մնացած բոլոր հարցերը, լայն կամ նեղ սահմաններով, կարող են տրուել աւտոնոմ շրջանների տնօրինութեանը:

Հ ի մ բ ե ր : Ժամանակակից խոշոր պետութիւնների կազմութեան գործում, ինչպէս մի անգամ էլ տասնինը, բունի գրաւումները և բունի միացումները շատ խոշոր դեր են կատարել:

սկսեց ազատութիւն տալ իր բոլոր գաղութներին, շնորհել նրանց թէ տեղական լայն ինքնավարութիւն, թէ աւտոնոմիա:

Իսկ զբա հակառակ, այն պետութիւնը, որի վրայ արևը երբէք մայր չէր մտնում,—յետամնաց ու կղերական Իսպանիան, իր բռնութեան քաղաքականութիւնով, իր տնտեսական ձեւերի յետամնացութիւնով,—աստիճանաբար կորցրեց իր բոլոր գաղութները, զրկեց ամեն ինչից և ընկաւ երկրորդական ու երրորդական պետութիւնների շարքը:

Անկարելի է «մի միաձուլ և անբաժան ամբողջութիւն կազմել ժողովրդական այն մասսաներից, որոնք իրարից դատած են ազգային, պատմական, սօցիալական և այլ տարբերութիւններով» *):

Մի քանի անգամ արդէն յիշել ենք, որ ներկայումս անհնար է գտնել մի միապաղաղ, միաձուլ ժողովուրդ պարունակող պետութիւն: Բոլոր պետութիւնների ժողովուրդները քիչ կամ շատ չափով բազմատարր կամ հէթէրօթէն են: Այդ բազմազան տարբերը միաւորել, համախմբել մի օրէնքի, մի վարչութեան և մի միատեսակ դատավարութեան տակ՝ անհնար է: Հին դարերում այդպէս չէ եղել, միջին դարերում նոյնպէս, նոր և նորագոյն դարերի բազմաթիւ փորձերը դալիս են ապացուցանելու, որ այժմ էլ անհնար է այդ բազմազան, հէթէրօթէն տարրերից ստեղծել մի տարր կամ մի հօմօթէն պետութիւն:

Պետութիւնների տարածութիւնը, ժողովրդի զարգացման աստիճանների տարբերութիւնը, պատմական բազմազան պատճառները, ազգային տարբերութիւնները, նոյն իսկ կրօնը, հանդիսանում են պետութեան ներսում իրր կենտրոնախոյս ուժեր, ապակենտրոնացման աղբիւրներ:

Այն, գոյութիւն ունի տեղական լայն ինքնավարութիւն: Ուրեմն՝ թող դա ծառայէ իրր դեղ ու դարման կենտրոնախոյս այդ արդար պահանջների դէմ: Բայց պատմական բազմաթիւ փորձերը ցոյց են տւել, որ լոկ վարչական ապակենտրոնացումը չէ օգնում, նա բաւարարութիւն չէ տալիս այն խոր պահանջներին, որոնք առաջանում են տնտեսական, ազգային, պատմական ու սօցիալական զանազանակերպ շահերից ու պայմաններից: Անցեալ գլուխը մենք վերջացրինք նրանով, որ Իբրանդիան ունի անգլիական

*) Еллинекъ—„Право совр. гос.“ կրես 441.

ամենակատարեալ տեղական ինքնավարութիւնը, բայց էլի դժգոհ է:

Ներկայ տնտեսական կեանքի զարգացումը մի կողմից արտայայտում է յղկող, հաւասարեցնող, միացնող բնոյթ, որովհետեւ բոլոր ազգերին, ժողովրդներին ու երկրներին կապում, շողկապում է իրար հետ ամենասերտ յարաբերութիւններով: Բացի այդ՝ բոլոր ժողովրդներին շերտաւորում, բաժանում է մի քանի խաբուրտ—մի քանի դասակարգերի և դրանով, կարծես, սկսում է հարթել պատմութեան դարերը ժառանգութիւնը՝ ազգային տարբերութիւնները: Սակայն դա հարցի միայն մի երեսն է: Տնտեսական կեանքը որքան որ միաձուլող է, այնքան էլ բաժանող է, որքան կենտրոնացնող է, այնքան էլ ապակենտրոնացնող: Ներկայ պետութիւնների շրջանները, որ յաճախ ընկած են լինում իրարից անազխ հեռաւորութեան վրայ, երբեմն էլ ինչպէս կովկասում, մօտ իրարից, բայց բոլորովին տարբեր կերպարանական ու գէօգնօս իրական յատկութիւններով,—պարունակում են իրարից տարբեր սիւսկան, տարբեր կուլտուրա, տարբեր պատմական տրադիցիածազում, տարբեր կուլտուրա, տարբեր պատմական տրադիցիաներ ունեցող ցեղեր, ժողովրդներ ու ազգեր, և, բացի այդ ամենը, այդ շրջաններն ստեղծում են իրարից միանդամայն տարբեր տնտեսական ստրուկտուրա, տարբեր ձեռնարկութիւններ ու արտադրութեան տարբեր ձևեր. մէկում տիրում է գիւղատնտեսութիւնն իր ճիւղերով, միւսում հանքագործութիւնը, երրորդում ինդուստրիան... Մէկում մանր հողատիրութիւնն ու տնայնագործութիւնն են կազմում տիրող տնտեսական ձևը, միւսում կապիտալիստական միջակ կամ խոշոր արտադրական ձևերը և այլն, և այլն: Անկասկած՝ Մարքսի և էնգէլսի ակնարկած տնտեսական

կենտրոնացումը և նրա յղկող բնոյթը կայ, բայց գոյութիւն ունի և օր օրի վրայ աճում է մեր յիշած տնտեսական ձևերի «մասնագիտացումը» ամեն մի շրջանի համար առանձին: Իսկ այդ կրկնակի շարժումը,—կենտրոնացում և ապակենտրոնացում,—որ գոյութիւն ունի տնտեսական-արդիւնազորական աշխարհում, զոյութիւն ունի տնտեսական-արդիւնազորական աշխարհում, ինչպէս գտնում է իր արտացոլացումը քաղաքական աշխարհում, ինչպէս մենք յիշել ենք երկրորդ գլխում:

Տնտեսական այդ կրկնակի շարժման կողքին կատարում է և ազգերի ու ժողովրդների շարժումը:

«Ազրարական նահանգների շահերը տարբեր են ինդուստրիական շրջանների շահերից, հանքային շրջաններին էլ տարբեր

են դրանցից և այն: Սակայն դրանց հետ միասին կան և ազգերի բէէլ իրաւասութեան սահմանները: Բացի տնտեսական ճակատադրական զարգացման պահանջից, կայ ազգերի իրական դոյութեան և շահերի հարցը, որ մոռանալ, կը նշանակէ կոյր լինել):

Պետութեան մէջ երբեմն իրար են դարնուում տնտեսական և ազգային մօմէնտները: Տնտեսական երևոյթների կենտրոնացնող կողմն ընդհարւում է դարերով ամրապնդւած ազգային գաղափարին և ազգային խիստ շօշափելի, խիստ բէէլ շահերին ու ստիպում նրանց տեղի տալ, յղկել: Իսկ նոյն տնտեսական երևոյթների տպակենտրոնացնող կողմն, ընդհակառակը, ամրապնդում է ազգութեան գաղափարը, եթէ ոչ իր նախկին զուտ էտնօզրափրական ձևով, գոնէ տէրրիտօրիալ սահմաններում. մի և նոյն շրջանում, տնտեսական մի միաձոյլ ամբողջութիւն կազմող մի տէրրիտօրիայի վրայ ապրող բոլոր տեսակի ժողովրդներն սկսում են համերաշխաբար ապրել, կուլտուրապէս իրար հաւասարել, կամաց-կամաց վերածել մի ժողովրդի և ապա, հեռաւոր ապագայում դառնալ մի ազգ: Այդ ձևով են ստեղծւել Շվէյցարիայի, Միացեալ-Նահանգների ժողովրդները, այդ նոյն պրօցէսսի մէջ են այսօր կանադացիները, կէպտոնցիները, աւստրալացիները և այն. դրանք կամաց-կամաց վեր են ածւում նոր ազգութիւնների:

Եթէ տնտեսապէս, ազգայնապէս ու կուլտուրապէս իրարից տարբեր ժողովրդներ ունեցող մի պետութեան մէջ սկսում են երևալ կենտրոնախոյս ձգտումներ, և եթէ երկրի կենտրոնական իշխանութիւնն սկսում է ջանալ խեղդել այդ ձգտումները բռնի ուժով ու միաձուլելու ջանքեր է գործ դնում, այն ժամանակ ըսկրւում է նախ խուլ և ապա խիստ ակներև ու աշխարայ ներքին մի պայքար, որը զոսացնում է պետութեան կեանքը, ինչպէս Աւստրիայում, կամ քոչքայում է նրան, ինչպէս Թիւրքիայում, կամ դարձնում է երկիրն արեան ասպարէզ, ինչպէս այժմ Ռուսաստանում:

Անհար է ներկայ խոշոր պետութեան ներսում հրատարակել այնպիսի օրէնքներ, որոնք բաւարարութիւն պատճառեն ու յարմար լինեն բոլոր ժողովրդների համար հաւասարապէս: Եթէ

*) R. Springer-„Der Kampf der österreichischen Nationen. um den Staat“, II Theil, § 30

պետութիւնը բաղկացած է բազմաթիւ շրջաններից և ժողովրդներից, միշտ մի և միակ օրէնսդրութիւնը, որքան էլ նա խելացի լինի, կը դառնայ ոչ ընդհանուր, այլ կուսակցական, — տիրող ժողովրդի օրէնքը, ճնշող ու բռնակալ երկրի ու ժողովրդների մի մասի համար:

Ինչպէս որ տեղական ուրոյն շահեր ունեցող համայնքներին ու գաւառներին անհրաժեշտ է տալ տեղական վարչական ինքնավարութիւն, այնպէս էլ ներքին օրէնսդրական իրաւունք կամ աւտօնօմիա պէտք է տալ միապաղաղ և միատեսակ տնտեսական, ազգային ու կուլտուրական շահեր ունեցող շրջաններին:

Ճշմարիտ է, տնտեսական պատճառներն արտադրում են դասակարգեր, որոնք յաճախ դուրս են գալիս ազգերի ու շրջանների սակարգեր, որոնք յաճախ դուրս են գալիս ազգերի թւում է, թէ դա ծաւալից և ստանում են համապետական բնոյթ: Թւում է, թէ դա հակասում է աւտօնօմիատական ձգտումներին: Սակայն իսկապէս չը կայ ոչ մի հակասութիւն. ոչ ոք չէ պահանջում լիակատար ինքնորոշումին: Իր կը լինէր սէպարատիզմ, պառակտելու, անկախութիւնների հիմնելու ձգտում: Այն ինչ աւտօնօմիատական և Ֆէդէրալիստական բոլոր կուսակցութիւնները միշտ պահանջում են պետութեան ամբողջութեան պահպանում — ուրեմն կրօնաւած աւտօնօմիա, այսինքն լոկ տեղական վարչական և օրէնսդրական ապաւնօմիա, այսինքն լոկ տեղական վարչական խոշոր խնդիրները կրկին կենտրոնացում: Համապետական բոլոր խոշոր խնդիրները (գօրք, նաւաֆալու են կենտրոնական մարմինների ձեռքին (գօրք, նաւաֆալու, արտաքին գործեր, մաքսեր, պօստ, հեռագիր, երկատօր, և այն):

Այդ սկզբունքային հարցերից անցնենք այժմ զուտ գործնական, հարցերին, աւտօնօմիայի օգտակար կողմերին: Լազարևսկին բաւական զեղեցիկ կերպով է պարզել հարցի այդ գործնական կողմը:

«Տեղական ազգաբնակչութեան շահերի տեսակէտից՝ աւտօնօմիան հանդիսանում է իբր մի միջոց, որով տեղական վարչունքիւնը համաձայնութեան կը բերել ազգաբնակչութեան պահանջների և հայացքների հետ: Նախ և առաջ աւտօնօմիան հնարաւոր կը դարձնէ գործերը վարել տեղական լեզուով: Եթէ որևէ շրջան կուլտուրական կամ կենսական (бытовой) որ և է առանձնայատկուութիւն ունի, միայն աւտօնօմիան է, որ կարող է յարմարել կամ հաշի առնել այդ առանձնայատկութիւնը. կենտրոնական վաք-

գութիւն, տարրեր միւսներէից իր բազմազան շահերով, ուշ թէ շուտ կը ծագի նրա մէջ ձգտում դէպի ակտօնօմիա: Դա նոյնքան բնական ու ճակատագրական մի էրևոյթ է, որքան և Ֆիլիքսական երևոյթները:

Ակտօնօմիայի թշնամիներն ու հակառակորդներն ընդհանրապէս երկու հիմնական պատճառներ են ընդունում նրա դէմ. ա) նա փաստակար է, որովհետև թուլացնում է պետութեան ներքին միութիւնը, ջլատում նրա մասերի ամբողջութիւնը և բ) որ ակտօնօմիան թէև այժմ որոշ աստիճանի տեղական ինքնուրոյնութիւն է պահանջում, չը մերժելով պետական ամբողջութիւնը, սակայն նա ճանապարհ է դէպի սէպարատիզմ, դէպի վերջնական պառակտում ու քայքայում:

Քննենք այդ առարկութիւնները, որոնք գալիս են մեծ մասով անկողմնան բնականներից, յետագէմ տարրերից:

Ակտօնօմիան չէ թուլացնում պետութեան ներքին միութիւնը կամ նրա ամբողջութիւնը: Ընդհակառակը, նա ակալացնում է ներքին ոյժը, ամրապնդում է ներքին կապը, որովհետև բոլոր ընդհանուր հարցերում գործում է համապետական օրէնքը: Բացի այդ՝ կենտրոնական իշխանութիւնն իրականութեան միշտ կրճատելու, փոփոխելու և նոյն իսկ վերացնելու իր տւած ակտօնօմիան: Հակառակորդները եթէ խելացի լինէին, կը կանգնէին Բ. Շպրինգերի տեսակէտի վրայ և կը պահանջէին մանրացնել ակտօնօմ միութիւնները, որպէս զի նրանք պետութեան ամբողջութեանը երբէք չըսպանան: «Որքան ակելի փոքր է այն տէրրիտօրիան, որի վրայ իրականացւում է ինքնավարութիւնն իր երեք տեսակներով (վարչական, դատական և օրէնսդրական), այնքան ակելի կատարելապէս նա ծառայում է ազգաբնակչութեանը և այնքան ակելի անվտանգ ու բարեբար է պետութեան համար» *):

Իսկ եթէ պետութեան մի մասը ձգտում է պառակտելու, եթէ նա ունի դրա համար բաւարար պատճառներ ու հիմքեր, մեթէ նրան բռնի կերպով պետութեան մէջ պահելով կաւեւանայ պետութեան ուժը: Ամենեկին: Այդ բռնազատած մասը միշտ կը լինի ռազմապատրաստ, ապստամբելու, տիրողին, բռնազատողին ֆրասելու համար միշտ ոտի վրայ, արթուն հսկելիս, որ հարւածէ արեւելքը:

*) R. Springer—նոյն 3-դ մաս, § 30.

մենակսկծեցուցիչ ու թոյլ տեղին: Դա քայքայման սաղմն է և ոչ միութեան կամ ուժի:

Եթէ մի տիրւած ազգի կամ շրջանի մէջ ակտօնօմիայի պահանջը կայ, հասունացել է, ոչ թէ ակտօնօմիա տան է թուլացնում պետութեան ներքին ուժը, նրա միութիւնը,—այլ չը տան է առաջացնում ատելութիւն, ապստամբութիւն, քայքայում: Կենտրոնական իշխանութիւնը, Լազարեսկու ասածի նման, դառնում է բօնական իշխանութիւնը, Լազարեսկու ասածի նման, դառնում է «օտարի լուծ» ծայրագոտներին, տիրւածների համար. նա դառնում է տիրող ազգի իշխանութիւն, ուրեմն՝ նացիօնալիստական, ազգամոլական:

Փողովրդական այլազան կամ հէթէրօփէն մասսաների «կենտրոնախոյս ձգտմանը յաճախ համապատասխանում է պետութեան կենտրոնացման ձգտումը, որից սովորաբար յառաջանում է ներքին յամառ կռիւ» *):

Կենտրոնական իշխանութիւնն ուզում է զսպել ազակենտրոնացման ձգտումները բռնի միջոցներով. հարածում է ազատ խօսքը, բռնաբարում ազատ միտքը. բռնտերն ու արտօրավայելութիւնը կլանում են բոլոր աչքի ընկնող ըմբոստ ուժերին: Պետութիւնը կալուածի, Շլիստէլբուրգ, Բաստիլիս, Սախալին, Սիբիր, Աքիա... սրբան տաղանդներ, սրբան հանճարներ են կլանել, զոդացել մարդկութիւնից... Շլիթան, զնգակը, կախաղանը ասպարէզ են գալիս: Կենտրոնն ստանում է նացիօնալիստական գոյն, սկսում է բռնութեամբ ջանալ մի ազգութեան վերածել բոլոր փողովրդներին, իր լեզուն, իր ոգին, իր կուլտուրան փաթաթել բոլորի ներքին, իր լեզուն, իր ոգին, իր կուլտուրան փաթաթել բոլորի ներքին—առուացնել, տաճկացնել, գերմանացնել... Ժողովուրդը զըրկում է դպրոցից. ինչ դպրոց, երբ տեղական լեզուները վճուրածում են նրանից, երբ 7—8 տարեկան մանկիկներին առաջին գիտելիք են տալիս, որ նրանք սկսում են իր չը հասկացած լեզով: Դա է պատճառը, որ նրանք Բուրաստանի միջնակարգ դպրոցները վիժում են անօրինակ, Բուրաստանի միջնակարգ դպրոցները վիժում են անօրինակ, «անյաջողներ» (неудачники), անյաջան բթամիտներ, որքանքան զուցէ ոչ մի երկրի դպրոցներ չեն արտավիժում: Փողովուրդը զըրկում է նոյն իսկ բժշկական օգնութիւնից, որովհետև լեզու չը գիտէ, իսկ իր դաւակները, բժիշկ գառնալով, յաճախ մոռանում են տէ, իսկ իր դաւակները, բժիշկ գառնալով, յաճախ մոռանում են մայրենի լեզուն, որովհետև նրանով չեն արանդում գիտու-

*) Еллинекъ—նոյն—երես 441.

թիւնները: Հիւանդանոցներից, բուժարաններից նացիոնալիզմը դուրս է վանել տեղական լեզուները:

ժողովուրդը զրկվում է արդարադատութիւնից, որովհետև լեզու չը գիտէ, դառնում է խաղալիկ որևէ անկիրթ, կաշառակեր ու գոհնիկ թարգմանի՝ ձեռքում, կամ այդպիսի բռնութեան ու բիւրօկրատիզմի երկրի արդարադատութիւնն էլ միշտ լինում է կաղ, «անարդար»: Կենսործնից ծայրագաւառները դալիս են միայն տիրող ժողովրդի թափթփուքները, նրա տակաւնը կազմող կասկածելի բարոյականի ու մտաւորի տէր անձերն իբր պաշտօնեայ, իբր բիւրօկրատ: Լաւերն տաւնց այն էլ մնում են իրանց տեղերում. վատերը, մրցման անընդունակները, բթամիտները և իրենց շրջաններում հալածածներն են, որ ցրում են հեռուոր գաւառներն աւանտիւրայի, բաղդախնդրութեան:

Կառավարութեան ու ժողովրդի մէջ սկսւած կռիւն աւելի ևս սաստկացնում են այդ կասկածելի մտաւորի ու բարոյականի տէր պաշտօնեաները: Կռիւր բորբոքում է. նոր զոհեր, անվերջ զոհեր, որոնք իրանց կարգին դառնում են նոր աղբիւրներ ատելութեան ու կռի:

Ճնշումը լեզուից, գրականութիւնից, կրօնից անցնում է դէպի անտեսական կեանքը: Մի տեղ հրէաների համար նշանակւում են ընակավայրեր, որոնցից դուրս ապրելու իրաւունք չունեն, մի այլ տեղ հողերի լաւագոյն մասերը պահւում են ուս գաղթականների համար: Այն ժամանակ, երբ Ախալքալաքի ու Շիրակի դիւզացիները հողի սակաւութիւնից քիչ է մնում սովամահ լինեն, նացիոնալիստ կամ ուսացնող կառավարութիւնը, արհամարհելով այդ գաւառների հայերի հարիւրաւոր խնդիրները, Կարսի ու Ախալքալաքի շրջանների ահաղին հողերը տալիս է զուխարօրներին, մալահաններին, խախօններին, — հազարաւոր վերստեր հեռու գաւառներից նոյն կառավարութեան ծախքով բերւած... էլ ի՞նչպէս չը գայրանայ դիւզացին, երբ տեսնում է այդ հրէշաւոր անարդարութիւնը, ի՞նչպէս կարող է նրա մէջ չը ծագել ինքնազիտակցութիւն, աւտօսօմիայի ձգտում:

Այդ ձգտումը գառնում է պատճառ նոր ու նոր հալածանքների, հալածանքները նոր բողոքների, բողոքները կրկին հալածանքների և այդպէս անվերջ, մինչև որ երկիրը դառնում է աւերակ, քայքայւում անտեսապէս ու բարոյապէս, թուլանում, ընկ-

ձուռ: Եւ դա կոչւում է ամենախմաստուն բիւրօկրատիայի լեզուով «պետական շահ», «պետական քաղաքականութիւն»:

Գարշելի է «պետութեան շահերի» անունով դործադրւած ճնշումը Էլչաս-Լօտարինգիայում... Բայց և այնպէս Գերմանիան աւել է այդ երկրին տեղական բաւական լայն ինքնավարութիւն, չը նայելով, որ դրանք գերմանացիներով ընակւած նահանգներ են, որոնց վերին շերտերը ժամանակի ընթացքում ֆրանսիացի են: Անցել է արդէն մի սերունդ և նոր սերունդն այլ ևս չէ ըզգում այն ձգողական ոյժը գէպի Ֆրանսիան, ինչ զգում էր հին սերունդը: Դա դեռ միևնոյն ցեղին, միևնոյն ժողովրդին պատկանող մի քիչ օտարացած մի մասի վերաբերմամբ է: Իսկ ի՞նչ կարտագրեն ճնշումները, եթէ ժողովրդները լինեն հիմնականապէս տարբեր իրարից... Կը բորբոքւի ներքին ատելութիւնն ու կռիւր, և ամբողջ շրջաններ դժոխք կը դառնան, ինչպէս Լեհաստանը, Ֆինլանդիան Պլէվելի օրով, Բալտեան նահանգները, Կովկասը, Ուկրայինան և այլն, ինչպէս այսօր Պօզնանը...

Ճնշումը դեռ միտք ունի, ասում է Լազարեւիսկին, և դեռ իրագործելի է, երբ դիտակցութիւնը չէ զարթել ժողովրդի լատելում: Կարելի է կաշառել լեհական ազնւականութեանը կամ շեխաւտային, տալով արքունիքում պաշտօններ. կարելի է կաշառել օստղէյեան ազնւականներին, կայսերական գլխարկիական գընդերում տեղեր տալով, ինչպէս արեց բիւրօկրատիան Ռուսաստանում, իսկ ժողովրդին կաշառել անկարելի է: Եթէ նոյն իսկ այդնում, իսկ ժողովրդին կաշառել անկարելի է: Եթէ նոյն իսկ այդպիսի փորձ լինի, ինչպէս արեց ուս կառավարութիւնը Լեհաստանում, — կը տայ հակառակ արդիւնք: Կառավարութիւնն ազատեց լեհական ճորտերին, կարծելով թէ դրանով նրանց իր մըշտական կուսակիցները կը զարձնէ: Բայց շուտով այդ բարերարւած ճորտերն զգացին, որ կառավարութիւնն ազատեց իրանց չը լեխաւտայի ճորտութիւնից, միայն ինքն սկսեց ճնշել, հալածել լեզուն, կրօնը, ազգային սովորութիւնները, ծանրաբեռնել հարկերով, սանձ դնել մարդկային լեզուն ու մտքին... Եւ նոյն բարերարւած ճորտերն այժմ ասում են կառավարութեանն ու բիւրօկրատիային:

Այն, ժողովրդներին կաշառել չէ կարելի. նրանց կարելի է միայն ճնշել: Իսկ կռիւ այդ ձևը վնասում է տիրողին, զարթեցնելով նրա մէջ չարութիւն, դաժանութիւն, զազանախան հակում-

ներ, բիւրօկրատիզմ: Բայց նա քնասում է և տիրւածներին, վարձեցնելով նրանց կեղծիքի, դադանի դաւադրութիւնների, տէրրօրի և այլն: Տէրրօրը և գաղտնի, դաւադրական կազմակերպութիւններն ամենևին իրէ՛տալ չեն. նրանք լաւ են բռնութեան երկրնեւրում. իսկ այնտեղ, ուր կայ մամուլի, խօսքի ժողովների ազատութիւն և անհատի ու բնակարանի անձեռնմխելիութիւն,—այնտեղ տէրրօրը բորենիութիւն է, այնտեղ դաւադրական կազմակերպութիւնն անմիտ է:

Եւ յետոյ, միթէ անմտութիւն չէ կոիւ յայտարարել մասսաների, ազգերի դէմ. հալածել նրանց լեզուն, որով, մասսայի կարծիքով, խօսում են բոլոր սրբերն ու Աստուած ինքը,—հալածել նրանց սովորութիւններն ու հասկացողութիւնները, որոնցից լաւը մասսան ոչ տեսել է և ոչ էլ գիտէ: Անմտութիւն է հալածել նրա ազգութիւնը, որովհետև նա նրանից զատ ուրիշը չէ ճանաչում. նրա համար մի այլ ազգ՝ էապէս անըմբռնելի է: Նա ծնւել ու սնւել է այդ ազգի ոգով, սերնդից-սերունդ, երկար դարեր ժառանգաբար. անգիտակցօրէն նա ստրուկ է այդ ոգու, որը նրա էութիւնն է, նրա ամբողջութիւնը: Կարելի է կոիւ յայտարարել զիտակից, հաշտով ու կանխամտածօրէն ազգամոլ, նացիօնալիստ անձերի դէմ և ոչ այն ժողովրդի, որը ծնւել ու սնւել է իր ազգի ոգով, որի համար ազգութիւնը նոյնպիսի անհրաժեշտութիւն է ինչպէս և հացն ու ջուրը:

Ի մեծ ցաւ է՛ման «միջազգայնականների» կամ ինտէրնացիօնալիստների, պէտք է ասել, որ ազգային ոգին, ազգային զգացումը կամ տեղական հայրենասիրութիւնը գնալով աւելի է տարբանում, աւելի ներս էթափանցում ժողովրդի մինչև ներքին խաւերը քան պակասում: Որքան աւելի հասարակական կազմը դեմօկրատիանում, գաղափարները և գիտութիւնները տարածւում են մասսաների մէջ, այնքան աւելի հասարակութեան «վերին» կոչւած դիտակից շերտերից ազգային զգացմունքը թափանցում է ու տարածւում ամբոխի բոլոր դասակարգերում:

XIX դարն իրաւունքով կոչւել է մանր ազգութիւնների վերածընունծնան դար: Մի կողմից առաջ է շարժւել դասակարգային դիտակցութիւնը, իսկ միւս կողմից՝ ազգայինը: XIX դարի կէսերում տարածւած միջազգայնութիւնը, կօմօպօլիտիզմը կամ ինտէրնացիօնալիզմն այսօր այլևս գոյութիւն չունի լուրջ մարդկանց համար:

Մարքսի «Ինտէրնացիօնալիզմ» իսկական ինտէրնացիօնալիզմ էր պարունակում իր մէջ. այնտեղ խառը-խուռը մասնակցում էին ամենքը, ինչ ազգից կուզէ լինէին: Նա երեւակայում էր, որ «պլուրօլէտարիատը հայրենիք չունի», այդ պատճառով նրա կազմակերպութիւնն էլ պէտք է մէկէն ի մէկ միջազգային լինի, մերժող հայրենիքի ու ազգութեան. մարդկութիւն և նրա ամբողջութեան մէջ դասակարգերի կազմակերպութիւն—ահա Մարքսի «Ինտէրնացիօնալիզմ», իսկ նրա ներքևում ազգեր ու լեզուներ, հայրենիքնացիօնալիզմ», իսկ նրա ներքևում ազգեր ու լեզուներ, սնտեսական հիմններ ու պետութիւններ դիւռում էին լոկ իրը անտեսական հիմքերի ու դասակարգերի վերնաշէնքեր, ժամանակաւոր երեւոյթներ: Իսկ այժմ այդպէս չէ: Պատմութիւնը եկաւ ապացուցանելու, որ այդ ճանապարհով չէ ընթանում ինտէրնացիօնալիզմի զարգացումը: Այժմ վերածնւում են ազգութիւններն, ունենալով դժբա համար անհրաժեշտ հիմքեր: Ազգութիւնների ներսում կազմւում են դասակարգեր և մղում դասակարգային կոիւ. և այդ ազգում են դասակարգեր և մղում դասակարգային կոիւ. և այդ ազգային դասակարգերը դանազան երկրներից իրար ձեռք են մեկնում զային դասակարգերը դանազան երկրներից իրար ձեռք են մեկնում ազգում կազմում ժամանակակից ինտէրնացիօնալիզմը—բոլոր ազգերի աշու կազմում ժամանակակից ինտէրնացիօնալիզմը: Այսօր խառաւոր դասակարգերի միութիւնը կամ ֆէդէրացիան: Այսօր կայ սօցիալիստական միջազգային կօնգրէսներն այդ բոլոր ազգեւայ աշխատաւոր դասակարգերի կամքի արտայայտութիւնն են, որի աշխատաւոր դասակարգերի կամքի արտայայտութիւնն են, որոնց որոշումները միայն բարոյական պարտականութեան առարկայ են: Դա դեռ իսկական «Համամարդկային ֆէդէրացիան» չէ, այլ նրա նախապատրաստական աստիճանը—կօնֆէդէրացիան, ինչպէս Եվէյ-ցարիայում գոյութիւն ունէր մինչև 1848 թիւը, ինչպէս Գերմանական Միութիւնն էր, 1815-ից մինչև 1866 թիւը, կամ ինչպէս մանական Միութիւնն էր, 1815-ից մինչև 1866 թիւը, կամ ինչպէս Միացեալ-Նահանգների սկզբնական սահմանադրութիւնն էր (1777 թիւնը): Սրանք բոլորը մի տեսակ նախադատրաստական աստիճաններ էին իսկական ֆէդէրացիաների համար (կօնֆէդէրացիաներ): Ճիշտ նոյնն են և այսօրւան սօցիալիստական կօնգրէսները. նրանք նախադուռն են «համամարդկային Դաշնակցութեան». դրան կը հասնեն, երբ դասակարգային կոիւն ազգութիւնների բան կը հասնեն, երբ դասակարգային կոիւն ազգութիւնների ներսում կը յաղթանակէ և յաջողութեամբ կը հասցնէ տառապող մարդկութիւնը սօցիալիստական կարգերին:

Սակայն այդպէս չէր Մարքսի ինտէրնացիօնալիզմը. նա չունէր միջին օղակը—դասակարգերն ազգերի ներսում. նա վե-

բացնում է այդ միջին աստիճանը, նրան համարում յետագէմ, քնասակար ու մէկէն դիմում դէպի վերջնական նպատակ:

Ազգերը կան, նրանք գոյութիւն ունեն և, դեռ այդ քիչ է, նրանց գոյութիւնն աւելի և աւելի շեշտում է հասարակական լայն խաւերի զարգացման և տնտեսական ձեւերի «տեղական կենտրոնացման» հետ միասին: Ազգութիւնը, լինելով դինամիքական կամ յարաշարժ մի հասկացողութիւն, փոփոխում է իր բնոյթը.— օրինակ, այժմ գուտ էտնօգրաֆիականից (ծագման միութիւնից) վեր է անում աշխարհագրականի կամ տէրրիտօրիայի,—զարգանում է տեղական հայրենասիրութիւնը (Localpatriotismus),—դա անկասկած է: Այդ նոր ձեւի հայրենասիրութիւնը կամ ազգային զարգափարը թափանցում է ժողովրդի լայն խաւերի մէջ:

Եթէ պետութեան ներքին միոմեան, ներքին անբաժանելիումեան սիրահարներն ուզում են այդ ճակատագրական երևոյթի առաջն առնել թող իմանան, որ նրա դէմ կուելու միայն երկու միջոց կայ. կամ «հրով ու սրով», կամ ազգային ու երկրային աւտօնօմիա տալով:

Առաջին տեսակի կռիւը միշտ հասցնում է քայքայման, պառակտման, անկման: Երկրորդ միջոցն է միակ ազգեցիկը, միակ փրկարարը: Կայ դժգոհութիւն, մղում է կռիւ, տրւում են զոհեր,—կը նշանակէ կայ բաւարար պատճառ. պէտք է հեռացնել այդ պատճառը, պէտք է տալ շրջաններին ու ազգերին աւտօնօմիա, որ այլ ևս գոյութիւն չունենան ազգային ճնշումները, ազգային հալածանքներն ու անտազօնիզմները, որպէս զի ամեն մի ազգի ու շրջանի ներսում պրօլետարիատն ու աշխատաւոր գիւղացիութիւնը կազմակերպւեն և զբաղւեն միայն ու միայն իրանց զասակարգային կռով կապիտալիստների, կալաժատէրերի ու կեղեքիչների դէմ:

Մի և անբաժան պետութեան պաշտպանների բերած երկրորդ պատճառարանութիւնն աւտօնօմիայի դէմ հետևեալն է.—«Յաճախ պետութեան այդ մասերում (աւտօնօմ մասերում) առաջ են գալիս կենտրոնախոյս ձգտումներ՝ դէպի աւելի մեծ ինքնուրոյնութիւն» *): Այսինքն՝ աւտօնօմիան մի ճանապարհ է, որ տանում է դէպի բաժանում:

Այդ պատճառարանութեան մէջ կայ որոշ ճշմարտութիւն: Թիւրքիան Արևելեան Րումէլիին (Րումէլի Շարքի) 1878-ին աը-

*) Еллинекъ—նոյն—երես 441

ւեց (նրան ստիպեց Բէլլինի վեհաժողովը) աւտօնօմիա. հազիւ 8 տարի անցած, նա միացաւ Բօլզարիայի հետ (1886-ին): Կրէ-տէին 1897-ին տւին որոշ ձեւի աւտօնօմիա. երկար չի տւել, նա կը միանայ Յունաստանի հետ, կը հեռանայ Թիւրքիայից ընդմիշտ: Եւ ի՞նչ կայ դրանից աւելի բնական. Թիւրքիայի բոնութիւններից փախչում են. դրանց միատեղ կարող է պահել լոկ զաղանական ուժը: Սուլթանը լաւ գիտէ, որ եթէ Հայաստանին կամ Մակեդօնիային, Սերբիային կամ Դիւրգիներին տրւի աւտօնօմիա, նրանք շուտով կը բաժանւեն Թիւրքիայից... Եւ ի՞նչը կարող է, օրինակ, Կրէտէին կապած պահել Թիւրքիայի հետ, որ մտաւոր կամ տնտեսական շահը... Միթէ Թիւրքիայի միջազգային իրաւագործ կրօնակը, նրա նահանգների ուժասպառ) հարկատուութեան այլ ևս սնունդունակ դրութիւնը, նրա տնտեսութեան խիստ յետամնաց զարգացումը...

Սակայն Թիւրքիան մի բացառիկ հանգամանք է. այդպէս չէ դրւած հարցն, օրինակ, Աւստրիայի, Ռուսաստանի ազգերի վերարեմամբ: Թէև աւտօնօմիա ունեցող շրջանը կարող ևս կապիտան, սակայն ներկայ տնտեսական ու քաղաքական կեանքի պայմաններն այնպէս են կապկապում իրար շրջաններն ու ազգերին, որ բաժանւելը, անկախ պետութիւն կազմելն ամենեւին ձեռնտու չէ մանր ազգերին ու շրջաններին:

Ենթադրենք մի բօպէ, որ Լեհաստանը, կամ Ուկրայինան բաժանւեցին, կազմեցին անկախ պետութիւն: Ի՞նչ է լինելու դըրա բնական հետևանքը: Նախ և առաջ պէտք է իր ուժերից վեր բնական հետևանքը: Նախ և առաջ պէտք է ուզում, զօրքեր պահէ բոլոր սահմանների վրայ. իսկ դա ծախք է ուզում, հսկայական ծախք: Յետոյ պէտք է ունենայ իր արքունիքը, իր միխարութիւնները, իր դիպլօմատիական խիստ թանձր նստող մարմինը... Եւ այդ ամենի փոխարէն՝—բոլոր պետութիւնները, որոնց թւում և Ռուսաստանը, պիտի փակեն իրանց սահմանները նրա ապրանքների առջև, մաքսերի շղթաներով պիտի կապը նրա արտադրութիւնների մուտքի ուղիները: Այն ինչ կապեն նրա արտադրութիւնների մուտքի աւտօնօմ մամուլով ներկայ խոշոր Ռուսաստանի մի բաղադրիչ աւտօնօմ մասը, կարող են վայելել մեծ պետութեան բոլոր ներքին ու արտաքին թէ տնտեսական և թէ քաղաքական առաւելութիւնները: Վերջապէս՝ ներկայ տնտեսական կեանքը, մի կողմից տե-

դական-ապակենտրոնական ընդթ ստանալով, միւս կողմից, ինչ-պէս ասացինք, ձգտում է կենտրոնացման, աւելի և աւելի խոշոր ու լայն պետական միութիւնների, միայն նրանց ներսում աւտոնոմ, դաշնակից շրջաններով: Այժմ այլ ևս անմիտ են վերջօկանոց ծաւալով և հինգ կօպէկանոց բիւջէտով մանրիկ պետութիւններ-դրանք դառնալու են աւտոնոմ շրջաններ ու ազգեր՝ խոշոր պետութիւնների դաշնակցական ամբողջութեան մէջ:

Ո՛չ, այժմ մանր ազգերին ոչինչ չէ կարող ստիպել բաժան-ւելու Ռուսաստանից կամ մի այլ խոշոր պետութիւնից, բացի մի հանգամանք—ստաբիլիտետական պետութեան անտեսական ու ազգային հալածանքը, մի հալածանք, որին ենթակայ ժողովուրդները չը դիմանալով: գրում են իրանց դրօշի վրայ— «մահ կամ ազատութիւն»: Այդպէս էր Լեհաստանը տասնեակ տարիներ առաջ, երբ ոչ մի հաւանութիւն չը կար ստանալու աւտոնոմիա և ինքնորոշում: Այդպէս են այսօր թիւրքական բռնակալութեան տակ հեծող բոլոր ժողովուրդները:

Այսօր խոշոր պետութիւնների առջև դրւած է մի անխուսափելի դիլէմա. կամ լայն աւտոնոմիա տալ իր սահմաններում ազրող տարաշահ և ներքնապէս հօմօժէն շրջաններին ու ազգերին, կամ քայքայել, պառակտել:

Աւտոնոմիայի տեսակները: Աւտոնոմիա պահանջողները կամ աւտոնոմիատները միատեսակ չեն հասկանում այդ գաղափարը: Կան տարբեր տեսակի աւտոնոմիա պահանջողներ: Եւ «տարբեր» ասելով, չենք ուզում հասկանալ աւտոնոմ մարմնի կամ նրա իրաւասութիւնների չափը—լայն կամ նեղ, ընդարձակ կամ սահմանափակ, կրճատուած աւտոնոմիա: Դա աւտոնոմիայի միւսնոյն տեսակն է, միայն նրա քանակն է տարբեր, իրաւասութիւնն է քիչ կամ շատ: «Տարբեր տեսակի» աւտոնոմիաներ ասելով, մենք հասկանում ենք երկրային (տէրրիտօրիալ), ազգային (նացիօնալ) և ազգ-երկրային աւտոնոմիաներ:

Պարզենք այդ երեք տեսակի աւտոնոմիաների էութիւնը, ի հարկէ խիստ համառօտակի:

Մենք ասացինք, որ աւտոնոմիա պէտք է տալ այնպիսի շրջանների, որոնք ունեն իրանց յատուկ անտեսական ստրուկտու-

րան, յատուկ ու բաւական տարբեր շահերը (միւս նահանգներից), կուլտուրական ու ազգային առանձնայատուկութիւնները:

Հարցը խիստ թեթեւանում է, երբ տարբեր անտեսական ստրուկտուրա, տարբեր շահեր ունեցող շրջանն ամբողջապէս կամ չնչին բացառութիւնով բռնւած է լինում մի միապաղպղ ժողովրդով, կամ աւելի ճիշտ է ասել, մի ազգով: Այդ դէպքում երկ-վրդով, կամ աւելի ճիշտ է ասել, մի ազգով: Այդ դէպքում երկ-վրդով կամ տէրրիտօրիալ աւտոնոմիան և ազգային աւտոնոմիան համապատասխանում են իրար: Համապետական կենտրոնական համապատասխանում է, տալիս է այդ շեր-իշխանութիւնը, որ երկրի գերիշխան տէրն է, տալիս է այդ շեր-ջանին մի սահմանադրութիւն, կամ դժուար է որոշ էական սկզբունք-ներ և մնացածը թողնում տեղի ժողովրդին, այդ մի ազգին: Այդ տեղի հրաւիրում է իր սեփական սահմանադիր ժողովը և կազմում իր հիմնական օրէնքները, համաձայն վերեւից ստացած սկզբունքների. սահմանում է իր վարչութեան, իր ընտրութիւնների և օրէնսգրու-թեան, իր դատավարութեան բոլոր ձեւերը, միշտ մնալով նախա-գրծւած սահմաններում:

Եթէ այդ աւտոնոմ շրջանում ապրում են մի կամ մի քանի տարբեր ազգեր, որոնք կազմում են փոքրամասնութիւն, ցրւած գլխաւոր ազգի մէջ այս ու այն կողմերում, չը կազմելով ոչ մի գաւառում կամ նահանգում մի կօմպակտ, մի միապաղպղ մասսա, —այդ դէպքում կամ նախագծւած օրէնքը պիտի ապահովէ փոքր-մասնութեան իրաւունքները, կամ տեղական սահմանադիր ժողովը պի-տի անէ նոյն բանը: Հակառակ դէպքում ցրւած ու մանր ազ-տի կրկին կը մնան ճնշւած, ոտնատակ ընկած. դժգոհութիւնն ու ցնցումները կրկին կը յարատեւեն, թէն աւելի փոքր չափերով, քան առաջ:

Շատ հեշտ կը լինէր լուծել Աւստրիայի կամ Ռուսաստանի «ազգութիւնների հարցը» Գօրգեան հանդոյցը, եթէ որ բոլոր համա-շահ շրջանները բռնւած լինէին մի-մի ազգութիւնով: Սակայն ի-րականութեան մէջ այդպէս չէ. ամեն տեղ բազմութիւն կազմող ազգերի գրկում կամ նրան կից բնակուած են և ուրիշ ժողովրդներ, որ կազմում են երբեմն էլ բաւական զգալի կամ խոշոր փոքրա-մասնութիւն:

Ի՞նչպէս անել, որ դրանք էլ չը ճնշուեն իրր ազգ, իբր ու-րոյն պատմական տրագիցիաներով օժտուած, յաճախ մի լեզու, մի

տեսակ սովորութիւններ ունեցող, մի տեսակ մտաւոր ու հոգեկան ժառանգութիւններ ձեռք բերած մի ժողովուրդ: Պէտք է նշանակել տալ ազգային ինքնորոշման իրաւունք, ասում են սօցիալ-դէմօկրատները. պէտք է տալ «կուլտուրական ինքնորոշման իրաւունք», ասում են հրէական բունդիստները: Իսկ Բուզովֆ Շպրինգերը, մեր յաճախ յիշատակած աւստրիացի այդ գիտնականը, միակ ճարը գտնում է «ազգային աւտօնօմիան»:

Իսկ ի՞նչ է ազգային աւտօնօմիան: Ահա այստեղ արդէն «աւտօնօմիա» բառը մի քիչ մթնանում, իր իսկական բովանդակութիւնը կորցնում է:

Մինչև այժմ մենք գործ ենք անել աւտօնօմիա բառն օրէնսդրական ապակենտրոնացման փոխարէն: Այդ միտքն ունի նա պետական իրաւունքի և առհասարակ իրաւաբանական գրականութեան մէջ: Այդ դէպքում նրա կողքին յաճախ դնում են «քաղաքական» բառը: Սակայն կայ «անհատի աւտօնօմիա», «եկեղեցու աւտօնօմիա», «ազգի աւտօնօմիա» և այլն, և ամեն մի դէպքում մի յատուկ միտք է տրւում այդ բառին:

Ազգային աւտօնօմիա ասելով, ուզում են հասկանալ մի ազգի ազատութիւնն՝ ունենալու իր անկախ պարօնները, գրականութիւնը, լեզուն, թատրօնը, ամեն տեսակի բարեգործական, կրթական ու այլ կուլտուրական հաստատութիւնները. մի խօսքով, այն ամեն հիմարկութիւնները, որոնք նպաստում են մի ազգի բարգաւաճման, նրա սեփական կուլտուրայի զարգացման գործին: Թող այդ ազգը ոչ մի տեղ չըկազմէ մեծամասնութիւն, թող չունենայ, կամ ունենայ տէրրիտօրիա, թող ցրւած լինի ամբողջ պետութեան զանազան անկիւններում,—նա պէտք է դիտւի իբր մի ազգային և կուլտուրական ամբողջութիւն, ունենայ իր ազգային տեղական ու կենտրոնական խորհուրդները և հաստատութիւնները և այլն: Իսկ այդ բոլորի համար նրան պէտք է զաւառը, նահանգը—կամ աւտօնօմ շրջանը մաս հանէ իր բիւջէի կուլտուրական գործին ներկած մասից, համաձայն այդ ազգի անդամների թւի, որպէս զի այդ ընդհանուր բիւջէն չը գործադրւի միայն ախրող, մեծամասնութիւն կազմող ազգի կուլտուրական առաջադիմութեան համար, այլ այդ շրջանում ապրող բոլոր ազգերի:

Ազգային աւտօնօմիան այդ մտքով հոմանիշ է լինում ազգային—կուլտուրական աւտօնօմիային: Բայց այդ դէպքում իրա-

ւունքով նկատում են, որ օրէնսդրական շրջանը բոլորովին աչքաթող է լինում: Իսկ կարճ է արդեօք մի ցրւած ժողովուրդ իր սեփական—ազգային օրէնսդրութիւնը որոշելու յաւակնութիւնն ունենալ: Ամենեւին: Ինչպէս մի անդամ էլ ասացինք, ժամանակակից տնտեսութիւնն ունի յղկող, հարթացնող բնոյթ իր մի մասով, իսկ միւս մասով էլ նա տանում է դէպի սպակեհարօնացում: Իրաւական որոշ նօրմաներ անպայման ընդհանրանում, կենտրոնանում են ոչ միայն մի շրջանում, այլ և մի խոշոր պետութեան նստում են ոչ միայն մի քանի դրացի պետութիւններում, նոյն իսկ ամէջ,* նոյն իսկ մի քանի դրացի պետութեան համար (միջազգային օրէնքներ բողջ քաղաքակիրթ մարդկութեան համար (միջազգային օրէնքներ դիպլօմատիայի, պատերազմի, կարմիր խաչի վերաբերմամբ և այլն):

Մի ցրւած ազգ, ոչ մի տեղ սեփական տէրրիտօրիա չունեցող, չէ կարող սպասել, որ իրան կը տան սեփական—ազգային օրէնսդրական իրաւունք: Օրէնսդրութիւնը պէտք է արդիւնք լիտուրական, ազգային և այլն): Շրջանի տէրը կազմող բոլոր ժողովուրդն է, որ ունենալու է ամբողջ տէրրիտօրիայի համար պարտադիր օրէնսդրութեան իրաւունքը, իսկ ցրիւ եկած փոքրամասնադիր օրէնսդրութեան իրաւունքը, պիտի ենթարկւի օրէնսդրութիւնը, լինելով այդ շրջանում մնած, պիտի ենթարկւի օրէնսդրութիւններ—յառկապէս իրաւական այն նօրմաները, որոնք վիճարկուած են ազգային կեանքի ամենախնաւիմ կողմերին, սերտ կերպով կապւած են ազգային հողերանութեան և ազգային պաշտամունքի հետ **):—Մահմէդականներն այդպիսի օրէնքներ և ծէսեր շատ ունեն, հրէաների մէջ այդպիսի օրէնքներ են ամուսնական օրէնքները և այլն: Ահա միայն դրանք են առանց տէրրիտօրիայի ազգերի պահպանելիք օրէնսդրական իրաւունքները:

*) Վ. Ժարօտինսկին, յայտնելով այդ միտքը («Хроника Еврейск. Жизни» շաբաթաթերթի №25-ում երև. 8), օրինակ է բերում գերմանական քաղաքացիական ընդհանուր կողէկսը, որ մտցւեց ամբողջ կայսրութեան մէջ 1894-95 թւերին: Այդ օրինակը չափազանց անյարմար է, որովհետեւ գերմանական կայսրութեան ազդեցութիւնը բաղկացած է մի ազգից, մի լեզուով և մի հաստատուութիւնները դեռ շատ կը կենտրոնանան. նրանց ֆէդերացիան դեռ շատ կը մօտենայ ունիտարիզմի:

**) Вл. Жаботинский—«Наши Задачи» (Хрон. Евройск. Жизни № 25)

Բայց այդպիսի օրէնսդրական չնչին իրաւունքները չեն կարող ընդհանուր նշանակութիւն ունենալ «անհոգ» ազգերի բազմը վճռելու գործում: Նրանց կարող է հալածանքներից ու անարդար ճնշումներից փրկել միայն ազգային կամ կուլտուրական ւաւոծումիան և երկրում տիրող ընդհանուր իրաւակարգը:

Այդ անասկէտից ուսուսոց-դէմօկրատիայի ծրագրի հոչակաւոր Զ-րդ կէտը բաւական մեծադղորդ, բայց անորոշ, կամայական ու դատարկ է: «Պետութեան կազմի մէջ մասած բոլոր ազգերին իրաւունք տալ ինքնորոշելու», ասում է այդ կէտը: «Ինքնորոշելու», այսինքն ինչ: Այդ բանի տակ կարելի է հասկանալ ամեն ինչ—նոյն իսկ բաժանելու, մի ուրոյն պետութիւն կազմելու իրաւունքը, և՛ ւաւոծումիան, և՛ Ֆէդէրացիան, և տեղական ինքնավարութիւնը, և՛ կուլտուրական սահմանափակ ինքնորոշումը, և՛... ոչինչ... Սօցիալ դէմօկրատիան, որ ւնչքան աւատ է բացատրութիւններ, բացատրութիւնների բացատրութիւններ, նրանց էլ կօմէնտարիաներ տալու, ինչո՛ւ ւնչքան ժլատ է հանդիսացել այդ կարեւոր կէտի բացատրութեան վերաբերմամբ:

Մի քիչ աւելի որոշ է հրէական ազգային սօցիալ-դէմօկրատիայի կամ Բուճդի պահանջը—«ամեն մի ազգի կուլտուրական ինքնորոշման» իրաւունքը: Կուլտուրական ինքնորոշումը մենք արդէն տեսնք. դպրոց, թատրոն, ընկերութիւններ և, առհասարակ այն բոլոր հաստատութիւնները, որոնք ծառայում են մի ազգի ազգային գոյութիւնը պահպանելու, նրա ուրոյն կուլտուրան զարգացնելու, բեզմաւորելու գործին:

Եթէ կուլտուրական ինքնորոշումը վերցնենք լայն մտքով, նրա մէջ կը մտնեն նաև օրէնսդրութիւնը, քաղաքականութիւնը, դատարանը, վարչութիւնը, զօրքը, և այլն, որովհետև դրանք բոլորն էլ մի ազգի ներքին կեանքը որոշող ֆակտօրներն են: Մակայն պէտք է նկատել, որ Բուճդն ամենևին այդ լայն մտքով չէ գործածում «կուլտուրա» բառը, այլ միայն նեղ—«մտաւոր և հոգեկան կուլտուրայի» մտքով, զլխաւորապէս դպրոցական, գրական, թատրոնների, ընկերութիւնների ւաւոծումիան է ըմբռնում նա այդ ասելով *):

*) Գ. Պասմանիկը (Сіонизмъ или Сеймизмъ, гл. V) անարդար կերպով կծու քննադատութեան է ենթարկում Բուճդի ծրագրի այդ կէտը, որը բնական արդիւնք է հրէական ազգի ցրած վիճակի:

Բուճդի այդ պահանջը քննադատութեան է ենթարկել լեհական սօց-դէմօկրատիայի կողմից, որը 1906-ի սկզբներում կայացրեց հետևեալ իմաստուն որոշումը. «Բուճդի ներկայացրած ազգային-կուլտուրական ւաւոծումիայի պահանջը չէ բղխում պրօլետարիաւի շահերից», ուրեմն, եզրակացնում է այդ ուղղահաստ մարքսիստ կուսակցութիւնը. «ս-դէմօկրատիան չը պէտք է դնէ իր ծրագրում ազգային-կուլտուրական ւաւոծումիա» *): Կը նշակէ լեհական սօց-դէմօկրատիան դէմ է ազգերի կուլտուրական ինքնորոշման: Ի՞նչ է ուրեմն ուսական ս-դէմօկրատիայի ծրագրում յիշւած «ազգերի ինքնորոշման» իրաւունքը:

Երկրորդ քննադատը Բուճդի այդ պահանջի, հանդիսանում է հրէական գրող Փարօտիսակին. «Գիտասպօրայում հրէաների անէ հրէական գրողութիւնը արտայայտում է գլխաւորապէս ոչ թէ հրէական գրողների ու գրականութեան ճնշումով, այլ քաղաքական կան արտաքսման մէջ: Այդ բոլորին ոչ մի պատասխան չէ տալիս Բուճդի պահանջը գալրոցների և թանգարանների ւաւոծումիայի վերաբերմամբ» **): Այս քննադատութիւնն արդէն չափազանց անարդար է, որովհետև Բուճդի ծրագրում կան և ընդհանուր քաղաքական ու սօցիալական պահանջներ, որոնք պիտի ստեղծեն իսկական դէմօկրատիական իրաւակարգ և այդ իրաւակարգը պիտի վերացնէ հրէաների ու միւս հալածւած ազգերի տանջանքները:

Բուճդի և ս-դէմօկրատների այդ «ազգային ինքնորոշման» և «կուլտուրական ազգային» ինքնորոշման դէմ միայն այն կարելի է ասել, որ ուս բիւրօկրատիան այժմ էլ տալիս է դպրոցների, թանգարանների, թատրոնների ու բարեգործական, հնագիտական այդ ընկերութիւնների ւաւոծումիան... Իս գուցէ, միանալով հաստատուն իրաւակարգի ու տեղական ինքնավարութեան հետ, լիապէս կը բաւականացնէ հրէական գիտասպօրային Ռուսաստանում, բայց այդ ամենը չեն բաւականացրել Իրլանդիային, Աւստրիայի ազգերին, լեհերին, լատիշներին, մալթրուներին, վը-

*) Д. Пасманикъ—Сіонизмъ или Сеймизмъ, гл. V
**) Вл. Жаботинский—«Наши Задачи» (Хрон. Евреской Жиз. № 25, стр. 7)

բացիներին, հայերին... Այդ ազգերը, բացի վերևում յիշատակներից, պահանջում են և մի այլ բան—օրէնսդրական ապակենտրոնացում, կամ քաղաքական ակտիւսմիա: Նրանք ուզում են ունենալ իրանց երկրներում իրանց սեփական պարլամենտները կամ սէյմերը, իրանց կառավարութիւնները, մինիստրներն ու կաբինէտները, իրանց դատարանները...

Ի միջի այլոց ասենք, որ շատերը դատարանի խնդրում ազգութեան իրաւունքը վեր են ածում ամբողջապէս միայն լեզուական հարցին և լուծում տալիս այսպէս. դատաւորը պէտք է գիտենայ տեղական լեզուներն ու բարբառները: Սակայն դա հարցի լիակատար լուծումը չէ՝ ոչ միայն ազգութեան սկզբունքի, այլ գլխաւորապէս արդարադատութեան խելացի կազմակերպութեան տեսակէտից: «Լաւ դատելու համար, ասում է Ժարօտինսկին, դատաւորը պէտք է իմանայ ոչ միայն տեղական ազգաբնակչութեան լեզուն, այլ և նրա կենցաղը, նրա հողին, նրա առանձնայատուկ տրադիցիաները, նրա յատուկ ցաւոտ կողմերը» *): Այդ պահանջն աւելի զգալի է, ի հարկէ, դատաստանական ստորին ինստանցիաներում, ուր քննւում են մանր ընդհարումներ, որոնք սերտ կերպով կապւած են հասարակ ժողովրդի ինտիմ զգացումների, սովորութիւնների և նիստ ու կացի հետ: Այդ պահառով է, որ ասում են թէ անհրաժեշտ է դատական ապակենտրոնացում, դատարանի ազգայնացում:

Նախ քան երրորդ տեսակի ակտիւսմիային (ազգ-երկրային) անցնելը, դեռ մի քիչ կանգ առնենք Բ. Շպրինգերի «ազգային ակտիւսմիայի» մի քանի բնորոշ կէտերի վրայ:

Շպրինգերը միակ գիտնականն է, որ պահանջում է իսկական ազգային ակտիւսմիա: Քննելով տէրրիտօրիալ ակտիւսմիայի սկզբունքը, Շպրինգերն ասում է. «զուտ տէրրիտօրիական սկզբունքն ամենազարհուրելի և ամենամանապատակաբարձր վճիռն է: Նա մեծամասնութեան կամայականութեանն է յանձնում ուրիշ ազգերի փոքրամասնութիւն կողմող անդամներին, որոնք ապրում են այդ մեծամասնութեան մէջ և ստիպում է նրանց կուսելու: Դա անվերջ կռիւների, յաւիտենական վէճերի սխտէմն է տիրապետութեան

համար» *), որովհետև «ամեն մի կենդանի էակ ունի իր իրաւունքը և կը պաշտպանէ այդ իրաւունքը»...

Շրջանային ակտիւսմիա մտցնելով, ազգային հարցը չի լուծւելի, այլ, ինչպէս տեսանք, կը վերածւի յաւիտենական կուսի և ինտերգիւների փոքրամասնութեան և մեծամասնութեան միջև: «Հարտերգները փոքրամասնութեան և մեծամասնութեան մէջ չէ, ասում է մեր հեջը կենտրոնացման կամ ակտիւսմիայի մէջ չէ, ասում է մեր հեջը ինչպէս (երես 25): Ազգային հարցը կարելի է լուծել իբր անձնական սկզբունք՝ ամենախիստ կենտրոնացման և ամենալայն ակտիւսմիայի ժամանակ:

Ազգային հարցի միակ լուծումն ազգային ակտիւսմիան է: Ամեն մի չափահաս անձ կը յայտնէ, թէ ինքն ինչ ազգութեան անդամ է համարում իրան. նրան կը ցուցակագրեն: Միևնոյն ազգի որոշ տեղի անդամները (դաւառի կամ գիւղի) կը կազմեն ազգային համայնքը, այսինքն «մի խմբակցութիւն կամ կօրպօրացիա, որն ունի իր հասարակական և մասնաւոր իրաւունքները հրատարակելու իր հասարակական և մասնաւոր իրաւունքները, ունենալու իր սեփական լու հրամաններ և նշանակելու հարկեր, ունենալու միաւորւած որոշ կապիտալները: Բնակավայրով և կուլտուրայով միաւորւած իրաւունքով համայնքներ կազմում են մի շրջան, նոյնանման իրաւունքներով: Բնորոշ շրջանները միասին կազմում են ազգը, և նա իրաւարանական անձնաւորութիւն է հասարակակալ և մասնաւոր իրաւունքի խնդրում»: (24 երես):

«Ամեն մի ազգութիւն կը գրազելի իր ներքին կարգաւորութիւնով, տնտեսապէս տարբեր ու հակադիր դասակարգերին սերտ կերպով իրար հետ շաղկապելով, կը ձգտի սեփական կրթութեան, ազգային զբաղանքներին և արւեստի զարգացման ու կատարելագործութեան»: (24 երես):

Իժբաղդարար հեղինակը չէ բացատրում, թէ ինչ է ուզում հասկանալ «տնտեսապէս տարբեր ու հակադիր դասակարգերին իրար հետ շաղկապելու ձգտել» ասելով: Հաւանօրէն նա ուզում է հասկանալ, որ այդ բոլոր դասակարգերն, իբր մի ազգութեան պատկանող, պիտի մի գպրոց, մի զբաղանքութիւն, մի արւեստ ունենան և այդ հարցերում համերաշխ լինեն: Ուրիշ կերպ անկարելի է տնտեսապէս հակադիր ու տարբեր դասակարգերն իրար հետ շաղկապել:

*) P. Шпрингеръ—«Государство и нація», եր. 25. (Издан. «Кадима» 1906 г.):

*) Вл. Жаб.—ibid.—երես 15

Այդպիսով՝ ամեն մի ազգութիւն, որքան էլ ցրիւ եկած լինի ամբողջ պետութեան մէջ, կը կազմէ մի ազգային ամբողջութիւն, որը կունենայ իր ընտրովի ազգային ներկայացուցիչ մարմինը, շրջանային և համայնական մարմինները: Դրանք պիտի վարեն ազգի բոլոր գործերը: Սակայն՝ հեղինակին ընդունում է, որ պետութիւնն ունի իր համապետական շահերն ու հարցերը, որոնք պէտք է մնան կենտրոնական իշխանութեան ձեռքում: Որոշ տէրրիտօրիան—շրջանը, նահանգը կամ դաւառն էլ ունեն իրանց տեղական շահերը, որոնք վերաբերում են ամբողջ ազգաբնակչութեան, առանց ազգային խտրութեան: Այդ անտեսական և սօցիալական շահերն «ընդհանուր են բոլոր ազգերի համար և աւելի զօրեղ են, քան ամեն տեսակ ազգային զգացումները, նրանք միացնում են աւատրիական բոլոր ժողովրդներին, որոնք, ի հարկէ, անտեսապէս կախւած են իրարից» (երես 27): Բայց հանելով համապետական ու տեղական բոլոր հարցերը, կրկին կը մնան որոշ խնդիրներ, որոնք պէտք է արեն ազգերի վարչական և օրէնսդիր օրգաններին, իբր ազգային հարցեր:

Ուրեմն՝ «տէրրիտօրիալ սկզբունքի ժամանակ անհնար են փոխադարձ զիջումները և իրաւահաւասարութիւնը. նա կը բերէ միայն կռիւ և հալածանք, որովհետեւ դա իսկապէս տիրապետութիւն է... Այդ սկզբունքը պարունակում է իր մէջ մի անսիրտ դաւաճանութիւն իր ազգի ցրւած փոքրամասնութիւնների վերաբերմամբ և անխնայ տիրապետութիւն ուրիշների փոքրամասնութեան վրայ՝ յօգուտ հին ունևոր դասակարգերի: Նա կապում է ազգային միտքը կալածատիրական գաղափարների հետ, և այդպիսով դառնում է բոլորովին հակազգային»: (21 երես) Դրա դէմ միակ միջոցն է կարգաւորել ազգային հարցը «անձնական և ոչ տէրրիտօրիալ սկզբունքով. ազգերը կազմակերպւում են ոչ թէ իբր տէրրիտօրիաների տիրապետողներ, այլ իբր մարդկանց ընկերակցութիւններ, ոչ իբր պետութիւններ, այլ իբր ժողովրդներ»... ազգի ամեն մի զաւակ պետութեան բոլոր մասերում օգտւում է իր ազգի պաշտպանութիւնով և կրում նրա բեռն ու պարտականութիւնները» (երես 22): Կարօլինգների պետութեան մէջ տասից աւելի ազգեր ապրել են այդպէս, իրանց սեփական իրաւունքով, այժմ՝ նոյն այդ ազգային—անհատական սկզբունքն իշխում է Արևելքում, ուր Եւրոպացիները և ուրիշ պետութիւն-

ների անդամներն օգտւում են իրանց սեփական օրէնքներով, դրաւորոցներով և այլն: Շպրինգէրի բերած այդ օրինակները, ճշմարիտ է, եղել են կամ կան այժմ էլ, բայց անտեսապէս շատ սատր կրկնւելով լինելով, նրանք չեն կարող ծառայել իբր օրինակ ներկայ կուլտուրական պետութիւնների համար:

Այդպիսի կազմակերպութիւն տալուց յետոյ (պետական, շրջանային և ազգային), Շպրինգէրը թողնում է ապագային որոշելու այդ 3 տեսակի օրգանների իրաւաստութեան ճշգրիտ սահմանները: Բայց նրա արած մի քանի փորձերն այդ մասում և մանրները: Բայց նրա արած մի քանի փորձերն այդ մասում և մանրները: Բայց նրա արած մի քանի փորձերն այդ մասում և մանրները: Բայց նրա արած մի քանի փորձերն այդ մասում և մանրները:

Այսպէս, ամեն անգամ նա պարզ շեշտում է, որ ազգութիւնը մի «մտաւոր և հոգեկան» միութիւն է: Ուրեմն՝ ազգային ինքնավար օրգանների իրաւաստութեան սահմանները պէտք է որոշուել հէնց այդ շրջանում. դպրոց, զրադարան, թանգարան, զբոսայգի, հէնց այդ շրջանում. դպրոց, զրադարան, թանգարան, զբոսայգի, հանութիւն, լեզու, թատրոն, բարեգործութիւն և այլն, և այլն— ահա ազգային մարմինների իրաւաստութեան սահմանները, եթէ, ի հարկէ, ուզենանք հետևողական լինել: Եւ Շպրինգէրը հետևողական է. նա էլ, փորձելով բաժանել պետական, շրջանային և ազգային օրգանների ֆունկցիաներն, ոչ դպրոցական համայնքները ոչ այլ ինչ են, եթէ մանրամասնօրէն որոշում է ներ» (երես 35): Եւ ապա բաւական շրջանի խորհուրդներում, փոքրամասնութեան իրաւունքները և այլ մտաւոր-կուլտուրական հաստատութիւններում:

Վերջապէս, այդ բոլորից յետոյ, նա իր միւս, աւելի սօլիդ աշխատութեան մէջ ազգային հարցի վերաբերմամբ, վճռաբար յայտնում է. «Դա չէ նշանակում, որ տէրրիտօրիալ սկզբունքը կեղծ և անպէտք է: Ընդհակառակը. նա ազգային գաղափարի վերջնական պօստուլատն է, նա նրա տրամաբանական լրացումը կամ հետևանքն է: Տէրրիտօրիալ սկզբունքն ազգային պետութեան սկզբունքն է, իսկ դա պետական այն ձևն է, որն ամենից նւազ ներքին

կան շահերի տեսակէտից միակ ձեռնտու կառավարական ձևն է ազգ-երկրային աւտօնօմիան:

Ազգ-երկրային աւտօնօմիա ասելով, մենք հասկանում ենք հետևեալը: Ամեն մի ազգ պէտք է ունենայ իր սեփական բնակավայրը, իր տէրրիտօրիանս: Բնակավայր չունեցող ազգերն էլ ազգ են, ճշմարիտ է, բայց նրանք դատապարտուած են վերջ ի վերջոյ կուլ գնալու, ձուլելու տեղական ժողովրդների հետ: Եւ այդ ձուլումն այն ժամանակ աւելի արագ առաջ կը գնայ, երբ իսկական ազատ կարգեր գոյութիւն կունենան, երբ ազգային հալածանքը կը վերանայ: Եւ կլանուած կամ ասսիմիլացիան կը կատարուի ֆիզիքական ճանապարհով—ամուսնութիւնների միջոցով և իսկական կուլտուրական բարձրութեան, կուլտուրական կլանման և ոչ բռնի միջոցով, հալածանքներով...

Կլանման վտանգից, զոնէ դեռ շատ երկար ժամանակ, զերծ են այն ազգերը, որոնք ունեն որոշ բնակավայր և որոշ կուլտուրա, ազգային ինքնազիտակցութիւն:

Սեփական բնակավայրի (հայրենիքի) շրջանում ազգն ունենալու է քաղաքական աւտօնօմիա. իր սեփական վարչութիւնը, իր պարլամէնտը, իր մինիստրութիւնը, իր դատարանները և այլն. ի հարկէ այդ ամենը պէտք է կանխորոշուած լինին վերևից, համապետական պարլամէնտից, Սահմանադիր ժողովից: Համապետական գործերը պէտք է լինեն կենտրոնական իշխանութեան ձեռքում, որը և պէտք է իրաւունք ունենայ, պետական ընդհանուր շահերը պահանջած դէպքում, որոշ փոփոխութիւնների ենթարկել այդ շրջանին տուած աւտօնօմ իրաւունքները:

Ինչ կասկած, որ այդ շրջանում ապրող փոքրամասնութիւն կազմող ազգերի իրաւունքները պէտք է ապահովուած լինեն կենտրոնական իշխանութիւնից կանխորոշուած կամ տրուած հիմնական օրէնքների, ընդհանուր սկզբունքների մէջ:

Իր հայրենիքում, իր տէրրիտօրիայի վրայ այդպէս ամեն մի ազգութեան ինքնորոշումն ապահովելուց յետոյ, առաջ է դալիս մի ուրիշ հարց: Ներկայումս չը կայ քիչ ու շատ կուլտուրական որ և է ժողովուրդ, որը ցրուած չը լինի այս ու այն երկրներում, դիասպորաներ չունենայ: Իսկ այդ ցրուած մասերն ամեն տեղ կազմում են փոքրամասնութիւն: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. եթէ մեծամասնութիւն կազմէին, կը նշանակէր, որ դա իր բնակավայրն

է: Իր ներկայ հայրենիքը: Պատմական անցեալում այս ինչ երկիրն այս ինչ ժողովրդինն է եղել... դա այժմ համարեա նշանակութիւն չունի. ներկայումս թիւն է դեր խաղացողը:

Ի՞նչ անել այդ ցրուած, իր հայրենիքից դուրս ապրող փոքրամասնութիւնները. թողնել նրանց բաղդի կամքին. թողնել, որ կտրուած միան իրանց ազգի մեծամասնութիւնից և միշտ կլանելու վտանգի մէջ:

Ահա այդտեղ արդէն տէրրիտօրիալ սկզբունքը, Շարինգէրի ասածի պէս, բռնակալ, ճնշող դեր կը կատարէ: Եթէ XVI դարում, կրօնական պատերազմների ժամանակ և նրանից անմիջապէս յետոյ ընդհանուր լօղունգ էր դառել—«ու՛մ երկիրը, նրա էլ կրօնային ընդհանուր սկզբունքն էլ պահանջում է. «ու՛մ երկիրը, նրա էլ ազգութիւնը»: Այդ դաժան սկզբունքի դէմ մրցելու համար, տէրրիտօրիալ քաղաքական աւտօնօմիայի վրայ պէտք է աւելացնել նաև «ազգային-կուլտուրական աւտօնօմիա»:

Ինչպէս որ Միացեալ-Նահանգներում և կուլտուրական այլ երկրներում եկեղեցին է կազմակերպուած, աւտօնօմ կերպով վատարուում է իր բոլոր գործերը, այնպէս էլ պէտք է ազգը, իր սեփական երկրից դուրս, կազմակերպուի և վարէ իր բոլոր ազգային-կուլտուրական գործերը: Ամեն տեղ, ամեն շրջանում փոքրամասնութեան իրաւունքը պէտք է ապահովուած լինի հիմնական օրէնքներով ու սահմանադրութիւններով. նրա լեղուն, նրա դաւանանքները, նրա սովորութիւններն ու ծէսերը, նրա դպրոցը, թատրոնները, նրա սովորական ընկերութիւնները և այլն, նը, ամեն տեսակի կուլտուրական ընկերութիւններից պէտք է լիովին ազատ լինեն որ և է կողմնակի միջամտութիւնից: Փոքրամասնութիւնը իրաւունք պէտք է ունենայ ստանալու երկ-Փոքրամասնութիւնը իրաւունք պէտք է համար նշանակուած բաժնի բիւջէի կուլտուրական նպատակների համար նշանակուած բաժնից իր մասը, համեմատ իր անդամների թւի, և կամ պէտք է թողնել, որ այդ փոքրամասնութեան ազգային կազմակերպութիւնը հարկեր դնէ կուլտուրական նպատակներով (դպրոց, լեզու, թատրոն և այլն):

Ահա թէ ինչ ենք հասկանում մենք ազգ-երկրային աւտօնօմիա ասելով:

Հայ ժողովրդի ներկայ վիճակը պահանջում է յատկապէս այդ երրորդ տեսակի աւտօնօմիան: Երևանի նահանգը, Զանգեզուրը, Շուշու գաւառը, Զիւլաճիքի մի մասը (Սաչէնը), Գանձա-

կի գաւառի լեռնային մասը, Ղազախի գաւառի մի մասը, Լօռին, Ախալքալաքի գաւառը և Ախալցխայի գաւառի մի մասը (հաշուում եմ մօտաւորապէս) կազմում են այսօր հայերի բնակավայրը, նրանց երբեմնի ընդարձակ հայրենիքի մի կտորը: Այդ շրջանները կարելի է դիտել հայկական աւտօնօմիայի բնական շրջաններ, իսկ դրանցից դուրս, ամբողջ Ռուսաստանում ցրւած հայութիւնը պէտք է միացնել կուլտուրական աւտօնօմիայի տեսակէտով:

Վրաստանն էլ (ոչ պատմական, այլ ներկայ Վրաստանը) կարող է ունենալ իր աւտօնօմիան և իր ցրւած փոքրամասնութիւնների կուլտուրական-աւտօնօմիան:

Թաթար ցեղի անպայման բնակավայրն է այսօր Կուրի և Երասխի հովիտների մի մասը. այդ ընդ որ տափարակները (Մուղան և այլն) բռնւած լինելով Թաթար ցեղով, կարող են կազմել նրա երկրային աւտօնօմիան, կրկին, ի հարկէ, տարով նրան, իր փոքրամասնութիւնների վերարբմամբ, կուլտուրական աւտօնօմիա:

Կարելի է այդ ձևով միայն կազմակերպել Կովկասը: Դա կունենայ իր յարմարութիւնները, իր առաւելութիւնները և թերութիւնները: Այդ մասին մենք կը խօսենք հետեւելով զլսում, ֆէ-դէրացիայի առիթով:

Ռուսաստանում զործող կուսակցութիւններից ճախակողմեան բանակի ճնշող մեծամասնութիւնը (մանաւանդ սօցիալիստականները) կողմնակից ին աւտօնօմիայի գաղափարին:

Այսպէս՝ սօց.-յեղափոխականները պահանջում են. «Հաստատել դէմօկրատիական հանրապետութիւն, շրջանների և քաղաքային ու գիւղական համայնքների լայն աւտօնօմիայով (երկրային սկզբունք): Հնար եղածին չափ լայն կերպով գործադրել ֆէդէրատիվ սկզբունքն ազգութիւնների յարաբերութիւններում: Ճանաչել ազգութիւնների անպայման իրաւունքն ինքնորոշելու (ազգային կուլտուրական աւտօնօմիա) *):

Ռուսական սօցիալ-դէմօկրատիական բանւորական կուսակցութեան կենտրոնական օրգանը («Искра») բաւական կտրուկ ու համարձակ կերպով է խօսում այդ հարցի առիթով:

«Պրօլէտարիատի գործը չէ քարոզել ֆէդէրալիզմ և ազգա-

*) Сборн. Программъ политич. партій въ Россіи. Выпускъ 1-երես 20.

յին աւտօնօմիա) *): Այդ պարզ նախադասութիւնից յետոյ էլ ինչ բացատրութիւն ուզում են թող տան յարգելի սօցիալ-դէմօկրատներն իրանց հռչակաւոր 9-րդ կէտքին. «Բոլոր ազգերը, որ մըտնում են պետութեան կազմի մէջ, ունենալու են ինքնորոշման իրաւունք»: Ինչ բացատրութիւն կուղեն տան այդ ֆրազին, այլ ևս չի օգնի. նրանք դէմ են աւտօնօմիայի և ֆէդէրացիայի գաղափարին, նրանք Ռուսաստանում «Աւերտար պետութեան» պաշտպաններ են (օրէնսդրական կենտրոնացում):

Բունդի տեսակէտը մեզ արդէն ծանօթ է. նա, յարմարելով հրէական ազգի Ռուսաստանում ունեցած վիճակին, իբր ազգային սօցիալ-դէմօկրատական կուսակցութիւն, պահանջում է իր ազգի համար «կուլտուրական-ազգային ինքնորոշում»: Այդ իր պահանջըն է, յատկապէս յարմարեցրած իր սեփական ազգի վիճակին: Բայց Բունդը հիմնականապէս դէմ չէ օրէնսդրական ապակենտրոնացման կամ քաղաքական աւտօնօմիայի երկրային սկզբունքին: Նա նոյն իսկ այդ երկրային կամ տէրրիտօրիալ մտքով է բացատրում առհասարակ «ազգային ինքնորոշման» իրաւունքը:

«Այդ իրաւունքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ ազգի իրաւունքն իր քաղաքական կեանքի ձևն ինքը որոշելու: Յատկապէս այդ տեսակ կոմպրոմիսներն են դրել միջազգային սօցիալիստական սակ բովանդակութիւն են դրել միջազգային «Ինքնորոշում» թէզիսի մէջ: Քաղաքական կեանքի ինչ ձև էլ որ լինի, պահանջում է իր գոյութեան համար յատուկ տէրրիտօրիա, որի վրայ ապրում է տրւած ազգը: Կը նշանակէ, «Ինքնորոշման» իրաւունքն աչքի առաջ ունի տէրրիտօրիա ունեցող ազգերին**):

Բունդը խոստովանւում է տէրրիտօրիալ սկզբունքի կարելուութիւնը (ինչպէս և Շպրինգերը), բայց խօսմ չէ կարող հող չունեցող իր ազգի համար հողային սկզբունք պահանջել... Դա կը լինէր միանգամայն անիրազործելի մի պահանջ, մի ուտօպիա:

*) «Искра»-ի թւերը, այդ ցիտատը մենք տեսել ենք Նօվոթորժսկու «Ազգային Հարցը, աւտօնօմիա և ֆէդէրացիա» գրքի կից—երես 22. «Յառաջ»-ի զրադարան:

**) „Вѣстникъ Бунда“ № 1—2 „Национальность и ассимиляция“, եր. 8 (վերջրել եմ—„Гос. и Нац.“ գրքոյկին կցած Ժաբօինսկու յառաջարանից—երես 6)

Ուկրաինայում էլ գործող արմատական և սօցիալիստական կուսակցութիւնները պահանջում են ազգ-երկրային աւտօնօմիա: Պրօֆէսսօր Գրուշեւսկին գրում է. «Պետական նոր կազմի ըսկրզոււնքներից մէկն էլ լինելու է ազգ-երկրային աւտօնօմիայի սկզբունքը:

Այդ բանն իրականացնելու համար, ազգային սկզբունքը պէտք է դուրս իբր հիմք տէրբիտօրիալ-համայնական բոլոր կազմակերպութիւնների համար, սկսած զիւղական համայնքից» *):

Այդտեղից պարզ է, որ Գրուշեւսկին պահանջում է յարմարեցնել բնակավայրը նրա վրայ ապրող ժողովուրդի ազգութեանը. այսինքն աւտօնօմիա տալ որոշ շրջանում ապրող մի որոշ ազգի, որն այդ երկրի, այդ շրջանի բնիկ ժողովուրդն է, նրա վրայ կազմում է մի տիրող մեծամասնութիւն: Դա տէրբիտօրիալ սկզբունքն է: Մի այլ տեղ պրօֆէսսօր Գրուշեւսկին պարզ խօսում է նաև զուտ ազգային սկզբունքի մասին:

Ուկրաինացիները պէտք է պահանջին «լայն իրականացում ազգ-երկրային և շրջանային աւտօնօմիայի—և ապահովացում բոլոր ժողովուրդների ազգային իրաւունքների թէ նրանց բնակավայրերում և թէ նրանցից դուրս» **):

Բայց թողնենք պրօֆ. Գրուշեւսկուն, անցնենք Ուկրաինայի սօցիալ-դէմօկրատիային: Այստեղ էլ դրւում է նոյն հասունացած պահանջը, նոյն ճակատագրական անհրաժեշտութիւնը. «Բայց և Ուկրաինայի Սօցիալ-դէմօկրատիան, ասում է Դ. Պասմանիկը, հակառակ ուստական սօց.-դէմօկրատիայի ցէնտրալիստական միտումների, կողմնակից հանդիսացաւ ճնշերկայ պետութիւնը վերածելու ազգ-երկրային միութիւնների», կընշանակէ նա կողմնակից է նաև Ուկրաինայի աւտօնօմիային, իր համար յատուկ օրէնսդրական սէյմով»: ***)

Երկարացնենք ակտորք է և ձեռքի տակ չունեմ էլ բոլոր կուսակցութիւնների ծրագիրները, քաղաածօրէն առաջ բերելու համար: Ազգերի ազգ-երկրային աւտօնօմիա են պահանջում Ուկ-

*) „Национальный вопрос и Автономія“, „Украинскій Вѣстникъ“ երկշարածրթերթ, № 1 երես 15, 1906 թ.

**) „Украинскій Вѣстникъ“, № 3, երես 151 1906 թ.

***) „Еврейская Жизнь“ ամսագիրը, 1906 թ. № 6, եր. 100

րալինայի միւս սօցիալիստական կազմակերպութիւններն էլ: Նոյնըն են պահանջում և լեհերը, թէ Բ. Բ. Տ-ը, թէ Լեհաստանի և Լիթւանյի սօցիալ-դէմօկրատիան, թէ Լատիշները սօցիալ-դէմօկրատիան ու սօցիալ-դէմօկրատիայի միութիւնը. նոյնն են պահանջում և չ. Յ. վրացի ֆէդէրալիստները, վերջապէս նոյնն է պահանջում և չ. Յ. Դաշնակցութիւնը:

Չախաղողմեան բուրժուական կուսակցութիւնները-կազմուները և ուրիշները, այս հարցում էլ ինչպէս և բոլոր քաղաքական սկզբունքային խնդիրներում, մտավախութիւն են արտայայտում. նրանք ուզում են, օրինակ, Լեհաստանի, աւտօնօմիան, իսկ տոււ. նրանք ուզում են, որիմակ, Լեհաստանի, աւտօնօմիան, իսկ տոււ. նրանք չըջաններինը—ոչ. այդ շրջանները, նրանց կարծիքով, զեռ համիւս շրջաններինը—ոչ. այդ շրջանները, նրանք իրանց ծրագրում սունացած չեն աւտօնօմիայի համար: Նրանք իրանց ծրագրում ան (յօդ. 25 և 26), իսկ միւս շրջանները մասին բարեհաճում են ան միայն ասել. «Քաղաքացիական ազատութեան իրաւունքները հասմիայն ասել. «Քաղաքացիական ազատութեան իրաւունքները կանոնաւոր ներտատելուց և սահմանադրական իրաւունքներով կանոնաւոր ներկայացուցչութիւն մտցնելուց յետոյ, ամբողջ Ռուսական պետուկայացուցչութիւն մտցնելուց յետոյ, համապեթեան համար պէտք է իրաւական ճանապարհ բացել, համապետական օրէնսդրութեան կարգով, հաստատելու տեղական աւտոնօմիա և շրջանային ներկայացուցչական ժողովներ, որոնք իրաւունք ունենան որոշ հարցերում, համաձայն ազգարնակութեան ւունք ունենան որոշ հարցերում, համաձայն ազգարնակութեան պահանջի, մասնակցելու օրէնսդրական իշխանութեան իրակաւացմանը» (յօդ. 24):

Այս մանւածապատ ու զիտաւորիալ կերպով մթնացրած ֆրադէօլօգիան առաջացել է նրանից, որ պ. պ. կաղէտները չեն ուզեցիլ, օրինակ, կովկասին, Ուկրաինային կամ Բալտեան ուղեցիլ, օրինակ, կովկասին, Ուկրաինային կամ Սիբիւրին խոստանալ աւտօնօմիա, ոչ շրջաններին, Ուրալին կամ Սիբիւրին խոստանալ աւտօնօմիա, ոչ ըովհետև նրանք զեռ հասունացած չեն *). պէտք է թողնել, որ հասունանան և ապագայ ազատ Ռուսաստանի կենարծնական պարլամէնտից հայցին աւտօնօմիա, օրէնսդրական իրաւասութիւններ լամէնտից հայցին աւտօնօմիա:

*) Թէև այդ «հասունացած չեն» բառը չը կայ նրանց ծրագրում, բայց 1905 թ.ի սեպտ. ամսին Մոսկուայում կայացած գեմադային և քաղաքային գործիչների կաղէտական ժողովում այդ բանը ըստ պարզ արտայայտած է: (Տես արձանագրութիւնը):

հանցն է... ոչ աւելի... չը լինի թէ ազգի ինտելիգէնտ, ղեկավար տարրերը քարոզեն ժողովրդին, ժողովուրդն ասէ լոկ բառերով, բայց ղեռ դա նրանում պահանջ դարձած չը լինի:

Ահա բուրժուազիայի մանեօվրները: Սակայն՝ ի՞նչ կարելի է պահանջել մի կուսակցութիւնից, որը «ժողովրդական ազատութեան» անունն է կրում իր վրայ, բայց որն իր ծրագրում պահանջում է ուսական մի և անբաժան բանակ և այդ բանակի ու նաւատորմի համար մի լեզու՝ ուսերէնը... (յօդ. 23): Դեռ չեմ յիշատակում ազրարային և բանուրական կիսատ-պատտ պահանջները... *):

Այն ինչ հարցը շատ պարզ է: Ամբողջ Ռուսաստանում ամեն տեղ որոշ ազգութիւններ ապրում են որոշ տէրրիտօրիանների վրայ. պէտք է զբանց բոլորին էլ տալ ազգ-երկրային աւտօնօմիա և իրար հետ կապել Ֆէդէրատիվ հիմքերով: Մնում են միայն երկու շրջաններ, ուր ազգաբնակութիւնը բաւական խառն է. զբանք են՝ Կովկասը և Օստղէյեան շրջանը: Այդ մասերում էլ պիտի ջանալ կրկին իրականացնել ազգ-երկրային աւտօնօմիան, միայն մանր և զուտ ազգային կանտօններով, տեղական կամ շրջանային Ֆէդէրացիայի սկզբունքով, որի մասին խօսելու ենք հետեւալ գլխում:

*) Մեր ձեռագիրն արդէն տպագրում էր, երբ երկայ կողէտների պաշտօնականօրդան՝ „РБЧБ“-ի վերջին հ ո չ ա կ ա լ ո թ յօդածը, (1907թ. ապր.) որի մէջ դէմ է խօսում նա ևլ եհաստանի աւտօնօմիային... Կողէտները երկրորդ Պետական Դումայում, 5—6 շաբաթ տատանելուց յետոյ Սցիլլայի և Պարէքզայի միջև, կարծես արդէն ընկել են Կրուշեանների և Պուրիշկէիչների բազուկների մէջ: Լիբերալիզմն առնասարակ ամեն տեղ սնանկ է յայտարարում, իսկ Ռուսաստանում «գեմակի լիբերալիզմի» անծայր շատախօսութիւնը, որ տպաւորութիւն էր գործում ցենզուրա եղած ժամանակներում, այժմ՝ մամուլի ամենաշնչին ազատութեան նշույնների հետ միասին, ցոյց տւեց իր տափակութիւնը և կեանքի նոր պահանջներին բաւարարութիւն տալու անընդունակութիւնը: Երևաց, որ նոյն իսկ Մ. Կաւարսկիու և ուրիշների նման տաղանդաւոր դիտակականներ միայն Գ զասակարդի, բուրժուազիայի իդէօլօգներ լինել կարող են. աշխատաւոր գիւղացիութեան և բանուրութեան շահերն օտար են նրանց համար, խորթ են նրանց սրտերին: Լեհաստանի աւտօնօմիան օրւայ անհրաժեշտ պահանջ է այնտեղի աշխատաւոր գիւղացիութեան և պրօլետարիատի: Սակայն նա դէմ է «իսկական ուս մարդկանց», մանր ու խոշոր ուս բուրժուազիայի շահերին: Եւ կողէտներն, իբր բուրժուաներ և բուրժուազիայի իդէօլօգներ, անշուշտ պէտք է վերջ ի վերջոյ դէմ դնային Լեհաստանի աւտօնօմիայի գազափարին... ու արդէն սկսել են:

Դա է միակ ուղին: Ազգութիւնների հարցը ճակատագրական մի հարց է, որ ալէկոծում, գոսացնում է Աւստրիայի ներքին կեանքը: Նա վճռարար եկել կանգնել է Ռուսաստանի առջև իր արիւնտ կերպարանքով ու թարմ վէրքերով: Նա կամ բոււարար լուծում կըստանայ, կամ կը քայքայէ Ռուսաստանը: Պրօլետար և աշխատաւոր գիւղացիութեան, այդ երկու հակայատարիատի և աշխատաւոր գիւղացիութեան, այդ երկու հակայատար պատկարգերի շահերը պահանջում են շուտ վերջ դնել այդ կան դասակարգերի շահերը պահանջում են շուտ վերջ դնել այդ կան դասակարգերին ու անտագօնիդիսներին, բաւարար լուծում ազգային կուլիւններին ու անտագօնիդիսներին և պայմանների հատմեն ազգ զարդանայ իր ընդունակութիւնների և պայմանների համեմատ, արտազրէ իր սեփական կուլտուրան, և, որ գլխաւորն է, որպէսզի բանուր և աշխատաւոր գիւղացիութիւնը հնար ստանայ այլևս ժամանակ, նիւթական միջոցներ և արիւն չը կորցնելու այդ հարցի առիթով, այլ իր բոլոր ուժերը լարէ կուրու իրան կեղեհարցի առիթով, այլ իր բոլոր ուժերը վաճառականների և վաշքող հողատէրերի ու կապիտալիստների, վաճառականների և վաշքող խառուների դէմ, յարթէ նրանց և արագացնէ սօցիալիստական կարգերի գործադրութիւնը:

Այն, աշխատող դասակարգերի օգուտը պահանջում է որքան կարելի է շուտ վերացնել քաղաքական բռնակալութիւնը և հիմնել դէմօկրատիական հանրապետութիւն, որքան կարելի է շուտ վերջ տալ ազգային անտագօնիդիսներին և հաստատել ազգերի աւտօնօմիա և աւտօնօմ ազգերի Ֆէդէրացիա, որպէսզի վերանան անտագօնիդիսները և նա արագ տէմաշխատաւոր մեծամասնութեան խոշընդոտները և նա արագ տէմապով առաջ մղէ իր զուտ դասակարգային կռիւր կեղեքիչներին, յաւելիւ արժէքով ապրող դասակարգերի (բէնտօրներ և կապիտալիստների) դէմ՝ սօցիալիզմի անունով:

Սօց.-դէմօկրատիան (ուսական) արդում է, թէ «պրօլետարիատի գործը չէ քարոզել Ֆէդէրալիզմ և ազգային աւտօնօմիա»: Իսկ մենք կասնք—դա պահանջում է նրա շահը: Այսօր ազգային անտագօնիդիս տանջողներն իսկապէս այդ երկու դասակարգերն են, որովհետև զօրք տուող նրանք են, արիւն թասակարգերն են, որովհետև զօրք տուող նրանք են, նրանց դասափողը նրանք են, հարկեր վճարողները նրանք են, նրանց դասալարգային կռիւն է խանգարում այդ անիծեալ հարցի պատճառով: Կեղեքիչ դասակարգերի շահը պահանջում է երկարատեւ ներկայ խառը վիճակը, ներկայ տարամերժ քաղաքականութիւնը, ներկայ, խառը վիճակը, ներկայ տարամերժ քաղաքականութիւնը, որովհետև այդ միջոազգային ու ազգամոլական հալածանքները, որովհետև այդ միջո-

ցով կարելի է զբաղեցնել բանւորներին և աշխատաւոր գիւղացի-
ութեանը, կարելի է խանգարել նրանց գասակարգային կռիւը,
միջնացնել նրանց գիտակցութիւնը, ցոյց տալով բանւորին և բուր-
ժուային, տիրոջն ու ծառային մի ազգի զաւակ, միասին հալած-
ւող, ուրեմն՝ միևնոյն շահերն ունեցող:

Մերժել ազգութեան ըէէլ շահերը, կրկնումենք, կուրութիւն
է. նրանք կան և հրամայական են, յաճախ նոյն իսկ աւելի զգա-
լի ու պահանջկոտ են քան գասակարգային շահերը: Աշխատաւոր
ժողովուրդը չէ կարող արհամարհել այդ հարցը: Նա պէտքէ արա-
զացնէ նրա յաջող լուծումը գոնէ իր շահերի խաթրու, իր սեփա-
կան փայլուն ապագան արագացնելու համար:

Աւտոնոմիան զանազան երկրներում: Մեր ասածներն աւելի ևս
պարզարանելու համար, առաջ բերենք մի քանի երկրների աւտո-
նոմիաների նկարագրութիւնը: Իբր լոկ նմուշներ, մենք նախ հա-
մառօտակի առաջ կբերենք անգլիական գաղութների, ապա աւս-
տրիական շրջանների և մասամբ Էլզաս-Լոտարինգիայի աւտոնո-
միաները կամ նրանց ներքին կազմակերպութիւններն ու յարա-
բերութիւնները պետութեան կենտրոնական իշխանութեան հետ:

Անգլիական գաղութները: XV դարում օսմանեան թիւրքերը
վերջնականապէս տիրեցին Բալկանեան թերակղզուն, Արշիպէլա-
գոսի բոլոր կղզիներին, Սիրիային և այլն: Իրանով Միջերկրական
ծովի բոլոր ջրերը, իտալիայից զէպի արևելք, ընկաւ նրանց ձեռ-
քը: Եւրօպացիների առջև սկզբներում մեծ խստութեամբ փակւեց
հարուստ արևելքի ուղին, և նրանք ստիպւած եղան հնարներ մը-
տածել՝ զտնելու արևելքի, մանաւանդ Հնդկաստանի համար նոր
ծովային ուղիներ: Վասիլո-դէ-Գամայի և Կօլումբոսի գիւտերը հան-
դիսացան իբր թագ ու պսակ այդ փորձերի ու մտածմունքների:
Բացւեցին նոր ուղիներ զէպի նոր-նոր երկրներ: Որքան նաւա-
գնացութիւնը զարգանում, որքան Եւրօպայի և Հնդկաստանի,
Եւրօպայի և Ամերիկայի միջև յարաբերութիւնները շատանում
էին, այնքան Անգլիան աւելի նշանակութիւն էր ստանում ծովի
վրայ: XVII և XVIII դարերում մենք նրան տեսնում ենք արդէն
տարածւած, բազմաթիւ գաղութների տէր: XIX դարում նրա գա-
ղութներն այնքան են աճում, որ նա դառնում է աշխարհի ամե-
նամեծ և ամենաբազմամարդ քաղաքակիրթ պետութիւնը:

Անգլիական գաղութային քաղաքականութիւնն այսօր խիստ
զարգացած, խիստ խոհեմ մի քաղաքականութիւն է, որը սակայն
զարգացել է աստիճանաբար: XVIII դարում անգլիական կառա-
վարութիւնը իր գաղութներում վարում էր խիստ բռնակալ քա-
ղաքականութիւն, որի արդիւնքն եղաւ Միացեալ-Նահանգների
բաժանւելը: Այդ դարի վերջերում և XIX-ի սկզբներում Անգլիա-
յին սպառնում էր անարյաման քայքայում, եթէ նա շարունակելու
լինէր իր գաղութային բռնակալ քաղաքականութիւնը:

Բարեբաղդաբար անգլիական քաղաքական գործիչները խրատ-
ւեցին պատմութեան տւած դասերից և փոխել սկսեցին իրանց յա-
րաբերութիւնները զէպի գաղութները: Ֆրանսիական յեղափոխու-
թեան և առաջին կայսրութեան շրջանում (1789—1815 թ.) ամ-
թեան և առաջին կայսրութեան շրջանում (1789—1815 թ.) ամ-
բողջ Եւրօպան, ընկնելով անընդհատ ու աւերիչ պատերազմների
մէջ, աչքաթող արեց իր գաղութները, ընկաւ անտեսապէս. իսկ
Անգլիան, ընդհակառակը՝ ձեռք բերեց նոր գաղութներ և, որ գըլ-
խաւորն է, աստիկ զարգացրեց իր առանց այն էլ զարգացած ար-
տաղրութիւնը: Այդ խառնակ շրջանը վերջնաւուց յետոյ, անգլի-
ական ապրանքներն սկսեցին հեղեղել ամբողջ երկրագունդը. նը-
րանք ամենից աւելի շատ էին, ամենից աւելի էժան: Այդ ապրանքները
ւած և, որ էականն է, ամենից աւելի էժան: Այն ինչ գաղութա-
պահանջում էին նոր ու նոր, լայն շուկաներ: Այն ինչ գաղութա-
յին հին քաղաքականութեան շնորհով բաժանւել էին (1777-ին)
հազին գաղութը... 1837-ին պայթեց ստորին կամ Ֆրանսիական
Կանադայի ապստամբութիւնը: Երկրում կամայականօրէն գործում
էին նահանգապետը, նշանակովի օրէնսդիր խորհուրդը և ժողո-
վրդից իբր թէ ընտրւած՝ օրէնսդիր ժողովը *):

Տնտեսական անհրաժեշտութեան և պատմութեան տւած դաժան
դասին միացաւ նա և Ֆրանսիական յեղափոխութեան արդեցու-
թեան տակ ծնած ու զարգացած թարմ հոտանքն Անգլիական
կեանքում, որի արդիւնքներն էին կրօնական վերածութիւնը,
բանտերի բարենորոգումը, բարեգործութեան եղանակի վերակազ-
մութիւնը, պարլամէնտական ներկայացուցչութեան ըէֆօրմը,
Չարտիզմը և ալլն, և այլն: Այդ հասարակական վերածնութիւնը

*) В. Вильсонъ — „Государство“ երես 382, պարագրաֆ 1014

չէր կարող չազդել նաև գաղութային քաղաքականութեան վրայ: Եւ ազդեց

Կանադայի ֆրանսիական մասի ապստամբութիւնն սպառնում էր կտրել Անգլիային Ամերիկայից: Սակայն Անգլիան այստեղ այն դիրքը չը բռնեց, ինչ որ բռնել էր 1776-ին Միացեալ Նահանգների ապստամբների վերաբերմամբ: Անմիջապէս Կանադա ուղարկեց արքայական կօմիսար լորդ Դուրհամը, որին յանձնարարեց գնալ և զիջողութիւններ անել, վերջ տալ ապստամբութեանը, կատարելով տեղացիների պահանջները: Նա իրան խիստ անզոր չազնեց Կանադայում, վարելով չափազանց մեղմ (այն ժամանակի տեսակէտով) ապստամբների հետ. նրան յետ կոչեցին: Լորդ Դուրհամը մանրամասն զեկուցագրեր ներկայացրեց, որոնցով յայտնում էր, որ այդ գաղութը փրկելու միակ միջոցն է տալ նրան լիակատար ատօնօմիա, Անգլիային վերապահելով իրաւունք միջամտելու երկրի գործերում միայն այն հարցերում, որոնք պարզ ու անմիջական կերպով դիպչում են ամբողջ պետութեան շահերին: Եւ 1847 թւին Կանադային տրւում է պատասխանատու անկախ կառավարութիւն *):

Առաջին և ամենադժուար քայլն արւել էր: Այնուհետև կամայ-կամայ այդ նոյն իրաւունքները տրւեցին և միւս հասունացած գաղութներին: 1854-ին լիակատար ատօնօմիա տրւեց աւստրալական Վիկտորիա գաղութին, նոյն թւին Լօնդօնի Պարլամէնտը շնորհեց Կանադայի զուտ ֆրանսիական և զուտ անգլիական երկու մասերին ճիշտ այնպիսի կառավարական օրգաններ, որպիսիք կան Անգլիայում, բայց ազգութիւններով տարբեր այդ երկու շրջաններն անհնար եղաւ հաշտեցնել և կեանքը դնել իր նօրմալ ընթացքի մէջ, մինչև որ 1867 թւին Պարլամէնտը չը հրատարակեց «Անգլիական Հիւսիսային-Ամերիկայի օրէնքը», որով կառավարւում է „Dominion of Canada“ կամ «Կանադայի Պետութիւնը» մինչև օրս: Այդ օրէնքի համաձայն, ազգութիւններով տարբեր երկու շրջաններն ստացան իրանց ներքին լիակատար ատօնօմիան և կազմեցին մի դաշնակցական ամբողջութիւն, մի «ոչ-գերիշխան» պետութիւն:

Հետաքրքրականն այն է, որ այդ օրէնքը մշակել է Կանադա-

*) Вильсонъ—„Государство“. Երես 383.

յի Սահմանադիր ժողովը և առաջարկել Լօնդօնի Պարլամէնտի հաստատութեանը, իսկ պարլամէնտն ընդունել է առանց որ և է փոփոխութիւն մտցնելու: Ճիշտ նոյնը կատարեց 1900 թւին աւստրալական Ֆէդէրացիայի մշակած սահմանադրութեան առիթով. մշակել էին աւստրալացիները (բոլոր 6 գաղութի ներկայացուցիչները), պարլամէնտն ընդունեց մի ամենաչնչին ու աննկատելի փոփոխութիւնով, չը նայած որ ջինգօիզմի և իմպէրիալիզմի արտայայտիչ Չէմբէրլէյնն ուզում էր մտցնել մի քանի կարևոր փոփոխութիւններ:

Սակայն այդ բոլոր օրէնքները կամ ակտերը մասնակի, տեղական ընաւորութիւն ունեն. նրանք վերաբերում են այս կամ այն գաղութին: Հարկաւոր էր մի որոշ ակտ կամ օրէնք, որը միօրինակութիւն մտցնէր գաղութներում—ի հարկէ—որքան հընարաւոր էր:

Պէտք է ասել, որ անգլիացիները շատ էլ միօրինակութեան ետեւից ընկնող չեն. նրանք յարմարեցնում են իրանց օրէնքները գաղութների միջավայրին ու հանգամանքներին:

Մի քիչ միանմանութիւն ներմուծող ակտ է հանդիսանում և ակտը վերջնականապէս որոշում և զգալի կերպով լայնացնում է գաղութային օրէնսդիր հիմնարկութիւնների իշխանութիւնը *):

Համաձայն այդ ակտի 2-րդ յօդուածի «գաղութի այն օրէնքը, որը որ և է բանով հակառակ է կամ կարող է հակառակ լինել պարլամէնտի այդ գաղութի համար սահմանած ակտի յօդունել և լաճներին, կամ հակառակ է այդ ակտի համաձայն արւած որ և է հրամանի կամ որոշման,—գաղութային այդ օրէնքը պէտք է նստեցնուի կամ արժանի այդ ակտին, հրամանին կամ որոշմանը, և, նայելով անհամաձայնութեան աստիճանին, և ոչ այլ կերպ, պիտի լինի ու մնայ բոլորովին առանց օրինական ուժի»:

—Յօդուած 3-րդ. «Գաղութի ոչ մի օրէնքը չը պէտք է լինի կամ համարել առանց ոյժի, այն պատճառով, որ նա համաձայն չէ անգլիական օրէնքին,—միայն եթէ նա չէ հակասում վերևում յիշուած պարլամէնտական ակտի որ և է յօդուածին, հրամանին կամ որոշմանը»:

*) А. В. Дайси—«Основы госуд. права Англии. Երես 119:

—Յօդւած 5-դ. «Ամեն մի գաղութի օրէնսդիր հիմնարկութիւն պէտք է ունենայ իր իրաւասութեան սահմանում լիակատար իրաւունք հիմնելու դատարաններ, ոչ զատելու և վերականգնելու նրանց, փոփոխելու նրանց կազմը և ոչնչացնելու դատավարութեան կարգը: Եւ ամեն մի ներկայացուցչական օրէնսդիր հիմնարկութիւն իր իրաւասութեան տակ եղած գաղութի վերաբերմամբ պէտք է լիակատար իրաւունք ունենայ հրատարակելու այնպիսի օրէնքներ, որոնք վերաբերում են այդ իսկ օրէնսդրական հիմնարկութեան կազմութեանը, իրաւունքներին և գործելակերպին, միայն այն պայմանով, որ այդ օրէնքները հրատարակեն այն ձևով և այն եղանակով, որ պահանջում են պարլամէնտական ակտերը, պատէնտը, արքայական հրամանները, որոնք տրւած են լինելու խորհրդի մասնակցութեամբ, կամ այն ձևով, որ պահանջում են այդ ժամանակ նոյն գաղութում գործող գաղութային օրէնքերը»:

Իրանք են անդլիական ինքնավար գաղութները ղեկավարող սկզբունքները:

Այդպիսի աւտօնօմ գաղութները հետեւեալներն են. Կանադայի Ֆէդէրացիան, Աւստրալիական Ֆէդէրացիան, Նիւ-Փաուուդլէնդը, Նոր Զելանդիան, Կապի գաղութը և Տրանսվալը: Այդ բոլոր գաղթավայրերում օրէնսդրական իշխանութիւնն իրապէս բոլորովին անկախ է այն բոլոր հարցերում, որոնք անմիջապէս չեն շօշափում ամբողջ կայսրութեան շահերը: Իսկ այդ անորոշ նախադասութիւնը, մենք տեսանք, ինչպէս է որոշում 1865-ի գաղութային օրէնքների ակտը:

Ամեն մի գաղութի օրէնսդիր մարմին լիակատար ազատութիւն ունի իր ներքին գործերում: Նա սահմանում է այնպիսի օրէնքներ, որոնք կարող են նման չըլինել Անգլիայում գործադրող օրէնքներին, նոյն իսկ հակառակ լինել նրանց, միայն թէ նրանք զէմ չըդնան այդ գաղութի համար յատկապէս գրւած օրէնքներին: Եթէ որեւէ օրէնք, հրատարակւած, օրինակ, Կանադայում, զէմ եղաւ 1867-ի «Անգլիան Հիւսիսային Ամերիկայի օրէնսդրական ակտին», և եթէ պատահաբար նահանգապետը հաստատել է, դատարանը կարող է ապօրէն ճանաչել այդ օրէնքը, չըգործադրել, ապացուցանելով նրա հակասութիւնը պարլամէնտի տւած ակտի հետ:

Փոխանակ վերացական ձևով սկզբունքները պարզելու, մենք

կը վերցնենք, օրինակ Աւստրալիայի 6 զաշնակից գաղութները և նրանց օրինակի վրայ, փաստացի կը պարզենք, թէ ինչպէս են կառավարում անգլիական աւտօնօմ գաղութները, ինչ իրաւասութիւններ ունեն նրա օրէնսդիր օրգանները և ինչ յարաբերութեան մէջ են նրանք մէտրօպօլի կամ Լօնդօնի կառավարութեան հետ:

Աւստրալիական ներկայ Դաշնակցութիւնն իր մէջ պարունակում է նախկին 6 անկախ գաղութները—Հարաւային Նոր Վալլիս, Ալիկտօրիա, Քինսլանդ (Կլինսլանդ), Հարաւային Աւստրալիա, Արևմտեան Աւստրալիա և Տասմանիա: Այդ գաղութներից 3-4-ն աւտօնօմիա ստացան 19-դ դարի կէսում, իսկ միւսները մի քանի տարի յետոյ: Նրանց լիակատար աւտօնօմիան այսօր սահմանափակելի յետոյ: Նրանց լիակատար աւտօնօմիան այսօր սահմանափակւում է երկու կողմից—թէ իբր Անգլիայի գաղութներ, թէ իբր Աւստրալիական Միացեալ Նահանգների անդամ: Այդ սահմանափակումներից առաջինը մենք այժմ կը տեսնենք, իսկ երկրորդը՝ դաշնակցական սահմանափակումը մենք կը տեսնենք հետեւալ զէսում, երբ կը խօսենք Ֆէդէրացիայի մասին:

Նահանգներից ամեն մէկն ունի իր նահանգապետը և իր սահմանադրութիւնը: Նահանգապետը նշանակւում է Լօնդօնի կենտրոնական իշխանութիւնից—«Թագի կողմից», ինչպէս ընդունւած է ակտի: Նա գաղութում կատարում է նոյն դերը, ինչ որ թագաւորն Անգլիայում. նա «թագաւորում է», բայց «չէ կառավարում»: Իսկական կառավարողը մինիստրութիւնն է կամ մինիստրների կարինէտը:

Բայց նախ քան այդ նկարագրութեանն անցնելը, մի րօպէ կանդ առնենք մի կարևոր սկզբունքի վրայ: Փրանսիայում, Բէլգիայում, Իտալիայում և մայր ցամաքի միւս պետութիւններում բոլոր պարլամէնտները հասարակ օրէնքներ սահմանելու իրաւունք ունեն, ընթացիկ կեանքի վերաբերմամբ, նրանք իրաւունք չունեն սովորական օրէնսդրական ճանապարհով փոխել իրանց երկրի հիմնական օրէնքները կամ սահմանադրութիւնը—ոչ ընդհանրապէս, ոչ էլ մասնակի: Սահմանադրութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու համար անհրաժեշտ է, օրինակ, Փրանսիայում՝ հրաւիրել Ազգային ժողով (սէնատը և շամբրը միացած), որն անպատճառ պիտի հեռանայ Պարլիմէնտի իր

անգամ անդամներ ի կէս մասը հերթով հեռանում են և նրանց տեղը նորերն են ընտրում:

Ստորին պալատը կամ «Օրէնսդիր ժողով» ամեն տեղ աւելի բազմամարդ է, քան վերինը և աւելի ազդեցիկ: Բոլոր աւստրալական գաղութներում՝ Ստորին պալատի պատգամաւորներն ընտրում են բոլոր չափահաս ազգաբնակիւթիւնից (թէ կին, թէ տղամարդ) միայն երկու տարով: Ընտրել կարող են հինգ գաղութում միայն այր մարդիկ, առանց խտրութեան, անանց որևէ ցէնզի—բաւական է որ չափահաս լինեն: Մի նահանգում, այն է Հարաւային Աւստրալիայում, կանայք էլ կարող են ընտրել պատգամաւոր թէ վերին և թէ ներքին պալատներ ի համար:

Բոլոր վեց նահանգներում էլ օրէնսդիր ոչ մի ժողով պատգամաւոր չեն կարող ընտրել գաղութի վարձու պաշտօնեաները և այն անձերը, որոնք որևէ կապալ ունեն վերցրած գաղութի վարչութիւններից:

Թէ վերին և թէ ստորին ժողովների համար ընտրած պատգամաւորներն ստանում են ոտճիկ, որի չափը Տասմանիա նահանգում մօտ 1000 բուրլի է տարեկան, իսկ Վիկտորիայում, Նոր Հարաւային Վալլիսում և Քլինսլէնգում մօտ 3000 բ. է, մնացած երկուսումն էլ՝ վրանց միջև: Երկու պալատների էլ անդամների ոտճիկները բոլոր 6 գաղութներում հաւասար են:

Բուն Անգլիայում բանոր և ազքատ մարդկանց համար պատգամաւոր ընտրելու դէպքում ապրուստի հարցը հանդիսանում է մի անպարտելի արդելք: Սօցիալիստական բոլոր կուսակցութիւններն Անգլիայում, նոյն իսկ Վիգերից շատերը, վաղուց է պահանջում են պատգամաւորներին ոտճիկ նշանակել, բայց չէ յաջողում: Միւս կողմից՝ թէ ամբողջը լուսաւոր աշխարհում, թէ նոյն Անգլիայում, վաղուց է որ պահանջ է դրւած կրճատել 4-5-6 տարի տեղոյ ժամանակամիջոցները օրէնսդիր ժողովների համար, իջեցնել 3 կամ երկու տարւայ, որպէսզի օրէնսդիր մարմիններն աւելի շուտ փոփոխւեն, աւելի ճշմարիտ արտայայտիչ լինեն ժողովրդի իսկական կամքի: Այդ և ուրիշ շատ գեղեցիկ կարգեր ու օրէնքներ արդէն իրականացել են աւստրալական գաղութներում, որոնք, առհասարակ, հանդի-

սանում են իբր աշխարհի առաջնակարգ գէմօկրատիական շքի շանները *):

Այսպիսով՝ անգլիական գաղութներն ունեն մի պետութեան յատուկ բոլոր ֆունկցիաները, բացի բացարձակ զերիշխանութիւնից: Նրանք ունեն մի տէրրիտօրիա, մի ժողովուրդ, սեփական իշխանութիւն, սեփական վարչութիւն և օրէնսդիրութիւն, սեփական դօրք, նոյն իսկ նաւասօրմ. պակասում է միայն բացարձակ զերիշխանութիւնը, հրամայելու իրաւունքը, առանց միջամտութեան, առանց սահմանափակման:

Անգլիական միւս գաղութները, որոնք կրում են «Արքայական գաղութներ» անունը, կառավարւում են նշանակովի փոխարքայներով կամ նահանգապետներով, որոնք ունենում են իրանց մօտ ներով կամ նահանգապետներով, որոնք ունենում են իրանց մօտ կամ նշանակւած, կամ ժողովրդից ընտրւած, կամ խառը (և նշակւած, և ընտրւած) օրէնսդիր, խորհրդատու և այլ ժողովներ: Նակւած, և ընտրւած) օրէնսդիր, խորհրդատու և այլ ժողովներ: Կան գաղութներ էլ, որոնց մէջ տիրում է զինւորական դրութիւն:

Առհասարակ՝ երբ Անգլիան ձեռք է բերում մի նոր երկիր կամ մի նոր գաղութ, կազմակերպում է նրա ներքին կեանքը և, կամ մի նոր գաղութ, կազմակերպում է նրա ներքին կեանքը և, համաձայն երկրի ժողովրդի մտաւոր վիճակի և այլ հանգամանքների, տալիս է տեղական կառավարութեան որոշ ձև, սկսած զինւորական գրութիւնից, մինչև տեղական բացարձակ աւստոնօմիան:

Եւ Անգլիական գաղութային այդ ազատամիտ քաղաքակա-նութիւնն, սկսած 1850-ական թւականներից՝ դեռ ոչ մի վատ հետեանք չէ տեսլ պետութեան համար: Տնտեսական երկաթէ շահերը և ինքնապաշտպանութեան գործը բոլոր գաղութներին կասերը են հզօր մայր երկրի հետ: 1900-1902 թւերին, երբ Բօէրները պատերազմը բաւական նեղն էր լծել Անգլիայի կառավարու-

*) Ով ուզում է մանրամասն տեղեկութիւններ աւստրալական գաղութների մասին, թող դիմէ հետեւեալ աղբիւրներին, բացի ծանօթութիւններում մեր մշտածներից. 1) Мижуевъ—„Передовая демократия современнаго мира“, նոյնը—„Образование Соед. Штатовъ Австр.“ նոյնը—„История колоніальной имперіи и колон. полит. Англ.“, Піеръ Леруа—„Болье—„Новыя Англо-Саксонскія Общества“. Генри де-Уокеръ—„Развитіе австралийской демократіи“, Діонео—„Очерки консти-туцій британскихъ колоній“, և այլն: Կան նաև բաւական թւով մանր 3—10 կօպէկանոց բրօշուրներ այդ մասին:

թեանը, աշխարհը վկայ եղաւ, թէ ինչպէս Կանադան ու Աւստրալիայի տեղական կառավարութիւններն առաջարկում էին իրանց դրամն ու զօրքերը մէտրոպօլի տրամադրութեան տակ դրնել բօէրներէ ղէմ... Աւստօսօմիայի թշնամիները, որոնք կարծում են թէ աւստօսօմիան պառակտող, պետութեան ներքին կապերը թուլացնող դեր միայն կարող է կատարել, — լաւ կը լինէր, որ դաս առնէին անգլիական գաղութների տւած այդ փայլուն օրինակից:

Աւելորդ չէր լինի յիշատակել նաև, որ Իրլանդիան էլ ձրդտոււմ է ունենալ իր տեղական աւստօսօմիան, իր «հօմ-րուլը»: Եթէ Աւստրալիան բաժանուած է Անգլիայից հազարաւոր վերստերով, իրլանդական ժողովուրդն էլ բաժանուած է անգլիականից իր ազգութիւնով, իր լեզուով, իր կրօնով, իր տնտեսական պայմաններով և իր պատմական անցեալով: Անգլիական հալածանքն Իրլանդիայից կը վերանայ կամ չափազանց կընւազի, երբ նրան կը տրուի իր ցանկացած աւստօսօմիան:

Աւստօսօմիան աւստրիական երկրներում: Պետական իրաւագիտութեան մէջ Աւստրիան կոչոււմ է «շրջանների պետութիւն» կամ Ländersstaat, այսինքն՝ մի պետութիւն, որը բաղկացած է զանազան երկրներից. դրանք Աւստրիական նախկին գքսութեան կամ Մարկգրաֆութեան գրաւած երկրների մնացորդներն են (Բօհէմիա, Կարինթիա, Գալիցիա, Տիրոլ, և այլն): Մի ժամանակ շատ էին այդ երկրները, բայց նրանցից մի քանիսն ազատւեցին, միւսներն ընկան Պրուսիայի, Իտալիայի և այլ պետութիւնների ձեռքը, և Աւստրիան փոքրացաւ: Սակայն նրա կազմը, նրա էութիւնն իբր պետութեան, չը փոխւեց. նա մնաց «շրջանային» կազմով: Աւստրիան աճել է իր երկրների միութիւնից, որը պայմանաւորւած է եղել և է միապետի անձի միութիւնով: Մարիա Թէրէզայի ժամանակ վարչութեան մէջ մտցւեց մի բէֆօրմ, որով մինչև այդ ժամանակ գերմանական և չէխական ժառանգական երկրների իրաւաբանօրէն ինքնուրոյն բարձր իշխանութիւնները միացան և դարձան մի ամբողջութիւն. այդ տէրրիտօրիաներն են, որ յետոյ սկսեցին պահել իրանց գոյութիւնն իբր շրջաններ (Länder): Սակայն նրանք իրանց այդ բնոյթը պահպանեցին Աւստրիայի սահմանադրական կեանքի բոլոր փոփոխութիւնների ժամանակ էլ

սկսած 1860 թւից, այնպէս որ Աւստրիան, իր պետական իրաւական զարգացման շնորհով, հանդիսանում է շրջանների կամ երկրների պետութիւն, մի առանձին աեսակի Ֆէդէրացիա, որը պետական իրաւունքի տեսակէտից մեզ հասկանալի կը լինի միայն այն ղէպերով, երբ մենք կը պարզենք մեզ համար մինչև այժմ անյայտ մնացած «շրջանի էութիւնը» *):

Մարիա Թէրէզայի, նրա որդի Յովսէփ II-րդի և ուրիշների օրով, սկսած XVIII-րդ դարի առաջին կէսերից, Աւստրիայի ներքին վարչութիւնն սկսեց ընկնել Սակայն այդ անկումն աւելի աքքին վարչութիւնն սկսեց ընկնել: Սակայն այդ անկումն աւելի աքքին ընկնեց Սրբազան Դաշնակցութեան ոգին կազմող, Եւրօպայի բազայալ Սրբազան Դաշնակցութեան ոգին կազմող, Եւրօպայի բազայալ Սրբազան Մէտօէրնիխի օրով: Բիւրօկրատիզմն այնքան աճեց, բռնապետութիւնն այնքան զօրացաւ, որ պետութիւնն ընկաւ ուժասպառութեան դուռը, և Պրուսիան կարողացաւ Սաղօվայի մօտ (1866-ին) ջարդ ու փշուր անել աւստրիական աւելի բազմաթիւ զօրքը, վերջնականապէս դուրս բշել Աւստրիան գերմանական դաշնակցութիւններից և հիմնել Հիւսիսային Գերմանական Նոր Դաշնակցութիւններից և հիմնել Հիւսիսային Գերմանական Նոր Դաշնակցութիւն, որի մէջ մտնում էին 22 պետութիւն 36-ից:

Աւստրիան հասել էր կործանման դուռը, և նրան այդտեղ հասցնողը ներքին բիւրօկրատիական բռնապետութիւնն էր, ինչպէս Ռուսաստանում վերջին տարիներս: Հարսրուրդների պետութիւնը քանդոււմ, կործանոււմ էր և միայն իր ժամանակին ձեռք առած խելացի բէֆօրմները փրկեցին նրան:

Այդ բէֆօրմներն ունեն բաւական լայն ինքնավարական և աւստօսօմիատական ոգի. նրանք ձանաչեցին հպատակ ազգերի աւստօսօմիատական ոգի. նրանք ձանաչեցին աւստօսօմ իրաւունքները: Կամ, աւելի ստոյգ է ասել, երկրների աւստօսօմ իրաւունքները: Հրատարակեցին 1867 թւի գեկտեմբեր 9/21-ի հիմնական օրէնքները, կամ սահմանադրութիւնը, որի կազմողներն ամենայն իրաւունքով համողւած էին, որ երկրներին (Länder) տալով աւստօսօմ իրաւունքները, կը կապեն նրանց Աւստրիայի հետ, կը զօրացնեն պետութեան բոլոր մասերի ամբողջութիւնը: Եւ նրանց համոզումն ի դուր չէր. մինչև այդ աւստրիական սլաւօն ցեղերի մէջ պարզ հոսանք էր նկատոււմ ղէպի Ռուսաստան, ղէպի պանսլաւիզմ: Այդ ցեղերը, ինչպէս յաջող նկատոււմ է Կ. Կաուցկին, «յաճախ ծուռ մտքով ակնարկ-

*) Еллинекъ-«Право совр. госуд.» երես 440.

ներ էին նետում սահմանից այն կողմ, դէպի հիւսիս»: ներքին ինքնավարութիւնը, շրջանային աւստոսօմիան և ազդուեթիւններ լեզուն վերաբերող դեռ շատ թերի օրէնքը միանգամայն չքայրին այդ ամենը, ոչնչացրին Հարսուրդների պետութեան, այդ «Յրկրորդ Հիւանդ Մարդու» կործանման ու բաժանման վտանգը: Այդ դեռ քիչ է. Աւստրիան կարողացաւ պահպանել իր դիրքն ու պրէստիժն իրը մեծ պետութիւն:

1867-ի սահմանադրութիւնը ճանաչում է Աւստրիան իբր մի ամբողջ պետութիւն, որի մէջ «երկրներին» կամ շրջաններին տրբւած են լայն ինքնավարական և աւստոսօմիական իրաւասութիւններ: Ամբողջ կայսրութեան օրէնսդիր մարմինն է Բայսարածը, որ բաղկացած է «ազնականների ժողովից» (Herrenhaus) և պատգամաւորների ժողովից (Abgeordnetenhaus):

Ազնականների ժողովին մասնակցում են բոլոր արքայազները, որոնք և մեծամասնութիւն են կազմում նրանում, բոլոր արքեպիսկոպոսները, մի քանի պաշտօններ՝ վարող եպիսկոպոսները, բարձր ազնականութիւնը, որ ժառանգական իրաւունք է ձեռք բերել մշտապէս անդամ լինելու, և մինչև մահ նշանակւած անդամները, որոնց նշանակում է կայսրը, նկատի առնելով նրանց մատուցած յատուկ ծառայութիւնները պետութեանը, եկեղեցուն, զիտութեանը կամ գեղարւեստին *):

Պատգամաւորների ժողովը բաղկացած է «ժողովրդի» ներկայացուցիչներից, միայն հաւասար և ուղղակի ընտրութիւններ չը կան: Պատգամաւորների թիւը 425 է: Դրանց ընտրում է «ժողովուրդը», որը բաժանւած է 5 ծխերի կամ կուրիաների. 1) խոշոր կալւածատէրեր, 2) քաղաքներ և առևտրական կենտրոններ, 3) առևտրական պալատներ, 4) գիւղական համայնքներ և 5) «հինգերորդ ընդհանուր կուրիա», որի մէջ մտնում են նախընթաց չորս ծխերից ոչ մէկի մէջ չը մտածները, բոլոր խեղճերը — պրօլէտարները, բացի տան ծառաներից: Պատգամաւորներն ընտրւում են 6 տարով: Առաջին ծուխը տալիս է 85 պատգամաւոր, երկ-

*) В. Вильсонъ — „Государство“, Երևս 307, պարագր. 765, նաև Звъэдичъ — „Австрія“ („Госуд. строй и Полит. Партія“ գրքի կատորում):

րորդ և երրորդը միասին 137, չորրորդը 131, իսկ հինգերորդը 72 *): Մեր նպատակը չէ ծանօթացնել Աւստրիայի քաղաքական կազմի հետ. մենք այս մի քանի տեղեկութիւններն առաջ բերինք, որպէս զի պարզել շրջանների սէյմերի կամ Լանդտագների բնոյթը: Ամեն մի «երկիր» կամ շրջան ունի իր Լանդտագը կամ տեղական պարլամենտը, բաղկացած միայն մի պալատից: Այդ տեղական պարլամենտներն ունեն բաւական լայն օրէնսդրական տեղական պարլամենտներն ունեն բաւական լայն օրէնսդրական հարցեր, որոնք ամիրաւունքներ: Կան այնպիսի օրէնսդրական հարցեր, որոնք ամբողջովին կախւած են լանդտագներից. դրանք զուտ տեղական հարցեր են: Կան այնպիսի տեղական օրէնքներ, որոնք կարող են հրատարակել միայն ընդհանուր պետական օրէնքի կամ սահմանադրութեան զծած սահմաններում, օրինակ՝ դպրոցական օրէնսդրութիւնը: Կան և այնպիսի տեղական օրէնքներ, որոնք հանդիսանում են իբր լրացում և շարունակութիւն պետական օրէնքների, ինչպէս օրինակ՝ ջրարաշխութեան օրէնքները: Վերջապէս, կան այնպիսի օրէնքներ, որոնք էապէս մտնում են բայխարաթի իրաւասութեան մէջ, բայց վերջինս յանձնարարում է տեղական լանդտագին գործադրելու այդ իրաւունքը, օրէնքներ հրատարակելու այդ առիթով: Բայց այդ նոյնը կարող է պատահել և հասկելու այդ առիթով: Բայց այդ նոյնը կարող է պատահել և հասկակ ուղղութիւնով: լանդտագներն իրանց իրաւասութեան մի մասը կարող են յանձնել բայխարաթին իրականացնելու: Լանդտագները կամ սէյմերն իրաւունք ունեն խնդիրներ ներկայացնելու այս կամ այն օրէնքը, իբր օգտակար իրանց երկրի համար, հրատարակելու. նրանք իրաւունք ունեն բողոքելու կայսրին կամ նրա մօտ պառախրակներ անելու, և այլն, միայն նրանց արկայացնելու, հարցապնդումներ անելու, և այլն, միայն նրանց արգելւած է իրար հետ բանակցութիւնների մէջ մտնել, միմեան, դաշնակցել կամ կաղմակերպել: ինչպէս անում են անգլիական ինքնավարութիւնները:

Լանդտագներն իրաւունք ունեն հարկ դնելու տեղական պաշտպանութեան վրայ, միայն այդ հարկերը պետական ընդհանուր հարկերի 10%-ից աւել չը պէտք է լինեն: Դրանց մէջ չեն մտնում տեղական ինքնավարութեան տուրքերը:

*) Աւստրիայի ներկայ քաղաքական կազմի, նրա քաղաքական կուսակցութիւնների և ուժերի յարաբերութիւնները մասին իրատ ամիսի և առաջ տեսակետներով տեղեկութիւններ տալիս է Ս. Звъэдичъ-ը — „Австрія“ յօդւածով:

Ինչ ասել կուզէ, որ այդ աւտօնօմ շրջանները վայելում են և բաւական լայն ինքնավարական իրաւունքներ: Շրջանի վարչութեան տակ են գտնուում ժողովրդական առողջութեան, կրթութեան, բարեգործութեան գործերը, թատրոնը, հաղորդակցութեան ուղիները (միայն ջրանցքները) և այլն:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ տեղական ինքնավարութիւնը չէ մնում միայն շրջանի ձեռքում. շրջանը բաժանուում է շրջանակների (Kreise) և համայնքների, որոնք ունեն ընդ որ վերևույ յիշած իրաւունքները, միայն իրանց շրջանների սահմաններում:

Շրջանների սէյմերին կամ Լանդագմերին մասնակցում են մշտական կամ նշանակովի անդամները (կաթոլիկ եպիսկոպոսներ —ի հարկէ պաշտօնատար, արքեպիսկոպոսներ և, Բուկովինայում ու Դալմացիայում, յունական եկեղեցու նոյնաստիճանի պաշտօնեաները), համալսարանի վերատեսուչները կամ բէկտօրները և ընտրւած պատգամաւորները:

Պատգամաւորների թիւը ընդ շրջաններում միեւնոյնը չէ. ամենի համար առանձին որոշւած է իր շրջանին տրւած իրաւունքների կանոնադրութեան մէջ: Օրինակ՝ Բօհէմիայում 242 է, հաշուով և ի պաշտօնէ մասնակցողներին, Գալիցիայում 154 է, Ստորին Աւստրիայում 78, Տիրօլում 68, Չալցրուրգում 26 և այլն: Ժողովրդական պատգամաւորներն ընտրւում են հետևեալ չորս ծխերից կամ կուրիաներից. ա) խոշոր հողատէրերից, որոնք տալիս են Բօհէմիայում 70 պատգամաւոր, Գալիցիայում 44, Ստորին Աւստրիայում 16, Տիրօլում 14, Չալցրուրգում 5 և այլն. բ) առևտրական և արգինարերական պալատներից, որոնք տալիս են Բօհէմիայում 15, Գալիցիայում 3, Ստորին Աւստրիայում 4, Տիրօլում 3, Չալցրուրգում 2: Այդ պալատները պատգամաւորներ ընտրում են զբախից, ոչ իրանց միջից: գ) Քաղաքներից, ցուցահանդէսների և արգինարութեան վայրերից, որոնք տալիս են Բ.—72, Գալ. 23, Ստ. Աւստ. 34, Տիր. 13 և Չալց. 10 հոգի. դ) գիւղական համայնքները տալիս են Բօհ. 79, Գալ. 74, Ստ. Աւստ. 19, Տիր. 34 և Չալցր. 8 պատգամաւոր *):

Կանգ առնել ընտրական սխտէմի մանրամասնութիւնները

*) М. Горенбергъ—„Австрія“ (Полит. Энцикл.), գլուխ IV, երես 35 (Коронныя земли)

վրայ՝ աւելորդ է, որովհետև չափազանց բարդ է, շատ տեղ է պահանջում և խրատական ոչինչ չէ պարունակում իր մէջ: Առհասարակ Աւստրիական ընտրական սխտէմն, սկսած ըախսութիւններից մինչև շրջանային սէյմերի ընտրութիւնները անարդարութեան ուսլանդակութիւնների մի հիւսւածք է, որ ծնել է ֆէօդալական խոշոր մնացորդների, խոշոր բուրժուէ, որ ծնել է ֆէօդալական խոշոր մնացորդների, իսկ միւս աղիայի ու հոգեւորականութեան անարդարութիւնից, իսկ միւս աղիայի՝ ժողովրդների անկազմակերպ ու տհաս վիճակից *): Սակոյմից՝ ժողովրդների անկազմակերպութեան են եկել և կայն այժմ աղգերն ու ժողովրդները գիտակցութեան են եկել և հաւասար ընտրական իրաւունք են պահանջում: Բարօն Գաուշի մինիստրութիւնն արդէն զբեւ է ընդհանուր ընտրական իրաւունքի նախագիծը ըախսարատի տույն: Եթէ նոյն իսկ լեհական շխալքի նախագիծը ըախսարատի տարտան, գերմանական կարւածատէրերը և այլ խաւարամիտ տարրեր այս օր յաշողին խափանել այդ ծրագիրը, վաղը նա ուժի ճանապարհով կիրականանայ դարթնած ու բաւական կազմակերպւած բանւորութեան և աշխատաւոր գիւղացիութեան ձեռքով:

Վերադառնանք շրջաններին:

Շրջաններում գործադիր իշխանութիւնը կազմում է շրջանային կօմիտէն կամ Landesausschuss-ը, որի անդամների մի մասն ընտրւում է վերևում յիշւած 4 ծուխերի կողմից, իսկ մնացած մասը լանդտագի ընդհանուր ժողովից: Շրջանի վարիչ մարմինը դա է Դա է նոյնպէս շրջանի կայքերի և գոյքերի վերահսկիչը:

Լանդտագների նախագահներին և նրանց օգնականներին նըշանակում է կայսրը: Նա է բաց անում Լանդտագների նիստերը. նա էլ կարող է փակել յետաձգել և լուծել լանդտագները: Կայսրի համաձայնութիւնն անհրաժեշտ է այդ սէյմերի բոլոր գործողութիւններում **): Բայց, ինչպէս արդէն մենք տեսանք, շրջանին վերաբերող բոլոր հարցերում կամ նրանց ամենամեծ մասում անհրաժեշտ է նաև լանդտագների համաձայնութիւնը. նրանք են օրէնքներ որոշողները, միայն ոչ գերիշխանօրէն:

Լանդտագներն, այն, գերիշխան կամ սուվրէն չեն. նրանք հան-

*) Աւստրիական համայնքներում ընտրութիւնները համեմատաբար աւելի են մօտենում ուղղակի և հաւասար ընտրական ձեւին, թէև կրկին պահպանում են իրանց դասակարգային բնոյթը:

**) В. Вильсонъ—„Государство“ երես 308, պարգր. 772

դիտանում են կայսրութեան տեղական օրգանները: Նրանց սահմանած բոլոր օրէնքները պիտի ենթարկւեն կայսրի հաստատութեանը: Եւ կայսրը հաստատում կամ ստորագրում է նրանց տակը ոչ իբր այդ շրջանի իշխան կամ թագաւոր, այլ իբր ամբողջ պետութեան կայսր: Իհարկէ՛ ստորագրողը երբէք կայսրը չէ անձամբ, այլ նրա առաջին մինիստրը, որը պատասխանատու է Բայխսրաթի առջև: Դրանից պարզ երևում է, որ լանդտագներն իրանց իրաւունքներն ստացել են ոչ թէ կայսրից, այլ պետութեան կենսործնական իշխանութիւնից: Լանդտագների գրած օրէնքներն ոյժ ունեն միայն իրանց շրջաններում և այն էլ կենսործնական պետական մարմնից սանկցիա ստանալուց կամ հաստատելուց յետոյ: Կենսործնական իշխանութիւնը, եթէ կամենայ, կարող է մտցնել իր ցանկացած կամ յարմար դատած փոփոխութիւնները շրջաններին իր իսկ տւած ազատութիւնների կամ իրաւասութիւնների մէջ:

Այդ շրջանների կազմակերպութիւնը, նրանց տեղական սահմանադրութիւնները կրում են աւտոնոմիայի բոլոր բնորոշ յատկութիւնները և խիստ կերպով տարբերում են ֆէդերատիվ պետութեան մասերից նրանով, որ վերջիններս իրանց վերապահւած հարցերում — այն հարցերում, որոնք սահմանադրութեան գորութեամբ չեն զբաւած ֆէդերատիվ մարմնի իրաւասութեան տակ, — այդ հարցերում հանդիսանում են գերիշխան. չըկայ ոչ մի իրաւական ոյժ, որը նրանց մէջ խառնելու իրաւունք ունենայ:

Ինչ կասկած, որ աւստրիական շրջանների աւտոնոմիան խիստ պակասաւոր է և անարդար հիմունքների վրայ դրւած: Նա խիստ ստոր է անդլիական գաղութների լայն աւտոնոմիաներից: Նա չէ լուծել և այդ իր խղճուկ ձևով չէր էլ կարող լուծել Աւստրիական բազմաթիւ ազգութիւնների ազգային կնճռոտ հարցը: Արդէն սօցիալիստ կուսակցութեան անկաշտ գործնական քայլերը և զիտնականների վերջին եզրակացութիւնները գալիս են մատնացոյց անելու այն ուզին, որով պիտի ընթանայ Աւստրիայի ներքին կազմակերպութիւնը, որպէսզի կարողանայ ընկնել իր նօրմալ ճանապարհի մէջ, որպէսզի ներկայ հասարակական կեանքի գոսացած վիճակը վերանայ: Այդ ուզին ֆէդերացիան է:

Թագը, մինիստրութիւնը և ցէնսորալիզմը միայն շահւած կը լինեն, ասում է Բուլուրֆ Շպրինգերը, եթէ նրանք բացարձակ ֆէդերալիզմ մտցնեն այն բոլոր գործերում, որոնք չեն են

թարկում մի միակ վարչութեան, հրաժարեն ձևական միութիւնից և դրա հետ միասին նաև ամեն տեսակ պատասխանատուութիւնից»: Իսկ այդ պատասխանատուութիւնը մեծ է, խիստ մեծ: Բոլոր ազգութիւնների ազնւական և խոշոր կապիտալիստական տարրերն օգուում են իրանց լայն իրաւունքներից, վայելում են ֆէդերատիվ ամեն տեսակ արտօնութիւններ, իսկ պատասխանատուութիւնից ազատ են ըլլորովին:

«Մենք տեսնում ենք, շտոնակում է Բ. Շպրինգերը, որ զոյութիւն ունի փաստացի ապակենտրոնացում, առանց իրաւականի: Դա առաջին պատուածքն է, որով ներս է թափանցել ֆէդերալիզմը *):

Այն, այդ ֆէդերալիզմը ճակատագրական անհրաժեշտութիւն է Աւստրիայի համար, ուր ապրում են արդէն զիտակցութեան հասած բազմազան ազգեր: 1867 թւի դեկտեմբեր 21-ի սահմանահարութիւնն արեց առաջին քայլը, տալով աւտոնոմիա շրջաններին, որոնք, այդ սահմանադրութեան հեղինակների կարծիքով, համապատասխանում էին ազգերի տարածման ըէէլ սահմաններին: Փորձը տասխանում էին ազգերի տարածման ըէէլ սահմաններին: Փորձը տեղծել ազգերի ըէէլ տարածման սահմաններին աւելի համապատասխան մանր տեղական աւտոնոմ շրջաններ և ազգերի կուլտուրական աւտոնոմիա, բացի այդ պէտք է մանր աւտոնոմ շրջանները շարկապել ֆէդերատիվ կապերով:

Այդ են պահանջում երկրի աշխատաւոր մեծամասնութեան շահերը և այդ տողջ ուզին, ընակահօրէն, ընտրել է աւստրիական սօցիալիստական կուսակցութիւնը, որի ազգային ոգին նրման չէ ազնւականների և բուրժուաների ազգամոլական ոգուն:

Ամենքի համար պարզ է, որ աւստրիական 1867-ի սահմանադրութիւնը, նրա ներքին խառնակութիւնները գալու են և Ռուսաստանի վրէժին, եթէ նրա գործող կուսակցութիւնները չունենան բաւարար խելահասութիւն՝ նախօրօք լուծելու ազգութիւնների կնճռոտ ու փտանգաւոր հարցը տեղական ազգա-կուլտուրական լայն աւտոնոմիայի և ֆէդերացիայի փորձւած ուղիով:

*) R. Springer — „Der Kampf“ և այլն, պարագ. — 28

Տեղական ատոճօսիան Էլզաս-Լոտարինգիայում: 1870 թւի ձմեռն էր, ղեկտեմբեր ամիսը: Գերմանական բանակը երկաթէ օղակով պատել էր Պարիզը և զժոխային կրակ էր թափում արդէն սովամահի դուռը հասած քաղաքի վրին: Յաղթողների պետերը, բաւական բազմաթիւ էին, որովհետև գերմանական բոլոր 36 իշխանութիւններն այնտեղ ներկայ էին, դաշնակից Պրուսիային.—այդ բոլոր պետերն ապրում էին Վերսայլի պալատում, Լուզովիկոս XIV-ի, Արև-Թագաւորի օրով շինւած պալատներում, որոնք վկայ էին եղել Ֆրանսիայի անօրինակ փառքին և Պրուսիայի ու ամբողջ Գերմանիայի ստորացման: Ահա այդ պալատներից մէկում՝ յաղթողների խումբն առաջարկեց Գերմանական կայսրութեան թագը Պրուսիայի թագաւորին: Գերմանիան միացաւ, մի ազգ կազմեց: 18-դ դարի գերմանական իդձերն իրականացան:

Յաղթւածները վճարեցին յաղթողներին 5 միլիարդ ֆրանկ կամ հինգ վազօն ոսկի և զրկեցին Էլզաս և Լոտարինգիա նահանգներից:

Յաղթողներն ստացան այդ երկու նահանգը. բայց ունին էին լինելու նրանք: Պրուսիայի՛նը.—ոչ: Կար մի խելացի ճանապարհ —այդ նոր նւաճւած երկիրն աւելացնել գերմանական բազմաթիւ մանր ու խոշոր պետութիւնների վրայ, դարձնել մի փոքրիկ պետութիւն և շինել անգամ նորակազմ գերմանական դաշնակցութեան: Սակայն այդ էլ չարին. Էլզասն ու Լոտարինգիան չունեն ներկայացուցիչներ գերմանական կայսրութեան դաշնակցական խորհրդում կամ Bundesrath-ում:

Նոր նւաճւած երկիրը դարձաւ ամբողջ կայսրութեան կամ բոլոր դաշնակցութեան սեփականութիւնը և ստացաւ կայսրութեան երկիր (Reichsland) անունը: Նրա համար ստեղծեց յատուկ վարչութիւն:

Ամբողջ երկիրը բաժանւեց 3 շրջանի (Bezirk)—Վերին Էլզաս, Ներքին Էլզաս և Լոտարինգիա,—22 շրջանակի (Kreise), 94 կանտօնի և 1699 համայնքի: Վերջիններից 423 համայնք կամ մօտ 217,000 հոգի խօսում են միայն ֆրանսերէն, իսկ մնացած 1276 համայնքի լեզուն գերմաներէնն է:

Այդ երկիրը մօտ երկու դար (1648-1871) եղել է Ֆրանսիայի մի բազադրիչ մասը, նրա նահանգը և, ինչպէս թւերը ցոյց են տալիս, բաւական զգալի մի փոքրամասնութիւն ֆրանսիացի

էր, կամ իսկական ֆրանսիացիներ եկել բուն էին դրել երկրում: Իսկ գերմանացի ազգաբնակչութիւնն էլ մանաւանդ նրա կրթւած ու հարուստ, վերին շերտերը խիստ մտերմական կապերով կապւել էին ֆրանսերէն լեզւի, ֆրանսիական սովորութիւնների, մի խօսքով՝ ֆրանսիական ազգի ու հայրենիքի հետ:

Յաղթողները նրանց զիտում էին իրր գերմաններ, միայն մոլորութեան մէջ ընկած, որոնց պէտք էր դարձի բերել:

Ու սկսեցին խստութիւնները: Նախ երկիրը կազմակերպւեց պրուսական նահանգի ձևով և գլխին դրւեց մի օրերպրէզիդէնտ, որին տրւեց գիկտատուրայի իրաւունք (Dictaturparagraph). Երբ ցանկար՝ նա կարող էր դիմել դրակօնական միջոցների: Բնակիչներից 60—70,000 մարդ զաղթեցին Ֆրանսիա: Ֆրանսիական լեզուն անմիջապէս դուրս քելթեց պաշտօնական գործածութիւնից և միայն 1894 թւին 311 հաւանքի իրաւունք տրւեց համայնական գործավարութեան մէջ մասնակցութիւններին: Առաջին նորակոչներին ղէնքի հրաւիրեցործածել ֆրանսերէնը: Առաջին նորակոչներն ու հալածանքներ սկսու ժամանակ հրէշաւոր զժարութիւններ ու հալածանքներ սկսւեցին կառավարութեան կողմից: Գալոցական ուսուցիչներից համայնքի պաշտօնեաներից նրանք, որոնք ցոյց էին տալիս որ և է համակրանք կամ թուլութիւն ղէպի ֆրանսիական լեզուն ու գրականութիւնն, անխնայ հալածւում, արտաքսւում էին: Նապօղրականութիւնն, անխնայ հալածւում, արտաքսւում էին:

Երկրի զինւորական կառավարիչը կամ օրէրպրէզիդէնտը կախւած էր Բերլինում նստող կայսերական կանցլէրից. ամեն մի քայլ նա անում էր կանցլէրի հրամանով ու նրա հետ խորհրդակցելով: Բայց յետոյ, երբ զինւորական գիկտատուրայի խիստ շրջանն անցկացաւ, 1874-ին ստեղծեց մի իրր Թէ ընտրութիւն մարմին — Էլզաս-Լոտարինգիայի պատգամաւորութիւն կամ Landesauschuss: 1873-ին վերականգնեցին ֆրանսիացիների (Bezircstag), օրով գոյութիւն ունեցող շրջանային խորհուրդները (Bezircstag), իսկ զբանցից ամեն մէկն ընտրում էր 10-ական ներկայացուցիչ: 1875-ին կազմեցին երկրի առաջին պատգամաւորական ժողովը: Սա նախ կոչւեց միայն խորհրդակցական ձայնով, այն էլ երկրի բիւջէն քւէարկելու համար, իսկ 1877-ին նրան տրւեց նաև օրէնսդրական սահմանափակ իրաւունք, համեմատելով, օրի-

նակ, ակադեմիական և նոյն իսկ գերմանական այլ գաւառական սէյմերի հետ:

Ժողովրդի մէջ դժգոհութիւնը բաւական զօրեղ էր: Երկիրն սկզբից և եթ իրաւունք ստացաւ, ընդհանուր հիմունքներով, պատգամաւորներ ուղարկելու Րայխստագ (15 պատգամաւոր, 100,000-ից մէկը. կայ մօտ $1\frac{1}{2}$ միլիօն ազգաբնակչութիւն): Առաջին անգամ պատգամաւորների մեծագոյն մասն ատօնօմիստներն էին կազմում, որոնք պահանջում էին իրանց երկրին տալ որոշ ընդարձակ ատօնօմիա: Ժողովրդի մէջ խոր արմատներ ունեցող այդ շարժումը վերջապէս 1879 թւին արձագանք գտաւ կառավարութեան շրջաններում, այն էլ Րայխստագի բարոյական ճնշման շնորհով: 1879-ին տրւեց որոշ ատօնօմիա կամ, աւելի լաւ է ասել, եղածը մի քիչ զարգացւեց:

Օրէրպրէզիդէնտի փոխարէն՝ նշանակեց երկրի կառավարիչ կամ շտատհալտէր, որը հանդիսանում է իրր փոխարքայ: Երկրի օրէնսդիր մարմինն է Լանդէսառուշուքը կամ պատգամաւորական ժողովը, որի անդամների թիւն այժմ 58 է (34 հոգի ընտրում են շրջանների խորհուրդները, 4 հոգի Կօլմարի, Մէցիի, Միլհաուզի և Շտրազբուրգի քաղաքային խորհուրդները, իսկ մնացած 20-ը շրջանակների կամ գաւառների խորհուրդները՝ մի մի հոգի): Շտատհալտէրն ունի իր մինիստրութիւնը (մի մինիստրըր, չորս օգնական—ա) ներքին գործերի և լուսաւորութեան, բ) արդարադատութեան և կրօնների, գ) ֆինանսների և կալւածների, դ) երկրագործութեան, առևտրի և հասարակական աշխատանքների): Թէ մինիստրին, թէ օգնականներին և թէ նրանց խորհրդականներին նշանակում է կայսրը, ի հարկէ շտատհալտէրի խորհրդով և նրա ստորագրութիւններով: Երկրի ղլխաւոր պաշտօնեաներին նշանակում է շտատհալտէրը, երկրորդականներին մինիստրութիւնը: Կայ մի պետական խորհուրդ, բաղկացած 8—12 անդամներից, որը տալիս է իր կարծիքը օրինադրների, վարչական կարգադրութիւնների և այլ հարցերի մասին: Պետական խորհրդի անդամներին նշանակում է կայսրը. միայն 3-ին առաջարկում է պատգամաւորական ժողովը, իսկ կայսրը, եթէ բարեհաճեց, կը հաստատէ: Աւելորդ է ասելն անգամ, որ թէ պատգամաւորական ժողովի, թէ պետական խորհրդի անդամները պարտաւոր են կայսրին հաւատարիմ մնալու երգում տալ:

Երկրի օրէնսդրական օրգանն է պատգամաւորական ժողովը կամ լանդէսառուշուքը, որի պատգամաւորներն ունեն նախաձեռնութեան իրաւունք,—այսինքն կարող են օրէնքի նախադիժներ առաջարկել: Պետական խորհրդի դերը թէև լոկ խորհրդակցական է, շարկել: Պետական խորհրդի դերը թէև լոկ խորհրդակցական է, շարկել: Պետական խորհրդի դերը թէև լոկ խորհրդակցական է, շարկել: Պետական խորհրդի դերը թէև լոկ խորհրդակցական է, շարկել:

Որ և է օրէնք, ընդունելով պատգամաւորների ժողովում, անցնում է Դաշնակցութեան խորհուրդը կամ բունդէսրաթը, որը բաղկացած է բոլոր գաշնակից պետութիւնների ներկայացուցիչներից... ոչ մի-մի հոգի ամեն մի պետութիւնից. անդամներից $\frac{1}{3}$ մասը Պրուսիան է ուղարկում, մնացած $\frac{2}{3}$ -ը միայն բոլոր գաշնակիցներից: Պարզ է ուրեմն, որ էլզաս-Լոտարինգիայում օրէնքի նակիցները: Պարզ է ուրեմն, որ էլզաս-Լոտարինգիայում օրէնքի նակիցները:

Այդ խիստ համառօտ ակնարկից պարզ երևում է, թէ ինչ Քէզարկի և պարտադիր դարձնել նրա գործադրութիւնը: Այդ խիստ համառօտ ակնարկից պարզ երևում է, թէ ինչ Քէզարկի և պարտադիր դարձնել նրա գործադրութիւնը: Այդ խիստ համառօտ ակնարկից պարզ երևում է, թէ ինչ Քէզարկի և պարտադիր դարձնել նրա գործադրութիւնը: Այդ խիստ համառօտ ակնարկից պարզ երևում է, թէ ինչ Քէզարկի և պարտադիր դարձնել նրա գործադրութիւնը: Այդ խիստ համառօտ ակնարկից պարզ երևում է, թէ ինչ Քէզարկի և պարտադիր դարձնել նրա գործադրութիւնը: Այդ խիստ համառօտ ակնարկից պարզ երևում է, թէ ինչ Քէզարկի և պարտադիր դարձնել նրա գործադրութիւնը: Այդ խիստ համառօտ ակնարկից պարզ երևում է, թէ ինչ Քէզարկի և պարտադիր դարձնել նրա գործադրութիւնը:

Քաղաքական բռնութիւնը խլում է մի երկիր, բաժանում իր նախկին բնից, միացնում մի նոր կազմի, առանց հարցնելու ազգաբնակչութեան, երկրի ժողովրդի ցանկութիւնը: Եւ բռնի միացումից յետոյ էլ սկսում են հալածել ժողովրդների լեզուն, նրանց համոզումները, նրանց սովորութիւնները... Եւ արդիւնքն այն եղաւ, որ ժողովրդի մի մասը գաղթեց, գնաց Ֆրանսիա, իսկ մնացողները համակեցին ընդհանուր դժգոհութեամբ ու զօրեղ ատելութեամբ պրուսացիների դէմ:

Տիրապետութեան սկզբներում կար աւտօնօմիստների կուսակցութիւնը, որ պահանջում էր լայն աւտօնօմիա երկու նահանգների համար: Երբ հալածանքը աւելի նրբացաւ և խստացաւ, այն ժամանակ աւտօնօմիստները չքացան և նրանց տեղը բռնեց էլզասեան բողոքող կուսակցութիւնը, որ դեռ մինչև օրս էլ չը նայելով բոլոր մեղմացուցիչ հանգամանքներին, ունի բայխստագում 7 պատգամաւոր. 282,000 ընտրողներից դեռ ևս 102,000-ը նրանց ձայն տւին 1903 թւի ընտրութիւններին, իսկ դա մօտ 36% է:

Մնացած մասը գերմանացի է: Եւ ինչո՞ւ չը «գերմանանային», երբ ազգաբնակչութիւնը գերմաններից է եղել բաղկացած և միայն մի վերին շերտ մի քիչ ֆրանսիական ոգով կրթւած է եղել լոկ 200 տարւայ ժառանգականութեան, ընդհանուր կենակցութեան շնորհով:

Գերմանացման գործին քիչ չէ նպաստել նա և սօցիալ-դէմօկրատիան: Դէմ լինելով ամեն տեսակ ազգային հալածանքի, նա մեծ յաջողութիւն է գտել էլզաս-լոտարինգիայի աշխատաւորների մէջ: Բացի պրօլետարիատից, ուրիշ դասակարգերից բաղմաթիւ ձայներ անց են կացել սօց.-դէմօկրատների կողմը, իբր եղած քաղաքական կարգերի դէմ բողոքող, նրանց կործանումը և իսկական դէմօկրատիական կարգեր պահանջող կուսակցութեան: Այդ տարրերը թերևս համաձայն էլ չեն սօց.-դէմօկրատիայի տընտեսական նպատակի, նրա վերջնական ձգտման հետ, բայց անցել են նրա կողմը միայն իբր բողոքողի, Վիլհէլմ կայսրի և ներկայ ըէթիմի թունաւոր հակառակորդի: 1903 թւի ընտրութիւններին 282,000 ընտրողներից 68,000 ձայն (մօտ 24%) տւին սօցիալ-դէմօկրատներին:

1902 թւին բայխստագը որոշեց էլզաս-լոտարինգիայում մտցնել ընդհանուր ընտրողական իրաւունք, վերացնելով այնտեղ

տիրող բաւական խիստ ցէնզը, բայց Դաշնակցական խորհուրդը մերժեց առաջարկը:

Այժմ մի հարց միայն: Գերմանական անագին ու հզօր կայսրութիւնն իր սյուքան զօրեղ կուլտուրայով անա 30—40 տարի է չէ կարողանում գերմանացնել մի բուն էլզաս-լոտարինգիներին, որոնք 200 տարի առաջ եղել են գերմաններ... Այդ ժողովուրդը 200 տարում միայն ձեռք է բերել սյուքան զօրեղ ազգային-գիմազիր ոյժ... Հապա որքան է լեհերի, վրացիների, հայերի, ֆինլանդացիների, լատիշների և այլ ժողովրդների գիմազրական ազգային ոգին:

Եւ միթէ Պլէվէյեան ըէթիմի ներկայացուցիչ բիւրօկրատիան ու կենտրօնական իշխանութիւնը երբէք չեն մտածել այդ հարցի մասին, երբէք հաշի չեն առել իրանց ուսուցման քաղահարկանութիւնը մշակելիս, 2—3000 տարւայ սեփական գոյութիւն, ազգային ուրոյն կեանք ունեցող ժողովրդների գիմազրական ոյժը: Իսկ միւս կողմից՝ միթէ նոյն ոյժը, նոյն երևոյթն աչքի առաջ երբէք չեն ունեցել այն ողորմելի, փոքրօգի, թուլամորթ կղերական ու բուրժուական տարրերը, որոնք կարծում են, թէ ազգով, պատմական անցելով, դարերի, տասնեակ դարերի ժառանգութիւնով ու կուլտուրայով հիմնապէս տարրեր հայը կը կորչի, կը չքանայ, կը ձուլի Ռուսաստանում կամ Թիւրքիայում:

Ոչ, ժողովրդներն աւելի գիմացկան են, քան օտարամուտ բռնակալները: Նրանք ծնունդ են իրանց երկրի, իրանց հողի ու ջրի, իրանց երկրում ունեցած դարերի ծնած տառապանքների և բախութեան. հազարաւոր տարիներն են դարընել նրանց միացնող շղթան, նոյնքան ժամանակ էլ հարկաւոր է կրծելու այդ շղթան, քայքայելու մի ազգ:

Իսկ բիւրօկրատիան, կղերն ու բուրժուազիան Բուրբօնների նման ճնոր ոչինչ չեն սովորում, ոչինչ էլ չեն մոռացել հնից»:

Բազմաթիւ ազգութիւններից բաղկացած պետութիւնների առողջ վարդացման միակ ուղին ազգերի ազատ ինքնորոշումը կամ նրանց աւտօնօմիան է և, մանաւանդ, այդ աւտօնօմ ազգերի ազատ դաշնակցութիւնը կամ ֆէդէրացիան:

Գ Լ Ո Ւ Խ Ե.

Ֆ է Դ Է Բ Ա Յ Ի Ա.

Ունիտարիզմ և ֆեդերալիզմ:—Ֆեդերացիայի էութիւնը՝ նրա տարբերութիւնը աւտոնոմիայից:—Պետութիւնների դաշնակցութիւն և դաշնակցական պետութիւն:—Ֆեդերացիայի կազմելու ճանապարհները (միացում և բաժանում):—Իրաւասութիւններ և նրանց սահմանները:—Տէրրիտորիական և ազգային ֆեդերացիա:—Հիմքեր:—Կրիտիքա:

Քննելով պետութիւնների ձևափոխումները, նախընթաց գըլուխներում մենք տեսանք, որ գոյութիւն ունեն, բացի պետութեան ձևերից, նաև պետական մի քանի սխառեցններ: Մենք պարզեցինք թէ ինչ է պարլամենտարիստական և դուալիստական սխառեցնը, ինչ է ցէնտրալիստական կամ կենտրոնացման և դէցէնտրալիստական կամ ապակենտրոնացման սխառեցնը: Այժմ մեզ մընում է պարզել, թէ ինչ է ունիտարիզմը և ինչ է ֆեդերալիզմը:

Ունիտարիզմ և ֆեդերալիզմ: Ունիտարիստական է կոչւում այն պետութիւնը, որի մէջ կայ մի գերիշխան օրէնսդիր մարմին, որին հպատակւում են (օրէնսդրական տեսակէտից) երկրի բոլոր կենտրոնացած թէ ապակենտրոնացած հիմնարկութիւնները:

Ունիտար պետութիւնը կարող է լինել խիստ ցէնտրալիստական (Փրանսիա, Ռուսաստան), կիսատ կամ խիստ ապակենտրոնական (Աւստրիա, Անգլիա): Ոչ վարչական ապակենտրոնացումը կամ տեղական ինքնավարութիւնը, ոչ էլ օրէնսդրական ապակենտրոնացումը կամ աւտոնոմիան չեն հանդիսանում իբր խանգարիչ տարրեր ունիտարիզմի համար:

Մենք արդէն գիտենք, որ կրճատւած ու ողորմելի տեղական ինքնավարութիւններ կան Փրանսիայում և Ռուսաստանում: գիտենք նոյնպէս, որ Ռուսաստանում զեռ տիրում է ինքնակալութիւն կամ միահեծանութիւն, իսկ Փրանսիայում հանրապետութիւն է՝ քառանգամ ընտրական սխառեցնով, չորս հիմնական ազատութիւններով, պարլամենտարիստական սխառեցնով, և այլն: բայց երկու պետութեան մէջ էլ ունիտարիզմ կայ, որովհետև մեզանում զեռ պետական խորհուրդը և կայսրը օրէնսդիր միակ հաստատութիւնն են կազմում*), որին ենթարկւում են հըս-

*) Ինքնըստինքեան հստականալի է, որ մենք առջի տալ չունենք զեռ պետական դոման և նրա արժէքը. զեռ նա գոյութիւն ունի լոկ անտոնով. զեռ յեղափոխական կարգ շարունակւում է և մենք չը գիտենք, թէ ինչ դուրս կը գոյ աչգ գումայից—օրէնսդիր, թէ խորհրդատու մարմին:

կայական կայսրութեան բոլոր մասերը, նրա մէջ ընակող բոլոր հպատակները, բոլոր 112 ազգերն ու լեզուները՝ ամեն տեսակ տնտեսական, աշխարհագրական, երկրաբանական, կլիմայական, ազգային, կրօնական ու պատմական պայմաններում ապրող ժողովրդներն—սկսած բարբարոս կամչազախներէ, էսկիմոսներէ, վրդներն—սկսած բարբարոս կամչազախներէ, էսկիմոսներէ, մինչև վելիկորուսները, լեհերը, գերմանները, ֆինլանդացիները:

Ունիտար պետութիւններ են նաև Բէլգիան ու Պրուսիան, Իտալիան և Իսպանիան, թէ և ունեն զանազան չափերի վարչական Իտալիան և Իսպանիան, թէ և Աւստրիան ու նոյն իսկ Անապակենտրոնացում: Ունիտար են և Աւստրիան ու նոյն իսկ Անգլիան, թէ և այդ պետութիւնները պարունակում են իրանց մէջ աւտոնոմ երկրներ, շրջաններ ու նահանգներ: Ունիտար են դրանք, որովհետև բայսպարաթն ու պարլամենտը տէր են իրանց երկրների օրէնսդրական իշխանութեան: Օրինակ՝ Անգլիայում չկայ ոչ մի հիմնարկութիւն, որ այս կամ այն պատճառով չը հպատակելի պարլամենտի գերիշխանութեանը կամ սուվըրէնիտետին: Թէ և Աւստրիայում ու Կանադայում կայ լայն աւտոնոմիա ներքին ֆեդերալիզմով կազմով, թէ և Կապի երկիրն ու Նատալն ունեն լայն աւտոնոմ իրաւունքներ, սեփական օրէնսդիր մարմիններ, բայց դրանք բոլորն է, ենթակայ ու հպատակ են գերագոյն օրէնսդիր մարմնին—ազգլիական ամենագոր պարլամենտին: Ինչպէս գիտենք, պարլամենտը կարող է մի նոր օրէնքով կամ ակտով փոտենք, պարլամենտը կարող է մի նոր օրէնքով կամ ակտով փոտենք, պարլամենտը կարող է մի նոր օրէնքով կամ ակտով փոտենք, պարլամենտը կարող է մի նոր օրէնքով կամ ակտով փոտենք: թէ «Dominion of Kanada»-ին աւստրալական ֆեդերացիային, թէ «Dominion of Kanada»-ին աւստրալական ֆեդերացիային, թէ Կապի երկիրն և թէ Նոր-Ջէրսիային: (Կանադայի պետութեանը), թէ Կապի երկիրն ու թէ Նոր-Ջէրսիային: (Կանադայի պետութեանը), թէ Կապի երկիրն ու թէ Նոր-Ջէրսիային:

Ճշմարիտ է, անգլիական պարլամենտը, որոչ սահմաններ, որոնց բին որոչ օրէնսդրական իրաւունքներ, որոչ սահմաններ, որոնց ներսում զազութիւնների օրէնսդիր մարմինները լիազոր են օրէնքներ սահմանելու իրանց երկրի համար, սակայն, ինչպէս գիտենք, նըբանք գերիշխան կամ սուվըրէն չեն օրէնսդրական հարցում. պարլամենտը կարող է փոխել իր տւած սահմանները, լայնացնել պարլամենտը կարող է փոխել իր տւած սահմանները, լայնացնել տեղացնել նրանց, բացի այդ, ինչպէս արդէն ասել ենք, աւտոնոմ նահանգների ու երկրների օրէնսդիր մարմինների սահմանած օրէնագրերը զեռ օրէնքի ոչ թէ չեն կարող ունենալ, քանի որ չեն ըսնագրերը զեռ օրէնքի ոչ թէ չեն կարող ունենալ, քանի որ չեն ըսնագրերը անգլիական թագաւորից կամ նրա ներկայացուցչից (նահանգապետից կամ գեներալ-նահանգապետից և այլն): Բացի այդ, կայ և մի այլ երևոյթ: Թէ Աւստրիայում և թէ Անգլիայում

բայխարաթն ու պարլամէնտը եթէ մի օրէնք հրատարակում են, որի նման, բայց տարբեր մտքով մի օրէնք էլ հրատարակել են կամ հրատարակում են աւտօնօմ շրջանների լանդտագները կամ տեղական օրէնսդիր մարմինները—տիրողը, գործադրողը, նախապատուութիւն ունեցողը բայխարաթի ու պարլամէնտի հրատարակածն է և ոչ տեղական մարմիններինը:

Ահա այն գլխաւոր բնորոշիչ գծերը, որոնք կազմում են ունիտար պետութեան էութիւնը:

Այդպէս չէ ֆէդէրալիստական կամ դաշնակցական պետութիւնը: Նրանումն էլ կայ մի կենտրոնական օրէնսդիր մարմին, որի որոշումները նոյնքան պարտադիր են երկրի բոլոր ընակիչներին, նրա բոլոր մասերի համար, որքան և ունիտար պետութեան օրէնսդիր մարմնի սահմանած օրէնքներն ու որոշումները: Միայն ունիտար պետութեան կենտրոնական օրէնսդիր մարմնի իրաւասութիւնն անսահման է. նա կարող է օրէնքներ սահմանել կեանքի բոլոր երևոյթների վերաբերմամբ, կառավարութեան կամ պետական բոլոր մասերում, իսկ ֆէդէրատիվ կամ դաշնակցական պետութեան կենտրոնական մարմինը չունի այդպիսի անսահման իրաւասութիւն. նա կարող է օրէնքներ սահմանել կեանքի որոշ հարցերի վերաբերմամբ: Ի՞նչ հարցեր են դրանք—այդ արդէն կանխորոշւած է դաշնակցական պետութեան սահմանադրութեան մէջ:

Ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր դաշնակցական կամ ֆէդէրատիվ պետութիւնների սահմանադրութիւնները պարզ և որոշ, անոււն-անոււն թւում են այն բոլոր հարցերը, որոնք մտնելու են կամ որոնք մտնում են Դաշնակցական կենտրոնական օրէնսդիր մարմնի կամ ընդհանուր կառավարութեան իրաւասութեան տակ. իսկ ինչ որ համապետական կամ դաշնակցական սահմանադրութեան մէջ չէ յիշւած, այդ բոլոր հարցերը թողնւում են նահանգների, կանտօնների կամ դաշնակից պետութիւնների օրէնսդիր մարմինների կամ կառավարութիւնների իրաւասութեանը:

Այդ ընդհանուր օրէնքից միակ բացառութիւնը կազմում է Կանադայի սահմանադրութիւնը: Այնտեղ մանրամասնօրէն որոշւած են նահանգների իրաւունքները, նրանց իրաւասութեան սահմանները, իսկ ինչ որ չէ յիշւած, ինչ որ այդ անոււն-անոււն յիշւած հարցերից դուրս է, արդէն թողնւած է ֆէդէրալ կառավարութեան և կենտրոնական օրէնսդրութեան իշխանութեանը:

Իբր նմուշ, առջ ըբերնք այստեղ այն բոլոր գործերը կամ հարցերը, որոնք մտնում են Շվէյցարական դաշնակցական իշխանութեան իրաւասութեան մէջ, այսինքն որոնք դուրս են կանտօնութեան իրաւասութիւնից: 1) Բանակը, 2) Արտաքին գործերը, 3) ներքին իրաւասութիւնից: 4) պետական ֆինանս-Դրամի շրջանառութիւնը, չափերը և կշիւը, 4) պետական ֆինանս-ները, 5) վառօդի և աղի բէգալիւան, 6) պօստը և հեռագիրը, 7) Երկաթուղին և հաղորդակցական միւս միջոցները, 8) քաղաքացիական և քրէական օրէնքները, 9) Մաքսային և առևտրական օրէնսդրութիւնը, 10) Հեղինակների իրաւունքների պաշտպանութիւնը, 11) արհրտօժշտ բժշկա-նստիկանական օրէնքներ՝ համաճարակների (մարդկանց և անասունների) դէմ կուելու, 12) զիւտեճարակների (մարդկանց և անասունների) դէմ կուելու, 13) քաղաքացի դարձրի մենաշնորհների համար պատէնտները, 14) օրէնքներ կրաւունքը և հսկողութիւն օտարականների վրայ, 15) Համալսարաններ և ուրիշ բարձրագոյն դպրոցներ բանալու իրաւունքը:

Ահա դաշնակցական կենտրոնական մարմնի բոլոր իրաւասութիւնները: Դրանցից դուրս եղած բոլոր հարցերի լուծումը, բոլոր օրէնքների սահմանումը կախած է կանտօնների իշխանութիւններից:

Գերմանական դաշնակցական կամ կայսերական իշխանութեան իրաւասութիւնն էլ համարեւ նոյն չափի է և դեռ մի քիչ էլ իրաւասութիւնն էլ համարեւ նոյն չափի է և դեռ մի քիչ էլ իրաւասութիւնները. 1) բանակը և նաւաւելի: Ահա նրա բոլոր իրաւասութիւնները. 2) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 3) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 4) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 5) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 6) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 7) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 8) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 9) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 10) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 11) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 12) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը, 13) արտաքին գործերը, հաստատումն առևտրական և այլ տօրմը:

*) Շվէյցարական կանտօններն իրաւունք ունեն դրացի պետութիւնների հետ կնքել ինքնուրոյն առևտրական դաշինքներ, իսկ գերմանական առանձին պետութիւնները զրկւած են այդ իրաւունքից:

գերիշխանութիւնը կամ սուվըրէնիտէտն ամբողջական չէ. նա չէ տա-
րածուում պետական բոլոր հարցերի, բոլոր ճիւղերի վրայ:

Բայց ի՞նչ է նշանակում գերիշխանութիւն կամ սուվըրէնիտէտ
Դա գերագոյն իշխանութեան հասկացողութիւնն է, այն իշխա-
նութեան, որն իրանից աւելի բարձր իրաւասու մարմին կամ իշ-
խանութիւն չէ ճանաչում: որը լիակատար տէր է իր ներքին
կազմի, կարգերի, օրէնքների և արտաքին ամեն տեսակ յարա-
բերութիւնների:

Սուվըրէնիտէտ նշանակում է պետական իշխանութեան
այն յատկութիւնը, որի հիման վրայ նա ունի բացառիկ կարո-
ղութիւն իրաւական ինքնորոշման և ինքնապարտաւորեցման» *),
ասում է Ելլինէկը: Իսկ Ֆրանսիացի Լը-Ֆիւրը բնորոշում է այս-
պէս. «Սուվըրէնիտէտը պետութեան այն յատկութիւնն է, որով
նա պարտաւորուում, կամ որոշում է միայն իր սեփական կամ-
քով, իրաւունքի գերագոյն սկզբունքների սահմաններում, և հա-
մաձայն այն կօլլէկտիվ նպատակի, որի իրականացման համար ին-
քը կոչւած է» **):

Մենք աւելորդ ենք համարում մտնել այն մանւածապատ ու,
մեր կարծիքով, յաճախ անպտուղ վէճերի մէջ, որ վարում էին և
զեռ վարում են Գերմանիայի գիտնականներն այդ բառի վերա-
բերմամբ: Յօրն, Չէյլէյ, Հէյնէյ, Լաբանդ, Ելլինէկ և շատ ուրիշ-
ները ահազին հատորներ են գրել կամ գոնէ բազմաթիւ գլուխ-
ներ են նւիրել սուվըրէնիտէտի հարցին. արդեօք նա մի և ան-
բաժանելի է, թէ կարող է լինել մասնակի և բաժանական գե-
րիշխանութիւն, արդեօք նա տրւում է համաձայնութեան ու դա-
շինքի հիման վրայ, թէ անողորմ «necessitas»-ը, կենսական ան-
հրաժեշտութիւնն է ծնեցրել նրան ուժի (տնտեսական, ֆիզիքա-
կան, մտաւոր և այլն) միջոցով ***):

*) «Право Совр. гос». Երես 317.

**) Le Fur—«Etat fe'deral et confe'derations d'etats», page 443
(cite' par Jellinek.)

***) Այդ հարցի մանրամասն տեսութիւնը կարելի է գտնել М. Горен-
бергъ-ի գրքում—«Теория союзнаго государства въ трудахъ со-
временныхъ публицистовъ Германіи». G.-Пб, 1891 թիւ:

Այդ ահազին բանակուի սկիզբը գրւած է զեռ շատ վաղուց,
բայց նոր ժամանակներում Լօկիլի, Հօպսի և մանաւանդ, Ժ. Ժ.
Բուսսօի ձեռքով նա ստացել է իր այսօրւայ կերպարանքը: Մաս-
նաւորապէս այս վերջինի հօր կարծիքն է, որ մենք տեսնում
ենք XVIII դարավերջի Փրանսիական Մեծ Յեղափոխութեան ժա-
մանակ իրականացած՝ իբր հիմնական օրէնք նոր ստեղծող իրա-
ւական պետութեան:

Սուվըրէնիտէտը, ասւած է «Déclaration des droits de l'hom-
me et de citoyen»-ի մէջ,—գերիշխանութիւնը մի է, անբաժանելի,
չօտարացող (inaliénable) և լոկ հրամանով չիրականացող: Նա
պատկանում է Ազգին: Ժողովրդի ոչ մի մասը, ոչ էլ որ և է ան-
հատկանում է զոգրովրդի ոչ մի մասը, ոչ էլ որ և է ան-
հատ չէ կարող իրան վերադրել նրա գործադրութիւնը» (յօրւած 16-դ):

Բայց կեանքի անողորմ անհրաժեշտութիւնը XIX-րդ դարի
ինքնաքննում, մասամբ նաև XVIII-ի դարավերջում (Միացեալ-Նա-
նիստները) եկաւ փշրելու այդ անբաժանելիութիւնը: Կազմեցին բա-
նական թւով դաշնակցական պետութիւններ, որոնց անդամները
աւական թւով դաշնակցական պետութիւններ, այլ ունեն սահ-
տէր են ոչ «մի և անբաժան» գերիշխանութեան, այլ ունեն սահ-
մանափակ կամ մասնակի գերիշխանութիւն, իսկ նրանց գլխին,
մասնափակ կամ մասնակի գերիշխանութիւն, կենտրոնական իշ-
խանութիւնները, որոնք նոյնպէս տէր դարձան մասնակի գերիշ-
խանութիւնները, որոնք նոյնպէս տէր դարձան մասնակի գերիշ-
խանութեան: Կեանքն իրն արել է և զեռ շարունակում է անել,
գիտնականները զեռ վիճում են:

Առաջ բերւած որոշումները պարզելով, գալիս ենք այն եզ-
րակացութեան, որ «գերիշխանութիւնը իրաւական ինքնորոշման
բացառիկ ունեակութիւնն է» *): Այսինքն՝ մի պետութիւն, մի
նահանգ, մի շրջան կամ մի երկիր գերիշխան են, երբ՝ բացի օ-
րէնսդրական, վարչական, դատական և այլ լիազօր իրաւասութիւն-
ները, ունեն իրաւունք իրանց ուղածի պէս որոշելու իրանց պե-
տութեան ձեւ (միապետութիւն, հանրապետութիւն և այլն), նրա
եզանակը կամ սիտէմը (կենտրոնացում կամ ապակենտրոնացում,
պարլամէնտարիզմ կամ դուալիզմ, ունիտարիզմ կամ ֆէդէրալիզմ):

Աւստրալիայի, Կանադայի, զուցէ և այլ անդլիական գա-
ղութների ներքին կազմն էլ որոշել են տեղական սահմանադիր
ժողովները, բայց, ինչպէս արդէն ասել ենք նախընթաց գլխում,

*) Еллинекъ—յիշ. գործը—Երես 327

Նրանց որոշումներն ուղարկել են անգլիական պարլամենտին, որպէս զի վերջինը հաստատէ, իր համաձայնութիւնը տայ: Ի հարկէ, եթէ Լոնդոնի պարլամենտն ուղէր, այդ որոշումները հաստատելիս, կարող էր մտցնել նրանց մէջ իր ցանկացած փոփոխութիւնը: Սակայն Կանադայի առաջարկում նա ոչ մի փոփոխութիւն չէ մտցրել և ընդունել է տեղական սահմանադիր ժողովի բոլոր որոշումներն, առանց նոյն իսկ վիճարանութեան *) (1867 թւին): Աւստրալական դաշնակցական սահմանադրութիւնը ևս ենթարկեց Լոնդոնի պարլամենտի քննութեանը 1900 թւին, յայտնի Չէմբէրլէնի կօլօնիաների միջնորդութեան ժամանակ, և իմպէրիալիստ ու մասամբ շինգօիստ Չէմբէրլէնը մի կէտ փոփոխեց աւստրալական սահմանադիր ժողովի որոշումներից. այդ կէտը վերաբերում էր բարձրագոյն դատարանի հարցին:

Փոփոխութիւն մտցնելում կամ չը մտցնելում չէ այստեղ հարցը, այլ նրանում, որ տեղական սահմանադիր ժողովները գերիշխան չեն, նրանք ազատ չեն որոշելու, պայմանաւորելու իրանց պետութեան ձևն ու սիստէմը, այլ պէտք է դիմեն մի աւելի բարձր մարմնի: Թէ Աւստրալիայի և թէ Կանադայի սահմանադիր ժողովները կամ նոյն իսկ պարլամենտները կարող են այժմ էլ որոշ փոփոխութիւններ մտցնել իրանց սահմանադրութիւնների մէջ, բայց նրանք լինելու են 1867-ին Լոնդոնի պարլամենտի տւած ակտի սահմաններում և պիտի նորից կրեն զեներալ-նահանգապետի կամ թագի հաստատութիւն:

Դա գերիշխանութեան բացակայութիւնն է և, միւս կողմից, դա է աւտօնօմիայի ընդդէմ գիծը:

Սակայն այդպէս չեն, օրինակ գերմանական դաշնակցական կայսրութեան 25 անդամները: Նրանք կարող են, առանց Դաշնակցական կենտրոնական մարմինների (բայխտագին և դաշնակցական խորհրդին) դիմելու՝ փոփոխել իրանց կառավարութեան ձևը. օրինակ՝ Բաւարիան կարող է վերածուել հանրապետութեան, կարող է միահեծանութիւն դառնալ և այլն:

Սակայն գերիշխան մի պետութիւն—մի Ֆրանսիա, կարող է իր սահմանադրութեան մէջ մտցնել նախապէս մի որոշ պարա-

*) Дайси—«Основы Госуд. права Англии» էրես 123 և հետևեալները, Вильсонъ—«Государство» էրես 383, պարագր. 1016

գրաֆ, իր կամքով կանխապարտաւորել չանելու այս ինչ բանը, իր երկում չը մտցնելու կառավարական այս ինչ ձևը, երբէք չը փոփոխելու, օրինակ, հանրապետութիւնը: Այսպէս, Ֆրանսիական հանրապետութեան 1875 թւի սահմանադրութեան (այժմեանը) V յօդւածն ասում է. «կառավարութեան հանրապետական ձևը չէ կարող քննութեան ենթարկուել փոփոխելու նպատակով՝ սահմանադրութիւնը վերաքննելու պատրուակով»:

Դա չէ նշանակում, որ Ֆրանսիական մեծ հանրապետութիւնը, այդ համաշխարհային պետութիւնը գերիշխան չէ. նա գերիշխան է միանգամայն, բայց ինքնապարտաւորեցման մի ակտ է կանխորոշում—այն, որ թոյլ չէ աւելի ինքն իրան իրաւական հողի վրայ, օրինական ճանապարհով, փոփոխութեան ենթարկելու: Մի Բուլանֆէ, մի Նահանրապետական կառավարութեան ձևը: Մի Բուլանֆէ, մի Նահանրապետական կառավարութեան ձևը: Մի Բուլանֆէ, մի Նապօլէօն կամ մի Դէրուլէյ դուցէ բոնի ուժով կարողանում են տապալել հանրապետութիւնը և ստեղծել մօնարխիա, կամ մի կօմմունա կարող է հիմնել Ֆէդէրատիվ հանրապետութիւն, բայց դա կը լինի ոչ իրաւական, այլ յիդափոխական ճանապարհ:

Միացեալ-Նահանգները և Շվեյցարիայի դաշնակցական սահմանադրութիւններում նախորդած է, որ նահանգները և կանտօններն իրաւունք չունեն կառավարութեան որ և է ուրիշ ձև ունենալու, բացի հանրապետութիւնից, բայց դա, Ֆրանսիայի կայսցնալու, բացի հանրապետութիւնից, որովհետև ամեն մի է և ոչ գերիշխանութեան բացակայութիւն, որովհետև ամեն մի կամ հաստատութեան, կարող է ամեն տեսակ փոփոխութիւններ մտցնել իր սահմանադրութեան և իր բոլոր կարգերի մէջ. իսկ դա գէթ մասնակի գերիշխանութեան պարզ նշանն է:

Երբ մենք պարզել ենք գերիշխանութեան հարցը բաւարար չափով, այժմ մեզ համար դիւրին է ըմբռնել աւտօնօմիայի և Ֆէդէրացիայի տարբերութիւնը:

Աւտօնօմ կարող են լինել ունիտար պետութեան մասերը, որոնք այս կամ այն չափով կախած են կենտրոնական օրէնսդիր իշխանութիւնների իրաւասութիւնից: Այսպէս—աւտօնօմ են անգլիական գաղութները, աւստրիական թագի-երկրները (Kronländer), Կրօացիան կամ Խրլատները երկիրը Վէնզըրիայում, Ֆինլանդիան Ռուսաստանում, Էլզաս-Լոտարինգիան Գերմանիայում և

Բացի դրանից, կայ և պետութիւնների միութեան մի այլ ձև—«պետութիւնների պետութիւնը»: Դա պետական միացումների հնագոյն ձևն է, որ գոյութիւն է ունեցել Հին-Արևելքում («Արքայից-Արքայ») էին կոչուում պետերը), միջին դարերի Փէօզալական պետութիւններում և նոյն իսկ մեր օրերում (Օսմանեան կայսրութիւնը): Այստեղ մի զօրեղ պետութեան ձևերի տակ գտնուում են մի քանի վաստակական պետութիւններ; որոնց կապը գէպի առաջինը երևում է որոշ տարեկան տուրքով, կուր ժամանակ իրանց զօրքը նրա զօրքի հետ միացնելով և այլն, իսկ մնացած ամեն ինչում նրանք, ի հարկէ, անկախ պետութիւններ են: Ինքնըստինքեան հասկանալի է, որ առհասարակ պետական կազմութեան ու քաղաքականութեան հարցերում շատ բան կախուած է գոյութիւն ունեցող իրական ոյժերի յարաբերութիւններից, իսկ մասնաւորապէս՝ պետական միացումների այս ձևի մէջ համարեա ամեն ինչ կախուած է ուժից, ուժեղ է վաստալը, հարկ կամ բոլորովին չէ տալիս, կամ քիչ է տալիս: Նա կարող է նաև թագ կապել, զօրքն առնել, ելնել իր վեհապետի դէմ և այլն:

Պետական միացումների այս ձևն անցեալի մնացորդ է այժմեան պետութիւնների մէջ, ուր իրաւակարգն արդէն հաստատուած է, այլ ևս այդպիսի միջնադարեան միացումն անհնար է:

Պետական միացումներից ամենաաչքի ընկնողն այժմ պետութիւնների դաշնակցութիւնն է (Staatenbund) կամ կօնֆէդերացիան, որ յաճախ շփոթում են ֆէդերացիայի կամ դաշնակցական պետութիւնների հետ:

Պետութիւնների դաշնակցութիւնը կամ կօնֆէդերացիան մի մշտական պայմանադրութիւն կամ կօնտրակտ է, իրարից անկախ, ինքնուրոյն պետութիւնների մէջ, կապուած որոշ պաշտպանողական նպատակով, արտաքին պատահարների դէմ և որոշ ներքին կարգերի պահպանման համար՝ ներքին թշնամիների դէմ: Այդ տեղ դաշնակից պետութիւնները միանգամայն պահպանում են իրանց ինքնորոյնութիւնը բոլոր հարցերում, միայն նրանց մէջ փոխադարձ համաձայնութիւն է կայանում, կնքուած է դաշնագիր, որ նրանք միացնելու են իրանց ուժերը որոշ նպատակների համար, պէտք եղած դէպքում կուում են, որպէս զի յարգել տան որոշ սկզբունքներ, պաշտպանեն որոշ շահեր, միջազգային այս կամ այն հարցերի վերաբերմամբ բռնեն որոշ դիրք, յայտնեն ո-

րոշ կարծիք—իհարկէ իրար նման և ոչ իրար ջնջող, ունենան նրման օրէնքներ և այլն *):

Սկզբնական դաշնակից պետութիւնների հետ կարող են միանալ և նորերը, եթէ մտնեն անդրազոյն համաձայնութեան: «Պետութիւնների դաշնակցութիւնը իրաւաբանօրէն չէ նսեմացնում նրա անդամների գերիշխանութիւնը» **), ընդհակառակը—այդ դաշինքը կարծես աւելի ևս ապահովում է նրանցից իւրաքանչիւրի գերիշխանութիւնն ու անկախութիւնը, նրանց անձեռնմխելիութիւնը, որովհետև նրանց միութիւնն աւելի ուժեղ է լինում միշտ, քան ամեն մէկն առանձնապէս:

Կօնֆէդերացիան, իբր մշտապես կամ գոնէ բաւական երկարատև պետական միացում, միշտ ունենում է իր վարչութիւնը, բայց երբէք չէ դառնում պետական իշխանութիւն: «Նա չունի imperium դաշնակից պետութիւնների վրայ, ասում է Ելլինէկը, որովհետև նրա տրամադրութեան տակ չըկան իրաւապետական կամ պետական—իրաւական միջոցներ իր կամքն ստիպմամբ իրականացնելու»: Միակ իրաւունքը, որ կը մնայ դաշինքը քանդող դաշնակցի դէմ գործելու, դա պատերազմ հրատարակելու իրաւունքն է. իսկ այդ արդէն միջազգային պետական իրաւունք է և ոչ ներքին: Սակայն կայ և մի այլ միջոց—էկզէկուցիան, որ նոյնպէս միջազգային բնոյթ ունի և ոչ պետական—իրաւական. բոլոր դաշնակից պետութիւնները կամ նրանց մի մասը միանում և էկզէկուցիա են կառարում. զօրքերով ներս են լցւում ըմբոս դաշնակցի երկիրը և ստիպում հպատակման:

Սկզբնական դաշինքից դուրս ոչինչ պարտաւորեցուցիչ չէ դաշնակիցների համար: Ամեն մի նոր կէտ աւելացնելիս, պէտք է ստանալ բոլորի միաձայն հաւանութիւնը: Եթէ մի պետութիւն, նոյն իսկ ամենափոքրը, չէ համաձայնեց, կարող է դուրս գալ նոյն իսկ ամենափոքրը, չէ համաձայնեց, կարող է դուրս գալ (***): Դա է որ կոչուում դաշնակցութիւնից կամ կօնֆէդերացիայից ***) : Դա է որ կոչուում է «droit de se'cession» կամ բաժանելու իրաւունք ***):

*) Эссенъ— „Основ. нач. гос. права“. т. I. ст. 8—9.

**) Еллин. loc. cit' ст. 510.

***) Grande Encyclopedie t XVII page 114.

****) Կօնֆէդերացիա և ֆէդերացիա բառերն այնքան են իրար խառնել կողմանեան «մարքսիստ» կոչուած զաղէթային զարգացում ունեցող սօց. դէմօկրատները, որ յաճախ գեռահասաներին

1798 թւին Ֆրանսիական յեղափոխական բանակը մտաւ ազատ կանտոնները և դարձրեց նրանց մի կենտրոնացած հանրապետութիւն, որը տեւեց մինչև 1802: Նապօլէօնը հաստատեց այնտեղ պետութիւնները մի նոր դաշնակցութիւն, հյուսիսային իր կամքին (1803-1815 թ.), իսկ երբ բէակցիան սկսեց, անկախ կանտոնները նորից գլուխ բարձրացրին և փշրեցին Նապօլէօնի և Մեծ-Յեղափոխութեան կռած շղթան: Վերակաւեցին կանտոնների տեղական անկախութիւնը և գերիշխանութիւնը: «Կանտոններն աւելի լայն ինքնուրոյնութիւն ձեռք բերին, քան մինչև 1798 թիւն ունէին» *): Շվէյցարիան կօֆէդերացիայից դարձաւ իսկական ֆէդերացիա 1848 թւի սահմանադրութիւնով, թէև մինչև օրս էլ երկրի Ֆրանսիական կանտոններում ժողովուրդը կոչոււ է իր պետութիւնը «La confédération Suisse» (Շվէյցարական կօնֆէդերացիա): Դա լեզւի պահպանողական յատկութիւնն է. նօմէնկլատուրան կամ անլանակոչութիւնը պահպանողական է—նա մնում է, յարատեւում, այն ինչ բովանդակութիւնը յաճախ վաղուց արդէն փոխւած է լինում:

Չը մոռանանք ասել, որ 1847 թւին, իսկական ֆէդերացիա կազմելու նախօրեակին, պայթեց Չօնդէրբունդի պատերազմը: Կաթոլիկ 7 կանտոնները (Շվից, Ուրի, Ունտերվալդէն, Լիւցերն, Ֆրիբուրգ, Վալէ և Յուգ), զրգուած բողոքական խոշոր կանտոններում մոտ գործած ազատամիտ հոսանքներից, կազմեցին մի «Sonderbund» (Առանձին-Դաշնակցութիւն): Չորս տարի նրանք օրտորակցիա էին անում կօնֆէդերալ կառավարութեան դէմ, մինչև որ դաշնակիցները, 1847-ի նոյեմբերին, դեներալ Դիւֆֆուրի առաջնորդութեամբ, 18 օր տևող պատերազմում յաղթեցին ու ըստիպեցին հպատակել ըմբոստներին: Այնուհետև Չօնդէրբունդի և նախկին կօնֆէդերացիայի աւերակների վրայ բարձրացաւ Շվէյցարական ֆէդերացիայի իսկական սահմանադրութիւնը, որը կնթարկեց բաւական խոշոր փոփոխութիւնների 1874 թւին: Այդ սահմանադրութիւնն է, որ կառավարում է Շվէյցարական Դաշնակցական Հանրապետութիւնը մինչև օրս:

Պետութիւնների երրորդ խոշոր դաշնակցութիւնը մենք զբոնում ենք Գերմանիայում: 1806 թւին, երբ Ֆրանց II կայսրը հրա-

*) Вильсонъ—„Государство“ Երես 269, պարագր. 634.

ժարեց «Գերմանիայի կայսր» տիտղոսից և իր վրայ առաւ միայն «Աւստրիայի կայսր» անունը, Նապօլէօն Բօնապարտի ազդեցութեան տակ միջին և հարաւային Գերմանիայի բոլոր մասեր պետութիւնները, թւով 36, կազմեցին Հոլէնտեան կօնֆէդերացիան, նոյն Բօնապարտի պրօտէկտօրատի տակ: Դա տեւեց մինչև 1815 թիւը, երբ Վիէնայի կօնգրէսը փոխեց Հոլէնտեան դաշնակցութիւնը և կազմեց գերմանական կօնֆէդերացիա, կնթարկելով ներան Աւստրիայի պրօտէկտօրատին: Այդ գերմանական կօնֆէդերացիան տեւեց մինչև 1866 թիւը, երբ Պրուսիան Սադօվայի մօտ յաղթեց Աւստրիային, իսկ 1871-ին Ֆրանսիային և, այդ յաղթանակների ազդեցութեան տակ, կազմեց գերմանական դաշնակցական կայսրութիւնը, գերմանական ֆէդերացիան:

Այս 3-4 խոշոր օրինակներից պարզ երևում է, որ կօնֆէդերացիան պատմութեան ընթացքում առհասարակ ծնունդ է տւել իսկական ֆէդերացիայի: Նա պատրաստել ու զարգացրել է դաշնակցական այն նախնական զգացմունքը, որ Դայսին դառնում է անհրաժեշտ ֆէդերացիա կազմելու համար *): Եւ շատ ընտանի է. անհրաժեշտ ֆէդերացիա կազմում են այդպիսի տեղական մի քանի պետութիւններ եթէ կազմում են այդպիսի տեղական դաշինքներ, նշանակում է կան տնտեսական, քաղաքական, ազգային և այլ բազմաթիւ պայմաններ **), որոնք ստիպում են ներանց կօնֆէդերացիա կազմել: Երկար ժամանակ վայելելով այդպիսի համերաշխութեան և հեղրայրական դաշինքի պտուղները, ներանք փորձով համոզոււմ են, որ լաւ է միանալ և կազմել մի դաշնակցական պետութիւն:

Պատմութեան ընթացքում մինչև XIX դարի կէսերը դա է եղել ֆէդերացիա կազմելու միակ ուղին: Իսկ XIX դարի ընթացքում ծնել է և երկրորդ ճանապարհը, որին, մեզ թւում է, վերա-

*) А. В. Дайси—«Осн. Гос. права Анг.» գլ. III, Երես 158, „Присутствие федеральнаго чувства“.

**) «Պետութիւնների դաշնակցութիւն կազմելու զրգիչ պատճառներ առհասարակ եղել են ազդութեան ընդհանրութիւնը, իսկ այնուհետև արդէն պատմական ուրիշ տեսակի կապեր, ինչպէս օրինակ, անկախութիւն ձեռք բերելուց մտաջ եղած ընդհանուր հպատակութիւնը մի և նոյն իշխանութեանը կամ պետութեանը»: Елл. loc. cit Երես 515. Այստեղ արդէն Ելլինէկն ընկնում է միակողմանութեան մէջ, առանձին տեղ չը տալով տնտեսական և աշխարհազրական պայմաններին:

պահած է աւելի մեծ ապագայ: Դա երկրորդ ուղին է—վերեփց
ներքև, բաժանման ճանապարհով Ֆէդերացիա կազմելը: Այդ եր-
կու ճանապարհների մասին մենք կը խօսենք քիչ յետոյ:

Պետութիւնների դաշնակցութիւնները յարատև չեն եղել պատ-
մութեան մէջ. մի կողմից նրանք, ինչպէս տեսանք, ստեղծել են
Ֆէդերացիաներ, իսկ միւս կողմից՝ ձուլւել և արտադրել են մի
պետութիւն, ինչպէս Նիդերլանդիայում:

Այլ բան է Ֆէդերացիան կամ դաշնակցական պետութիւնը:

Ֆէդերատիվ պետութիւն կոչւում է այն պետութիւնը, որը
բաղկացած է մի քանի անկախ պետութիւններից կամ մասերից
և այդ մասերից իւրաքանչիւրը պահպանում է իր ներքին գերիշ-
խանութիւնը, իր սեփական օրէնքները և իր առանձին կառավա-
րութիւնը *): Այդ բոլոր բաղադրիչ պետութիւնները միանալով,
կազմում են մի բարդ պետութիւն, մի Ֆէդերացիա, որը նոյնպէս
ունի իր գերիշխանութիւնը, իր սեփական օրէնքները և իր յա-
տուկ կառավարութիւնը:

Ֆէդերատիվ պետութեան կենտրոնական իշխանութիւնը գի-
տում է իր բաղադրիչ պետութիւնների տէրրիտօրիան իրը իր
սեփական երկիրը, ինչպէս մի ունիտար պետութիւն: Բաղադրիչ
մասերի բնակիչները նոյնպէս ենթարկւում են Ֆէդերացիային,
ինչպէս ունիտար պետութեան քաղաքացիներն իրանց կենտրո-
նական վարչութեանը, միայն ոչ բոլոր հարցերում: Իրաւասու-
թեան սահմանները որոշ կերպով բաժանւած են լինում սահմա-
նադրութիւնով:

Դաշնակցական պետութեան մէջ երկու որոշ գերիշխանու-
թիւններ իրար լրացնում են: Գերիշխան է կենտրոնական դաշ-
նակցական իշխանութիւնը, սակայն գերիշխան են և նրա բաղա-
դրիչ պետութիւնները, կանտոնները, գաղութները, նահանգները—
նրա բաղադրիչ մասերը:

Կենտրոնական գերիշխան պետութեանը տրւում են որոշ իրա-
ւունքներ: Տնօրէնը բաղադրիչ մասերն են, անկախ մասերը, ո-
րոնք համաձայնում են իրանց իրաւասութիւններից մի քանիսը
տալ Ֆէդերատիվ մարմնին, զրկելով իրանց այդ իրաւունքներից:
Այնպէս որ նոր ստեղծւած կենտրոնական դաշնակցական մարմինը

*) Эмень—loc. cit. 7.

հանդիսանում է իրը մի նոր պետութիւն, իրը մի գերիշխան մար-
մին—միայն գերիշխան ոչ բոլոր հարցերում, այլ որոշ խնդիրնե-
րում: Նա կարող է հրատարակել օրէնքներ իր իրաւասութեանը
թողնւած հարցերի առիթով. և տեղական բոլոր իշխանութիւնները
և նրանց օրէնքներն այդ խնդիրների առիթով՝ պարտաւորւում
են լռել. նախապատուութիւնն անպայման տրւում է Ֆէդերատիվ
կենտրոնական իշխանութեանը *):

Բացի այդ՝ նոյն իսկ գործադիր Ֆէդերատիվ կենտրոնական
իշխանութիւնը հրամաններ է արձակում իր իրաւասութեան տակ
եղած հարցերի վերաբերմամբ և ամբողջ Ֆէդերացիայի սահման-
ներում բոլոր քաղաքացիները պարտաւորւում են հնազանդել նրան:

Ճիշտ նոյնն է և դատաստանական խնդրում: Կան դաշնակ-
ցական կենտրոնական դատարաններ, որոնց իրաւասութեան տակ
են որոշ հարցեր (միջ-պետական, միջ-կանտոնային): Տեղական
դատարանները ևս ունեն իրանց իրաւասութեան սահմանները.
այդ շրջանակում տեղաւորւած հարցերում, որ նախատեսւած են
սահմանադրութեան մէջ,—նրանք պարտաւոր են հպատակել դաշ-
նակցական դատարաններին:

Ֆէդերացիայի կենտրոնական իշխանութիւնն է, որ ներկա-
յացնում է պետութիւնն արտաքին քաղաքականութեան մէջ, ինչ-
պէս արդէն մի անգամ ասել ենք:

Անկախ կամ գերիշխան պետութիւնն, ինչպէս ասացինք, կա-
րող է ինքն իրան պարտաւորեցնել անելու այս ինչ բանը, չանե-
լու այն ինչը և կամ զրկելու ինքն իրան այս ինչ իրաւունքից:

Նւ անա մօտենում են իրար մի քանի անկախ, լիտպէս գե-
րիշխան մարմիններ և իրանց սեփական կամքով նախորոշում, որ
իրանց գերիշխանութեան մի մասը պէտք է տան մի նոր ստեղծ-
ւող իշխանութեան, զրկելով իրանց այդ իրաւունքներից: Այդ ճա-
նապարհով առաջանում է կամ կազմակերպւում պետական մի
նոր մարմին—վերնայարկի կենտրոնական իշխանութիւնը, որը

*) Դա այնքան կարևոր խնդիր է, որ դաշնակցական պետութիւնների սահ-
մանադրութիւններն առանձին յօդւածներ են նւիրել դրան և նախատեսել, որ-
պէս զի թիրմացութիւններ չառաջանան: Այդ բանը յատկապէս յիշւած է գեր-
մանական կայսրութեան սահմանադրութեան 2-րդ յօդւածում, Միացեալ-Նա-
հանգների սահմանադրութեան VI գլխի 2-ր յօդւածում, շվեյցարականի 116-րդ
յօդ., Արգէնտինայի 31-րդում, Մեքսիկայի 126-ում, Վենէցուէլականի 13—18
-րդում:

նոյնպէս գերիշխան է, ինչպէս և ներքնայարկը կազմող գաշնակից պետութիւնները:

Սակայն դա չէ միակ ուղին, որով կազմուած է Ֆէդէրացիան. կայ և մի երկրորդ ճանապարհ, որի մասին կը խօսենք յետոյ: Առայժմ, դիւրութեան համար, աչքի առաջ ունենանք այդ մէկը միայն:

Գերմանական գրականութեան մէջ գերիշխանութեան հարցը շատ մեծ վէճերի առարկայ է եղել. գերիշխանութիւնն այնտեղ հասկացել է մետաֆիզիքօրէն—մի բան, որ կամ կայ, կամ չը կայ ամբողջովին:

«Գերիշխան կամ սուվըրէն իշխանութիւն ասելով, պէտք է հասկանալ բարձրագոյն իշխանութիւնը: Գերիշխանութեան յատկութիւնը դրականապէս չէ վկայում կամ ցոյց չէ տալիս այն իրաւակարողութիւնը, որ ունի իշխանութիւնը: Այդ բառով ստորագծուած է միայն այն բացասական յատկութիւնը, որ տրւած իշխանութեան վրայ չը կայ մի ուրիշ որ և է իշխանութիւն, որն իրաւունք ունենար դիմելու նրան այս կամ այն պարտադիր հրամաններով: Սակայն այդ ցոյց է տալիս, որ գերիշխանութիւնը բացարձակ բնաւորութիւն ունեցող յատկութիւն է, որը չէ ենթարկուում ոչ մեծացման, ոչ փոքրացման, և որը կամ կայ, կամ չը կայ. այդ պատճառով էլ գերիշխանութեան կամ սուվըրէնիտէտի սահմանափակման կամ բաժանման մասին խօսք լինել անգամ չէ կարող: Մի անձնաւորութիւն (ինարկէ իրաւական), որն ունի իր կարգադրութեան տակ լայն շրջան հարցերի՝ գերիշխան չէ, եթէ որ և է կէտում ենթարկուում է ուրիշի կամքին, ուրիշ անձնաւորութեան իշխանութեանը, և եղած իրաւակարգի զօրութեամբ՝ ենթարկուում է նրա հրամաններին: Կիսատ, մասնակի, փոքրացած, յարաբերական գերիշխանութիւն գոյութիւն չունի: Կարելի է լինել կամ գերիշխան, կամ ոչ-գերիշխան. երրորդ հնարաւորութիւն գոյութիւն չունի» *):

Ահա այն մետաֆիզիքական տեսակէտը, որ թագաւորում է Լարանդի, Չէյդէլի, Ելլինէլի և գերմանական ուրիշ գրողների շարադրութիւններում գերիշխանութեան վերաբերմամբ: Ինչպէս արդէն տեսանք, դա նոր տեսակէտ չէ. ֆրանսիական Մեծ յեղափո-

*) Горенбергъ—„Теорія союзнаго государства“. Դա իսկապէս գերմանական հոչակաւոր գիտնական Լարանդի կարծիքն է, որ համառոտած տալիս է Գօրէնբերգը:

խութեան գործիչներն իրանց «մարդու և քաղաքացու իրաւունքների դէկլարացիայում» յայտարարել էին արդէն այդ տեսակէտը: Դեռ դրանից էլ առաջ XVI, նոյն իսկ XVI դարի գրողներից մի քանիսը պաշտպանել են այդ մետաֆիզիքական հայեցակէտը գերիշխանութեան վրայ: Սակայն կեանքն իր ամենօրեայ փաստերով եկել, խորտակել է այդ վարդապետութիւնը:

Գոյութիւն ունեցող բոլոր Ֆէդէրացիաները պարզ ապացոյց են, որ կարելի է գերիշխանութիւնը սահմանափակել. կարելի է մի խումբ հարցերում լինել գերիշխան, իսկ մի այլ խումբ հարցերում լինել ենթակայ մի այլ գերիշխան մարմնի:

Այդ առիթով էլ պետական իրաւունքի գերմանական խոշոր ներկայացուցիչները, որպէս զի փրկած լինեն իրանց «անբաժանելի գերիշխանութեան» տեսակէտը, հնարում են մի այլ նուրբ բացատրութիւն:

«Գերիշխանութիւն չունեցող մի անձնաւորութիւն, այսինքն մի որ և է կէտում ուրիշ իշխանութեան ենթակայ եղողը, այնուամենայնիւ կարող է ունենալ իշխանութեան իրաւունք ազատ մարդկանց և նրանց ընկերութիւնների վրայ, այսինքն՝ կարող է ունենալ պետական իրաւունք:... Եթէ մի քանի անկախ պետութիւններ իրար հետ դաշնակցութիւն են կազմում այնպէս, որ ենթարկուում են բարձրագոյն իշխանութեան, այդ դէպքում, չը նախընտրուում են իրանց սեփական իրաւունքների զօրութիւնով և իրականացում են նրանց կողմից ինքնորոշութիւն և ըստ սեփական հայեցողութեան,— այդպիսի դէպքում այդ պետութիւնները զաղարում են գերիշխան լինելուց, բայց չեն դադարում պետութիւն լինելուց» **):

Ահա գերմանական յիշւած գրողների մտածողութեան եղանակը գերիշխանութեան մասին: Սակայն, ինչ անուն ուզում էք տւէք. նակը գերիշխանութեան մասին: Սակայն, ինչ անուն ուզում էք տւէք. ուզում էք ասացէք, որ, օրինակ, շվէյցարական կանտոնները գերիշխան պետութիւններ են, կիսապերիշխան են, կամ «ոչ-գերիշխան պետութիւններ են», ինչպէս՝ ասում է Ելլինէլը («Staaten-

**) Горенбергъ—loc. cit.—123.

Դաշնակցական պետութեան մէջ բոլոր անդամներն սկզբունքով իրար հաւասար են: Այսպէս, Շվէյցարական բոլոր կանտոնները, մանր թէ խոշոր, ուղարկում են Պետութիւնների խորհուրդը երկուական անդամ: Նոյն հաւասարութիւնն է աիրում նաև Միացեալ Նահանգներում սէնատի կազմակերպութեան խնդրում. բոլոր նահանգներն ուղարկում են հաւասար թւով—2-ական սէնատորներ: Եթէ կան անհաւասարութիւններ, նրանք պէտք է յատկապէս յիշեն սահմանադրութեան մէջ, ինչպէս այդ արւած է, օրինակ, Գերմանիայում: Դաշնակցական խորհրդում Պրուսիան ունի 17 ձայն, Բաւարիան—6, Սաքսոնիան և Վիւրտեմբերգը—4 ական, Բադէնը և Հէսսէնը—3 ական, Մէլլէնբուրգ-Շվէրինը և Բրաունշվայգը—2-ական, իսկ մնացածները մէկ-մէկ ձայն *): Ընդամենը 58 ձայն: Բացի այդ՝ ամեն մի պետութեան ներկայացուցիչները պարտաւոր են միանման ձայներ տալ. կարող են շատերը չը գալ, միայն մէկը ներկայանայ և իր պետութեան բոլոր պատերազմների կողմից ձայն տայ, իբր թէ նրանք բոլորը ներկայ են:

Բացի կենտրոնական խորհրդի մէջ մասնակցող պատգամաւորների թւից, անհաւասարութիւնը կարող է անդի ունենալ նաև իրաւասութեան սահմանների վերաբերմամբ: Շվէյցարիայում և Միացեալ Նահանգներում իրաւասութիւնների վերաբերմամբ էլ ոչ մի բառ չէ ասւած սահմանադրութիւններում, որովհետև ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ դաշնակցութեան բոլոր մասերը, մանր կանտոն կամ նահանգ և խոշոր—այդ միևնոյն է, դիտւում են իբր լիապէս հաւասար իրաւասութեան տէր, ինչպէս միջազգային օրէնքը հաւասարապէս վերաբերում է բոլոր պետութիւններին, անկախ նրանց տարածութեան, ազգաբնակչութեան կամ ուժի մեծութիւնից կամ փոքրութիւնից: Իսկ Գերմանիայում դաշնակից պետութիւններից մի քանիսն ունեն անաւելիալ իրաւունքներ, ինչպէս, օրինակ Բաւարիան, Վիւրտեմբերգը և այլն: Դա է որ դիտւում է «jura reservata» (յատուկ կամ վերապահւած իրաւունք):

«Այսպիսով դաշնակցական պետութեան անդամները, (իրաւաւորանական) անհատների նման, որակւում են իրաւարանօրէն

*) Вильсонъ—երես 240, պարագր. 501. Գերմ. սահմ. յօդւած 6-րդ:

լիստ տարբեր կերպով: Այն չափով, ինչ չափով որ նրանք ենթարկւում են դաշնակցական պետութեանը, նրանք զրկւած են իրանց պետական բնոյթից: Բայց դրանից դուրս, նրանք ունեն դաշնակցական իշխանութիւնից ազատ գործունէութեան շրջան, որի մէջ արայայտւում է նրանց պետական բնոյթը. նրանք, իբր պետութիւններ, ունեն որոշ իրաւունքներ օգտւելու դաշնակցութեան ծառայութիւններից» *):

Դաշնակցական պետութեան առաջնաւոր, նրա ծնւիլն էլ մեծ վիճարանութեան է տեղիք տւել: Արդեօք մի քանի անկախ պետութիւններ մօտեցել են իրար և դաշնակից դառել, դաշինք կուել և հիմնել ֆէդէրացիա: Այդպիսի դէպքում դաշնակցական պետութիւնը հանդիսանում է իբր արդեւնք այդ անդամների ազատ կամքի և, անշուշտ, ասում են յիշւած գերմանացի գրողները, կարելի պիտի լինի այդ «պակտը» կամ այդ դաշինքը նորից քանդել՝ կողոնների միահամուռ հաւանութեամբ:

«Այդ անսակէտից անբացատրելի կը լինէր, թէ ինչո՞ւ դաշնակցական պետութիւնը չէ կարող նորից բաժանւել իր բաղադրիչ մասերին—դաշինքը քանդելով կամ մի նոր խմբական դաշը կուելով», ասում է Ելլինէկը: Ոչ, ազատ դաշինքի թէօրիայով չէ կարելի բացատրել դաշնակցական պետութեան ծնունդը. նրանով կարելի է բացատրել զանազան միջազգային երևոյթներ, նոյն կարելի է բացատրել զանազան միջազգային երևոյթներ, իսկ պետութիւնների դաշնակցութիւնը կամ կօնֆէդէրացիան, իսկ պետութեան ծագումը բացատրել «հասարակական» դաբայց մի պետութեան ծագումը բացատրել «հասարակական» դաշինքով, անհնար է: Պետութիւնները ծնւում են անողորմ անհրաժեշտութեան, necessitas-ի հիման վրայ: Գոյութեան կոխն է նրանց ծնունդ տուողը:

«Կայսրութիւնը (գերմանական), ասում է Ելլինէկը, մեզ համար մի պետութիւն է. կայսրութիւնից դուրս գալը, դաշնակցութեան զազարումը մեզ իրաւականօրէն անհնար է թւում հենց այն պատճառով, որ մենք համոզւած ենք, որ կայսրութիւնը մի պետութիւն է **):

Այո, տարբեր բան է դաշը կապելը, կօնֆէդէրացիա հիմնելը, որից կարելի է դուրս գալ, որի մէջ իրաւարանօրէն ձանաչւում

*) Еллинекъ—„Право сов. гос.“ երես 523

**) Елл.—երես 522

է դաշնակցի կատարեալ գերիշխանութիւնը և նրա իրաւունքը հեռանալու այդ կապակցութիւնից, — և տարբեր է սահմանադրութիւնը *)։ Մէկը միջազգային մի ազատ է, միւսը պետական իրաւական գործ։ Մէկը խզելի է, որովհետեւ կախած է դաշը կապողների ազատ համաձայնութիւնից, իսկ միւսն իրաւարանօրէն անխոչըտորելի է, որովհետեւ ծնունդ չէ ազատ համաձայնութեան, այլ օրեկախի և սուրբեկախի մի շարք պայմանների—ցեղական, ազգային, տնտեսական, քաղաքական և այլ անհրաժեշտութիւնների։ Դուրս գալ, օրինակ, Միացեալ-Նահանգներից, դադարել նրա մի բազադի մասը լինելուց, դա մի և նոյնն է թէ քանդել մի պետութիւն, ապստամբել, անկախութիւն ձեռք բերել, ինչպէս Յուսատանը ձեռք բերեց։ Դա մի և նոյնն է, թէ այսօր Սալօյեան ուղեւայ դուրս գալ Փրանսիայի իշխանութիւնից։

Ահա այդ պատճառով է, որ Ելլինէկն ասում է. «կայսրութիւնը, մի պետութիւն է», — ուրեմն՝ նրանից բաժանել չէ կարող այս օր մի Համբուրգ կամ մի Բաւարիա։ «Այնտեղ ուր կարելի է հոչակել բաժանման իրաւունքը, այնտեղ չը կայ պետութիւն» **): Իսկ Ֆէդէրացիան անպայման մի պետութիւն է։ Կարելի է վիճել նրա ծագման, նրանում տիրող իրաւասութիւնների սահմանների մասին, բայց երբէք չէ կարելի կասկածել, որ, օրինակ, Գերմանիան մի պետութիւն է։ Իսկ եթէ նա մի պետութիւն է և ոչ պետութիւնների ժողովածու, պարզ է ուրեմն, որ նրանից բաժանել չէ կարելի։

Ձէմս Բրայսն իր մեծ աշխատութեան մէջ նոյն կարծիքն է յայտնում Միացեալ-Նահանգների վերաբերմամբ։ «Աւելի ևս տաք վիճարանութիւններ էին տեղի ունենում այն հարցերի առիթով, որոնք պարզաբար և ճշտօրէն լուծւած չէին սահմանադրութեան մէջ, մանաւանդ հետեւալ հարցի մասին. արդեօք առանձին շտատները պահպանել են իրանց բարձրագոյն իրաւունքը, դրա հետ միասին նաև չենթարկելու իրաւունքն ազգային (դաշնակցական) կառավարութեան մի քանի որոշումներին, իսկ ծայրա-

*) Տես այդ առիթով Ելլինէկի նոր գիրքը, «Конституция», ուր նա մանրամասն կանգ է առնում այդ հարցի վրայ։

**) Jellinek—«Die Lehre von Staatenverbindungen» էրես 260 (cité par Горенб. էրես 50)

յեզ դէպքում՝ նաև Դաշնակցութիւնից դուրս գալու իրաւունքը» *): Առաջ բերելով XIX դարի ընթացքում խոշոր վիճարանութիւնների տեղի տուող այդ և ուրիշ մի քանի հարցեր, Ձէմս Բրայսն աւելացնում է նոյն երեսում. «Որովհետեւ այս վերջին հարցը (դուրս գալու ինդիքը) արդէն վերջնականապէս լուծւած է ազգամիջեան պատերազմով (1861 թ. պատերազմը վերութեան վերացման առիթով), մենք կարող ենք պնդել, որ Ամերիկայում այժմ բոլորն ընդունում են հետեւալ հիմնական կանոնները»։ Եւ ապա հաշուում է նա այդ հիմնական կանոնները, որոնցից առաջինն է հետեւալը. «Ամեն մի շտատ (նահանգ), Դաշնակցութեան մէջ մտնելիս, վերջնականապէս հրաժարւում է իր բարձրագոյն իշխանութիւնից և ընդմիշտ ենթարկւում է դաշնակցական իշխանութեանը, որի իրաւունքները որոշւած են սահմանադրութեան մէջ» **):

Միացեալ-Նահանգների սահմանադրութեան մէջ, ասում է Բրայսը, կան մի քանի նշանաւոր պակասութիւններ։ Առաջինը—Ֆէդէրալ կառավարութեանը չէ տրւած ոչ մի իրաւունք ուժով հպատակութեան բերելու անհնազանդ կամ ապստամբ Նահանգները։ Երկրորդը—որ մեզ համար այժմ էականն է,—ոչինչ չէ ասւած այդ սահմանադրութեան մէջ, թէ արդեօք Նահանգներն իրաւունք ունեն հեռանալու կամ բաժանելու դաշնակցութիւնից։ «Իժար չէ հասկանալը թէ ինչո՞ւ Նահանգներին չեն տրւած այդպիսի իրաւունքներ, բայց դժար է հասկանալ, թէ ինչու սահմանադրութեան մէջ չէ յիշւած, որ նրանք զրկւած են այդ իրաւունքից» ***):

Եւ ճշմարիտ, Միացեալ-Նահանգների սահմանադրութեան մէջ չըկան փիլիսոփայական բացատրութիւններ ոչ Ֆէդէրացիայի բնաւորութեան, ոչ գերիշխանութեան բաժանման, ոչ կենտրոնի ու մասերի իրաւասութիւնների վերաբերեալ զանազան սկզբունքային հարցեր... Այդ սահմանադրութիւնը նման չէ ֆրանսիական սահմանադրութիւններին, որոնք սկսւում են փիլիսոփայօրէն բացատրելով «մարդու և քաղաքացու իրաւունքները», «ազգի օւնհատի» յարաբերութիւնների զեկավար սկզբունքները և այլն։

*) Джемсъ Брайсъ—«Амер. республика»—հատ. 1. եր. 344

**) Дж. Брайль. loc. cit. էրես 345

***) Նոյն տեղը. էրես 355

Նա գործնական է և պարզ, յստակ: Նա սկսում է այսպէս. «Մահ-
մանադրուժիւն 1787 թւի, սեպտեմբեր 17-ի: Մենք, Միացեալ
Նահանգների ժողովուրդս, հրատարակում և հաստատում ենք այս
սահմանադրութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգների համար,
նպատակ ունենալով կազմել աւելի կատարեալ միութիւն (СОЮЗЪ),
հաստատելու արդարադատութիւնը, ապահովելու ներքին հանգս-
տութիւնը և ընդհանուրի անվտանգութիւնը, աւելացնելու ընդ-
հանուրի բարօրութիւնը և ապահովելու թէ մեր և թէ մեր յետ-
նորդների համար ազատութեան բարիքները»:

Դա է միակ ներածութիւնը, նրա միակ փիլիսոփայութիւնը:
Ամբողջ սահմանադրութեան հիմնական 7 յօդաձևերի ու 21 բա-
ժանումների մէջ, թէ 16 սրբագրութիւնների մէջ ոչ մի ուրիշ
թէօրէթիք, տեսական դատողութիւն չը կայ: 1787-ի սահմանադրու-
թեան կազմողները ցանկացել են լինել գործնական, մնալ լոկ
գործնական հողի վրայ, որպէսզի տեղիք չը տան սկզբունքային ան-
վերջ վէճերի, մետաֆիզիքական և դիալեկտիքական ընդհարումների,
որոնք առհասարակ խիստ խանգարում են պրակտիքական գոր-
ծունէութեան և նոյն իսկ քաօս են ստեղծում գործնական կեան-
քում, ինչպէս Փրանսիական յեղափոխութեան ժամանակ:

Հիմնադիրները հասան իրանց նպատակին. Ֆէդէրացիան
հաստատուեց և խիստ կայուն մնաց, բայց վէճերից չը խուսափեց:
Սկզբունքային հարցերը ժայթքեցին հզօր ուժով: «Մարդկային
միտքը չէ հանդուրժում ոչ մի ճնշման», ասում է Բրայսը. «... Չը-
նայելով որ ամերիկական սահմանադրութիւնը կրում է զուտ իրա-
ւարանական և գործնական բնույթ, նրա ստեղծած կառավարու-
թիւնը զարձաւ քննութեան առարկայ մետաֆիզիքական վերացա-
կանութիւններով լի բազմաթիւ գրութիւնների: Մինչև 1861-թիւը
ամերիկական իրաւագէտներն ու հրապարակախօսները մոլորեաձ
թափառում էին վերացական դադափարների անել լարիւրինթո-
սում, որից նրանց դուրս բերեց հիւսիսի Նահանգների յաղթանա-
կը հարաւացիների դէմ, այժմ այլ ևս ոչ մի գործ չունենք մենք
այդ լարիւրինթոսի հետ: Այժմ ամենքն էլ ընդունել են, որ ամե-
րիկական Դաշնակցութիւնը ծնունդ է առել ոչ թէ Նահանգների
մէջ առաջացած մի այնպիսի կամաւոր կապից, որը կարող է
խզել նրանցից իւրաքանչիւրի կամայական ցանկութիւնով, այլ
մի օրէնսդրական ակտից, որը պարտադիր ոյժ ունի յաւիտենա-

պէս բոլորում է ամբողջ ազգից և կարող է փոփոխել նոյն ազգի
ձեռքով միայն նրանում մատնացոյց արւած եղանակով: Դա «ան-
բակտելի դաշնակցութիւնն է անքակտելի Նահանգների» *):

Մի այլ առիթով Բրայսը, բերելով բաւականաչափ օրինակ-
ներ Նահանգների ըմբոստացման և նրանց ու դաշնակցական կա-
ռավարութեան միջև առաջացած ընդհարումների, որոնց ժամա-
նակ մի քանի Նահանգներ ուղղակի պատրաստել և պահանջել
են բաժանում դաշնակցութիւնից,—ասում է. «Այդ հարցերը վերջ-
նականապէս լուծեցին 1861-65 թւերի ազգամիջեան պատերազ-
մով: Այդ ժամանակից արդէն կարելի է հաստատապէս ընդունուած
համարել հետեւեալ կանոնները. 1) Նահանգներն իրաւունք չունեն
անոյժ համարելու դաշնակցական կառավարութեան որոշումները.
2) Նահանգներն իրաւունք չունեն դուրս գալու դաշնակցութիւնից 3) Դաշ-
նակցական արդարադատութիւնը կամ գատարանը միակ լոկա-
նութիւնն է, որն իրաւունք ունի վերջնականապէս լուծելու այն
հարցը, թէ արդեօք սահմանադրութեան հետ համաձայն են կօնգ-
րէսի կամ կենտրոնական գործադիր իշխանութեան որոշումները
և կարգադրութիւնները» **):

Այս բոլորից պարզ է, որ դաշնակցութիւնը մի անխզելի
ակտ է, որը կարելի է խզել լոկ յեղափոխական ճանապարհով:
Իրաւական միջոցներով նրանից դուրս գալ անկարելի է: Հակա-
ռակուղ դաշնակիցները, դաշնակցական պետութեան այն մասերը,
որոնք կուզեն չը հպատակել կամ բաժանել այդ պետութիւնից,
դիւտում են իրր օրինադանցներ, իրր ապստամբներ և ոչ իրր
դաշինք խախտողներ: Այդ պատճառով էլ, օրինակ, գերմանական
սահմանադրութիւնը տալիս է դաշնակցական կառավարութեանն
իրաւունք կղկկուցիա դնելու այն դաշնակից անդամի երկրի ու
ազգարնակութեան վրայ, որը չէ հպատակում կենտրոնական
կառավարութեան որոշումներին և դրած օրէնքներին:

Դաշնակցութիւնից դուրս գալ ցանկացող ապստամբների
դէմ պատերազմ եղել է Միացեալ-Նահանգներում (1861—65-ին),
Շվեյցարիայում—1847-ին, դաշնակցական սահմանադրութեան
նախօրեակին. դա «Ձօնդէրրունդի» հռչակաւոր պատերազմն է, որի

*) Брайсъ—իշուած շարադրութիւլը—հատ. 1. էր. 355-56
**) Նոյն տեղ—հատ 1. էրևս 371

հերոսն է գեներալ Դիւֆֆիւրը. 70 մարդ միայն դո՛ւ տալով (երկու կողմից), այդ տաղանդաւոր զորավարը և կրակոտ հայրենասէրը կարողացաւ յաղթել ու հպատակութեան բերել «Առանձին Դաշնակցութիւն» կազմել ցանկացող կանտոններին: Եւ երախտագէտ Շվէյցարիան արձան է կանգնեցրել իր տաղանդաւոր զաւակի համար՝ ժընէվի թատրոնի առջև, ամենլաւ հրապարակում:

Ի հարկէ Ֆէդէրացիայի այս յատկութեան մասին կայացած վերջնական համոզումն էլ առանց թէօրեալիք հակաճառութիւնների չէ եղել: Այսպէս, Գերմանիայի յայտնի իրաւագէտ Ձէյդէլը, իր մի քանի յօդաւածներում ու գրքերում (օրինակ «Bundesstaatsbegriff» ընդարձակ գրութեան մէջ) այն կարծիքն է յայտնում, որ Դաշնակցական պետութիւնը ծնունդ է լոկ ազատ համաձայնութեան կամ դաշինքի. նրանից դուրս զալ ցանկացող մասերը չը պէտք է դիտուեն իբր սպասամբներ, այլ իբր գաշնադիր խախտողներ, ոչ իբր մի միաձոյլ պետութեան դաւաճաններ, այլ իբր ընկերներ, որոնք իրար հետ համաձայն չը լինելով, բարեկամարար բաժանում են իրարից: Նա պնդում է, որ «Դաշնակցական պետութիւն» կոչւած հասկացողութիւնը թիւրիմացութիւն է. Ֆէդէրացիան մի պետութիւն չէ, այլ պետութիւնների մի դաշնակցութիւն:

Թէօրիայից անցնելով գործնականին, Ձէյդէլն ասում է, որ կայսերական դաշնակցութիւնն իրաւաբանօրէն խղելի մի հաստատութիւն է *): Եւ դա հետևողական եզրակացութիւն է «ազատ դաշինքի» թէօրիայի: Բայց այդ կապը խղելու համար՝ նա պահանջում է բոլոր անդամների միաձայն վճիռը: Նա չէ ընդունում, որ ամեն մի կօնարագէտ (դաշնադիրը կապող իւրաքանչիւր անդամը) կարող է ցանկացած ժամանակը դուրս գալ Դաշնակցութիւնից, խղել կապերը նրա հետ: Իսկ դա արդէն նշանակում է գործնականապէս անհնարին դարձնել դաշնակցութեան լուծումը, որովհետև եթէ կան հիմքեր դաշնակցական մի պետութիւն կազմելու համար, անկարելի է, որ չը լինեն մի քանի դաշնակիցներ, որոնք չուզենան չը շարունակել Դաշնակցութեան գոյութիւնը:

*) Von Seydel—«Kommentar zur Rechtsverfassung, երես 33 (cite' par Еллин.—երես 523, ծանօթ. 2).

Ձէյդէլից առաջ այդ նոյն տեսակէտն աւելի հետևողականութեամբ պաշտպանում էր ամերիկական իրաւագէտ Կալհունը, որը հարաւային ստրկատէր նահանգների թէօրեալիքն էր հանդիսանում Միացեալ-Նահանգներում, երբ նրանք ցանկանում էին բաժանել հիւսիսի նահանգներից և հիմնել առանձին Դաշնակցութիւն, որի մէջ ստրկատիրութիւնը յարատէր:

Կալհունը նոյնպէս «ազատ դաշինքի» կողմնակից է: Նա էլ պնդում է, որ դաշնակցական մի պետութիւն չը կայ, այլ կայ պետութիւնների դաշնակցութիւն, որն արդիւնք է մի քանի անկախ պետութիւնների ազատ համաձայնութեան: Հաւաքել են նրանք, իրանց գերիշխանութեան մի մասը տել են կենտրոնական մարմին. երբ չուզենան այլ ևս հնազանդել, կամ երբ այլ ևս իրանց ձեռնտու չը լինի մնալ այդ դաշինքին հաւատարիմ, կարող են թողնել ու հեռանալ, խղել իրանց դաշնադիրը:

Միջազգային օրէնքները չեն ճանաչում ոչ մի յաւիտենական անփոփոխ հիմնարկութիւն, ասում է Կալհունը. ուրեմն մի կնքւած դաշինք չէ կարող համրել «յաւիտենական և անխղելի»:

Թէ Կալհունի, թէ Ձէյդելի հիմնական սխալը նրանումն է, որ սահմանադրութիւնը, նրանց կարծիքով, մի «ազատ դաշինք» է, մի միջազգային ակտ, որը երբ կամենան, կարող են խղել: Ոչ, սահմանադրութիւնը ծնունդ է կենսական օրեկտիվ և սուբեկտիվ պայմանների, կենսական անհրաժեշտութեան. նա միջազգային ակտ չէ, այլ պետական ներքին մի գործ: Դաշնակցութեան անվամբները քանի դեռ չեն մտել նրա մէջ, անկախ, ինքնուրոյն պետութիւններ են, իսկ երբ մտնում են, նրանք դադարում են անկախ գոյութիւն ունենալուց, բոլորը ձուլում, դառնում են մի պետութիւն՝ սահմանադրութեան շնորհով, թէև պահպանում են որոշ տեղական գերիշխանութիւններ: Եթէ նոյն իսկ համաձայնեմք, որ սահմանադրութեան ու Ֆէդէրացիայի հրատարակումը մի միջազգային ակտ է,—ենթադրելով դաշնակիցներին իբր բոլորովին անկախ պետութիւններ,—այնուամենայնիւ մենք ստիպւած ենք նրա գործադրութիւնը համարել պետական ներքին գործ, որովհետև հրատարակումից անմիջապէս յետոյ այլ ևս չը կան անկախ մի քանի պետութիւններ, այլ կայ միայն մի բաղադրեալ պետութիւն, մի Ֆէդէրացիա, և սահմանադրութեան գործածութիւնն ակնբերօրէն դառնում է մի պետական ներքին գործ:

Այսպէս ուրեմն՝ կօնֆէդէրացիան մի միջազգային և խզելի ահա է. նրա անդամները, միացած լինելով դաշնագրի հիման վերայ, կարող են խզել դաշնագիրը և դուրս գալ պետութիւնների դաշնակցութիւնից: Գուցէ նրա անդամներից այս ու այն վախնանան դուրս գալուց իրանց ուժի թուլութեան և միւսների ուժեղութեան պատճառով, բայց իրաւաբանօրէն նրանք կարող են դուրս գալ, խզել իրանց կռած դաշինքը:

Այդպէս չէ ֆէդէրացիան: Նա, եթէ նոյն իսկ համարենք միջազգային մի ահա, անպայման անխզելի է իրաւական տեսակէտից, որովհետև սահմանադրութիւնը մի ազատ դաշինք չէ, այլ ծնունդ ազգային, տնտեսական, քաղաքական և պատմական շատ հանգամանքների, — կենսական անողորմ անհրաժեշտութեան: Հակառակը պնդել, կը նշանակէ ծանօթ չը լինել վիճելի հարցի հետ:

Ֆէդէրացիա կազմելու ճանապարհները: Նախընթաց երեսներում առաջացած վէճերը ֆէդէրացիայի ծագման և նրա բնոյթի մասին բաւականաչափ պարզաւ կը լինէին, Զէյդէլի, Կալհունի, Հէնէլի և ուրիշ շատ դրոշների տեսակէտները թերևս աւելի դիւրութեամբ հերքած կը լինէին, եթէ քննէինք, թէ արդեօք գոյութիւն ունեցող ֆէդէրացիաներն ի՞նչպէս, ի՞նչ ճանապարհներով են կազմելու:

Լաբանդը, Ելլինէլը, ուսների մէջ Միժուել և ուրիշ զբողներ, ֆէդէրացիայի մասին խօսելիս, առնասարակ աչքի առջ են ունենում ֆէդէրացիայի առաջացման միայն մի ձևը, նրա կազմելու միակ ուղին. մի քանի անկախ պետութիւններ, մի քանի պետական մարմիններ (շտատներ, գաղութներ, կանտօններ և այլն) միանում, կազմում են մի պետութիւն: Դրանից է որ ծնունդ է առել «ազատ դաշինքի» և սահմանադրութեան վերաբերեալ վէճերը ֆէդէրալ պետութեան խնդրում: Եւ այդ վէճերը միաւորելով ու խճճելով առհասարակ պետութեան ծագման «դաշնագրային» թէօրիայի հետ, աւելի ևս դժարացրել են ֆէդէրալ պետութեան գաղափարի պարզ ու հասարակ բարձումը:

Այն ինչ ֆէդէրացիա կարող է կազմել երկու ճանապարհով. ներքևից վերև, կարծես ինդուկցիայի, միացման, ձուլման ուղիով և վերևից ներքև, կարծես դէդուկցիայի ձևով, մի տեսակ բաժանման, մասերի ինքնուրոյնացման ճանապարհով:

Կանգ առնենք այդ երկու ճանապարհների վրայ:

Հին է առաջին ճանապարհը և հանրածանօթ: Այդ ճանապարհով են առաջացել Միացեալ-Նահանգները, Շվեյցարիան, Գերմանական կայսրութիւնը, և նոյն իսկ Աւստրալական ու Կանադայի Միացեալ-Նահանգներ կոչուող աւտօնօմ երկրներն իրանց ներքին ֆէդէրացիայով: Այդ ճանապարհն է, որ ամենից շատ վէճի առարկայ է դառել պետական իրաւունքի կօրիֆէյսների գործերում:

Երբ ֆէդէրացիան ծնունդ է առնում այդ ճանապարհով, նա նախ երևան է գալիս իրը կօնֆէդէրացիա կամ իրը պետութիւնների դաշնակցութիւն: Գոյութիւն ունեցող մի քանի անկախ պետութիւններ, ստիպւած ինքնապաշտպանութեան և մի շարք այլ պատճառներից, կազմում են պետութիւնների դաշնակցութիւն, առ հասարակ «անխզելի և յաւիտենական դաշն» են կոչում և բաւական երկար ժամանակ, — նայելով ակզին ու հանգամանքներին, — մնում են այդ դաշինքին հաւատարիմ:

Այդպիսի մի «յաւիտենական և անխախտ» դաշինք էր Շվեյց, Ուրի, Ունտէրվալդէն լեռնական փոքրիկ կանտօնների կռած դաշինքը 1315 թւին Բրուննէնում, որն իսկապէս անխախտ մնաց մինչև 1798 թիւը, երբ Ֆրանսիական Մեծ-Յեղափոխութեան շունչը կպաւ նրան և ցէստրալիստական դէմօկրատիզմի հոսանքին ուղեց ենթարկել ասպկենտրօնական արխտօկրատիական մանրիկ հանրապետութիւններին:

Նոյն «Յաւիտենական Դաշինքը և կօնֆէդէրացիան» մենք գտնում ենք Միացեալ-Նահանգներում 1777 թւից մինչև 1789 թիւը: Անդլիական մայր-երկրից դժգոհ 13 շտատներ (այդ առիւնն էին տալիս իրանց գաղութները), ստիպւած մէտրօպօլի մաքսային, հարկային և այլ բռնութիւններից, միանում և կազմում են մի «յաւիտենական դաշինք» ներքին խաղաղութիւնը պաշտպանելու և արտաքին վտանգների դէմ կռելու համար:

Գերմանիան էլ ունեցաւ իր կօնֆէդէրացիան և իր «յաւիտենական դաշինքը» 1815-ից մինչև 1866-ը:

Տնտեսական, ցեղային, քաղաքական և այլ պատճառներ, սացինք, միացնում են այդ անկախ պետութիւններին, կամ պետական մարմիններին և ստիպում կնքել բաւական տևողական դաշինքներ: Այդ համայնակեցութիւնը մի և նոյն դաշինքի հովանու տակ՝ զարգացնում է բոլոր դաշնակցող պետութիւնների ժո-

ղովուրդները մէջ համերաշխութեան, որոշ չափի միութեան զգացմունք, որն անհրաժեշտ է իսկական ֆէդէրացիա կազմելու համար:

«Դաշնակցական պետութիւն կազմելու համար անհրաժեշտ է երկու պայման», ասում է Դայսին. «պէտք է զոյուրթիւն ունենան մի քանի երկրներ, նման Շվէյցարիայի կանտոններին, Ամերիկայի գաղութներին կամ Կանադայի գաւառներին, այնքան սերտ կապած իրար հետ տեղի, պատմութեան, ցեղական և այլ պայմաններով, որ նրանց բնակիչներն զգային իրանց կարծես թէ մի ազգի պատկանելի: Բացարձակօրէն անհրաժեշտ երկրորդ պայմանը, որ հարկաւոր է ֆէդէրալ սխաւէմ հիմնելու համար, կայանում է նրանում, որ միացնելու համար նշանակւած վայրերի բնակիչներն ունենան մի յատուկ զգացմունք: Նրանք պէտք է ցանկան միացում և ոչ միութիւն կամ ծուլում: Եթէ չը կայ միացման մտնելու ոչ մի ցանկութիւն, պարզ է, որ չը կայ նաև ֆէդէրալիզմի համար հիմք... Իսկ եթէ միւս կողմից, կայ ցանկութիւն լիակատար ձուլման, այդ ցանկութիւնը բաւարարութիւն կըստանայ, բայց ոչ ֆէդէրալ, այլ ունիտար սահմանադրութեան մէջ» *):

Այդ զգացումը եթէ արդիւնք լինի զօրեղ ցեղական ու ազգային պայմանների, ինչպէս Շոտլանդիայի ու Անգլիայի միջև 18-րդ դարում, ինչպէս իտալական մասը պետութիւնների ժողովրդների միջև 16-րդ դարում, կամ ինչպէս նիդէրլանդական կօնֆէդէրացիայում, — կառավարչութեան ձուլում, մի ունիտար պետութեան առաջացում: Իսկ եթէ նա ծնունդ է տնտեսական ու քաղաքական պատճառների և չունի նախընթացի զօրութիւնը, նա կը բաւականանայ ֆէդէրացիա կազմելով: Ուրեմն՝ այդ զգացումը, միութեան այդ ձգտումը պէտք է լինի ոչ այնքան զօրեղ, որ մեռցնէ տեղական գերիշխանութեան ձգտումը և առաջ բերէ ձուլում, ոչ էլ այնքան թոյլ պիտի լինի, որ անհնարին դարձնէ իսկական ֆէդէրացիան:

Տիրող զգացմունքի այդ երկուութիւնից կարծես ծնունդ են ստանում ֆէդէրատիվ պետութեան մէջ գոյութիւն ունեցող երկու կարգի հիմնարկութիւնները: Միացնող, ձուլելու ձգտող զգացմունք

*) Дайси.— „Основы Гос. Пр. Анг.“ Երես 157—158

քին համապատասխանում են համապետական հիմնարկութիւնները, իսկ պարտիկուլարիստ, ապակենտրոնական զգացմունքներին համապատասխանում են ապակենտրոնական հաստատութիւնները:

Այսպէս, բոլոր ֆէդէրատիվ պետութիւնների մէջ կայ մի օրէնսդիր ժողով, որը ներկայացուցիչ է ամբողջ պետութեան ժողովրդի, բոլոր ազգաբնակչութեան: Նա ընտրւում է պետութեան բոլոր ազգաբնակչութեան կողմից: Բայխստազը Գերմանիայում, ներկայացուցիչների ժողովը Միացեալ-Նահանգներում, Ազգային խորհուրդը Շվէյցարիայում և այլն՝ ընտրւում են ամբողջ պետութեան ազգաբնակչութեան կողմից: Բայխստազի ամեն մի պատճամաւորն ընտրւում է 131,000 հոգու կողմից, ներկայացուցիչական Ազգային խորհուրդը—20,000 մարդուց: Ընտրութիւնների ժամանակ, ի հարկէ, դաշնակից մասերի սահմաններից դուրս չէ գալիս նաև ընտրական շրջանը: Օրինակ, եթէ մի կանտոնում կայ 32,000 բնակիչ, նա ուղարկում է 2 պատգամաւոր, որովհետև 32,000-ի մէջ կայ մի 20,000 և մնացորդը մնում է 12,000, այսինքն 20,000-ի կէսից աւելի, որի համար տրւում է մի ձայն: Նոյն սկզբունքը պաշտպանւում է նաև միւս ֆէդէրացիաների մէջ:

Այդ ունիտար հիմնարկութիւնն է, որ Բրայսը, Դայսին, Ելլի-նէկը և առհասարակ բոլոր Եւրոպական խոշոր ազգութիւնների նէկը կենտրոնականները կոչւում են «ազգային կենտրոնական հիմնարկութիւն»: Նրանց համար ազգ և պետութիւն մի և նոյն հաստատութիւններն են, մի և նոյն գաղափարները, այն ինչ յաճախ, շատ յաճախ այդ երկու գաղափարներն իրար հակադիր, իրար վանող են ներայդ երկու գաղափարներն իրար հակադիր, իրար վանող են ներայդ պետութիւնների ներսում: Աւստրիա և չեխ, Գերմանիա և Լեհ, Ռուսաստան և Լեհ, Հունգարիա և Բուսին և այլն, իրար մերժող, իրար հակադիր են *):

Դրան հակառակ ընդթ ունեն Միացեալ-Նահանգների Սէնատը, շվէյցարական Պետութիւնների Խորհուրդը, գերմանական դաշնակցական խորհուրդը և այլն: Նրանք արտայայտիչ չեն ունիտարիզմի, այլ մարմնացում են իսկական ֆէդէրալիզմի:

Բոլոր ֆէդէրատիվ հանրապետութիւնների մէջ դաշնակից

*) Նայել 1906 թ. «Փամանակ» լրագրի №3 և 4 չիս պրոֆէսոր Մասարիկի յօդուածը «Ազգային զգացմունքը» վերնադրով:

մասերը, անկախ իրանց ծաւալից ու ազգարնակութեան թւից, համարուում են սկզբունքով իրար հաւասար: Դրանք զիտուում են իրր ուրոյն պետութիւններ, որոնք գոյութիւն են ունեցել Ֆէդերացիայից առաջ: Նրանց այդ հաւասարութիւնն արտայայտուում է սէնատին կամ պետութիւնների խորհրդին մասնակցելու զիպւածութիւն: Այսպէս՝ Ուրի կանտոնը, որ ընդամենը 17—18 հազար բնակիչ ունի, Պետութիւնների խորհուրդն է ուղարկում 2 պատգամաւոր, Բէրնի կանտոնը, որ մօտ 550,000 բնակիչ ունի,—նոյնպէս 2 պատգամաւոր է ուղարկում: Այն ինչ Ուրին Ազգային Ծորհրդին տալիս է հազիւ մի պատգամաւոր, իսկ Բէրնը տալիս է 27—28 պատգամաւոր:

Պէտք է նկատել, որ այդ դաշնակցական սկզբունքի արտայայտիչ ժողովը յաճախ շատ աւելի իրաւունքներ ունի, քան ունիտար, կենտրոնացուցիչ սկզբունքի արտայայտիչը: Մի կողմ թողնենք դեռ դերմանական Դաշնակցական խորհուրդը, որ համարեաւ ամենազօր է պետական հարցերի մեծագոյն մասում, վերցնենք օրինակ, ամերիկական դաշնակցական հանրապետութիւնների սէնատը: Նա բոլոր հանրապետութիւններում հանդիսանում է ոչ միայն իրր օրէնսդիր մարմին, ինչպէս շվեյցարական նոյնանման հաստատութիւնը (պետութիւնների խորհուրդը), այլ նաև կատարում է «պետական խորհրդի ֆունկցիաներ, զանազան ուղղութեամբ սահմանափակելով նախագահի իրաւունքները» *):

Ահա այդ երևոյթները և առհասարակ միացման, սինթէզի միջոցով առաջացած ֆէդերացիաների զանազան արտայայտութիւններն են, որ տեղի են տւել Անգլիային, Կալիֆոռնիային և ուրիշ գիտնականների պնդելու, որ ֆէդերատիվ պետութիւնն արդիւնք է ազատ դաշինքի. որ առհասարակ «ֆէդերատիվ պետութիւն» բառերը պարունակում են իրանց մէջ ներքին հակասութիւն, որովհետև «ֆէդերացիան ազատ դաշինք է», իսկ «պետութիւնը» մի ձոյլ ամբողջութիւն, մի անբաժանելի հասկացողութիւն է:

Այդ կարգի վէճերը խիստ նւազած, համարեաւ չքացած կը լինէին պետական իրաւունքի փիլիսոփայական գրականութիւնից, եթէ Կալիֆոռնիայի, Անգլիայի, Հիննէլը և ուրիշները մտածէին իրանց

*) Елл.—նոյն—եր. 517.

թէօրիաները յարմարեցնել մի այլ ճանապարհով առաջացած ֆէդերատիվ պետութիւնների կազմակերպման սկզբունքներին:

Մեր ակնարկած նոր ճանապարհը բաժանման, վերելից ներքև իջնող, անալիզի, դէգուկցիայի ուղին է: Նախընթաց ձևով ֆէդերացիա կազմում էին մի քանի անկախ պետութիւններ, դադութներ և այլն, որոնք միանում էին իրար հետ և, մի շարք ուրիշ զօրեղ պայմանների ազդեցութեան տակ, զրկւում էին իրանց սուվըրէնիտետի մի մասից, տալիս էին այդ օտարացած մասը մի կենտրոնական մարմնի, որը կոչւում էր ֆէդերատիվ իշխանութիւն. ստեղծւում էր սահմանադրութիւն, և պետութիւնների դաշնակցութիւնը, կենսական անողորմ անհրաժեշտութեան տակ՝ դառնում էր դաշնակցական պետութիւն: Այստեղ մասերն աւելի առաջ գոյութիւն ունէին,—ստեղծւում էր կենտրոնական մարմինը, դաշնակցական պետութեան ամբողջութիւնը: Եւ մասերը, ինչպէս առաջ, պահպանում էին իրանց պետական ամբողջութիւնը, զրկւելով դերիշխան իրաւունքներից պետական կեանքի մի շարք խնդիրներում:

Իսկ երկրորդ ճանապարհով կազմւած ֆէդերացիաներում մասեր չը կան, կայ միայն մի ունիտար պետութիւն. պէտք է պետական գերիշխանութիւնն ապակենտրոնացնել, բաժանել մասերի մէջ, պէտք է կենտրոնի լիազօրութիւնների մի մասն առնել, տալ մասերին, նահանգներին, շտատներին, կանտոններին:

Անգլիայի, Կալիֆոռնիայի, Հիննէլի և ուրիշների ջանքերը բոլորովին ապարդիւն կը լինէին այդ ճանապարհով առաջացած ֆէդերացիաների վրին փաթաթել իրանց թէօրիան («ազատ դաշինք»), ներկայացնել նրանց իրր «պետութիւնների դաշնակցութիւն», որից ամեն բոլորէ կարելի է գուրս գալ:

«Դաշնակցական պետութիւնը հիմնւած է այնպիսի մի կարգի վրայ, որը հաստատւած է սահմանադրութիւնով, ոչ թէ դաշինքով: Եթէ նա ընտում է միջնէ այդ պետական իրաւական յարաբերութիւններով իրար հետ չը կապակցւած պետութիւնների տեղը, այդ դէպքում նրա հիմնարկմանը նախորդում են կամ նրա հիմնարկութիւնից առաջ տեղի են ունենում դաշինքներ, որոնք վերաբերում են նրա սահմանադրութեանը», ասում է Ելլինէկը *):

*) Право совр. гос. ерһа 519.

Դա մենք տեսանք նախընթաց երեսներում բոլոր գլխաւոր ֆէ-
դէրացիաների վերաբերմամբ: Մենք տեսանք թէ ինչպէս Միա-
ցեալ-Նահանգներում, Շվէյցարիայում և Գերմանիայում տեղի են
ունեցել նախադաշնակցական յարաբերութիւններ,—կօնֆէդէրա-
ցիաներ, որոնք, աւելով աւելի կամ պակաս թիւ տարիների,
ստեղծել են այն ըէէլ հողը, որի վրայ մշակել է ֆէդէրալիս-
տական պետութեան սահմանադրութիւնը:

Սակայն «գործն այլ կերպարանք է ստանում այն դէպքում,
երբ մի միացել պետութիւն կամ մի հպատակ երկիր դառնում է
դաշնակցական մի պետութիւն, ինչպէս այդ տեղի է ունեցել Վէ-
նէցուէլլայի, Մէկսիկայի, Արգէնտինայի, Բրազիլիայի միացեալ
Նահանգներում, ուր առանձին պետութիւնները կարող էին կազ-
մակերպւել միայն նրա շնորհով, որ դաշնակցական սահմանադրու-
թիւնն այդ թոյլ էր տալիս: Ամեն մի փորձ այս վերջին կազմա-
կերպութիւնները բացատրելու իբր պետութիւնների դաշնակցու-
թիւն՝ ջարդ ու փշուր է լինում այն պարզ պատճառով, որ այդ-
պիսի բացատրութիւնը հակառակ կը լինէր այդ պետութիւնների
պատմական զարգացմանը» *):

Առաջին դէպքում տարբեր պետութիւնների ժողովրդների
մէջ օրեկտիվ և սուբեկտիվ մի շարք պայմանների շնորհով, ա-
ռաջանում է կենտրոնաձիգ ոյժ, միանալու, դաշնակցելու զգաց-
մունք: Իսկ երկրորդ դէպքում, գրաւումով, բռնութեան, խնամու-
թեան և այլ միջոցներով կազմւած խոշոր պետութեան ներսում
արդէն իսկ զոյութիւն ունեցող կենտրոնախոյս ոյժերը, որ գանա-
զան պատճառներով—նոյնպէս օրեկտիվ և սուբեկտիվ—զսպւած,
թմրած կամ քնած վիճակում էին, զարթնում, գիտակցութեան են
գալիս, զգում են իրանց սանձահարող, կաշկանդող շղթաները և
կազմակերպւում ու կռիւ են մղում կենտրոնի դէմ: Ծնունդ է առ-
նում մի հոսանք, որը կարող է յանգել կամ պետութեան քայքայ-
ման, նրա կործանման և կամ դնել նրան ապակենտրոնաց-
ման ուղիի վրայ: Այնուհետեւ երկրում գոյութիւն ունեցող կենտ-
րոնաձիգ և կենտրոնախոյս ուժերի ըէէլ յարաբերութիւնից կախ-
ւած կը լինի ձեռք բերւած ապակենտրոնացման չափը: Եթէ կեն-
տրոնախոյս ուժը համեմատաբար թոյլ և անզարգացած է, ապա-

*) Еллинекъ—նոյն երես 519

կենտրոնացման գործողութիւնը կանգ կառնէ վարչական ասպա-
րէզում, իսկ եթէ նա զօրեղ ու զարգացած է, ձեռք կը բերէ աւ-
տօնօմիա, ֆէդէրացիա:

Կենտրոնախոյս ուժերի ընդարձակ ասպարէզ են ներկայաց-
նում Անգլիան և Աւստրիան: Այդ երկրներում կայ, գոյութիւն
ունի և օր օրի վրայ աճում է ֆէդէրալիստական հոսանքը: Անգ-
լիական գաղութների վայելած սքանչելի աւտօնօմիան մի օր ան-
պատճառ պիտի յանգի «Մեծագոյն Բրիտանիայի», այս ինքն Ան-
գլիական մի ֆէդէրատիվ հսկայական պետութեան: Իրլանդական
«home-rule»-ական կամ աւտօնօմիատական շարժումը նոյնպէս պի-
տի յանգի ֆէդէրալիստական վախճանի: Անգլիայի բաղադրիչ մա-
սերը—բուն Անգլիան, Վալլիսի երկիրը, Շոտլանդիան և Իրլան-
դիան,—միացած հսկայական գաղութների հետ, մի օր անշուշտ
պիտի կազեն «Ամենամեծ Բրիտանիան»... և կամ դաղութները
պիտի աստիճանաբար օտարանան... Սմբողջ Եւրօպան փոխ է ա-
ւելի իր քաղաքական հիմնարկութիւնների գլխաւոր մասերն Անգ-
լիայից, իսկ անգլիական գաղութները մայր երկրի կարգերն ա-
ւելի ևս ընդարձակել, զարգացրել ու կատարելագործել են, շատ
տեղ յանգելով ֆէդէրալիզմի: Հաւանօրէն այդ նոյն սկզբունքը
պէտք է կազմէ և վերջնական եղբակացութիւնը կատարելագործման
այդ ձգտումի:

Նոյն երևոյթը նկատուում է նաև Աւստրիայում: Մինչև 1867
թիւը գոյութիւն ունեցող ցենտրալիստական բիւրօկրատիական
վարչութիւնն ընկաւ և տեղի տւեց ձախ ու ծուռ կերպով սահմանա-
ւորւած աւտօնօմիային, առանց դէմօկրատիզմի, առանց իսկական
ժողովրդապետութեան ու պարլամէնտարիզմի: Սակայն՝ չը նայե-
լով դրան, քայքայման դուռը հասած Աւստրիան վերակենդանա-
ցաւ, կենտրոնակութիւն ձեռք բերեց: Ապակենտրոնացման այդ
շարժումը զարգանում, հզօրանում է օր օրի վրայ: Այժմ ամեն
կողմից ֆէդէրացիայի պահանջն է գրւում: Ֆէդէրացիա են պա-
հանջում աւստրիական աշխատաւոր ազգաբնակչութիւնը, նրանում
ընակւող ազգութիւնները:

Նոյն շարժումը չէ՞ արդեօք նկատուում այս օր Ռուսաստա-
նում լեհերի, լատիշների, մալթոսների, վրացիների, հայերի մէջ:
Այո, դա նոյն ապակենտրոնացման ձգտումն է, որը կարող է շա-
բունակել մինչև ֆէդէրացիա: Ոչ միայն կարող է, այլ և պէտք է

շարժւի մինչև այդտեղ, հասնի ֆէդէրատիվ կազմի: Ինչպէս, այդ մենք կը տեսնենք մի քիչ յետոյ, երբ կը խօսենք ֆէդէրացիայի հիմքերի մասին:

Աւստրիայում, Ռուսաստանում, Հունգարիայում կենտրոնական վարչութիւնները կան, պէտք է ստեղծել մասերը: Նրանք էլ էապէս կան, գոյութիւն ունեն, բայց կենտրոնը զսպում, ճնշում, հպատակեցնում է նրանց: Աշխարհագրական, պատմական ու տընտեսական առանձնայատկութիւններով պայմանաւորւած, իրարից խիստ տարբեր շրջաններ գոյութիւն ունեն: Դրանք են, որ պիտի դառնան ներքին գերիշխանութիւն վայելող մասեր: Պէտք է կենտրոններից խել որոշ հարցերի վերաբերեալ գերիշխանութիւնը և տալ մասերին, գրանտով վերջ դնելով քայքայման, սէպարատիզմի հնարաւորութեանը, ստեղծելով մասերի և ամբողջութեան նիւթական ու բարոյական շահերի հարմօնիս:

Այդպէս են կազմել Մէկսիկայի, Վէնէցուէլլայի, Արգէնտինայի և Բրազիլիայի ֆէդէրացիաները: Նրանց զանազան մասերում առաջացած կենտրոնախոյս ուժերն այնքան էին զօրացել, որ երկիւղ կար ամբողջ պետութեան քայքայման: Դրա սուղն առնելու միակ հնարը ֆէդէրատիվ կազմն էր:

Վերջնէնք միայն զրանցից մէկն իբր օրինակ, նորագոյնը— Բրազիլիան: Մինչև 1889 թւականը Բրազիլիան մի սահմանադրական կայսրութիւն էր, որի մէջ գոյութիւն ունէր դեռ ստրկատիրութիւն: Վերջին կայսրն էր Դօն-Պետրօն: Ահագին երկրում նոսր կերպով տարածւած մօտ 14¹/₂ միլիօն ազգաբնակիչութիւնը միշտ ապստամբութեան մէջ էր: Անվերջ խառնակութիւնները պայթում էին մերթ երկրի այս, մերթ այն մասում: Վերջապէս 1889-ին Դօն-Պետրօն ստիպւած եղաւ թողնել իր մայրաքաղաքը և փախչել Եւրօպա, ուր և մեռաւ: 1889-ին և եթ հաստատւեց ժամանակաւոր կառավարութիւն, մշակուց զաշնակցական հանրապետութեան սահմանադրութիւնը, որ գործածութեան մտաւ 1891 թւից: Նոյն 1889 թւին անմիջապէս վերացուեց ստրկատիրութիւնը, որի հետևանքը եղաւ սկզբներում երկրի արդիւնաբերութեան խիստ անկումը, որը սակայն յետոյ սկսեց աստիճանաբար նորից զարգանալ և այժմ արդէն հասել է իր նախկին բարձրութեան, թէև ստրկատիրութիւնն արդէն բոլորովին չքացել է:

Բրազիլիայում զարգացել է ծխախոտի, սուրճի, շաքարե-

ղեզնի, հացարոյսերի և այլ երկրագործական արդիւնքների մշակութիւնը, իսկ ինդուստրիան և հանքային հարստութիւնների մշակութիւնը շատ ստոր աստիճանի վրայ է: Սակայն չը նայելով տնտեսական զարգացման այդ յետամնաց վիճակին, այդ երկրում ահա 25 տարի է գոյութիւն ունի զաշնակցական կազմ:

Բացի Բրազիլիայից, թէ Մէկսիկայի, թէ Վէնէցուէլլայի և թէ Արգէնտինայի օրինակները պարզ նշան են, որ մի երկրի քաղաքական ձևերի միակ որոշիչ պատճառը նրա տնտեսական ստրուկտուրան, նրա էկօնօմիական զարգացումը, նրա արտադրական, միջոցների որպիսութիւնը չէ, այլ կան նաև ուրիշ, կողմնակի պատճառներ, որոնք երբեմն կարող են վճռական նշանակութիւն ունենալ, նոյն իսկ շատ աւելի վճռական, քան էկօնօմիական պատճառը: Այսպէս՝ յիշւած հանրապետութիւնների ֆէդէրատիվ կազմն, ինչ կասկած, որ ընդօրինակումն է Միացեալ Նահանգների, այդ հնագոյն ֆէդէրացիայի սահմանադրութեան: Նահանգների, այդ հնագոյն ֆէդէրացիայի սահմանադրութեան:

Այն, ի մեծ ցաւ զուտարիւն մարքսիստների, պէտք է խոստովանել, որ Տարդի «ընդօրինակման օրէնքը» (loi d'imitation) շատ մեծ ու վճռական դեր է կատարել այդ անհանգիստ ու յետամնաց երկրներում:

Ենթադրելով, որ Միացեալ-Նահանգների քաղաքական կազմը քիչ ու շատ ծանօթ է ընթերցող հասարակութեան, մենք համառօտակի առաջ կը բերենք Բրազիլիայի ներկայ կազմակերպութեան խոշոր դեր, որպէս զի հաստատենք մեր վերևում ասածը:

Բրազիլական միացեալ-Նահանգները բաղկացած են 20 նահանգներից և մի զաշնակցական շրջանից, որի մէջն է Րիօ-ժանէյրօ մայրաքաղաքը: Միացեալ-Նահանգների սահմանադրութեան նման սրա սահմանադրութիւնն էլ նահանգների սալիս է լիականաւոր գերիշխանութիւն իրանց ներքին կազմութեան, վարչութեան և օրէնսդրական հարցերում: Միակ սահմանափակումը, որ արւում է, դա նա է, որ նահանգները պարտաւորաբար պէտք է ունենան հանրապետական կառավարութիւն: Իսկ այդ, ինչպէս զիննան հանրապետական կառավարութիւն: Իսկ այդ, ինչպէս զիննան հանրապետական կառավարութիւն: Ամ. Միացեալ-Նահանգների սահմանատենք, կայ նաև Հիւս. Ամ. Միացեալ-Նահանգների սահմանադրութեան մէջ: Համապետական զործերը զաշնակցական իշխանութեան ձեռքում են, իսկ տեղականները՝ նահանգների: Բոլոր նահանգների կազմը միանման է. կայ մի ընտրովի նահանգապետ, որին պատկանում է գործադիր իշխանութիւնը, իսկ օրէնսդիր

իշխանութիւնը ներկայացնում են ընտրովի սէնատն ու պատգամաւորական ժողովը, ճիշտ՝ ինչպէս Միացեալ-Նահանգներում:

Բրազիլիայի սահմանադրութիւնը մի քանի կէտերում մի քիչ տարբերում է իր ընազբից—Միացեալ-Նահանգների սահմանադրութիւնից. միայն այդ տարբերութիւնները միշտ դէպի վատըն են, դէպի սահմանափակութիւն և ոչ դէպի դէմօկրատիզմ: Այսպէս, Միացեալ-Նահանգներում ընդհանուր ընտրական իրաւունքը կայ, իսկ Բրազիլիայում ընտրական իրաւունքը ցէնզուր է. ընտրող կարող են լինել միայն զրազէտ անձերը: Ուրեմն՝ ցէնզը կրթական է. բաւական է լոկ գրել կարգալը: Դրանից առաջանում է այն, որ երկրի ազգաբնակչութեան հազիւ 4 տոկոսն է ընտրական իրաւունք ունեցող, իսկ մնացած 96 տոկոսը, լինելով անզրագէտ, զրկւած է այդ իրաւունքից:

Ընտրողն ունենալու է 21 տարի և... աւելի, իսկ սէնատի անդամ ընտրւողը լինելու է առնւազը 35 տարեկան:

21 նահանգների գլխին, Ջէմս Բրայսի արած նմանութեան համաձայն, բարձրանում է վերնայարկի կառավարութիւնը—զաշնակցական իշխանութիւնը, որը բաղկացած է նախագահից, սէնատից և պատգամաւորական ժողովից:

Գործադիր իշխանութիւնը պատկանում է նախագահին և նրա օգնականին, որոնք ընտրւում են 4 տարով: Ընտրութիւնն ամերիկական է և ոչ շվէյցարական կամ ֆրանսիական. այսինքն ըրոր իրաւատէր քաղաքացիներն են ընտրում և ոչ օրէնսդիր մարմինների միացեալ ժողովը: Նրանք երկրորդ քառամեակում վերընտրելու իրաւունք չունեն:

Կառավարութեան սիստէմը դուալիստական է և ոչ պարլամէնտարիստական: Նախագահը նշանակում է մինիստրներին և առհասարակ ըրոր զաշնակցական պաշտօնեաներին, նոյն իսկ դատաւորներին: Բոլոր պաշտօնեաները պատասխանատու են նախագահի առջև և վերջինս միայն ժողովրդական ներկայացուցիչների առջև: Նախագահը միայն կարող է նրանց փոխել կամ հեռացնել, բացի զաշնակցական դատաւորներից, որոնց կարելի է պաշտօնից զրկել միայն դատարանով. իսկ դատում է սէնատը: Նոյն մարմինը կարող է դատել և նախագահին ու մինիստրներին, եթէ նրանց մեղադրէ պատգամաւորական ժողովը:

Սէնատը բաղկացած է 63 սէնատօրից: Ամեն մի նահանգ

ուղարկում է 3-ական անդամ, որոնք ընտրւում են 9 տարով, միայն ըրոր անդամների 1/3 մասը (21 հոգի) 3 տարին մէկ վերանորոգւում է: Այն ինչ Միացեալ-Նահանգներում սէնատօրներն ընտրւում են 6 տարով և նրանց 1/3 մասը վերանորոգւում է 2 տարին մի անգամ: Սէնատօրների ընտրութեան եղանակն էլ Բրազիլիայում տարբեր է. Միացեալ-Նահանգներում նրանց ընտրում են նահանգների օրէնսդիր մարմինները, իսկ այստեղ նահանգի ըրոր իրաւատէր անձերը: Այսինքն՝ առաջինում սէնատօրների ընտրութիւնը երկաստիճան է, երկրորդում ուղղակի:

Սէնատը, ինչպէս արդէն ասացինք, հանդիսանում է իսկական զաշնակցական սկզբունքի մարմնացումը: Նա ներկայացուցիչն է ըրոր մասերի: Սակայն ամերիկական զաշնակցական հանրապետութիւնների սէնատները նման չեն գերմանական համանիշ հիմնարկութեանը—զաշնակցական խորհրդին կամ Բունդէսրաթին: Վերջինիս պատուիրակների թիւը—նախ և առաջ—հաւասար չէ ըրոր զաշնակցիցների համար, բացի այդ՝ ըրոր անդամները հանդիսանում են ոչ թէ իրանց երկրի ժողովրդի ընտրեալներ (ուղղակի թէ երկաստիճան՝ այդ միևնոյն է), այլ նրանք ուղարկւում են իրանց կառավարութիւններից և ըստանում են նրանցից մանդատը կամ հրամաններ այսպէս կամ այնպէս ասելու, համաձայնելու այսինչի հետ, մերժելու այն ինչ հարցը: Իսկ Բրազիլիայում սէնատօրները լիազօր պատգամաւորներ են իրանց նահանգների և չեն սահմանափակւում ոչ մի նախորոշած մանդատով: Այդ տեսակէտից գերմանական Բունդէսրաթը ամենայնուայն էլ հիմնարկութիւնն է, իսկ Բրազիլականը շատ աւելի յառաջադէմ հիմքերով է կազմւած, քան գերմանականը, քան նոյն իսկ ֆրանսիական ու Միացեալ-Նահանգների սէնատները:

«Ազգի» ներկայացուցիչը հանդիսանում է պատգամաւորական ժողովը, որի անդամներն ընտրւում են ուղղակի ձայնաւոթիւնով. 70,000 ազգաբնակչութեան վրայ մի պատգամաւոր է ընկնում, այսպէս որ այժմ նրանց թիւը 212 է: Ունիտարական սկզբունքի ներկայացուցիչ այս ժողովին աւելի է կարևորութիւն տրւում, քան սէնատին: Բոլոր օրինագծերն առաջարկւում են նախ սրա քննութեանը, ապա սէնատին: Ֆինանսական և զինւորական կազմակերպութիւնների օրինագծերի միակ ձեռնբրեցութիւնը և նախաձեռնութիւնը պատկանում է նրան:

«Շատ կաթուղի» պօրտուգալացիները և սպանացիների ժառանգների այդ երկրում պաշտօնական կրօն արդեւած է ունենալ. դաշնակցական կառավարութիւնն իրաւունք չունի առանձին խնամք ու պաշտպանութիւն ցոյց տալու այս կամ այն եկեղեցուն, այս կամ այն դաւանութեանը: Եկեղեցիներն այստեղ էլ կազմակերպւած են ծխական սիստէմով, ազատ, ինչպէս Միացեալ-Նահանգներում:

Դաշնակցական կառավարութեան իրաւասութեան առի են բանակը—թէ ծովի, թէ ցամաքի վրայ,—պօստը և հեռագիրը, բանկային օրէնսդրութիւնը, ֆինանսների այն մասը, որը վերաբերում է ընդհանուր պետութեանը, դրամական սիստէմը, ծանրութեան և այլ չափերը, դատարանը, ի հարկէ ընդհանուր հարցերում, այսինքն՝ երբ զանցառութիւնը կամ յանցանքն ուղղւած է դաշնակցական օրէնքների դէմ, կամ երբ վիճող կողմերը տարբեր նահանգներից են և այլն, և այլն:

Թէ Բրազիլիայում, թէ Վէնէցուէլլայում և թէ Հարաւային Ամերիկայի միւս դաշնակցական հանրապետութիւններում, ինչպէս վերևում էլ ասացինք, կեանքը զարգացած է: Գրագիտութիւնը տարածւած է չափազանց քիչ, ինդուստրիան շատ ողբալի վիճակի մէջ է, հաստատութիւնները, թէ և հիմնւած ամենագեղեցիկ սկզբունքների վրայ, դեռ շատ խակ և յետամնաց վիճակում են... Սակայն չը նայելով դրան, այդ երկրներում դոյութիւն ունի ֆէդէրացիա: Բայց այդ պետութիւնների սահմանադրութիւնները, որ բաւական հաւատարիմ պատճէններ են Միացեալ Նահանգների սահմանադրութեան, յաճախ մտում են լոկ թղթի վրայ: Այդ երկրներում տեղի ունեցող անվերջ ապստամբութիւնները, պատերազմական դրութիւնները, կուսակցական, աւելի ճիշտ—նեղ թայֆայական կատաղի պայքարները միշտ հանդիսանում են խոչընդոտներ նրանց ներքին կեանքի խաղաղ, կուլտուրական զարգացմանը: Մի կողմից գուտարիւն եւրօպացիները, միւս կողմից մէտիսները, մուլատները, իսկ երբորդ կողմի նեգրները և տեղական բարբարոս ու դեռ բոլորովին վայրենի հընդիկները խառնելով իրար, ստեղծում են մի այնպիսի հասարակական կեանք, որի մէջ բնութիւնը, ինտրիզը, դէմազօղիան և կիրքը դեր կարող են խաղալ շահամոլ ու բախտախնդիր անհատների ձեռքում: Դրանից առաջանում է այն, որ շատ յա-

ճախ նրանց գեղեցիկ սկզբունքները, նրանց սահմանադրական զարանտիաները վերանում են և ֆէդէրատիվ պետութեան ներքին խաղաղ կեանքը փոխարինւում է գրակօնադով, բնութիւններով ու անվերջ արիւնհեղութիւններով:

Ինչ էլ որ լինի, ամերիկական այդ դաշնակցական հանրապետութիւնների կազմակերպելը մեզ ցոյց է տալիս, որ ունիտար, նոյն իսկ ցէնտրալիստական պետութիւնը կարող է վերածւել ֆէդէրալիստական պետութեան, եթէ նրա ներսում դոյոււթիւն ունենայ այն կենտրոնախոյս ոյժը, լինեն այն օրեկտիվ և սուրեկտիվ պայմանները, որոնք անհրաժեշտ են դարձնում պետական Յ գլխաւոր ասպարէզներում—վարչական, դատական և օրէնսդրական—ապակենտրոնացում և որոնք լիապէս չքանում են միայն այն ժամանակ, երբ կենտրոնի իւրացրած, «ուզուրպացիա» արած գերիշխանութիւնը բաժանւում է ներքին ամբողջութիւն ներկայացնող մասերի վրայ:

Ֆէդէրացիա կազմելու այս երկրորդ ճանապարհին վերապահւած է մեծ ապագայ: Այդ ուղիով պիտի քայքայւեն մեծ պետութիւնները և տեղի տան մարդկութեան ապագայի քաղաքական կազմին, ֆէդէրացիային, բոլոր ժողովրդների, ազգերի ու շրջանների համերաշխ եղբայրական դաշինքին:

Իրատեսութիւնները և նրանց սահմանները: Մենք տեսնք, որ դաշնակցական պետութիւնը գերիշխան կամ սուվըրէն է: Տեսնանք նոյնպէս որ սուվըրէն են նաև դաշնակից մասերը—կանստները, պետութիւնները կամ նահանգները: Սակայն այդ երկու տօնները, պետութիւնները կամ նահանգները: Սակայն այդ երկու գերիշխանութիւնների մէջ կայ մի տարբերութիւն. առաջին գերիշխանութիւնը տարածւում է գերիշխան պետութեան բոլոր տէրրիտօրիայի, նրա բոլոր բնակիչների կամ քաղաքացիների վրայ, բիտօրիայի, նրա բոլոր բնակիչների կամ քաղաքացիների վրայ, իսկ երկրորդը տարածւում է լոկ նոյն երկրի մի մասի, նոյն քաղաքացիներից մի քանիսի վրայ:

Երբ մի պետական իշխանութեան մասին ասում են, որ նա գերիշխան է, դա կը նշանակէ, թէ այդ իշխանութիւնն իր երկրի բարձրագոյն իշխանութիւնն է, որ նրանից բարձր այլ ևս չը կայ ոչ մի ոյժ, որ նրա ինքնորոշման անկախութիւնն սպառող, վերջնական բնաւորութիւն ունի, այսինքն՝ որ նա տարածւում է պետական դերձուկութեան բոլոր ձիւղերի վրայ—առանց

որ և է բացառութեան: Ահա իսկական գերիշխանութիւնը: Դրա հետ միասին, սակայն, արդէն տեսանք, որ գերիշխան պետական իշխանութիւնը կարող է, իր գերիշխան իրաւունքով, հանել իր սեփական իրաւասութիւնից այս կամ այն պետական ու անհատական կեանքի հարցերը:

Այսպէս, պետութիւնը, լինելով գերիշխան, տէր է անհատի կեանքի բոլոր կողմերի վրայ, բայց չէ օգտուում իր թէօրիական այդ առաւելութիւններից, այլ դուրս է նետում իր իրաւասութիւնից մի շարք հարցեր: Այդ ուղիով է որ կազմել են սահմանադրական երկրներում տիրող «քաղաքացիների հիմնական օրէնքները», որոնք այսօր քաղաքակիրթ աշխարհների բոլոր սահմանադրութիւններում գրաւել են իրանց տեղը, բացի գերմանական սահմանադրութիւնից, ուր նրանք չեն էլ յիշատակած: Այսպէս, պետական գերիշխան իրաւունքը հրաժարւել է որոշ հարցերում ղեկավար հանդիսանալուց: Այդ հիմնական իրաւունքներն են — խղճի, մամուլի, ժողովների, խօսքի ազատութիւնը և այլն:

Մենք չենք խօսում, թէ ինչ ճանապարհներով են ձեռք բերւել «մարդու և քաղաքացու իրաւունքները» — յեղափոխական, ներքեից վերե՞, թէ խաղաղ, վերեից ներքե...:

Ճիշտ նոյն եզանակով էլ գերիշխան պետութիւնը կարող է ինքնապարտաւորեցում յանձն առնել և դուրս նետել իր իրաւասութիւնից պետական որոշ հարցեր: Այդպէս են արել անկախ պետական միութիւնները և աւտօնօմ նահանգները, երբ կազմել են Շվեյցարիան, Գերմանիան, Միացեալ-Նահանգները, Աւստրալիան, Կանադան: Նրանք իրանց իրաւասութիւնից դուրս են հանել մի խումբ հարցեր և տւել են կենտրոնական իշխանութեանը, դարձնելով նրան գերիշխան այդ հարցերում և պահելով որոշ հարցեր իրանց գերիշխանութեան տակ:

Բայց, ինչպէս տեսանք, կայ և երկրորդ ուղին: Գերիշխան կենտրոնը կարող է իր իրաւասութիւնից հանել որոշ հարցեր և տալ որոշ շրջանների, դարձնելով նրանց այդ հարցերում գերիշխան: Երկու դիպեա՞ծում էլ չը կայ դելեգացիա կամ պատգամաւորումն, այսինքն՝ պայման չէ դրւում, թէ «դու սա կանես իմ փոխարէն», «իբր իմ ներկայացուցիչ», որովհետեւ այդ դէմքերում պատգամաւորողը պատգամաւորւողի վրայ պիտի ունենար այդ հարցերի վերաբերմամբ որոշ արտօնութիւններ:

Բայց երբ արդէն կենտրոնական գերիշխանութիւնը և տեղական սահմանափակ գերիշխանութիւններն ստեղծւել են, հարց է առաջ գալիս. արդեօք դրանց յարաբերութիւններն անփոփոխ են և յաւիտենակին: Կայ մի սահմանադրութիւն, որը որոշում է նրանց յարաբերութիւնները, որը զժող է նրանց գերիշխանութեան սահմանները, նրանց իրաւասութեան տակ եղած ասպարէզները: Բայց արդեօք այդ դաշնակցական սահմանադրութիւնն ինքը հանդիսանում է մի յաւիտենական ու անխախտելի իրաւական պետական նօրմա:

Ոչ: Մարդկային պետական իրաւունքն այդպիսի անձեռնմխելի և յաւիտենական ակտիւ ու նօրմաներ չէ ճանաչում. նրանք բոլորն էլ, լինելով ժամանակի և տարածութեան հետ փոփոխող մարդկային ձեռքերի արտադրութիւն, կարող են փոփոխւել դարից-դար, տարէց-տարի, երկրից-երկիր:

Մենք արդէն գիտենք, որ Ելլինէկ և ուրիշ շատ իրաւագէտներ դաշնակցական պետութեան բազադրիչ մասերը չեն համարում գերիշխան, այլ, օրինակ, Ելլինէկը, նրանից էլ վերցնելով, Գօրէնբերգը, կոչում են այդ մասերը «ոչ-գերիշխան պետութիւններ»:

«Այդ ոչ-գերիշխան պետութիւններն էսպէս տարբերւում են ինքնավար մարմիններից: Նրանք իրանց բարձրագոյն իրաւունքներն իրականացնում են առանց պատասխանատւութեան. իրանց հրամանների իրաւական հիմքը նրանք գտնում են իրանց սեփական կամքի մէջ: Նրանց բարձրագոյն իրաւունքները պատգամաւորւած չեն գերիշխան պետութեան ձեռքով, որովհետեւ վերջինս դրանց չէ համարում իր իրաւասութեան տակ» *):

Մեկնելով այդ ելակէտից, Ելլինէկը գալիս է հետեեալ եզրակացութեանը. «Որովհետեւ դաշնակցական պետութիւնը գերիշխան է, այդ պատճառով չը կայ ոչ մի սահման նրա իրաւասութեան ընդարձակման ի հաշիւ դաշնակից մասերի. այդ ընդլայնումը կարող է այնքան առաջ գնալ, որ մասերը կորցնեն իրանց պետական բնոյթը և այդպիսով դաշնակցական պետութիւնը վերածւի ունիտար պետութեան: Ի հարկէ մենք աչքի առաջ չունենք այն քաղաքականապէս հաղիւ թէ հնարաւոր դէպքը, երբ գաշ-

*) Горенбергъ — „Теорія союзн. госуд...“ Կրես 211

նակից անդամները պետական իշխանութիւնը միանգամից կոչընչացւի կենտրոնական իշխանութեան կողմից: Բայց ամենևին անհնար չէ, սահմանադրութիւնը փոփոխելու ուղիով, սահմանափակել դաշնակցութեան անդամները պետական ընաւորութիւնը, այնպէս որ իրաւագիտական տեսակէտից վերջի վերջոյ նրանց վրայ այլ ևս կարելի չը լինի նայել իբր պետութիւնների վրայ» *):

Սակայն այդ ելակէտն իսկ սխալ է: Դրա համեմատ կենտրոնը գերիշխան է, իսկ մասերը ոչ: Այն ինչ մասերն էլ ունեն իրանց սեփական գերիշխանութիւնը: Եւ այդ մասերի գերիշխանութիւնը շատ աւելի զօրեղ, միակ տիրողն է սահմանադրութիւնը կազմելու գործողութեան ժամանակ: Մասերը, որ բացարձակ գերիշխան են այդ պերիօդում, կարող են մտցնել սահմանադրութեան մէջ այնպիսի յօդաձևեր, կամ, աւելի ճիշտ է ասել, կարող են այնպիսի ինքնապարտաւորեցման ակտեր կատարել, որ այլ ևս անհնար լինի իրանց ոչնչացումը, իրանց ձուլումը դաշնակցական ամբողջութեան մէջ և նրա վերածումը մի միապաղաղ կամ ունիտար պետութեան: Այդ կարգի ակտեր են, օրինակ, Միացեալ-Նահանգների սահմանադրութեան IV յօդաձևի 3-րդ բաժնի ա) մասը և V յօդաձևի վերջին տողը: Դրանցից առաջինում ասւած է. «... Չէ կարելի կազմել մի նոր նահանգ, ձուլելով երկու կամ աւելի նահանգներ կամ նրանց մասերը՝ առանց շահագրգռած նահանգների օրէնսդիր փողովների, նաև առանց կօնգրէսի համաձայնութեան»: Իսկ երկրորդում ասւած է. «... Ոչ մի Նահանգ, առանց իր համաձայնութեան, չէ կարող զրկել միւս Նահանգներին հաւասար ձայնի իրաւունք ունենալուց Սէնատում»:

Իսկ երբ մի Նահանգի չէ կարելի զրկել միւսներին հաւասար ձայնի իրաւունքից, և չէ կարելի ոչ կարել նրա տէրրիտօրիայից որ և է կտոր, ոչ բաժանել նրան մասերի, ոչ էլ ձուլել ամբողջութիւնը կամ նրա մի մասը մի ուրիշ տէրրիտօրիայի հետ՝ առանց իր բարի ցանկութեան, կը նշանակէ այդ երկրի իշխանութիւնն իր գոյութեան պահպանման հարցում գերիշխան է. նրան կլանել, դարձնել որ և է ունիտար պետութեան մաս՝ անկարելի է առանց նրա ցանկութեան:— Ի հարկէ մեր խօսքը իրաւական հնարաւորութեան մասին է և ոչ բռնի ուժով հպատակեցման կամ զրաւման:

*) Елл.—«Право сов. гос.» стр. 525

Վերջին միջոցով կարելի է կլանել մի անկախ պետութիւն էլ, ուր մնաց մի դաշնակից նահանգ:

Եթէ նոյն իսկ դաշնակցական պետութեան սահմանադրութեան մէջ չը լինեն այդպիսի դարանտիաներ տւող յօդաձևեր, այնուամենայնիւ դաշնակցական պետութեան մէջ գոյութիւն ունեցող օրէնսդիր մարմինների սէնատները կամ պետութիւնների ներկայացուցիչներից կազմած մարմինները, որ հանդիսանում են կենտրոնախոյս սկզբունքի ներկայացուցիչներ, — բաւարար պատնէշ կարող են հանդիսանալ ունիտարիտատական ձգտումների առջև: Ի հարկէ, եթէ մի դաշնակցական պետութեան սահմանադրութեան մէջ այդպիսի յօդաձևեր յատկապէս չեն դրւած, այդ պետութեան ներսում մասերի իրաւասութիւններն աւելի ևս կարելի է սահմանափակել, մինչև իսկ, Ելլինէկի առածի նման, կարելի է հաստատել պետական որոշ ձև բոլոր տարրեր մասերի համար, նրանց սահմանադրութիւնների այս ու այն կէտը փոփոխութեան ենթարկելու համար՝ կարելի է պահանջել կենտրոնի հաստատութիւնը կամ սանկցիան և այլն: Սակայն այդպիսի փոփոխութիւններից մինչև ունիտարիզմի հաստատումը դեռ մեծ վիճ կայ:

Մասերի և կենտրոնական գերիշխան պետութիւնների իրաւասութեան սահմանները կայուն, քարացած չեն: Սահմանադրութիւնը փոփոխելու միջոցով կարելի է այդ սահմանները փոփոխել, միայն այդ փոփոխութիւնը չէ կարող հասնել մինչև այնտեղ, որ գերիշխան մասերը չը քանան: Թէօրիսպէս, ի հարկէ, արգելքներ չեն տեսնուում, բայց գործնական կեանքը երբէք այդպիսի բան թոյլ չի տայ այն երկրներում, ուր Ֆէդէրացիայի գոյութեան համար կայ բաւարար հիմք, ուր կայ բաւարար կենտրոնախոյս ոյժ: Իսկ եթէ ժամանակի ընթացքում այդ կենտրոնախոյս ոյժը կը չքանայ, եթէ տեղական, ազգային և տնտեսական բոլոր առանձնապատկութիւնները կը յղկեն և ազգաբնակչութեան մէջ կը մնայ լոկ կենտրոնաձիգ ոյժը, այն ժամանակ, ի հարկէ, կը կազմելի մի ունիտար պետութիւն նախկին Ֆէդէրացիատականի փոխարէն: Բայց արդեօք այդ տարրերից պարագաների յղկումը, այդ բացարձակ նիվելիրօզկան հնարաւոր է: Այդ մասին դեռ յետոյ: Այսքանը միայն ասենք, որ մինչև օրս թէև Շվէյցարիայում նկատուում է որոշ հարցերում կենտրոնացման ձգտում (երկաթուղի, գալրոց,

պատժական օրէնսդրութիւն և այլն), բայց դա վերաբերում է լոկ ընդհանուր սկզբունքներին և այն էլ մի խումբ հարցերում: Մի այլ խումբ հարցերում, ընդհակառակը, ապակենտրոնական ձգտումը ոչ միայն չէ թուլանում, այլ ամրապնդում է:

Կասկած չը կայ, որ այնպիսի մի ֆէդէրատիվ պետութիւն, ինչպիսին է Շվէյցարիան իր 3 միլիօն ազգաբնակչութիւնով և չնչին տարածութեան երկրով, պիտի աւելի ձգտի միօրինակութեան, քան Միացեալ-Նահանգները նման մի հսկայական երկիր իր 76 միլիօն բնակիչներով: Բացի այդ՝ Գերմանիան, թէև մեծ, բայց կուլտուրապէս, պատմական, ազգային կեանքով իրար նման, քիչ ու շատ մի միապակազ երկիր, անպատճառ դեռ կարող է շատ աւելի կենտրոնանալ, քան՝ նոյն Միացեալ-Նահանգները, որի հեռաւոր մասերը քանի զնում, աւելի և աւելի տեղական կեանքն ու կուլտուրան զարգացնում են, չը նայելով, որ երկաթուղիներն էլ ձգտում են միօրինակութիւն մտցնել:

Ուրեմն դաշնակցական իշխանութեան և մասերի իրաւասութիւնների սահմանների յարաբերութիւնը կախած չէ մի պարզ պատճառից, այլ նա արդիւնք է բազմազան պատճառների, որոնք կազմում են ֆէդէրալիստ պետութեան հիմքերը, որոնց մասին խօսելու ենք դեռ յետոյ:

Մեր յաճախ յիշած գիտնականներից մէկը, մի բարեխիղճ և բազմակողմանի ուսումնասիրող—Վ. Վիլսօնը հետևեալ կարճ, բայց իմաստալից ձևով է որոշում այդ երկու իշխանութիւնների էութիւնը և իրաւասութեան սահմանները. «Դաշնակցական իշխանութիւնը սուվըրէն է, որովհետև նա կազմում է պետութեան բարձունքը և նրա իրաւասութիւնների կամ լիազօրութիւնների լայնացումը վերջի վերջոյ պայմանաւորում է իրանով. իսկ առանձին պետութիւնների (մասերի) իշխանութիւնը նոյնպէս սուվըրէն է, միայն սահմանափակ շրջանում: Նրանց իրաւունքներն անկախ են և իրանց հիմքերը կրում են նոյն իսկ իրանց մէջ. նրանք չեն շնորհւած զաշնակցութիւն կազմող պետութիւններին զաշնակցական կառավարութիւնից, և վերջինս չէ կարող լայնացնել մասերի իրաւասութիւնները. այդ պետութիւնները գործադրում են իրանց իրաւունքներն, ինչպէս իրանց հաճելի է» *):

*) В. Вильсонъ—„Государство“—стр. 506, պարագր. 1377.

Վերջացնելով իր երկար ու մանրամասն հետազոտութիւնը, Վիլսօնը աւելացնում է. «Սակայն յատնի չէ, թէ արդեօք ներկայումս գոյութիւն ունեցող դաշնակցական պետութիւնն անցողական մի շրջան չէ՞ քաղաքական էւօլյուցիայի մէջ»:—Այո, այդ հարցը դեռ բաց հարց է. և անկարելի է համաձայնել հեղինակի հետ, երբ նա պնդում է, թէ ներկայ դաշնակցական պետութիւնները կարճ պատմութիւնը ցոյց է տալիս մի զօրեղ միտում դէպի ունիտարիզմ: Չէ կարելի համաձայնել, որովհետև, ինչպէս վերևում յիշեցինք, եթէ Շվէյցարիայում ու Գերմանիայում գիտւում է այդպիսի ձգտում, դրա պատճառներն ուրիշ են. ծաւալի չափազանց փոքրութիւնը մի դէպքում՝ ազգութեան ընդհանրութիւնը և ամեն կողմից կլանելու պատրաստ զօրեղ հակառակորդներով շրջապատւած լինելը միւս դէպքում կարող են շատ հեշտութեամբ առաջացնել կենտրոնացում: Իսկ ֆէդէրացիաներից ամենահինը—Միացեալ-Նահանգները, որ ազատ են այդպիսի ըսպելցիֆիք պայմաններից, ամենևին չեն ցոյց տալիս կենտրոնացման ձգտում: Այն ինչ դրա հակառակը՝ մենք կարող էինք պնդել, որ ըստ նորագոյն խոշոր պետութիւնների մէջ ծնւել և զարգանում է կենտրոնախոյս ուժը, որը ձգտում է դէպի ապակենտրոնացում և, ի վերջոյ, դէպի ֆէդէրացիա:

Այժմ դիմենք փաստացի հետազոտութեան և տեսնենք կենտրոնի և բազմաբնի մասերի յարաբերութիւնն ու նրանց իրաւասութեան սահմաններն իրականութեան մէջ, գոնէ 3 գլխաւոր ֆէդէրացիաներում:

Միացեալ - Նահանգների սահմանադրութիւնը մանրամասնօրէն ուսումնասիրելով, Բրայսը գալիս է հետևեալ եզրակացութեան. «Կօնգրէսին այս կամ այն իրաւունքները յատկացնել մեծաւ մասամբ հաւասարազօր չէ այդ նոյն իրաւունքները Նահանգներից խլելուն» *), որովհետև միևնոյն իրաւունքն—ընդհանուր և մասնաւոր շրջանակներում, կարող է պատկանել և Կօնգրէսին, և Նահանգներին:

Առհասարակ այդ հանրապետութեան սահմանադրութեան ուսումնասիրութիւնն անգլիացի տաղանդաւոր հեղինակին հասց-

*) Дж. Брайсъ—«Амер. республи.» т. I. стр. 346 (ինքն էլ վերցրել է Coopley-ից):

նում է այն եզրակացութեան, որ Միացեալ-Նահանգներում գոյութիւն ունեն 5 կատէգորիայի իրաւասութիւններ. 1) իրաւունքներ, որոնք բացառապէս կենտրոնական իշխանութեանն են յատկացւած. 2) իրաւունքներ, որոնք բացառապէս նահանգներին են թողնւած, 3) այնպիսի իրաւունքներ, որոնցով կարող են օգտուել կամ դաշնակցական կամ նահանգներէ իշխանութիւնները, 4) իրաւունքներ, որոնցից օգտուին արգելւած է դաշնակցական իշխանութեանը կամ կօնգրէսին և 5) իրաւունքներ, որոնցից օգտուին արգելւած է առանձին նահանգների վարչութիւններին:

Մրանից պարզ երևում է, որ երկրի սահմանադրութիւնը կազմողները բոլոր պետական ու կենսական հարցերը չեն բաժանել երկու որոշ կատէգորիաների—կենտրոնի և մասերի իրաւասութիւններ,—այլ թողել են մի մեծ դաշտ գերիշխան փողովրդի միջամտութեան: Եւ, որքան էլ հանճարեղ լինէին այդ սահմանադրութիւնը կազմողները, միթէ հնարաւոր էր նրանց համար նախաանսել կենսական անվերջ, յարաճուն և յարածին երևոյթները:

Դաշնակցական իշխանութեանն, ինչպէս ինքն ըստ ինքեան հասկանալի է, պատկանում են ընդհանուր պետական հարցերին վերաբերող իրաւունքներ, ինչպէս՝—բոլոր արտաքին գործերը, բանակը և նաւատորմը, ներքին առևտուրը, դործածական դրամները, չափերն ու կշիռները, պօստը (հեռագիրն էլ հետը): Այդ բոլոր խնդիրներում դաշնակցական իշխանութիւնն «իրաւունք ունի կայացնելու այն բոլոր օրէնսդրական, վարչական և դատական որոշումները, որոնք անհրաժեշտ են այդ իրաւունքների գործադրութեան համար» *):

Նահանգների իշխանութիւններին են թողնւած բոլոր մնացած այն խնդիրները, որոնք անհրաժեշտ են ներքին կառավարութեան, տեղական վարչութեան համար: Դրանք են. հրատարակել քրէական և քաղաքացիական օրէնքներ մասնաւոր շահերի վերաբերմամբ, վերահսկել օրէնքի գործադրութեանը և ներքին կարգ ու կանոնը սահպանել, հիմնել տեղական հաստատութիւններ, նոր սերնդի կրթութեան և չունեւորների վրայ հող տանել, դնել հարկեր այդ բոլոր ծախքերը ծածկելու համար:

*) Дж. Врайсъ—այս, երես 348: Առհասարակ իրաւասութեան այդ 5 բաժանումների խնդրում մենք հետևում ենք Բրայսի գրքին:

Ահա այն գործնական սահմանները, որ, Բրայսի համառօտութեամբ, մենք առաջ բերինք: Դրանք կօնգրէսի և նահանգների անվիճելի, յատուկ և բացառական իրաւունքներն են:

Կան իրաւունքներ, որոնցով կարող են օգտուել և նահանգները, և կօնգրէսը: Դրանք հետեւեալներն են. հրատարակել օրէնքներ մի քանի յատուկ հարցերի վերաբերմամբ, ինչպէս մասնկութեան և առևտրական շահերի խնդիրներում (օրինակ՝ լօցմանները, նաւահանգիստների և այլն): Սակայն նահանգների հրատարակած օրէնքներն այդ հարցերում ոյժ կունենան միայն այն դէպքում, եթէ դաշնակցական իշխանութիւնը չէ ունենում նոյնանման օրէնքներ կամ նոյն հարցի մասին մի այլ օրէնք: Իսկ դա նշաօրէնքներ կամ նոյն հարցի մասին իշխանութեան օրէնքներին տրւում է, որ դաշնակցական իշխանութեան օրէնքներին տրւում է նախապատուութիւն այդպիսի հարցերում: Երկուսն էլ իրաւունք ունեն դնելու ուղղակի և անուղղակի հարկեր, միայն մի քանի սահմանափակումներով, որոնց մասին կը խօսենք ներքևում: Դատական իշխանութեան իրաւունքը պատկանում է մի քանի տեսակ գործերում և՛ նահանգներին, եթէ կենտրոնական իշխանութիւնը չէ հրատարակել այդ առիթով յատուկ օրէնքներ: Այդ նոյն հարցերում վիճող կողմերը կարող են դիմել և տեղական, և դաշնակցական զատարաններին: Սէնատօրների և պատգամաւորների ընտրութիւնների խնդիրները վճռում են Նահանգները, եթէ կըրկին չը կայ այդ առիթով յատուկ դաշնակցական օրէնք. հէնց որ դաշնակցական օրէնքն այդ մասին երևաց, Նահանգների նախկին հրատարակած և գործադրող օրէնքներն իսկոյն կորցնում են իրանց ոյժը:

Դաշնակցական իշխանութեանն արդեււած է. վերացնել Habeas Corpus-ը կամ անձնական ազատութեան զարանտիան, որը վերացնել կարելի է միայն ապստամբութեան, թշնամու արշաւանքի և, առհասարակ, հասարակական ապահովութեանն սպառնացող վտանգի ժամանակ. հրատարակել որոշումներ քաղաքական յանցանքների մասին, օրէնքներ, որոնք յետադարձ ոյժ ունենան. հարցն այստեղ, ի հարկէ, վերաբերում է միայն քրէական օրէնքներին: Նա իրաւունք չունի մի նահանգի տալ որ և է առևտրական առուելութիւն. չէ կարող բաժանել ազնւական տիտղոսներ, կան առուելութիւն. չէ կարող բաժանել ազնւական տիտղոսներ, կան առուելութիւն. չէ կարող սահմանափակումներ անել բերանացի վերաբերմամբ. չէ կարող սահմանափակումներ անել բերանացի

ու գրաւոր խօսքի, հրապարակային միտինդների, զէնք կրելու ազատութեան մասին: Նա չէ կարող ստիպել իր պաշտօնեաներին դաւանելու այս կամ այն կրօնը. չէ կարող վարչական կարգով պատժել որ և է մէկին—այլ ամեն մի դատի ենթարկման գործ պիտի կատարուի երդեալների դատարանի ձեռքով. չէ կարող միևնոյն յանցանքի համար երկրորդ անգամ դատ բաց անել: Մեղադրեալին նա պարտաւոր է յանձնել իր Նահանգի երդեալներու դատարանին, և այլն:

Պակաս չեն նաև Նահանգների իրաւասութեան վրայ դրւած արգելքները: Նրանց նպատակը երկու է. ա) թոյլ չը տալ Նահանգներին մտնել դաշնակցական կառավարութեան իրաւասութեան սահմանը և բ) որքան հնարաւոր է ղերծ պահել քաղաքացիներին անարդար և ճնշիչ օրէնքներից:

Այսպէս՝ Նահանգներին արգելւած է կնքել դաշնագրեր, կտրել դրամ, բացի ոսկուց և արծաթից (բիմետալիզմ)՝ ճանաչել որ և է այլ մետաղ իբր երկրի օրինական դրամ, հրատարակել օրէնքներ քաղաքական յանցանքների մասին, կամ այնպիսի օրէնքներ, որոնք յետագարձ ոյժ ունենան, կամ ուրիշ այնպիսի օրէնքներ, որոնք ոչնչացնեն պայմանագրերի պարտադիր ոյժը: Արգելւած է բաշխել ազնւականութեան տիտղոսներ: Բացի այդ, Նահանգն իրաւունք չունի իր երկրից արտահանուող և ներմուծուող ապրանքներից մաքս առնել, խաղաղ ժամանակը պահել զօրք կամ պատերազմական նաւեր, համաձայնութեան մտնել ուրիշ Նահանգների կամ օտար պետութիւնների հետ, պատերազմ սկսել (բացի վտանգ սպառնացած կամ արշաւանքի ենթարկւած դէպքից): Նահանգների կառավարութեան միակ ձեռք լինելու է հանրապետութիւնը. զրանից դատ ուրիշ ձևի կառավարութիւն իրաւունք չը կայ մտցնելու:

Նահանգն իրաւունք չունի տարբերութիւն դնելու մարդկանց մէջ՝ նրանց կաշւի դոյնի կամ անցեալում ունեցած ստրուկ վիճակի պատճառով: Բոլորովին վերացւած է ստրկութիւնը: Իրաւունք չունի նոյնպէս որ և է անձի զրկելու կեանքից, ազատութիւնից կամ սեփականութիւնից առանց հարկաւոր դատական վճար: Նա պարտաւոր է ամենքին ցոյց տալ օրինական պաշտպանութիւն:

Նահանգը պարտաւոր է ընդունել միւս Նահանգների դատա-

րանների որոշումները կամ վճիռները, միւս Նահանգների բնակիչներին տալ նոյն իրաւունքներն ու արտօնութիւնները, ինչ որ ունեն իր սեփական բնակիչները: Նա պարտաւոր է յանձնել միւս Նահանգների կառավարութիւններին այն անձերին, որոնք փախել են այդ Նահանգներից որ և է մէկի դատարանի վճիռն իրագործելուց: *):

Բրայսն, առաջ բերելով այդ բոլորը, նկատում է, որ կան շատ հարցեր, որոնց վերաբերութեամբ երկրի Սահմանադրութիւնը լուծթիւն է պահպանում: Օրինակ, նրանում ոչինչ չէ ասուած որ և է յատուկ կրօն հաստատելու մասին այս կամ այն Նահանգում, այդ կրօնի համար յատուկ եկամուտ նշանակելու մահանգում, այդ կրօնի համար յատուկ կարելի քրէական և պիւն Ոչինչ չը կայ նաև այն մասին, թէ չէ կարելի քրէական և քաղաքացիական գործերում չը գործածել երդեալների դատարան: Չը կայ ոչինչ նաև այն մասին, թէ չէ կարելի արգելել կամ սահմանափակել մամուլի, խօսքի և ժողովների ազատութիւնը, սահմանափակել որ և է չափով ընտրական իրաւունքը, տարածել կամ չը տարածել նոյն ընտրական իրաւունքը կանանց, անչափահասների և օտարականների վրայ և այլն:

Այդ բոլոր բաց մնացած, յաճախ կամքով չը յիշատակւած հարցերը թողնում են ազատ ասպարէզ Նահանգներին՝ մտցնելու իրանց մէջ իրարից տարբեր, զանազանակերպ, նոյն իսկ բազմօգան կարգեր: 1789-ի սահմանադրութիւնը կազմողները նպատակ են ունեցել չը ճնշել Նահանգների ազատութիւնը, չը ստիպել նրանց անպատճառ միօրինակ, ինչ կուզէ լինի՝ իրար նման կարգեր ունենալու: Եւ դա սարսափեցրել ու դեռ սարսափեցնում է շատ մտավախ մարդկանց. զրանք կարծում են, թէ այդ ներշնչանքի բազմազանութիւնը կը հասնի ծայրայեղութեան Միացեալ-Նախանգներում... Բայց իրականութիւնը ցոյց տւեց, որ Նահանգները շատ աւելի իրար նման կարգեր ունեն, քան նոյն իսկ հարկաւոր է:

*) Վերևում յիշուած բոլոր սահմանափակումները յականէ-յանւանէ յիշուած են Միացեալ-Նահանգների Սահմանադրութեան 1 յօդուածի 10-ր բաժնի մէջ և XIII, XIV և XV լրացուցիչ կամ որբադրիչ յօդուածներում: (Տես Вильсонъ—„Государство“ II բաժին, էրև 141 և 150—152): Սակայն մենք այստեղ հետևել ենք մասամբ Брайсъ-ի վերլուծութեանը, իբրև աւելի համախառն և կանոնաւորուած ձևի: (Տես Брайсъ—„Амер. Республика“—Т. I. էրև 146—151):

րանն է, որը հսկում է Սահմանագրութեան ճիշտ գործադրութեան վրայ. իսկ այդ դատարանն իր ձեռքում չունի ոչ մի ոյժ՝ հպատակութեան մէջ պահելու համար անհնազանդներին, բացի լոկ բարոյական ուժից: Այսպէս էլ երևում է 1787-ի դաշնակցական գործիչների մաքուր գէմօկրատիզմը: Նրանք, թողնելով այդ բաց դռները, չը դնելով ոչ մի ձեւական արգելք այդպիսի յեղափոխական ձգտումների ու ակտերի առջև, մասձեւ են, որ, օրինակ, կառավարութեան ձեւը կարող է կենտրոնական իշխանութիւնը փոխել միայն այն ժամանակ, եթէ ժողովուրդն ուզէ, եթէ նրա մէջ հասունացած լինի այդ ցանկութիւնը: Իսկ եթէ երկրի տէրն ուզում է մի բան, ոչ մի ձեւական արգելք չէ կարող խանգարել նրան իրականացնելու իր ցանկութիւնը:

Նոյն տեսակի բաց դռներ թողնւած են նա և Նահանգների իրաւասութիւնների վերաբերմամբ: Նահանգը զերիշխան է իր բոլոր ներքին գործերում: Ինչպէս ասացինք վերևում, դաշնակցական կառավարութիւնը, լինելով նոր սահղծւած, աւելի ուշ ծնւած քան Նահանգների իշխանութիւնը, ունի աւելի որոշ իրաւասութեան սահմաններ. նրա բոլոր իրաւասութիւնները յիշւած են Սահմանագրութեան մէջ: Իսկ ինչ չէ յիշւած այնտեղ, այդ բոլորը մնում է Նահանգների իրաւասութեանը: Բացի այդ՝ մինք տեսանք, որ որոշ հարցերում ուղղակի արգելքներ են հանւած Նահանգի իշխանութեան առջև: Սակայն արգելքները շատ սահմանափակ թւով են. նրանք չեն կարող նախատեսել կենսական անվերջ հարցերը: Դրանից բզխում է այն, որ Նահանգը միշտ կարող է ընդհարել դաշնակցական իշխանութեան հետ, միշտ կարող է իր ներսում դնել այնպիսի օրէնքներ, հաստատել այնպիսի կարգեր, որ գայրոյթ առաջացնեն շրջապատ Նահանգների լուսագոյն քաղաքացիների մէջ: Այդ ամենը կարող է պատահել, այն. և կենտրոնական իշխանութիւնը չունի ոչ մի օրինական միջոց, ոչ մի իրաւունք միջամտելու Նահանգի գործերին, եթէ նա չէ կատարել Սահմանագրութեան մէջ նախատեսւած մի քանի յանցանքներն, ինչպէս, օրինակ՝ եթէ նա չէ ոչնչացրել կառավարութեան հանրապետական ձեւը, եթէ նա չէ ներմուծել ստրկատիրութիւն, եթէ չէ բաժանել դաշնակցութիւնից, և այլն:

Դաշնակցութեան «մարշալները» (պաշտօնեաներ) զրւած են բոլոր Նահանգներում իրանց բազմաթիւ օգնականներով և գոր-

ծաղրում են դաշնակցական դատարանների վճիռները: Դաշնակցական մաքսային պաշտօնեաները նոյնպէս բազմաթիւ են և ցրւած բոլոր ծովափերի վրայ ու երկրի ներսը և հաւաքում են մաքսային սուրքերը *): Բայց դրանցից և ոչ մէկը չունի որ և է բռնի ոյժ, որով կարողանայ սախել քաղաքացիներին կատարելու իր հրամանները: Նրա միակ ոյժը բարոյական ոյժն է, անգլօ-սաքսօն ցեղին յատուկ օրինակնութեան զգացումը, որին անքան մեծ նշանակութիւն է տալիս հռչակաւոր անդլիացի զրոյ Դայսին **): Եթէ դաշնակցական պաշտօնեաները հանդիպեն դիմադրութեան, նրանց մնում է միայն մի միջոց՝ «դիմել բոլոր բարի քաղաքացիների օգնութեանը» ***): Եթէ այդ էլ չօգնեց, դաշնակցական պաշտօնեան ստիպւած է դիմելու Միացեալ-Նահանգների նախագահին, որը կամ զօրք կուղարկէ դիմադրութիւնը զսպելու, կամ կը հրամայէ այդ Նահանգի կառավարութեանը զսպել դիմադրութիւնը տեղական միլիցիայի ձեռքով:

Անհատներից դատ, Նահանգն էլ կարող է չենթարկւել դաշնակցական իշխանութեան կարգադրութիւններին: Այդպիսի դէպքեր, մինչև 1861—65-ի ընդհարումը, բաւական յաճախ էին պատահում և երբէք որ և է բռնի միջոցով կենտրոնական իշխանութիւնը չէր կարողանում բարձրացնել իր հրամանի արժէքը, չէր կարողանում գործադրել տալ իր իրաւացի որոշումը: 1861—65 կարողանում գործադրել տալ իր իրաւացի որոշումը: 1861—65 թւին ղինւած ընդհարումը վերջ գրեց այդ անորոշ վիճակին: Նա ցոյց տւեց, որ կենտրոնական իշխանութիւնն ունի որոշ միջոցներ գործադրելու համար իրեն վերապահւած բոլոր իրաւասութիւնները, որոնք յիշւած են Սահմանագրութեան մէջ:

Բայց դրանից դուրս, ինչպէս վերևում էլ նկատեցինք, կենտրոնական իշխանութիւնը ոչ մի իրաւունք չունի միջամտելու Նահանգի ներքին գործերի մէջ, եթէ այնտեղ պարզ տեսնի նոյն իսկ բռնութիւն, անարդարութիւն փոքրամասնութեան վերաբերմամբ: Նա պիտի հանդիսանայ իրր մի անտարբեր ու անզօր վկայ Նահանգում կատարուող ամեն տեսակ բռնութիւնների, եթէ Նահան-

*) Брайсъ—ibid—т. I, стр. 367, Мижуевъ—«Главн. федерацин»—стр. 171.
 **) Дайси—«Основ. госуд. Права Англии»
 ***) Брайсъ—ibid—стр. 368

գի իշխանութիւնը չէ խախտել Սահմանադրութեան պարզ որոշումները, եթէ օրինակ՝ յետադարձ ուժով օրէնքներ չէ հրատարակել, կամ չէ խախտել պայմանադրերի պարտադիր ուժը, չէ մտցրել մի այլ ձևի կառավարութիւն, բացի հանրապետականից և այլն:

Ի՞նչ էլք կայ այդ անել վիճակից: Միայն մի էլք.— յենւել Սահմանադրութեան յառաջարանի վրայ, որի մէջ ասւած է թէ դաշնակցութեան նպատակն է «աւելացնել ընդհանուրի բարօրութիւնը և ապահովել թէ մեր և թէ մեր յետնորդների համար ազատութեան բարիքները»:

Կօնգրէսը, յենւելով այդ «ընդհանուրի բարօրութիւնն աւելացնելու» սկզբունքի վրայ, XIX դարի ընթացքում հրատարակել է մի շարք օրէնքներ, որոնք ոչ մի առնչութիւն չունեն Սահմանադրութեան հետ: Այսպէս՝ նա հրատարակել է բաւական խիստ սահմանափակող օրէնքներ մասնաւոր երկաթուղիների և մասնաւոր երկաթուղային ընկերութիւնների վերաբերմամբ. նա հրատարակել է մի քանի արգելառիթ օրէնքներ ամերիքական տրեստների կամ կեղեքիչ խոշոր կապիտալիստական ընկերութիւնների մասին և այլն:

Այդ նոր օրէնքները կարող էին ենթարկւել արգելքի միայն դաշնակցական դատարանների կողմից: Դատարանը լինելով միակ վերահսկիչ Սահմանադրութեան ստոյգ և անաղարտ դործադրութեան, կարող է կօնգրէսի հրատարակած օրէնքը յայտարարել հակասահմանադրական: Այդ երկիւղը, դատարանի այդ իրաւասութիւնը Դամօկլեան սուրի նման միշտ կախւած է կօնգրէսի գլխին և ստիպու է ամերիքական դործիչներին կամ օրէնսդիրներին, օրէնք հրատարակելուց առաջ, լաւ կշռադատել ըլոր հանդամանքները, լաւ ըմբռնել ժողովրդի, ազգի մեծամասնութեան պահանջը և հրատարակել այնպիսի օրէնք, որ դատարանը չը համարձակւի յայտարարել հակաօրինական: Միժուելը, խօսելով երկաթուղիների, տրեստների և սինդիկատների վերաբերմամբ հրատարակւած օրէնքների մասին, աւելացնում է. «Այդպէս վարւելով, կօնգրէսը համոզւած էր, որ եթէ որ և է դատարանը անող լինէր այդ առիթով, դաշնակցական դատարանը կը կանգնէր նոյն տեսակէտի վրայ և չէր համարի կօնգրէսի օրէնք-

ները սահմանադրութեան հակառակ, դրա համար էլ ոչ-օրինական» *):

Պատահել են բազմաթիւ դէպքեր XIX դարի ընթացքում, երբ դատարանը կօնգրէսի հրատարակած օրէնքները յայտարարել է հակասահմանադրական: Այդպիսի դէպքում էլ դատաւորները պէտք է շատ զգոյշ լինեն և մեծ հեռատեսութեամբ կշռադատեն, թէ արդեօք սրբան ճիշտ է ըմբռնել կօնգրէսը ժողովրդի լայն խաւերի պահանջներն ու մեծամասնութեան ձգտումները: Եթէ կօնգրէսի հրատարակած օրէնքը ըրխում է մեծամասնութեան շահերից, եթէ հասարակութեան մեծամասնութեան համակրանքը նրա կողմն է,— դատարանը կարող է յայտարարել այդ օրէնքը հակասահմանադրական, բայց ժողովուրդը, ուշ կամ շուտ, կը գայ համաձայնութեան և նոյն օրէնքը ներս կը մտցնէ Սահմանադրութիւնը սրբազրելու դժւարին, բայց ոչ անհնար ուղիով:

Այդ տեսակէտից՝ վերին աստիճանի հետաքրքրական է ուսումնասիրել, թէ ինչպէս բուրժուա օրէնսդիրները և ոչ նւազ բուրժուա դատաւորները նախ հալածեցին բանւորական օրէնսդրութիւնը թէ դաշնակցական և թէ Նահանգների ասպարէզներից, սակայն ինչպէս նրանք վերջապէս ստիպւած եղան, բանւորական ուժեղ կազմակերպութիւնների, գործադուլների ու ճընշման ազդեցութեան տակ՝ հրատարակել այդպիսի օրէնքներ: Հետաքրքրական է նոյնպէս ծայրայեղ բուրժուա դատաւորների կըռուին այդ նոր օրէնսդրութեան դէմ և, մանաւանդ, նրանց, այդ դատաւորների պարտութիւնը և ժողովրդի լայն խաւերի ու «ընդհանրութեան բարօրութիւնն աւելացնելու» տեսակէտի յաղթանակը:

Պատմենք համառօտակի, թէ ինչպէս են կատարում Սահմանադրութիւնների բարենորոգումները:

Ինչպէս արդէն գիտենք, Անդլիայում սահմանադրական բարենորոգումները և հասարակ օրէնքներն իրարից ոչնչով չեն տարբերւում: Հիմնական օրէնքներն էլ, հասարակ օրէնքների նման, լուծւում են Պարլամէնտում ձայների հասարակ մեծամասնութիւնով: Բաւական է որ ժողովրդի մեծամասնութիւնը տրամադրւած էին որ և է հիմնական բարենորոգման կողմ՝ Պարլամէնտն իս-

*) Мижуевъ-«Главныя федераціи современнаго міра»-եր. 176.
16

կոյն կարող է կատարել այդ, որքան էլ որ դէմ լինի նոր ակտը զարեւրից ժառանգած սովորութիւններին: Միայն, ի հարկէ, միակ յետ պահող ոյժը անդլիական պահպանողական հասարակական կարծիքն է և տրադիցիայի հսկայական ուժը:

Փրանսիայում սահմանադրութիւնը բարեփոխելու գործը մի քիչ տարբեր ձևով է կատարուում, քան սովորական օրէնադրութիւնը: Սահմանադրութեան որ և է կէտը փոխելու համար՝ երկու պալատները (շամբրը և սէնատը) պիտի միասին ժողով կազմեն, որը կոչուում է Ազգային ժողով,—այն էլ յատկապէս Վէրսալում. այդ ժողովում, ձայների հասարակ մեծամասնութիւնով կատարուում են Սահմանադրութեան փոփոխութիւնները: Միայն նախ քան Ազգային ժողով հրաւիրելը, ամեն մի պալատ պէտք է իր մեծամասնութեամբ կամենայ այդ հրաւերը, յետոյ պէտք է որոշեն երկու պալատներում էլ Սահմանադրութեան այն կէտերը, որոնց մասին պէտք է խօսուի: Եթէ պալատներից որ և է մէկի մեծամասնութիւնը չը համաձայնեց, Ազգային ժողով հրաւիրելն անհնար կը լինի: Ազգային ժողովի նիստերը չեն կարող աւելի տևել, քան 5 ամիս, այսինքն սովորական օրէնադրական մի սէսիս *):

Գերմանիայում սահմանադրական բարենորոգումների համար Բունդէսրաթի կամ Դաշնակցական խորհրդի մէջ անհրաժեշտ է ձայների աւելի մեծ թիւ, քան հասարակ օրէնադրութեան համար: Այսպէս՝ Դաշնակցական խորհրդում եթէ 14 ձայն առաջարկած բարենորոգութեան դէմ գնայ, այլ ևս նա չէ կարող ընդունել: Ի հարկէ այդ 14 ձայնի veto-ն որոշ նպատակով է գրւած Գերմանիայի դաշնակցական Սահմանադրութեան մէջ. դրա նպատակն է չը թոյլ տալ, Սահմանադրութիւնը բարենորոգելու պատրւակով, ներմուծել նրա մէջ այնպիսի օրէնքներ, զնել այնպիսի կարգեր, որ փոքր պետութիւնները կու գնան նախ մեծերին և ապա վերջ ի վերջոյ՝ Պրուսիային:

Յիշւած բոլոր պետութիւնների մէջ Սահմանադրութիւնը բարեփոխելու գործողութիւնը շատ աւելի պարզ ու հասարակ է, քան Միացեալ-Նահանգներում: Այդ բանի համար Դաշնակցական

*) Эсмень—т. II.—Вильсонъ—«Государство»—стр. 197, պարագրաֆ 410—414.

այդ մեծ հանրապետութեան մէջ և՛ գործողութեան ձևականութիւնը, և՛ կատարող քաղաքական իշխանութիւնը տարբեր են սովորական օրէնքներ զնող ձևականութիւններից և քաղաքական իշխանութիւններից:

Միացեալ-Նահանգների Սահմանադրութեան V-րդ յօդւածն ամբողջապէս նւիրւած է այդ հարցին: Ահա նրա թարգմանութիւնը.

«Ամեն անգամ, երբ երկու պալատների անդամների ²/₃ մասերն անհրաժեշտ կը համարեն, Կօնգրէսը կառաջարկէ սրբազրուումներ այս Սահմանադրութեանը, կամ բոլոր Նահանգների Օրէնսդիր ժողովների ²/₃-ների պահանջով, Կօնգրէսը Կօնվէնստ կը հրաւիրէ և նրան կառաջարկէ սրբազրուումներ, որոնք երկու դէպքում էլ կունենան օրինական ոյժ, իբրև Սահմանադրութեան բաղադրիչ մասերը, եթէ նրանց կը հաստատեն բոլոր Նահանգների Օրէնսդիր ժողովների ³/₄ մասերը, կամ բոլոր Նահանգներում հրաւիրւած յատուկ կօնվէնստների ³/₄-ը, նայելով թէ այդ հաստատութեան ճանապարհներից որը կառաջարկէ Կօնգրէսը. բայց մինչև 1808 թիւը եղած որը կառաջարկէ Կօնգրէսը. բայց մինչև 1808 թիւը եղած որը կառաջարկէ Կօնգրէսը, և ոչ մի նահանգ, առանց իր համաձայնութեան, չէ կարող զրկել միւսներին հաւասար ձայն ունենալուց Մէնատում» *):

Այդ յօդւածից պարզ երևում է, որ Սահմանադրութիւն փոխելու համար անհրաժեշտ է երկու գործողութիւն—նախ փոփոխութեան առաջարկը և յետոյ այդ փոփոխութիւնը հաստատելը, նրան օրէնքի ոյժ տալը, Սահմանադրութեան բաղադրիչ մաս դարձնելը:

Սրբազրուումների կամ փոփոխութիւնների առաջարկը կարող է ըզխել երկու աղբիւրից—կամ Կօնգրէսից, կամ բոլոր Նահանգների Օրէնսդիր ժողովների ²/₃ մասերից:

«Կօնգրէսն ինքը կարող է կազմել և առաջարկել ուղղումներ, եթէ այդ կը պահանջեն նրա երկու պալատների անդամների երկու երրորդ մասը» **):

*) Вильсонъ—«Государство»—отдѣлъ II, стр. 146.

**) Брайсъ—ibid—стр. 398.

Փոփոխութիւնների երկրորդ աղբյուրը Կօնվէնսան է: Բոլոր Նահանգների Օրէնսդիր Ժողովների երկու երրորդը կարող են պահանջել Կօնգրէսից հրաւիրել Սահմանադիր Կօնվէնտ, կամ, ինչպէս Վիլսօնն է անւանում, Ժողովրդական Կօնվէնտ (Popular Convention): Կօնգրէսը պարտաւոր է կատարել այդ պահանջը: Հրաւիրւած Կօնվէնտը մշակում և առաջարկում է Սահմանադրութեան որոշ կէտերի փոփոխութիւններ կամ լրացումներ և այլն: «Կօնվէնտի կազմի և ընտրութեան վերաբերմամբ գոյութիւն չունի ոչ մի որոշում, այդ պատճառով էլ պէտք է ենթադրել, որ թէ մէկը և թէ միւսը թողնւած են Կօնգրէսի բարեհայեցողութեանը» *):

Առաջարկն այդ երկու ճանապարհներից մէկով կատարելուց յետոյ, մնում է նրա հաստատութիւնը կամ բատիֆիկացիան:

Մշակւած օրէնքը, որ անհրաժեշտ է դատւում մտցնել, իրր բաղադրիչ մաս, Սահմանադրութեան մէջ, կարող է հաստատւել կամ բոլոր Նահանգների Օրէնսդիր Ժողովների երեք քառորդի կողմից, կամ յատկապէս այդ նպատակով բոլոր Նահանգներում հրաւիրւած նահանգական կօնվէնտների երեք քառորդի կողմից:

Ի հարկէ առաջին ճանապարհն աւելի կարճ և աւելի քիչ ժամանակ պահանջող է, քան երկրորդը:

XIX դարի ընթացքում Միացեալ-Նահանգներում առաջարկւել են 1900 սրբադրումներ, յաւելւածներ, լրացումներ և այլն, սակայն զրանցից միայն 19 են արժանացել ընդունւելու վերևում յիշւած Սահմանադրական փոփոխութեան երկար ու ձիգ ճանապարհով: Իսկ այդ 19-ից էլ միայն 15 են մտել Սահմանադրութեան մէջ իրր փոփոխութիւն ու լրացում **):

Հետաքրքրական է, որ նոյն հարիւրամեակում Ֆրանսիան ունեցել է, ինչպէս ասում է Էսմէնը, համարեա նոյնքան տարբեր Սահմանադրութիւններ:

Վերևում բերւած յօդւածի մէջ խիստ ուշադրաւ է վերջին կէտը. «ոչ մի նահանգ, առանց իր սահմանադրումեան, չէ կարող զրկւել Սէնատում միւս նահանգներին հաւասար ձայն ունենալու իրաւունքից»: Դա մի իսկական դարանտիա է դաշնակցական

*) Брайтсъ—іbid. երևս 398. Мижуевъ—նոյն—երևս 165.
**) Мижуевъ—«Главныя федерации соврем. Мира» երևս 167.

սկզբունքի: Որքան էլ նահանգը փոքր ու աննշան լինի. որքան էլ միւս բոլոր դաշնակիցներն ու կենտրոնական իշխանութիւնն ուղենան նրան զրկել իրաւունքից, կլանել կամ խախտել դաշնակցական ս'լղրունքը նրա վերաբերմամբ,—չեն կարող, քանի որ ինքը չէ ցանկանում այդ. իր միակ ձայնը բաւական է արդիւելու մի այդպիսի առաջարկ, վերջնական veto դնելու:

Այդ վերջին կէտն իրաւունք է տալիս Միացեալ-Նահանգներին կոչելու «Անբակտիի Գաշնակցութիւն անբակտիի Նահանգների», ինչպէս յաջողութեամբ կոչել է երկրի բարձրագոյն դատարանը՝ Չէյզ դատաւորի բերանով, 1865-ի ազգամիջեան պատերազմից յետոյ: (Բրայս, հատոր 1, երես 355-56-ի ծանօթութիւնը):

Ինչպէս տեսնում ենք, դաշնակցական Սահմանադրութեան փոփոխումը գրւած է բաւական ծանր ու երկար ճանապարհի վրայ: Այնքան էլ հեշտ չէ կօնգրէսի մէջ միատեղել ²/₃ ձայների մեծամասնութիւն, կամ հրաւիրել բոլոր Նահանգներում Կօնվէնտ-մեծամասնութիւն, կամ հրաւիրել բոլոր Նահանգների Օրէնսդիր Ժողովների սահմանադիր կօնվէնտ բոլոր Նահանգների Օրէնսդիր Ժողովների ³/₄-ի հաւա- ²/₃-ի պահանջով, յետոյ էլ ստանալ նոյն ժողովների ³/₄-ի հաւա- նութիւնը մշակւած փոփոխութեան վերաբերմամբ: Այդ բոլոր նութիւնը մշակւած փոփոխութեան վերաբերմամբ: Այդ բոլոր դժարութիւնների արդիւնքն այն է, որ 1789 թւից սկսած մինչև օրս Սահմանադրութիւնը, չը նայելով իր մէջ ընդունած 15 փոփոխութիւններին ու լրացումներին, մնացել է անխախտ ու փոփոխութիւններին ու լրացումներին, որ կազմւած ժամանակը: Մի- նոյն ոգով, ինչ որ էր սկզբում, նոր կազմւած ժամանակը: Այս- այն, ի հարկէ, Բարձրագոյն դատարանները, տալով օրէնքի այս ու այն կէտերին տարբեր բացատրութիւններ, յարմարեցնում են նրանց ժամանակի ոգուն:

Նոյն տեսակի ձևականութիւններ ու ձգձգւած բարդութիւններ են հարկաւոր Նահանգների Սահմանադրութիւնները փոփոխելու կամ սրբադրելու համար *):

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ս: Գերմանական կայսրութիւնն, ինչպէս արդէն ասել ենք, բաղկացած է 25 պետութիւններից և կայսերական մի Նահանգից—Էլզաս-Լոտարինգիայից:

*) Մենք չենք կարող այդ հարցով զբաղւել այստեղ: Ով հետաքրքրւում է զրանով, թող դիմէ Բրայսի զբբի II և III հատորին, կամ Վիլսօնի զբբի 416 —451 երեսներին:

Ինչ է Գերմանիան,—արդեօք մի «դաշնակցական միապետութիւն», թէ մի «դաշնակցական հանրապետութիւն»: Մեր աշխարհագրութեան դասագրքերում նա կոչւած է «Դաշնակցական Կայսրութիւն», Լեօնինգը նրան անւանում է «Դաշնակցական Մծնարխիա», երևի այն պարզ պատճառով, որ նրա բաղադրիչ 25 պետութիւններից 22-ը միապետութիւններ են, իսկ 3-ը միայն հանրապետութիւններ *): Ելլինէկը կոչում է «Դաշնակցական Հանրապետութիւն», որն ունի 25 հաւասար անդամներ: Եւ յարգելի գիտնականն ապացոյց է բերում այդ բանին Բիսմարկի խօսքերը: **): Լնւ հանրապետութիւն է, որի մէջ կայ մի կայսր, կան համարեա միահեծան մանրիկ պետութիւններ...

Ինչ անուն էլ որ տան, դա մեզ համար միևնոյնն է. էութիւնը չի փոխուում, և Գերմանիան կը մնայ մի դաշնակցական պետութիւն:

Դաշնակցական պետութեան կամքը ներկայացնող մարմինները երեք են. Կայսրը, Դաշնակցական Սորհուրդը և Բայխստագը կամ երկրի պարլամէնտը:

Կայսրը Պրուսիայի թագաւորն է, որ տիրում է «կամօքն աստուծոյ»: Նա նախագահ է Գերմանական Դաշնակցութեան: Կայսրը, որ միաժամանակ կոչւում է «Թագաւոր Պրուսիայի», չունի յատուկ «liste civile» կամ «Կայսերական ծախք», ինչպէս Աւստրիայի կամ Ռուսաստանի կայսրներն ունեն, —այլ ամեն տարի, Կայսրութեան բիւջէն կազմելիս, Բայխստագը և Դաշնակցական Սորհուրդը մի յատուկ գումար նշանակում են «կայսրի» կամ «Դաշնակցական Նախագահի» ծախքերի համար: Այդ գործողութիւնը պարզ ցոյց է տալիս, որ Կայսրը միահեծան կամ գերիշխան չէ, այլ բաժանում է իր գերիշխանութիւնն ուրիշ մարմինների հետ (Բայխստագի և Բունդեսրաթի հետ):

Կայսրի իրաւասութիւնը բացարձակ է միայն մի կէտում. նա է ներկայացնում «Գերմանիան» միջազգային յարաբերութիւններում: Կայսրն է նշանակում և ընդունում դեսպաններ, հիւպատոսներ կամ կոնսուլներ, նրանց խորհրդակիցներ, կցորդներ և այլն: Այս հարցում նա տէր է,—ոչ ոքից խորհուրդ չէ հարցնում, ոչ ոքի հաւանութիւնը պարտաւոր չէ հայցելու:

*) Loening—Grundzüge... երես 31

**) Еллин. „Пр. С. Г.“ երես 476

Մնացած բոլոր հարցերում, որոնց մէջ իրաւասու է և կայսրը, պարտաւոր է բաժանել իր գերիշխանութիւնը երբեմն Դաշնակցական Սորհրդի, երբեմն էլ դրա և Բայխստագի հետ: Այսպէս՝ եթէ թշնամին յանկարծակի յարձակում է գործել Գերմանիայի վրայ (ծովից կամ ցամաքից)—այդ միևնոյնն է), կայսրը, առանց հաւանութիւն հայցելու այս կամ այն մարմնից, պարտաւոր է հաւանութիւն հայցելու այս կամ այն մարմնից, նախադրեալ թշնամուն յայտարարած պատերազմն ընդունել, նախադրեալ թշնամուն անմիջապէս պատասխանել: Իսկ եթէ Կայսրն է պատերազմ յայտարարում, խաղաղութիւն կնքում, դաշնագիր կապում ուրիշ պետութիւնների հետ, պարտաւոր է խնդրել համաձայնութիւն Դաշնակցական Սորհրդից: Այդ էլ դեռ քիչ է. կայսրի և Բունդէս-րաթի համաձայնութիւնից յետոյ՝ անհրաժեշտ է նաև Բայխստագի հաստատութիւնը, եթէ ոչ այդ դաշնագրերը չեն ունենայ օրէնքի ոյժ: Գերմանական սահմանադրութեան 12-դ յօդուածն ասում է.

Գերմանական սահմանադրութեան 12-դ յօդուածն ասում է. «Կայսրը հրաւիրում, բաց է անում, յետաձգում և փակում է Դաշնակցական Սորհուրդն ու Բայխստագը»:

Ամենակարևոր պաշտօնը գերմանական Դաշնակցութեան մէջ կանցլէրի պաշտօնն է: Նա հանդիսանում է և իբր մինիստր-նախագահ, որ անազին նշանակութիւն ունի Գերմանիայի նման մի ղուալիտատ-կան (ոչ-պարլամէնտարիստական) երկրում, և իբր Դաշնակցական խորհրդի նախագահ ու Պրուսիայի ներկայացուցիչ նրանում: Այդ կանցլէրին էլ «նշանակում է կայսրը» (Սահմանադրութեան 15-դ յօդուածը), —Դաշնակցական խորհրդում երբ որ և է հարց ընդունւում է, այդ հարցը տարւում է Բայխստագ քննելու և ընդունւելու, միայն Բայխստագին ներկայացւում է հարցը կայսրի անունից (յօդ. 16), որին և պատկանում է իրաւունք ձևակերպելու և յայտարարելու կայսերական օրէնքները և հսկելու նրանց ճշգրիտ գործադրութեան վրայ, միայն այդ հրատարակութիւնը լինելու է կայսրութեան (ոչ կայսրի) անունով և, օրինական լինելու հատար, անպատճառ պիտի կրէ կանցլէրի ստորագրութիւնը (յօդ. 17), որը զբանով իսկ իր վրայ է անում պատասխանատուութիւնը: Կայսրն է նշանակում և արձակում կայսրութեան պաշտօնեաներին (յօդ. 18). «Դաշնակցութեան անդամ այն պետութիւնները, որոնք չեն կատարում իրանց պարտականութիւնները, որոշուած սահմանադրութիւնով,—նրանց կարող են ստիպել այդ բանն անելու էկզէկուցիայի միջոցով: Այդ էկզէկուցիան որոշում

ւոյթը կարող է տեղի ունենալ և շվէյցարական Պետութիւններէ Խորհրդում: Այդ երկու հաստատութիւններումն էլ ներկայացուցիչներէց մէկը կարող է պահպանողականների հետ միասին ձայն տալ, միւսն առաջադիմականների հետ:

Դաշնակցական Խորհրդի այդ պակասաւոր կողմը պարզ նշան է, որ Գերմանական Դաշնակցութիւնը իսկական դաշնակցութիւն չէ, այլ աւելի շուտ մի տեսակ միջին կազմ է իսկական Ֆէդէրացիայի և կոնֆէդէրացիայի միջև: Դրա պատճառն էլ յաղթական Պրուսիայի ուժի չափազանց մեծ տարբերութիւնն է միւս մանր աննշմարելի պետութիւնների հետ համեմատած: Փիղն ու ճանճը չեն կարող իսկական դաշնակիցներ լինել... Մի օր չէ՛ մի օր փիղը, այս կամ այն ձևով կը կլանէ ճանճին... Մեզ թւում է, որ մի այդպիսի ապագայ էլ սպասում է 25 պետութիւններից ամենամանրներին:

Դաշնակցական խորհուրդը հրաւիրում, բաց է անում և յետաձգում է կայսրը: Այդ մենք արդէն գիտենք: 1882 թւից մինչև օրս կայսրը երբէք չէ փակել Դաշնակցական Խորհուրդը. նա համարում է իբր մշտապէս բաց, իր զբաղմունքներն անընդհատ շարունակելիս: Նախագահի պաշտօնը խորհրդում պատկանում է Պրուսիայի աւագ ներկայացուցչին կամ կանցլէրին, որին նշանակում է կայսրը: Կանցլէրն իր մէջ միացնում է 3 խոշոր պաշտօն—Պրուսիայի աւագ ներկայացուցիչ Դաշնակցական խորհրդում, մինիստր-նախագահ կամ կանցլէր, ի հարկէ անպատասխանատու ժողովրդի ներկայացուցիչների առջև և պատասխանատու միայն կայսրի առջև, իբր դուալիստական պետութեան ներկայացուցիչ, և վերջապէս՝ նախագահ Դաշնակցական խորհրդի: Այդ 3 խոշոր պաշտօնները նրան դարձնում են պետութեան մէջ առաջին կարևոր անձնաւորութիւնը, յաճախ նոյն իսկ աւելի կարևոր, քան կայսրն ինքը:

Նախագահութիւնը կատարելու են Պրուսիայի ներկայացուցիչները կամ, եթէ որ և է պատճառով դրանք չը կարողացան, պէտք է կատարեն Բաւարիայի ներկայացուցիչները: Ի հարկէ կանցլէրը երբէք ուրիշին չէ յանձնում նախագահութիւնը, բացի պրուսացիներից:

Դաշնակցական խորհուրդն օրէնսդիր մարմին է, միայն անհրաժեշտ է նաև ըստ ստագի աշխատակցութիւնը: Սամանա-

դրութեան 7-րդ յօդուածն ասում է. «Դաշնակցական խորհուրդը վճիռներ է կայացնում. 1) Բայխստագին արևած առաջարկութիւնների և նրանում ընդունած վճիռների մասին. 2) կայսերական օրէնքները գործադրելու համար վարչական կարգադրութիւններ և հրահանգներ տալու մասին, եթէ որ այդ բաները որ և է ուրիշ կայսերական օրէնքով ուղղակի չեն որոշած. 3) այն պակասութիւնների կամ թերութիւնների մասին, որոնք երևան կը գան կայսերական օրէնքների գործադրութեան ժամանակ, կամ վերոյիշեալ կարգադրութիւնների ու հրահանգների դէպքում»:

«Խորհրդի ամեն մի անդամը, շարունակում է նոյն յօդուածը, լիազօր է անելու առաջարկներ և զեկուցանելու, և նախագահը պարտաւոր է նրանց դնել քննութեան: Վճիռները, բացի 5-րդ, 37-րդ և 78-րդ յօդուածներում նախատեսած դէպքերից, կայացում են ձայների հասարակ մեծամասնութիւնով: Չը ներկայացւում են ձայների հասարակ մեծամասնութիւնով: Չայնեկայացւած կամ առանց հրահանգի ձայները չեն հաշւում: Չայնեկայացւած կամ առանց դէպքում, նախագահի ձայնը վճող դեր է ընդհանրութեան դէպքում, զարձնում է անհրաժեշտ Պրուսիայի յաղթանակը, որովհետև նախագահը նրանից է:

«Դաշնակցական խորհուրդը կազմում է իր միջից մշտական կօմիտէտներ հետևեալ գործերի համար. 1) բանակի և բերդերի, 2) կօմիտէտներ հետևեալ գործերի համար. 1) բանակի և բերդերի, 2) առևտրի և փոխանակութեան, 3) մաքսային գործերի և հարկերի, 4) առևտրի և փոխանակութեան, 5) երկաթուղիների, պօստի և հեռատրի, 6) արդարադատութեան. 7) հաշւատեսական մասի. (յօդ. 8):

Այդ կօմիտէտներից ամեն մէկի մէջ պէտք է ներկայացւած լինեն գոնէ գերմանական 4 թագաւորութիւնները, բացի նախագահութիւնից: Ամեն մի թագաւորութիւն չէ կարող ունենալ 1-ից աւելի ձայն նրանցում: Բանակին և բերդերին վերաբերող կօմիտէտում Բաւարիան ունի մշտական տեղ: Այս կօմիտէտի ֆնացած անդամները, ինչպէս և ծովային կօմիտէտինը, նշանակւում են կայսրից: Իսկ միւս կօմիտէտի անդամներն ընտրւում են խորհրդի մի սէսիայի ընթացքի համար. դուրս եկող անդամները կարող են վերընտրւել:

«Դաշնակցական խորհրդի ամեն մի անդամ իրաւունք ունի գնալու Բայխստագ. նրան պէտք է այնտեղ լսեն, եթէ ինքը ցանկայ, որպէս զի այդպիսով յայտնէ իր կառավարութեան հայեացքը»:

րան նշանակում է Կայսրը: Պրուսիան պալամէնտարիստական երկիր չէ, այդ պատճառով էլ Գերմանիան չէ կարող լինել պարլամէնտարիստական: Թէ Լոուէլը, թէ Ելլինէկը և թէ ուրիշ գրողներ այն կարծիքն են յատնում, որ Գերմանիայի պատմական և ներկայումս գոյութիւն ունեցող քաղաքական պայմանները թոյլ չեն տալիս պարլամէնտարիզմի ներկայութիւնն այդ երկրում *): Եւ շատ իրաւացի է այդ կարծիքը: Ամբողջ Գերմանիայի երկու հինգերորդը Պրուսիան է կազմում, իսկ նա մի իւնկէրական-բիւրօկրատական պետութիւն է, ցէնզուր ընտրութիւններով, յետադէմ ու ախտացեալ սահմանադրութիւնով, դուալիստական կազմով, առանց քաղաքական պատասխանատուութեան: Ելլինէկէս կարող է Պրուսիան, ուժեղ, կլանող ու ազդեցիկ Պրուսիան թոյլատրել, որ Գերմանիայում պարլամէնտարիզմ գոյութիւն ունենայ: Պարլամէնտարիզմը շատ շուտ կը մտնի Գերմանական դաշնակցական կազմի մէջ, եթէ թափանցէ Պրուսիա:

Գերմանական սահմանադրութեան 32-րդ յօդուածն ստում է. «Րայխստագի անդամներն, իբր այդպիսիներ, չեն ստանում ոչ մի ոտճիկ կամ վարձատրութիւն»:

Մացնելով այդ յօդուածը, Երկաթէ Կանցլէր Բիսմարկն ունեցել է իր երկու որոշ և տիկներ և ձգտումները. առաջին՝ չը թոյլատրել ընտրելու Րայխստագի անդամ քաղաքականութիւնն իրանց համար արհեստ դարձրած և դրանով ապրող անձերին, երկրորդ՝ խանգարել աղքատ, սօցիալիստական ու պրօլետարական խաւերի ընտրութիւնը: Սակայն այդ նպատակները չարդարացան, որովհետև օրէնքն արգելում է վարձատրութիւն կամ ոտճիկ ստանալ պետութիւններից ու համայնքներից, այն ինչ այժմ արժանաւոր, ըայց ապրուստի միջոց չունեցող պատգամաւորներին օգնում են քաղաքական կուսակցութիւնները, մասնաւոր ֆէրրայնները կամ ընկերակցութիւնները և այլն:

Գերմանական դաշնակցական խորհրդի կազմը թոյլ չէ տալիս ընդունելու Գերմանիան իբր մի նօրմալ դաշնակցական պետութիւն: Դաշնակցական պետութեան բոլոր դաշնակից անդամները դիտւում են իբր իրար հաւասար, թէ և նրանք կարող են

*) Лойэль—„Правительства и полит. партии въ госуд. западной Европы“—Երես 287-290.—Еллинекъ—ibid—Երես 471

լինել ընչապէս խիստ տարբեր իրարից: Այն ինչ Գերմանիայում մենք տեսնում ենք անհաւասարութիւն համարեալ բոլոր հարցերում: «Եւ չէր էլ կարելի ֆէդէրացլա կազմել իսկապէս հաւասար պայմաններով՝ 25 պետութիւնների միջև, որոնցից մէկին պատկանում է ֆէդէրացիայի ամբողջ ազգարնակութեան ^{3/5} մասը, իսկ մնացած 24 պետութիւններին պատկանում է միայն ^{2/5}-ը: Այդ պայմաններում դաշնակցական սահմանադրութիւնն անհրաժեշտօպայմաններում դաշնակցական սահմանադրութիւնն անհրաժեշտօրէն պիտի նմանի մի դաշնագրի, որը կնքւած է առիւծի և աղւէսի կամ, աւելի ստոյգ է ասել, առիւծի, կէս տասնեակ աղւէսների և երկու տասնեակ մկնբրի միջև» *):

Այդ երևոյթը տեղի է տալիս շատերին ասելու, որ Գերմանիան դաշնակցական մի պետութիւն չէ, այլ պետութիւնների դաշնակցութիւն է:

Սակայն դրա դէմ է խօսում երկրի սահմանադրութեան հետևեալ կէտը,—«Դաշնակցութեան տէրրիտօրիայի սահմաններում կայսրութիւնը գործադրում է օրէնսդրութեան իրաւունք՝ համակայսրութիւնը գործադրում է օրէնսդրութեան և այնպիսի ձեւայն այս սահմանադրութեան բովանդակութեան և այնպիսի ձեւով, որ կայսերական օրէնքներն առաւելութիւն կամ նախաւով, որ կայսերական օրէնքներն առաւելութիւն կամ նախաւորէն պիտենք, որ այդպէս չեն ընթանում գործերը պետութիւնները ունեն տեղական օրէնքներից: Կայսերական օրէնքպատուութիւն ունեն տեղական օրէնքներից: Կայսերական օրէնքները պարտադիր ոյժ են ձեռք բերում հրատարակելով կայսրութեան կողմից (Reichsgesetzblatt-ում) (յօդ. 2): Այն ինչ մենք րութեան կողմից (Reichsgesetzblatt-ում) (յօդ. 2): Այն ինչ մենք պարտադիր են դառնում պետութիւնների դաշնակցութեան մէջ: Նրանց ներկայացուցչական ժողովում կայացրած վճիռները պարտադիր են դառնում պետութիւնների համար միայն այն ժամանակ, երբ ամեն մի պետութիւններին համար միայն այն ժամանակ, երբ ամեն մի պետութիւն առանձնապէս հրատարակում է այդ օրէնքն իր երկրի ներսում, իր ազգարնակութեան համար:

Սահմանադրութեան 3-րդ յօդուածը պարզաբար ստում է, որ դաշնակից բոլոր անդամ-պետութիւնների բնակիչները միև դաշնակից-անդամ պետութեան մէջ զիտւում են իբր այդ երկրի, այդ անդամի բնակիչ, նրա քաղաքացի, նրա հպատակ և վայելում են այն բոլոր իրաւունքները, որ ունեն քաղաքացիները:

Այս նշաններն էլ բաւական են՝ ցոյց տալու համար, որ Գերմանիան մի դաշնակցական պետութիւն է, բաղկացած 25 ան-

*) Лойэль—ibid Երես 247

դամներից, թէև շատ հարցերում նրա դաշնակցութիւնը հիւսւած է անհաւասարութիւնից:

Գերմանիան մի պետութիւն է, որովհետև նրա սահմանադրութեան 78-դ յօդւածն, ինչպէս տեսանք, ասում է. «Սահմանադրութեան փոփոխութիւնները տեղի են ունենում օրէնսդրական կարգով»,—այսինքն Դաշնակցական խորհրդի և Բայխստագի միջոցով: Միակ ասարեբութիւնը միւս խոշոր դաշնակցութիւններից, կայանում է նրանում, որ գերմանական Դաշնակցական խորհրդում եթէ 14 ձայն դէմ եղան արւած փոփոխութեանը, նա համարւում է չընդունւած, եթէ նոյն իսկ մնացած 44 ձայնը պնդեն միաբերան:

Սահմանագրութեան փոփոխութեան ճանապարհով կարելի է մասերի և կենտրոնի իրաւասութեան սահմաններն այնքան փոփոխել, որ Ֆէդէրացիայի կեղևը մնայ, իսկ ներսում կենտրոնական իշխանութիւնը մօտենայ մի ունիաար պետութեան:

Ուրեմն՝ Դաշնակցական կենտրոնական իշխանութիւնը միշտ հնարաւորութիւն ունի ընդլայննելու իր իրաւասութիւնները, որոնք, առանց այն էլ, արդէն խիստ ընդարձակ են: Տրամաբանօրէն չը կայ ոչ մի արգելք կարծելու, թէ կենտրոնական իշխանութիւնը մի օր կարող է հասնել ունիտարիզմի: Միակ արգելքը Դաշնակցական խորհրդի կազմն է: Նա բազկացած է դաշնակից պետութիւնների ներկայացուցիչներից. իսկ այդ պետութիւնները գժւար թէ ցանկանան կամքով ձուլել, օրինակ, Պրուսիայի մէջ, կազմել նրա մի բաղադրիչ մասը: Մանր պետութիւնները, ցանկալով պահպանել իրանց իրաւասութեան սահմանները, միշտ կարող են միանալ, 14 ձայն կազմել դաշնակցական խորհրդում և տապալել այն բոլոր առաջարկները, որոնք կարող են ընդլայնել կենտրոնի իրաւասութիւնն ի հաշիւ դաշնակից անդամների իրաւասութեան:

Դաշնակից անդամների իրաւասութիւնն էլ, սակայն, չնչին չէ. այդ իրաւասութիւնն էլ բաւական ընդարձակ է, այնպէս որ իսկոյն երևում է, որ դաշնակից պետութիւնները ղեռ ևս պետութիւններ են, թէև սահմանափակ գերիշխանութիւնով. ղեռ ևս նըքանք չեն դառնել Գերմանիայի նահանգները, նրա, այսպէս ասած, վարչական ստորաբաժանումները:

Դաշնակից մասերի իրաւասութեան տակ են նրանցից իւ-

րաքանչիւրի սեփական կամ ներքին գործերը. իրանց պետական կազմը, ընտրական իրաւունքի եղանակը, չափն ու սահմանը, դահաժառանգութեան եղանակը, պետական ծառայութեան ամբողջ կազմը, ներքին կամ տեղական ինքնավարութեան կազմակերպութիւնը և նրա սահմանները, ժողովրդի կրթութեան գործը, ներքին ուղղակի հարկերը և այլն, և այլն:

Մեզ համար արդէն պարզ է, թէ ինչ հարցերի մէջ իրաւատէր է դաշնակցական իշխանութիւնը. և ինչ հարցերի մէջ դաշնակից մասերը:

Աւելացնենք այն, որ եթէ որ և է դաշնակից պետութիւն չը բարենաճի հպատակելի դաշնակցական մարմինների որոշումներին և օրէնքներին, կենտրոնական իշխանութիւնը չունի ոչ մի սեփական միջոց իր ձեռքում ըմբոստին հպատակեցնելու. նա չունի սեփական զօրք, սեփական պաշտօնեանների բանակ, ինչպէս Միացեալ-Նահանգներում. նրա բոլոր հրամանները կատարում են դաշնակից մասերի պաշտօնեանները և միայն վերահսկողութեան համար կենտրոնական իշխանութիւնն ունի մի քանի տասութեան նեակ ըէվիզօրներ կամ վերաքննիչներ: Անհնազանդութեան նեակ ըէվիզօրներ կամ միայն մի բան՝ էկզէկուցիա: Դաշնակցադէպքում նրան մնում է միայն մի բան՝ էկզէկուցիա: Դաշնակցական խորհուրդը նախ դիմում է անհնազանդ պետութեանը, յորդորում, որ հնազանդի օրինական կարգադրութիւններին. եթէ չը լսեց, այն ժամանակ յանձնւում է կայսրին էկզէկուցիան գործադրելու: Կայսրը, որ միշտ լինելու է Պրուսիայի թագաւորը, պրուսական բանակով կը մտնի անհնազանդ երկիրը և կը սահիղէ կառարել կամ յարգել եղած որոշումը:

Ի հարկէ անկարելի է երևակայել որ և է էկզէկուցիա Պրուսիայի վերաբերմամբ, որովհետև միայնակ նա աւելի մեծ է, քան սիայի վերաբերմամբ, որովհետև միասին վերցրած: Անհնար է և՛ միւս բոլոր 24 դաշնակիցները միասին վերցրած: Անհնար է և՛ բեակակայել նոյնպէս որևէ դաշնակից պետութիւն, որն այնքան բեակակայել չի մար լինէր, որ հրաւիրէր իր վրայ դաշնակցական իշխանութեան, կայսրի, ուրեմն և Պրուսիայի բարկութեան շանթերը: Եւ անա 36-37 տարւայ փորձը ցոյց է տալիս, որ էկզէկուցիայի ոչ մի փորձ չէ տեղի ունեցել և տեղի ունենալու էլ հաւանակաւ նութիւն չը կայ:

Շվեյցարիա: Այս երկիրը 22 մանր պետութիւններից կամ կանտօններից բազկացած դաշնակցական մի փոքրիկ հանրա-

պետութիւն է, որ իր քաղաքական կազմի սկզբնական ձևի հիմքը դրել է 1315 թւին, Բրուննէնում կազմւած գաշնագրով՝ Շըվից, Ուրբի և Ունտէրվալդէն լեռնական փոքրիկ կանտոնների միջև:

Մեզ արգէն յայտնի է, որ 1315-ից մինչև 1848 թիւը Շվեյցարիան պետութիւնների մի գաշնակցութիւն էր, որի մէջ «կանտոնային սուվրէնիտէն էր առաջնակարգ տեղ ընունում: 1848-ից յետոյ, մասնաւանդ 1874-ին կատարւած սահմանադրութեան վերաքննութիւնից յետոյ, կանտոնների գերիշխանութեանը փոխարինեց գաշնակցական գերիշխանութիւնը» *), այսինքն գարձաւ խակական ֆէդէրատիվ մի պետութիւն:

Շվեյցարական բոլոր կանտոնները հանրապետութիւններ են, թէև նրանց մէջ ներքին կարգերն ու օրէնքներն իրարից բաւական տարբեր են:

Կանտոնների գլխին բարձրանում է գաշնակցական կենտրոնական իշխանութիւնը, երկրի միակ օրէնսդիր գաշնակցական հիմնարկութիւնը, որ կոչւում է Գաշնակցական Ժողով (Assemblée fédérale), որը բաղկացած է երկու տարբեր մասերից—ա) Ազգային խորհրդից և բ) Պետութիւնների խորհրդից:

Գրանցից առաջինը նման է գերմանական Բայխտագին, Ֆրանսիական շամբրին կամ անգլիական ստորին պարլամէնտին: Նա ամբողջ Շվեյցարիայի միութեան, նրա ամբողջականութեան նշանն է: Նա է, որ իր մէջ իրականացնում է ամբողջ երկրում տիրող կենտրոնաձիգ տէնզէնցը:

«Ազգային խորհուրդը, ասում է երկրի Սահմանադրութիւնը, բաղկացած է շվեյցարական ժողովրդի պատգամաւորներից, որոնք ընտրւում են 20,000 մարդուց մի հոգի՝ հաշւած ամբողջ ազգաբնակչութիւնը: 10,000-ից աւելի եղած մնացորդները համարւում են 20,000-ի փոխարէն» (յօդւած 73): Օրինակ, Շվիցի կանտոնն ունի 50,500-ի չափ ազգաբնակչութիւն: Գա կազմում է 2 X 20,000 + 10,500. ուրեմն՝ նա ուղարկելու է Ազգային խորհուրդը 3 պատգամաւոր. կամ Սէն-Գալլի կանտոնն ունի 228,160 բնակիչ. դա կազմում է 11, X 20,000 + 8160: Պարզ է ուրեմն, որ Սէն-Գալլն ուղարկելու է միայն 11 պատգամաւոր, իսկ նրա 8,160 ձայնը, որ տաս հազարից պակաս է, կորչում է:

*) L. Marsauche «La confédération helvétique», page 9.

Ընտրութիւնները լիապէս քառանգամ են—ընդհանուր, հասար, ուղղակի և գաղտնի: Ընտրելու և ընտրելու իրաւունք ունեն բոլոր 20 տարեկան և աւելի հասակաւոր շվեյցարացի այր մարդիկ, որոնք զրկւած չեն քաղաքացիական իրաւունքներից գատական ճանապարհով:

Ազգային խորհուրդն ընտրւում է 3 տարով և վերանորոգւում է ամբողջապէս: Նրա անդամներն ստանում են որոշ վարձատրութիւն գաշնակցական գանձարանից: Հոգևորականները չեն կարող ընտրել անգամ Ազգային խորհրդի (յօդ, 75) *):

Գաշնակցական կենտրոնական երկրորդ օրէնսդիր ժողովը Պետութիւնների խորհուրդն է:

«Պետութիւնների խորհուրդը բաղկացած է կանտոնների 44 պատգամաւորներից: Ամեն մի կանտոն տալիս է 2 պատգամաւոր. բաժանւած կանտոններում ամեն մի կէս-պետութիւն ընտրւում է մի պատգամաւոր» (յօդ. 80):

Ընտրութիւնները կատարւում են կամ սովորական քառանգամ եղանակով (մի քանի կանտոններում) կամ կանտոնական օրէնսդիր մարմիններն են կատարում պատգամաւորների ընտրութիւնը (երկաստիճան ընտրութիւն, որ տեղի ունի կանտոններից մի քանիսում): Պետութիւնների խորհրդի անդամները մի քանի կանտոններում ընտրւում են մի տարով, մի քանիսում 2 տարով, իսկ միւսներում 3 տարով (յօդ. 82):

Այս երկրորդ պարլամէնտը, որ համապատասխանում է Միւսյա երկրորդ պարլամէնտին, Գերմանիայի Գաշնակցական ացեալ-Նահանգների Սէնատին, Գերմանիայի Գաշնակցական խորհրդին և այլն, աւելի հասակով, աւագագոյն է, քան Ազգային խորհուրդը: 1803 թւից մինչև 1848-ը, երբ Զւիցէրիան զեռ ևս խորհուրդը:

*) Մենք առհասարակ երկար կանգ չենք առնում գաշնակցական պետութիւններից և ոչ մէկի ներքին կազմի մանրամասնութիւնների վրայ, որովհետև մեր նպատակն այդ չէ: Նկարագրելով թոուցիկ կերպով նրանց կազմը, մենք ցանկանում ենք ընթերցողին հնարաւորութիւն տալ, որպէսզի այնուհետև հնարաւելու կենտրոնական հիմնարկութիւնների մասին, որպէսզի այնուհետև հնարաւոր լինի խօսել գաշնակցական կենտրոնական իշխանութեան և կանտոնական ընտրութիւնների իրաւասութիւնների և նրանց սահմանների մասին:—Յատիշխանութիւնների իրաւասութիւնների և նրանց յանձնարարում ենք հայ ընթերցող-կապէս Շվեյցարիայի վերաբերմամբ մենք յանձնարարում ենք հայ ընթերցող-ներին «Յառաջ»-ի զբաղարանի № 19 հրատարակութիւնը—Ալ. Դիւնան «Ժողովրդական օրէնսդրութիւնը գաշնակցական Զւիցէրիայում»:

պետութիւններէ մի դաշնակցութիւն էր, այդ ժողովը, ճիշտ նոյն սկզբունքներով ընտրւած (ամեն մի կանտօնից 2 հոգի), գոյութիւն ունէր: Այն ժամանակ նա միակ կենտրոնական ժողովն էր Զւիցէրական կօնֆէդէրացիայի մէջ: Նրա անունն էր «գլխէտ ֆէդէրալ»: Նրա որոշումներն անպայման պարտադիր չէին կանտօնների համար, այլ կամաւոր:

Այսօր նա կազմում է զւիցէրական ֆէդէրատիվ մի և անբաժան պետութեան կենտրոնական օրէնսդիր մարմնի մի մասը: Ազգային խորհուրդը ներկայացնում է զւիցէրական ամբողջութեան, նրա կենտրոնացման, նրա մի պետութիւն լինելու սկզբունքի արտայայտիչը, իսկ պետութիւնների խորհուրդը հանդիսանում է զւիցէրական ապակենտրոնացման, կանտօնների գերիշխանութեան, կենտրոնախոյս ուժի մարմնացումը:

Նա մնացորդ է հնութեան: Ուրին ունի 17,000 ընակիչ, Շվիցը 52,000, Ունտէրվալդէնը 23,000, իսկ Բէրնը 550,000-ի չափ, Յիւրիխը մօտ 350,000 Լօդանի կամ Վօ կանտօնը մօտ 260,000 և այդ բոլորն էլ, չը նայելով իրանց մեծութեան ու ազգաբնիկութեան թւի ահագին տարբերութիւններին, տալիս են հաւասար թւով պատգամաւորներ (2-ական), որովհետև դիտւում են իբր անկախ պետութիւններ, որ իրար հետ մտել են դաշնակցութեան, իբր հաւասար քաղաքական մեծութիւններ, իբր քաղաքական միութիւններ:

Բոլոր մանր կանտօնները լեռնական են, կաթօլիկ դաւանութեան և իրատ պահպանողական, պինդ կպած կանտօնական ազատութիւններին և դաշնակցական սկզբունքին: Նրանք իրանց գերիշխանութիւնը կորցնելուց սաստիկ վախենում են, դրա համար էլ խիստ կողմնակից են պետութիւնների խորհրդի պահպանման այնպէս, ինչպէս նա կայ այսօր: Իսկ խոշոր կանտօնները բոլորն էլ բողոքական են և աւելի ցէնտրալիզմի կողմնակից, միայն ոչ բողոքովին ունիտարիզմի: Մրանց կողմից յաճախ լսւում են բողոքներ պետութիւնների խորհրդի ներկայ կազմի սկզբունքի դէմ:

Օրինագծերը երբեմն քննութեան են դրւում նախ մի ժողովում և ապա երկրորդում, երբեմն էլ ընդհակառակը, — նախ երկրորդում և ապա առաջինում: Ազգային խորհրդում քննւած օրինագիծը, պատճառարանւած կարծիքներով և բանաձևերով, անցնում է պետութիւնների խորհուրդը, այնտեղ էլ քննութեան են

թարկւում: Եթէ համաձայնութիւն կայացաւ, նա դառնում է օրէնք և հրատարակւում գործադրութեան համար: Իսկ եթէ համաձայնութիւն չը կայացաւ, օրինագիծը նորից վերադառնում է միւս ժողովին, նորից քննւում, նորից գնում նախկին ժողովը և այլն, մինչև որ համաձայնութիւնը հնարաւոր կը դառնայ: Իսկ եթէ համաձայնութիւնն անհնար եղաւ, նախագիծը յետաձգւում է աւելի բարեյաջող ժամանակի:

Պէտք է ասել, որ 44 մարդուց բաղկացած պետութիւնների խորհուրդն առհասարակ աւելի զիջող է, քան Ազգային խորհուրդը:

Ազգային և պետութիւնների խորհուրդները երեք տարին մի անգամ միանալով, կազմում են դաշնակցական ժողով (Assemblée fédérale), որն ընտրւում է դաշնակցական խորհուրդի, դաշնակցական դատարանի, դաշնակցական դիւան (chancelier) և պատերազմի կան դատարանի, դաշնակցական դիւանի համար ընտրւում է մի ընդհանրական, զւիցէրական բանակի համար ընտրւում է մի ընդհանուր հրամանատար: Այդ ժողովն է, որ դաշնակցական կենտրոնական մարմինների մէջ ծագած կօնֆլիկտները կամ ընդհարումները քննում է, երբ նրանք վերաբերում են իրաւասութիւնների հարցին:

Բնականաբար այս ժողովի գոյութիւնը հանդիսանում է իբր մեղմացուցիչ մի երևոյթ պետութիւնների խորհրդի անհաւասարութեան սկզբունքին, որովհետև Ազգային խորհրդի մօտ 150 անդամները և պետութիւնների խորհրդի 44 անդամները միանալով, կազմում են մի ժողով, որի մէջ ժողովրդի հաւասար և ուղղակի ձայնաւժնով ընտրւած 150 հոգին իսկապէս տիրող դեր են կատարում:

Աւելորդ ենք համարում այստեղ նորից կրկնել այն բոլոր հարցերը, որոնք, համաձայն 1848-ի սահմանադրութեան, տրւած են դաշնակցական իշխանութեան իրաւասութեանը: Ասենք միայն մի քանի խօսք դաշնակցական խորհրդի մասին:

«Մինչև 1848 թւականը, զւիցէրական կօնֆէդէրացիան չուէր Վառավարութիւն կամ մի գործադիր իշխանութիւն» *): 1848-ի նէր Վառավարութիւն կամ մի գործադիր իշխանութիւն, որի անունն է գաշնակցական խորհուրդ (Conseil fédéral):

Նա բաղկացած է 7 անդամից, որոնք ընտրւում են գաշնակ-

*) Marsauche—ibid. page 23.

պատգամաւոր է ընկնում, դա էլ տարբեր է զանազան կանտոններում: Օրէլլին հաշուել է, որ միջին թւով 994 մարդու վրայ մի պատգամաւոր է գալիս *):

Օրէնսդիր ժողովը համարեա բոլոր կանտոններում կոչւում է Մեծ խորհուրդ (Grosse Rath կամ Grand Conseil), իսկ գործադիր մարմինը՝ Փոքր խորհուրդ կամ Կառավարական խորհուրդ (Regierungsrath):

Օրէնսդիր ժողովը կանտոններում վայելում է շատ աւելի լայն իրաւունքներ, քան որ և է պետութեան պարլամէնտ: Նա ոչ միայն օրէնսդիր է, այլ և խիստ վերահսկիչ գործադիր մարմնի, այլ և պաշտօնեաներ ընտրող և այլն:

Գործադիր իշխանութեան անդամներն առհասարակ լեռնային կանտոններում ընտրուում են ուղղակի ժողովրդի ձեռքով. այդպէս է 8 կանտոնում: Իսկ միւս կանտոններում օրէնսդիր մարմինն է ընտրում նրանց, այդ պատճառով էլ նրանք կոչւում են Փոքր խորհուրդ և կազմում են օրէնսդիր մարմնի մի կօմիսսիան:

Համարեա բոլոր կանտոններում գործադիր մարմինը չունի աշխատանքի բաժանում. ամբողջ կօմիսսիան պատասխանատու է օրէնսդիր մարմնի առջև իր բոլոր անդամների բոլոր կարգադրութիւնների համար: Միայն վերջերս Բէրնի կանտոնում, ուր գործադիր իշխանութիւնը յանձնւած է 9 հոգուց բաղկացած մի կօմիտէի, բաժանւած են ֆունկցիաները. այդ 9 հոգին, թէև կըրկին պատասխանատու են օրէնսդիր մարմնի առջև in corpore, իրանց մէջ, հակառակ ընդհանուր սովորութեան, աշխատանքը բաժանել են 3 մասի, կազմելով 3 կօմիսսա 3-ական անդամներից **):

Կրկնում ենք, մեր նպատակը չէ տալ շվեյցարական դաշնակցութեան և կանտոնների կազմը. մենք մի քանի տողով ուր-ւազմեցինք այդ կազմի խոշոր կէտերը, որպէս զի պարզենք նրանց իրաւասութեան չափերն ու սահմանները:

Երկրի սահմանադրութեան 3-րդ յօդւածն այսպէս է ընտրուում կանտոնների և դաշնակցութեան իրաւասութեան սահմանները. «Կանտոնները գերիշխան են այնքան, որքան որ նրանց

*) Orelli—«Das Staatsrecht der schweizer. Eidg».
**) В. Вильсонъ—„Гос.“ стр. 276. պարզաբո՛ 649 և 650

գերիշխանութիւնը չէ սահմանափակւած դաշնակցական Սահմանադրութիւնով, և իբրև գերիշխան, նրանք գործադրում են այն բոլոր իրաւունքները, որոնք չեն յատկացւած դաշնակցական իշխանութեանը»:

Ինչպէս մենք տեսանք, Միացեալ-Նահանգներում դաշնակցական կառավարութեան բոլոր որոշումներն ու հրամանները գործադրելու համար գոյութիւն ունի մի յատուկ մարմին—պաշտօնեաների մի անազլին ցանց, որ տարածւած է ամբողջ երկրում: Այդ պաշտօնեաները հպատակւում են կենտրոնին—Վաշինգտօնի կառավարութեանը. նրանք ոչ մի առընչութիւն չունեն նահանգների տեղական գերիշխան կառավարութիւնների հետ: Այդպէս չէ Զւելցերիայում: Դաշնակցական իշխանութեան որոշումների գործադրութիւնը յանձնւած է կանտոնների իշխանութիւններին. նրանք պարտաւոր են գործադրել կենտրոնական իշխանութեան բոլոր որոշումները: Եթէ մի կանտոն ըմբոստանում է, իսկոյն դաշնակցական կառավարութիւնն ուղարկում է մի յատուկ կօմիսար, հարկ եղած դէպքում հետն ուղարկում է նաև որոշ քանակութեամբ զօրք այս կամ այն կանտոնից: Կօմիսարը գնում, քննում է զորքը, ստիպում է հնազանդելու:

Իս է էկզէկուցիա կոչւած գործողութիւնը: Նոյն իրաւունքը մենք տեսանք նաև Գերմանիայում:

Դաշնակցական կառավարութեան իրաւասութեան տակ եղած բոլոր նիւթերը մենք արդէն հաշուել ենք, աւելորդ է այստեղ կրկնել: Մի առ մի թւել կանտոնի իրաւունքները՝ չափազանց երկար և ձանձրալի կը լինի: Ընդհանուր կերպով կարելի է ասել, որ դաշնակցական Սահմանադրութեան մէջ անուն-անուն յիշւած բոլոր իրաւորնքները, որ տրւած են կենտրոնին, դուրս հանելով, մնացած բոլոր հարցերն ու երեոյթները պատկանում են կանտոնների վարչութեանը, նրանց իրաւասութեանը, և զրանցում կանտոնն անկօնարօլ է, բացարձակ գերիշխան:

Բայց կան բազմաթիւ հարցեր, որոնց մէջ իրար են խառնւում Դաշնակցական և կանտոնական գերիշխանութիւնները:

«Կանտոնները գերիշխան են այն չափով, որ նրանց գերիշխանութիւնը չէ սահմանափակւած դաշնակցական Սահմանադրութիւնով, և իբր գերիշխան, կանտոնները գործադրում են այն բո-

լոր իրաւունքները, որոնք չեն յանձնւած դաշնակցական իշխանութեանը» (Սահմանադրութեան 3-րդ յօդ.):

Սակայն Շվեյցարիայում երկու գերիշխանութիւնների սահմաններն այնպիսի ճշտութիւնով չեն որոշւած, որպէս Միացեալ Նահանգներում: Երկրի փոքրութիւնը, ինչպէս ակնարկուած է Մարսոշը, թոյլ է տալիս այնտեղ այդ երկու գերիշխանութիւններին իրար խառնելու իրանց սահմանները և յաճախ դրանով աւելի ևս նպաստելու ազգաբնակչութեան բարօրութեանը. մի բան, որ խոշոր պետութիւնների մէջ անհնար է *):

Բացի պատից և հեռագրից, բացի արտաքին գործերից, գլխաւորը, ըստ տեսակի չափերից կամ փոխանակական միջոցներից և բացի մաքսերից, Զւիցէրիայում դաշնակցական իշխանութիւնը մնացած բոլոր խնդիրներում գերիշխանութիւնը բաժանում է կանտոնական իշխանութեան հետ, այսինքն գերիշխանութեան մի մասը — աւելի ընդհանուր, սկզբունքային կամ վերին մասերը — պատկանում է դաշնակցական կենտրոնական իշխանութեանը, իսկ գործնական, գործադրական, տեղական մասը կանտոնների իշխանութիւններին: Նոյն իսկ այն խնդիրներում, որոնք լիապէս վերապահւած են դաշնակցական իշխանութեանը, վերջինս գործադրութիւնը և գործադրական բոլոր մանրամասնութիւնները թողնում է կանտոնների իշխանութիւններին, միայն իր բարձրագոյն հսկողութեան տակ: Այստեղ դաշնակցական իշխանութիւնը, ինչպէս տեսանք, չունի իր սեփական պաշտօնեաների բանակը, որոնց միջոցով իրականացնէր իր որոշումները: Բոլոր կարգադրութիւններն ու գործադրելու խնդիրները յանձնւում են կանտոնների վարչութիւններին:

Այսպիսով գերիշխանութիւնը Զւիցէրիայում ունի երեք բաւական որոշ բաժանումներ. 1) դաշնակցական իշխանութեան գերիշխանութիւն, 2) դաշնակցական և կանտոնական իշխանութիւնների խառը գերիշխանութիւն և 3) զուտ կանտոնական իշխանութեան գերիշխանութիւն:

Այս, կանտոնների իշխանութիւններն էլ ունեն գերիշխանութեան յատուկ ասպարէզներ: Այսպէս՝ նրանք «բացարձակ գերիշխան են հետեւեալ հարցերում. քաղաքացիական իրաւունքի

*) L. Marsausche—«La confédération helvétique», page 8

այն մասը, որ վերաբերում է մարդկանց և անշարժ կաւածներին, պատժական կամ քրէական իրաւունքը, քաղաքացիական և քրէական արդարադատութեան վարչութիւնը, հետը հաշւած դատարանների կազմակերպումը, տեղական և կանտոնային օտարիկանութիւնը, համայնքների և բուրժուազիայի կազմակերպութիւնը, դպրոցական կազմակերպութիւնն իր բոլոր աստիճաններում (բացի 27-րդ յօդւածում յիշւած ընդհանուր սկզբունքներից), վարկի կազմակերպման վերաբերող միջոցները և այլն» *):

Որպէս զի զւիցէրական տաղանդաւոր գրողի այդ խօսքերը մութ չը մնան, առաջ բերենք Սահմանադրութեան 27-րդ յօդւածը, որ վերաբերում է կրթական գործին: «Դաշնակցութեանն է պատկանում իրաւունք բաց անելու, բացի եղած պօլիտէխնիկումը, մի դաշնակցական համալսարան և այլ բարձրագոյն հաստատութիւններ կամ նպաստ տալ այդպիսի հաստատութիւնների: Կանտոնները պարտաւոր են հոգ տանել սկզբնական կրթութեան վրայ, որը պէտք է բաւական լինի և ձրի՝ հասարակական զբոսըրոցներում: Հասարակական դպրոցները կարող են յաճախել բոլոր դաւանութիւններին պատկանող անձերն՝ այն պայմանով, որ իր նրանց խղճի և դաւանութեան ազատութիւնը ոչ ոք ոչ մի կերպ չի ճնշի: Դաշնակցութիւնը ձեռք կառնէ անհրաժեշտ միջոցներ այն կանտոնների դէմ, որոնք այս պահանջներին բաւարարութիւն չեն տայ»:

Այդ յօդւածից պարզ երևում է, որ դաշնակցութեանը վերապահւած է միայն բարձրագոյն դպրոցներ բանալը կամ այդպիսիներին նպաստելը, իսկ կանտոններին տրւած է բացառիկ իրաւունքներ տարրական և միջնակարգ դպրոցների վերաբերմամբ: Բարձրագոյն դպրոցների հարցում գերիշխանութիւնը բաժանւում է կանտոնների և դաշնակցութեան միջև. երկու իշխանութիւններն էլ իրաւունք ունեն բարձրագոյն դպրոցներ բանալու: Այսպէս՝ Ցիւրիխի պօլիտէխնիկումը դաշնակցական իշխանութեան իրաւասութեան տակ է, իսկ Փընէվի, Լօզանի, նոյն Ցիւրիխի, Բէլնի համալսարանները կանտոններին են:

Գերիշխանութեան բաժանման երևոյթը մենք կարող ենք տեսնել և ուրիշ բազմաթիւ ասպարէզներում: Բայց կանտոններին

*) N. Droz—« Instruction civique », page 171.

պարտաւորութեամբ է, ըստ սահմանադրութեան ոգու, միջամտելու: Այդպիսի մի դէպք պատահեց 1890 թւին Տէչինօ կանտօնում: Կանտօնական ընտրութիւնների ժամանակ մի խումբ արմատականներ յեղափոխական ճանապարհով վայր զլորեցին կանտօնական կաթոլիկ խաւարամիտ կառավարութիւնը, որ բաւական երկար տարիներ իր ձեռքում էր պահում կանտօնի սահմը: Այդ խաւարամիտ կոուակցութեան լիզէրն էր պ. Բէսպլինին: Դաշնակցական կառավարութիւնը, տեսնելով այդ «պետական հարւածը» և գործելու այդ յեղափոխական ձևը, դիտեց սահմանադրութեան 16-րդ յօդւածը գործադրելու անհրաժեշտութիւն: Այդ յօդւածն ասում է, որ Դաշնակցական կառավարութիւնը կարող է միջամտել կանտօնի ներքին կեանքին, եթէ որ ներքին կարգն ու կանոնը վտանգւած են և եթէ կանտօնի կառավարութիւնը հնար չունի օժանդակութիւն խնդրելու Դաշնակցական կառավարութիւնից: Տէչինօ կանտօնն ուղարկեց Քիւնցլի գընդապետը, երկու բատալիօն գորք ունենալով իր հրամանի տակ Բէրնի կանտօնից: «Կարգի ու հպատակութեան բերելու» այդ միջոցների հետ միասին ուղարկեց նաև մի քննիչ կամ մի կօմիսար: Քիւնցլիին յանձնարարւած էր լուծել կանտօնի ժամանակաւոր կառավարութիւնը, զինաթափ անել զինւած աւազակային խմբերը, որ աճել էին կանտօնում, օգտւելով խառնակ վիճակից, — առնել իր ձեռքը կանտօնի կառավարութիւնը, մինչև նոր տնօրինութիւն: Կարճ միջոցում կարգը վերահաստատուեց: Օրէնսդիր մարմինները և դաշնակցական ժողովը, ինչ ասել կուզէ, հաւանութիւն տւին դաշնակցական խորհրդի այդ կարգադրութեանը:

Այժմ պարզ է զւիցէրական և ամերիկական սկզբունքների տարբերութիւնն այդ հարցում: Միացեալ-Նահանգների սահմանադրութիւնն ստիպում է կենտրօնին մնալ լուս հանդիսատես Նահանգներում հնարաւոր ամեն տեսակ ներքին փոթորիկների ու խառնակութիւնների, եթէ խառնակիչներն այնքան խելացի են, որ չեն խախտում սահմանադրութեան մէջ յիշւած մի քանի կէտերը: Իսկ Զւիցէրիայում այդպէս չէ. կենտրօնի միջամտութիւնը և կօնտրօլը մեծ է և ընդարձակ: Հարկ եղած դէպքում նա ցոյց է տալիս փրկարար միջամտութիւն:

«Միջամտութեան և վերահսկողութեան այդ իշխանութիւնն, ասում է Վիլսօնը, պարզ ձգտում է ցոյց տալիս աճելու սերնդից

սերունդ: Շատ դէպքերում ժողովուրդն սկսել է դիտել կանտօններն իբր չափազանց թոյլ, որպէս զի կարող լինեն գործել առանց դաշնակցական իշխանութեան օժանդակութեան» *):

Գերմանական Ֆէդէրացիայում կենտրօնական իշխանութիւնը համարեա պաշտօնեաներ չունի: Միացեալ-Նահանգներում, ինչպէս տեսանք, պաշտօնեաների մի ամբողջ քանակ կայ, կախւած Վաշինգտօնի կառավարութիւնից, անկախ կանտօնների իշխանութիւնից: Զւիցէրիան այդ հարցում բռնում է միջին տեղ. Ֆէդէրալ կառավարութիւնն ունի իր սեփական գործադիր ոյժերը միայն այն գործերում, որոնք «վերաբերում են օտար պետութիւններին վերաբերեալ խնդիրներին, մաքսատներին և մաքսերին, պօստ-հեռագրական յարաբերութիւններին և, վերջապէս, ողբից ըմպելիքների դաշնակցական մենավաճառին» **): Իսկ մնացած բոլոր հարցերում, դաշնակցական իշխանութիւնը հանդիսանում է իբր մի տեսակ բարձրագոյն վերահսկիչ իշխանութիւն, որը հսկում է դաշնակցական իշխանութեան և դաշնակցական օրէնքների անթերի գործադրութեան վրայ ամբողջ երկրում, բոլոր կանտօններում: Թէ Զւիցէրիայում և թէ Միացեալ-Նահանգներում կենտրօնական իշխանութեան իրաւասութիւնը, ինչպէս գիտենք, տարածւում է սահմանադրութեան մէջ յիշւած հարցերի վրայ և յիշւած չափով, իսկ զրանից զուրս բոլոր հարցերում, առհասարակ բոլոր Ֆէդէրացիաների դաշնակից մասերը — կանտօնները, նահանգները, պետութիւններն — ունեն լիակատար ինքնուրոյնութիւն, վարում են իրանց թողնւած հարցերն առանց դաշնակցական իշխանութեան միջամտութեան: Միակ տարբերութիւնն այդ խնդրում Զւիցէրիայի և Միացեալ-Նահանգների մէջ նրանումն է, որ «դաշնակցական իշխանութեան իրաւասութիւնները երկրորդում այնքան հեռու չեն գնում, այդ պատճառով այնտեղ երկրորդում այնքան հեռու չեն գնում, այդ պատճառով այնտեղ վնդհանրապէս Նահանգների կառավարութիւնների հեղինակութիւնն աւելի բարձր է» ***):

*) В. Вилсьонъ—ibid երես 286, պարագր. 681
 **) П. Г. Мижувъ «Главн. федерации...» եր. 81
 ***) Dupriez—«Les ministres dans les principaux pays d'Europe» —t. II, p. 234 (cite' par Мижувъ)

Տէրրիտորիական և ազգային ֆէդէրացիա: Նախընթաց գլխում, խօսելով աւտօնօմիայի մասին, մենք մանրամասնօրէն պարզեցինք «աւտօնօմիայի տեսակները» (տես երես 128—148): Ֆէդէրացիայի մասին խօսելիս, այժմ մենք ստիպւած կը լինենք կըրկնել 20 ամբողջ երեսներում պարզած մեր հարցերն ու սկզբունքները, եթէ ուզենանք մտնել մանրամասնութիւնների մէջ: Այդ պատճառով մենք կաշխատենք անցնել այս ստորաբաժանման վրայով որքան կարելի է արագ, առանց կրկնութիւնների:

Աշխարհում գոյութիւն ունեցող բոլոր ֆէդէրացիաները կազմւած են ըստ տէրրիտորիայի: Զւիցէրիա, Գերմանիա, Միացեալ-Նահանգներ, Բրազիլիա, Վէնէցուէլլա և այլն, բոլորն էլ ունեն իրանց կանտօնները, իրանց պետութիւնները: Այդ բոլոր բաժանումների հիմքը կազմում է տէրրիտօրիան կամ երկիրը, երկրային շահերը: Այսքան տարածութիւնը կազմում է մի կանտօն, մի կիսագերիշխան պետութիւն կամ մի «շտատ» և նրա վրայ ապրող բոլոր մարդիկ կազմում են այդ պետութեան անդամները, նրա քաղաքացիները, որոնց բոլորի նիւթական շահերն անպայման կապում են նրանց այդ երկրի, այդ հայրենիքի հետ: Այդ տեղ այլևս ոչ ոք ուշք չէ դարձնում, թէ այդ տէրրիտօրիայի վրայ ապրող մարդ-արարածներն ինչ լեզուով են խօսում, ինչ որամազրութիւններ ունեն ժառանգած անցեալ սերունդներից՝ մի շարք դարերի ընթացքում, ինչ հոգեկան-բարոյական աշխարհ է ստեղծւել նրանց մէջ, որը նրանց որոշ խմբերին կապում է իրար հետ հզօր կապերով... Այդ ամենն այլ ևս հարցնող չը կայ:

Արդէն ասացինք, որ ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր ֆէդէրացիաները հիմնւած են տէրրիտօրիական սկզբունքի վրայ: Մակայն զրանց մէջ այդ սկզբունքի ամենափայլուն արտայայտիչը Միացեալ-Նահանգներն են: Ազգեր ու լեզուներ աշխարհի բոլոր ծայրերից լցւում են այդ երկիրը, գաղթում, գալիս են շարքերով, անվերջ մարդկային կարաւաններով: Գալիս են անա 4 դար է, առանց մի օր, մի ժամ ընդհատման: Բազմալեզու, բազմացեղ, բազմազգեստ և բազմերանգ այդ մարդկային հօտերը, լցւելով այդ երկիրը, խառնւում են իրար, կազմում մի մարդկային ժխոր, մի հսկայական Բարէլօն, որի մէջ, սակայն, անպլիական լեզուն, դառնալով յարաբերութիւնների ընդհանուր

արտայայտիչ, հնարաւոր է դարձնում համայնակեցութիւնը մարդկային այդ վիթխարի մըջնանոցում: Ամերիկական ամենակեր կուլտուրան մասամբ յղկում է տարալեզու և տարացեղ այդ ամբօխին, մի քիչ տաշտշում և ստեղծում «եանկի»-ի յայտնի տիպը—նիհար և երկարահասակ, ջղուտ, նախաձեռնող ու գործնական, հետու ամեն տեսակ նախապաշարունակներից և կեղծ քաղաքավարական ձևերից:

Մակայն այդ արտաքին միօրինակութեան տակ երկնք, դեռ շատ երկար մնում է ազգային ոգին: Ամեն մի Նահանգ, ունենալով իր տեղական զուտ նիւթական ու իրաւական շահերն, ստեղծում է իր տեղական տիպը: Հիւսիսային Փրանսիացին ու հարաւային Փրանսիացին խիստ տարբեր են իրարից բնաւորութիւնով, մարմնակազմով, արտասանութիւնով, բարբառով և նիստ ու կացով: Ժընէվի կանտօնի ազգաբնակչութիւնն զգալի կերպով տարբերւում է Վալլէի կանտօնի ազգաբնակչութիւնից, թէև երկուսումն էլ ապրում են Փրանսիական ծագումի ժողովրդներ. իսկ լեռնական կանտօնների և Բազէլի կամ Յիւրիխի կանտօնների գերման ծագումից սերւած ժողովրդների բնաւորութիւններն իրարից աւելի են տարբերւում, քան բաւարացին սաքսօնացուց:

Անկասկած՝ նոյն տարբերութիւնները կը լինեն և Միացեալ-Նահանգների զանազան «շտատ»-ների բնակիչների մէջ: Հիւսիսի ինդուստրիական նահանգների ազգաբնակչութիւններն անկասկած խորապէս պիտի դանազանւին հարաւի պլանտատօրական նահանգների բնակիչներից, արեւմտեան լեռնոտ նահանգներինը—արեւելեան դաշտային նահանգների ժողովրդներից: Այդ բազմազանութեանն անշուշտ նպաստել և դեռ նպաստում է ժողովրդների բազմազան ծագումը: Երկրագնդի բոլոր քիչ ու շատ խոշոր ժողովրդներն ունին այնտեղ ներկայացուցիչներ—իրանց ցեղի անդամներից շատ կամ քիչ թւով: Ծճմարիտ է, դրանք գալիս են մէկ-մէկ կամ մանրիկ խմբակներով, այնպէս որ շուտով են կուլ դնում, բայց էլի կազմում են զգալի թւեր ու խմբակցութիւններ, որոնք դէպի իրար զղում են ձգողական մեծ ոյժ—մանաւանդ գաղթելու սկզբնական շրջանում: Միևնոյն ցեղի, միևնոյն ազգի անհատները կազմում են որոշ հոգեկցական խմբակցութիւններ, որոշ ազգային միութիւններ—զասակարգային տեսակէտը պահպանած դիասպօրայի ներսում, եթէ այդ ազգից բաղկացած ժողովրդի թիւը շատ

եւրօպական ժողովուրդներն մէջ, որ բոլոր կուտուրական ազգերի գրողները, ինչպէս մենք արդէն նկատուեանք (տես երես 207), պետութեան գաղափարը և «ազգ» հասկացողութիւնը նոյնութիւն են համարում: Այն ինչ պետութիւնն անպայման մի տէրրիտօրիա ունի, իսկ մի և նոյն տէրրիտօրիայի վրայ կարող են ապրել և այժմ յաճախ ապրում են երկու և աւելի ազգեր իրար կողք կողքի, իրար հետ խառը: Եւ դրա հակառակը—մի և նոյն ազգը կարող է ցրւած լինել երկու և աւելի տէրրիտօրիաների վրայ, զանազան պետութիւններում: Այսպէս—Աւստրիայում, Հունգարիայում, Թիւրքիայում, Ռուսաստանում ապրում են մի և նոյն տէրրիտօրիայի վրայ, նոյն պետութեան մէջ բազմաթիւ ազգեր: Իսկ մի քանի ժողովուրդներ, ինչպէս հրէաները, լեհերը, հայերը և այլն, ապրում են մի քանի պետութիւնների մէջ, մի քանի տէրրիտօրիաներում, քաղաքականապէս յատուկ սահմաններ ունեցող մի քանի շրջաններում: Այն դէպքում, երբ «ազգի» տարածման և տէրրիտօրիայի կամ պետութեան սահմաններն իրար համապատասխան են, պետութիւնը դառնում է ազգային և այդ երկու հասկացողութիւնները կազմում են մի տեսակ նոյնութիւն: Իսկ եթէ մի և նոյն պետութեան մէջ, նոյն տէրրիտօրիայի վրայ ապրում են երկու կամ աւելի ազգեր, այն ժամանակ պետութիւնը կամ տէրրիտօրիան պատկանում է այդ ազգերից որ և է մէկին, քաղաքականօրէն լինում է նրա սեփականութիւնը, իսկ մնացած ազգերը դիտւում են իբրև հպատակներ, իբր տիրաժներ: Ահա այդ դէտքում «պետութիւն» և «ազգ», տէրրիտօրիա և ազգ յաճախ իրար հակապիւր են: Տիրող ժողովուրդն անպայման դառնում է ազգէսիվ (յարձակողական), կլանող, տարածերժ և օտարակեր: Ազգութեան գաղափարը, որ սկզբներում նրա մէջ խոնարհ էր և խիստ համակրելի, որովհետև արտայայտւում էր իբր լոկ ազատ, ինքնուրոյն կեանք ձեռք բերելու մի ձգտում,—այդ գաղափարը, հասնելով պետութեան, կամ իրականանալով, կազմելով մի անկախ պետութիւն, իսկոյն դառնում է ամբարտաւան և տարամերժ, վեր է ածւում շովինիզմի և իմպէրիալիզմի կամ աշխարհակալական ամենակեր կրքի*):

Եթէ այդպիսի բազմատարր պետութիւններին ու շրջաններ-

*) Տես „Труды“ Юридич. Общ. при Харьковск. Унив.—статья Устинова „Идея национального государства“.

ըին օգնութեան հասնի ֆէդէրալիզմը. եթէ այդ երկիրը կամ պետութիւնը բաժանւի ֆէդէրատիվ մասերի այնպէս, որ իւրաքանչիւր մասը բաղկացած լինի մի-մի ազգութիւնից, իսկ բոլորը միասին կազմեն մի դաշնակցական պետութիւն—մի և անբաժան, այն ժամանակ դաշնակցական կենտրոնական իշխանութիւնը կը հանդիսանայ ամբողջ տէրրիտօրիայի, ամբողջ պետութեան ներկայացուցիչ, իսկ մասերը կը դառնան ազգութիւնների արտայայտիչ, թէև կրկին շարկապաւած տէրրիտօրիաների աւելի մանր չափերի հետ:

Տէրրիտօրիալ սկզբունքը պետական սկզբունքն է. նա համամարդկային է: Եթէ տէրրիտօրիան ընակւած մի ազգով, պարզ է որ ազգային և տէրրիտօրիական սկզբունքները միատեղւում, նոյնութիւն է կազմւում. իսկ եթէ միևնոյն տէրրիտօրիայի վրայ ընակւում են մի քանի ազգեր (երկու և աւելի), այն ժամանակ երկրային սկզբունքը, Բ. Շպրինգէրի ասածի նման, դառնում է բունակալ, անսիրտ և ճնշող. նա պահանջում է բոլոր ազգերի կլանումը մի ազգութեան—ամենից զօրեղի մէջ: Դրանից ծագում է ընդհարում ազգային հողի վրայ: Տէրրիտօրիալ սկզբունքն անպայման նիւթական, զուտ մատերիէլ շահերի ներկայացուցիչն է: Մի շրջանում ապրող բոլոր ժողովուրդներն ունին միատեսակ շահեր. ցանքսը պէտք է կատարեն մի և նոյն ժամանակ, հսկողութիւնը պիտի կազմակերպեն միատեսակ, հնձեն միաժամանակ, աշխատեն մի և նոյն պայմաններում և այլն: Պայմանների այդ նոյնութիւնը և ժամանակի ու եղանակների նոյնաձեւութիւնն ստիպում է իրար հետ, մի և նոյն տէրրիտօրիայի վրայ ապրող բոլոր ժողովուրդներին ունենալ մի համայնակեցութիւն. համախմբել, որպէս զի ամեն տեսակ աշխատանքներ կատարւեն քիչ եռանդ փչացնելով և, որքան կարելի է, շատ արդիւնք ստանալով: Պարզ է, որ ամենօրեայ նիւթական շահերը կողք-կողքի ապրող բոլոր ժողովուրդներին ստիպում են ունենալ մի ընդհանուր կազմակերպութիւն գոնէ այդ նոյն նիւթական շահերի պաշտպանութեան և նրանց զօրացման տեսակէտից:

Սակայն, ինչ էլ որ ասելու լինեն մարքսիստները, մարդկային հասարակութիւնն առաջ քշող գործօնները միայն արտադրական յարաբերութիւնները, միայն արտադրութեան գործիչները չեն: Տրւած վայրկեանում մի ժողովուրդ, որքան էլ հզօրա-

պէս կախած լինի նիւթական պայմաններից, որքան էլ տիրաբար հրամային նրան ապրուստի միջոցներ ձեռք բերելու արտադրական գործիքներն, այնուամենայնիւ ունի իր մէջ մի մարմնակազմ և մի բնաւորութիւն, այն մի հոգի, շաղախած դարերի խմորով, ժառանգական դարեր տրադիցիաներով: Դարերի ժառանգութիւն այդ ազգային ոգին, այդ ազգային ուրոյն կուլտուրան, իր կողմից, ծառայում է իրր մի նոր ֆակտոր հասարակական բոլոր շարժումների մէջ: Ուզում էք, քննեցէք, վերլուծեցէք այդ դարեր ֆակտորը և դուրս բերէք, որ բնութեան մէջ ամեն ինչ առաջ է եկել գոյութեան կուլի, նիւթական անհրաժեշտութեան ազդեցութեան տակ... Այն ժամանակ էլ դուք կը բաղխէք փրիստփայլութեան մէջ վաղուց ծեծւող նիւթ և ոյժ սկզբունքներին. դուք ստիպւած կը լինէք խոստովանելու, որ այդ երկու սկզբունքները տիեզերքի մէջ համազօր են: Իսկ եթէ մօնիզմի ամենայն ինչ մի արմատից բղխեցնելու ցաւը ձեզ վարակել է, այն ժամանակ դուք ստիպւած կը լինէք զիմելու նիւթ և ոյժի միակ աղբիւրին, Սպէնսէրի ասած «Անձանաչելուն», որից բղխում են թէ մէկը և՛ թէ միւսը: ✓

Թողնենք մի կողմ այդ մետաֆիզիքական էքսկուրսիաները, թողնենք մի կողմ մարքսիզմի վարակիչ ձգտումն անպատճառ կեանքի բոլոր երևոյթները բացատրելու մի և միակ պատճառով — արտադրական յարաբերութիւններով: Դա չափազանց սիմպլիստ է, չափազանց թեթևացնող ամենինչ, նոյն իսկ ամենածանր երեւոյթների բացատրութիւնը: Մի կողմ թողնենք այդ վարդապետութիւնը, որովհետև նա ամեն բան զիւրացնում, չափազանց պարզում է և գրանով մոռացնել է տալիս կենսական բոլոր բարդութիւնները, վարժեցում երիտասարդ մտքերը ծուլութեան, պատրաստի ֆրագէտօլոգիայի... Մի ժամանակ ասուածարաններն ամեն ինչ բացատրում էին Աստծու միջամտութիւնով. «Ասուած է անողը», ասում էին նրանք ամեն ինչի համար. «բնութեան մէջ ոչինչ չէ կատարում առանց Աստծու կամքի»... Այժմ էլ մարքսիստներն այդ «Ասուածը» դարձրել են «արտադրութեան միջոցները»:

Զօրեղ են արտադրական յարաբերութիւնները, մեծ է նրանց ազդեցութիւնը մարդկային կեանքի վրայ, բայց նրանք միակը չեն, միակ գործօնը, միակ պայմանաւորողը մարդկային

հասարակական կեանքի բոլոր երևոյթների: Կայ և ազգային պատճառ, կան և այլ պատճառներ, որոնք դուցէ մի օր, յարաճուն դիտութեան մշտապէս սրւող անալիզի ազդեցութեան տակ վերլուծւեն և վերածւեն մի և միակ արմատական ֆակտորի... Գուցէ... Բայց առ այժմ այդ միակ ֆակտորը գտնւած չէ: Շատ բան, շատ կենսական երևոյթներ պարզոււմ են «արտադրական յարաբերութիւններով», բայց ոչ ամեն բան, կենսական բոլոր երևոյթները: Մարքսիզմը դիտութեան վերջին խօսքը չէ. նրա թերութիւնն ակնհայտ է այժմ:

✓ Ազգային սկզբունքը, ազգային ֆակտոր դօրաւոր է հասարակութիւնների կեանքում: Նայեցէք Աւստրիայի վրայ, նայեցէք ձեր շուրջը—կովկասի վրայ... Մարդ պէտք է դատելու կարողութիւնը կորացրած լինի, որ չըմբռնէ, թէ որքան մեծ դեր է խաղում այդ ազգային սկզբունքը թէ բուրժուայի, թէ կղերի, թէ բանւորի, թէ աշխատաւոր զիւղացիութեան կեանքում: Բոլոր ինքնուրոյն մտածողները, բոլոր կենսունակ կուսակցութիւնները լաւ են ըմբռնել ազգային գործօնի նշանակութիւնը կեանքի մէջ, այդ պատճառով էլ հնարներ են մտածում լուծելու ազգային խնդիրը, որ և է ձևով վերջ դնելու ազգային անտագօնիզմներին ու ֆւասակար ընդհարումներին:

«Կենտրոնացումն, ասում է Կաուցկին, անհնար դարձաւ Աւստրիայում: Աւստրիան այսուհետև դեռ էլի կարող է գոյութիւն ունենալ իրր դաշնակցական պետութիւն, բայց արդէն հնացած «պատմա-քաղաքական միութիւններն», ինչպէս առանձին թաղաւորութիւնները և երկրները, նոյնքան ընդունակ են ապրելու, որքան և ցէնտրալիզմը:—Մնում է միայն մի ելք—ազգութիւնների ֆէդերալիզմը, անհաղական նահանգների սահմանների ոչնչացումը, Աւստրիայի վերանորոգումը լեզուների տարբերութեան հիման վրայ» *):

Բայց ի՞նչպէս իրականացնել այդ «ազգութիւնների ֆէդերացիան», որի պաշտպանն է Կ. Կաուցկին, որի ստեղծող-շատագոյն է Բ. Շպրինգէրը, որն իր պրօգրամմի մասն է դարձրել աւստրիական սօցիալ-դէմօկրատիան:

«Թող կորչի պետական իրաւունքի ամբողջ անպէտք կոյտը, որ դեռ ևս անհնարին վիճակի մէջ է գնում ներկայ ազգային

*) К. Каутский—„Борьба национальностей и государственное право въ Австриа“, издание С. И. Иванова и К^о. стр. 19.

շարժումները. թող կորչին երկրային սահմանները, որոնք մանր մասերի են վերածում առանձին ազգերը. թող կորչեն սահմանները, որոնք իրար են մեխում իրարից տարբեր ազգերին և դըր-դում նրանց ատելութեան և թշնամութեան, այնպիսի ազգեր, որոնց համաշխատակցութիւնը՝ փոխադարձ ազատութեան և իրաւահաւասարութեան գէպըն՝ կարող էր դարձնել Աւստրիան առաջնակարգ կուլտուրական պետութիւններից մէկը, իսկ այդ ազգերի կոիւր խանգարում է ամեն տեսակ առաջադիմութեան» (Կ. Կառլցկի, նոյն գրքոյկը, նոյն երեսում):

Ի՞նչ է այդ «ազգերի ֆէդէրացիան»:

Մենք նախընթաց գլխում արդէն պարզել ենք Ր. Շպրինգէրի տեսակէտը: Նա պահանջում է Աւստրիայում ազգութիւնները, կուլտուրական ակտիւնների տեսակէտից, կազմակերպել այնպէս, ինչպէս Թիւրքիայում, ինչպէս Կարօլինգների օրով կազմակերպւած էին այդ իշխանութիւններում ապրող ազգերը, կամ, աւելի յարմար է ասել—ինչպէս այսօր կազմւած են եկեղեցիներն Ամերիկայի Միացեալ-Նահանգներում: Այդ ձևով կազմակերպւած կուլտուրայէս ազատ և իրաւահաւասար բոլոր ազգերը կազմելու են մի ֆէդէրատիվ պետութիւն, մի և միաձոյլ Աւստրիա:

Սակայն, ինչպէս ապացուցեցինք, Ր. Շպրինգէրը դրանով չէ մերժում երկրային կամ աէրրիտօրիական սկզբունքը. նա ընդունում է, որ պետութիւնը վերջ ի վերջոյ պիտի բաղկացած լինի տէրրիտօրիալ մանր բաժանումներից, որոնք պէտք է, որքան հնարաւոր է, յարմարեցւած լինեն ազգութիւնների ներկայ տարածման ըէէլ սահմաններին, ամենևին հաշի չառնելով պատմական սահմանները:

Աւստրիական սօցիալ-գէմօկրատիան, ինչպէս տեսանք, նոյնպէս պահանջում է վերածել Աւստրիան ազգութիւնների ֆէդէրացիայի, ոչնչացնելով պատմական «թագաւորութիւնների» և «երկրների» (Länder) սահմանները, որոնք այսօր այլևս չեն համապատասխանում ազգերի տարածման իսկական սահմաններին:

Սակայն, որքան էլ մենք ուզենանք ազգային-կուլտուրական ակտիւնիան և ֆէդէրացիան պաշտպանել, մեզ համար անկարելի կը լինի երևակայել մի անմարմին ֆէդէրացիա, մի ֆէդէրացիա՝ առանց տէրրիտօրիայի: Պետութեան տէրրիտօրիան պէտք է բաժանել տեղական ինքնավարական և ակտիւն շրջանների: Ինչո՞ւ,

—այդ մենք տեսանք նախընթաց գլխում: Իսկ բաժանման գէպըն՝ պէտք է ջանալ, որքան հնարաւոր է, ազգային տեսակէտը պահպանել. այսինքն այնպէս բաժանել երկիրը շրջանների, նահանգների, պրօվինցիների, դէպարամէնանների կամ կոնտօնների, որ և այդ շրջանը ներկայացնէ մի ամբողջութիւն էկօնօմիական շահերի տեսակէտից, և՛ բաղկացած լինի, ի հարկէ կրկին որքան հնարաւոր է, միատարր մի ժողովրդից, մի և նոյն ազգութեան անհատներից:

Կառլցկին զնում է Ր. Շպրինգէրի և աւստրիական սօցիալ-գէմօկրատիայի գծած շաւղով:

Աւստրիայի գերմանացիները պահանջում են Բօհէմիան բաժանել վարչական երկու խոշոր մասերի—գերմանական և չեխական, և դրանով վերջ դնել ազգային անտագօնիզմին այդ երկրում: Գերմանական մասը կունենայ իր գերմաներէն լեզուն, չեխականն իր չեխերէնը և դրանով տարածայնութիւնները հարթւած կը լինեն: «Իսկ չեխական հարցը Մէրիայում և Սիլէզիայում, ըուսինական հարցը Գալիցիայում, իտալականը Տիրօլում, սլաւոնականն Շտիրիայում և Կարինթիայում,—հարցնում է Կառլցկին. դրանք բոլորը կը մնան չըլուծւած, իսկ դրանց հետ միասին կը շարունակեն թագնւած մնալ ազգային շօվինիզմի կայծերը, կը բորբոքեն նորից և յաւիտեանս կը յարատեւ գոյութիւն ունեցող գրութիւնը», (նոյն—երես 20):

Անընդունելի, նոյն իսկ վստասկար համարելով գերման լիբերալների այդ առաջարկը, Կառլցկին իր կողմից հետեւեալն է առաջարկում. «Գերմանացիներին պէտք է բաժանել չեխերից Բօհէմիայում, բայց պէտք է բաժանել նրանց բոլորովին, ոչ թէ նորից միացնել լանդտագում: Դրա համար անհրաժեշտ է իրար հետ միացնել իրար սահմանակից բոլոր չեխական նահանգները Բօհէմիայում, Մէրիայում և Սիլէզիայում և դարձնել ակտիւն կերպով կառավարող շրջաններ ճիշտ նոյնպիսի իրաւական հիմքերով, ինչպէս և Բօհէմիայի գերմանական գէպարտամիւստը կամ կանտօնը: Նոյն ձևով պէտք է վարել նաև միևս դաւառներում, որոնց մէջ ազգաբնակչութիւնը խօսում է տարբեր լեզուներով» *):

*) Կ. Կառլցկի—ibid — երես 21: Այստեղ յարգելի դիտեալանը յիշատակում է միայն լեզուն, որովհետև ազգային հարցը քննելիս, նա այնքան նը-

Կառուցվու այդ խօսքերից պարզ երևում է, թէ նա ինչ է հասկանում «ազգերի Ֆէդէրացիա» ասելով: Վերջ ի վերջոյ նրա, ինչպէս և Շպլինդէրի, «ազգերի Ֆէդէրացիան» յանդու է մանր տէրրիտօրիական բաժանումների, սահմանաւորուած ազգային կամ էտնօլօգիական տեսակէտով:

Ազգերի Ֆէդէրացիան նորութիւն չէ. նա վերաքննութիւն է եղածի: Կան Աւստրիայում աւտօնօմ երկրներ, բայց այդ աւտօնօմ շրջանների սահմանները, չբնամապատասխանելով այլ ևս ազգերի տարածման ըէէլ սահմաններին, դառնում են փաստակար, որովհետև ոչ միայն չեն վերացնում ազգային կոիւններն ու անտագօնիզմը, այլ աւելի ևս սրում են նրանց: Պէտք է քանգել այդ պատմական անամէջ սահմանները և ստեղծել ազգերի տարածման իսկական նոր սահմաններ: Միայն և միայն այդ դէպքում աւտօնօմիան և Ֆէդէրացիան կարող են լուծել ազգային կնճոռտ հարցը, որ անքան փաստ, անքան տանջանք ու տառապանք է հասցնում աշխատաւոր դիւղացիութեանը և պրօլէտարիատին, և որն անքան ձեռնտու և օգտակար է տիրող բիւրօկրատիական, բուրժուական, Ֆէօդալական և կղերական տարրերին:

«Աւստրիայի այն կազմակերպութիւնը, ասում է Կառուցիկն, որը միայն կարող է հիմք դնել ազգային խաղաղութեան, պաշտպանութիւն է գտնում աւստրիական սօցիալ-դէմօկրատիայի կազմակերպութեան մէջ: Վերջինս հիմնում է, —ինչ ասել կուզէ— որքան հնարաւոր է, երկրում գոյութիւն ունեցող վարչական բաժանման վրայ. բայց այնտղ, ուր ազգային սահմաններն ընդհարում են «Թագաւորութիւնների և երկրների» սահմանների հետ, —այդտեղ հարցը վճռում են տաքսիները և ոչ երկրորդները» *) (ստորագծումները մերն են):

Մենք մեր բոլոր օրինակները վերցնում ենք Աւստրալիա

շանակութիւն է տալիս լեղին, որ սա հանդիսանում է իբր ազգութիւնը պայմանաւորող և բնորոշող համարեա միակ տարրը: (Տես նրա «КРИЗИСЪ ВЪ АВСТРИИ» (Нация и ЯЗЫКЪ) զբեռնիք): Ինչ կասկած, որ այդ տեսակէտը խիստ միակողմանի է: Աշխարհում տարածուած հրէական բազմալեզու ազգը պերճալիսօն հերքում է այդ միակողմանի հայեացքը: Բուլղարիայի, Բուսինիայի և այլ տեղերի թիւրքալիսօն հայերը կենդանի բողոք են նոյն տեսակէտի միակողմանիութեան դէմ:

*) К. Каутский—ibid—երես 27.

յից, որովհետև այդ երկրի ազգային կամ էտնօլօգիական ստրուկտուրան (մարմնակազմը) է, որ ամենից աւելի համապատասխանում է Ռուսաստանի, մասնաւորապէս Կովկասի ազգային մարմնակազմին: Վերջապէս այդ երկրի գրողներն ու կուսակցութիւններն են, որ ամենից աւելի զբաղւել են այդ խնդիրներով, որովհետև նրանք իրանց կաշու վրայ զգացել են ազգային կոիւնների և անտագօնիզմի քայքայիչ, կուլտուրասպան հարւածները:

Մեզանում էլ, մասնաւորապէս Կովկասում և Օստգէյեան շրջանում պէտք է խիստ վերաքննութեան ենթարկել վարչական բոլոր բաժանումները, և այդ վերաքննութեան պահուն պէտք է ամեն կերպ զերծ ֆնալ պատմական սնամէջ և յաճախ շօվինիստական տեսակէտից: Պէտք է ստեղծել, օրինակ՝ Կովկասում, այնպիսի նոր երկրային բաժանումներ, որոնք քիչ ու շատ համապատասխան լինեն ազգերի տարածման սահմաններին: Ի հարկէ մեր բոլոր ջանքերն ամփոփելու ազգերն այնպիսի տէրրիտօրիական շրջաններում, որ ամեն մի ազգութիւն առանձնացած, ինքնամփոփ մի ամբողջութիւն կազմէ մի տէրրիտօրիայի վրայ—ի դուր կը լինի, որովհետև ազգերն արգէն արար-աշխարհում չափազանց են իրար խառնւել, իսկ միզանում աւելի ևս: Սակայն հնարաւոր է այնպէս սահմանաւորել գաւառներն ու գաւառակները, ներկայ նահանգներից, գաւառներից ու գաւառակներից կարելի է այնպէս կտրոններ կտրատել և իրար միաւորել, որ ազգերը կազմեն քիչ ու շատ միապաղաղ մի ամբողջութիւն միկնոյն տէրրիտօրիաների սեփական շրջանների վրայ: Քիչ յետոյ, երբ մենք քննութեան կառնենք տյն հարցը, թէ արգեօք Ֆէդէրացիան հնարաւոր է Կովկասում, մենք աւելի մանրամասնօրէն կտնգ կառնենք թւերի վրայ և կաշխատենք ցոյց տալ նրա գործնական հնարաւորութիւնը:

Վերևում մեր բոլոր ասածներից պարզ է, թէ ինչ է ազգային Ֆէդէրացիան: Մենք եկանք այն եզրակացութեան, որ զուտ երկրային Ֆէդէրացիան, որը հաշւի չէ առնում ազգերի տարածման ըէէլ սահմանները, յաճախ նեղիչ, բռնակալ և նոյն իսկ փաստակար է, որովհետև չէ վերացնում ազգերի ընդհարումները, նրանց անտագօնիստական յարաբերութիւնները: Այդպիսի Ֆէդէրացիան կարծես մի «մարմն և առանց հոգու», առանց ազգութեան: Միացեալ-Նահանգների օրինակը բերել և վիճել մեր այս

աւտօնօմիա և կապել իրանց ազգի մայր մասի հետ: Բացի այդ՝ նրանց պէտք է իրանց շրջանում և եթ տալ որոշ իրաւունքներ կուլտուրական ինքնորոշման տեսակէտից. ապահովել փոքրամասնութեան իրաւունքը թիւջէյի վերաբերմամբ, տալ պրօպօրցիօնալ կամ համեմատական ներկայացուցչութիւն և այլն: Այդ մասին մենք արդէն մանրամասն խօսել ենք նախընթաց գլխում (երես 130 148), այլ ևս կանգ առնել աւելորդ ենք համարում:

Հիմքեր եւ կրիտիքաւ: Նախ քան Ֆէդէրացիայի հիմքերի պարզարանութիւնը, ասենք մի քանի խօսք մեր ղեկավար սկզբունքի մասին: «Աշխատաւոր մեծամասնութեան շահը համամարդկային կուլտուրայի շահն է, եթէ նա լաւ է ըմբռնուած», ասացինք մենք մեր այս գրքի յառաջաբանում (երես VII): Վերջ սօցիալիստ, մենք ամեն մի հարցի, ամեն մի հասարակական երևոյթի վրայ նայում ենք աշխատաւոր մարդկութեան տեսակէտից, որովհետև այդ տեսակէտը էգօիստական, զուտ դասակարգային տեսակէտ չէ, օգտակար միայն մի խմբի համար,—այլ նա համամարդկային կուլտուրական առաջադիմութեան տեսակէտն է: Եթէ մի վայրկեան պրօլէտարական և աշխատաւոր գիւղացիութեան շահերն ընդհարման դան համամարդկային կուլտուրական շահերի հետ, ինչ կասկած, որ մենք իսկոյն կը բռնենք վերջինիս կողմը, որովհետև երկր սօցիալիստական կուսակցութիւնների գերագոյն նպատակն է համամարդկային կուլտուրան, ապագասակարգային համայն մարդկութեան ապագայ երջանկութեան կազմը: Եւ եթէ մի բոպէ ենթադրենք, որ իրար են ընդհարել բանւորական ու աշխատաւոր գիւղացիութեան և համամարդկային կուլտուրական շահերը, իսկոյն պէտք է մենք կանգ առնենք, որոնք թիւրիմացութիւնը: Այո, այդ դէպքում անպատճառ որ և է թիւրիմացութիւն կայ, որովհետև աշխատաւոր մարդկութեան շահ ասել է համամարդկային առաջդիմութեան շահ: Անշուշտ որ և է թիւրիմացութիւն կայ. անպատճառ դրանցից, այդ երկու շահերից որ և է մէկը լաւ չէ ըմբռնուած, ծուռ է հասկացուած:

Ուղղափառ մարքսիզմի ներկայ քուրմը, Կ. Կառլցկին, իր բազմաթիւ աշխատութիւններում յաճախ շեշտում է այդ տեսակէտը: «Մենք, ասում նա Աւստրիային նւիրւած իր մի յօդուածում, չենք համարում մեզ պրօլէտարիատի կոյր երկրպագու: Բայց ո-

րովհետև մենք համոզուած ենք, որ նրան է պատկանում ապագան, այդ պատճառով մենք երբէք լուրթեան չենք տայ այն պակասութիւնները, որ նրա մէջ կան ներկայումս»*):

Ի հարկէ, Կառլցկին, իբր զուտաբիւն մարքսիստ, գործ է ածում լոկ «պրօլէտարիատ» բառը, իսկ մենք դրա փոխարէն գործ կածենք «աշխատաւոր» աւելի լայն հասկացողութիւնը:

Ապագան, համամարդկային տառապանքներից միակ ելքը կազմող փայլուն սօցիալիստական ապագայ կազմը պատկանելու է աշխատաւորութեան: Այդ կազմի միակ հիմքը կազմելու է աշխատանքը և աշխատանքի արդիւնքի լիակատար և հաւասար վայելումը:

Այդ է պատճառը—միակ, վճռական պատճառը, որ ամեն մի երևոյթ քննելիս, մենք, իբր սօցիալիստ, միայն մի տեսակէտով ենք մօտենում խնդրին, որքան նա օգտաւէտ է կամ որքան նա ձեռնաու է աշխատաւոր մարդկութեան համար: Եթէ մեր քննուածեանու է աշխատաւոր մարդկութեան անպայման օգտակար է թիւնը ցոյց տւեց, որ այս ինչ երևոյթն անպայման օգտակար է աշխատաւոր դասակարգերի համար, կը նշանակէ այդ երևոյթն անպայման առաջադիմական, անպայման լաւ երևոյթ է, և ամեն մի սօցիալիստ թէ անհատ, թէ կուսակցութիւն՝ պարտաւոր է մի պաշտպանել այդ երևոյթը, նպաստել նրա զարգանալուն, նրա իրականացմանը:

Ահա այդ «աշխատաւորական» ակնոցներով մօտենում ենք մենք մեր առջև դրւած հարցին: Ազգերի աւտօնօմիան և նրանց Ֆէդէրացիան արդեօք ձեռնտու և օգտակար են պրօլէտարիատի հետ և աշխատաւոր գիւղացիութեան շահերի տեսակէտից:—Որովհետև սօցիալ-դէմօկրատները, մասնաւորապէս ռուսական և մանաւանդ կովկասեան սօց-դէմօկրատներն են պնդում, որ աւտօնօմիան և Ֆէդէրացիան «բուրժուական հասկացողութիւններ» են, միան և Ֆէդէրացիան «բուրժուական հասկացողութիւններ» են, որովհետև «վրասում են ռուսական և կովկասեան պրօլէտարիատի յաղթական յառաջխաղացութեանը», այդ պատճառով մենք պիտի կը դիմենք զուտ կուսակցական գրողի վկայութեան, այնպէս որ այլ ևս վիճելու տեղ չը մնայ:

«Պրօլէտարիատը, ասում է Կառլցկին, նոյնքան քիչ պէտք է սպասէ նախախնամութեան օգնութեանը դրսից, որքան և երկն-

*) К. Каутский—«Борьба нац. и гос. право въ Австріи»— стр. 25.

քի նախախնամութիւնից: Նա ձգտում է գործել այն երկրում, ուր ապրում է և ձևափոխել նրան համաձայն իր և հասարակութեան շահերի: Բայց հէնց այդ պատճառով էլ նա կարիք ունի լուծելու ազգային հարցը, որովհետև միայն այն ժամանակ, երբ Թագաւորութիւնների և երկրների պետութեանը կը փոխարինէ ազգութիւնների պետութիւնը, այն ազգութիւնների, որոնք իրար կողք կողքի աւստոսօմ կերպով կապրեն և միատեղ կը գործեն, միայն այդ ժամանակ կարող է երևան զալ պրօլէտարիատի դասակարգային կռիւն իր մաքուր ձևով: Ազգի ինքնուրոյնութիւնը հանդիսանում է մի բնական ու անփոփոխ նախապայման ամեն մի ժամանակակից դասակարգային կռիւ. ժողովուրդը պէտք է ամեն կողմով ազատ լինի—և միմիայն այդ ժամանակ պրօլէտարիատը հնարաւորութիւն կունենայ դուրս գալու իր սօցիալական հակառակորդի դէմ լիապէս զինաւորւած: Պրօլէտարիատն իր բնական և բաղմակողմանի զարգացման տեսակէտից իր ազգի անկախութեանը ոչ նւազ կարիք ունի, քան ընդհանուր ընտրական իրաւունքի, քան ժողովրդի ու մամուլի ազատութեան: √

Պրօլէտարական միջազգայնութիւնը նշանակում է ոչ թէ ազգութեան ուրացում կամ արհամարհում, այլ ազգերի ազատութիւն և իրաւահաւասարութիւն» *):

Ոսկէ բառեր և մտքեր... Լաւ կը լինէր, որ կովկասեան և առհասարակ ուսական սօցիալ-դէմօկրատիան, որ մինքան թիթե խղճով լուծում է ազգային հարցի գորղեան հանգոյցը, դնելով իր ծրարքում լոկ մի երկու անորոշ ու մնամէջ բառեր,—այն, լաւ կը լինէր, որ մի քիչ կանդ առնէր Կառլեկու այդ ասածների առջև: Այդ սօցիալ-դէմօկրատիան մի կողմից իր ծրարքում դնում է «իրաւունք բոլոր ազգերի ինքնորոշման», իսկ միւս կողմից իր կենտրոնական օրգանում բարձրագոյնը որոտում է. «Պրօլէտարիատի գործը չէ քարոզել Ֆէդէրալիզմ և ազգային աւստոսօմիա»... Ակամայ հարց է զարթնում մարդու գլխում. արդեօք թվ է իսկական սօցիալ-դէմօկրատը, իսկական մարքսիստը—Կառլեկիւն, թէ Պլեխանօւր:

Ֆէդէրացիայի հիմքերը որոնելիս, մեր միակ լուսաւոր աստղը, մեր միակ ղեկավար տեսակէտը կրկին լինելու է աշխատա-

*) К. Каутский—ibid—երես 26.

ւոր մարդկութեան շահը, ուրեմն և համարձակօրէն առաջադիմութեան տեսակէտը:

Աւստոսօմիայի և ֆէդէրացիայի առաջին և կարևորագոյն հիմքն է ազգային խնդիրը: Ազգային և ազգ-երկրային աւստոսօմիան և մանաւանդ ֆէդէրացիան պետական այն մրակ ձևերն են, որոնք ամենից աւելի հեռու են պահում ազգերին իրար հետ ընդհարելուց, որովհետև թողնում են բոլորին ազատ իրաւունք ոչ հարելուց, որովհետև թողնում են ընդհանուր ազատ իրաւունք միայն իրանց լիզուով խօսելու, իրանց թատրօններն ու զարոցներն, իրանց գրադարաններն ու ընկերութիւններն ունենալու, ընդ իրանց գրադարաններն սահմաններում ունենալու և թոյլ են տալիս որոշ ազգ-երկրային սահմաններում ունենալու իրանց տեղական ազգային օրէնքները, նոյն իսկ սահմանադրութեամբ որոշած հարցերում գերիշխան լինելու իրանց շքեղաներում, պաշտպանելով իրանց այդ շքեղանում ապրող փոքրամասնութեան կամ փոքրամասնութիւնների իրաւունքները:

Թող լինի այդ ազգային անտագօնիզմը, թող տեղի ունենան ազգային ընդհարումները, կասեն մեզ. աշխատաւորի կամ, գոնէ, պրօլէտարիատի ինչ վէճն է. ընդհարում են բուրժուական տարրերը, թող ընդհարեն, թող իրար հարւածեն ու թուլացնեն. գրաւորը, թող ընդհարեն, թող իրար հարւածեն, ամբայցնելով իր դիրքը: Չէ որ նից կօգուտի պրօլէտարիատը, ամբայցնելով իր դիրքը: Չէ որ հակառակորդի թուլութիւնն օգուտ է բանւորին:

Իժբաղդարար այդպէս չէ կատարում պատմութիւնը: Բանւորը, պրօլէտար լինելուց առաջ, մարդ է, իր ազգի անդամ: Ազգային բոլոր հալածանքները նա էլ է զգում: Այդ դեռ քիչ է: Մենք համարձակ պնդում ենք, որ պրօլէտարն ու գիւղացին աւելի են «ազգային» քան բուրժուան, որ ազգային հալածանքները նրանք աւելի ցաւապիւն են զգում, քան բուրժուան, որ բուրժուան, որոշ մտքով, աւելի միջազգային է քան պրօլէտարն ու աշխատաւոր գիւղացիութիւնը:

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել. կապիտալը չէ ճանաչում ոչ ազգ, ոչ հայրենիք. նա իսկապէս համաշխարհային է: Եւ իսկական համաշխարհաքաղաքային, իսկական անհայրենիքը (sans patrie), իսկական ապագայինը բուրժուան է: Եթէ նա պաշտպանում է հայրենիքը, ցանկանում է նրա փառքը, նրա մեծուպանում է հայրենիքը, ցանկանում է ապրանքն է, որ խօսում է նրա թիւնը,—դա գերաբարձրած ապրանքն է, որ խօսում է նրա մէջ, ստիպում է նրան շուկայ որոնել կամ գոնէ ունեցած ներքին մէջ, ստիպում է նրան շուկայ որոնել կամ գոնէ ունեցած ներքին շուկան պաշտպանել, պահել իր ձեռքում: Գուցէ նա էլ, իբր

մարդ-արարած, զգուժ է նաև որոշ չափի անկեղծ սէր դէպի իր ծննդավայրը, բայց այդ երևոյթը չափազանց չնչին, չափազանց անզօր է նրա սրտում, երբ նրա դէմ է դուրս գալիս գրպանի շահը, շուկայ ձեռք բերելու հրամայական պահանջը: Բուրժուա- յի հայրենիքը շուկան է, նրա հայրենասիրութիւնն իր սպրանք- ները սաղացնելու հրամայական կարիքն է: «Որտեղ հաց, այնտեղ կաց» ասացածքն ամենից աւելի նրան է սաղում: Հայրենիք և ազգ մի և նոյնն է բուրժուազիայի համար. նա ուզում է ժողովրդ- դով լի մի երկիր, մի ամբողջ անկախ պետութիւն, որը լայն շուկայ լինի իր համար: Բուրժուական դասակարգի այդպիսի հասկացողութեան անմիջական հետեանք է պետութիւն և ազգ հասկացողութիւնների խառնաշփոթութիւնը, որի մասին արդէն խօսել ենք: Լոկ այդ հայրենիքն ու այդ ազգն է, որի վերաբեր- մամբ կարելի է արգարացի համարել շատ սօցիալ-դէմօկրատներ- ըի կարծիքը, թէ «ազգ և հայրենիք» հասկացողութիւնները կա- պիտալիզմի ծնունդ են և իբր այդպիսիք—բուրժուական հաս- կացողութիւններ են: Այդպէս է պնդում և Կ. Կառուսկին այդ խնդրին վերաբերեալ իր հնագոյն երկի մէջ («Մեր ժամանակի ազգութիւնը»):

Այդպէս չէ բանւորի և աշխատանքը գիւղացու ազգասիրու- թիւնը: Նա անկաշառ է գուռ անտեսական տեսակէտից: Աշխա- տաւորի ազգասիրութիւնն անմիջական է և ոչ արգիւնք գրպանի ահի: Նա չը դիտէ մի այլ լեզու քան իր մայրենի լեզուն, որով, ինչպէս ասում է Լադարեակին, նրա կարծիքով, խօսել են Աս- տուած և բոլոր սրբերը. նա չէ ճանաչում մի այլ երկիր, քան իր: Ծննդավայր—հայրենիքը, ուր աշխարհ է կկել և ուր գերեզման է մտնելու: Նա չունի, չէ ըմբռնում որ և է այլ աւանդութիւն, մի այլ տրադիցիա, քան իր ազգինը: Մի խօսքով՝ ազգային զգաց- մունքն ու հասկացողութիւնը նրանում ինքնարուղիս և բնածին են նրան իր ազգի և երկրի հետ կապում է բնութիւնը և, մանաւանդ, անկարողութիւնը. նա բուրժուայի նման միջոցներ չունի, որ երբ ուզենայ՝ թռչի-գնայ: Այդ պատճառով էլ խորապէս ճշմա- բիտ են Գօրցկի հետեանալ խօսքերը. «Ամբողջ երկրագնդի վրայ չէ կարելի գտնել բանւորների մի այնպիսի խումբ, որն իրան չըզգար որ և է ազգի մի մասը: Մինչև անգամ այնպիսի մի զար- դացած պրօլետարիատ, ինչպէս գերմանականը, գուրկ չէ հայրե-

նասիրական զգացմունքից: Բանւոր դասակարգն, ի հարկէ, ամե- նից առաջ մարտնչում է իր դասակարգային շահերին բաւարա- ըութիւն տալու համար, բայց միաժամանակ նա չէ մոռանում, որ ինքն իր ազգի մի մասն է, որի հետ կապւած է լեզւի, տրա- դիցիաների և կուլտուրայի ընդհանրութիւնով. և եթէ իր ժողո- վրդին սպառնում է որ և է վտանգ, նա պատրաստ է պաշտպան կանգնելու նրան»:

Բայց վտանգաւոր է նրա այդ սէրն դասակարգային շահերի տեսակէտից: Նրա դասակարգային գիտակցութիւնը, ազգային այդ զօրեղ զգացմունքի ազդեցութեան տակ, մթնանում, այլա- սեռում է այնտեղ, ուր դոյութիւն ունի ազգային հալածանք: «Եւ այդ սէրը դէպի իր ժողովուրդը, շարունակում է Գօրցկը, այն աստիճանի զօրեղ և բնական է, որ շատ յաճախ բանւոր դա- սակարգը, մարտնչելով ազգային ազատութեան համար, մոռա- նում է, որ իր ժողովրդի մէջ գտնւում է իր «ներքին» թշնամին —բուրժուազիան: Այդ դեռ քիչ է, նա մինչև անգամ տրամադիր է լինում միանալու այդ թշնամու հետ, մոռանալու դասակարգա- յին անտաղծնիզմը և բուրժուազիայի հետ միասին՝ մարտնչելու իր ժողովրդի ազատութեան համար» *):

Այն, այնտեղ, ուր կայ ազգային հալածանք, միշտ իրար են խառնում անտեսապէս իրար հակադիր շահեր ունեցող դասա- կարգերը մի և նոյն ազգի մէջ. տէրն ու ծառան, կապիտալիստը կարգերը մի և նոյն ազգի մէջ. տէրն ու ծառան, կապիտալիստ և բանւորը, գիւղական վաշխառուն, կալածատէրն ու աշխատա- լուր գիւղացիութիւնն, ազգային ընդհանուր վտանգի առջև միշտ ուր գիւղացիութիւնն, ազգային ընդհանուր վտանգի առջև մի մոռանում են իրանց դասակարգային շահերը, միախառնում, մի ընդհանրան ցոյց տալ իրանց ազգին հալածողին: Օրինակներ չը բոլորանան ցոյց տալ իրանց ազգին հալածողին: Սօցիալիստներ չը բոլորակաւ ընդհարումները, յիշենք Գօլիցկինսան հալածանքները հայերի դէմ, յիշենք հրէական պօգրոմներն ամբողջ Ռուսաստանում, հայերի դէմ, յիշենք հրէական պօգրոմներն ամբողջ միջին անտիսէմիտական կամ հակահրէական շարժումն ամբողջ միջին Աւստրալոյում, գերմանացիների և չեխերի ազգային ընդհարումները Մ. Աւստրիայում և այլն, և այլն: Այդ բոլոր ազգային հալա-

*) Ш. Горцевъ—«Какъ можно осуществить равноправіе національностей», Коллективистъ հաւաքածուի մէջ, երես 40.

նւազ տեղ չեն դրաւում նաև հողերի սեփականութեան, հանքերից օգտուելու և այլ տեսակի օրէնքները:

Արտադրական բազմազան ձևերը պահանջում են նաև բազմաաեսակ տեղական գերիշխան իշխանութիւններ, օրէնսդրական և դատական լիազօրութիւններով, իբր գաշնակից մաս մի և անբաժան գաշնակցական պետութեան:

Մեզ ասում են, որ ներկայ կապիտալիստական պետութիւնները, շնորհիւ կենտրոնացող կամ կօնցէնտրացիայի ենթարկւող կապիտալի, պահանջում են պետական օրէնսդրական կենտրոնացում կամ ունիտարիստական պետութիւն, որ այդ կապիտալի կուտակումը դէմ է ֆէդէրալիզմի, բազմազանութեան, որ նա յղկում, հաւասարութեան է վերածում ոչ միայն մի և նոյն պետութեան տարբեր մասերը, այլ նոյն իսկ ուրոյն պետութիւնները, նոյն իսկ համայն մարդկութիւնը:

Ֆէդէրացիայի դէմ սօցիալ-դէմօկրատիայի կողմից յաճախ արւող առարկութեան մէջ մի խոշոր թիւրիմացութիւն, մի «եատու» կայ: Էկօնօմիական յարաբերութիւնները պէտք է խիստ կերպով բաժանել երկու հիմնական մասերի. արտադրական երեւոյթներ և փոխանակական: Այդ երկու շարք երեւոյթներն ունեն իրար հակադիր զարգացում: Այն ժամանակ, երբ փոխանակութիւնը գիւղից, գաւառից ու շրջաններից դուրս է գալիս, երբ նա արհամարհում է պետութիւնների ու նոյն իսկ մայր ցամաքների սահմանները և դառնում է համաշխարային մի երեւոյթ. ճիշտ այն ժամանակ արտադրական պրօցէսսի մէջ մենք նկատում ենք մի այլ, հակոտնեայ շարժում: Կլիմայական, երկրային և բնական մի շարք պայմաններ ստիպում են, որ արտադրութիւնը չը կենտրոնանայ, այլ ասպակենտրոնանայ: Շրջանների բնական պայմանների համաձայն, արտադրութիւնն էլ, քանի գնում աւելի և աւելի մասնագիտանում է այդ շրջանի համար, դառնում է նրան միայն յատուկ մի մասնագիտութիւն: Բնական պայմաններից դատ՝ այդ մասնագիտացմանը և ապակենտրոնացմանը նպաստում է նաև հասարակական պայմանը — կուլտուրան, հասարակութեան զարգացման աստիճանը և այլն *):

*) Դժբաղդարար այդ երեւոյթի վրայ մենք հնար չունենք երկար կանգ առնելու, որովհետև մեր նիւթից շատ կը հեռացնէ մեզ: Այն ինչ չափազանց

Արտադրական երեւոյթներն էլ բաժանւում են երկու տեսակի. 1) այնպիսի երեւոյթներ, որոնք մասնագիտութիւն են մի կամ մի քանի երկրների կամ շրջանների, — օրինակ՝ նաթթը Բագում, մի քանի երկրների կամ շրջանների, — օրինակ՝ նաթթը Բագում, Գրօնօյում, Պենսիլւանիայում, քարածուխն Անգլիայի մի մասում, Ռուսաստանի մի քանի շրջաններում, Գերմանիայի և այլ երկրների զանազան վայրերում և այլն, և այլն: 2) Այնպիսի երեւոյթներ, որոնք կարող են տարածւել և զարգանալ ամեն տեղ, բոլոր երկրներում. այդպէս է ինդուստրիան: Բայց նա էլ ապակենտրոնանալով, յարմարւում է երկրի բնական և կլիմայական պայմաններին:

Ուրեմն՝ արտադրական երեւոյթներն ապակենտրոնանում են: Ուրեմն՝ արտադրական երեւոյթներն ապակենտրոնանում են: Այդ դեռ քիչ է. նրանք նաև տարածւում են աւելի և աւելի: Առաջ մանր և խոշոր արտադրութիւնը զարգացած էր միայն միջնադարեան իտալական հանրապետութիւններում (վէնէզիգ, Ջէնօվա, Միլան, Պիզա, Ֆլորէնցիա և այլն), յետոյ անցաւ, տարածւում էր Անգլիայում, Հանդէյեան քաղաքներում, Հօլլանդիայում, Էնց Անգլիայում, Հանդէյեան քաղաքներում ու Աւստրալիայում: 19-րդ սիսային և Հարաւային Ամերիկաներում ու Աւստրալիայում: 19-րդ դարի կէսերից նա սկսեց մուտ գործել և արագ քայլերով առաջըլիմել նաև Ասիայի ու Աֆրիկայի մի քանի մասերում: Ինդուստրիայի այդ յաղթական ընթացքը շարունակւում է և XX դարում, տրիայի այդ յաղթական ընթացքը շարունակւում է և XX դարում, միայն աւելի արագ տէմպով, քան երբ և է: Գաղաքակրթութեան միակ յարմար ուղին գետնին շրջանում, երբ հաղորդակցութեան միակ յարմար ուղին գետնին էր (Գետային պերիօդ), կուլտուրայի զարգացման տէմպը չափաէր (Գետային պերիօդ), կուլտուրայի զարգացման տէմպը չափազանց դանդաղ էր և քաղաքակրթութիւնը տարածւած էր հին աշխարհի մէջ լօհօաղիանների ձևով, միայն մի քանի սահմանափակ խարհի մէջ լօհօաղիանների ձևով, միայն մի քանի սահմանափակ վայրերում, խոշոր նաւարկելի գետերի ափերին. Եգիպտոս, Ասսի-

հետաքրքիր է այդ հարցի ուսումնասիրութիւնը ոչ միայն մեր նիւթի տեսակէտից, այլ և իբր մարքսիզմի վերաբնութեան մի ուղի: Այդ ուղին մեզ կը ցոյց տայ, թէ որքան միակողմանի են մարքսիզմի գուտ էկօնօմիական հիմքերը: Ով հետաքրքրւում է այդ հարցով, թող գիտէ Ս. Ա. Крѳоткинъ-ի հետեւեալ աշխատութիւններին. 1) «Земледѣліе, промышленность и реализация промышленности» վերնագիրը. 2) «Завоевание хлѣба», մանաւանդ սրա վերջին գլուխները:

կարգաւորումը, այլ, ընդհակառակը, կենտրոնացնել նրան մի կենտրոնական օրէնսդրական հիմնարկութեան ձեռքում» (նոյն տեղ, երես 30):

«Թող «Ռուսաստանի մի մասն անկարող լինի եօլա գնալ առանց միւսի տնտեսական տեսակէտից», բայց, ի նկատի ունենալով աշխարհագրական և կլիմայական ազդեցութիւններէ բոլոր բազմազանութիւնները, որոնց ենթակայ են այդ «մասերի» տնտեսական կեանքը, ի նկատի առնելով նրանց տնտեսական և կուլտուրական մակերևոյթի բոլոր տարբերութիւններն՝ անհրաժեշտ է խոստովանել, որ կենտրոնական օրէնսդրական իշխանութիւնը կարող է քիչ ու շատ կանոնաւորութեամբ և օգտակարօրէն կարգաւորել տնտեսական կեանքի միայն ամենաընդհանուր պայմանները: Ընդհանուր բանակը և նաւատօրմը, մաքսային ընդհանուր օրէնքները և ֆինանսները, ընդհանուր արտաքին քաղաքականութիւնը և առևտրական դաշնադրերը, ընդհանուր դրամը և դրոշմանիշերը,—միթէ դեռ սրանք բաւական «անխզելի» թելեր չեն, ընդունակ կապելու կայսրութեան զանազան մասերը տնտեսական զարգացման ընդհանուր ուղղութեան մէջ: Բայց չէ՞ որ մեր հաշած պետական ֆունկցիաներից դուրս կան մի ամբողջ շարք խնդիրներ և շահեր, սերտ կապած տեղական արդիւնաբերութեան առանձնայատկութիւնների հետ, ինչպէս օրինակ՝—տեղական հաղորդակցութեան ուղիները թէ ցամաքային թէ ջրային, ծոցեր և նաւահանգիստներ շինելը, անտառների և ջրերի պահպանութիւնը, բնական հարստութիւնների շահագործութիւնը, իսկ բաւական նշանաւոր չափով նաև գործարանական օրէնսդրութիւնը, և այլն» *):

Ակներև է, որ տնտեսական կեանքի զարգացումն անպայման պահանջում է ամեն մի ինքնատիւ շրջանի օրէնսդրութիւնը յանձնել բուն տեղական փողովրդի գերիշխանութեանը և ոչ հաճաքել հազարատեսակ զանազանակերպութիւնները, զնել մի կենտրոնի առջև և ստիպել այդ կենտրոնացող մահկանացուներին, գրել այնպիսի օրէնքներ, որ չը փնտսեն ոչ մէկին, օգտակար լինեն այդ բոլոր տարապայման շրջաններին:

*) Базинъ—, „Вопросы децентрализации въ программѣ Р. Г. Д. Р. П.“, въ первомъ сборникѣ „СЕРПА“ երես 128—129.

Տնտեսական կեանքի զարգացումը ձեռնտու է պրօլետարիատին և աշխատաւոր դեւղացիութեանը: Իրանում մի մազ անգամ կասկած չէ կարող տեղի ունենալ: Բայց արդեօք այդ զարգացումը կատարւում է հաւասար չափով ու տէմպով ամբողջ երկրում, օրինակ, Ռուսաստանի բոլոր մասերում: Պատասխանը պարզ է. ոչ, երբէք: Չը կայ որ և է երկիր, որի բոլոր շրջանները, բոլոր մասերը տնտեսական, կուլտուրական և մտաւոր զարգացման մաթեմատիքօրէն մի և նոյն աստիճանի վրայ կանգնած լինեն: Իսկ մասնաւորապէս Ռուսաստանում մասերի զարգացման այդ տարբերութիւնները հսկայական են:

Իրանից անմիջապէս բղխում է ֆէդէրացիայի երրորդ հիմքը: Որքան մի պետութիւն աւելի ընդարձակ, աւելի լայնածաւալ է և զանազանակերպ, այնքան աւելի ստիպողաբար անհրաժեշտ է նրան դարձնել ֆէդէրալիստական, որովհետև աշխատաւոր մարդէ նրան դարձնել ֆէդէրալիստական, որովհետև աշխատաւոր մարդէ կութեան շահը պահանջում է այդ բանը հետևել տեսակէտից:

Դէմօկրատիական բարենորոգումներ և բարեփոխութիւններ աւելի հեշտ է ներմուծել մի դաշնակցական դէմօկրատիական հանրապետութեան մէջ, քան ցէտրալիստական: Կենտրոնացման դէպքում օրէնսդր մտքին մէջ ձայների բազմութիւնը որոշողը լինելու է կուլտուրական միջին և նազ չափի զարգացում ունեւելիլու է կուլտուրական միջին: Առաջընթաց և լուսամիտ ցող շրջանների պատգամաւորութիւնը: Մի քանի զարգացած շրջանները լինելու են աւելի նազ թւով: Մի քանի զարգացած շրջանների համար հասունացած կարող է լինել, օրինակ, կանանց ընտրական իրաւունք տալու խնդիրը, գործարանական նոր ու կարևոր օրէնքներ սահմանելը, ծերացած աշխատաւորներին կենկարևոր օրէնքներ սահմանելը, ծերացած աշխատաւորներին այդ խնդիր-սաթոշակ նշանակելու հարցը, և այլն, և այլն: Այդ զարգացած շրջանների պատգամաւորների բոլոր առաջարկներն այդ խնդիրների վերաբերմամբ պիտի տապալեն, որովհետև միւս շրջանների վերաբերմամբ կարգ լինի, ամեն շրջան իր զարգացումը, որ մեծամասնութիւն են կազմում, հասունացած չեն այդ չափ:

Իսկ եթէ ֆէդէրատիվ կարգ լինի, ամեն շրջան իր զարգացման համեմատ բեֆօրմներ կը մտցնի: Այսպէս Միացեալ-Նահանգների և Աւստրիայի մի քանի շտամներում կանանց տրւած են ընտրելու և (Աւստրալիայում) ընտրելու իրաւունք իբր քահանայական գործիչ, իբր օրէնսդր մարմնի անդամ, այն ինչ այդ կարգական գործիչ, իբր օրէնսդր մարմնի անդամ, այն ինչ նոյն երկրներն, իբր ամբողջութիւն, դեռ հասունացած չեն այդ նոյն բեֆօրմների համար: Աւստրիական դաշնակցութեան մի քանի

Շւէյցարական համայնքն այնպիսի ինքնավար իրաւունքներ ունի, որոնց նմանը ուրիշ ոչ մի երկրում, նոյն իսկ Անգլիայում, դժւար է գտնել: Ընա, իբր մի քաղաքացիական անձնաւորութիւն, ունի սեփականութեան իրաւունք, կատարում է ոստիկանական պարտաւորութիւններ իր տէրրիտօրիայում, վարում է աղքատներին օգնելու գործը և դպրոցական վարչութիւնը: Համայնական գործերը վարելիս՝ նա գործում է իր քաղաքացիների ընդհանուր ժողովով, որ խիստ նման է Նոր-Անգլիայի գիւղական միախնդին (town meeting)» *): Բացի դրանից համայնքը դիտւում է նաև իբր պետական-վարչական բաժանում և, իբր այդպիսին, ունի յատուկ իրաւունքներ. օրինակ, նա հանդիսանում է իբր ընտրողական շրջան, բէֆէրէնդումի ղէպքում՝ ձայն է տալիս նոյնպէս իբր յատուկ շրջան և այլն: Այս վերջին ղէպքում համայնքը ենթակայ է կանտօնային իշխանութեան կօնտրօլին, իսկ իբր զուտ տեղական համայնք, նա՝ միանգամայն զերծ է ամեն տեսակ խնամակալութիւնից և որ և է իշխանութեան հսկողութիւնից: Նա ազատ համայնք է, ազատ դաշնակցական մի երկրում:

Միացեալ-Նահանգներում էլ տեղական ինքնավարութիւնը խիստ լայն չափեր ունի: Ամեն մի նահանգ բաժանւում է կամ գիւղական շրջանների (Township) կամ կոմսութիւնների (County), իսկ դրանք բաժանւում են դպրոցական շրջանների (School district), գիւղերի (Town) և քաղաքների (City): Այդ բոլոր բաժանումներն ունեն տեղական ինքնավարական լայն իրաւունքներ, սակայն ամենից աւելի լայն ինքնավարական իրաւունքները պատկանում են համայնքին կամ գիւղին, որը կառավարում է իր գործերը գիւղական ժողովով կամ միախնդով:

Տեղական ինքնավարութեան ձևերն ու բաժանումները չափազանց բազմազան են Մ.-Նահանգներում: Այդ բազմատեսակ հիմնարկութիւնների ամենաթուուցիկ նկարագրութիւնն անգամ մեծ ճաւաղ և ժամանակ կը պահանջէր, այդ պատճառով մենք կը բաւականանանք յիշելով միայն տեղական ինքնավարութեան ֆուկցիաները **):

Տեղական ինքնավարութեան իրաւասութեան տակ են. ու-

*) Вильсонъ—Ibid—երես 280.

***) Ով ուղում է մանրամասն տեղեկութիւններ այդ մասին, թող դիմէ Բրայսի աշխատութեան II և III հատորներին, Վիլսօնի զրբի 451—468 երեսնե-

տիկանութիւնը, սանիտարական գործը, աղքատների խնամատարութիւնը, դպրոցների պահպանութիւնը և նրանց կառավարութիւնը, ճանապարհների և կամուրջների շինելը և նրանց պահպանութիւնը, առևտուր անելու թոյլտուութիւնը, հարկերի բաշխումը և բարձումը, ստորին աստիճանների արդարադատութիւնը, դատական վարչութեան և բանտերի շէնքերի պահպանութիւնը և ուրիշ բոլոր այն պարտականութիւնները, որոնք վերաբերում են կարգի պահպանմանը, յարմարութիւններին, կենսական կօնֆօրտին և բարեկեցութեանը,—մի խօսքով, այն բոլոր սովորական պարտականութիւնները, որոնք յատուկ են մի հանրատեղական ինքնավարութեան պարտականութիւններն ստանում կան պաշտօնատար անձերն իրանց լիազօրութիւններն մէջ: Տեղատեղական ինքնավարութեան պարտականութիւններն ստանում են Նահանգի օրէնքների ուժով, բայց գործնական կեանքում Նահանգի կենտրոնական իշխանութիւնը հանդիսանում է լոկ իբր միահանգի կենտրոնական իշխանութիւնը հանդիսանում է լոկ իբր միացուցիչ մի օղակ տեղական վարչութիւնների: Տեղական վարչութիւններն են հանդիսանում Նահանգի իսկական կառավարութիւնը*):

Անկասկած, տեղական ինքնավարութեան բոլոր պաշտօնատեղներն ընտրւում են այս կամ այն ձևով: Բիւրօկրատիզմը տեղային Նահանգների և տեղական ինքնավարութիւնների սահմաններում: Միակ բիւրօկրատիզմը երևան է զալիս զաշնակցական կենտրոնական իշխանութեան մի քանի ֆունկցիաներում, այն էլ այնքան չնչին չափով, որ համարձակ կարելի է պնդել թէ Միացեալ-Նահանգները համարեն զերծ են բիւրօկրատական ախաից:

Երբորդ խոշոր ֆէդէրացիան—Գերմանիան—իբր այդպիսին՝ զերծ է բիւրօկրատիզմից, բայց իբր մասնաւոր պետութիւններ, նրա մասերը լիապէս տառապում են բիւրօկրատիզմի և իւնկերութեան ճանկերում:

Բիւրօկրատիզմը սերտ կերպով կապւած է ցէնտրալիզմի հետ: Ճշմարիտ է, վարչական, դատական և օրէնսդրական խիստ և հետևողական կենտրոնացումն է բիւրօկրատիզմի դրախտը: Նրա կլասիքական հայրենիքներն են Ռուսաստանը և Ֆրանսիան:

Երև, Միթակիլ Լուրջ աշխատութեանը՝ «Исторія великой амер. демократии» և այլն:

*) Вильсонъ—ibidem—երես 452, § 1210.

Մակայն օրէնսդրական կենտրոնացումն էլ զուրկ չէ այդ նոյն ազգեցութիւնից: Ունիտար պետութիւններէց միայն Անգլիան է ազատ այդ քաղաքական և քաղաքացիական հիւժախտից—բիւրօկրատիզմից. միայն, կրկնում ենք, դա էլ պէտք է բացաարել ոչ միայն վարչական ամենալայն ապակենտրոնացումով, այլև տնօրինական ժողովրդի պատմական, իրաւական և այլ դարևոր սովորութիւններով:

Մեր աշխատութեան II և III գլուխներում բաւական խօսել ենք բիւրօկրատիզմի մասին, այնպէս որ այլ ևս այստեղ նրա կատարած դերի, նրա ծագման ու զարգացման վրայ կանգ չենք առնի: Մենք բաւական երկարօրէն կանգ ենք առել նաև հանրապետութեան ու բիւրօկրատիզմի վրայ, բազմաթիւ ցիտատներ բերելով Կառուցիկը: Այժմ էլ առաջ բերենք մի քաղաքաբնական մարքսիստ յայտնի Մասլովից և վերջացնենք այդ արդէն խիստ պարզ ու ընդհանրութեան սեփականութիւն դարձած խնդիրը *):

«Մարքսիստի տեսակէտով, ասում է Մասլովը, դէմօկրատիական կազմն այնուամենայնիւ բուրժուական կազմ է, իր բոլոր բացասական կողմերով: Քանի դեռ դէմօկրատիական մեծամասնութիւնը չէ ազատել խոշոր բուրժուազիայի շահերի իշխանութիւնից՝ պէտք է երկրորդ նայել այդ իշխանութեան գլխաւոր օրդանը ուժեղացնելու ամեն մի փորձի վրայ: Այդ պատճառով հողի ազգայնացման նախագիծը ոչ միայն ուսուպիական է, այլ և... ֆլասակար է դէմօկրատիայի համար, որովհետև ուժեղացնում է բիւրօկրատիզմը, որը դոյութիւն ունի նաև դէմօկրատիական պետութեան մէջ» **):

Հողերի ազգայնացումը, Մասլովի կարծիքով, ցէնտրալիզմ է. իսկ ցէնտրալիզմը բերում է իր ետևից բիւրօկրատիզմ: Այսինքն՝ այն ինչ որ պէտք էր ապացուցել:

Բիւրօկրատիական հիզրան վերացնելու միակ ուղին է վարչական, դատական և օրէնսդրական ապակենտրոնացումը: Նրան սպասում է միայն ֆէդերատիվ դէմօկրատիական հարապետութիւնը:

*) Որ ցէնտրալիզմը և բիւրօկրատիզմն իրարից անբաժան են, որ բիւրօկրատիզմը կործանիչ մի երևոյթ է պետութիւնների ներսում, որ նա կապւած չէ ոչ հանրապետութեան, ոչ էլ միապետութեան ու պարլամենտարիզմի հետ,—դա արդէն այսօր դառել է մի հանրածանօթ երևոյթ:

**) «Правда» ամսագրում, սեպտ.-հոկտ. համարը, 1905 թ.

Ֆէդերալիզմ, ցէնտրալիզմ, կարգաւորում

Բիւրօկրատիզմի վերացումը խիստ օգտակար և ձեռնառու է աշխատաւոր ժողովրդի համար:

Այդ տեսակէտից էլ ֆէդերացիան օգտակար է պրօլէտարիատի և աշխատաւոր գիւղացիութեանը: Ուրեմն՝ այդ պատճառով էլ ամեն մի իսկական սօցիալիստական կուսակցութիւն պիտի պահանջէ դէմօկրատիական դաշնակցական հանրապետութիւն:

Այսպէս ուրեմն ազգային հարցի գոնէ մասնակի լուծման, երկրի էկօնօմիական զարգացման, մի և նոյն երկրի զանազան մասերի կուլտուրական տարբերութիւնների, նոյն մասերի արտադրական տարբեր ճիւղերի և նրանց յատուկ օրէնսդրութեան անհրաժեշտութեան և, վերջապէս, բիւրօկրատիզմի վերջնական անջնացման տեսակէտներից—աշխատաւոր ժողովրդի շահը պահանջում է ամեն մի երկրի, ամեն մի պետութեան համար ֆէդերատիվ կազմակերպութիւն:

Ֆէդերացիայի հիմքերը համառօտակի պարզարանելուց յետոյ, դիմենք այն առարկութիւններին, որ անում են նրա դէմ հակառակորդները: Պատասխանենք գլխաւորապէս սօց. դէմօկրատիական բանակից եկող յարձակումներին, որովհետև աշակողմեան կուսակցութիւնները արած բնագրատութիւնները զրօշի արժէք չունին. պէտք է «թողնել մեռելներին թաղելու իրանց մեռելները»:

Մենք արդէն պատասխանեցինք ս. դէմօկրատներին «ամենասիրելի» և ամենից աւելի կատարուող առարկութիւններին. ա) որ նա վնաս որ ֆէդերացիան բուրժուական կատեգորիա է, բ) որ նա վնաս է պրօլէտարիատի շահերին, որովհետև պառակտում է նրա բանակի ամբողջութիւնը և թուլացնում նրա դիմադրական ոյժը, գ) որ նա վնասում է երկրի ինդուստրիայի զարգացմանը:

Մենք ապացուցեցինք, որ ֆէդերացիան անպայման օգտակար է աշխատաւոր դասակարգերին, որ այդ դասակարգերի շահը պահանջում է հրամայաբար ներմուծել երկրում ֆէդերատիվ կազմ, որ նա ոչ միայն չէ ֆլաստում երկրի ինդուստրիայի զարգացմանը, այլ աւելի ևս նպաստում է նրա զօրանալուն:

Ասում են (մանուաւնդ լեհական ս. դէմօկրատները), որ ֆէդերատիվ կազմը ֆլաստում է պրօլէտարական բանակին, որովհետև նրան բաժան-բաժան է անում. իսկ դա թուլացնում է պրօլէտարիատի դիմադրական ոյժը,—այն ինչ մի և միաձոյլ կենտրոնացած բանւորական բանակի դիմադրական ոյժը զօրաւոր կը

Ֆէդերացիայի հիմքերը: Պատասխանեցինք ս. դէմօկրատներին

Ֆէդերացիայի հիմքերը

Կովկասում, մտցնել նոր վարչական բաժանումներ, հիմք ընդունելով ներկայ գիւղը և գիւղախումբը (волость): Այդ նոր բաժանման մէջ ղեկավար սկզբունք պէտք է ծառայէ ազգային և լեզուական տեսակէտը:

Այս նախնական նկատողութիւններն անելուց յետոյ, անցնենք թւերին: Այստեղ մեզ իբր աղբիւր ծառայում են «Кав. Календарь»-ը 1897-ի, Կ. Ֆորտունատովի մի բրոշիւրը—«Национальные области России» («Ռուսաստանի ազգային շրջանները»), հրատարակած 1906 թւին և Կովկասեան Վիճակագրական Կոմիտէի տեղեկատուները:

Պ. Ֆորտունատովը, յենկելով 1897-ի վիճակագրութեան վրայ, հետեւեալ տախտակն է առաջ բերում.

Ժողովրդների անունները	Թիւը	Ազգաբ. 0/0	Ժողովրդների անունները	Թիւը	Ազգաբնակ. 0/0
1) Վելիկորոսներ	55,673,000	— 43,30	13) Վրացիներ		
2) Մալորոսներ	22,415,000	— 17,41	(Իմէրէլ, մինգր., սևանէթներ)	1,352,000	— 1,05
3) Լեհեր	7,931,000	— 6,17	14) Հայեր	1,173,000	— 0,91
4) Բելորոսներ	5,886,000	— 4,57	15) Մոլդաւաններ և ուկրաիններ	1,122,000	— 0,87
5) Հրէաներ	5,063,000	— 3,94	16) Մորդաւաներ	1,024,000	— 0,79
6) Խրիզներ	4,084,000	— 3,18	17) Էստեր	1,003,000	— 0,78
7) Թաթարներ	3,738,000	— 2,91	18) Սարտեր	969,000	— 0,75
8) Ֆիններ	2,191,000	— 1,71	19) Չուվաշներ	844,000	— 0,66
9) Գերմաններ	1,790,000	— 1,40	20) Էօզրէկներ	727,000	— 0,57
10) Լիտովցիներ և ժմուտներ	1,658,000	— 1,29	21) Լէզգիներ	601,000	— 0,47
11) Բաշկիրներ և Տէնտեարներ	1,439,000	— 1,12	22) Սրանց հետ հաշուելով նաև միւս մանր լեռնականներին.	1,092,000	— 0,85
12) Լատիշներ	1,436,000	— 1,12			

Մտնում են ուրիշ բազմաթիւ մանր ազգութիւններ, որոնց թիւը կէս միլիոնից պակաս լինելով, հաշւի չեն առնւած:

Պետութեան գլխաւոր մասերում ազգաբնակչութիւնը խօսում է հետեւեալ լեզուներով.

1 Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգներում տիրապետող տարրը ուսաներն են (ընդամենը 80⁰/0). վելիկորոսներ—52⁰/0, մալորոսներ—21,7⁰/0, բելորոսներ—6,3⁰/0, լիտովցիներ, լատիշներ

և ժմուշներ—3,4⁰/0, հրէաներ—4⁰/0, միւս ազգութիւնները—11,3⁰/0:

II Լեհաստանի ազգաբնակչութիւնն անհամեմատ աւելի միատեսակ է. լեհերը տիրող տարրն են կազմում—71,8⁰/0, հրէաները—13,5⁰/0, ուսաները—6,7⁰/0, որի մէջ են և զօրքերն ու պաշտօնեաները,—միւս ազգութիւններն ընդամենը 8⁰/0:

III Ֆինլանդիայում ազգաբնակչութիւնը կազմւած է միայն 2 տարրից. ֆիններ—86,1⁰/0, շվեդներ—13,5⁰/0, այլ ազգութիւններ միայն—0,4⁰/0:

IV. Կովկասն այդ կողմից շատ աւելի բազմազան է: Նա բազկացած է երկու խոշոր մասերից.—Հիւսիսային Կովկաս, որի բազկացած է երկու խոշոր մասը բազկացած է ուսաներից (մալորոսներ և Մալորոսի շրջաններում, ուր նրանք կաշնաւանդ կուրանի և Ստաւրոպոլի շրջաններում, ուր 47⁰/0-ը վեմում են 91,6⁰/0, որից 44⁰/0-ը մալորոսներ են, իսկ 47⁰/0-ը վելիկորոսներ). յետոյ գալիս են չէչէնները, նոգայները, կոմսիլները և ուրիշ լեռնական ցեղեր: Անդրկովկասում տիրողները 3 խոշոր ցեղերն են.—Թաթարներ—23,6⁰/0, վրացիներ, որոնց հետ առհասարակ հաշուում են և իմէրէլներին, և գուրիայցիներին, և մինգրսարակ հաշուում են և իմէրէլներին,—20,8⁰/0, հայեր—16,9⁰/0. յետոյ գալիս են լեռնականները, որոնք իսկապէս գուրս են Անդրկովկասի իսկական սահմաններից—15,7⁰/0, ուսաներ—9,4⁰/0. պարսկական ժողովրդներ (քիւրդեր, ֆարսիներ և այլն)—3,8⁰/0, օսեր—2,6⁰/0, ուրիշ ազգեր—7,2⁰/0:

Այնուհետև պ. Ֆորտունատովը բերում է Սիբիրի և Միջին-Ասիական շրջանի ազգաբնակչութեան թւերը, որ մեզ չէ հետաքրքրում, դրա համար աւելորդ ենք համարում առաջ բերել:

Առաջ բերելով ամբողջ Ռուսաստանի նահանգների ազգաբնակչութեան կազմը, հեղինակն առաջարկում է հետեւեալ ազգային և երկրային բաժանումը.

	1 շրջան	8,696,000	բնակչով
1) Լեհաստան	— 1	7,328,000	»
2) Բելորոսիա	— 1	5,046,000	»
3) Շուրըբալտեան	— 3	27,228,000	»
4) Մալորոսիա	— 1	6,157,000	»
5) Կովկաս	— 1	7,490,000	»
6) Միջին-Ասիա	— 1	6,015,000	»
7) Սիբիր	— 7	57,680,000	»
8) Վելիկորոսիա			
Ընդամենը	16 շրջան կամ 16 «շտատ»:		

Մեր նպատակը չէ քննադատել Թորտունատովի առաջարկած ծրագիրն ամբողջ Ռուսաստանի վերաբերմամբ. մենք մի կողմ կը թողնենք Եւրօպական Ռուսաստանը, Լեհաստանը, Ֆինլանդիան, Միբրը, Միջին-Ասիան և նոյն իսկ Կովկասի մի մասը և կըզրադւենք միայն վերջինիս մի մասովը, որ կրում է Անդրկովկաս անունը: Թողնում ենք այդ բոլոր ընդարձակ երկրին վերաբերող ծրագիրը քննադատութեան ենթարկելու և սեփական նախագծեր կազմելու սօց. յեղափոխականներին և ուրիշ կուսակցութիւններին, որոնք աւելի են շահագրգռւած այդ հարցով *): Յամենայն դէպըս՝ պ. Թորտունատովի ծրագիրը, որքան էլ որ նա թերի լինի, այնուամենայնիւ ցոյց է տալիս, որ Ֆէդէրատիվ կազմի համար որոշ հող և հնարաւորութիւն կայ ուսական ընդարձակ պետութեան մէջ: Պ. Թորտունատովը կանգ է առել գլխաւորապէս ազգային տեսակէտի վրայ, իսկ ուրիշները կարող են նոյն բաժանման ծրագիր առաջարկելիս՝ աչքի առաջ ունենալ ազգ-երկրային սկզբունքը:

Մեր կարծիքով, Կովկասը, մտնելով ուսական ապագայ Միացեալ-Նահանգների մէջ իրը մի Ֆէդէրատիվ մաս, պէտք է ունենայ իր ներքին ֆէդերացիան: Կովկասը պէտք է բաժանել երեք որոշ շրջանների, որոնց թէ ազգաբնակութեան, թէ երկրի կազմը և թէ կլիման ու բնոյթը հիմնականապէս տարբեր են իրարից: Այդ երեք մասերն են—Հիւսիսային Կովկաս, որի ազգաբնակութեան մեծամասնութիւնը կազմում են ուսները, Լեոնային Կովկաս, որի բնակիչները կովկասեան բազմազան լեոնցիներն են, և Հարաւային Կովկաս կամ զուտ Անդրկովկաս, որի ազգաբնակութեան գլխաւոր տարրերը կազմում են թուրքերը, վրացիները և հայերը: Ահա այս մասն է, որ մեզ հետաքրքրում է ամենից աւելի և դրա մասին է, որ ուզում ենք ասել մի քանի խօսք:

Ներկայումս մեզ հետաքրքրող այդ շրջանում գտնուում են հետևեալ բաժանումները. Բագրի, Գանձակի, Երևանի, Թիֆլիսի և

*) Եւ պ. Թորտունատովի նախագիծն արդէն սկսել է զրադեցնել ուսական մամուլին և կուսակցութիւններին: Այսպէս Մ. Борисовъ-ը, որ կազմում է «Հրէական Սօցիալիստական Բանւորական կուսակցութեան» (ՄեՐՊ) սիւներից մէկը, 54 խոշոր երեսանոց մի յօդւած է ներկել այդ նախագիծին (Տես «СЕРП»—Сборникъ первый—статья М. Борисова—«Наши Задачи»):

Քութայիսի նահանգները, Կարսի և Բաթումի շրջաններն ու Զաքաթալի շրջանակը կամ օկրուգը:

Վրացիները (գուրիացիները, իմէրէները, մինգրէները, սւանէթները և մի քանի ուրիշ մանր ցեղեր հետը հաշւած) բըռնել են Քութայիսի և Թիֆլիսի նահանգները, բայց ոչ ամբողջանել են: Թիֆլիսի նահանգի երկու հարաւային գաւառները կարելի պէս. Թիֆլիսի նահանգի երկու հարաւային գաւառները և Բօրէ համարել զուտ հայկական. դրանք են—Ախալքալաքի և Բօրէ համարել զաւառները, իսկ Ախալցխայի գաւառը պատկանում է օւշալուի գաւառները, իսկ Ախալցխայի գաւառը կարելի նահանգից էլ մանեան թուրքերին և մասամբ հայերին: Քութայիսի նահանգից էլ մանեան թուրքերին և մասամբ հայերին: Բացի այդ, պէտք է լինի գաւառը կրկին թուրքերով և հայերով: Բացի այդ, պէտք է նկատել, որ Թիֆլիսի գաւառը չափազանց խառը և համարեա նկատել, որ Թիֆլիսի գաւառը չափազանց է բազկացած: հաւասարազօր ազգութիւններից է բազկացած:

Վրացիք մասամբ տարածւած են և Զաքաթալայի շրջանակում ուր նրանք կազմում են չնչին տոկոս, իսկ լեզգիները կազմում են համեմատական մեծամասնութիւն—47,60/0:

Թուրք ցեղը փոքր թիւ է ներկայացնում: Նրա տարածման շրջաններն են. Օլթիի գաւառը (62,3 տոկ.) և Արգահանի գաւառը (է2,7 տոկ.), Կարսի շրջանում և Արթւինի գաւառը (73,6 տոկ.) և նահանգում: Նրանք կազմում են համեմատական մեծամասնութիւն նաև Ախալցխայի գաւառի միջին և հիւսիսային մասերում:

Թաթար ցեղը (Ատրբէջան, Ղարափափաղ և այլն) տարածւած է Բագուի նահանգում, Գանձակի և Երևանի նահանգների մի մասում: Բագուի նահանգում նրանք մեծամասնութիւն են կազմում համարեա բոլոր գաւառներում: Այդտեղ նրանց հետ խառնւած են բաւական խոշոր թւով պարսկական ծագումի ցեղեր. —Քաթերը—Բագուի և Ղուրայի գաւառներում, թալիշցիները—Լէքեօրանի գաւառում: Միւս 3 գաւառներում թաթարները կազմում են 78,3 տ., իսկ հայերը—8,3 տ.: Այսպիսով ամբողջ Բագուի նահանգում թաթարները կազմում են 58,7 տ., պարսկական ծագումի ցեղերը—15,6 տ., հայերը—6,3 տ. և ուսները—8,9 տ.:

Գանձակի նահանգում ապրում են թաթարներն ու հայերը իրար հետ խառը: Թաթարներն ամբողջ նահանջում կազմում են 60,2 տ., հայերը 33,2 տ.:

Պէտք է նկատել, որ Գանձակի նահանգի գաւառներն այն-

քան անխնամ են կազմած ազգութիւնների ամբողջացման տեսակէտից, որ երկիրն անձամբ չը ճանաչող բոլոր հետազոտողները սխալ գաղափար կը կազմեն ազգութիւնների բնակավայրերի մասին: Պաշտօնական թւերից այնպէս է դուրս գալիս, որ հայերն ու թուրքերն ապրում են իսկապէս այնքան խառն, որ նրանց բնակավայրերի սահմաններ դնել, գէթ մօտաւորապէս, անհնար է, և որ այդ նահանգը պէտք է համարել թաթարական:

Դա մի չափազանց խոշոր թիւրիմացութիւն է: Գանձակի նահանգի բոլոր լեռնային մասերը բռնել են հայերը: Իսկ դաշտային մասերը թաթարները: Այսպէս՝ Գանձակի գաւառում Գանձակ քաղաքից դէպի դաշտը, դէպի Կուրի հովիտը՝ թաթարների բնակավայրն է, իսկ դէպի հարաւ, դէպի լեռնային մասը տարածւած են հայկական գիւղերն ու ավանները: Դաշտային մասերում հայերը չափազանց քիչ են, լեռնային մասում նրանք անպայման մեծամասնութիւն են, իսկ թաթարները խիստ նւազ Այդ լեռնային մասերում առհասարակ թաթարներն աւելանում են ամառները, քօչը սար գնալու ժամանակ:

Թարթառի կամ Ջիւանշիրի գաւառը ևս խիստ կերպով բաժանւած է երկու մասի. դաշտային մասը—Թարթար գետի հովիտը՝ մինչև լեռնային հին Սաչէն գաւառը, կազմում է թաթարների բնակավայրը, իսկ լեռնային մասը զուտ հայկական ինչէն գաւառն է, համարեն առանց թաթարների:

Կուրի ամբողջ հովիտը, Եւրախից մինչև Աղզամ, մինչև հոչակաւոր Ասկեարանը չը կայ ոչ մի հայ գիւղ: Ասկեարանի կիրճի երկու կողմից սկսւում են երկու լեռնաշղթաներ, որոնցից մէկը գնում է դէպի Մոաւ, իսկ միւսը գնում է դէպի Ջիրբայէլի գաւառը. այդ լեռների թէ հիւսիսային և թէ հարաւային փէշերը բռնւած են հայկական խիտ գիւղերով. այդտեղից սկսւում է Շուշու գաւառը, ուր հայերը կազմում են, նոյն իսկ 1897-ի պաշտօնական թւերի հիման վրայ, ազգաբնակչութեան 53,2 տոկոսը: Ազգախ գաւառն էլ բաժանւած է երկու որոշ մասերի. Ազգախ քաղաքն ու Աղլատափա գետի տափարակը, բռնւած է թաթարներով, իսկ լեռնային շերտը, բռնւած է զրեթէ բացառապէս հայերով:—Չանգեզուրի գաւառում ներկայումս արդէն 46,4 տոկոսը հայերն են կազմում, իսկ եթէ հանենք նրա այն մասը, որ իջնում է Երասխի տափարակը, կրկին լեռնային մասը կը դառնայ հայկական մի կենտրոն: Ջիր-

բայէլի գաւառի մի մասը (Հաղբութն իր շրջակայ հայ գիւղերով) քանի ժամանակ է խնդիր-խնդրի ետևիցն են ուղարկում, որ կան վարչութեանը, համարել իրանց շրջանը Շուշու գաւառի մի մասը, որովհետև աշխարհագրապէս նոյն իսկ տարածութեան տեսակէտից՝ դա աւելի յարմար է և ձեռնաու գիւղացիների համար: Բայց սվ է լսողը, սվ է ազգաբնակչութեան շահը, նրա յարմարութիւնը հարցնողը:

Երևանի նահանգում էլ թաթարները կազմում են մեծամասնութիւն Սուրմալուի, Նախիջևանի և Շարուր-Դարալագեհազի գաւառներում: Բացի Սուրմալուի քիւրդ-կիլտական գաւառից, միւս լեռներում: Բացի Սուրմալուի կարելի է ասել, որ Երասխի ափերն երկու գաւառների համար էլ կարելի է ասել, որ Երասխի ափերն աւելի թաթարանոց են, իսկ դէպի լեռները՝ հայանոց:

Այսպիսով կազմւում է հայ ազգի համար հետևեալ բնակավայրը. Ախալցխայի գաւառի հարաւային մասը, Ախալքալաքի գաւառը, Բօրչալուի գաւառը, Ազգախ լեռնային մասերը, Կի և Թարթառի կամ Ջիւանշիրի գաւառների լեռնային մասերը, Կի և Թարթառի կամ Ջիւանշիրի գաւառները, հետը միացրած Ջիրբայէլի հայ-Շուշու և Չանգեզուրի գաւառները, հետը միացրած Ջիրբայէլի հայ-Շուշու և Չանգեզուրի գաւառները, Երևանի, Էջմիածնի և Ալէքսանդրական շրջանը, Նոր-Բայազէզի, Երևանի, Էջմիածնի և Ալէքսանդրական շրջանները, Կարսի և Կաղզանի շրջանները, Շարուր-Ղրապօլի գաւառները, Կարսի և Կաղզանի գաւառների լեռնային մասերը: Այս Դարալագեհազի և Նախիջևանի գաւառները բնակավայր, որի ամբողջ շրջանը կազմում է մի ամբողջացած բնակավայր, որի մէջ մօտաւորապէս 55—65⁰/₀-ը կազմում են հայերը:

Կովկասեան վրճակազրական կօմիտէի տեղեկատուն 1903 թւականի համար հետևեալ թւերն է տալիս հայերի վերաբերմամբ:

20ւտ Անգրկովկասում հայերի թիւն ունի այս պատկերը.	
1) Երևանի նահանգում	510,975 հոգի
2) Կարսի շրջանում	92,497 »
3) Գանձակի նահանգ.	309,858 »
4) Թիֆլիսի նահ.	265,985 »
5) Բազուի նահ.	88,520 »
6) Բաթումի շրջանում	27,670 »
7) Քութայիսի նահ.	3,824 »
8) Սև-ժովեան շրջան	7,689 »
9) Չաքաթալայի շրջ.	2,500 »

Գուժար 1,309,518 հոգի

Այդ ընդհանուր թւից մեր յիշած հայկական բայօնում բնակ-
ւում են մօտաւորապէս 7—800,000 հայ, իսկ մնացածը ցրւած են
թաթարական, թուրքական և վրացիական բայօններում, տեղ-
տեղ իբր չնչին, տեղ-տեղ էլ իբր բաւական ազդու և զգալի
փոքրամասնութիւններ:

Աւելորդ ենք համարում բերել այստեղ բոլոր հայկական
գաւառների հայերի թւերը և մէր ասածն ապացուցել, որովհետև
թւերը չափազանց մեծ տեղ են բռնելու: Աւելորդ է դա մանա-
ւանդ այն տեսակէտից, որ մի քանի գաւառների լեռնային և դաշ-
տային մասերի համար յատուկ թւեր չը կան, որ հնարաւոր դար-
ձնեն այդ ձևի ուսումնասիրութիւն: Մնում է կազմել ազգութիւն-
ների վիճակագրութիւն ըստ գիւղերի և գիւղախմբերի և յետոյ
միայն դրանից հանել ընդհանուր թւեր, դժելով ամեն մի ազ-
գութեան ընակավայրի մօտաւոր սահմանը:

Առ այժմ այսքանը պարզ և ակնեւ է. վրացիներն ունեն
իրանց տարածման բաւական որոշ սահմաններ, որոնց մէջ
նրանք կազմում են մի կօմպակտ մեծամասնութիւն. դա Քութա-
խի և Թիֆլիսի նահանգների մեծագոյն մասերն են: Թաթար ցե-
ղի ընակավայրը կազմում են Կուրի և Երասխի հովիտները, մա-
սամբ Կասպից ծովի հարաւ-արեւմտեան ափի տափարակները: Իսկ
հայկական նահանգը կազմում են մեր յիշած լեռնային գաւառնե-
րը, Զիրբայէլի սահմանից սկսած մինչև Թիւրքիա, Երասխի ա-
փերից սկսած մինչև Ախալցխայի գաւառը: Այդ սահմաններում
հայերը ևս կազմում են բաւական խոշոր մեծամասնութիւն,
ի հարկէ ոչ այնքան կօմպակտ ու միապաղաղ, որքան թաթարա-
կան կամ վրացիական մասսան, բայց և այնպէս մի այնպիսի
ամբողջութիւն, որն իրաւունք կը տայ պահանջելու հայ ժողովր-
դի համար օրէնսդրական, դատական և վարչական ապակենտրո-
նացում *):

*) Հետեւել գաւառներում հայերը կազմում են բացարձակ և համեմա-
տական մեծամասնութիւն.

1) Ալէքսանդրապ. գաւ.— 135,004 հողի.	6) Ախալքալաքի գաւ.— 56,562 հ.
2) Նոր-Բայազէտի » 82,815 »	7) Բօրչալուի » 47,053 »
3) Էջմիածնի » 86,069 »	8) Շուշու » 59,231 »
4) Կարսի շրջանակ 31,375 »	9) Զանգեզուրի » 77,986 »
5) Կաղզւանի » 24,391 »	10) Դազախի » 44,411 »

Գումար՝ 645,197 հ.

Զգում ենք, որ մեր բերած թւերը բաւական ճիշտ չեն.
զգում ենք, որ նրանցում շատ բան թէական է... Իս նշանակում
է, որ մեծ կարիք կայ ուսումնասիրութիւններ կատարելու: Այդ
ամենն զգալուց յետոյ, անուամենայնիւ մենք հաստատ համոզւած
ենք, որ անկողմնակալ ու չը նախապաշարւած միտքն այս բոլոր-
ից դուրս կը բերէ այն եզրակացութիւնը, որ Կովկասում հնա-
բաւոր է Ֆէդէրատիվ կազմ ներմուծել, բաժանելով երկիրն ըստ
ազգութիւնների. որ այդ ազգութիւններն այնքան էլ յուսահա-
տական կերպով իրար չեն խառնւած, որ անհնարին լինի ստեղ-
ծել որոշ ազգ-երկրային կանտօններ, թողնելով ազգա-կուլտու-
րական ինքնորոշման լայն իրաւունքներ ցրիւ եկած փոքրամաս-
նութիւններին:

Այն, գործականապէս հնարաւոր է Ֆէդէրացիան Կովկասում:

Սկզբունքային անհրաժեշտութիւնը և գործնական հնարա-
ւորութիւնն ստիպել են Հ. Յ. Իաշնակցութեանը իր քաղաքական
ծրագրի հիմնաքարը դարձնել դէմօկրատիական Ֆէդէրատիվ հան-
րապետութեան պահանջը: Համաձայն IV ընդհանուր ժողովում
ընդունւած ծրագրի, ենթադրւում է Կովկասը բաժանել մի շարք
այնպիսի կանտօնների, որոնք—մի կողմից,—որքան հնարաւոր է
լինեն տնտեսապէս միապաղաղ արտադրական շահեր ունեցող
տէրրիտօրիաներ, իսկ միւս կողմից, կրկին՝ որքան հնարաւոր է,
պարունակին էտնօլօգիական միապաղաղ կամ դէթ քիչ ու շատ
հօսօթէն ժողովուրդ: Այդպիսով Ֆէդէրացիան շինւած կը լինի իր
կրկնակի հիմքերի վրայ—տէրրիտօրիական և ազգային:

Մանր կանտօններով միայն հնարաւոր է յարգել ազգային
անհրաժեշտ սկզբունքը, օրինակ, Սուխումի շրջանում ապրող
աբխազների (գաւառի ազգաբնակչութեան 55,2 տ. են կազմում),
Օլթիի, Արդահանի և Արթւինի գաւառներում բազմութիւն կազ-
մող թուրքերի, Զաքաթալայի շրջանում ապրող և համեմատական
բազմութիւն կազմող լէզգիների և այլ մանր ժողովրդների համար
(եզիդներ, քիւրդեր, թիւրքմէններ և այլն): Այդ ձևի (մանր կան-
տօնային) քաղաքական կազմն է, որ կարող է ապահովել կով-
կասեան բազմազան ազգերի իսկական ազգային ազատ ինքնո-
րոշումը: Կրկնում ենք, կուլտուրա ասելով, չը պէտք է հասկանալ
լոկ տնտեսական ու մտաւոր կեանքը, այլ նաև օրէնսդրութիւնը,
դատավարութիւնը և այլն: «Կուլտուրական ինքնորոշում» դարձ-

Այդ տեսակէտից մեզ համար միանգամայն դատապարտելի է «հայ սօց. դէմօկրատ» կոչւած խմբակի ծրագիրը: Նա պահանջում է կազմակերպական ֆէդէրացիա, նա պահանջում է, որ «հայ սօց. դէմօկրատիական» գրուպայան աւտօնօմ, նոյն իսկ ոսկախ և միակ տէր լինի հայ պրօլէտարիատի գործերում, պահանջում է ս. դ-ական համագումարներում համեմատական ձայն, ազգային ներկայացուցչութիւն և այլն, և յանկարծ իր ծրագրում հասարակութեան ապագայ քաղաքական կազմի համար չէ պահանջում ոչ աւտօնօմիա, ոչ ֆէդէրացիա, ոչ ազգային ներկայացուցչութիւն, ոչ նոյն իսկ պրօպօրցիօնէլ ընտրութիւններ: Դա ներքին տրամարանական հակասութիւն է, որն առաջ է եկել այդ խմբակի ստրկամտութիւնից. ծրագիր կազմելու ժամանակ նրանք նեղութիւն չեն քաշել մտածելու կամ վախեցել են ս. դ-ական շարժումից դուրս գալ. վերցրել և թարգմանել են իրանց ծրագրի թէ ներածութիւնը, թէ պահանջները գերմանական ծրագրից: Հեշտ ու հանգիստ գործ... այլ ևս ի՞նչ կարիք կայ մտածել, երբ «ուսուցիչները» մտածել են:

Նոյն այդ հակասութիւնը, միայն փոքր չափերով, կայ նաև Բուռնի ծրագրում: Ներկայումս նա պահանջում է կազմակերպական ֆէդէրացիայի նման մի բան, իսկ ապագայ հասարակական կազմում նրա դրած միակ տարրերիչ բանն է ընդհանուր շարժումից՝ «ազգա-կուլտուրական ինքնորոշում»:

Այդ տեսակէտից շատ աւելի հետեղական է հրէական մարքսիստական նոր կուսակցութիւնը, որի անունն է «Կօալիցիօն»: Նա զուտ մարքսիզմի տեսակէտով բացատրում է ֆէդէրացիայի անհրաժեշտութիւնը պրօլէտարիատի համար, ընդունում է կազմակերպական ֆէդէրացիա և պահանջում է հասարակական ապագայ կազմի համար էլ ֆէդէրացիա:

Ծրագրի մի նոյնատիպ թիւրիմացութիւն կայ նաև «Լեհաստանի և Լիթւայի սօցիալ-դէմօկրատիայի» պահանջներում: Նրանք պահանջում են «տեղական ինքնավարութիւն կամ Լեհաստանի աւտօնօմիա»: Եւ այդ երկու մասերը՝ «տեղական ինքնավարութիւն» և «Լեհաստանի աւտօնօմիա» — այնպէս են իրար հետ միացրել «կամ» շաղկապով, որ իսկոյն երևում է, որ այդ «զուտարիւն» մարքսիստները, նոյն իսկ հռչակաւոր Ռօզա Լուկսեմբուրգին գլուխ ունենալով, ընկել են մի ողբալի թիւրիմացութեան մէջ: «Տեղական ինք-

նավարութիւն» և «աւտօնօմիա» նրանց համար մի և նոյնն է... Ռօզա Լուկսեմբուրգն, իբր իսկական «մարքսիստուհի», գրիչ է վերցրել պաշտպանելու իր ձէտերին, նոյն իսկ պարզաբանելու զազափարների այդ շփոթութիւնը: «Տեղական ինքնավարութիւն կամ Լեհաստանի աւտօնօմիա», ասում է Ռ. Լուկսեմբուրգը — «կը նշանակէ այն հարցերը, որոնք յատկապէս վերաբերում են մեր երկրին, պէտք է վճռեն մեր երկրի ազգաբնակչութեան կողմից, սեփական պաշտօնեաների և շրջանային սէյմի միջոցով: — Պէտք է ներմուծեն լեհական դպրոցներ, լեհական դատարաններ և այլ անհրաժեշտ հիմնարկութիւններ, որոնք իրանց գործունէութեան մէջ պէտք է ենթակայ լինեն լեհական սէյմին» *):

Արդեօք սա ի՞նչ է. միթէ կարելի է այնքան տղէտ լինել, որ այդքան լայն իրաւասութիւններ ունեցող սէյմը, սեփական դատարաններ (ուրեմն և քրէական ու քաղաքացիական կօդէկսներ) ունեցող մի ներքին կառավարութիւն անւանել «տեղական ինքնավարութիւն»: Ոչ, դա լիակատար լայն աւտօնօմիա է: Ուրեմն՝ դա տգիտութեան արդիւնք չէ, այլ վախ, երկիւղ, որ Լեհիներն ու Պլեխանօֆները չը կոչեն իրանց «նացիօնալիստներ», «սէպարատիստներ», «բուրժուաներ»... Դրա համար «Լեհաստանի և Լիթւայի սօցիալ-դէմօկրատիան», մի կողմից զգալով, որ իր երկրի ամբողջ գիտակից պրօլէտարիատը պահանջում է Լեհաստանի աւտօնօմիա (եթէ ոչ բացարձակ անկախութիւն), իսկ միւս կողմից՝ երկիւղ կրելով «իսկական մարքսիստների յարձակումներից, ստիպւած է դիմել այդպիսի կամաւոր խեղաթիւրումների — «տեղական ինքնավարութիւն կամ Լեհաստանի աւտօնօմիա», — ծառայեցնելով «տեղական ինքնավարութիւն» բառերն իբր գերմակ, որը կարող կը լինի ազատել իրանց «ուզգափառների» յարձակումներից:

Մենք աչքի անցրինք ֆէդէրալիզմի դէմ արւող տուարկութիւնները, որոնք զալիս են Ռուսաստանում գործող մարքսիստական կազմակերպութիւններից և անհասանելից: Ի հարկէ մենք յաւակնութիւն չունենք կարծելու, որ քննութեան առանք և պա-

*) Роза Люксембургъ — „Чего мы хотим“ — комментарий къ программѣ с.-д. Польши и Литвы. СПб. 1906 г. стр. 23 и 25.
22

տասխան տւինք կաաարւոդ բոլոր առարկութիւններին: Մենք յիշեցնենք զխաւոր կոչւած առարկութիւնները: Իսկապէս այդ առարկութիւնների գլխաւոր և գրեթէ միակ աղբիւրը Ռ. Ս. Գ. Բ. կուսակցութիւնն է, որովհետև երկրում գործող միւս համարեաւ բոլոր սօցիալիստական կուսակցութիւնները այս կամ այն ձևով, գալիս մօտենում են Ֆէդէրալիզմին: «Բոլնդը» և «Հայ Ս. Գ.»-ների գրուպան ընդունում են կազմակերպական Ֆէդէրալիզմ, իսկ «Բոլնդը» պահանջում է «աղգերի կուլտուրական ինքնորոշում», որն անպայման տանում է դէպի «ազգային էքստէրրիտօրիական Ֆէդէրացիա»: Լեհաստանի և Լիթւայի *) սօց.-դէմօկրատիան, մենք տեսանք, պահանջում է Լեհաստանի աւտօնօմիա, թէև անունը դնում է «տեղական ինքնավարութիւն»: Լեհական սօց. կուսակցութիւնը (P. P. S.), որ մի ժամանակ կողմնակից էր Լեհաստանի անկախութեան, այժմ լիապէս Ֆէդէրալիստ է: Ֆէդէրացիա և աւտօնօմիա են պահանջում Ուկրայինայի սօցիալիստական և մասամբ արմատական կուսակցութիւնները: Նոյնն են պահանջում լատիշական կուսակցութիւնները, նոյնը և վրաց Ֆէդէրալիստ սօցիալիստները: Իսկապէս միակ ցէնտրալիստը Ռ. Ս. Գ. Բ. մեծ և իր վրայ սիրահարւած կուսակցութիւնն է: Սակայն, ինչպէս մենք առջ բերինք „Начало“ լրագրից, այդ բանակումն էլ Ֆէդէրալիզմի և ցէնտրալիզմի հարցն այնքան էլ մշակւած ու պարզւած չէ:

Ռուսաստանից դուրս՝ մենք տեսանք արդէն Աւստրիայի սօցիալ-դէմօկրատիան իր Ադլէրով, Պէրնէրստեօրֆէրով, էլլէնբօզէնով, Դաշինսկիով և ուրիշներով—իբր պաշտպան և ներկայացուցիչ Ֆէդէրալիզմի: Գերմանական սօցիալ-դէմօկրատիան ապ-

*) Բացի «Լեհաստանի և Լիթւայի սօցիալ-դէմօկրատիայից», կայ նաև յատկապէս «Լիթւայի սօց.-դէմօկրատիա», որը հակառակ պ. Պլեխանօվի և օր. Ռօզա Լիւքսեմբերգի կամքի, իր ծրագրի մէջ ունի հետևեալ հիմնական պահանջը. «Լիթւայի դէմօկրատիական հանրապետութիւն, միացած Ֆէդէրատիվ կապերով դաշնակից ժողովրդների հետ, որոնք զտնուում են հասարակական և քաղաքական զարգացման նոյն աստիճանի վրայ» (Տես՝ В. А. Поссе— „Национальная автономия и всемирная федерация“, „Библиотека рабочего“ շաբաթաթերթի № 3—ում, 1906 թ., երես 67): Նոյն հեղինակի՝ վկայութեամբ՝ «Լատիշներն իրանց համար չեն պահանջում ինքնուրոյն հանրապետութիւն, բայց նրանց սօցիալ-դէմօկրատիական կուսակցութիւնը հանդիսանում է կողմնակից Ֆէդէրատիվ սկզբունքի»:

րում է մի Ֆէդէրալիստական երկրում: Ճշմարիտ է, նրա շարքերում երևում է որոշ ձգտում մեծացնելու բայխստագի ազդեցութիւնն ի վնաս առանձին պետութիւնների լանդտագներին: Սակայն պէտք է դիտեալ բացատրել երևոյթները: Բացի այն, որ Գերմանիան լցւած է մի միապագա ժողովրդով, նոյն ազդութեան, նոյն լիզի և քիչ ու շատ նոյն կուլտուրական բարձրութեան վրայ կանգնած,—բացի այդ՝ կայ և մի այլ հանդամանք: Ամենախիստ Ֆէդէրալիստն անդամ, այո՛, պարտաւոր է պաշտպանել բայխստագի իրաւունքները, պարտաւոր է Գերմանիայում այսօր պաշտպան կանգնել ցէնտրալիզմի (օրէնսդրական), որովհետև միայն բայխստագն է, որ հանդիսանում է իսկական դէմօկրատիական հիմնարկութիւն—ժողովրդի իսկական ներկայացուցիչն: Առանձին պետութիւններից մեծ մասի լանդտագները կազմւած են նոյնքան վրդովեցուցիչ անհաւասարութեան, Ֆէդէրալիզմի, պլուտօկրատիական և միլիտարիստական ազնւականութեան ուր ամեն մի անկեղծ դէմօկրատ կը ցանկայ սկզբունքներով, ուր ամեն մի անարաւոր լինի մտցնել երկզօրացնել բայխստագը, որպէս դի հնարաւոր լինի մտցնել երկրում արմատական դէմօկրատիական ըէֆօրմներ: Տեղական լանդտագները դահիճների նման կանգնած են ամեն տեսակ դէմօկրատիական բարենորոգումների առջև:

Հ. Յ. Դաշնակցութեան և առհասարակ բոլոր սօցիալիստական կուսակցութիւնների համար Ֆէդէրացիան ամենևին մի Ֆէտիշ, մի կուռք, մի բացարձակ իդէալ չէ: Նա մի քաղաքական ձև է, իսկ ամեն մի ձև ծառայում է և պիտի ծառայի բովանդակութեանը—մարդկային ամենամեծ թիւ անհատների երջանկութեանը: Եթէ մեզ ապացուցեն, որ ցէնտրալիզմով աւելի դիւրին է հասնել սօցիալիզմի, մենք կը կանգնենք պաշտպան ցէնտրալիզմի, մեր ծրագրում կը մտցնենք այդ պահանջը:—Ահա այդ տեսակէտից նայելով հարցին, մենք լիապէս արգարացի ենք զտնում գերմանայական սօց. դէմօկրատիայի շարքերում երեացող ձգտումն՝ աւե՛նական սօց. դէմօկրատիաներն ի վնաս լանդտագների, լացնել բայխստագի լիազօրութիւններն:

Չւիցէրական սօցիալիստների մասին խօսելն անգամ աւելորդ է. նրանք էլ ապրում են Ֆէդէրալիստական կարգերում և պաշտպան են այդ կարգերին: Նրանց համար այդ կարգերը միս ու արիւն են դառել: Նրանց ծայրայիղ ցէնտրալիստն անգամ մեր

ծայրայեղ ֆէդէրալիստից աւելի հաստատուն պաշտպան է օրէնսդրական սպակենտրօնացման:

Պօրաուզալիայում և Իսպանիայում սօցիալիստական կուսակցութիւնները պաշտպան են ֆէդէրալիստական կազմի: «Միջազգային Բանտրական Ասօցիացիան Պօրաուզալիայում յայտնի եղաւ 1871 թւին... Թէ Պօրաուզալիայում և թէ Իսպանիայում սօցիալիստներն իրանց նպատակ են դրել ձեռքառնել պետութիւնը և դարձնել դաշնակցական հանրապետութիւն, որն իր կարգին՝ պէտք է բաժանուած լինի կամ բազկանայ աւտօնօմ համայնքներից: ...Նրանք (սօցիալիստները) պաշտպանում էին մինչև անգամ բուրժուական հանրապետականների ձգտումները, որովհետև յոյս ունէին բաւարարութիւն տալու իրանց անտեսական պահանջներին ղէմօկրատիական դաշնակցական հանրապետութիւն եղած ժամանակ, որը, Շէյնցարիայի նման, կազմուած լինէր ինքնուրոյն համայնքների կապակցութիւնից» *):

Այսօր այդ նոյն ֆէդէրալիստական ձգտումն աւելի մեծ և աւելի հաստատուն ձևով երևում է Իսպանիայում, մանաւանդ նրա Կատալոնիա նահանգում, որն իսպանական ամենազարգացած նահանգն է: «Ապակենտրօնական-ֆէդէրալիստական ձգտումներ ներկայումս կարելի է նկատել իսպանական Կատալոնիա նահանգում, որն ուզում է ձեռք բերել ներքին լիակատար ինքնուրոյնութիւն, որովհետև նրա հասարակական ուժերի յարաբերութիւնն աւելի նպաստաւոր է առաջադիմութեանը և ղէմօկրատիային, քան նոյն հասարակական ուժերի յարաբերութիւնն ամբողջ Իսպանիայում»**):

Եւրօպական միւս երկրներում էլ սօցիալիստական բոլոր կուսակցութիւններն անհամեմատելի սպակենտրօնական ձգտումներ և պահանջներ են արտայայտում, քան Ռուսաստանի ս.-դեմօկրատիան:

Մանաւորապէս ֆէդէրալիզմն աւելի հերթական հարց է Անգլիայի համար: Նրա համաշխարհային պետութիւնը, նրա անթիւ գաղութները հրամայաբար ֆէդէրացիա են պահանջում: Երբ բոլոր գաղութները անտեսապէս և կուլտուրապէս բաւական բարձրացած կը լինեն, Անգլիային կը մնայ կամ անցնել դաշնակցական կարգերի կամ զրկել իր գաղութներից: Այսօր նրա Կանա-

*) «Справочная книга социалиста», томъ II, «Португалия».

**) Людвигъ Кулчицкій—«Федерализмъ и соц. политика», Первый Сборникъ «СЪРПА», стр. 104.

դան, Աւստրալիան, Նոր-Չէլանդիան, Թէև աւտօնօմ գաղութներ են, շատ աւելի ինքնուրոյնութիւն ունեն, քան գերմանական դաշնակից պետութիւնները, քան նոյն իսկ դեիցերական կանտօնները:

Երկրներից և կուսակցութիւններից անցնենք անհամայնքին: Այստեղ մենք աւելորդ ենք համարում մէկ մէկ յիշատակել եւրօպական այն բոլոր յայտնի հեղինակութիւններին, որոնք պաշտպան են ֆէդէրալիզմի: Մեր աշխատութեան ընթացքում շատերի գրածքներից մենք ցիտատներ ենք բերել: Մեզ աւելի է դրողիցնում ուսական իրականութիւնը:

Աւելորդ է յիշել այստեղ, որ հռչակաւոր «Ինտերնացիօնալը», որին անդամ էին և Մարքսն ու Էնգելսը, ամենախիստ ֆէդէրալիստ էր: Միայն երբ Կ. Մարքսի ազգեցութիւնը նրանում զօրացաւ, ֆէդէրալիստական տարրն սկսեց պակասել և տեղի տալ ցէնտրալիզմին:

Յայտնի է, որ անիշխանականներն, ինչ երկրում էլ գործելիս լինին, ջերմ պաշտպան են համայնքների անկախութեան և ֆէդէրալիզմի:

Ռուսական գործիչներից առաջինն եղել է անիշխանական Բակունինը, որ դեռ 1862 թւին պարզ ու որոշ ֆէդէրալիզմ է քարոզել Ռուսաստանի համար: Այդ թւին հրատարակած իր «Народное Дѣло» գրքոյկում Բակունինը «Ռուսական յեղափոխական կուսակցութեան» անունից յայտնում է.

«Ցանկանում ենք ժողովրդական-համայնական, գիւղախմբային, գաւառական, նահանգական և վերջապէս, պետական ինքնավարութիւն—ցարով թէ առանց ցարի, միևնոյն է, դա ժողովրդի ցանկութիւնից է կախուած: Բայց չը պէտք է լինի Ռուսաստանում չիտօզնիկութիւն, և բիւրօկրատիական կենտրօնացումը պէտք է փոխարինւի շրջանային ազատ ֆէդէրացիայով:—Ցանկանում ենք, որ Լեհաստանին, Լիթւային, Ուկրայինային, Ֆինլանդիային և Լատիշներին, նոյնպէս և Կովկասին վերադարձել լիակատար ազատութիւն և իրաւունք որոշելու իրանց բողոք և կառավարելու իրանց ուզածի պէս, առանց մեր ուղղակի կամ անուղղակի միջամտութեան:—Ցանկանում ենք եղբայրական, իսկ եթէ կարելի է, դաշնակցական կապակցութիւն Լեհաստանի, Լիթւայի, Ուկրայինայի, Շուրջարտեան ազգաբնակչութեան և Անգլիկովկասի ազգութիւնների հետ»...

Բակունինից պահաս ֆէդէրալիստ չէր նաև Ալէքսանդր չէր-
ցէնը: Ռաշնակից մասերը, գրում էր նա 1859 թւին, երբ հարց
էր ծագել թէ ում է պատկանելու Մալօրօսսիան՝ Լեհաստանին, թէ
Ռուսաստանին,— դաշնակից մասերը միացած են իրար հետ ընդ-
հանուր գործով և ոչ ոք ոչ ոքի չէ պատկանում,— ոչ ժընէվը Բեր-
նին, ոչ էլ Բէրնը ժընէվին»:

Կազանի համալսարանի պրոֆէսոր Շչապովը հանդիսանում
է իրր պաշտպան «շրջանային ատօնօմիայի»— դեռ ևս 1876
թւին *) : Այդ հարցում նա շատ աւելի առաջ է յայտնել այն սկզբ-
րունքներն, ինչ որ մենք տեսանք պ. Ֆօրստենասովի դրքոյկում:

Հանդուցեալ Լաւրովի ֆէդէրալիստական սկզբունքները շա-
տերին յայտնի են: Բաւական է կարգալ նրա հոչակաւոր «Պատ-
մական նամակները», նրա «Ֆէդէրալիզմ» յօդածը, նրա «Մարդ-
կային մաքի կուլտուրայի պատմութիւնը» և այլն, համոզելու
համար, որ անպայման ֆէդէրալիստ է:

Ոչ նւազ յայտնի գրող անիշխանական Կրապօտկինը ևս
ամենաջերմ պաշտպան է ֆէդէրալիզմի:

Այդ շարքը մենք կարող ենք աւելի ևս երկարել, բայց աւե-
լորդ է կանդ առնել: Աւելի լաւ է այժմ ասենք մի երկու խօսք
ռուսական նախկին կուսակցութիւնների մասին:

Պէտք է նկատել, որ ռուսական յեղափոխական պէս-պէս
խմբերը, որոնք գործում էին 60—70—80 թւականներին (19-րդ
դարում), գտնուում էին կամ Ալէքսանդր Չէրցէնի կամ մանաւանդ
Բակունինի դադափարների ազգեցութեան տակ այս կամ այն
չափով: Երևի դրա հետևանքն է, որ այդ շրջանի յեղափոխական
կուսակցութիւնների և խմբերի ծրագրներում յաճախ հանդիպում
ենք ֆէդէրալիստական պահանջների:

Այսպէս՝ արասասահմանում 2—3 տարի շարունակ լոյս տես-
նող (1868—70 թ.) «Народное Дѣло» լրագրի ծրագրում հետե-
ւեալ պահանջն է դրւած. «Լիակատար ազատութիւն այն բոլոր
ժողովրդների համար, որոնց այժմ ստրկացել է կայսրութիւնը,
տալով նրանց իրաւունք լիապէս կարգադրելու իրանց վիճակը,
հիմնելով իրանց բնազդների, կարիքների և կամքի վրայ.— որ-
պէս զի դաշնակցելով ներքինից դէպի վերև, այդ ժողովրդներից

*) В. А. Поче—ibid. երես 46—52.

նրանք, որոնք կը ցանկան լինել ռուս ժողովրդի անդամ, կարո-
ղանան միահամուռ ուժով կազմել իսկապէս ազատ և երջանիկ մի
հասարակութիւն՝ բարեկամական և դաշնակցական կապերով կապ-
ւած Եւրօպայի և ամբողջ աշխարհի նոյնանման հասարակութիւն-
ների հետ» *):

Պ. Լաւրովի անձնական տեսակէտը մենք արդէն գիտենք:
Հրատարակելով 1873 թւին իր «Впередъ» թերթը, իրր ծրագրա-
յին յօդւած՝ նրա 1 հատորում ասւած է, որ քանի յառաջագիմու-
թիւնը զարգանում է, «պետական և ցէնտրալիստական սկզբունքն
այնքան աւելի տեղի է տալիս աւելի և աւելի մանր հասարակա-
կան միութիւնների ազատ դաշնակցութեան սկզբունքին»:

Նոյն թերթի № 48-ում, 1876 թւին, Լաւրովի գրչից գուրս
եկած մի առաջնորդողում յայտնւած է կրկին այն միտքը, որ
կօլլէկտիվիստական կարգերը կարող են գոյութիւն ունենալ մի-
այն այնպիսի հասարակական կազմում, որի հիմքն է «ազատ ֆէ-
դէրացիան»:

Երկու տարի հազիւ անցած, 1878 թւին, սկսում է գործել
«Община»-ի յեղափոխական խմբակը, որի զլուխ էին կանգնած
Պ. Ակսէլրօդը, Ն. Ժուկովսկին, Դ. Կլեմէնսը և Զ. Բալլին: Այդ
Պ. Ակսէլրօդը, Ն. Ժուկովսկին, Դ. Կլեմէնսը և Զ. Բալլին: Այդ
յեղափոխական խմբակի նպատակն էր. «ապահովել աշխատաւոր
ազգաբնակչութեանը կարիքներից ազատ մի գոյութիւն, ազատ
զարգացում իր ընդունակութիւնների և իր կարիքների բաւարա-
րութիւն տալու համար: Այդ նպատակը կարելի է իրականացնել,
ասում է ծրագիրը, միայն աւտօնօմ համայնքների ազատ դաշ-
նակցութեան մէջ, աշխատութեան միջոցներից կօլլէկտիվ և իրա-
ւահաւասար կերպով օգտւելով և տալով անհատին բազմակողմա-
ւահաւասար կարգում միջոցներ այնպիսի մի հասարակական կարգում,
նի զարգացման միջոցներ լիակատար ազատութիւնը խմբա-
կում և խմբակի (համայնքի) ազատութիւնը իրաւահաւասար խմբ-
բակների (համայնքների) դաշնակցութեան մէջ»:

Մենք նայում ենք, ասում է այդ ծրագրային յայտարարու-
թիւնը, համայնքների ազատ ֆէդէրացիայի վրայ ինչպէս առա-

*) Այս և միւս վկայութիւնները ռուսական հին կուսակցութիւնների և
խմբերի մասին մենք բարեւ կենք Պօստէի յօդածից— «Нац. автономія и
всемірна федер.»— «Библиотека рабочего» № 3, 1906 г.

Ղին քայլի վրայ, որից պէտք է սկսել հասարակական զարգացման առաջին քայլը»:

«Համայնք»-ից յետոյ ասպարէզ է գալիս «Земля и Воля» («Հող և Ազատութիւն») յեղափոխական կուսակցութիւնը, որի ծրագրի հիմնական կէտերը յար և նման են «Община»-ի («Համայնքի») ծրագրին:

1879 թւին «Земля и Воля»-ն բաժանեց երկու մասի: Կազմուեցին երկու յայտնի ուսական գործող կուսակցութիւնները— «Черный Передѣлъ» և «Народная Воля»: Դրանցից առաջինի մէջ ամենախոշոր դեր կատարում էին Ա.կսելրոզը և Պլեխանովը: Այդ կուսակցութիւնը լիապէս հաւատարիմ մնաց «Հող և Ազատութիւն» խմբակի գաղափարներին. նա ամեն մի քայլափոխում սուր կերպով ցոյց էր տալիս իր ատելութիւնը դէպի պետական և ցէնտրալիստական սկզբունքը:— «Черный Передѣлъ» թերթում կուսակցութեան մի անգամը գրում է, որ Ֆրանսիական յեղափոխութեան անկման, հանրապետութեան և ազատութեան վերացման միակ պատճառը Եակօրինիզմն էր: Եակօրինները ցէնտրալիստ են և դէմօկրատ, այն ինչ այդ սկզբունքները տանում են դէպի Լիւդովիկոս XIV-ի և դէպի Նապօլէօնի ըէժիմները: Նրանք պահանջում էին «մի և միակ, անբաժանելի հանրապետութիւն»: Ցէնտրալիզմի մէջ նրանք գտնում էին ազատութեան գերագոյն միջոցը: Այդ ցէնտրալիզմի շնորհով և յանուն «ազատութեան», Եակօրինները վերացրին համքարութիւնները, ազնւականութիւնը, արտօնութիւններն ու առանձնաշնորհումները. բայց նոյն այդ ցէնտրալիզմը, կրկին յանուն բազմաշարժար «ազատութեան», նրանց իրաւունք էր տալիս ամբողջ Ֆրանսիայի համար հրամաններ կամ դէկրէտներ արձակել և արգելիլ բանւորներին կազմել խմբակցութիւններ կամ ասօցիացիներ, ժողովներ, գործադուլներ... Հասարակութեան մի մասն, ասել էր Ժ. Ժ. Բուսսօն, չը պէտք է կազմակերպել ի վնաս ընդհանրութեան *). և մեծ ուսուցչի այդ սկզբունքը, ծուռ ու սխալ ըմբռնած, հրականացում էր, իբր գահճական մտրակ, ընդդէմ աշխատաւոր մարդկանց:

Իերելով այս գատողութիւնների շարքը, հեղինակը գրում է իր հին ընկերներին. «Նրանց հիմքը մի սկզբունք է—պետակա-

*) «Contrat social».

նութիւն և ցէնտրալիզմ. Իշխանութեան հեղինակութիւն և նախաձեռնութիւն մի կողմից, իսկ միւս կողմից ժողովրդի ձայնազրկութիւն և հպատակութիւն»:

«Հէնց որ մի յեղափոխական կուսակցութիւն իր դրօշակի վրայ գրեց այս սկզբունքը, նա դառնում է յետադիմութեան և անշարժութեան կուսակցութիւն: Նա կորցնում է հողն իր ոտերի տակից, զրկում է մասսայի վստահութիւնից և օգնութիւնից և, հետեւաբար, ինքն իրան դատապարտում է պարտութեան և մահւան»:

Եակօրինիզմն արադրեց Նապօլէօնի ըէժիմը և Նապօլէօնն իրան շրջապատեց եակօրիններով, որոնք անդադար երգում էին, թէ «կայսրութիւն—նշանակում է յեղափոխութիւն, դէմօկրատիա»:

Յեղափոխութեան մէջ Եակօրինները մտցրին ցէնտրալիստական ամենակեր սկզբունքը և Նապօլէօնը դարձրաւ «Ռօբէսպիէր ձիւ վրայ նստած»:

Արդեօք ի՞նչ է դրում այժմեան ցէնտրալիստ Պլեխանով, երբ կարգում է նախկին «Չեօրնի Պերեդելի» անդամ ու կոսանդոն գործիչ Ֆէդէրալիստ Պլեխանովի յօդուածները:

«Նարօգնայիտ Վօլիա» կուսակցութեան ծրագիրը բաւակալան խոշոր տարբերութիւններ ունէր «Չեօրնի Պերեդելի» ծրագրից, բայց դաշնակցական սկզբունքը մնաց հիմնական ծրագրային կէտերից մէկը, նրա անդամներից շատերի համար սիրելի և թանգազին: «Պետական կազմը, ասւած է այդ կուսակցութեան բանւոր անդամների ծրագրում,—պէտք է հիմնւած լինի բոլոր բանւոր անդամների ծրագրում,—պէտք է հիմնւած լինի բոլոր համայնքների դաշնակցական պայմանագրի վրայ: Ամեն մի համայնք իր ներքին գործերում լիապէս ազատ և անկախ է»:—«Համայնք իր ներքին գործերում լիապէս ազատ և անկախ է»:—«Համայնքի ազատութիւնը, — շարունակում է ծրագիրը,—այսինքն նրա իրաւունքը միւս բոլոր համայնքների և կապակցութիւններին հետ միասին միջամտելու պետական գործերին և ուղղութիւն ընդհանուր համայնքների ընդհանուր ցանկութեան հատալու նրանց բոլոր համայնքների և կապակցութիւններին չի մաձայն, թոյլ չի տայ, որ ծագի պետական ճնշում, թոյլ չի տայ, որ անբարոյական մարդիկ իրանց ձեռքն առնեն երկիրը, տայ, որ անբարոյական մարդիկ իրանց ձեռքն առնեն երկիրը, քայքայեն նրան՝ իբր զանազան տեսակի կառավարիչներ և պաշտօնեաներ և խեղդեն ժողովրդի ազատութիւնը, ինչպէս այդ արտօնեաներ և խեղդեն ժողովրդի ազատութիւնը, ազգաբնակչութեան բնաւում է այժմ:—Ռուսական պետութիւնը, ազգաբնակչութեան բնաւորութեան և կեանքի պայմանների համեմատ, բաժանում է

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Ֆ Է Դ Է Բ Ա Յ Ի Ա Յ Ի Ա Պ Ա Գ Ա Ն

Ֆէդէրացիայի ուժեղ և թոյլ կողմերը:—Նրա ներկայ տարածման վայրերը:—
Համաձայնագրի ֆէդէրացիա կամ ֆէդէրացիայի ապագան:

Ֆէդէրացիայի ուժեղ և թոյլ կողմերը: «Եթէ մի հանրապետու-
թիւն փոքր է, ասում է Մօնտէսքիօն,—կործանւում է որ և է ար-
տաքին ուժի ձեռքով. եթէ նա մեծ է, կործանւում է ներքին որ
և է ախտով:

«Այս կրկնակի անպատեհութիւնը վարակում է հաւասարա-
պէս և դէմօկրատիաներին, և արիստօկրատիաներին՝ լաւ լինեն
նրանք թէ վատ—դա մի և նոյն է: Չարիքը հէնց իրի էութեան
մէջն է. չը կայ մի ձև, որ ճար անէ դրան:

«Այդպիսով՝ թւում է թէ վերջապէս մարդիկ ստիպւած են
անպատճառ մշտապէս ապրել մի անհատի վարչութեան տակ,
եթէ նրանք հնարած չը լինեն մի այնպիսի Սահմանադրութիւն,
որն ունի հանրապետական կառավարութեան բոլոր ներքին առա-
ւելութիւնները և միապետականի արտաքին ուժը: Ես խօսում եմ
դաշնակցական հանրապետութեան մասին:

«Կառավարութեան այս ձևը մի դաշն է, որով քաղաքական
մի քանի մարմիններ համաձայնում են դառնալ մի նոր կազմը-
ւող, աւելի մեծ պետութեան քաղաքացիներ: Այդ նոր կազմածը
հասարակութիւնների մի հասարակութիւն է, որը կարող է մե-
ծանալ նոր ու նոր դաշնակիցներով, մինչև որ իր ոյժը բաւարար
կը լինի բոլոր միաւորւածներին ապահովելու:

«Այդ ասոցիացիաներն (միաւորումները) էին, որ այնքան
երկար ժամանակ ծաղկեցրին Յունաստանի պետութիւնները:
Դրանով հոռոմայեցիները յարձակեցին արար-աշխարհի վրայ, և
դրանով միայն արար-աշխարհը պաշտպանեց հոռոմայեցիների դէմ.
և երբ Հոռոմը հասաւ իր մեծութեան գագաթնակէտին, Դանուբի
և Հոնէոսի այն կողմերում կազմւած ասոցիացիաներով էր, սար-
սափի աղբիւրների տակ կազմւած այդ միութիւններով, որ
բարբարոսները կարողացան դիմադրել Հոռոմին:

«Այդ ձևի հանրապետութիւնը, դիմադրելու ոյժ ունենալով

արտաքին թշնամիներին, կարող է պահպանել իր մեծութիւնը,
առանց անբարոյականացնելու իր ներքին կեանքը: Հասարակական
այդ ձևն առնուած է ամեն տեսակ անյարմարութիւնների առաջը:

«Ոչ մի ուղուրպատօր (բռնութեամբ իշխանութիւն ձեռք
բերող) չէ կարող երբէք հաւասարապէս յարգւած լինել և վարկ
ունենալ բոլոր դաշնակից պետութիւններում:

«Եթէ դաշնակից անդամներից որ և է մէկը ենթարկւի որ և
հմայնքի, միւս անդամները կարող են նրան կարգի բերել: Եթէ
որ և է մասում բռնութիւններ կամ իրաւունքների իշարը գործա-
դրումներ տեղի ունենան, առողջ մասերը կուղղեն նրանց:

«Կազմւած լինելով փոքրիկ հանրապետութիւններից, նա
վայելում է դրանցից իւրաքանչիւրի ներքին կառավարութեան
լաւութիւնները, իսկ արտաքին աշխարհի վերաբերմամբ նա, կա-
պակցութեան կամ ասոցիացիաների շնորհով, ունի մեծ պետու-
թիւնների բոլոր առաւելութիւնները» *):

Մեղանից մօտ 140 տարի առաջ Ֆրանսիայի հանձարն այդ-
քան սրատեսութեամբ թափանցել է քաղաքական ձևերի ներքին
իմաստը:—Փշանում, կործանման դուռն է հասնում մի հանրա-
պետութիւն, եթէ նա ցէնտրալիստ է, որքան էլ նա լինի հիմ-
նւած ընդհանուր ընտրողական իրաւունքի վրայ, որքան էլ նա
դէմօկրատիկ, ժողովրդապետութիւն ունենայ, չէ կարող դիմա-
պետութիւն լինել անսպառնալիք ծնունդ բուրձրատիկ մի դէմ, չէ
նալ ցէնտրալիզմի անսպառնալիք ծնունդ բուրձրատիկ մի դէմ, չէ
կարող խուսափել Բուլանժէներից, Նապօլէօններից, Դէրուլէզնե-
րից և այլ տեսակի «արհեստով պօլիտիկոս» շառլատաններից ու
աւանտիւրիստներից:

Ֆիկտիվ է 50,000 մարդուց մի պատգամաւոր ընտրելու
սկզբունքը: Անմտութիւն է կարծել, թէ 50—75 կամ 100—200
հազար անձերից ընտրելով մի մարդ, դուք ստանում էք հասա-
րակական կարծիքի ղեկավար պատկերը: Ընտրողը չէ ճանա-
չում իր ընտրածին, յաճախ անունն է միայն լսել, չը գիտէ նրա
ոչ լաւը, ոչ վատը, գաղափար չունի նրա համոզումների մասին:

Ֆէդէրատիվ կազմի բարոյական առաջագիմական ոյժը հէնց
նրանումն է, որ այդ կազմը հնարաւոր է դարձնում ունենալ մի
մեծ պետութիւն, բայց բաղկացած այնպիսի մանր մասերից, որ

*) Montesquieu—„L'Esprit des lois“—livre IX, chapitre 1.

քաղաքական ընտրութիւնները բովանդակութիւն են ստանում. ընտրողը ճանաչում է իր ընտրածին: Այդպէս է Շէէյցարիայում. շատ յաճախ ընտրողը նոյն իսկ անձնական լաւ ծանօթ է իր ընտրածի հետ, որովհետեւ իր ամբողջ հանրապետութեան, իր կանտոնի բնակիչների թիւը 100 հազիւ 200 հազար է: Այդ տեսակէտից, մեր կարծիքով, անհրաժեշտ է նիւ-Շօրկի նման մի հրակայ կանտոն բաժանել մի քանի մասերի:

Որքան էլ Կ. Կառլցկին յարձակւի Րիտտինգհաուզէնի *) վրայ, պնդելով թէ այժմ մեծ պետութիւններում անհնար է ուղղակի ժողովրդի մասնակցութեամբ օրէնսդրութիւն, այնուամենայնիւ մարդկութեան իրէտալը լինելու է իսկական ժողովրդապետութիւնը. մարդկութիւնը ձգտելու է մի այնպիսի քաղաքական կազմի, որի մէջ հնարաւոր լինի ամբողջ ժողովրդին հաւաքել և ինքն իր համար, իր սեփական պէտքերի, իր շրջանի համար օրէնքներ սահմանել, իր ուղածի նման կառավարել. իր իւրաքանչիւր անդամը գիտակցէ ամեն մի սահմանւած օրէնքի անհրաժեշտութիւնը, մաս ունենայ բոլոր օրէնքների քէտարկութեան մէջ: Իսկ դա ներկայումս հնարաւոր է միայն և միայն դաշնակցական կազմակերպութեան ժամանակ, երբ մեծ պետութիւնները բաղկացած կը լինեն բազմաթիւ մանր կիսազերիշխան պետութիւններից:

*) Րիտտինգհաուզէնը, յարձակւելով ներկայ պարլամէնտարիզմի վրայ, պահանջում է, որ ժողովուրդն իր ամբողջութեամբ (20 տարեկանից բարձր) մասնակցէ օրէնսդրութեան մէջ. նա ապացուցանում է, որ ներկայ պարլամէնտարիզմն անմտութիւն է. դա ժողովրդապետութիւն չէ, այլ մի քանի պոլիտիկոսների օլիգարխիական տիրապետութիւն: Կ. Կառլցկին, իբր իսկական մարքսիստ, որի կարծիքով մեծ պետական կազմերն անպայման աւելի նպատուար են կապիտալիզմի, ինդուստրիայի և, առհասարակ, արտադրութեան զարգացման, քան մանր պետութիւնները, իսկ այդ զարգացումն անհրաժեշտ է պրօլետարիատի միակ յեղափոխական բանակի աճեցման համար, — իբր պաշտպան այդ պահասուար տեսակէտի, Կ. Կառլցկին յարձակում է Րիտտինգհաուզէնի պաշտպանած իսկական ժողովրդապետութեան վրայ (Տես «Парламентаризмъ и народное законодательство» գրքոյկը), յենակէտ ընդունելով այն, որ այդպիսի ուղղակի դէմօկրատիա շէէ կարելիներ մտծել մեծ պետութիւններում. ուրեմն՝ պէտք է «ընտրական դէմօկրատիա»: Այն ինչ նոյն բանը Րիտտինգհաուզէնը նախատեսել է իր գրքում և հէնց ձգտում է ապացուցել, որ պէտք քայքայել մեծ պետութիւնները: (Րիտտինգհաուզէնը է «Législation directe par le peuple»):

Այսպիսով՝ ֆէդէրացիայի ուժեղ կողմերից առաջինը նա է, որ ընտրական իրաւունքը կարելի է հասցնել իր զարգացման դազաթնակէտին: Իսկ դա միակ պայմանն է իսկական ժողովրդապետութեան:

Նրա երկրորդ առաւելութիւնն էլ սրտես աչքերով նկատել է Ֆրանսիայի հանձարեղ գրողը — Մօնտէսքիօն, թէև նրա օրով էլ դեռ ևս ոչ մի իսկական դաշնակցական պետութիւն չը կար. գոյութիւն ունէր միայն Զւիցէրիան, որ այդ ժամանակ դեռ ևս պետութիւնների դաշնակցութիւն էր: Այդ երկրորդ առաւելութիւնը կայանում է նրանում, որ ֆէդէրատիվ կազմն ապահովում է երկրի համար տեղական ու անհատական ամեն տեսակ ազատութիւններ, բայց միաժամանակ երկիրը չէ թուլացնում, ազատութիւններ, բայց միաժամանակ երկիրը չէ թուլացնում, չէ քայքայում նրա պետական ընդհանուր ոյժը: Մօնտէսքիօնից չէ քայքայում նրա պետական ընդհանուր ոյժը: Մօնտէսքիօնից մօտ 100 տարի յետոյ զւիցէրացի մի յայտնի իրաւագէտ — Դիւբսը (Dubs) — հետեւալ ձևով է բնորոշում ֆէդէրատիվ պետութեան առաւելութիւնները.

«Դաշնակցական պետութիւնը միաւորում է երկու բան իւրար հետ, որոնք առաջ թւում էին անհաշտելի. աղքատին (պետական) ոյժի միութիւնը և անհատական մեծ ազատութեան պահպանումը: Ունիտար մեծ պետութեան մէջ այդ երկու տարրերից պահանջներ կարգանում է յաճախ չափազանց օրէն. բայց այդ քառաւելի ճշտապահ կարգ ու կանոն, յենւած ղինւորական (միլիտատական), աստիճանական և բիւրօկրատական հիմնարկութիւնների վրայ, որոնք այլ ևս անհատական կեանքին չեն թողնում լայն ազատութիւններ, որովհետեւ եթէ թոյլատրեն, դուրս կը գան անազատութիւններ, ֆոքր կենարօնական պետութեան մէջ, ընդհակարգութիւններ: Փոքր կենարօնական պետութեան կեանքն ու կառակը, վայրերի, շրջանների և անձերի անհատական կեանքն ու ազատութիւնը կարող են զարգանալ ամենաբարձր չափով և ամենազարգացած պայմաններում: Այնպէս, որ զարգանալ ամենաբարձր չափով և ամենազարգացած պայմաններում կարող են հասնել իրանց ամենալիակատար արտայայտութեանը»:

Այնուհետև հեղինակը շատ իրաւացի կերպով հետևեալ գործնական ու փորձնական նկատողութիւնն է անում.

«Ման եկէք աշխարհի բոլոր պետութիւնները. դուք շատ ատեղ կը դոնէք քաղաքական բարձրագոյն հանձարներ, բայց ու»

դրացիներ և ընն վարում ոչ մի արտաքին քաղաքականութիւն: Եթէ Զւիցէրիան պահպանում է իր անկախ գոյութիւնը, չը նայելով որ շրջապատւած է հզօր և յաճախ թշնամի պետութիւններով,— այդ բանը նա պարտական է այնպիսի հանգամանքների, որոնք ոչ մի ընդհանուր կապ չունեն իր սահմանադրական կարգերի հետ»... (Дайси— ibidem.— երես 193): Հեղինակը գտնում է, որ Զւիցէրիայի անկախութիւնը պահպանելու է շրջապատ դօրեղ պետութիւնների շահերի հակառակութեան պատճառով. ոչ մէկը չէ ցանկանում թողնել որ այդ լեռնոտ և ամուր երկիրն անցնի միւսի ձեռքը: Մեր կարծիքով նոյնը կարելի է ստել և Բէլգիայի, և Սերբիայի վերաբերմամբ: Իսկ Միացեալ-Նահանգների վերաբերմամբ հեղինակի ասածը ճշմարիտ է մինչև իսպանական պատերազմը. նրանից յետոյ Միացեալ-Նահանգներն սկսեցին վարել մեծ, համաշխարհային պօլիտիկա, մասնակցել շատ նշանաւոր քաղաքական հարցերի, ինչպէս չինական ապստամբութիւնը (Բօքսէրների), ռուս-հապօնական պատերազմը, Հաագայի կօնֆերանսը, Մօտաւոր Արևելքի խնդիրը և այլն և այլն: Ճշմարիտ է, որ ամբարանօրէն պէտք է որ Ֆէդէրատիվ պետութիւնը թոյլ լինի, բայց Գերմանիան թոյլ չէ... Այդպիսի բարդ հարցերում մաթեմատիքական օրէնքներ որոշել անհնար է: Թէև Ֆէդէրացիան պէտք է որ թոյլ լինի, բայց, միւս կողմից, նա ունի իր մէջ ոյժի անսպառ աղբիւր, որովհետեւ իրար հետ կարող է միացնել, համերաշխութեան ընդել այնպիսի երկրներ ու ժողովրդներ, որոնք ունիտար պետութեան մէջ իրար թուլացնող տարրեր կը հանդիսանային: Օրինակ, մենք համոզուած ենք, որ Ռուսաստանը, եթէ ունենար Ֆէդէրատիվ կազմ, անսպասան կը փշրէր Նապօնիային. կամ Փրանսիան Նապօլէօն III-ի օրով երբէք չէր ընկնի այն ատիճան թուլութեան և քայքայման մէջ, եթէ ունենար դաշնակցական կազմ: Իաշնակցական կազմ ունեցող պետութիւնը, ինչպէս յաջող համեմատում է Բրայսը, նման է մի ամուր նաւի, որի մի մասը երբ ջուր է լցւում, միւս մասերը դեռ ևս անվնաս շարունակում են գործը և հնարաւոր են դարձնում փրկել նաւը, վնասուած մասն էլ կարկատել, վերանորոգել:

Իբր դաշնակցական պետութեան երրորդ պակասութիւն դընում են այն, որ մասերում միատեսակութիւն չը կայ օրէնսդրական և վարչական գործունէութեան մէջ:

Այն, այդպիսի երևոյթ կայ, բայց դժբաղդարար նա չնչին է. երանի թէ նա լինէր գօրեղ և, մասաւանդ, իսկական ծնունդ և արտադրութիւն մասերի էական պահանջների: Իաշնակցական պետութեան ամենախոշոր առաւելութիւնն էլ հէնց նրանումն է, որ համաձայն մասերի ազգային, կուլտուրական և տնտեսական շահերի՝ ունի համապատասխան օրէնքներ ու կարգեր. եթէ մասերն իրարից տարբեր տնտեսական, կուլտուրական և ազգային շահեր ունեն, անհրաժեշտ է, որ նրանք ունենան և իրանց համապատասխան օրէնսդրութիւն և վարչութիւն: Սակայն, կրկնում ենք, դժբաղդարար այդ «բաղմաղանութիւնն» այնքան էլ մեծ չէ ներկայ ֆէդէրացիաներում: Բրայսի վկայութիւնն այդ խընդրում անժխտելի է: «Նահանգներն, ասում է նա, ոչ միայն ի չար չը գործ դրին իրանց իրաւունքն իրար չը նմանելու, այլ և չափից աւելի հոգ տարան ներմուծելու իրանց մէջ միօրինակ կարգեր և այդ պատճառով էլ բաւարար չափով գործնականօրէն չը ստուգեցին իրանց հիմնարկութիւնների նպատայարմարութիւնը» *):

Ասում են նոյնպէս, որ դաշնակցական պետութիւնն անսպասան պէտք է աւելի թոյլ լինի արտաքին քաղաքականութեան մէջ: Նախ մեզ համար անհասկանալի է, թէ ինչո՞ւ, դաշնակցական կազմի ձր թերութեան, ձր մեղքի արդիւնքն է, որ անսպասան պէտք է թոյլ արտաքին քաղաքականութիւն ունենայ: Բացի ճառ պէտք է թոյլ արտաքին քաղաքականութիւն ունենայ: Բացի դրանից՝ մենք կը ցանկանայինք, որ առհասարակ «արտաքին քաղաքականութիւն» կոչւած ներկայումս վարւող մաքիաւելական լիտի արհեստը—պօլիտիքան բոլորովին վերանար և նրա տեղը բռնէր ժողովրդների միջազգային յարաբերութեան աւելի մի բարոյական ձև: Իսկ այդ բանում ֆէդէրատիվ, թէ ունիտար պետութիւնները դրւած են մի և նոյն պայմաններում: Արտաքին տութիւնները դրւած են մի և նոյն պայմաններում է պետութեան կենսարարութիւնն ամբողջապէս պատկանում է պետութեան կենսարարական օրգաններին. մասերը չունեն անկախ ոչ մի արտաքին քաղաքականութիւն:

Իաշնակցական պետութեան միւս թերութիւնների և առհասարակ նրա դէմ արւող առարկութիւնների մասին մենք արդէն խօսել ենք: Անցնենք այժմ նրա առաւելութիւններին:

Առաջին և ամենաէական առաւելութիւնը նրանումն է, որ

*) Дж. Брайтсъ—ibid.—երես 351. 5. 1.

հաղորդութիւնը կազմողների գլխաւոր նպատակը լիապէս իրականացած է: Երբ աբրատ Միէյսին հարցրին, թէ ինչ էր անում նա տէրրօրի ժամանակ, նա պատասխանեց. «Ես ապրում էի»: Ամերիկական սահմանադրութիւնը պահպանել է յամբողջովին և մինչև օրս նրա ոչ մի հիմքը չէ խախտուել: Զանազան իշխանութիւնների մէջ հաւասարակշռութիւնը մինչև օրս չէ խախտուել: Հանրապետութեան նախագահը չէ անբարոյականացրել կօնգրէսի անդամներին կաշառքով և չէ դարձրել նրանց իր ստրուկը: Կօնգրէսը չէ գօտացրել հանրապետութեան նախագահի գործունէութիւնը և չէ ենթարկել նրան իր իշխանութեանը: Գուցէ օրէնսդիր իշխանութիւնը մի քիչ ուժեղացրել է իր ազդեցութիւնը վարչութեան շրջանի վրայ. բայց եթէ Գէորգ Վաշինգտօնը յարութիւն առնել կարողանար, կարող էր լինել նոյնքան մեծ և օգտակար նախագահ հանրապետութեան համար, որքան որ էր նա հարիւր տարի առաջ: Ոչ օրէնսդիր, ոչ էլ գործադիր իշխանութիւնները ոչ մի անգամ ձեռք չեն բարձրացրել ժողովրդի ազատ իրաւունքների վրայ: Նահանգները չը քանդեցին ամերիկական դաշնակցութիւնը, իսկ Ֆէդէրացիան չոչնչացրեց Նահանգների անկախութիւնը: Այդ պատճառով ամենեւին զարմանալի չէ, որ ամերիկացիները պարծենում են այդպիսի պետական հիմնարկութիւններով, որոնք հնարաւորութիւն տւին հասնելու այդպիսի փայլուն հետեւանքների, անվստահօրէն եկան ազգամիջեան պատերազմի բովից, ընդունակ եղան իրանց հպատակեցնելու Նահանգների եռապատկած թիւը և քսան անգամ առաջնացած ազգաբնակչութիւնը, զարգացրին ժողովրդի քաղաքական հասունութիւնը միւս պետութիւններում չը տեսնուած չափով. վերջապէս՝ որոնք նպաստեցին աւելի լայն տեղական ինքնավարութեան, որպիսիք երկրագնդի վրայ երբ և է և ուր և է գոյութիւն են ունեցել. բացի այդ՝ նրանք ընդունակ երեացին միատեղ ապրելու այդ տեսակ տեղական ինքնավարական հիմնարկութիւնների հետ: Այդ պետական հիմնարկութիւնների ոչ նւազ արժանիքներից է և այն սէրը, որ նրանք կարողացել են ներշնչել ժողովրդին դէպի իրանց, կապելով բոլորին իրանց հետ: Ի հարկէ կարելի է ցոյց տալ այս կամ այն թերութիւնը Ամերիկայի հասարակական կազմում. ի հարկէ՝ կարելի էր նրանց հիմնարկութիւնների մէջ մտցնել որոշ գործնական կատարելագործութիւններ, որոնք, չը պակաս

սացնելով այդ հիմնարկութիւնների մեծ առաւելութիւնները, կը հեռացնէին նրանց թերութիւններից մի քանիսը: Սակայն ընդհանրապէս սահմանադրութիւնն այնքան մեծ ու հաստատուն համակրութիւն է վայելում քաղաքացիների կողմից, որ, ըստ երեւոյթին, ոչ մի հաւանակութիւն չը կայ, որ կը ծագեն նրանում հիմնական փոփոխութիւններ անելու առաջարկներ: Այդ ընդհանուր յարգանքը դէպի նա ինքն ըստ ինքեան կազմում է մէկն ամենաարդէնաւոր և շատ բան խոստացող տարրերից ամերիկական ազգաբնակչութեան բնաւորութեան մէջ» *):

Ինչո՞վ կարելի է բացատրել ժողովրդական մասաների ըզգացած այդ համակրանքը, նրանց այդ սերտ կապը դէպի իրանց երկրի քաղաքական կարգերը: Եւ միթէ այդ սէրն ու կապը դէպի իրանց հայրենիքի քաղաքական կազմը միայն Միացեալ-Նահանգներում է նկատուում. ամենեւին: Զւելցէրացիներն աւելի ևս գուրգուրանք են տածում դէպի իրանց երկրի քաղաքական կարգերը, դէպի իրանց Ֆէդէրացիան ու մանրիկ կանտօնները: Ինչո՞վ բացատրել այդ երեւոյթը: Ինչո՞ւ այդ կապը, այդ սէրն ու գուրգուրանքը զուք չէք նկատում կամ, ուղղակի, ինչո՞ւ նա բացակայում է Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և միւս ցակայում է Իտալիայում, Ինչո՞ւ այդ հզօր երկրներում աշխատած պետութիւններում. ինչո՞ւ այդ հզօր երկրներում աշխատածը մասսաները հանդիսանում են կամ թշնամի կամ, ամենաշատը, անտարբեր տարրեր դէպի իրանց երկրի քաղաքական կազմը:

Իրա միակ պատասխանն հետեւեալն է: Ժողովրդական մասսաներն, ընդհանուր առմամբ, մատէրիալիստ, նիւթապաշտ են, բառիս հասարակ, կենսական մտքով (ոչ մարքսիստական կամ գիալէքտիկական մատերիալիզմ). նրանց համար իրանց հանդիստը և առօրեայ ապրուստը վճռական նշանակութիւն ունի: Ի հարտը և առօրեայ ապրուստը վճռական նշանակութիւն ունի է նաև ի հանդիստը և բարօրութիւնը, զրա հետ միասին տալիս է նաև մտաւոր, կուլտուրական բարիքներ և և ապահովում նոյն մասսաների համար ամեն տեսակ ազատութիւններ—ի հարկէ, ասում սաների համար ամեն տեսակ ազատութիւններ—ի հարկէ, ասում ենք, այդ տեսակ կարգերն աւելի թանգ, աւելի սիրելի կը լինեն նոյն մասսաներին: Եթէ այդ մասսաները բուսականաչափ կըրթ-

*) Дж. Брайтс—ibid. երես 343 (Միժուեր ընադրից այդ կտորը տարբեր է թարգմանել):

Ֆէդէրալիզմն օր օրի վրայ զրաւում է այսօր նորանոր հետադարձներ Աւստրիայում և Վէնգրիայում: Ֆէդէրալիզմն ունի բազմաթիւ երկրագրուներ նաև Անգլիայում: Այնտեղ, ինչպէս ասում է Դայսին, «գոյութիւն ունի միատեսակ անորոշ դմայումն ֆէդէրալիզմով» *): Անգլիական հսկայական պետութիւնն առանց ֆէդէրալիզմի ապրել չէ կարող: Նրա ներկայ ունիաարիզմը բաւական թոյլ ու թափանցիկ է գաղութների վերաբերմամբ: Պոնդր կայսրութեան համար աւելի դիւրին է զարգանալ ֆէդէրալիստական ձևով, ասում է Ելլինէկը, քան ունիտարական եղանակով, որքան էլ որ վերջինս ազակենտրօնացած լինի: Դաշնակցական պետական ձևը դեռ ևս առաջիկայում մեծ դեր ունի խաղալու քաղաքակիրթ պետութիւնների ապագայ կազմակերպութեան մէջ: Այժմ արդէն նա տիրող ձևն է ամերիկական մայր ցամաքում: Սակայն Բրիտանական կայսրութիւնն էլ կարող կը լինի հաստատել իր ձեռքում պահել իր գաղութները միայն այն պայմանով, եթէ կարողանայ իրականացնել Imperial Federation-է գաղափարը, այն ինչ ներկայումս նա, եթէ ոչ իրաւարանօրէն, գոնէ քաղաքականապէս արդէն պետութիւնների գաշնակցութեան բնոյթ ունի, և այն էլ խիստ խախուտ» **):

Ֆէդէրալիստական գաղափարը վաղուց է գոյութիւն ունեցել և Ռուսաստանում, միայն նա ապաստանած է եղել մի քանի ինտելլիգենտ զուգններում: Այսօր այդ գաղափարն սկսել է արդէն բաւական արագ տարածւել, մտնել ժողովրդական լայն խաւերի մէջ, իհարկէ յեղափոխական-սօցիալիստական կուսակցութիւնների շնորհով, որոնց համարեա բոլորի ձգտման կէտն է դէմօկրատիական գաշնակցական հանրապետութիւնը:

Իսպանիայում և Պորտուգալիայում ևս գոյութիւն ունի ֆէդէրալիստական մի բաւական նկատելի հոսանք, որը պահանջում է ամբողջ Պիրինեան թերակղզին վերածել գաշնակցական մի պետութեան:

Նրա իսկական հայրենիքն Ամերիկան է: Ծնունդ առնելով Միացեալ-Նահանգներում և 120 տարւայ աւելի կեանք ունենա-

*) Г. Еллинекъ—Право сов. гос. брես 526—527.

**) Дайси—ibidem—брес 194: Նոյնը վկայում է և Փրանսիացի Lacroix-ն—(տես Encycl. Général. t. IV, «Fédéralisme» յօդւածը).

լով, նա ճոխացրեց, ընդարձակեց ու զօրացրեց այդ երկիրը, որի հարստութիւնն ու կուլտուրան հասան իրանց գաղաթնակէտին, ի հարկէ որքան՝ դա հնարաւոր է բուրժուական կարգերի ժամանակ: Այդ օրինակը վարակեց Հիւսիսային և Հարաւային Ամերիկայի պետութիւններին, մէկը միւսի ետեից նրանք անցան ռամկավար գաշնակցական հանրապետական կարգերի: Ամբողջ Հիւսիսային Ամերիկան, առանց բացառութեան, գաշնակցական է. Միացեալ-Նահանգներ, Մեքսիկա և Կանադա (վերջինս իբր աւտօցեալ-Նահանգներ, Մեքսիկա և Կանադա (վերջինս իբր աւտօցեալ-Նահանգ Մեքսիկայի): Հարաւային Ամերիկայում էլ Բրազիլիա, Վէնէցուէլլա և այլն, ընդունել են գաշնակցական կազմակերպութիւն: Զիլի, Էկւատոր և այլն, երեւի շուտով ստիպւած կը լինեն անցնելու նոյնատեսակ կարգերի, որովհետեւ ժողովրդները տեսնում են դրացիների ազատութիւնը, նրանց բարդաւաճումը և օրինակ են առնում, վարակւում նրանցից:

Մի քանի տարի առաջ Եւրօպական մամուլի մէջ բաւական ազմուկ հանեց «Իրերական ընդհանուր գաշնակցութիւնը»: Իբր թէ Իսպանիան, Պորտուգալիան և Հարաւային Ամերիկայի բոլոր պետութիւնները, որոնք իրերեան ծագումից են (Պիրինեան թերակղզու բնակչութիւնից սերւած), պիտի միանային և կազմէին մի հսկայական ֆէդէրացիաների: Միւս կողմից էլ յայտնի է Մօնրօէի ցեղի մեծ ֆէդէրացիաների: Միւս կողմից էլ յայտնի է Մօնրօէի ցեղի մեծ ֆէդէրացիաների: «Ամերիկան ամերիկացիների համար», քավարգապետութիւնը, «Ամերիկան ամերիկացիների համար», քավարգապետութիւնը, «Ամերիկան ամերիկացիների համար», քավարգապետութիւնը է նա: Տնտեսական շահերի այդ ընդհանուր հնարաւոր է պտշտպանել միայն և միայն քաղաքական մի ընդհանուր կազմակերպութիւնով: Առևտրական և այլ տեսակի գաշնադրերն ու «ալլիանսները», ինչպէս «Յոսպետական գաշնակցութիւնը» Եւրօպայում, այդ դէպքում անգոր են:

Ինչ կասկած, որ աւելի շուտ իրականանալու հաւանականութիւն ունի «Ամերիկական Ընդհանուր Դաշնակցութիւնը», քան «Իրերական Դաշնակցութիւնը»:

Աւստրալիան ամբողջովին կազմում է մի ներքին գաշնակցական կազմով աւտօնօմ գաղութ: Մնում է միացնել նրա հետ Նոր-Զելանդիան: Այն ժամանակ այդ բաւական ընդարձակ ֆէդէրացիան կը կազմէ աշխարհի ամենատաջադէմ և երջանիկ դէրացիան կը կազմէ աշխարհի ամենատաջադէմ և երջանիկ դէմօկրատիան, որը հնարաւոր է բուրժուական կարգերի ժամանակ: Մնում են խաւար Ասիան և Աֆրիկան: Այդ երկու հնազոյն

մայր ցամաքներում էլ խաւարն ու բռնութիւնը դեռ շատ անթափանց են... Սակայն, չընայելով դրան, ֆէդէրալիզմը կրկին գտել է մի երկու մանրիկ դռներ և ներս է թափանցում դէպի այդ մութ վայրերը: Ասիայում նա մուտք է գործում Ռուսաստանի միջով: Ն. Յ. Իաշնակցութիւնը Կովկասում և Թիւրքիայում հանդիսանում է այդ զաղափարի առաջընթաց կարապետը: սօց. յեղափոխականները թէ Կովկասի, թէ Միջին-Ասիայի և թէ Սիբիրի կողմերում, Վրացի սօցիալիստ-ֆէդէրալիստները նոյնպէս Կովկասում... այդ բոլորն սկսում են խմորել, վարակել Ասիայի մթնոլորտը: Ո՞վ է իմանում, դաժան Բրոնզոսն ինչքեր է պատրաստում Հնդկաստանում, Եպոֆիայում:

Աֆրիկան, վայրենի ու բարբարոս Աֆրիկան անգամ արդէն յոյսեր է տածում, որ իր գրկում անգլիական դրօշի տակ շուտով կունենայ մի ֆէդէրացիա, որի մէջ կը մտնեն Նատալի երկիրը, Կապի գաղութը, Օրանժը և Տրանսալալը: Այդ բոլոր ակտիւսմ գաղութների ֆէդէրացիան այսօր տնտեսական և կուլտուրական անհրաժեշտութիւն է, մի տեսակ հրամայական պահանջ. և նա շուտով կիրականանայ. Աւստրալիայի օրինակը բոլորի աչքի առջևն է. նա վարակիչ է:

Համամարդկային ֆէդէրացիա: «Քաղաքակիրթ պետութիւնների ապագայ կազմում, ասում է Գ. Ելլինէկը, դեռ ևս մեծ զեր պիտի խաղայ ֆէդէրացիան»: Եւ դա մի մետաֆիզիքական Ֆրագ չէ, դուրս չպրտւած գեղեցկութեան համար. դա արդիւնք է բարեխիղճ և մանրակրկիտ ուսումնասիրութեան, որ Ելլինէկը կատարել է իր տաղանդաւոր աշխատութիւններում, մանաւանդ նրանցից երկուսում—«Ներկայ պետութեան իրաւունքը» և «Պետական միացումների կամ Իաշնակցութիւնների ուսուցումը» յայտնի գրքերում:

Իաշնակցական պետութեան զաղափարի զարգացման հետ միասին պէտք է, ժամանակի ընթացքում, փոխել նաև մանր և միջակ պետութիւնների վիճակը, որովհետև նրանք, այսօր չէ վաղն ստիպւած կը լինեն միանալու աւելի խոշոր միութիւնների հետ: Հէնց նրանում էլ կայանում է մանր պետութեան աւելի խոշոր դաշնակցութիւնների հետ միանալու առաւելութիւնը, որ նրա մինչև այդ ունեցած կասկածելի կամ տատանող գոյութիւնը երկար ժամանակով ապահովում է արտաքին յարձակումներից:

Ճշմարիտ է, դաշնակցական պետութիւնը կարող է դառնալ մի միացեալ պետութիւն՝ զրկելով իր բոլոր անդամներին պետական բնոյթից, բայց չը կայ ոչ մի այնպիսի միջոց, որով հնարաւոր լինէր դադարեցնել¹⁰ որ և է պետութեան գոյութիւնը հակառակ իր կամքի: Եթէ դա իրաւարանօրէն հնարաւոր է, քաղաքականօրէն համարեա բոլորովին անհնար է, ինչպէս դա ակնհերև պացուցւում է Միացեալ-Նահանգների օրինակով. հարաւի նահանգների ապստամբութիւնը զսպելուց յետոյ, վերջ ի վերջոյ ստիպւած եղան ընդունելու նրանց իրանց դաշնակցութեան մէջ նախկին պայմաններով» *):

Պետութիւնների զարգացման անցեալն ու ներկան մեզ ցոյց են տալիս այն ուղին, որով ընթանալու է այդ զարգացումը նաև ապագայում: Մենք տեսնում ենք, որ մինչև օրս մի կրկնակի շարժում հրամայօրէն տիրում է այդ զարգացման անցեալում և ներկայում. մի կողմից մանր պետութիւնները կլանւում, ձուլւում են խոշոր պետութիւնների մէջ և արտադրում հսկայական համաշխարհային միութիւններ, ինչպէս Անգլիա, Ռուսաստան, Աւստրիա և այլն. միւս կողմից նոյն այդ խոշոր միութիւնների մէջ նկատւում է մանր ազգութիւնների ու շրջանների հակադարձ շարժումը, նրանց ըմբոստացումն այդ կենտրոնների, այդ հսկայական միութիւնների ցէնտրալիստական բնոյթի դէմ:

Մի կողմից՝ աճող տնտեսական կեանքը, խոշորացող արտադրութիւնը և կենտրոնացող կապիտալն ու փոխանակութիւնը պահանջում են պետութիւնների աճեցում, մանր քաղաքական միութիւնների կլանում աւելի և աւելի խոշոր միութիւնների մէջ, ութիւնների կլանում աւելի և աւելի խոշոր միութիւնների մէջ, մինչև որ ստացւի համաշխարհային մի միութիւն՝ ճիշտ ու ճիշտ միջին, —իսկ միւս կողմից ամեն մի երկիր, ամեն շրջան, տընընոյթին, —իսկ միւս կողմից ամեն մի երկիր, ամեն շրջան, տընընոյթին, —իսկ միւս կողմից ամեն մի երկիր, ամեն շրջան, տընընոյթին, —իսկ միւս կողմից ամեն մի երկիր, ամեն շրջան, տընընոյթին, —իսկ միւս կողմից ամեն մի երկիր, ամեն շրջան, տընընոյթին, —մի միութիւն և միօրինաբաղմաթիւ կիսազերիշխան մասերով,—մի միութիւն և միօրինաբաղմաթիւ կիսազերիշխան մասերով,—մի միութիւն և միօրինաբաղմաթիւ կիսազերիշխան մասերով,—մի միութիւն և միօրինաբաղմաթիւ կիսազերիշխան մասերով:

Գերմանիայի մի ուրիշ յայտնի իրաւագէտ Հուգօ Պրոյսը հետևեալ գաւորութիւններն է յայտնում նոյն թէմայի մու-

*) Г. Еллинекъ —ibid.—երես 527.

սին *)։ Պետութիւնն անդամ է մի աւելի բարձր միութեան—միջազգային հասարակութեան։ Այդ հասարակութիւնը դեռ ևս լիապէս կազմակերպւած չէ իբր մի հաւաքական կամ կօլլեկտիվ անձնաւորութիւն, իբր մի պետութիւն, բայց այդ համաշխարհային միութեան սաղմերն այսօր դոյութիւնն ունեն, նկատելի են և գործում են։ Այդ սաղմերն են միջազգային իրաւունքը և իրաւական յարաբերութիւնները, միջազգային վարչական պարտականութիւնները—ինչպէս գողերին ու ոճրագործներին իրար յանձնելը, Կարմիր Խաչը, զանազան դաշնադրները և այլն, և այլն։ Այդ բոլորը հանդիսանում են իբր բաղադրիչ սաղմեր ապագայ համամարդկային կազմակերպութեան։ Նրանք այսօր մասնակի համաձայնութեան ընդթ ունեն, իսկ վաղը կարող են դառնալ ստիպողական և վերածել մի ընդհանուր համամարդկային սահմանադրութեան, որը կորոշէ մարդկութեան կենտրոնական իշխանութեան բոլոր իրաւասութիւնները, իսկ մնացած բոլոր ասպարէզները կը թողնէ առանձին երկրների իշխանութիւններին։ «Անկասկած է, որ զարգացման ընթացքը տանում է դէպի այդ կողմը, դէպի բազմաթիւ պետութիւնների վերջնական կազմակերպութիւնը միջազգային հաւաքական միութեան մէջ իբր մի օրգանական ամբողջութեան»։ Դա պետական կապակցութիւնների կամ ասօցիացիաների իդէալն է, նրանց ձգտման կէտը։

Ֆէդէրացիայի հիմքերի մասին խօսելիս, մենք կանգ առանք նրա տնտեսական հիմքերի վրայ. մենք յայտնեցինք այն միտքը, որ երկրագնդի վրայ փոխանակութիւնը քանի դնում կենտրոնանում է, իսկ արտադրութիւնն ապակենտրոնանում է։ Ճշմարիտ է, խոշորանում է և արտադրութիւնը, բայց նրա խոշորանալն ունի որոշ սահման։ Փոխանակութեան կենտրոնացման սահմանն ամբողջ երկրագունդն է, իսկ արտադրութեան կենտրոնացման սահմանը որոշ վայրեր, որոշ շրջաններ են. մէկը համաշխարհային երևոյթ է, իսկ միւսը տեղական։ Բնական հարստութիւնների վերաբերմամբ այդ բանն աւելի քան ակնհայտ է. Բազուի նաւթը, Չանգեղուրի պղինձը, Ճիաթուրի մարգանսեցը և այլն,—զրանք բոլորն էլ այնպիսի հարստութիւններ են, որոնք լոկ որոշ տեղում կա-

*) Hugo Preuss—«Gemeinde, Staat, Reich als Gebietskörperschaften», Berlin, 1889 թ. էր. 256.

րող են գտնուել։ Մի քիչ տարբեր է ինդուստրիայի կամ ճարտարաւեստի, արտադրութեան այդ ամենաէական ճիւղի հարցը։ Տեղական պայմաններն, այն, որոշ դեր խաղում են այդ հարցում. օրինակ՝ ուր մօտակայ խոտաւէտ լեռներ կամ արօտատեղիներ կան, որոնց վրայ արածում են ոչխարների մեծ հօտեր, այդտեղ աւելի գիւրութիւնով կը հաստատուեն կտորներ գործելու գործարաններ. ուր պղնձի հանքեր, ածուխ, երկաթ կայ, այնտեղ աւելի յարմար է հիմնել մետաղէ ապրանքներ պատրաստող գործարաններ, քան այն վայրերում, ուր այդպիսի տեղական յարմարութիւններ չը կան։ Այդպիսի օրինակներ կարելի է բերել անվերջ թւով։ Չը նայելով, որ բնական պայմանները որոշ չափով սահմանափակել կարող են ինդուստրիայի տարածումը, սակայն դա զարգացման որոշ աստիճանի վրայ այլ ևս դադարում է արգելափոխ հանգամանք լինելուց։ Հաղորդակցութեան միջոցների զարգացումը—այսինքն նըրանց արագացումն ու էժանացումը, որոշ չափով վերացնում են այդ արգելքները և հնարաւոր են դարձնում, օրինակ՝ Լիծոնում յայդ արգելքները և հնարաւոր են դարձնում, որ ինչպէս Վանդալիստի, Մանչէստերում կամ Գլազգօյում բրդեղէնի գործատաքսեղէնի, Մանչէստերում կամ Գլազգօյում բրդեղէնի գործարաններ բանալ, մետաքսը հաւաքելով Կովկասից ու Թուրքեստանից, բուրգն ու բամբակը տանելով Եգիպտոսից կամ Միջատանից, բուրգն ու բամբակը տանելով Եգիպտոսից կամ Միջագետքից, Պարսկաստանից ու Հնդկաստանից։ Այդպիսով ինդուստրիան հնարաւորութիւն է ստանում տարածելու ամեն տեղ, ապակենտրոնանալու, ցրել գալու երկրագնդի բոլոր վայրերում, ուր շաղկապնակութեան խտութիւն և զարգացման քիչ ու շատ բարձրութիւն դոյութիւն ունի։

34 մեծաղիւր երես փաստեր բերելով ինդուստրիայի տարածման ու ապակենտրոնացման մասին, կրապօտկիսն ասում է. «Այլ ևս թւական փաստեր չեմ առաջ բերում, փաստեր, որ իմ ձեռքի ևս թւական անագին քանակութիւնով և որոնք խօսում են արտադրութեան բոլոր ճիւղերի ապակենտրոնացման և նրանց տարածման մասին ամբողջ երկրագնդի վրայ. այլազան կամ բազմատեսակ արտադրութիւնները բոլորն էլ համաչափ կերպով զարգանում են, փոխանակ առանձնակի մասնադիտութեան, և դա կադնում են, փոխանակ առանձնակի գիծը։ Ամեն մի ժողովուրդ իր մոտ է մեր ժամանակի բնորոշ գիծը։ Ամեն մի ժողովուրդ իր կարգին դառնում է արտադրող ազգ, և մօտենում է այն օրը, երբ Եւրօպայի, Միացեալ-Նահանգների և նոյն իսկ Ասիայի և Ամերիկայի ամենայնաամսաց ժողովուրդները կըսկսեն արտադրել

այն ամենը, ինչ որ իրանց անհրաժեշտ է: Պատերազմները և պատահարները կարող են միայն ժամանակաւորապէս յետ պահել արտադրութեան զարգացումը, բայց չեն կարող կանգնեցնել նրա անխուսափելի ընթացքը: Ամեն մի նոր սկսուող գործում գժւար են սկզբի քայլերը, բայց հէնց որ նոր արտադրական ճիւղը հաստատուն հիմքեր դրեց, նա անխուսափելիօրէն իր ետեից քարշ է տալիս, ծնեցնում է հարիւրաւոր ուրիշ ճիւղեր և առաջ է ընթանում արագացած քայլերով» *):

Ներկայ բուրժուական կարգերի թաղաւորութեան ժամանակ շատ երկրներում (համարեն ամբողջ Եւրոպայում, Միացեալ-Նահանգներում, Եապօնիայում, Աւստրալիայում և այլն) աշխատաւոր մարդկութիւնն արտադրում է այն բոլոր իրերը, որոնք անհրաժեշտ են մարդ արարածի երջանիկ ապրելու համար, սակայն այդ արտադրւած բոլոր արժէքներն իբր ապրանք արտահանուում են ուրիշ աւելի յետամնաց, ինդուստրիայից դուրկ երկիրներ ծախելու, կապիտալիստների զբաղմը հաստացնելու համար: Եւ քաղաքակիրթ երկիրների աշխատաւոր դասակարգերը, որոնք կեանք են տալիս այդ երկրների անհուն հարստութիւններին, որոնք ստեղծում են ամեն տեսակ գործածական արժէքներ, նոյն այդ մարդիկը, որոնց արտադրած արժէքները հեղեղում են երկրագնդի նոյն իսկ ամենախուլ ու խաւար անկիւնները,—նոյն այդ աշխատաւոր մարդիկը յաճախ, շատ յաճախ մնում են սոված, մերկ, կարիքից խեղդւած... Ներկայ դասակարգային շարժման սօցիալիստական կազմակերպութիւնների ձգտման միակ կէտն էլ կայանում է հէնց նրանում, որ աշխատաւորն ստանայ իր աշխատանքի լիակատար արդիւնքը, որ նա տէր լինի իր աշխատանքի և նրա բոլոր գործիքներին, համայնացնելով թէ աշխատանքը, թէ արտադրութեան բոլոր միջոցներն ու հողը:

Սակայն ի՞նչպէս կատարել աշխատանքի և նրա միջոցների այդ համայնացումը. ի՞նչպէս իրականացնել սօցիալիզմը: Արդեօք արար աշխարհը կամ նրա մի խոշոր մասը—մի Եւրոպա, կամ Ռուսաստան, դարձնել մի կենարօնացած տնտեսական ամբողջութիւն, սօցիալիստական մի միաձոյլ հասարակութիւն, որի

*) П. Кропоткинъ—«Земледѣліе, промышленность и ремесла, крես 34.

կենտրոնական պարլամենտը սահմանէ օրէնքներ ամբողջ երկրի համար, կարգաւորէ այդ հսկայական սօցիալիստական միութեան արտադրութիւնը, նրա տնտեսական ամբողջ կեանքը, թէ՛ արդեօք այդ հսկայական միութիւնները պէտք է քայքայեն, բաժանեն մանր տնտեսական միութիւնների լոկ այնպիսի մեծութեամբ, որ նրանց վրայ ընակւած մարդկային հասարակութիւնները կարող լինեն իրանք իրանց բոլոր զարգացած և զարգացող կարիքներին բաւարարութիւն տալ, մտնելով փոխանակական յարաբերութիւնների մօտաւոր և հեռաւոր բազմաթիւ այլ տնտեսական միութիւնների հետ:

Առաջին տեսակի, այսինքն «կենտրոնացած» սօցիալիստական խոշոր միութիւնների կողմնակից է սօցիալ-դէմօկրատիան: Նրա ռահվիրաները—Մարքսն ու Էնգելսն այդպէս էին իրանց պատկերացնում ապագայ կարգերը: Նրանց ամենահեղինակաւոր աշակերտը, Կ. Կառլցկին, մերժելով ապագայ հասարակութեան կազմի մանրամասն յատակագիծը տալը (համարելով դա ուտօպիա), հետեւեալ բառերն է ասում նոյն այդ կաղմի մասին. «Բայց արտադրութեան միջոցների գլխաւոր խումբը պէտք է անցնի պետութեան ձեռքը, որովհետեւ միայն ներկայ պետութիւնը կարող է հանդիսանալ իբր շրջանակ սօցիալիստական հասարակութեան համար, նոյնպէս և ստեղծել այն պայմանները, որոնց մէջ համայնական կամ ընկերական նախաձեռնութիւնները կարող են դառնալ մի մի օղակներ սօցիալիստական արտադրութեան»:

Այդ քաղաքից պարզ է, որ ապագայ սօցիալիստական հասարակութիւնը, գոնէ սկզբներում, պէտք է ամփոփւած լինի ներկայ պետութեան սահմաններում: Վերջապէս Ատլանդիկուսի դիրքը, որին յառաջարան է գրել Կ. Կառլցկին, Էդ. Բելլամիի հռչակաւոր վէպը («Հարիւր տարի յետոյ»), որը եռանդով քարոզում է սօցիալ-դէմօկրատիական կօլլէկտիվիզմը,—ցոյց են տալիս հետեւալը. «Ապագայի սօցիալիստական հասարակութիւնը մարքսիստները երեւակայում են իբրև մի ահագին ասօցիացիա, որը քիչ ու շատ համապատասխանում է ներկայ պետութիւններին: Այդ ասօցիացիան դտնում է միւս նման ասօցիացիաների հետ որոշ տնտեսական կապակցութեան մէջ, որովհետեւ ներկայ պետութիւններից ոչ մէկը չէ կարող ապրել առանց օտար երկրների ապրանքների ներմուծութեան: Այդպիսի անկախ սօց-

խալիստական պետութիւնների յարաբերութիւնները չեն կարող կարգաւորել որ և է բարձրագոյն իշխանութեան միջոցով և ամեն մի պետութիւն միւսի վերաբերմամբ մի տեսակ անկախ ձեռնարկողի դիրք ունի» *) : Ի հարկէ, այդ խոշոր սօցիալիստական պետութիւնների մէջ արտադրութեան ձևը խոշոր է, շատ խոշոր, աւելի քան ներկայ կապիտալիստական խոշոր արտադրութիւնը: Իսկ այդ անկախ սօցիալիստական պետութիւններն, իրար հետ ազատ ճամաձայնութիւն կայացնելով, կը կարգաւորեն իրանց փոխանակութիւնը, հաւասարակշռութիւն կը հաստատեն փոխանակւած ապրանքների. այն ինչ համաշխարհային արտադրութեան և փոխանակութեան մէջ նորից կը թաղաւորէ անարխիան, անշափ, անսահման, ոչ օրինահամաձայն խառնափնթորութիւնը: Դա ի հարկէ, մի խոշոր հակասութիւն է այն վարդապետութեան կողմից, որի հիմնադիրներից մէկը հեռակալ բաւերով է որոշում ապագայ հասարակական արտադրութեան եղանակը:

«Արտադրութեան միջոցների հասարակական սեփականութիւն դառնալու հետ միասին կոչնչանայ նաև աղբանքային արտադրութիւնը, դրա հետ էլ միասին կանհետանայ արդիւնքի տիրապետութիւնն արտադրողի վրայ: Հասարակական արտադրութեան անարխիան կը փոխարինւի նախամտածւած ծրագրով կազմակերպւած արտադրութիւնով: Առանձին անհատների վարած կոխն իրանց գոյութեան համար՝ կը դադարի: Կարելի է ասել, որ այդպիսով մարդը վերջնականապէս կը տարբերւի կենդանական թագաւորութիւնից և գոյութեան անսանական պայմաններից կանցնի իսկական մարդկային պայմաններին» *) :

Այդպէս չէ կարող լինել ցէնտրալիստական սօցիալիզմի դէպքում համամարդկային արտադրութեան վերաբերմամբ: Առանձին առանձին պետութիւնների ներսում արտադրութիւնը կը կարգաւորուի, սակայն մարդկութեան ամբողջութեան համար նա կրկին կը մնայ նոյն անարխիայի մէջ:

Ցէնտրալիստական սօցիալիզմին մենք հակադրում ենք ֆէդերալիստական սօցիալիզմը, որն իրան պատկերացնում է ապագայ կազմն այսպէս. մարդկութիւնը բաժանւում է բազմաթիւ ազգա-

յին-անտեսական համայնքների: Իւրաքանչիւր համայնք պէտք է կազմւած լինի այնպէս, որ ինքն իր բոլոր կարիքներին բաւարարութիւն տայ,—այսինքն ինքն իր բոլոր աշխատանքները լըրացնէ, բոլոր պիտանի արժէքներն արտադրէ: Այդ բոլոր տնտեսական համայնքները կամ միութիւնները պէտք է կապւած լինեն իրար հետ ազատ ֆէդէրատիվ կապերով: Նրանք բոլորն էլ վարելու են իրանց բոլոր ներքին օրէնսդրական, վարչական ու դատական գործերը գերիշխան կերպով, իսկ նրանց միջ-համայնական յարաբերութիւնները ղեկավարելու է մի ընդհանուր մարմին, մի միջազգային պարլամէնտ: Սա է ֆէդէրալիստական սօցիալիզմի իդէալը: Այդ միտքը բարոյողներն են—Րօբերտ Օուէնը, Տօմպօսը, Ֆուրիէն, Դիւրինգը, Օպէնհայմէրը և ուրիշները:

Դա է համամարդկային ֆէդէրացիան. այդ ուղղութիւնով է ընթանում մարդկային կեանքի զարգացումը:

Ներկայումս լուսաւոր մարդկութեան առջև դրւած է մի շատ ծանր հարց, լուծելու մի խնդիր—սօցիալական խնդիրը. ի՞նչ պէս ապահովել աշխատաւորի համար իր աշխատանքի լիակատար արդիւնքը: «Եւրօպական պատմութեան առաջիկայ շրջանը պէտք է լուծէ այն խնդիրը, թէ ի՞նչպէս բուսցնել հաց և արտադրել ինդուստրիական ու այլ տեսակ ապրանքներ հէնց այն ժողովրդի համար, որն զբաղւում է հողի մշակութիւնով և ինդուստրիայով: Իւրաքանչիւր շրջան պէտք է դառնայ և՛ արտադրող և՛ սպառող իր համար թէ ինդուստրիական ապրանքների և թէ երկրագործութեան արդիւնքների» *) :

Հնարաւոր է արդեօք ներկայումս ապրել այդպիսի երջանիկ կարգերով: Կարելի է արդեօք, ընդհանուր առմամբ, ապրել այնպէս, որ իւրաքանչիւր երկրի աշխատաւոր ժողովուրդն արտադրէ իր համար համարեա բոլոր անհրաժեշտութիւնները, և բացառիկ դէպքերում գիմէ միջ-համայնական փոխանակութեան:

Ոչ, դա ներկայումս անհնար է: Անհնար է, որովհետև կան Սիրիբիա, Չինաստան, Հնդկաստան, Աֆրիկա... մութ, խաւար, կուլտուրապէս ստոր վիճակի երկիրներ, որոնք չեն կարողանում դեռ ևս արտադրել իրանց համար նոյն իսկ անհրաժեշտագոյն իրերը, որոնք ստիպւած են դրսից ստանալու շատ ապրանքներ:

✓ *) М. Туганъ Вароновскій. «Совр. Соціализмъ» երես 152-153.
**) Տր. Էնգէլս—Երիտական Սօցիալիզմ, երես 72 (հայերէն թարգմ.):

*) П. А. Кропоткинъ. «Земледѣліе» և այլն—երես 35—36.

աւելի էժան քան իրանք կարող էին իրանց ներկայ յետամնաց վիճակում արտադրել: Քանի որ Ֆրանսիան ունի իրանից մի քանի տասնեակ անգամ մեծ խաւար գաղութներ, ուր կարող է արտահանել իր երկրի գործարանների ապրանքները, քանի որ բոլոր միւս մեծ պետութիւններն էլ նոյն վիճակում են,—դեռ անհնար է պնդել, թէ հասունացել է սօցիալական հարցը, թէ նա —կապիտալի ու աշխատանքի դարեւոր ու համաշխարհային ճակատամարտը վերջանում է և այն էլ՝ պսակելով սօցիալիստական ցանկալի կարգերով: Բայց «երբ հօր պետութիւնները կը բաժանեն իրանց մէջ Աֆրիկայում դեռ ազատ մնացած տարածութիւնները, երբ կը միաւորեն դեռ ևս բարբարոս պետութիւնները և կը դառնան քաղաքակիրթ, երբ վերջնականապէս կը հաստատուի իւրաքանչիւր պետութեան ազդեցութեան շրջանը,—այն ժամանակ, ասում է Կուլչիցկին, կը հասունանայ պետութիւնների համաշխարհային ֆէդէրացիայի գոդափարը» *): Իսկ մենք կաւելացնենք, այն ժամանակ կը հասունանայ սօցիալիստական խնդիրը, «կը հնչէ կապիտալիզմի ժամը և էքսպրօպրիատորներին կենթարկեն էքսպրօպրիացիայի», ինչպէս ասում է Մարքսը, «կապիտալի» վերջում. կը ջնջւի յաւելեալ աշխատանքի ու կեղեքման գաղափարը. բոլորը կը դառնան աշխատաւորներ, որոնց ներհամայնական բոլոր յարաբերութիւնները կը կարգաւորեն համայնքների պարլամենտները, իսկ միջհամայնական յարաբերութիւնները—այդ բոլոր համայնքների դաշնակցական պարլամէնտը: Մարդկութիւնը բաղկացած կը լինի տնտեսական ու ազգային հիմքերով պայմանաւորւած համայնքներից, որոնք կը լինեն կիսագերիշխան պետական միութիւններ: Այնուհետև այդ առաջին յարկի վրայ աստիճանաբար կը բարձրանան միւս յարկերը.—նախ կը կազմւի, օրինակ, Եւրօպայի Միացեալ-Նահանգներ, Ասիայի Միացեալ-Նահանգներ, Աֆրիկայի Միացեալ-Նահանգներ և այլն, իսկ յետոյ դրա վրայ էլ կը բարձրանայ երրորդ և վերջին յարկն այն հսկայական շէնքի, որի անունը լինելու է «Համամարդկային ֆէդէրացիա» կամ «Համամարդկային Միացեալ-Նահանգներ»:

*) Л. Кульчицкий. «Федерализмъ», Социалистическая политика, ст. 115, первый сборникъ «Серпа»:

Մարդկային կուլտուրայի զարգացումը կրկնակի ճանապարհով արագ առաջ է ընթանում. կենտրոնացման ուղին տանում է դէպի ընդհանուր շահերի ամբողջացում, դէպի պետութիւնների խոշորացում և ընդլայնում, մինչև որ բոլոր մարդկութիւնը կամփոփւի մի ամբողջութեան մէջ, կը կազմէ մի և միակ մարդկային հասարակութիւն, ունենալով այնպիսի ընդհանուր օրէնքներ, որոնք յատուկ են բոլոր-բոլոր մարդ-արարածներին՝ առանց բացառութեան: Իսկ միւս կողմից՝ յարաճուն դիֆֆէրէնցիացիան, մշտագոյ բաղմագանութիւնը կը թափանցէ ներս, կը շերտաւորէ, կը տարբերէ իրարից բաղմագան պայմաններում ապրող բաղմակապիսի խմբակներն ու հասարակութիւնները: Մարդկային կուլտուրան ձգտում է յղկել, միօրինականութեան վերածել բնական պայմանները, իսկ բնութիւնը, յաւիտենական իր ըմբոստ կորովով, դիմադրում է կուլտուրայի այդ կրծող ուժին: Կենտրոնացման ուժին հակադիր՝ յարատեւում է սպակենտրոնացման ուժը, հակոտնեայ շարժումը: Մէկը հետևում և յաղթանակում է այն ամենի մէջ, ինչ որ համամարդկային է, ինչ որ կազմում է բոլոր մարդկանց էութեան մէջ ընդհանուրը, իսկ միւսը շեշտում է անհատների ու հասարակութիւնների տարբերական մասը, նրանց զանազանակերպութիւնները:

Մէկը տանում է դէպի առանձնացում, դէպի պարտիկուլարիզմ, դէպի ուրոյն ու անկախ գոյութիւն, իսկ միւսն առաջնորդում է դէպի հանրութիւն, դէպի միութիւն և ձուլում:

Այդ կրկնակի շարժումը—կենտրոնացումը և ապակենտրոնացումը, գոյութիւն են ունեցել դարերից ի վեր, այժմ էլ կան և պիտի լինեն յաւէտ, քանի որ կայ կեանքի նշոյլ երկրագնդի վրայ, քանի դեռ Սպէնսէրի ասած էւօլյուցիայումն ենք ապրում և ոչ դիսսօլյուցիայի, քայքայման շրջանում, որի յաջորդելու է համաշխարհային մահը երկրագնդի վրայ:

Եւ այդ յարատև կրկնակի շարժումը մեզ տանում է դէպի համամարդկային ֆէդէրացիա, դէպի աշխատաւոր համայն մարդկութեան եղբայրական դաշնակցութիւն:

Այն, մարդկութիւնը գնում է դէպի ֆէդէրացիա, և դա անհրաժեշտ ու ձեռնտու է աշխատաւոր, քրտնաթոր ժողովրդի համար:

Դէպի ֆէդէրացիա, անցնելով առաջ թէ տեղական ինքնավարութիւնից, թէ աւտօնօմիայից:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

Գ Լ Ո Ի Խ Ա.

Ո Ր Ո Շ Ո Ի Մ Ն Ե Ր

Տոհմական կազմ: Պետութեան երևալը: Կառավարութեան տեսակները. ա) Միապետութիւն անսահման. բ) Միապետութիւն սահմանադրական. գ) Հանրապետութիւն: Կառավարական երկու գլխաւոր սիստէմները. (2—19)

Գ Լ Ո Ի Խ Բ.

ԿԵՆՏՐՕՆԱՅՈՒՄ ԵՒ ԱՊԱԿԵՆՏՐՕՆԱՅՈՒՄ

Կենտրոնացում—նրա բնորոշումը և նկարագրութիւնը: Տեսակները (օրէնսդրական, վարչական և դատական): Ռուսաստան և Յրանսիա իբր կենտրոնացման օրինակներ: Հիմքեր: Կամայտեանութիւն և բիւրօկրատիզմ: Ապակենտրոնացում. բնորոշում և նկարագրութիւն: Տեսակները: Ինչո՞ւ է նա անհրաժեշտ: Այդ երկու սկզբունքներն իրականութեան մէջ: Կրկնակի շարժում. (19—56)

Գ Լ Ո Ի Խ Գ.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Որոշումը և հիմքերը: Նրա և կենտրոնական իշխանութեան յարաբերութիւնը: Տեսակները: Տեղական ինքնավարութիւն զանազան երկրներում—Յրանսիայում, Ռուսաստանում, Անգլիայում և Բելգիայում: (56—103)

Գ Լ Ո Ի Խ Դ.

Ա Ի Տ Օ Ն Օ Մ Ի Ա.

Պետութեան և նրա բաղադրիչ մասերի տարբերութիւնները: Աւտոնոմ շրջաններ: Աւտոնոմիայի էութիւնը: Նրա տարբերութիւնը տեղական ինքնավարութիւնից և ֆէդերացիայից. Աւտոնոմիայի հիմքերը: Աւտոնոմիայի տեսակները: Աւտոնոմիան անգլիական գաղութներում, Աւստրիայում և Էլզաս-Լոտարինգիայում: (103—172)

Գ Լ Ո Ի Խ Ե.

Ֆ Է Դ Է Ր Ա Ց Ի Ա

Ունիտարիզմ և ֆէդերալիզմ: Ֆէդերացիայի էութիւնը: Նրա տարբերութիւնը աւտոնոմիայից: Պետութիւնների դաշնակցութիւն և դաշնակցական պետութիւն: Ֆէդերացիայի կազմելու ճանապարհները (միացում և բաժանում): Իրաւասութիւններ և նրանց սահմանները: Տէրիտորիական և ազգային ֆէդերացիա: Հիմքեր: Կրիտիքա: (172—342)

Գ Լ Ո Ի Խ Զ.

Ֆ Է Դ Է Ր Ա Ց Ի Ա Յ Ի Ա Պ Ա Գ Ա Ն

Ֆէդերացիայի ուժեղ և թուլ կողմերը: Նրա ներկայ տարածման վայրերը: Համամարդկային ֆէդերացիա կամ ֆէդերացիայի ապագան: (342—371)

Ուղարկում է ցանկացողներին «Յառաջ»-ի ամբողջ գրադարանը բաղկացած 46 կտոր գրքից, որոնք բոլորը միասին արժեն 6 ՐՈԻԲ. 69 կՕՊ:

Պատւիրատուները ստանում են պօստով, չըվճարելով ճանապարհածախս.

Իիմել թիֆլիս «Эриванская площадь „Паросъ“ МАТИНЯНУ.

Լ Ո Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

1. Բախ.—Հարուստներ և աղքատներ. 11 տպագրութիւն	15 կոպ.
2. Պեշէխօնով.—Հաց, լոյս և ազատութիւն	12 »
3. Ֆէդորովիչ.—Ինչպէս են ժողովուրդ և ծախս. ժող. փողերը	5 »
4. Կարմօլիկ.—Նոր լերան քարոզը	2 »
5. Չերնօվ.—Գիւղացին և բանւորը	15 »
6. Պերներտորֆեր.—Ազգային հարցը և սօցիալ-գեմօկրատ.	5 »
7. Պրամայօլինի.—Գիւղացիներին	5 »
8. Ե. Թոփչեան.—Արհեստակցական միութիւններ.	15 »
9. Նօվօտօրժսկի.—Ինչ է իրաւական պետութիւն	15 »
10. Ն. Կաբանով.—Հողային հարցը Նոր Չերանդիայում	2 »
11. Ժան Ժօրէս.—Բուրժ. սեփ. և նրա ապագայ զրաւումը	5 »
12. Ս. Արեղեան.—Դեմօկրատիական ընտրութիւններ	12 »
13. Կարլ Կաուտսկի.—Ազգութիւնների հարցը Ռուսաստանում	3 »
14. Ա. Անարոնեան.—(Ղարիբ)—Ազատութեան ճանապարհին	80 »
15. Ֆ. Լասալ.—Սահմանադրութեան էութեան մասին	5 »
16. Ա. Ն.—Ինչպէս կարելի է լուծել հողային հարցը	2 »
17. Վասիլի Գալուբով.—Ինչ է ժողովրդապետութիւնը	2 »
18. Ս. Չաւարեան.—Վիճակ. տեղ. գիւղական ազգար.	25 »
19. Ալֆոնս Դիւնան—Ժողովրդ. օրէնսդր. դաշ. Ձեռքերիայում	20 »
20. Դիկշտէյն.—Ով ինչով է ապրում	7 »
21.—Մի զրոյց հողի մասին	5 »
22. Լ. Շիշկօ.—Ազրաբային ծրագրի հարցը	7 »
23. Ա. Նիկօլայեւ.—Կօսպերացիա	5 »
24. Շտասկեցէք օգուել ձեր իրաւունքներից	1 »
25. Լ. Պետրով.—Երկու ծրագիր	20 »
26. Ս. Վշօսեկ.—Պետ. կազմակերպ. հիմքերը Արևմուտ.	12 »
27. Անսկիլ.—Գիւղացիական հարցը Ֆրանսիայում	7 »
28. Միքայէլ Յովհաննիսեան.—Բաշնակց. և նրա հակառակորդ.	50 »
29. Ժ. Գէր. եւ պ. Լաֆարդ.—Տնտես. զարգ. և Սօցիալիզմ.	5 »
30. Նօվօտօրժսկի.—Ազգային հարց. Աւստրոսլաւոնիա և Ֆէդէրացիա	7 »
31. Խորամանկ կարգեր	7 »
32. Մ. Յովհաննիսեան.—Գորդեան հանգոյցը	20 »
33. Հրահանգներ գաւառների համար	1 »
34. Չերնօվ.—Դասակարգային կուլի թէօրիայի շուրջը	10 »

35. Լ. Շիշկօ.—Նւազագոյն ծրագիրը	12 կոպ.
36. Ս. Նեկրասօվ.—Ինչ կարգեր են հարկաւոր ժողովրդին	10 »
37. Ա. Շախաթ.—Ֆէդէրալիզմ և դեմօկրատիզմ	30 »
38. Արամայիս.—Վնասակարը	4 »
39. Արամայիս.—Մի քանի գլուխ հայ-թրքակ. ընդհար.	25 »
40. Մ. Յովհաննիսեան.—Կովկասեան Վանդէան	25 »
41. Շ. Գօրցև.—Ինչպէս իրական. ազգութիւն. հաւաս.	7 »
42. Գ. Խաժակ.—Դէպի Ֆէդէրացիա	80 »
43. Վ. Չերնօվ.—Պրօլէտար. և աշխատ. գիւղացիութիւնը	18 »
44. Արրամօվա.—Գիւղացին և բանւորը	3 »
45. Է. Վանդերվելդ.—Բանւոր դաս. դրութ. Բելգիայում	45 »
46. Ս. Չակ.—Հող և կապիտալիզմ	15 »

Պատրաստուում են տպագրութեան համար մի շարք ուրիշ գրքեր:

Դիմել՝ Թիֆլիս, «ՓԱՐՈՍ», Երևանեան հրատարակչ. Երևան, Ս. Օհանջանեանին: Բազու, «ՍՍՏՐՈՒԴՆԻԿ»:

17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100

101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200

III

111
112
113

« Ազգային գրադարան »



NL0189417

